

Ա. Ն. Ասլանյան

ԿԻ ՅՈՒՆԻԵՏԻԿ
ԴՏԵՆԿՄԱՆԳԻ





Ար
Մ 74


Ա. Ն. Արսեյան

ԿԵՄԱՆՈՒԱԶՏԸ ՊԱԶԱՐԿԱՑ ԷՐ

(Դրվագներ արևմտահայ ցեղասպանությունից)

2730

Երևան «Հայաստան» 1990



Գրախոս՝ պատմ. գիտ. դոկտոր
Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ
Խմբագիր՝ Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ասլանյան Ա. Ն.

Ա 742 Փեսանդաշտը պաշարված էր (Խմբ.՝ Վ. Մովսիսյան).—
Եր.: Հայաստան, 1990.— 288 էջ: Նկ.

«Փեսանդաշտը պաշարված էր» հուշերը սովթանական թուրքիայի լծի տակ տառապած Արևմտյան Հայաստանի սոցիալ-քաղաքական դժոխային վիճակի, հայ ազգային-ազատագրական հերոսամարտերից մեկի նկարագրությունն է, երբ իրենց ուժերով հայերը շուրջ մեկ ամիս պաշարված վիճակում մարտնչեցին թուրքական հրոսակների դեմ՝ մինչև ռուսական բանակի գալը, որի շնորհիվ ավելի քան 30 հազար ռուսացիներ փրկվեցին անխուսափելի չարգեթից:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

0503020913
Ա 701 (01) — 90

ԳՄԿ 63 . 3 (22) 52

ISBN 5-540-00858-8

© Ասլանյան Ա. Ն.—1990

Խմբագրի կողմից

Մեր պատմության եղերական էջերը լուսարանող ամեն գնդը հրատարակելիս պետք է հաշվի առնենք մի հանգամանք. ինչպես կհնչի այն վաղը, ինչ արժեք կարող է ներկայացնել պատմաբանների և ընդհանրապես սերունդների համար ապագայում: Այդ առումով ամանց արժեք ունեն վավերագրությունները՝ հուշերի, թե մի այլ ձևով, որոնց հեղինակները 1915 թ. եղանակ ապրած սերունդների ներկայացուցիչներն են: Որքան հուշերի գրքեր, վկայություններ, փաստաթղթեր, գերդաստաններ, ընտանիքների, անձնական կյանքի պատմություններ կարող էին այդ շրջանի մասին մեր գիտելիքները, մեր իմացածը համարել ու հարստացնել, եթե եղեռնից մազապործ այն ժարդիկ, որ ապրում էին մեր կողքին և տեսել էին, թե ինչպես է իրականացվել պետականորեն ծրագրված ցեղասպանությունը, ինչպես ասում են՝ իրենց մաշկի վրա են զգացել հաշտանքն ու ծեծը, պատվազրկությունն ու յաթաղանի սպառնալիցը, ճնարալորություն ունենալին գրել իրենց հուշերը, և դրանք հավաքելին ու հրատարակելին: Ցավոք, մեծամասամբ չգրվեցին, որովհետև փրկվածները, եղեռնից խլյալները մեզ մոտ ապրեցին մացիոնալիստ կամ դաշնակցական համարվելու վախը սրտներում. իրենց ապրածի ու տեսածի հիշողությունն իսկ պահպանելու դեպքում արժանանում էին բռնադատված այն գրողների մակատագրին, որոնց թիվը տասնյակ միլիոններով է հաշվվում:

Բարեբախտաբար, անհատի պաշտամունքի և բրեժնևյան քննության տարիներին գաղտնի կերպով իրենց տեսածը թղթիմ հանձնող, հիրավի, խիզախներ էլ եղան, որոնցից մեկն է այս գրքի հեղինակ Արզար Ներսեսի Ասլանյանը:

Սակայն պատմության մեջ՝ ընդգրկմամբ ու ծավալաչափելով անհախադեպ 1915 թ. ողբերգության շատ կողմեր այդպես էլ չլուսարանվեցին, շատ ծալքեր այդպես էլ չբացվեցին, քա-

ճի որ նրանք, ուրբեր կարող էին անել այդ, «չկարողացան» ու շատ բան իրենց հետ տարան անհայտության աշխարհը:

Թերևս հենց դրա վրա էին հույս դրել ցեղասպանության կազմակերպիչներն ու նրանց հովանավորները, որ եղերական իրադարձությունների մասին գրավոր փաստերն ու գրագրություններն այդքան ժամանակ պահեցին յոթ կողպեքի տակ ու այսօր, ի ծաղր ճշմարտության, «պատրաստակամություն» են ցուցաբերում արխիվները բացել՝ «իրականությունը» հրապարակաւ ցույց տալու նպատակով. օ՛հ, ինչպիսի «հոգատարություն», պարոնյանական տեսանկյունով դա անշուշտ կնշանակեր՝ «ճշմարտություն կըսենք, բայց կեղծարարություն ցույց կուտանք»: Իրավ, արխիվներում արդեն իսկ արվել է այն, ինչ կեղծիքն ու սուտը կարող է ճշմարտակերպ մատուցել. նույնիսկ ոչ սղնպես, ինչպես հաճախ տաճարները «հարդարվում», փոխակերպվում են մզկիթների, կամ էլ մեր հուշարձաններն են ներկայացվում որպես թուրքական վաղ շրջանի բաղաբալրություն անուշներ: Ո՛չ, փաստաթղթերի հետ հաշիվ մաքրելն ավելի դյուրին է, մանավանդ, զեղծարարության մեջ անպարարի վարպետություն ունեցողների համար՝ տվյալ փաստաթուղթը կամ փոխարինիր մի ուրիշով, կամ էլ ուղղակի ոչնչացրու՝ «ոչ եղել է, ոչ էլ կլինի»:

Ահա այս ամենի գիտակցումը մեզ վաղուց պետք է պթափ դարձներ, որ ոչ թե լոկ տպագրության ներկայացվող հողվածի, հուշի, վկայության հրատարակման մասին մտածեինք, այլ փնտրեինք այդպիսիները, հորդորեինք եղեռնի ակամատեսներին՝ գրի առնել այն, ինչ տեսել են, զգացել են, գիտեն: Այո՛, կարող են կրկնություններ լինել, համանման փաստերի, երեվույթների մասին գրվել. փույթ չէ, թերևս ավելի լավ. չէ՛ որ դատական գործերում վկաների նույնանման ցուցմունքներն ավելի են ընդգծում հանցանքի հավաստիությունը, իսկ մենք գործ ունենք ամենամեծագույն հանցագործության՝ պետականորեն ծրագրված ժողովրդասպանության հետ, որը իրականացվել է մի այլ ազգի պատկանելու, մի այլ կրոն ունենալու պատճառով և ստեղծված նյութական ու հոգևոր արժեքները, գիտությունն ու մշակույթը սեփականելու, հողն ու հայրենիքը զավթելու նպատակով:

Որքան հեռանում ենք իրադարձություններից, այնքան այս ամենն ավելի ցայտուն, հստակ ու նպատակամետ է դառնում

ու երևում: Եվ խնդիրը սուկ այն չէ, որ շուրջ երկու միլիոն հայերի ոչնչացնելով, ցարքոցիվ անելով և նրանց ամեն ինչը զանգեղով, երիտթուրքերը ծրագրել էին ոչնչացնել հայերին, որ ամենայն թուրքիան գալլային վերաբերմունք է ունեցել առհասարակ իր նվաճած տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների՝ հույների, բուլղարների, քրդերի, սլավոնների, հայերի նկատմամբ: Այլ նաև այն, որ այս ամենն այսօր ուղում են ներկայացնել ա՛յլ կերպ, ուղում են գալլին ներկայացնել գառան մորթով:

Եվ այսօր ցեղասպանների ժառանգորդներն ուղում են ասել, թե ցեղասպանություն չի եղել, թե իրե՛նք են եղել զոհերը, թե առհասարակ թուրքերը կայսրությունում ապրող ազգային փոքրամասնությունների բարերարն են եղել (թողել են, որ օդ շընչեն, արևի ջերմությունից օգտվեն, ապրեն):

1915 թ. ցեղասպանության հարցում թուրքական բաղաբալրական հատարակական գործիչների դրսևորած վերաբերմունքն ինքնին չիտում է ոչ թե տրամաբանությունից, այլ տրամադրությունից: Թուրք պատմաբաններից ոմանք ասում էին, թե առհասարակ ցեղասպանություն չի եղել: Հետո սկսեցին համոզել, թե, զիտե՛ք, պատերազմի ժամանակ հենց իրենց՝ հայերի ապամոլության շահերից ելնելով, իշխանությունների օգնությամբ և հայրազրբարք նրանց տեղափոխել են ավելի ապահով վայրեր: Հետո տեսնելով, որ փաստերն ուղիղ հակասակն են վերաբերում, մի այլ վարկած առաջ բաշեցին: Իբր, զիտե՛ք, հայերն ապատանջել են թուրքական պետության դեմ, դե, պետությունն էլ որոշ միջոցներ է կիրառել իր անվտանգությունն անպահովելու համար: Բայց բազմաթիվ և բազմաքննող վկայություններն ապացուցեցին, որ հայերը ոչ թե ապատանջել են, այլ իրենց գոյության համար են պայքարել, կռվել: Արդե՛նք, ինչպես անհերքելի ձևով ապացուցել են և՛ հայերն իրենք, և՛ օտար աղբյուրները, այդ թվում նաև թուրքական, հայերի մղած կռիվները եղել են հերոսական գոյամարտ:

Նե որ արդեն մախաթը չի լինում պարկում պահել, այսինքն՝ հայրենի է դարձել, որ հայերը չեն ապատանջել, այլ կովել են իրենց ազատության, կյանքի համար, ուրեմն կարելի է մի այլ բան մտածել: Եվ անհ վերջերս առաջ է բաշվել մի այլ տեսություն, ըստ որի ո՛չ թե թուրքերն են կոտորել անմեղ հայ

երեխաներին, ծերերին, կանանց, այլ ընդհակառակն՝ հայերն են հարձակվել թուրքերի վրա, կոտորել նրանց: Ըստ որում կինոժապավեններ են ստեղծվում, հողվածներ, գրքեր գրվում ու թարգմանվում այլ լեզուներով: Հանում են եղեռնի զոհ հայ երեխաների կմախքները և հեռուստատեսությամբ ցուցադրում որպես հայերի զոհ դարձած թուրքերի. և դրան կարող է հավատալ աչսօրվա թուրք երիտասարդը, որից գաղտնի են պահված հայերի ցեղասպանության մասին վկայող փաստաթղթերը... հիմա հանվում են, վաղը թերևս ավելի շատ հանվեն նոր թելված, կեղծված փաստաթղթեր...

Մի խոսքով, աշխարհը գիտե, և թուրքերն իրենք էլ հասկանում են, որ ցեղասպանությունը վաղեմություն չունի, ուստի անընդհատ պատասխանատվությունից խուսափելու ձևեր ու մեթոդներ են փնտրում... Իսկ մինչ այդ՝ ազգային խտրականությանն ու ցեղասպանությանը համաշխարհային հասարակայնությունը նայում էր որպես պատմական երևույթի, որն անցյալում է տեղի ունեցել և զբաղված էր արդեն իսկ սրվող ոչ քիչ իրադարձություններով, հանդես եկավ ֆաշիզմը՝ որպես ցեղասպանության փորձի վրա խարսխված գաղափարախոսություն, և այսօր էլ մերթընդմերթ դրսևորվում են ազգային հողի վրա կոտորած կազմակերպելու փորձերը, այսինքն՝ ցեղասպանության ռեցիդիվները:

Ուրեմն այն ամենը, ինչը կապված է հայերի ցեղասպանության հետ, ցույց տալը, կոտորածի ծրագրումը և իրականացումը ցույց տվող վկայությունները զուտ պատմագրական նշանակություն չունեն, ոչ էլ՝ միայն հայկական, այլ համամարդկային: Ահա թե ինչո՞ւ են արժեքավոր վավերագրություններն ու վկայությունները: Դրանք գալիս են միանալու թուրքական պետական շովինիզմի դեմ բարձրացած համաշխարհային առաջադեմ հասարակայնության զայրույթին ու բողոքին՝ փաստական հավաստի տվյալներով ամրապնդում այդ հասարակական մեծ ու առողջ զգացմունքը, համալրում են պետական, պաշտոնական փաստաթղթերը, ժամանակի հասարակական, պետական ու քաղաքական գործիչների վկայությունները: Դրանք, ինչպես սակավաշուր աղբյուրների շիթեր, ինչպես սովակներ, թափվելով միևնույն գետահունը, հզոր ու շտապում են դարձնում բողոքի ու զայրույթի գետը, որն ի վերջո դառնում է պա-

տասխանատվություն պահանջող հասարակության հզոր ձայնը, նախադիմքն ու որոշումը, դասն ու դատաստանը: Այդպես է գոյում պատմությունը, այդպես ցեղային հանցագործությունների համար պատմության դատաստանի առաջ պատիժը դառնում է անշքանցելի:

Դեռի այս նպատակը տանող ճանապարհին Աբգար Ներսիսի Ազանյանի յուրօրինակ հուշերի գիրքն անշուշտ անկիթ ունի:

Ընդհանրը ներկայացրել է Արևմտյան Հայաստանի Փետանդալը՝ հայոց բնօրրանի այդ գեղեցիկ դաշտը իր աշխատանք, արարող քնակիչներով, ազգային սովորություններով, աշխարհայիններով, իր կյանքի և ազատության համար քաջուքայ կովելու պատրաստակամությամբ, որպես հայ ապրելու իրավունքը պաշտպանելու անբեկ կամքով և անկոտրում համարքայով: Նա փեսանդաշտի 72 հոգուց քաղկացած մի պատվարժան գերդաստանի ներկայացուցիչն է, եղեռնի, գաղթի ճամփաներին մեծ կորուստներ տված և այսօր ապրողներից: Փրկվել և ապրել են երկուսով՝ ինքը և հորեղբոր աղջիկը, և մյուսին այսօր ունեն երեսունից ավելի սերունդ՝ որդիներ, թոռներ, նաև ծոռներ: Եվ այն, որ եղեռնից 75 տարի հետո իրենց նոր գերդաստանով՝ նախաեղեռնայինի հազիվ կեսին են հասնել, ինքնին վկայում է կոտորածների չափի ու մասշտաբների մասին:

Ինչ պատմի գրքի կոնկրետ բովանդակությունը: Ասենք, որ հեղինակը ո՛չ գրող է, ո՛չ լրագրող, ո՛չ էլ պատմաբան: Եղել է բանվոր, ուսուցիչ, կուսակցական, խորհրդային աշխատանք է կատարել, ծառայել բանակում, այժմ թոշակառու է... Փետանդաշտի օրինակով, իր տեսածով, եղեռնից փրկվածներից լսածով ցույց է տվել այդ մեծ ողբերգության որոշ մանրամասներ: Եղերականն ու հերոսականը, քնարականն ու հրապարակախոսականը, վերհուշն ու սուրբականը միահյուսված են պատմի մեջ. հեղինակի լավատեսությունը, նույնիսկ ամենաեղբրական պահին լուսավոր կետ տեսնելու կարողությունը բարձր կարելի է ընկալել որպես անելանելի թվացող պայմաններում էլ՝ մեր ժողովրդի արիականության ու տոկունության հատկանիշ:

Չոնում եմ՝

Անճախատեալ հայ ցեղասպանությունից հրաշքով փրկված իմ բախտակից հարյուր-հազարավոր որբացած մանուկներին և ցրանց սեռունդներին, որպեսզի շնորհակցի եղբորս՝ ՀԱՅՈՑ...

ԴՐՎԱԳՆԵՐ ՓԵՍԱՆԴԱՐՈՏԻ ՀԱՅ ԿՅԱՆՔԻՑ

Վասպուրականի սեահողային թավշապատ դաշտերից մեկն էր Փեսանդաշտը։ Այն գտնվում է Վանա լճի հարավարևմտյան մասում, լճից, Հայոց ձորից բաժանվում է Արտոս լեռով։

Փեսանդաշտը շրջապատված է օղակաձև, մեջք մեջքի տված սեսս կլոր պար բունած Արտոս, Բարազողդիկ, Ձմեն, Կարաբուլախ լեռներով։ Բարձրագիր լեռները Փեսանդաշտը բազմիցս պաշտպանել են արտաքին ներխուժումից։

Ուշտունյաց հնագույն աշխարհի այդ բերքառատ հովտում դեռևս հայ ժողովրդի ձևավորման ժամանակներում հիմնվել է հայկական շորս գյուղ՝ Շիդանգյուղը՝ Արտոս լեռան ստորոտում, Հառելը՝ Ձմեն լեռան ստորոտում, Կաղազիզը՝ Բարազողդիկում, Կայնամիրանը՝ Կարաբուլախում։

Ոչ այնքան մեծ այդ կլոր դաշտավայրը հին անցյալում, ինչպես գրում է պատմահայր Մովսես Խորենացին, նախ մշտնում էր Բուժունքի, իսկ տարիներ անց՝ Ուշտունիների իշխանության մեջ։ Անհուն կարոտով ու ցավով եմ հիշում նախնայաց սբանչելի հայրենին, նրա զմրուխտ սարերը, թռչունների երգն ու դայլայլը։ Դրանք որքան ջերմ ու հարազատ են իմ հոգուն։ Թերևս նրա համար, որ նրա հողից ու ջրից եմ կյանք առել, աշխարհը ճանաչել ու միջև հիմա էլ մտովի նրա հետ եմ, որ բարերար իմ նախնիները այդ թավշապատ երկրում ապրել, ստեղծագործել են ու անցել-զնացել, ինչպես աշխարհի անցվորները՝ բարի գործեր թողնելով։

Որ այդ հարազատ օջախում մանկություն շտեսած՝ 1915-ին օսմանյան Թուրքիայի կազմակերպած հայ ցեղասպանության

պայմանից շարժերը տեսա որբացած իմ բախտակից ժողովրդի հետ։

Փեսանդաշտում է օրհնանքն իմ սուրբ պապերի, կուզիկ Վարդապետը, տեսնել թեկուզ ավերակների վերածված ծննդալույս, ժողովրդիս արյուն-արտասուքով շաղախված սուրբ հոգին լյգնի, համբուրծի, կարոտս առնի հարազատ Վասպուրական շնորհ երկրից։

Փեսանդաշտցիները շիտակ, աշխատասեր ու բարի շինականներ էին։ Նրանց հիմնական զբաղմունքն էր երկրագործությունը, անասնապահությունը և տնայնագործությունը։ Նրանք, հարկան ջրգնդի և թուրքերի համեմատությամբ, իրենց նիստուկաբով, հողամշակման, անասնապահության, կաթնամթերքի մշակման ու տնայնագործության կուլտուրայով ավելի բարձր մակարդակի վրա էին։

Քաղաքակրթում պահպանում էին նահապետական սովորությունները, ուրույն կենցաղը, բարբառը, երգն ու պարը, քրիստոնեական հավատը, որում ամփոփված էր հատկապես շրտախոթյունը, աշխատասիրությունը, մարդկայնությունը։ Ազգային, կրեական տոները նշում էին մեծ շուքով։

Նախնապես շուքով էին նշում բերքահավաքից հետո աշխանք ուխտ գնալը։ Ուխտի էին գնում հայկական ճարտարավանդակի հավուն կոթողներից՝ Նարեկա վանքը, նախնայաց մեծ ուխտավայրը։ Նարեկա վանքը ուխտի էին գալիս նաև Գառաջիկ, Միմարից, Շատախից։ Գալիս էին շքերթով, մեծ թափուկ, զուգով, գերգաստանով, սալլերով, ձիերով, անասուններով։ Մատաղի համար խնամքով պահված ուշաբներով, կանկարով, զույգզույն ժապավեններով խոշոր աքաղաղներով։

Նախնապես ուշազրավ էին վառվում, երկսեռ երիտասարդների կազմակերպված ուրախ խմերը՝ գուլնգուլն աղբուրյն տարազներով, երաժշտական գործիքներով, ձիարշավներով։ Համար գարդարված ձիերով։

Նշտունյացի ընդարձակ սարահարթում վրաններ էին խփում՝ պարզով, մեծ ընտանիքներով։

Վանքում տեսական շքեղ ժամերգությունը զլխավորում էր Նշտունյացի կամ վարդապետը։ Վանքը լցվում էր հավատացյալներով։ Հավուղ հարյուրավոր մեծ ու փոքր մոմերի լույսի սուղ փայլապատում էին ժամերգությունը վարող հողերական-

ների շքեղ հագուստները, սրբապատկերները, նարեկացու պատկերը՝ լուսապայծառ ճակատով, ծխացող արծաթափայլ բուրվառներից տարածվում էր խնկի հմայիչ հոտը: Իսկ զրսում հայ կտրիճները թները քշտած, բարի ցանկություններով մատաղի անասունները գետնին էին գլորում:

Ամենուրեք վառվում էին օջախները՝ վրաները կանթերով պղինձներ: Պտտվում էին շամփուրները՝ դռների մտով, հավեհրով:

Գետնին փռված էին առատ ու լի ճերմակ սփռոցները: Քեֆ, ուրախություն, ողջ ուժով զարկում էին դճուները, գիլ փշում էին դուռնաները: Ուս ուսի տված, փողք կողքի պարում էին «փափուրի», «քոչարի»:

Հայրենի հողը թնդում էր բազմաթիվ խմբապարերից, որոնց կրակոտ շունչը արյան հետ եկել էր նախնիներից: Պարբաշին ծաղկավոր լայուխը օդում թափահարելով ողջ ուժով գոչում էր.

— Թո՛ւն՝ ք, ջա՛ն տղերք, քույրեր իմ հարգելի: Թո՛ւն՝ ք թափով, երգե՛ք շափով՝ ջա՛ն իմ Հայաստան...

Կարի վրա թռչկոտում էր լարախաղաց Վաչագանը: Ուրախ կատակում էր յալանչին: Երգելով, տեսակ-տեսակ խաղերով ցնծության մեջ էին, որքան ուրախանում էին՝ այնքան տաքանում...

Ցերեկն ու լուսնյակ գիշերը մեկ արած, մեկ օր, երկու օր... ուրախություն, կերուխում, տոնական խանդավառություն: Նոր ծանոթներ, բարեկամություն, երիտասարդ զույգերի սրտերը կապող նոր սեր:

1913 թվականի ուխտագնացության վերջին գիշերն էր: Վանքի մոտից լսվում էր կույր երաժիշտ Միհրդատի սրնգի հոգեպարար ձայնը, տարածվում-հասնում հեռուներ:

Պահպանելով նախնյաց սովորությունները, ոչ պակաս ուրախ ու զվարթ էր անկցացվում հեթանոսական տոն տրեղեղը: Ձնե ամրոցներ էին պատրաստում ձնագնդիներով, խմբային, անհատական մարտի բռնվում: Խարույկների շուրջ կաղմակերպվում էին կտրիճ երիտասարդների տոնախմբություններ:

Մեծ շուքով էին կատարում նաև վարդավառը, կանաչ սարերում առավոտից իրիկուն գույնզգույն շորերով երիտասարդ աղջիկները տասնյակ խմբերով՝ երգում էին «ջան գլուրումը» և մյուս տոնական երգեր:

• • •

Երբան գլուչն իր բարենպաստ աշխարհագրական դիրքով Հայաստանի է առատ բերք էր տալիս:

Գյուղում գործում էր արհեստանոցը իր հմուտ պղնձագործ, ըրտապարծ վարպետներով՝ սայլերի, տնային իրերի պատրաստման և վերանորոգման համար:

Հասեղ գյուղի միջով էր անցնում Վանից, Հայոց ձորից, Կալաթից դեպի Շատախ, Բիթլիս, Տարոն գնացող ճանապարհը, որ խոշոր նշանակություն ուներ փեսանդաշտցիների, հատկապես Հասեղի համար: Գյուղով անցուղարձ էին անում և իջևանում ոչ միայն առևտրականներն ու շարժիները, այլև հայ ու թուրք պաշտոնական անձինք, զինվորականներ, հասարակական գործիչներ և այլն: Մյուսների համեմատ Հասեղ գյուղում ավելի էին պարզ, բանիմաց մարդիկ:

Բարենգի, հյուրասեր էին հառեղցիները. հյուրերին ընդունում էին առանց խտրականության, անկախ նրանց ազգության ու քաղաքների: Օտարականին կամ պաշտոնական անձանց հարգանքները նրանք պատվարեք էին համարում ընտանիքի, գյուղի, ազգի համար:

Նազազի՞ ոչ այնքան մեծ, սակայն տնտեսապես ամուր Հայկական այդ հնավանդ գյուղի մասին առասպելական մի պատմություն կա, որը բերնբերան անցնելով հասել է մեր օրերը: Երաբանչյուր կաղազիզեցի հպարտությամբ հիշատակում է, որ իրենք քաջ Հայկի զինվորների ժառանգորդն են և սիրում պատմել.

... Ես և շատ տարիներ առաջ, Քրիստոսի ծնունդից էլ շատ առաջ, մարդիկ հաղթանդամ ու քաջ էին:

Այն ժամանակի աշխարհակալ գոռոզ Բելը իմանալով, որ Հայաստանի և Վանա ծովից մինչև Արարատ երկրին տիրում է Քրոսոսի որդի Հայկը, անհանգստանում է.

Պահանջում է, որպեսզի Հայկը իր երկրով և ժողովրդով իրեն ենթարկվի: Մերժում ստանալով, գոռոզ Բելը զայրանում է: Հավաքում է անթիվ, անհամար զորք, հարձակվում Հայկի խոշոր երկրի վրա: Հայկը իր յոթ քաջ տղաներով զորք է հավաքում քնդգեմ Բելի. բռնկվում է արյունահեղ մեծ պատերազմ, շատ և շատ քաջեր հերոսաբար ընկնում են մարտի դաշտում:

Վանա ծովի ափին, Հայոց ձորի կանաչ դաշտավայրում, վերջին ճակատամարտում քաջ Հայկը նետը արձակում է նահանջող Բելի թիկունքին:

Նետը ծակում է թիկունքը, կրծքից դուրս գալիս: Բելը փրվում է գետնին: Նրա զորքը խուճապահար դիմում է փախուստի:

Հայկը հաղթանակում է: Վերականգնվում է երկրի խաղաղությունը:

Ի նշան հաղթանակի Հայկն արտոնություն է տալիս իր քաջ զինվորներին. «Ապրեցեք իմ երկրում, առանց հարկերի վճարման, ով որտեղ կկամենա»: Հայկը իր երկիրը բաժանում է Արմեն և մյուս որդիների մեջ: Ինքը երկար տարիներ ապրում է Հայոց ձորում, մինչև մահը:

Այնտեղ է նրա գերեզմանը:

Հայկի զինվորներն իրենց անվանում են հայկավաններ, հայեր: Հայկի կտրիճ զինվորներից մեկը մարտի ժամանակ աջ ոտքից վիրավորվում է, սակայն բուժվելուց հետո էլ կազում է (զինվորի անունն էր Ազիզ): Երբ սկսում է կազալով քայլել, նրան տալիս են «Կազ Ազիզ» մականունը: Կազ Ազիզը գարնանային մի պայծառ առավոտ ընտանիքով ճանապարհվում է ապրելու համար նպաստավոր վայր ընտրելու: Նա շարժվում է գեպի Արտոսի դաշտը:

Բարագողիկի արևմտյան ստորոտում տեսնելով գեղեցիկ կանաչ հարթավայրը, նրանք կանգ են առնում կանաչ դաշտի, մեծ քարի տակից հոսող պաղ աղբյուրի մոտ:

Բեռները վայր դնելով, անասուններին արձակում են արտոսի Իրենք նստում հացի, կերակրում երկու գամփռ շներին և հողմած լինելով՝ պառկում քնելու: Արևածագին արթնանալով, հայրն ու ավագ որդին դուրս են գալիս դաշտը շրջելու: Այնուհետև, որոշում են այդ կանաչ դաշտում բնակություն հաստատել:

Շուտով այդտեղ բնակվելու են գալիս նաև Կազ Ազիզի զինվոր ընկերները: Միասնական ուժերով նրանք տներ են կառուցում, հողը մշակում, բերք ստանում, տնտեսություն ստեղծում:

Հետզհետե ավելանում է բնակչության թիվը և ձևավորվում հայկական փոքր գյուղը: Բայց որովհետև գյուղի առաջին բնակիչը եղել է Կազ Ազիզը, գյուղն էլ նրա անվամբ կոչվում է Կազազիզ...»:

Պատեղաշտցիները ապրում էին իրենց նահապետական բուրժանքում ընտանիքներով: Կային նույնիսկ ընտանիքներ, որոնց 4—5 եղբայրներով՝ իրենց բազմաշունչ ընտանիքներով, մտնեցի Շու, մինչև 30, 40 և ավելի, միասին էին ապրում: Այդ բարի, խաղաղ, աշխատասեր, նահապետական ընտանիք անդամների համերաշխ ապրելակերպը մի ներդաշնակ մասնակցում էր:

Հայրենիք իրենց բազմազավակներով ապրում էին սիրով և հարգանքով, հնազանդվում մեծերին, սիրում, հարգում փոքրերին: Հարձակահողով ապահովված էին բոլոր ընտանիքները: Իսկ Շուազոր և սարալանջերի հողերի օգտագործումը ազատ էր՝ ըստ պահանջի:

Նրանց գանիքը, ցորենը, կտավատի ձևերը մեծ համրավունքն Վանում, Բիթլիսում, ամենուրեք:

Շատ էին օգտագործում սարերում աճող անուշահամ բազմատեսակ բանջարները, կտավատի ձևերով դրանցից պատրաստում էին շատ համեղ կերակուրներ, որոնք գարնան, ամռան և աշնան ամիսներին հիմնական ուտելիքներ էին: Հայրենիքի կանգարը, մանգակը, երինջուկը, սոխուկը, խավարձիկը, սիրենիք, բոխին, ավելուկը, սունկը, որոնցից մեծ քանակությամբ շորացնում էին ձմեռվա համար կամ կարասներում թթու էին դնում: Կտավատի ձևերը մեծամասամբ օգտագործում էին մեծ և փոքր պասերի ժամանակ: Կովեր և ոչխարներ ունեին բոլոր ընտանիքները: Սակայն որպես սովորություն, անասուն չէր ունեցող ընտանիքներին ունևորները գարնան սկզբներին հարձ, գառներ էին նվիրում, հարդանք և առաջնահերթ օգնություն էին ցույց տալիս այն ընտանիքներին, որոնց աշխատող մեղքը թուրքերի կողմից սպանվել, աքսորվել, կամ հալածանքներից փախուստի էր դիմել, թաքնվել...

Պղնձի հարցում առանձնապես աչքի էին ընկնում երիտասարդները. օգնում էին հողի մշակմանը, բերքահավաքին: Նրանց անասուններին նախիր էին տանում ձրի, անվճար: Գյուղի համայնքը հատուկ հետևում էր թուրքերի ձեռքով որբացած նրբիանների խնամքի և ուսման գործին:

Մերակազմ փեսանդաշտցիները աչքի էին ընկնում միասնությամբ, աշխատասիրությամբ, բարություն, որոնք ժառանգել էին իրենց նախնիներից: Իսկ քաջությունը ձեռք էին բերել մանկուց, ծնողներից, լեռնային մայր բնությունից:

Նրանք դաշտ էին դուրս գալիս ասես հողի կանչով, վաղ արշալույսին, լավ նախապատրաստված: Արորով արտը վարիչիս գովերգում էին իրենց, աշխատանքի առաջին օգնականին՝ եզանը, երգում էին՝ «հորովել, եղբ ջա՛ն, ախպեր ջա՛ն...»:

Գուժանով վար անելիս, ուրախանալով խոր ակոսներով, սպասվելիք բարձր բերքով, գովերգում էին գուժանը. «... գուժան չենք, աշխարհն ինչ էր...»: Հատիկը ակոսը նետելիս խաշակներում էին... Ամառը լեռներում հով էր լինում, երեկոյան հովը իջնում էր հողի աշխատավորին, այդ պատճառով նրանք տուն էին վերադառնում վերջալույսին: Իսկ կալ անելիս, արտը ջրելիս աշխատում էին նաև գիշերները: Բայց ոչ պակաս շոքահինգ հողուց: Երբեմն էլ զինված:

Հայ շինականը քրտինքով արդար վաստակած հացը համարում էր երկնային բարիք, իր սեղանի զարդը: Հացը առատության խորհրդանիշն է: Մարդը հացով է ապրում: Հացն է կերակրում ողջ աշխարհին: Հացի պակասը սով է բերում... Մեծ հարգանք մատուցելով հացին, գետնին բնկած հացի կտորը անմիջապես բարձրացնում էին ասելով՝ մեզա բեզ, աստված, ներող եղիք: Հացի մասին՝ որպես ժողովրդական բարիքի, լեզենդներ էին հորինվում, երգեր ասվում: Մարդուն գովելիս ասում էին՝ կերածդ հացը հալալ լինի, իսկ մեղադրելիս՝ կերածդ հացը հարամ լինի: Զարիքից ազատվելիս ասում էին. «էնում էիր մի կտոր հաց սովել»: Ավանդաբար հարգում էին հացը, նրա բարեբար աշխատավորին:

Օրվա ուտելիք հացը լավաշն էր. որ թխում էին թոնրում, նույն օրը, վաղ առավոտյան: Սովորաբար հաց շատ էին գործածում. գուցե նրա՞ համար, որ փեսանդաշտցիների ցորեն հացը շատ համեղ է: Գաշտում աշխատողների համար կանայք գյուղից թարմ հաց, տաք ճաշ և այլ ուտելիքներ էին տանում: Գեղջկուհիների, հացվորների խումբը գնում էր շտապելով, ուրախ տրամադրությամբ, ոմանք շալակած տանում էին թարմ լավաշը, ոմանք՝ պղինձները համեղ ճաշերով, կավի բրեզաններն ու փայտյա գդալները, մածուեն, կծերով ջուր՝ թան պատրաստելու համար:

Հողի աշխատավորները հացվորներին դիմավորում էին սիրով, մեծ հարգանքով: Խմբով հացի էին նստում գեղերի սովերներում, կարկաչահոս առվակների ափին, սարի կանաչ լանջերին,

պաղ աղբյուրների մոտ: Ուտում էին խմբով, մեծ ամանից, ուտում էին ուրախ տրամադրությամբ, կատակ-գրույցներով:

Հացի էին նստում 10—20 հոգի: Հանգստանալիս գլուխները գնում էին ծալապատիկ նստած մայրերի, կանանց, բույրերի ձեռներին: Կանայք, իրենց բնույշ ձեռքերով շոյում էին նրանց գլուխները, անուշ բուն բերում:

Այդ խաղաղ աշխատանքի մարդկանց ճաշը մի ջինջ հանգիստ էր, հոգեկան բավականություն:

Փեսանդաշտցիների առողջության և երկարակեցության պայմանը նրանց բարձրորակ սնունդն էր, բուսական աշխարհով հարուստ, ծաղկաշատ լեռների հրաշալի օդը, ջուրը, մեղմ կլիման, ֆիզիկական աշխատանքը, ընտանեկան ջերմ միջավայրը...

Մեծան ամիսներին հիմնական ճաշատեսակը հավի մսով հարիսան էր: Աշնան ամիսներին մեծ քանակությամբ դավուրձա էին պատրաստում երիտասարդ անասունների մսից և կնուճներով հորում հողի մեջ:

Մովորաբար մեծ ընտանիքներում առաջինը ճաշի էին նրստում ազամարդիկ 10, 15, 20 հոգով, որոնց սպասարկում էին հարսները, երիտասարդ աղջիկները: Բայց ոչ նորահարսները: Հոգ կանանց նկատմամբ ցուցարհրում էին հատուկ ուշադրություն, հոգատարություն: Տղամարդկանցից հետո ճաշի էին նստում կանայք երեխաներով:

Հարսնացուներին սովորաբար ընտրում էին տղաների ծնողները, այն էլ հարևան գյուղերից, շրջաններից և հիմնականում՝ 27—28 տարեկան աղջիկների:

Հարսանիքները սովորաբար տեղի էին ունենում աշնանը, բնորոշվածքից հետո՝ բացօթյա, երբեմն օրերով էին շարունակվում: Գյուղի հասարակության համար տոն էր:

Ընտանիքում բաժանությունը հազվադեպ էր՝ կապված չրբություն հետ, ծնողների համաձայնությամբ, ջերմ մտերմությամբ, հարգանքով, որովհետև ամուսնալուծությունը նահապետական սովորությունների համաձայն, համարվում էր անպատվություն:

Հայ աղջիկները, աշխատասեր, աշխուժ, գեղեցիկ էին, առաքինի, մաքրակենցաղ, երիտասարդ կանայք՝ ազգային գույնըրույն տարազներով, վառվռուն հայացքով, ճկուն ու համաշափ կենցածքով: Հարգալից էին հեզ ամոթխածությունը՝

հնազանդ, անպիղծ հավատարիմ: Բարձր էին պահում կանացի արժանապատվությունը, ընտանիքի սրբությունը, մայրությունը:

Մայր, ջերմ ու հարազատ մայր, աշխարհի ամենասուրբ էակը, որին պարտական ենք մեր ծնունդով, կյանքով: Նույնիսկ թուրքական դաժան իրականության պայմաններում հայ կինը՝ նահապետական մեծ ընտանիքի հոգսերի մեջ աշխատասեր, 8—10 խոհեմ զավակներ էր մեծացնում:

Աշխարհում շատ բան եմ սիրել, բայց ամենից շատ սիրել եմ բարյացակամ, ոչ գրագետ, բայց խելամիտ գեղջկուհի մորս:

Մանկությունս անցել է ընտելյան գրկում, գետահովիտներում, լճերի, առուների, լեռնային աղբյուրների կանաչաշատ ավիերին, մանկուց բնաշխարհը ճանաչելով սիրել եմ բնությունը:

Սիրում, գուրգուրում, արոտի էինք տանում գառներին, շարածճի ուլիկներին, հորթներին, գոմշաձագերին, հնազանդ ու պատրաստակամ օգնում ծնողներին, գյուղում ուրախ ու զբվարթ էր անցնում պատանիների ու աղջիկների երջանիկ մանկությունն ու պատանեկությունը:

Փեսանդաշտում սովորություն կար. մեծ պղինձների մեջ կաթը եփում, սառեցնում էին, երեսից սերը հավաքում լավաշի պես հանում, չորացնում, դարսում մառանները որպես ձմեռվա ուտելիք: Ընտանիքի 5—10, երբեմն ավելի կանայք կանթերով պղինձները շարում էին օջախների վրա, կաթ եռացնում, պանիր պատրաստում, երիտասարդ կանայք շատ էին սիրում կաթի շիճուկով գլուխները լվանալ և լողանալ:

Անասնապահական այդ հայտնի շրջանում կային մեծ ընտանիքներ, որ ունեին մինչև 500 գլուխ, նույնիսկ ավելի ոչխար, մինչև 15 և ավելի կթան կով, 6—8 լծկան եզ, գոմեշներ, ձիեր և գալլերի գեմ կովոզ գամփո շներ:

Քեկ գյուղն ուներ իր հովիվները, մեծաքանակ ոչխար ունեցողները պահում էին նաև իրենց առանձին հովիվը: Հովիվները սովորաբար լինում էին հայեր, քրդեր, բայց ոչ թուրքեր, որովհետև վերջիններս մաքրակենցաղ չէին, ծուլ և անվստահի էին:

Սևահողային սարահարթի, լեռնային կանաչ արոտավայրերի և առատ անասնակերի շնորհիվ կաթնամթերքից, մսից պատրաստված սննդամթերքները մեծ համբավ ունեին Վանի, Բիթ-

լիյի շուկաներում: Հատկապես Փեսանդաշտի պանիրը, որը փառանքի, բեյբրի, ազնվականների, վաճառականների սեղանների մշտական համեղ ուտելիքն էր:

Վանի, Բիթլիսի վաճառականները Փեսանդաշտի գյուղացիների հետ նախօրոք պայմանավորվում էին մեծաքանակ հացահատիկ, պանիր, յուղ, զավուրմա գնելու համար, որոնք մեծ պահանջարկ ունեին: Նրանք վաճառքի էին հանում նաև տնայնապրտության ապրանքներ, հատկապես բարձրորակ գորգեր, շաքեր, բրդյա գուլպաներ և այլ գործվածքներ:

Փեսանդաշտում դպրոց չկար, երեխաները սովորում էին Աղթամարում և Վանում: Սակայն եկեղեցիներ կային, որոնցից ինչպե՞ս Հառնդի ս. Վարդան եկեղեցին էր, գյուղի բարձրագույն դպրոց: Եկեղեցի էին հաճախում կանոնավոր, պահպանելով ավանդական սովորությունները, ստանում հավատի, համոզմունքի հոգեկան բավականություն: Եկեղեցին ամրացնում էր ազգի և հավատի միասնությունը:

Հառնդ գյուղի տեղի Պողոսը ազնվորեն ծառայում էր իր ժողովրդին: Նա վարժ տիրապետում էր թուրքերենին, քրդերենին: Քչի գետեր նաև անգլերեն: Թերթեր էր ստանում Վանից, Պուլսից, սիրով կարգում էր ժողովրդի համար, նրան տեղյակ պահում աշխարհի անցողիկներին: Ձմռան տաք օդաներում գյուղացիներին սովորեցնում էր գրաճանաչում, պատմություններ էր ուսուցանում, գրքեր կարգում: Նա ուներ իր մեծ ընտանիքը, հրաշքի երկրագործ էր, անասնապահ:

Հայ լուսավորչի գեմ խիստ լարված էին թուրք բռնակալները՝ նրան մեղադրում էին գյուղացիության մեջ լուսավորչական ազդեցության տանելու համար. դա համարելով ըմբոստություն Թուրքիայի գեմ: Նրան հաճախ կանչում էին Վան, ծեծի ենթարկում, շաբաթներով, ամիսներով կալանավորում: Ազատում էին մեծ գումարներ կորզելով:

Երգան գյուղի երիտասարդ տերհայրը, նույնպես ավարտել էր Աղթամարի հոգևոր դպրոցը: Նա էլ հետևում էր տեղի Պողոսի ողբնակին:

Տերհայրերը հալածանքներից չէին վճատվում, որովհետև թուրքում էին իրենց ժողովրդին, իսկ ժողովուրդը նրանց հետ էր:

Փեսանդաշտցիք իրենց աճեցրած առատ բերքը չէին վայելում՝ ծանր հարկային քաղաքականության պատճառով: Ավելի

ճշգրիտ, դա հարկահավաք չէր, այլ թալան: Բազմատեսակ հարկերից բացի հայերը վճարում էին նաև գլխահարկ քստ անձերի քանակի: Հղի կանանցից գանձվում էր երկու հոգու հարկ, որպեսզի հայ մանուկներ քիչ լույս աշխարհ գան, նորածին արու զավակի համար վերցվում էր զինհարկ: Հարկահավաքներին դիմադրելը համարվում էր անհնազանդություն, դավադրություն թուրքապետության դեմ, սուլթանի դեմ և դաժանորեն պատժվում էր:

Հարկերը հավաքում էին տարին մի քանի անգամ:

Հացահատիկի հարկը համարվում էր պետության հիմնական հարկը և սովորաբար սկսվում էր կալերի ժամանակ: Կալից էլ օջվալներով» (պարկ) հացահատիկը բռնությամբ տանում էին, իրենց բաժինն էլ հետք, գյուղացիների սայլերով:

Անասնահարկը սովորաբար սկսվում էր ուշ աշնանը, որի դիմաց մեծ մասամբ ոսկի փող էին պահանջում:

Առանձնապես սուսկալի էր սուլթանին պատկանող արտակարգ հարկերը, որոնք գանձում էին պետական պաշտոնյաները՝ զինված ուժերի օգնությամբ վալիների, կայմակամների և մյուսների հսկողությամբ: Նրանք էլ իրենց հերթին առիթից օգտվելով, հարկահավաքն այնպես էին կատարում, որ սուլթանի հարկաբաժնից հետո իրենց էլ ոչ պակաս բաժին մնար:

Թուրքական պետության վարած հարկային քաղաքականությունը հիմնականում հետապնդում էր մի նպատակ՝ հայ աշխատավորությանը պահել խիստ կախման ու հալածանքների մեջ: Որևէ առևտրական կետ գյուղերում չկար, դրանք գտնվում էին շրջանի, գավառի կենտրոններում: Նավթի, օճառի, լուցկու համար սետք է օրերով ճանապարհ գնային վան, Բիթլիս քաղաքները:

Համատարած օգտագործում էին ձեթով ճրագը, կրակի համար շախմախը, կտորեղենը գործում էին տնայնագործները: Չկար հողի մշակման գործիքներ: Գլորացիների, կուլտուրական օջախների, եկեղեցիների կառուցումը գործնականում արգելված էր:

Այդ ծանր ճնշումների պայմաններում էլ արիասիրտ հայ շինականը չէր վհատվում: Նրան ոգևորող, շունչ տվող ուժը իր ազգային կրոնական հավատն էր, աշխատասիրությունն էր՝ դրանից ստացված առատ բերքը: Հայ շինականի կրած անթիվ

առաջանքներից նրա կաշին արդեն դարադվել էր: Թուրք բռնակալների հարկերից խուսափելու համար երբեմն ստիպված էր դիմել իր վաստակը պահպանելու հնարամտությամբ: Պրինակ՝ Փեսանդաշտում ձյան շերտը սովորաբար հասնում էր մեկ մետրի: Գյուղացիներն այդ առիթն օգտագործում էին հարկահավաքի ժամանակ. ամրոցյանման թաքստոցներ պատրաստելով: Սառած ձյան հաստ շերտերը քառակյունի կտրում, կտր շարում էին շորս-հինգ մետր բարձրությամբ, ծայրերը մզանն ծածկում, ներսը թողնելով ընդարձակ, ազատ տարածություն: Հատակը ծածկում էին դարմանի հաստ շերտով: Պատի սակ կտր շարում էին առվույտի խրճեր: Ներսը տեղափոխում էին երբեմն 50—100 ոչխար, բայց ոչ այծեր, որովհետև վերջիններս աղմկոտ, անհանգիստ լինելուց բացի, ունեին նաև սոսք ձայն: Նոր եկող ձյունը ամրոցը ծածկում էր իր հաստ շերտով, այն նմանվում էր խոտի դեզի՝ կորցնելով կասկածի հնարներ:

Իսկ հացահատիկը սովորաբար թաքցնում էին հաստ պատերով կավից պատրաստված հորերի, կարասների մեջ և այլ միջոցներով: Հայ շինականը ամեն կերպ ձգտում էր բռնակալների հետ բախումներից խուսափել: Կյանքը ապացուցել էր, որ Շայքրի և Թուրքերի միջև բռնկվող բոլոր բախումներում, անկասկածաբար հայը մեղավոր է, թե չէ, թուրքական իշխանությունները միշտ հային էին մեղավոր ճանաչում և խստորեն դատապարտում: Թուրքական պետական օրենքներով հայը դատաբաններում թուրքի գործով որպես վկա իրավադրված էր: Նույնիսկ հայի տանը հաց ուտելիս էլ թուրքերն իրենց պահում էին իշխողի դերում, սանձարձակ վարքագծով, ոտնահարում էին հայ ընտանիքի պատիվը:

Հայերի կյանքը օսմանյան Թուրքիայում բացարձակապես անզառույց էր: Երբեմն էլ կրած անթիվ տառապանքները հասնելով ծայրահեղությունների, լցնում էին հայերի համբերության բաժակը, և նրանք ի վերջո հարկադրված էին լինում ընթրատանալ:

Մուրաւի լծի տակ

Այո՛, իր բարեբեր երկրում վայրագ թուրքի լծի տակ հայ շինականը երբեք հանգիստ չի եղել, նա տնքում էր կողոպտիչ հարկերից, պարտքերից, որովհետև օսմանյան կայսրութիւնը հպատակ ժողովուրդների համար կատարյալ դժոխք էր, որտեղ իրեն կշանք տվող հողը գովերգող հայ շինականի երզը վերջանում էր դառնագին:

Երկիրս հին է ու հավետ,
Հողս բնդարձակ է,
Քուրն առատ է:
Մարերը կանաչ են,

Բերքս առատ է
Վզիս անգութ սուլթան է,
Հողդ տուր, ասում է,
Կապանեմ ազգիդ, ասում է...

Վասպուրականի Հառեղ գյուղի բարձրագիւր ս. Վարդան կեկղեցու ընդարձակ բակից երևում էր ողջ Փեսանդաշտը: Եկեղեցու կանաչ բակում խաղացող երեխաներս նկատեցինք Շատախի կողմից եկող մի խումբ ձիավորների, վազեցինք գյուղապետ Գալուստին տեղեկացնելու: Գյուղապետը մեծամեծների հետ շտապեց գյուղի ժայրամասը՝ հաշարբայրի մոտ հեծյալներին դիմավորելու, պարզելու նրանց ով լինելու:

Գալուստը վաթսունն անց, պատվարժան, կայտառ, կիրթ անձնավորութիւն էր: Նա ավարտել էր Վանի դպրոցը և շուրջ 25 տարի գյուղի ուսն էր: Ազնվորեն ծառայում էր իր ժողովրդին: Հրաշալի տիրապետում էր թուրքերեն, քրդերեն, քիչ էլ անդլերեն լեզուներին:

Նա իր տասնամեկ տղաների և փեսաների ուժերով (իհարկեմ, մեկ-մեկ էլ գյուղի երիտասարդներն էին օգնում) կառուցեց մի նոր, հարմարավետ տուն՝ բարձր պատուհաններով, հյուրերի համար հարմարավետ ննջարանով, որն ուներ սեղանատուն, հացատուն և այլն: Պատվարժան գյուղապետը դիվանագիտորեն էր դիմավորում գյուղ մտնող պաշտոնական, ոչ պաշտոնական անձանց: Գիտեր ում հետ ինչպես վարվել: ... Նա իր կիրթ վարվեցողութիւնը բավականութիւն էր պատճառում նաև բարձր պաշտոնյա անձանց: Երբեմն թուրք պաշտոնյաները նրա հետ խոսելիս ամաշում էին, որ հայն իրենց մայրենի լեզվին ավելի

լավ է տիրապետում, քան իրենք: Ապա ինչքան գեղեցիկ էր գրում հայերեն, թուրքերեն, հատիկ-հատիկ շարում էր ինչպես մարզաբնա:

Գյուղապետը մի քանի մեծամեծների հետ հարգանքով դիմավորեց «հյուրերին» և հրավիրեց իր տունը: Հայերի հարգանքի վերաբերմունքը, բարենները նրանք ընդունեցին արհամարհանքով: Եկվորները ձիերի վրա էին, իսկ ուղեկցողները ոտքով էին գնում առանց որևէ խոսք փոխանակելու: Օնբաշին նկատեց, որ գյուղում հազվադեպ մարդիկ են երևում և առանձնապէս հետաքրքրութիւն չեն ցուցաբերում իրենց նկատմամբ: Նա զբաց, որ իրենց գալը գյուղացիներին հաճելի չէ: Գյուղապետի տան առջևի հրապարակում կանգ առան: Հեծյալները, հետևելով օնբաշուն, ձիերից վայր իջան:

Գյուղապետը հավաքված պատանիներին հանձնարարեց ձիերին առնել կեր տալ: Չնայած եկվորների սառնութիւնը, փորձված գյուղապետը կանչեց կնոջը և ասաց.

— Մանգուխտ, ճաշասնյակում մոտ 15 մարդու համար սեզան պատրաստիր:

Մնուհետև զգուշացրեց, որ սեղանատանը ոչ մի երիտասարդ կին, աղջիկ չերևա: Ուղարկեց հարևանների տները:

Մանգուխտը պիտով խոնարհվեց, որ նշան էր, թե այդպես կարէի:

Գժերով ջուր բերեցին, դիմավորները լվացվեցին:

Մինչև սեղան պատրաստելը, գյուղապետը, ներսսը, Հակոբը. Չազարը հյուրերի հետ սկսեցին զրուցել: Պարզվեց, որ նրանք Գանձալի խալի բեյի անձնակազմի զինվորներն են: Շատախից են գալիս: Մեկնելու են Գանձալ՝ բեյին զեկուցելու նրա կարգադրութիւնները կատարելու մասին: Հարցեր տվեցին բեյի ատրուցիան և տրամադրութիւն մասին և քաջաողջութիւն կամեցան նրան: Անցավ կես ժամ, կամ քիչ ավելի, հյուրերին հրաւիրեցին սեղանատուն: Թուրք զինվորները հիացան՝ սեղան, վրան սփռոց, աթոռներ, մետաղյա զդալներ տեսնելով, որոնք իրենց գյուղերում չկային:

Հարցաբերութիւնից զոհ մնալով, վերջում գովերգելով խոսեցին հայ կանանց ընդունակութիւնների, բարբի, մաքրութեան մասին և այլն: Օնբաշին հայտնեց, որ արդեն ուշ է, մեկնել չեն կարող և գիշերելու են նրանց մոտ: Այդ լուրը գյուղապետ Գալուստին խիստ անհանգստացրեց:

Ողջ գյուղին անհանգստացնում էր նրանց գալու պատճառը և միմյանց ասում էին՝ «Զգույշ եղեք փորձանքից...»:

Մայիսյան խաղաղ, պարզ կա երեկո էր: Արևը իր փեղեղը հավաքել էր դաշտից: Սակայն լեռների վրա գեռես իջնում էին նվազ ճառագայթները:

Գաշտի աշխատավորը շտապում էր գործը վերջացնել՝ տուն վերադառնալ: Հովիվները սարերից գյուղամեջ էին իջեցնում ուշխարի հոտերը: Երիտասարդ աղջիկները կժերն ուսներին շտապում էին խաչաղբյուրը ջրի, տնտեսուհի կանայք պատրաստվում էին կովերի կթին, ջերմ հոգատարությունը դիմավորելու հոգնած, դադրած հանդից տուն վերադարձող աշխատավորին:

Գյուղապետ Գալուստի տան առջևի փոքր հրապարակում խնամքով տաշված քարե կոկիկ նստարաններ կային: Սովորաբար այդտեղ էին հավաքվում գյուղի մեծերը՝ երկար թրզբեհները ձեռքին, զրուցում էին դեսից դենից, աշխարհի անցուգարձից:

Գժրախտաբար այդ երեկո նստարանները զբաղեցրել էին թուրք զինվորները: Ոչ ոք չէր ցանկանում և տրամադրված չէր նրանց մոտենալ, հետները զրուցել, որովհետև նրանք իրենց պահում էին անկիրթ և սանձարձակ: Զրուցում էին շատ բարձր, ծիծաղում անցուգարձող գյուղացիների վրա: Հատկապես սանձարձակ էին խաչաղբյուր կժերով ջրի գնացող-եկող կանանց նկատմամբ: Ամոթխած հայ կանայք այնպես էին անում, որ իբր ուշին շեն լսում, շեն տեսնում, որովհետև գիտեին, թե ում հետ գործ ունեն: Նրանց անտարբեր վերաբերմունքից ավելի էին զայրանում թուրքերը:

Հառեղ գյուղի աղբյուրը ճարտարապետական մի սքանչելի կառույց էր և ավելի քան 200 տարվա պատմություն ուներ: Կառուցվել էր գյուղի հասարակության ուժերով: Նրա արժաթափայլ, պաղ, համով ջուրը բերվում էր Զմեն սարից, ծածկված ակն աղբյուրից: Տաշված քարերով ճաշակով կառուցված աղբյուրի վրա կանգնեցված էր մոտ երկու մետր բարձրությամբ մի շքեղ խաչքար: Աղբյուրը գյուղի գեղեցկությունն էր, սրբավայրը: Կառուցողները չէին մոռացել նաև երեխաների ամառային բավականության մասին: Նրանց համար աղբյուրի առջև կառուցել էին սալահատակով մի գեղեցիկ ջրավազան: Նախապաշարմունք կար, ըստ որի, եթե նորապսակ կանայք վաղ արշալույսին սուրբ խաչաղբյուրի ջրավազանում լողանան, բարի

լույսի ջուրը խմեն, խաչքարի առջև ծնկաչոք մեղքերին թողուցնեն խեղճներ, աստված նրանց մուրազները կկատարի, առաջնեկ երթնան տղա կծնվի, օջախի սյունը ամուր կլինի... Գուշուրդ պատվեների խորհուրդներով երիտասարդ կանանց համար աղբյուրը նաև մուրազների սրբատեղի էր:

Առավոտ վաղ աղբյուր գնացող կանայք հանդիպելիս բարի քաննություններ էին մաղթում մուրազի համար այստեղ աղոթող երիտասարդ կանանց:

Աղբյուրը գյուղի արևմտյան ծայրամասում էր: Վանից, Հայր և Երջ, Գավաշից, Շատախ գնացող ճանապարհի վրա: Բոլոր անցող ջրիտոնյաները պիտակները հանում, խոնարհվում էին խաչքարի առջև, ապա շարունակում ճանապարհը:

Աղբյուրի մոտ զարիբ անցվորների համար սալաքարից շինված սեղան, նստարան կար, որպեսզի նստեն, հանգստանան, բացեն խուրջինը, դաստախունը փոեն, հաց անուշ անեն, պաղ ջուր խմեն, սրտները հովացնեն, կառուցողին օրհնեն ու հետո շարունակեն իրենց ճանապարհը: Աղբյուր կառուցող համադրուղացի վարպետ Հակոբի ժառանգները գյուղի հասարակության հետ ամեն տարվա մայիսի առաջին կիրակի օրը հավաքվում էին աղբյուրի մոտ, ուրախ տոնախմբությամբ նշում բացման օրը: Գաշտի գույնզգույն ծաղիկներ էին դնում խաչքարին, մեծ-մեծ պղինձներ շարում խնամքով պատրաստված օջախներին ուշադր, աքլոր մորթում, մատաղ անում, համադրուղացիներով սեղան նստում, պաղ ջրից անուշ անում:

Տերահայր օրհնում էր հացը, այնուհետև սկսվում էր քեֆ տրախությունը, զհոյ զուռնայով: Կրակոտ երիտասարդ տղաներն ու աղջիկներն իրենց ազգային գույնզգույն տարազներով, աշխույժ պարերով, երգերով, խաղերով մինչև ուշ երեկո զվարհանում էին: Այդ օրը երեկոյան իր հարևան ընկերուհիներ՝ Աստղիկի և Նվարդի հետ սուրբ աղբյուր ջրի գնացողներից էր նաև Գավթի կին Հասմիկը: Նա Հառեղ հարս էր եկել Հայաց և Երջ Գլթենց գյուղից: Պատվարժան ֆիդայի Տիգրանի քույրն էր:

Նոր էր բուրբել 30 տարին, սակայն ուներ 5 շիկահեր կրտորիճ տղա և իր նման երկու գեղեցկուհի աղջիկներ: Գյուղում Հասմիկը մեծ հարգանք էր վայելում ազնվությամբ, ամոթխածությամբ նա հայ կնոջ տիպար էր, նվիրված իր ընտանիքին, ջավակներին, մեծ ու փոքրի հարգող:

Իր աշխուժությամբ, ձգված, սլացիկ կազմվածքով ասես երիտասարդ աղջիկ լիներ: Կարծես ծնված օրից նա իր հետ բերել էր ժպիտ և ուրախություն:

Ցորենագույն, գեղեցիկ դեմքին փայլում էին աչքերը: Նրա քնքուշ քայլվածքը գեղեցկացնում էին մինչև ծնկները հասնող խնամքով հյուսված զույգ ծամերը: Գեղեցիկ տղամարդ էր նաև 35-ամյա բարեհոգի ամուսինը, վառվառ հայացքով, ամուսնազուկներով, լայնաթիկունք, արծվաքիթ, կարիքավորներին օգնելու միշտ պատրաստ Գավիթը: Ընկերուհիներով ջրի գնալիս թուրք զինվորները նկատել էին հմայիչ, վարդագույն զգեստով Հասմիկին. նա զրավել էր զինվորների ուշադրությունը: Վայրկենապես տիրեց քար լուծյուն: Բողոքի հայացքներն ուղղված էին Հասմիկին և նրա ընկերուհիներին: Ինչպես մյուս կանայք, երեք ընկերուհիներն էլ ուշադրություն չդարձնելով թուրք զինվորներին և նրանց խոսքին, կծերն ուսներին զրուցելով աղբյուրից տուն էին դառնում:

Տասնապետը մեկ զինվորի հետ կտրեց Հասմիկի, Նվարդի, Աստղիկի ճանապարհը: Հայ կանանց նրանց սանձարձակությունը զարմանք պատճառեց:

Տասնապետը պահանջեց, որ Նվարդն ու Աստղիկը հեռանան, իսկ Հասմիկը մնա: Ընկերուհիները շեղացան. կծերն ուսներին կանգնած մնացին Հասմիկի կողքին: Տասնապետը կրկին նրանց վրա բղավեց, որ հեռանան, սակայն նրանք տեղից չշարժվեցին:

Տասնապետը Հասմիկից ջուր ուզեց: Հասմիկը մի փոքր շփոթվեց: Առանց տասնապետի դեմքին նայելու, արհամարհական շարժումով կուժը մի մի փոքր թեքեց և ջուրը թափվեց գետնին: Օնբաշին շնայեց էլ թափվող ջրին՝ կլանված էր հայ կնոջ գեղեցկությունը: Ասես կորցնելով իրեն շնչաց՝ «Տեր իմ, այս ի՞նչ աստվածային գեղեցկություն է»:

Հասմիկը զգալով, որ այդ ամենը լավ հետևանք չի ունենա, որոշեց ընկերուհիների հետ շարունակել ճանապարհը, հեռանալ: Հազիվ մի քայլ արեց, օնբաշին բռնեց նրա թևը:

— Սպասեցեք, խանում:

Հասմիկը զայրացած ու արհամարհանքով թևը ուժգին թռտվեց և ազատվելով սանձարձակ թուրք հրամանատարի ձեռքից, ընկերուհիների հետ շտապեց տուն:

Կանանց այդ համարձակ քայլը տասնապետին դուր չեկավ:

Նա զայրացած հայհույանքներ շարտեց հայերի, հայ կանանց հասցեին: Իր իշխանությունը ցույց տալու համար որոշեց ատրո-ճանակի կրակոցով վախեցնել կանանց. նրանց վրա կրակեց: Հասմիկի ուսին զրված կուժը կոտրվեց: Անսպասելի կրակոցից կանայք վախեցան, ճշացին, երկրորդ կրակոցից Հասմիկը թևին ցավ զգաց, բայց էլի վազեց:

Զինվորները, որ ուշադիր հետևում էին սանձարձակ հրամանատարին, սկսեցին հռհռալ:

— Մաշալլա, օնբաշի,— ապա քաջալերում էին նրան: Սակայն նկատելով, որ դեպքի վայրն են շտապում գյուղացիները, անմիջապես շրջապատեցին հրամանատարին:

Շտապ այնտեղ եկան նաև գյուղապետը, ապա ներսեսը և վառնդից, բռնկումներից խուսափելու համար գյուղացիներին զմեռելով ասացին.

— Վտանգավոր ոչինչ չկա, անմիջապես ցրվեք, մենք կըզուղվենք այդ գործով:

Իսկ թուրք զինվորները, կարծես ոչինչ չէր պատահել, հպարտ քաշվելով շարժվեցին դեպի գյուղապետի տունը:

Վազբի պահին Նվարդը նկատել էր, որ Հասմիկի թևը արյունոտ կարմրել է:

«Վա՛յ բռնանամ ես»,— ասելով զլիսաշորով թևը ամուր կապեց: Երկրորդ գեղապետը տասնապետը հարվածել էր Հասմիկի թևի վերևի մասին: Նվարդը և Աստղիկը ընկերուհուն անմիջապես հեթմ նազիկ տատիկի տուն տարան:

Նկատելով ներս մտնող Հասմիկի կապված, արյունոտ թևը, ճիշմը անմիջապես տեղից վեր կացավ:

— Վա՛յ, Հասմիկ ջան, աղջիկս, ի՞նչ է պատահել,— ասաց ու անմիջապես բերեց գեղորայքը, կաթի շիճուկով մաքրեց վերքը. զաշտային ծաղիկների շորացրած փոշի ցանեց և խնամքով կապեց:

— Որդիս, ում ես մի կտոր հացով լավություն արել, որ գեղապետը ոսկորին չի հարվածել,— ապա հուսադրեց նա,— ծակել է փոփուկ միսը, վտանգավոր ոչինչ չկա, շուտով կլավանա:

Հասմիկը խոնարհվելով՝ մեծ տատիկի ձեռքը համբուրեց իր շնորհակալությունը հայտնեց, արցունքի կաթիլը թրջեց տատիկի շորացած ձեռքը:

Տառը հիացած էր Հասմիկի կիրթ և հարգալից վերաբեր-

մունքից: Շնորհակալության խոսքեր ասացին նաև ընկերուհիները և Հասմիկին տուն տարան: Դեպքի մասին իմանալով անմիջապես Դավթի տուն շտապեց ծեր հայրը՝ Ղազարը: Եկավ նաև գյուղապետը, իսկ Ներսեսը մնաց «հյուրերի» մոտ: Գյուղապետը խիստ անհանգիստ էր:

Դավթի վր, որ ընկերների՝ Տիգրանի և Սահակի հետ մեկնել էր սարը խոտհանքի, վերադարձավ ուշ երեկոյան:

Դավթի վր ննջարան մտնելիս կնոջը տեսավ անկողնու մեջ, թիկնած բարձին, թևը կապված, շրջապատված հարազատներով:

— Հասմիկ ջան, ի՞նչ է պատահել, — ասելով նետվեց դեպի կինը:

Գյուղապետը անմիջապես վեր բարձրացավ, կտրեց Դավթի ճանապարհը:

— Դու քաջ տղամարդ ես, քեզ հանգիստ պահիր, վտանգավոր ոչինչ չկա, պատահական դեպք է:

Դավթի վր գյուղապետին շսել շէր կարող: Նա հանգիստ մոտեցավ կնոջը, համբուրեց ճակատը, ծունկի իջավ թախտի առջև փռած ծաղկավուն խալու վրա:

Հասմիկը գրկի մեջ առնելով ամուսնու գլուխը, շոյելով մազերը, ասաց.

— Դավթ ջան, մի անհանգստացիր, վտանգավոր ոչինչ չկա, ո՞վ կհամարձակվի բո Հասմիկի մազին կաշել: — Շատ հանգիստ, մեղմացուցիչ պատմեց եղելութունը որպես պատահականություն: — Մի քանի օր հետո կառողջանամ, առանձնապես ցավեր չեմ զգում:

Գյուղապետը և Դավթի հայրը մինչ այդ բուրդին զգուշացրել էին, որ Դավթին չբողոքեն, ոտքի չհանեն թուրք զինվորների դեմ, հակառակ դեպքում՝ այդ անզգուշությունը գյուղի վրա թանկ կնստի:

Գյուղապետը Հասմիկին ապաքինում ցանկանալով՝ Ղազարի հետ դուրս եկավ:

Տան շեմքին Ղազարը որդու ընկերներին պատվիրեց տանից տեղ շքնալ, սպասել մինչև իր վերադարձը:

Գյուղապետը տեսնելով բարձր տոնով թուրքերի հասցիին խոսող հավաքված հասարակությունը, խիստ բարկացավ և պահանջեց՝ անմիջապես հեռանալ:

— Ի՞նչ եք երիտասարդներին գրգռում, առանց այն էլ նրանք առջարյուն են, իսկ դուք կրակի վրա նավթ եք լցնում:

Բուրդին ցրելուց հետո հանգիստ, խաղաղ դիմքով, երկուսով ներս մտան: Չնայած Ներսեսը զրույցներով թուրք զինվորներին հանգստացրել էր, սակայն նրանք հասարակության զայրույթից վախեցած կուշ էին եկել, տասնապետին մեղադրում էին զենքով կրակելու համար: Գյուղապետը Ղազարին ծանոթացրեց թուրք զինվորների հետ, վրդովված խոսքեր ասաց տասնապետի հասցեին, որ զույնը գցել դեղնել էր և վերջում ավելացրեց.

— Մենք՝ հայերս, ձեզ պես չենք, մենք ներել գիտենք: Ձեզ ոչ ոք ձեռք չի տա, քնեք հանգստացեք, առավոտը ողջ և առողջ ճանապարհ կղնենք բուրդիդ: Իմ տղաներից և նրա ընկերներից ոչ մի վտանգ մի սպասեք, ես այդ երաշխավորում եմ, — զինվորներին ասաց ճերմակահեր Ղազարը, ապա ավելացրեց: — Երբեք եք հանգիստ քնել: Բարի գիշեր, — ու դուրս եկավ: Հասմիկն թուրքերը պառկեցին քնելու: Ողջ գիշեր վախեցան, անհանգիստ էին:

Այդ գիշեր անհանգիստ էր նաև գյուղը: Աջուրականչին գյուղապետի տան առջև հրաձգութուն լավեց ի պատասխան թուրք զինվորների:

Գալուստը հրաձգություն ձայնից վեր կացավ, լամպը վառեց, մտավ զինվորների ննջարանը, հանգստացրեց, որ ոչինչ չկա՝ տղաներ են, ջահելություն են անում: Առավոտյան նա մեծամեծների հետ «հյուրերին» ճանապարհ դրեց մինչև գյուղից դուրս: Երբ զինվորները պատրաստվում էին նստել թամբած մեքերը, Դավթի վր մոտեցավ օնբաշուն և ասաց.

— Մենք դեռ կհանդիպենք: Տասնապետը նայելով պարթևահասակ հայ քաջին, սարսափ զրաց: Ձինվորները ձիերը նստելով վախից սլացան զնդակի արագությամբ:

Գյուղապետը խոր շունչ քաշեց, հանգստացավ, ասաց.

— Այս փորձանքից էլ ազատվեցինք: Յզբմեկիները որքան սանձարձակ են, այնքան էլ վախկոտ:

Վասպուրականում կամավորական հիմունքներով ստեղծված հայ ֆիդայական զինված խմբերը նվիրված էին հայերի գոյության պահպանման հայրենասիրական պատվաբաժան գործին: Պայքարում էին թուրքական բռնակալության դեմ, պաշտպանում հայ աշխատավորությանը կողոպտումներից, կոտորածներից: Որպես կանոն, նրանք թուրք աշխատավորներին նեղություն չէին պատճառում:

XIX դարի վերջերին ֆիդայիները թեև տարածված էին Արևմտյան Հայաստանի նահանգներում, սակայն լինելով կամավորական փոքր խմբեր, որոշիչ դեր չէին կարող խաղալ արևմտահայության ազգային-ազատագրական շարժման գործում, որովհետև նրանք քանակով քիչ էին, գործում էին միմյանցից անջատ, շունչին կազմակերպված ղեկավար կենտրոն:

Այնուամենայնիվ, ֆիդայիները որոշակի ուժ էին և սարսափ էին ազդում թուրքերի վրա:

Հայ ֆիդայիների շարքերը հիմնականում համալրում էին մարտական, զինված այն անձնվեր հայ գյուցազուները, որոնք անտանելի համարելով թուրքական ծանր իրականությունը, բմբուսացել էին բռնակալական կարգերի, ավազակային հարձակումների դեմ: Պայքարում էին հայ աշխատավորի անձի, նրա տարրական իրավունքների պահպանման համար:

Հայ ֆիդայիները ունեին իրենց ներքին կարգն ու կանոնը, փորձված, կիրթ, երբեմն էլ զինվորական կրթությամբ ղեկավարներ:

Անոններում, կիրճերում, անտառներում և այլ հարմարավետ վայրերում նրանք ունեին խիստ զաղտնի, լավ կարգավորված կացարաններ՝ հատակը, պատերը սվաղած, խալիներ, խսիրներ փռված, հանգստի և սնվելու հարմարանքներ: Կապ ունեին մտակալ գյուղերի հետ: Գյուղապետները, բնակիչները նրանց մատակարարում էին սննդամթերք, զենք, զինամթերք և այլն:

Կարիքի դեպքում ֆիդայիների մոտ էին ուղարկվում փորձված հեքիմներ, բժիշկներ: Սանր հիվանդներին գաղտնաբար բուժում էին գյուղում, կամ քաղաքում: Ֆիդայիները իշխանություններից զաղտնի երբեմն գյուղերում էին բնակվում հատկապես խիստ ձմռանը: Անհրաժեշտության դեպքում նրանք անկախ եղանակից շտապ, կազմակերպված ներկայանում էին

նշված վայրը՝ այս կամ այն մարտական խնդիրը կատարելու: Հայ ֆիդայիները իրենց փոքր խմբերով հանդերձ համարձակորեն կռվում էին հայկական գյուղերի վրա հարձակվող զորամասերի, ավազակային ջոկատների հետ: Հարկահավաքի անվան տակ հայկական գյուղերը կողոպտող պետական գործիչներին և նրանց օգնող զինված խմբերին նրանք հաճախ ջախջախիչ հարվածներ էին տալիս: Ֆիդայիների ղեկավարների զխի համար թուրքական պետությունը մեծ զուամրներ էր սահմանել...

Թուրքական իշխանությունները ֆիդայիներին հետապնդում էին մեծաթիվ զորամասերով, գնդացիներով, հրանոթներով, օրերով, շաբաթներով, կատաղի մարտեր էին տեղի ունենում: Քուրբերը հրանոթային երկարատև կրակ էին բացում կասկածելի վայրերի վրա, քարուքանդ անում: Երբեմն էլ ֆիդայիների հարևան խմբերը միավորվում էին և ջախջախիչ հարվածներով պարտության էին մատնում թուրքական զինված ուժերին: Ֆիդայիները զիպուկ կրակող էին՝ հեռու տարածության վրա կարող էին ճանապարհով անցնող ձիավորին առաջին իսկ զնդակով ցած գլորել:

Առանձնապես մեծ էր հայ ֆիդայիների դերը 1915 թվականի եղեռնի մղձավանջային օրերին: Արևմտյան Հայաստանի շատ ու շատ քաղաքներում, շրջաններում, գյուղերում հենց նրանց ջանքերով կազմակերպվեցին զինված ինքնապաշտպանական կռիվները:

Փեսանդաշտի հայ ֆիդայիները տեղավորված էին Ձմեն լեռան կիրճերից մեկում: Ֆիդայիների բնակավայրը խիստ զաղտնի էր, նույնիսկ գյուղի բնակիչները չգիտեին նրանց տեղը:

Վերջին տարիներին Փեսանդաշտի հայ ֆիդայիների խումբը ղեկավարում էր Հառեղի գյուղացի Ջանոյենց Մեսրոպը: Խումբը գործում էր շատ արդյունավետ: Մեսրոպը բարձրահասակ, նիհար կազմվածքով, լայնաթիկունք, թուխ դեմքով, աշխույժ, խիստ համարձակ մի մարդ էր՝ բացառիկ նշանառու: Նա դաժան էր, խիստ կոպիտ և պահանջկոտ: Երբ գյուղ էր մտնում, նույնիսկ համազուլուցիները վախենում էին նրանից: Անաշուք էր թուրք պաշտոնյաների, զինվորականների նկատմամբ: Սակայն թուրք և քուրդ աշխատավորներին ոչ մի նեղություն չէր պատճառում:

Գյուղում նրա համար պահում էին երկու լավ ձի: Նա մե-

նակ, կամ 2—3 հոգով հետապնդում էր հայերի նկատմամբ դա-
ժանություն ցուցաբերողներին, նրանց սպանողներից, կողոպ-
տողներից վրեժ էր լուծում, և համարձակորհն ասում, որ վրի-
ժառուն հենց ինքն է եղել: Քուրքերը վախենում էին նրան հե-
տապնդելուց, որովհետև նա շատերին էր զետնին գլորել զըն-
դակի մեկ հարվածով: Երբեմն ժողովրդին գոփող դաժան տե-
րերի կյանքը բաշխում էր ոսկով: Մեսրոպը պահանջ էր ներկա-
յացնում բնակիչներին, կայմակամներին՝ կամ այսքան ոսկի, կամ
իրենց գլուխը: Եվ մերժողների նկատմամբ խիստ վրեժխնդիր
էր... Գաժան տերերը սարսափահար կատարում էին քաջ ֆի-
դայիների պահանջները: Այդ գումարները Մեսրոպը ուղարկում էր
ֆիդայիների համար զինք, զինամթերք ձեռք բերելու, բաժա-
նում էր կարիքավոր գյուղացիներին: Նրա խումբը բաղկացած
էր 50—60 հայ քաջերից, որոնք էլ հանդիսացան Փեշնաղաշտի
պաշտպանության հիմնական կորիզը:

Գավառի խաչի բնյը, Ոստանի Եուրբի կայմակամը խիստ
լարված էին Մեսրոպի դեմ, որովհետև նա մի քանի անգամ
աշխատավորներին կողոպտող այդ ավազակապետներից մեծ
գումարներ էր պահանջել և բաժանել շքավորներին:

Մեսրոպի այդպես դաժան լինելու պատճառը իրենք՝ թուր-
քերն էին: Նա ղեռ երեխա էր՝ 11 տարեկան, երբ գյուղի կա-
լում թուրք հարկահավաքները նրա 51-ամյա հորը՝ Ջանոյին
գյուղի հասարակության առջև ծեծելով սպանեցին: Հորը պառ-
կեցրին սալաքարի վրա՝ մինչև գոտկատեղը մերկացրած, մոր,
երկու քույրերի, 21-ամյա Ղևոնդ եղբոր և իր ներկայությամբ
դաժան ծեծի ենթարկեցին: Հաղթանակամ թուրքը մտրակով ամ-
բողջ ուժով հարվածում էր Ջանոյի մերկ մեջքին: Հարվածների
ցավերից տանջվող Ջանոյի հետ ցավը զգում էին Ջանոյի ըն-
տանիքի անդամները, համապատասխանաբար: Բայց ի՞նչ կարող
էին անել. զինվորներով շրջապատված էին: Պատանի Մեսրոպը
տեսավ նաև, թե ինչպես հայրը, հավաքելով վերջին ուժերը,
բարձրացրեց գլուխը, նայեց ողբացող կնոջը, երեխաներին:
Այս մի քանի հարվածից հետո ուժգին ճիչ արձակեց ու մե-
ռավ: Մտրակի հարվածներից արյան կաթիլները գլորվում էին
սալաքարի վրա: Մանր ապրումների մեջ Ղևոնդը չհամբերեց,
ակնթարթորեն վերցնելով բահը, հետևից հարվածեց մտրակով
հորը հարվածողի գլխին ու փռեց զետնին:

Թուրք զինվորները անմիջապես շրջապատեցին Ղևոնդին և

գալունահարեցին, բռնագրավեցին Ջանոյի հացահատիկը, այ-
րեցին տունը: Մեսրոպը մոր, քույրերի հետ մնաց անօթևան,
Հաջորդ օրը խոր վշտի մեջ ողջ գյուղը Ջանոյին և նրա որդուն
գաժավով հողին հանձնեցին:

Սգո պատարագի ժամանակ տասնմեկամյա Մեսրոպը հոր և
եղբոր դագաղի առջև ծնկաշոք երգվեց նրանց արյան դիմաց
վրեժխնդիր լինել արյունով: Մոտենալով տերհորը, խոնարհ-
վեց նրա առջև, համբուրելով սուրբ խաչը, խնդրեց օրհնել իրեն,
մաղթել հաջողություն և անվախություն:

Տերհայրը սիրով կատարեց պատանու ցանկությունը: Այս
մոտենալով ողբացող մորը, խոնարհվեց, որ նա ևս օրհնի իր
պատանի զավակին:

Եվ երբ նա 20 տարեկան կրակոտ երիտասարդ էր, հեռացավ
հորեղբոր տանից, որտեղ ապրում էր մոր և քույրերի հետ,
միացավ հայ ֆիդայիներին:

* * *

1913 թ. Փետրվարի 2-ին հացահատիկը առատ էր:

Գալտերի, սարալանջերի ոսկեփայլ արտերում, ցորյան հաս-
կերը ծանրությունից խոնարհված, մեղմ, համաշափ ալեկոծ-
վում էին:

Գալտը իր գիրկն էր կանչել հողից բարիքներ ստացող շի-
նականին: Քրտնաթաց շապկի թևերը ծալած, արտը հնձող
10—20 գերանդիավորների հետևից ժիր կանայք, պատանիները,
ծերունիները շէին հասցնում խուրձերը կապել:

Առանձնապես եռում էր աշխատանքը Եիդան գյուղի կալե-
բում: Այդ օրերին էր, որ անսպասելիորեն Եիդան մտան հար-
կահավաք քսան զինվորներ հարյուրապետ Սուլեյմանի գլխա-
վորությամբ:

Հասնելով կալերին, առանց բարևելու, խրոխտ ձայնով Սու-
լեյմանը բղավեց. «Կանչե՛ք ինձ մոտ գյուղապետին»:

Անմիջապես ընկավ գյուղացիների տրամադրությունը: Եի-
նականի գլխին սառը ջուր մաղեցին: Բոլորը մեկ մարդու պես
քաբացած, հայացքներն ուղղել էին ձիու վրա նստած դաժան
հարյուրապետին: «Այս ինչ սարսափելի դժբախտություն էր»,—
ընչում էին կալվորները:

Այդ մասին իմանալով երիտասարդ տանուտերը շտապեց

կալերը: Ենթակայացավ հարյուրապետին, շատ կիրթ և հարգալից բարևեց: Հարյուրապետ Սուլեյմանը շփոթաբանեց գլուղապետի բարևին, կարգադրեց շտապ հավաքել գյուղացիներին: Սուլեյմանը զայրացած նայեց հավաքված անտրամադիր գլուղացիներին, և ձեռքի մտրակը թափահարեց.

— Խալի բեյից հրաման կա՝ ալլահի կամքով, հայերդ, որպես մեծ թուրքիայի հպատակներ, պարտավոր եք պետութեանը, սուլթանին, բուր, բուր հարկերը վճարել այս տարվա բերքից: Ինչպես տեսնում եմ, բարի ալլահը այս տարի ձեր գյուղերին պարգևել է առատ բերք: Սակայն ալլահի տված բարիքը ոչ թե հպատակ հայերիդ համար է, այլ մեծ թուրքիայի բարերար պետութեան սուլթանի համար: Դուք պարտավոր եք հնազանդորեն առաջին իսկ կալից տալ տիրոջ հասանելիքը, ապա մնացածը ալլահը կբաշխի ձեզ:

Հակառակվողները կծեծվեն, կկալանավորվեն, կուղարկվեն Արաբիայի անապատը, շան սատակ կարվեն,— ձեռքը դնելով կողքից կախված արծաթափայլ դաշույնի վրա բղավեց.

— Այս դաշույնը ձեր կուրծքը կխրեմ, սատանի ծոցը կուղարկեմ: Մի մոռացեք, որ հայերդ ապրում եք աշխարհի ամենահզոր, բարերար մեծ թուրքիայի հովանավորութեան տակ: Հղոր թուրքիան հոգ է տանում հպատակ հայերի հաշտ ու խաղաղ ապրելուն: Հարցեր կա՞ն:

Քար լռութիւն...

— Ուրեմն ցրվեցեք, յուրաքանչյուր կալից ստացած ցորենը լցրեք ջվալները (պարկերը): Առավոտյան 400 ջվալ ցորեն սայլերով գյուղից դուրս են գալու դեպի Ոստան: Թուրք հրամանատարի ահաբեկիչ խոսքերից վրդովված, գյուղացիները անշարժ մնացին տեղները:

— Սա ի՞նչ կարգ է, կյանքդ անցել է ցավերի ու հոգսերի մեջ,— համագլուղացիներին դիմելով պայթեց ծերունի Ստեփանը:— Բռնութեամբ թալանում են մեր քրտինքով վաստակածը, ընտանիքներին թողնում են քաղցած ու անօգնական:— Հուսահատված ծնկի գալով, նա դեմքը երկինք պարզած աղերսում էր:— Եթե կաս արարիչ տեր, ինչո՞ւ ես լռել, հասել է ժամը օգնութեան: Փրկի՛ր իմ խեղճ ժողովրդին այս անօրեն կարգերից: Սա ի՞նչ աշխարհ է, քրտինքով դատես, լիառատ հացը կալը բերես, հետո էլ թուրքը զարկի տանի, ինքդ էլ դատարկ նստես:

Բուրքը հայացքներն ուղղած ծերունուն, լսում էին նրա ոգեշնչող խոսքերը: Նա խոսում էր բուրի սրտից, բուրի անունից: Երբ Ստեփանը իր խոսքը վերջացրեց, գյուղացիները շարժապատելով պաշտպանեցին նրան: Թուրք հրամանատարը հալածեց շփոթանալով չէր հասկացել ծերունուն: Սակայն իրագրութիւնից զգաց, որ դա բողոք է:

Ստեփանին շրջապատող մի խումբ ծերունիները լուռ հեռացան կալերից՝ տանելով իրենց ըմբոստացած ընկերոջը:

Գլուղացիների համախմբվածութիւնը դուր չեկավ հարյուրապետին: Ուստի նա զինվորներին կարգադրեց ցրել նրանց և ստիպել, որ անցնեն իրենց աշխատանքին: Ապա գլուղապետին կարգադրեց.

— Անմիջապես այստեղ բերեք ապստամբ ծերունուն: Ես նրան ցույց կտամ, թե ինչ է նշանակում ամենահզոր բարերար թուրքիայի դեմ ըմբոստանալ:

— Տե՛ր իմ, մեծ թուրքիայի դեմ ոչ ոք չի ըմբոստացել, նա մի բարի հավատացյալ է, աղոթում է աստծուն, ողորմութեան է խնդրում, աղքատ, ընտանիքով ծանրաբեռնված, շատ ազնիվ ծերունի է...

— Ո՛չ, այստեղ բերեք ծերունուն:

— Տե՛ր իմ, նա հիվանդ էր, տուն տարան հանգստանալու:

— Ուրեմն դու ես նրան զրգել ըմբոստանալու, իսկ հիմա էլ հովանավորում ես, պաշտպանում հանցագործին:— Նա մըտբակով ուժգին հարվածեց երիտասարդ գլուղապետի թիկունքին: Հետո դառնալով տասնապետին, կարգադրեց:— Վերցրե՛ք նրեք զինվոր և անմիջապես բերե՛ք ապստամբին:

Երիտասարդ գլուղապետին հարվածելով, թուրք հրամանատարը ավելի բորբոքեց գլուղացիների վրդովմունքը:

— Սա իր դաժանութեամբ գլխացավանք կբերի մեր զրի՛ին,— շնչացին գլուղացիները:

Երիտասարդ գլուղապետը, որ հարվածից շփոթված, հպարտ կանգնած էր իր տեղում, ասաց.

— Ես ջանում եմ հանգստացնել գլուղացիներին, իսկ դուք նրանց զրգում եք: Առանց այդ էլ շատ դժգոհ են ձեր անօրեն արարքներից: Նրանց հետ վարվեք մարդավարի:

Հարյուրապետը քառասունին մոտ ակոսված դեմքով, հաղթանակաբար մի մարդ, սև բեղերը ոլորեց և շարժապատելով նայեց գլուղացիներին ու ասաց.

Տ. Առաքելյան Ա.

— Հոգ չէ, թե հայերդ ինչ եք մտածում և ձեզանից ինչ եք ներկայացնում: Եթե վաղ առավոտյան 6-ական պարկ ցորենով բարձված 30 սալ գյուղից ճամփա շընկերի հոտան, ողջ գյուղը կայրեմ...

— Մեր գյուղն այդքան ցորեն տալ չի կարող: Դուք որոշել եք մեզ քաղցած թողնել,— համարձակ տոնով ասաց գյուղապետը:

— Ձայնդ կտրի՛ր, դավաճան: Դու ըմբոստ ես: Գյուղացիների մեջ խլրտումներ ես գցում մեծ Թուրքիայի դեմ: Դու գյուղապետ լինել չես կարող: Դու պարտավոր ես խոնարհվել տիրոջ առջև: Կատարել նրա բոլոր պահանջները,— զայրացած բղավեց թուրք հրամանատարը:

Այդ պահին ծերունուն՝ ձեռքերը հեռեկե կապած, օնրաշին առջևից երեք զինվորներով ներկայացրին հարյուրապետին:

Հարյուրապետը արհամարհանքով նայեց իր առջև կանգնած ծերունուն և ոտքով ուժգին հարվածեց նրա փորին:

— Շուն, դո՞ւ ես զժգոհություն առաջացնում արդարադատ հոսր Թուրքիայի դեմ,— նախ ձեռքի մտուսկը ուժգին իջավ նրա մեջքին, ապա կրկնվեց ոտքի հարվածը:

— Դե՛, սատկիր, շուն,— հարվածները հաջորդեցին իրար և ծերունին ստամոքսի խիստ ցավից կժկվեց: Այդ պահին մեկը քարով հարվածեց հրամանատարին, որը սակայն կպավ նրա հետևում կանգնած ձիու աչքին: Հարվածը ուժեղ էր, ձին անհանգիստ շարժումներ անելով, պառկեց:

— Բռնեց՛ք մարդասպանին,— բղավեց հարյուրապետը: Քարով խփողը՝ Մկրտիչը, փախչելու փորձ էլ չարեց: Համարձակորեն առաջ եկավ, կանգնեց թուրք հրամանատարի առջև:

— Ի՞նչ հանցանքի համար եք դաժանորեն ծեծում ծերունի հորս:

— Ինչպե՞ս ես համարձակվում տիրոջը դաժան անվանել, շուն, շան որդի, ես գործում եմ մեծ Թուրքիայի սուրբ օրենքներով,— ու զայրացած մտրակով հարվածեց երիտասարդի դեմքին, վերջին հարվածը դիպավ Մկրտիչի ձախ աչքին. երկու ձեռքով բռնեց աչքը: Դեմքից արյուն էր հոսում:

Գյուղացիները նրան տարան տուն:

Ծերունին ուժերը հավաքելով՝ ոտքի կանգնեց, ուղիղ նախնով հարյուրապետի աչքերի մեջ, թքեց նրա երեսին: Հարյուրապետի զինվորները դաշույնների հարվածներով ծերունուն

զորեցին գետնին: Գյուղացիների միջից արձակվող հրաձգութունը գետնին զորեց ծերունուն դաշունահարողներից երկուսին: Կրակողը Ստեփանի ավագ որդի Ահարոնն էր:

Ահարոնը փորձեց փախչել, սակայն, կալերը շրջապատող թուրք զինվորների կրակոցներից, ընկավ կալում:

Թուրք զինվորների կրակոցներից ընկան դեպի Ահարոնի ցիպեղ վագող մայրը, կինը, յոթ տարեկան երեխան:

— Եղբայրեն՛ք,— գոչեց տեր Հովհաննեսի որդի Նշանը,— ինչո՞ւ եք լռել, սրանք բոլորիս էլ կսպանեն: Ով գեներ ունի՝ իմ հետևեց:

Ճեղքելով օդակը դուրս եկան:

Կալում դարսված ցորենի պարկերի հետևը դիրքավորվելով, Նշանը առաջին կրակոցով ծակեց հարյուրապետի աջ թևը: Վարժ թուրքերենով բացականչեց.

— Փողովրդին ձեռք չտաք, հեռացեք կալերից, թե չէ բոլորիդ շանսատակ կանենք:

Հպարտ հարյուրապետի սիրտը ահ ընկավ: Նա վախեցավ մահից... Բռնկվեց թեժ մարտը: Թուրք զինվորների կրակոցներից ընկան նաև կալից փախչող կանայք, երեխաներ: Բանող անասունները... Մարտը տևեց մինչև մութն ընկնելը: Երեկոյան մթին, հարյուրապետը, թողնելով յոթ սպանված զինվոր և շորս ծանր վիրավոր, հեռացավ, ապստամբած գյուղից: Օնբաշու (տասնապետ) նետած նռնակից վիրավորվել էր Նշանը և էլի երկու հոգի: Հրաձգութունների ձայնից մոտակա Կաղազիդ, Կայնամիրան գյուղերից Շիդանին օգնություն էին եկել մի խումբ երիտասարդ հեծյալներ...

Տերհայրի ղեկավարութամբ ապստամբած գյուղը հաղթեց: Գուֆեսանդաշտցիների վերջին հարյուրամյակի ընթացքում 6-րդ զինված ընդհարումն էր:

Ձոհվածների քառասունքին եկան նաև հարևան գյուղերի ներկայացուցիչները:

Տեր Հովհաննեսը և Պողոսը եկեղեցում պատարագ տվեցին զոհվածների հիշատակին, ապա ծաղիկներով շարժվեցին դեպի գերեզմանոց:

Մկրտիչն իր հարազատների գերեզմանի առջև ծնկաչոր երդվեց զինվորազորվել հայ ֆիդայիների խմբին: Հավատարիմ մնալով իր երդմանը նա, աչքը բուժելուց հետո, միացավ ֆիդայիններին:

— Հող չէ, թե հայերդ ինչ եք մտածում և ձեզանից ինչ եք ներկայացնում: Եթե վաղ առավոտյան 6-ական պարկ ցորենով բարձված 30 սալ գյուղից ճամփա շրջկնի Ռոտան, ողջ գյուղը կայրեն...

— Մեր գյուղն այդքան ցորեն տալ չի կարող: Դուք որոշել եք մեզ քաղցած թողնել,— համարձակ տոնով ասաց գյուղապետը:

— Ձայնդ կտրի՛ր, դավաճան: Դու ըմբոստ ես: Գյուղացիների մեջ խլրտումներ ես գցում մեծ Թուրքիայի դեմ: Դու գյուղապետ լինել չես կարող: Դու պարտավոր ես խոնարհվել տիրոջ առջև: Կատարել նրա բոլոր պահանջները,— զայրացած բղավեց թուրք հրամանատարը:

Այդ պահին ծերունուն՝ ձեռքերը հեռեկն կապած, օնրաշին առջևից երեք զինվորներով ներկայացրին հարյուրապետին:

Հարյուրապետը արհամարհանքով նայեց իր առջև կանգնած ծերունուն և ոտքով ուժգին հարվածեց նրա փորին:

— Շուն, դո՛ւ ես զժգոհութուն առաջացնում արդարադատ հպար Թուրքիայի դեմ,— նախ ձեռքի մտրակը ուժգին իջավ նրա մեջքին, ապա կրկնվեց ոտքի հարվածը:

— Դե՛, սատկիր, շուն,— հարվածները հաջորդեցին իրար և ծերունին ստամոքսի խիստ ցավից կժկվեց: Այդ պահին մեկը քարով հարվածեց հրամանատարին, որը սակայն կպավ նրա հետևում կանգնած ձիու աչքին: Հարվածը ուժեղ էր, ձին անհանգիստ շարժումներ անելով, պառկեց:

— Բռնեցե՛ք մարդասպանին,— բղավեց հարյուրապետը:

Քարով խփողը՝ Մկրտիչը, փախչելու փորձ էլ չարեց: Համարձակորեն առաջ եկավ, կանգնեց թուրք հրամանատարի առջև:

— Ի՞նչ հանցանքի համար եք դաժանորեն ծեծում ծերունի հորս:

— Ինչպե՞ս ես համարձակվում տիրոջը դաժան անվանել, շուն, շան որդի, ես գործում եմ մեծ Թուրքիայի սուրբ օրենքներով,— ու զայրացած մտրակով հարվածեց երիտասարդի դեմքին, վերջին հարվածը դիպավ Մկրտիչի ձախ աչքին. երկու ձեռքով բռնեց աչքը: Դեմքից արյուն էր հոսում:

Գյուղացիները նրան տարան տուն:

Ծերունին ուժերը հավաքելով՝ ոտքի կանգնեց, ուղիղ նախելով հարյուրապետի աչքերի մեջ, թքեց նրա երեսին: Հարյուրապետի զինվորները դաշույնների հարվածներով ծերունուն

պորեցին գետնին: Գյուղացիների միջից արձակվող հրաձգութունը գետնին գլորեց ծերունուն դաշունահարողներից երկուսին: Կրակողը Ստեփանի ավագ որդի Ահարոնն էր:

Ահարոնը փորձեց փախչել, սակայն, կալերը շրջապատող թուրք զինվորների կրակոցներից, ընկավ կալում:

Թուրք զինվորների կրակոցներից ընկան զեպի Ահարոնի ցեղը վազող մայրը, կինը, յոթ տարեկան երեխան:

— Եղբայրնե՛ր,— գոչեց տեր Հովհաննեսի որդի Նշանը,— ինչո՞ւ եք լռել, սրանք բոլորիս էլ կսպանեն: Ով զենք ունի՝ իմ հետևեց:

Ճեղքելով օդակը դուրս եկան:

Կալում դարսված ցորենի պարկերի հետևը դիրքավորվելով, Նշանը առաջին կրակոցով ծակեց հարյուրապետի աջ թևը: Վարժ թուրքերենով բացականչեց.

— Փողովրդին ձեռք չտաք, հեռացեք կալերից, թե չէ բոլորիդ շանսատակ կանենք:

Հպարտ հարյուրապետի սիրտը ահ ընկավ: Նա վախեցավ մահից... Բռնկվեց թեժ մարտը: Թուրք զինվորների կրակոցներից ընկան նաև կալից փախչող կանայք, երեխաներ: Բանող առասուկաներ... Մարտը տևեց մինչև մութն ընկնելը: Երեկոյան մթին, հարյուրապետը, թողնելով յոթ սպանված զինվոր և շատ ծանր վիրավոր, հեռացավ, ապստամբած գյուղից: Օնրաշուն (տասնապետ) նետած նոնակից վիրավորվել էր Նշանը և էլի երկու հոգի: Հրաձգութունների ձայնից մոտակա կաղաղիդ, Կայնամիրան գյուղերից Շիդանին օգնության էին եկել մի խումբ երիտասարդ հեծյալներ...

Տերհայրի ղեկավարութամբ ապստամբած գյուղը հաղթեց: Պա փեսանդաշտցիների վերջին հարյուրամյակի ընթացքում 6-րդ զինված ընդհարումն էր:

Ձոհվածների քառասունքին եկան նաև հարևան գյուղերի ներհայացուցիչները:

Տեր Հովհաննեսը և Պողոսը եկեղեցում պատարագ տվեցին գահավաճների հիշատակին, ապա ծաղիկներով շարժվեցին դեպի գերեզմանոց:

Մկրտիչն իր հարազատների գերեզմանի առջև ծնկաչոք երդվեց զինվորագրվել հայ ֆիդայիների խմբին: Հավատարիմ մնալով իր երդմանը նա, աչքը բուժելուց հետո, միացավ ֆիդայիններին:

Գավառի բնի գոհերը

Աշխատանքային եռուզեռ էր Ռշտունաց Հատեղ գյուղի կալերում: Ոմանք առաջին կալից ստացված ցորենը պատրաստվում էին տուն տանելու, երբ խուրձեր բարձած սալիերի վրայից շեկ Տրդատը ահարեկված բացահանչեց:

— Ժողովուրդ, ձեզ մատաղ, նայեցեք մեր գյուղի ճանապարհին բարձրացող փողուն: Այդ ի՞նչ ձիավորներ են:

Կալվորները գործները թողած հայացքներն ուղղեցին դեպի գյուղ սլացող ձիավորները: Անմիջապես ընկավ բոլորի տրամագրությունը:

— Հոտառու շան պես ինչպես էլ իմացել են,— ծանր շքնչիով ասաց մորուքն ու գլուխը ճերմակած Ավետիքը:

— Գյուղապետ, չլինի՞ թե մեր մեջ կան մատնիչներ:

— Չեմ կարծում,— հանգիստ պատասխանեց գյուղապետը:— Նորություն չէ, նրանք միշտ էլ հետևում են մեր բերքահավաքին և կալից տանում են իրենց մեծ բաժինը:

Գյուղապետ Գալուստը, մոտենալով Ներսեսին, ասաց.

— Կանչիր Ղազարին, Հակոբին. իջնենք ցած դիմավորելու Հավանարար բեյի հարկահավաքներն են:

Ճանապարհին գյուղապետը Ներսեսին ասաց.

— Ի՞նչ ես կարծում, ձիշտ չի լինի՞, եթե սրանց հրավիրենք ձեր տուն՝ հացի, հանգստի, ժամանակ կշահենք: Մերոնք էլ կալերում իրենց գործերը կկարգավորեն:

— Զիշտ ես ասում, մեզ անհրաժեշտ է ժամանակ շահել:

Հեծյալները նկատելով, որ դիմավորողներ կան, ձիերի վազքը դանդաղեցրին, ապա կանգ առան:

Գյուղապետը զլխարկը հանելով հարգալից ողջունեց «հյուրերին»: Գալուստին հետևեցին մյուսները: Սակայն դիմավորողների տրամագրությունն ընկավ, երբ նրանց ողջույններն ընդունվեցին սառն ու անտարբեր: Սակայն փորձված պատվիրակները ցույց տվին, թե իրենք այդ վերաբերմունքին ուշադրություն չեն դարձնում:

— Էսքար է՞ֆենդի,— բռնելով ձիու սանձը հարգալից դիմեց նրան Ներսեսը:— Խնդրեմ, համեցեք իմ տունը հանգստի և հյուրասիրության, ինչպես միշտ, իմ տան դռները բաց են ձեզ պես պատվարժան հյուրերի համար:

— Ծնորճակալություն,— խիստ կոպիտ պատասխանեց վն-

ասվացուն:— Մենք եկել ենք պետական կարևոր գործերով, այլ ոչ թե հյուրասիրության:

— Գործը միշտ կա, մենք գործի համար ենք, մեր խնդրանքն այն է, որ մի փոքր հանգստանաք, ապա թարմ ուժերով անցնեք գործի:

Էսքարը ձին բշեց դեպի կալերը: Նրան հետևեցին զինված ստորկանները:

Էսքարը աչքի էր ընկնում հայերի նկատմամբ արտակարգ քառաթյամբ: Այդ պատճառով բեյը նրան էր ուղարկելու Հարկահավաքի ժամանակ նա տասնյակ անմեղ հայերի հրապարակյալ գեղակահարել էր, ընտանիքներ զժրախտացրել, աքսոր ուղարկել՝ վաստակելով «բաշի» անուն:

Էսքարը Գավառի զավառապետ Խայրի բեյի մեծ եղբոր, ազնվական ծերունի Ահմեդի մեծ ընտանիքի միակ արու զավակն էր. մեծացել էր ըստ պահանջի, երեսուած, սանձարձակ բնագործությամբ: Ահմեդի 8 կանանցից ամենաերիտասարդ կինը՝ Զիան, ամուսնուց փոքր էր 45 տարով: Կապանքներով կնություն էր բերել պարտքի դիմաց 16 տարեկան հասակում:

Զիան ոչ միայն արտակարգ գեղեցիկ էր, այլև բարեհամբույր պարզ բնավորությամբ: Սակայն այդ ընտանիքում նա իրեն խորթ էր զգում ինչպես օտարական:

Միամորիկ աղջկա բռնի ամուսնություն առաջին տարին բուրբուլ էր, երբ սիրահարվեց նոր աշխատանքի ընդունված Ահմեդի սան ձիապան, երիտասարդ, ֆիզիկապես ուժեղ, խելամետ, 5 տարով իրենից մեծ Համայակին: Զիայից խուսափելու Համայակի բոլոր փորձերն ապարդյուն անցան: Զիան անկեղծ սիրում էր շիկահեր ծառային և նրա նկատմամբ արտակարգ հոգսատրությունը գրավեց հայ երիտասարդին: Դրանով իսկ նա սրտել էր վրեժխնդիր լինել իրեն դժբախտացնող դաժան ծերունուց:

Զիան հասավ իր նպատակին՝ շմտածելով նրա վախճանի մասին: Նա համոզված էր, որ իր կապը խիստ գաղտնի է մնալու 19 տարեկանում նա Համայակից ունեցավ մի շիկահեղ աղջիկ, որին կոչեցին իր մոր անվամբ՝ Զեյնաբի, իսկ 21 տարեկանում լույս աշխարհ եկավ արու զավակը: Բեյը նրան տվեց իր հոր անունը՝ Էսքար: Այդ արու զավակի ծնունդը ցնցում և իրաբանցում առաջացրեց ծերունի Ահմեդի մեծ ընտանիքում: Զի որ 9 աղջիկներից հետո ծնվել էր սղալ: Առաջին արու զա-

վակը ծնվելու համար Զիան ստացավ մեծաքանակ ոսկեղեն, զարդեր, նվերներ: Այդ նվերները բորբոքեցին բեյի կանանց խանդը Զիայի հանդեպ:

Համայակը որոշեց Ահմեդի տանից հեռանալ, երբ էսքարը մեկ տարեկան էր:

Զիան հրաժեշտի գիշերը գոմում անցկացրեց Համայակի հետ:

Գարնանային շուքի հետ, քնքուշ գուրգուրանքների մեջ երիտասարդ կինը ձգտում էր այդ գիշեր լիարժեք ծառայել առաջին արժանավայել տղամարդուն, կարտան առնել: Մթության մեջ գրկախառնված էին, երբ գիշերային լուսյունը խանգարեց առաջին արթորականը: Զիան սթափվեց: Քաթիկներով շոյելով Համայակի այրվող դեմքը, տխրությամբ ասաց.

— Համայակ, սիրելիս, աքաղաղների ծուղորուղուն եմ լսում, մի՞թե մոտ է արշալույսը: Ժամն է դժբախտիս հրաժեշտի: Քիչ լռելուց հետո խորը շնչելով շարունակեց.

— Ա՛խ երջանկության անմոռաց գիշեր, ինչո՞ւ այդքան շուտ անցար:

Քույլ սրտով վեր կենալով՝ վառեց ճրագը, վարդագույն գիշերանոցով, կիսարաց կրծքով, համեստ ու հեզ ծնկի եկավ իր դավակների հոր առջև: Նրա ցրված խիտ մազերը իջել էին մինչև հատակը:

— Համայակ ջան, նշան շունի, որ տարրեր ազգի և դավանանքի ենք պատկանում: Դեմքը հառած իր պաշտելի տղամարդուն շարունակեց նա:

— Երգվում եմ, դու ես եղել իմ անդրանիկ սերը, դու էլ կմընաս մինչև մահ, ես քեզանով եմ շնչելու: Դառն անցյալս քեզ հայտնի է, — ապա շարունակեց, — գեղեցկութունս կանաչ հասակից ինձ դժբախտացրեց մեծ վիշտ պատճառելով ծնողներիս, մեկ տարում նրանց գերեզման տարավ: Այս ո՛հմակի ընտանիքում միայն դու ես ինձ երջանկություն տվել: Սակայն նման «երջանկություն», դժբախտ ճակատագիր չէի ցանկանա աշխարհի և ոչ մի կնոջ:

Համայակը զգացմունքային տղամարդ էր: Բարձր էր գնահատում Զիայի անկեղծ սերը, նվիրվածությունը: Նրա սիրտը ճմլվում էր Զիայի հոգեկան ծանր ապրումներից:

Բարձրացնելով Զիային, նա ամուր սեղմեց կրծքին ու ասաց.

— Պաշտելի կին, քո վիճակը տեսնելով գիտակցարար ինձ զուգորեցրեցի քեզ. կամքդ եմ կատարել, անկեղծ սիրել եմ քեզ, ծառայել եմ կանացի ազնվությանդ ու պահանջներիդ: Բայց այն է իմ այստեղ մնալը երկուսիս համար էլ վտանգավոր է: Դու էլ վերջերս քեզ կորցրել ես, շուտ-շուտ ես ինձ այցելում... Ետելով իր կրծքին դրած քնքուշ գուլիքը, հուզված շարունակեց.

— Զիա, սիրելիս, խնդրում եմ ներես ինձ քեզ պատճառած ցավերի համար: Կամքի ուժ ունեցիր, խելամտորեն հարմարվիր վիճակիդ: Դու երջանիկ մայր ես: Երեխաներ պետք է մեծացնես, ես չեմ մոռանա ոչ քեզ, ոչ էլ զավակներիս: Կարիքի զեպքում ես կյանքս կնվիրեմ քեզ...

Զիան Համայակի թևերի մեջ երջանիկ զգալով լսում էր հրաժեշտի խրատական խոսքերը: Աքրորականը բռնկվել էր գյուղով մեկ: Զիան հրաժեշտի ջերմ համբույրից հետո թաց աչքերով ասաց.

— Գնա՛, սիրելիս, քեզ բարի ճանապարհ: Գնա երջանիկ բնությանը կազմիր: Անշափ շնորհակալ եմ ինձ պարզեած դավակներից համար: Միշտ կաղոթեմ, որ ծաղկուն կյանք ունենաս:

Նա Համայակի խոշոր ափի մեջ դրեց իր ձեռքով գործած թաղկավուն կանաչ քսակը՝ մեջը հարյուր ոսկի և վառ հուշերի, ծանր ապրումների մեջ տխրությամբ, գուլիք կախ մեկնեց իր զավակների մոտ:

Համայակը դատարկ խուրջինն ուսին գցած, վաղ առավոտըն Գավաշից դուրս եկավ, ուղղվեց զեպի հայրենի Փեսանգալտը: Մտորումների մեջ ընկղմված, նա մի հետադարձ հայացք նետեց արևածագի հետ փայլատակող Գավաշի վրա: Զիայից և զավակներից հեռանալու համար սրտի ծանր ցավ զգաց: Տխրությամբ խոր շնչեց ու ճամփա ընկավ:

Համայակից հետո մի շաբաթ Զիան իր սենյակից դուրս չեկավ:

Ահմեդի կանայք տարիներ ի վեր շար նախանձով էին նայել Զիային: Մերունու մահից հետո նրանք նվերներով իրենց կողմը պրծնեցին Զիայի աղախին Սուսանային և նրա միջոցով վարկաբեկեցին նրան՝ խորտակեցին Զիայի և նրա հասունացած աղքատ կյանքը: Այո՛, խնամակալ Սուսանան 14 տարի ազնիվ ծառայելուց հետո դավաճանեց և անցավ Զիայի հակառակորդի կողմը: Ուրացավ սուրբ խաչի առջև ծնկաչոք տված եր-

դումը, Զիաջի օգնութեամբ աղքատիկ վիճակից իր դուրս գալը, իր լավ տուն-տեղ ստեղծելը: Զիան ստիպված դավաճանին հեռացրեց իր տանից: Այդ մասին իմանալով, խորամանկ բեյը մարդ էր ուղարկել և Սուսաննային կանչել իր մոտ: Նրան խրախուսել էր որպես ազնիվ ծառայի և ընդունել աշխատանքի:

Սուսաննան ոգևորվեց բեյի նվերներից և շար սադրանքով հայտնեց Զիայի ամենամեծ գաղտնիքը՝ Համայակի պատմութունը, նրա որտեղ լինելը: Մի շարաթ անց Փեսանդաշտի Կազազիզ գլխավոր տուն-տեղ դրած, ընտանիք կազմած, հինգ երեխայի հայր Համայակին դաշտում վար անելիս խալի բեյի թիկնապահները սպանեցին:

Ապերախտ Սուսաննայի դավաճանութունը, Համայակի սպանութեան լուրը շատ ծանր տարավ Զիան: Մայիսյան ծաղկածիժազ մի առավոտ Զեյնաբին վախի ու մտածմունքի մեջ անցկացրած անքուն գիշերից հետո առավոտյան, վաղ արշալույսին թակեց իր բարի հայ դրացիների դուռը:

— Օգնեցեք, խնդրում եմ,— լացից աչքերը ուռած, շրթունքները դողալով աղբսեց նա:— Փեսանդաշտից վերադառնալուց հետո մայրս ընկղմված ծանր ապրումների մեջ օրերով տանից դուրս չէր գալիս, վատ էր քնում, այս գիշեր տուն չի եկել, Ահմեդի շաղու կանայք մորս գլուխը կերան, ես այդ ոհմակի մեջ որբացա...

Հայ դրացիները ոտքի ելան և սկսեցին փնտրել Զիային: Յավոք, որոնումները ապարդյուն անցան: Մայրամուտին գյուղի հովիվները թևերի վրա դրած, անշնչացած, երկար ածուխի պես սև մազերը մինչև դետնին հասած բերեցին Զիայի դիակը: Նրա կրծքին սեղմված բուռնցքներն ասես բողոքում էին...

Երեկոյան նախիրը գյուղը բերելիս, ճանապարհին հովիվները հետևելով շներին, Զիայի դիակը գտել էին քարայրում:

Նա իրեն նետել էր Կաքավաձորը, ողջ մարմինը ջարդուհիշուր էր եղել: Զիայի ինքնասպանութեան լուրը կաթակի արագութեամբ տարածվեց գավառական կենտրոն Գավաշում: Հայկական և թուրքական թաղերից շտապում էին դժբախտ կնոջ աճյունը տեսնելու: Այդ ամենը նման էր բողոքի, զայրույթի, ցույցի: Խալի բեյին դա դուր չեկավ, նա խիստ զայրացավ և ուտիկաններին կարգադրեց ժողովրդին անմիջապես ցրել:

Նույն գիշերը բեյի ծառաները Զիային անշուք, գաղտագողի

հագին հանձնեցին: Աճյունը տանող սալլի հետևից մորը ողբաքող աղջկան տանում էին հովիվ թաղևտսի կինը և աղջիկը...

Մորից որբացած Զեյնաբին խորթացել էր Ահմեդի մեծ ընտանիքում. նրան ծնծում, հայածում էին, անառակի ծնունդ անվանում: Դժբախտացած աղջիկը կորցրել էր քունն ու հանգիստը: Նրա միակ մխիթարանքը մոր գերեզմանն էր, հովվի իր հասակակից աղջիկը, դրացի հայ կանայք: Մայրն իր վերջին գիշերը հասուն աղջկան պատմել էր իր ողբերգական կյանքը: Մեր ճակատագիրը կրկնապատկել էր որբացած աղջկա վշտերը: Թաղևտսը, երեկոները ոչխարը գյուղը բերելիս, դաշտից քաղած ծաղիկներ էր դնում Զիայի գերեզմանին և ուշ երեկոյան գերեզմանոցից իր հետ տուն էր բերում որբացած աղջկան:

Մի օր էլ Զեյնաբին հովիվ թաղևտսի կնոջը, ողբի ու լացի մեջ, պատմեց մոր կյանքի պատմութունը:

Զիայի մահից երեք ամիս անց, մի ուշ երեկո, երբ հովիվ թաղևտսը, մահակն ուսին, ոչխարի հոտը հեռավոր սարերից տուն էր բերում՝ սարի ծաղկեփնջերով Զիայի գերեզմանին այցելելիս, դարմանք կտրեց ու սրտում ծանր ցավ զգաց. աղջիկը մեկաշուք երկու ձեռքով գրկել էր մոր գերեզմանը՝ մեջքին՝ ի ըրված մեծ, կեռ դաշույնը: Մոր գերեզմանը ներկված էր աղջկա բերդացած արյունով:

էսքարը մոր և խորոտիկ քրոջ մահվան լուրը ստացել էր թաղամից Չ տարի հետո: Թողնելով Կ. Պոլիսի ցոփ կյանքը, նա շտապ մեկնեց Գավաշ: Տեղ հասնելով, նույն օրը, երեկոյան, խալի բեյի պալատում նա դաշույնի ? հարվածով սպանում էր դավաճան ու զրպարտիչ Սուսաննային, վերականգնելով մոր պատիվը: Սուսաննայի դավաճանութեան համար էլ էսքարը երգվեց հայերի հանդեպ լինել անողոք, վրեժխնդիր:

Օգոստոսյան մի շոգ օր էր. բեյի ախոռապանը Սուսաննայի գիպը սալլի վրայից գլորեց քարայրը: Գավաշի տերհայրը անիծել էր Սուսաննային՝ որպես դավաճանի և թույլ չէր տվել գիպը ո՛չ եկեղեցում դնել, ո՛չ հայկական գերեզմանոցում թաղել:

Վաղ առավոտյան դաշտ աշխատանքի գնացող գյուղացիները հաճախ էին տեսնում մոր և քրոջ գերեզմանի վրա լուսացնող էսքարին...

Գյուղապետը այս պատմութունը լավ գիտենալով, աշխատում էր էսքարին սիրաշահել: Իսկ նա ընկերներով, ձիավոր-

ների հետեից, շտապում էր կալերը: Երբ տեղ հասան, էսքարը 16 հեծյալներով պաշարեց կալերը: Ապա գլուղապետին կարգադրեց հավաքել բոլոր կալվորներին: Երբ կարգադրութունը կատարված էր, նա ձիու վրայից տիրողի հայացքով նայեց զինվորներով շրջապատված տրտնջացող գլուղացիներին ու մտրակը օդում թափահարելով, արհամարհական տոնով սասաց.

— Ալլահի կամքով պատերազմ է: Մեզ հետ է մեծ Գերմանիան, մենք հզոր ենք, մենք տիրելու ենք ողջ աշխարհը: Շուտով բոլոր հայերդ ընդունելու եք մահամեղականութուն, որ պնդի ալլահի բարի աչքը ձեզ վրա լինի, իսկ ով մահամեղականութուն չընդունի, ալլահի կամքով կզլխատվի: Խալլի բեյի կամքով, քանի որ պատերազմ է, տանելու ենք բոլոր հարկերը, մեծ քանակությամբ անասուններ... Գիմադրողները կպատժվեն մեծ Թուրքիայի օրենքներով: Այսինքն՝ կգնդակահարվեն տեղում: Բավական է, որ թուրքական բարերար պետութունը բարեհոգի է եղել հայերի նկատմամբ:

— Հարցեր չկա՞ն: Ուրեմն պարզ է, անցե՛ք դրո՞ծի: Հեծյալներով շրջապատված գլուղացիները տեղում քարացած մնացին:

— Այս ինչ է, ըմբոստանում եք: Ես գլավուրներիդ ցույց կտամ թե ինչ է նշանակում Խալլի բեյի հրամանը չկատարել, մեծ Թուրքիայի դեմ ըմբոստանալ, — զայրացած բղավեց էսքարը ու կարգադրեց օնբաշի Հասան Մահմեդ օղլուն.

— Մեծելով աշխատեցնել բոլոր գլավուրներին:— Օնբաշին մի քանի հեծյալներով մտավ խմբված գլուղացիների մեջ: Ձիերը թռելով գլուղացիների վրա՝ մտրակներով հարվածում էին նրանց մեջքին, գլխին, դեմքին...

— Շուն, շան որդիներ, անցե՛ք աշխատանքի և պետութան հարկը շուտ վճարեք, թե չէ բոլորիդ կսպանեմ, — բղավում էր երիտասարդ օնբաշին:

Գլուղապետը մոտենալով օնբաշուն, զայրացած սասաց.

— Դադարեցրե՛ք այս բարբարոսութունը: Գուր աղբյուսի դաժանությամբ արդյունքի չեք հասնի, ինչո՞ւ եք գլուղացիներին գրգռում ձեր դեմ, չէ որ նրանց աշխատանքով եք ապրում:

Երիտասարդ օնբաշին մտրակը բարձրացրեց, որ հարվածի գլուղապետին, բարձրահասակ ներսեսը ամուր բռնեց օնբաշու բազուկը: Օնբաշին ուժեղ ցավ զգաց:

Տաքացել էին գլուղացիները, արյունը եռում էր երակների մեջ...

— Բոլորդ անմիջապես անցեք ձեր աշխատանքին, — հանդուստացնող տոնով համագլուղացիներին դիմեց Գալուստը: Մնացածի մասին հետո կխոսենք:

Գլուղացիները ենթարկվեցին գլուղապետին, օնբաշին իրեն հպարտ զգաց, որ հաղթանակեց:

Աքանազն ու Հրանտն այդ օրը նոր էին վերադարձել Վանից: Զարուհին շատ ջերմ դիմավորեց հորեղբոր որդուն և իր Հրանտին, որոնց երկու օր էր, ինչ անհամբեր սպասում էր:

Ձիերից իջնելուն պես, Զարուհին նրանց տեղյակ պահեց կալերում տեղի ունեցածի մասին:

Առանց հանգստի երկուսով շտապեցին դեպի կալերը: Ասքանազը, Հրանտը լսել էին Համայակի և էսքարի մոր պատմության մասին, սակայն էսքարին չէին տեսել:

Եվրոպական զգեստներով երիտասարդները քաղաքավարի բարեկեցին, ինչպես որ հարկն էր: Ասքանազը դիմելով էսքարին, հանգիստ տոնով հարցրեց.

— Էֆենդի, գլուղացիները մեծ զայրույթով են խոսում ձեր մասին:

— Ի՞նչ արած, ալլահի կամքով պատերազմ է: Մեծ Թուրքիայի հոգսերը շատ են, իսկ գլուղացիները ըմբոստանում են հարկերը վճարելուց:

— Նախ պատերազմը ալլահի կամքով չէ, — պատասխանեց Աքանազը:— Ալլահը բարոզում է խաղաղութուն, հավասարութուն, ժողովուրդների հաշտ ու խաղաղ ապրելակերպ: Պատերազմը սուլթանների, թագավորների արյունոտ ձեռքի գործն է, ժողովուրդը միշտ էլ պատերազմին դեմ է եղել:

Այս պատասխանը էսքարին դուր չեկավ:

— Կուսակալը կարգադրել է, որ պատերազմի ժամանակ ով զիմադրի մեծ Թուրքիային, ոչնչացնել:

— Էֆենդի, նախ հայ շինականը սիրում է խաղաղութուն, երկրորդը. չէ որ նա էլ կարող է կրակել իրեն ոչնչացնողի վրա:

— Մենք թույլ չենք տա: Նա իրավունք չունի կրակելու իր արջը վրա, — խիստ բարկացած տոնով խոսեց էսքարը:

— Բայց չէ որ ձեր սահմանադրության մեջ ընդունված է, որ Թուրքիայում բոլոր ազգերը հավասար իրավունք ունեն: Քարոզում եք հավասարութուն, եղբայրութուն, բայց վարում

եք փոքր ազգերի, հատկապես հայերի ոչնչացման քաղաքակա-
նութիւնն:

— Դա բացարձակապես հերյուրանք է մեծ թուրքիայի հաս-
ցեհին:

— Էֆենդի, բորբոքվելու հարկ չկա: Դուք ձեր հարկը լրիճ
կտանեք, դեռ մի բան էլ ավելի,— ասաց գյուղապետը,—
միայն ժողովրդին բորբոքելու տեղիք մի տվեք:

Ասքանազը հարգալից թեանցելով էսքարին, Հրանտի հետ
առանձնացան: Կայերում փոքր-ինչ շրջագայելուց հետո Ասքա-
նազը էսքարին ասաց.

— Հարգելի էֆենդի (պարոն), ես ուրախ եմ ձեզ հետ ծա-
նոթանալու համար: Այսօր դուք իմ պատվավոր հյուրն եք ձեր
օգնականի հետ միասին: Ինչ վերաբերում է հարկերին, այն լրիվ
փստանաք:— Զրուցելով շարժվեցին գյուղամեջ, դեպի Ներսե-
սի տունը, որտեղ պատրաստված սեղանը սպասում էր իրենց:

Ասքանազի հայրը Ներսեսի մեծ եղբայրն էր, որ երիտա-
սարդ տարիքում ընկել էր գյուղի վրա հարձակված ավազա-
կային խմբի դեմ կոխվելով ղեկավարելիս, երբ Ասքանազը երեք
տարեկան էր: Ասքանազը վաճառում դարձրեց ավարտելուց հետո
մեկ տարի թուրքական բանակում ծառայել էր (հարյուրապետ)
յուզբաշու պաշտոնում և զորացրվել էր որպես անվստահելի:
Նա վարժ գիտեր թուրքերեն, քրդերեն և թուրք՝ անգլերեն:

Ճաշկերույթին, որն անցավ շերմ մթնոլորտում, մասնակցում
էին գյուղապետ Գալուստը, Ներսեսը, Ասքանազը, Հրանտը,
Մանուկը, էսքարը, ավագ հարկահավաք Իսմին և ուրիշներ:

Ճաշկերույթից հետո Ասքանազն ուզեց առիթից օգտվել և
էսքարի հետ իր զրույցը շարունակել:

— Էֆենդի, չե՞ք կամենա քննելուց առաջ կանաչ դաշտում
փոքր զրոսնել:

— Ուրախությամբ, հաճույքով,— ժպտալով պատասխանեց
էսքարը: Փեսանդաշտի սարահարթին իջել էր զով երեկու: Մեղմ
քամին բերում էր ծաղկազարդ լեռների հաճելի զովը: Բարձր
տրամագրությամբ կանաչ դաշտ դուրս եկած երիտասարդներն
իրենց թեթև էին զգում: Էսքարը գոհ էր իր նկատմամբ ցուցա-
նալով շարունակելու ցանկությունը:

մուց զովացավ: Նայելով շուրջը, ոսկեփայլ ցորենի առատ բեր-
քին, բարձր ցողունից խոնարհարար կոացած խոշոր հասկերին,
ձեռքը ղեկով Ասքանազի ուսին, ժպտալով ասաց.

— Ի՞նչ սքանչելի է ձեր Փեսանդաշտը: Հրաշալի, հյուրա-
պետ, մաքրասեր ժողովուրդ եք: Անշափ գոհ եմ ձեզից և ձեր
հյուրասիրութունից:

Գառնալով Հրանտին և Մանուկին, շարունակեց.

— Հրաշալի է առատ բերքը, իսկ առատ բերքը մեծ ուրա-
խություն է: Ճիշտ է ասված, որ Փեսանդաշտը բերքի առատու-
թյուն դաշտ է:

— Էֆենդի,— ասաց Մանուկը, այս բոլորը ձեռք է բերված
հայ շինականի բրտնաջան աշխատանքով: Հողը պահանջում է
անգաղթում աշխատել, իրեն մշակել: Այդ հասկանալով, գար-
նան շնչի հետ մեծից փոքր, բարի լույսի հետ դուրս ենք գա-
լիս դաշտ՝ մինչև մայրամուտը: Այսպես մինչև ուշ աշունը: Սա-
կայն ցավոք սրտի, հայերս դառը դատում ենք, դատարկ նըս-
տում: Չենք վայելում մեր արդար բրտնաքով վաստակածը:
Զարկում տանում եք:

Իջնում էր ուշ երեկոն, իր հետ բերելով լեռնային դով քա-
մր: Արտոս լեռան ճերմակ գազաթից բարձրացող լուսինը, անց-
նելով երկնային աստղերի շքեղության միջով, իր արծաթա-
փայլ շողերը փռել էր Փեսանդաշտի ալեկոծվող ցորենի ոսկե-
ծառի արտերին: Այս կախարհանքի մեջ երիտասարդները հա-
մնի զրույցից մեծ բավականություն էին ստանում: Աստիճա-
նաբար անցան միջազգային իրադրությանը, պատերազմներին,
ազգերի փոխհարաբերություններին, էսքարն ամեն կերպ մե-
ծառելով թուրքական պետությանը, ձգտում էր պաշտպանել
նրա տիրակալության դաժան իրականությունը, արդարացնել
վարժ ազգամուլ քաղաքականությունը:

— Հարգելի էֆենդի,— ասաց Ասքանազը,— լուռությամբ
սուրբ մեզ: Դուք ուսում առած խելամիտ անձ եք: Եկեք միա-
տրուկ շփոթենանք կյանքի հարցերին, այնպես, ինչպես ձեր
տղամուկ գեղությունը քաղաքականության պահանջով Կ. Պոլ-
սում քարտեղ են, որպեսզի հյու-հնազանդ ծառայեք տիրող
բռնակալ կարգերին: Չէ որ մարդը պիտի նաև լսի իր խղճի
հայնքը: Ինչպես ասում են՝ մարդը մեկ անգամ է աշխարհ գա-
լիս, այդ մեկ կյանքը պիտի ապրի մարդու խղճով: Մինչդեռ
ամենակամ ասլթանների, փաշաների, բեյերի մեջ մեռել է մարդ-

ով բանի սպասելիք լուծի, բացի զորատրոս, սուրբ
բալից: Թագավորները և սուլթաններն իրենց համախոհներին

շահերից ելնելով պատերազմ են հայտարարում, իրենց կամքը թելադրում աշխատավոր ժողովրդին, իսկ հոգևորականությունը նրանց կամակատարն է, ժողովրդին քարոզում է միայն տիրոջը հնազանդվել: Հողի վրա ամեն ինչ հրաշալի է, այս հրաշալի հողի վրա մենք անցորդ ենք մի կարճ կյանքով: Ինչո՞ւ այս կարճ կյանքը մարդը չպարի հաշտ, խաղաղ, բարեկեցիկ, հավասարակերպ, ինչո՞ւ մարդը մարդուն չլինի բարեկամ:

Մնվում ենք հավասար՝ ըստ բնության օրենքների: Մանկությունը անց ենք կացնում հաշտ ու խաղաղ, մանկական երջանիկ խաղերով, իսկ մեծանում ու թշնամանում ենք: Ինչո՞ւ... Ես ատում եմ,— զայրացած գոչեց Ասքանազը,— շահագործող կարգերը, պատերազմները, նրանց հրահրողներին: Ընդունում եմ աշխատավոր ժողովուրդների եղբայրությունն ու հավասարությունը, ազգերի համերաշխությունն ու միասնությունը: Համակրում եմ ազատության ու մարդասիրության այն վսեմ գազափարները, որ այժմ լայն տարածում են գտել քաղաքակիրթ Նվորդայում և Ռուսաստանում: Ես վանում եմ Կ. Պոլսում ունեմ հրաշալի երիտասարդ թուրք ընկերներ, որոնց հետ անկեղծ բարեկամներ ենք, որոնք իրենց առաջադիմական հայացքներով նույնպես դեմ են սուլթանական բռնակալություններին: Օսմանական թուրքիայում ազգային հարցը լուծում եք փոքր ազգություններին ֆիզիկապես ոչնչացնելու, հարկադրաբար հավատափոխելու բարբարոս ճանապարհներով: Այդպես եք վարվում հայերիս հետ: Հայերս սեփական երկրում ստրկացած, իրավազուրկ ենք: Ցանկանում ենք բալկանյան երկրների օրինակով ազատագրվել սուլթանական բարբարոս կարգերից, այդ ցանկություն համար մեզ զանգվածներով կոտորում եք, մեր գյուղերն ու քաղաքներն ավերում եք. մեր կանանց բռնաբարություններով տիրում: Մինչև ե՞րբ կարելի է այսպես ապրել...

Դուք մեր գյուղն եք եկել հարկահավաքի համար: Դուք այն լրիվ կտանաք, ինչպես որ կարգն է, բայց մեզ մի ահաբեկեք բեյի անունից, որի զոհերից են նաև թո ազնիվ մայրն ու հրաշալի քույրը:

— Ասքանա՛զ, սիրելիս,— խոր շնչելով վշտահար ասաց էսքարը,— ինձ համար շատ ծանր է մորս ու քրոջս կորուստը, ամեն անգամ տուն մտնելիս, նրանց անձնական իրերին նայելիս, ցնցվում եմ: Մենակության մեջ միայն արտասուքն է ինձ

հանգստացնում: Գիշերները անց եմ կացնում անքուն: Անկեղծ ասած՝ Գավաշում չհաշված մի քանի ուսուցիչների, ես ինձ մեկ եմ զգում: Դուք ճիշտ եք, բեյն է ինձ որբացրել:

Ասքանազը և իր ընկերները նույնպես սրտացավ ընդունեցին էսքարի հոգեկան ապրումները:

Գիշերային կախարդական լուսվյան մեջ տուն վերադառնալիս Ասքանազը լուսվյունը խախտեց.

— էսքա՛ր, սիրելիս, հարգելով ձեր պատվաթան մորը, կցանկանայի, որ այդ վեհանձն կնոջ արժանիքները մեծարող մի գեպրի մասին դուք անպայման զիտե՛նաք: Ո՞վ գիտե, գուցե և այլևս միմյանց չհանդիպենք, բայց կմնանք ազնիվ բարեկամներ:

Անցած օրը, Հրանտի հետ վանից վերադառնալիս, մտանք հազազիզ գյուղը՝ մի փոքր հանգստանալու: Հարչուրամյա գյուղապետը հիացմունքով էր խոսում մորդ արժանիքների մասին: Մայրդ՝ չքավոր բնատնիքի զավակ, իր ազնվությունը, սիրով, նվիրումով մեծ է ու պաշտելի: Խոնարհվում եմ նման նվիրական, մեծ սիրո առջև, որը չի ճանաչում դավանանքի, ազգի խտրություն: Ձեր այդքան շատ սիրելի մայրն իր ինքնասպանությունից մի շարաթ առաջ հայկական թաղի հովիվ Թաղևոսի նրա ավագ որդու, փեսայի ուղեկցությամբ, ոտից զլուխ սև հագած գիշերը Գավաշից եկել էր, իր ձեռքով դաշտից քաղած ծաղիկների մի խոշոր փունջ արցունքով թրջել ու դրել իր մեծ սիրո զոհի գերեզմանին: Մոմեր վառել, խունկ ծխել, ծնկի եկած ողբացել է: Աղոթել է ամենակարող արարչին: Անիծել բեյին: Հետո գլուղապետի, Թաղևոսի հետ այցելել է իր մեծ սիրո զոհի տունը, նրա որբ մնացած զավակներին գրկել, զուրգուրել, համբուրել բոլորին, երեխաների մոր հետ գրկախառնվել, իր բոլոր թանկարժեք զարդերը, զգալի գումար տվել, ու տխրազին գառնություն արտասուքով բաժանվել: Ողջ գյուղը ոտքի է կանգնել՝ այդ ազնիվ կնոջը պատիվ ու հարգանք մատուցելու, օրը ցերեկով գործները թողած մեծ թափորով, սիրով, հարգանքով ճանապարհ են դրել մինչև գյուղից դուրս, մեծարել նրան... Անկեղծ ասած, ես կցանկանայի տառապյալ մորդ պես դու էլ բարեհոգի լինեիր...

— Ասքանա՛զ, սիրելիս, էլ մի շարունակիր, ես մեղք եմ, էլ չեմ դիմանա,— թրջված աչքերով խնդրեց էսքարը:— Երբևրեւ եմ այսուհետև կինեմ իմ հայ բարեկամների պաշտպանը:

Ողջ դիշեր էսքարը Ասքանազի լուսավորիչ հայացքների տակ, մոր մասին պատվարժան խոսակցության, ապրումների մեջ էր նա Հառեղից Շատախ մեկնեց վերափոխված:

Հաջորդ օրը, վաղ առավոտյան ցորեն բարձած 30 սայլ ուղղվեցին դեպի Գավաշ:

Ներսեսը սպիտակ ձին նստած գնում էր սայլերի առջևից. գյուղապետից հանձնարարություն ուներ Խաչի բեյին սիրաշահել: Ներսեսին ուղեկցում էին երիտասարդ Մանուկը, Գավիթը և Արսենը: Նրանք Գավաշ հասան հաջորդ օրը, ուշ երեկոյան: Ուղղություն վերցրին դեպի դարբին Սատանիկի տունը՝ խորհելու իրենց անելիքների մասին:

Գարբին Սատանիկը 50-ի մոտ, հաղթանդամ, ֆիզիկապես ամուր լեռնցի համարձակ տղամարդ էր: Թուրքական բանակում ծառայելիս մեկ անգամ մի ապտակով գետնին էր գլորել թուրք զինվորին այն բանի համար, որ Սատանիկին մայր և հավատ էր հայհոյել: Մեկ ապտակի համար զինվորական դատարանը նրան դատապարտել էր հինգ տարվա բանտարկության, բանտային խիստ պայմաններում: Գատավորը Սատանիկին դատելիս ասել է. «Գլավոր մեկ ապտակը ունի հինգ մատ, յուրաքանչյուր մատի համար մեկ տարի...»:

Բիթլիսի բանտում, մի օր, բանտապետ Ահմեդի կարգադրությամբ ոստիկանները Սատանիկին բերում են հարցաքննության: Բանտապետը նրան ընդունում է խիստ պաշտոնական ձևականություններով: Ապա գուռն ամուր փակելով, մոտենում է Սատանիկին, մաքուր հայերենով ողջունում նրան ազգի և մոր պատիվը պահելու համար և արձակում նրա ձեռքերի շղթաները:

— Թող հավերժ ապրի այն ժողովուրդը, որ քեզ պես զավակներ ունի:— Ամուր սեղմելով կրծքին ջերմ համբուրում է կեղտոտ հագուստով ու դեմքով կալանավորին:

Սատանիկը զարմացած էր. դաժան բանտային պայմաններում սա ի՞նչ անակնկալ էր և ինչ է սպասում իրեն: Բանտապետը հետաքրքրվելով Սատանիկի կյանքով, ժպտալով ավելացնում է.

— Դու շե՞ս զգում, որ ես հայ եմ... Զգո՞ւմ ես, ուրեմն ուշադիր լսիր ինձ: Ես 21 տարեկան էի և նոր էի վերադարձել Իզմիր քաղաքից: Ծառաների հետ եկել էի Բիթլիսի կիրակնօրյա շուկան, Նկատեցի, որ մի պատկառելի ծերունի բարի հայացքով ինձ հետապնդում է:

Երբ մտա թեյարան և զբաղեցրի սեղանը, նկատեցի, որ այդ ծերունին էլ զբաղեցրել է իմ դիմացի սեղանը: Քիչ անց, նա մոտեցավ ինձ և թույլտվություն խնդրեց նստել իմ կողքին: Ես շատերեցի: Մենք զրուցեցինք շուկայի մասին, այնուհետև քիչ լուսնից հետո, նա ժպտալով դիմեց ինձ.

— Էֆենդի, եթե ձեր անձի հետ կապված մի գաղտնիք հայտնեմ, դուք իմ նկատմամբ ներողամիտ կլինեք:

Զգալով, որ ինչ-որ մի բան կա, երբ այս պատկառելի մարդը հետաքրքրվում է ինձանով, հավաստիացրի նրան:

— Գուք մեր գյուղացի Գանիկի զավակն եք,— միանգամից ասեց նա:— Ձեր հայրը որպես հայրենասեր հայ Շատախում վատակել էր քաշի անուն և թուրք ավազակները նրան շին պրտում... Գուք ձեր գեղեցիկ դեմքով, շարժ ու ձևով նույնիսկ եմբող, իսկը ձեր հայրն էր: Նա իմ ազգակիցն էր և մոտ ընկնոր: Ավազակների ձեռքով սպանված քաշի կորուստը մեր օղջ գյուղին մեծ վիշտ պատճառեց...

— Իսկ հետո՞, հետո՞,— անհամբեր հարցնում էի:

— Հետո այն,— շարունակեց նա,— որ բերքահավաքից հետո աշնանային մի պայծառ օր հայրդ սայլով մորդ տանում է հարեան գյուղը՝ հերանց տուն: Ծանապարհին հանդիպում են թուրք հեծյալները սպանում են հորդ և քեզ ու մորդ գերության տանում. դու 2 տարեկան էիր: Մեր որսումները ոչ մի արջունք չտվեցին:

Մեկ տարի անց, անսպասելիորեն, մայրդ՝ Իզարելը, հարեանից գյուղում: Բոլորին ուրախություն և զարմանք պատճառեց նրա երևալը: Մաշված, պատառոտված շորերով, բոբիկ ոտած ոտքերով: Այդ հրաշալի գեղեցկուհին՝ շիկահեր կինը, նմանքացել և անձանաչելի էր դարձել: Պատմեց ողջ կողուցիքն ու ռզալով հայտնեց, որ տղային վաճառել են շրջանի հարուստ Լուսինի Համեդ օղլուն, իսկ ինքը ապրել է իրեն փայցնող քրդի մոտ որպես աղախին: Երկար տանջվելուց և մի քանի անգամ փախուստի փորձ կատարելուց հետո վերջապես հարզվել է փախչել, սարից սար, ձորից ձոր է քնկել, ցերեկը թաքնվել, գիշերները քայլել ու հասել գյուղ: Ողջ գյուղով նրան սղեցինք, տնտեսությունը վերականգնեցինք, սակայն ամուսնու և զավակի կորստյան ցավը խորն էր, նա շապրեց: ... Գյուղի մարդիկ ծանր կսկիծով վշտահար մորդ հողին հանձնեցին. երեք օր նրա աճյունը եկեղեցում փայլում էր հարյուրավոր մոմերի և Երանյան Ա.

լույսի տակ: Երեք օր շարունակ ծխում էր խունկը: Տերհայրը հատուկ պատարագ ավելց: Տապանաբարի վրա գրեցինք՝ «Ողբը հայոց»:

Մորդ գերեզմանին երիտասարդները երզվեցին քեզ գտնել և ավերված հորդ օջախը վերականգնեցնել: Ազնիվ երիտասարդները հետքդ գտան, երբ 5 տարեկան էիր: Մեկ էլ իմացանք, որ քեզ տեղափոխել են հեռու քաղաք, քո հայ լինելը թաքցնելու նպատակով...

Բանտապետը փոքր-ինչ լռեց և վշտացած ասաց.

— Հիշեցի, թե այն ժամանակ ինչու թուրք «ծնողներս» ինձ միշտ տանն էին պահում և հազվադեպ էր ինձ հաջողվում բազում խաղալ: Մի անգամ խաղի ժամանակ մի թուրք տղայի ծեծեցի: Նա լաց լինելով ինձ գլավուրի ծնունդ անվանեց, որի համար ես գանգատվեցի «ծնողներս»: Այդ երեխային խիստ ծեծեցին, ծնողներին գլուղից աքսորեցին, իսկ ինձ տեղափոխեցին Իզմիր, իրենց ազգականներից մեկի մոտ, այնտեղ սովորեցի ու ավարտեցի դպրոցը:

Հուզվելով ծերունու ճշմարիտ պատմածից, խոր ապրումների մեջ ընկած՝ ինձ կորցրել էի և չհասցրի նույնիսկ իմանալ ծերունու որտեղացի լինելը և իմ ծննդավայրը: Նա զգալով ապրումներս, աննկատելի հեռացել էր: Նրա անունը Գվիդոն էր: Հետագայում, երբ ես համոզվեցի իմ հայ լինելու մեջ, մեկնեցի Կ. Պոլսի հայկական մայր տաճարը, 100 մոմ վառեցի դժբախտ ծնողներս հիշատակին, երզվեցի հավատարիմ մնալ իմ դժբախտ ազգին:

Նույն տարին, որպես ազնվականի զավակ, ինձ ուղարկեցին Բեռլինի զինվորական դպրոցը և ահա ավարտելուց հետո նշանակված եմ այս դաժան պաշտոնին: «Ծնողներս» մահից հետո նրանց ունեցվածքը մնացել է ինձ որպես միակ ժառանգի: Կինս հայ է, ունեմ 3 տղա և մեկ շիկահեր աղջիկ, իսկ և իսկ մայրը: Կնոջս ծնողների հետ լավ փոխհարաբերությունների մեջ եմ, և միասին վայելում ենք ունեցվածքս: Երեխաներիս անունները հայկական են՝ Վարդան, Սամվել, Սահակ, Գալանե: Նվիրված եմ իմ տառապլալ ազգին, օգտագործելով իմ դիրքը և մեծ հարստությունը սիրով օգնում եմ հայերին ինչով կարող եմ:

Զրույցը տևեց ավելի քան երեք ժամ: Բարեկամները բաժանվեցին շատ ջերմ:

— Ես կանեմ ամեն ինչ, որպեսզի մոտ օրերս այս դժոխքից

ազատվեք: Ազատվելուց հետո մշտապես կլինեք իմ հյուրը, իմ բարեկամը...

Ուտիկաններին կարդադրեց կալանավորի ձեռքին շղթա շղթալ անելով «վտանգավոր չէ, հետը հարգանքով կվարվեք, մեր մարդն է...»

Գարբին Ուտանիկը բնիկ Փեսանդաշտի Շիդան գյուղից էր: Նրա աները՝ Արարատը, մեծ ընտանիք ուներ՝ յոթ աղջիկ, մեկ տղա: Արարատը տղայի և երկու համագյուղացիների հետ ջրազացում եղած ժամանակ քուրդ ավազակները հարձակվում և սպանում են նրանց ու ջրաղացպաններին: Սայլերով այլուր տանում: Մեկ տարի անց թուրքերը փախցնում են Արարատի 16 և 17 տարեկան արտակարգ զեղեցիկ, աշխույժ Ամայա և Պերհանուշ աղջիկներին և հետքերը կորցնում: Արարատի կինը՝ Հրանուշը, այդ ծանր վշտերի մեջ ոտքի վրա հայտնաբերվել է լիճում, մի օր ընկնում անկողին և այլևս ոտքի չի կանգնում: Ուտանիկի ավագ եղբայրը՝ Նորայրը, եղբոր կնոջը՝ Արուսին, փոքր տղայի հետ տանում է Գավաշ հերանց տուն, որպեսզի անտեր մեացած տանը և հինգ փոքր աղջիկներին տեր լինի: Ուտանիկը բանտից ազատվելով, Շիդանից մեկնում է Գավաշ, վերականգնում աներոջ տնտեսությունը, արհեստանոցը, որբացած աղջիկներին հասցնում իրենց նպատակին:

Շարունակելով աներոջ արհեստը, մեծ համբավ է վայելում Գավաշում որպես բարձրորակ, բարեհոգի արհեստավոր: Աշխարհի անցուղարձին լավատեղյակ լինելով, կյանքը լավ հասկանալով իր ոգով էլ դաստիարակեց իր աշակերտներին:

Խայի բեյի վստահությունը վայելող հայ վերակացուների, պահեստապետների միջոցով գարբին Ուտանիկը մանրամասն տեղեկություններ էր ստանում բեյի գործունեության մասին:

Ներսեսին ջերմ ընդունելուց, նրան լսելուց հետո Ուտանիկն ասաց.

— Բեյը վաղ առավոտյան մեկնելու է Վան, կուսակալը շտապ կանչել է: Հացահատիկը տարեք շտեմարան, նրա պետք մեր մարդն է, ազնիվ Վարազը:

Բեյի բացակայություն ժամանակ նրան փոխարինում է ավագ որդի Ալին: Նա հայերի նկատմամբ բարի է: Նրա հետ կկարգավորենք մեացած հարցերը: Այնուհետև զրուցեցին թուրքահայության շարքալ կյանքի, աշխարհի անցուղարձի, պատերազմի ու նրանից սպասվող վտանգի մասին: Ուշ գիշերին պառ-

կեցին քնելու՝ Վաղ առավոտյան դարբին Ոստանիկը հաջողութուն մաղթելով ներսեսին, ճանապարհեց բեյի մոտ։ Կրկին հիշեցնելով՝ խոսելիս զգուշ լինել...

Երբ ներսեսը մտավ Խայլի բեյի տան ընդարձակ բակը, բեյը աստիճաններից իջնում էր Վան մեկնելու համար։ Ներսեսը սիրալիր ողջունեց նրան, իսկ ուղեկիցները ձիու վրայից իջեցրին երկու մեծ կճուճով Փեսանդաշտի ընտիր պանիրը և դրեցին բեյի առջև։ Բեյն ուրախ տրամադրությամբ ընդունեց նվերը։

— Աֆարիմ, ներսես աղա, Դու եղել ես իմ լավ բարեկամը, այդպես էլ կմնաս։ Դառնալով գլխավոր վերակացու Բաղդասար Բաղդասարյանին, կարգադրեց.

— Ներսես աղայի բերած այս ընտիր պանիրը կտանեք Վան՝ Ջեվղեթ փաշային նվեր, համոզված եմ, որ փաշան շատ զոհ կլինի, իսկ իմ աչնիվ բարեկամ ներսեսն իր տիրոջ համարներից կուղարկի։ Աֆարիմ, ներսես աղա, ապրես, շատ ապրես, ապա դարձավ որդուն և կարգադրեց.

— Ալի, ներսես աղային լավ ընդունիր, հյուրասիրիր, ինչպես հարկն է։ Ճանապարհ կղնեք մինչև Փեսանդաշտ։ Սարերում, ճանապարհներին ավազակ շատ կա, իսկ սայլերը և սելվորներին կուղարկես Բիթլիս՝ ուղղմական շինարարության։

Սեղմելով ներսեսի ձեռքը, նա մշակների օգնությամբ նստեց ձին և շքախմբով մեկնեց։ Այդ օրը երեկոյան ներսեսն իր ուղեկիցներով Ալիի հյուրն էր։ Զրուցեցին բարեկամական ջերմ մթնոլորտում։

— Ներսես աղա, ես ձեզ հետ կխոսեմ անկեղծ, որպես բարեկամ, — հարգալից ասաց Ալին։ — Սայլերը և սայլապաններին ուղղմական կառույցներ ուղարկելը Ջեվղեթ կուսակալի կարգադրությունն է, թե ուր են ուղարկում, մենք էլ չգիտենք, միայն գիտենք, որ գնացողները շին վերադառնում։ Մենք այդ քայլին չենք դիմի։ Վաղը գիշերով, սայլերով կմեկնեք տուն։ Ինչ վերաբերում է էսբարին, ես նրան ատում եմ։ Վերակացու Վարագին կասեք, որ ձեր բերած 30 սայլ հացահատիկը ձեռնարկի 40 սայլ՝ տասական ջվալով։ Հսկա շտեմարանի մեջ ինչ կիմացվի՝ 300 պարկ է, թե 400։

Ուշ գիշեր էր, երբ ներսեսն ուղեկիցներով Ալիի մոտից դուրս եկավ։ Ուրախ տրամադրությամբ մեկնեց դարբնի տունը։

Ալին մոտ 25 տարեկան ամրակազմ, ուսում առած, բանիմաց, բարեհոգի երիտասարդ էր։ Բեյի մեծ տան արու առաջ-

նեղը նա ատում էր դաժան հորը, թուրքական պետության քանակական կարգերը, հոր հարեմի կանանց։ Հաճախակի վեճեր էր բռնվում հոր հետ։

Բեյը զգալով ավագ որդու խելամտությունը, խուսափում էր ընդվզելիքներից կամ չէր հանդիմանում նրան։ Նրանց փոխհարաբերություններն առանձնապես սրվեց, երբ երկու հայկական գյուղապետների Գավաշում հրապարակորեն կախել ավեց, որ գյուղացիները չէին կարողանում սուլթանի և պետության հարկերը վճարել երաշտի պատճառով։ Այդ նույն փոշոջ հայ ֆիդայիները հարձակվելով պահակ սակյարների վրա, սպանելով նրանց տարել էին գյուղապետների դիակները և քաղել նարեկ վանքի բակում։

Գնալով Ալին մեծ տան անդրանիկ տղան էր, թուրքական պետության օրենքների համաձայն, զրկված էր ժառանգական իրավունքից, որովհետև նրա մայրը թրքուհի չէր՝ հայ էր։ Խաջի բեյն ուներ 27 կին. 20-ը թրքուհի, մյուսները՝ հայ, արար, հույն, բուլղար։ Ալիի մայրը՝ Վարդանուշը, բեյից փոքր էր 28 տարով։ Նա Գավաշի Թիմար գյուղի Ասատուրի աղջիկն էր։ 16 տարեկանում ամրակազմ լեռնցի աղջիկն աչքի էր բնկնում իր փոքրամտությամբ՝ կենսուրախ, վառվռուն հայացքով։ Թուրք ավագանիները, ահաբեկելով Վարդանուշի ծնողներին, փախցրին նրան, ընծա տվեցին բեյին, որի համար բեյը հերում շնորհեց մարդասպան ավագանիներին։ Վարդանուշն ստիպված անձնատուր եղավ բռնակալ բեյին ծնողների, փոքր եղբայրների կյանքը փրկելու համար։ Նա 17 տարեկանում ծննդաբերեց բեյի մեծ տան անդրանիկ արու զավակին, որի համար մեծ պատվի, ընծաների ու արտոնությունների արժանացավ։ Վարդանուշի մեծարումը առաջացրեց բեյի թուրք կանանց շար նախանձը։ Զարուսթյամբ ատում, հալածում, ծեծում էին հայուհուն։

Ալին 8 տարեկան էր, երբ մի առավոտ արթնանալով՝ սարսափից ցնցվեց։ Իրենց ննջարանի դուռը բաց էր, մայրը անկողնու մեջ խեղդված։ Որբացած պատանին, ծանր, շատ ծանր տարավ սիրելի մոր ողբերգական մահը։ Իսկ դաժան բեյը անառբեր էր։ Մոր կորստից հետո Ալին ատելությամբ լցվեց մեծ տան և հոր դեմ։ Հայրը ստիպված նրան ուղարկեց Կ. Պոլիս՝ իր ազգականի մոտ։ Այնտեղ Ալին սովորեց, իրավարանական քառում ստացավ։

Մոր կարոտից ուսումնական արձակուրդին Գավաշ էր գալիս և օրվա մեծ մասը անց էր կացնում գերեզմանոցում: Մի էրեկոյան մոր գերեզմանին այցի գնալիս նա տեսել էր մի կնոջ և երեք տղամարդու մոր գերեզմանից հեռանալիս: Շիրիմը ծածկված էր դաշտային թարմ ծաղիկներով, մոմեր էին վառվում, խոնկ ծխում: Վաղքով հասավ նրանց, երբ նրանք տըխրադեմ սայլ էին նստում:

— Աղաչում եմ, ասացեք, ովքե՞ր եք դուք, որ իմ անուշիկ մոր գերեզմանին հարգանք եք մատուցում:

Նրանք սրտացավ նայեցին եվրոպական զգեստով վայելչակազմ, մոր նման վառվռուն հրիտասարդին: Կիսը թուլացած թևերով երիտասարդին սեղմեց կրծքին և արցունքով թրջեց նրա հագուստը: Ապա կարոտով Ալիի դեմքն առավ երկու ափի մեջ և արտասվեց.

— Որդիս, մայրդ մեր ավագ քույրն էր: Նա իրեն զոհարեց, որպեսզի մենք ապրենք:

Ալին ծնկաչոք համբուրեց արտասովոր մորաքրոջ ձեռքերը: Քեռիները սայլից իջնելով գրկախառնվեցին Ալիի հետ: Այդ օրվանից նա սերտ կապերի մեջ էր մեր հարազատների հետ:

Բնյը շէր ուզում որ իր խելամիտ իրավարան որդին Վասպուրականից մեկնեի: Բայց Ալին իր մոր հիշատակը հավերժացնելու համար Կ. Պոլսում հարսնացու էր ընտրել մի հրաշալի հայուհու:

Ներսեսին ճանապարհելուց հետո, 3-րդ օրը Ալին այցելեց զարբին Ոստանիկին: Իր մոր խնայած գումարը, նվերները, զարդերը խնդրեց հանձնել քեռիներին: Այնուհետև, չսպասելով հոր գալստին, մեկընդմիջտ հեռացավ դժոխային տանից՝ գնաց հարսնացուի մոտ:

ՓԵՍԱՆԴԱՇՏԻՆԵՐԻ ՎՐԵԺԸ

1912 թվականն էր: Փեսանդաշտի զմրուխտ սարերին իջել էր փառահեղ, փարթամ գարունը՝ հարուստ բուսական և կենդանական աշխարհով:

Հառեղ գյուղից մի խումբ երիտասարդ աղջիկներ սովորականի պես կիրակի առավոտյան համեստ հագնված մեկնեցին Չմեռն սարը՝ զրոսանքի, բանջարեղեն քաղելու: Նրանք քնքոջ

ձայներով անուշիկ երգեր էին ասում, ուրախանում, ուրախ զրուցելով, կատակ խաղերով, աննկատելիորեն շատ էին հեռացել գյուղից: Դա զգացին այն պահին, երբ սարից իջնող զինված՝ երկու հեծյալ՝ սանձարձակ թրքախոս երիտասարդներ, հարձակվեցին իրենց վրա:

Տագնապահար փախչող աղջիկներից երկուսին ավազակներին հաջողվեց բռնել: Իսկ մյուսները՝ քաղած բանջարեղենը նետելով, հեռապառ ու սարսափահար վազեցին դեպի գյուղ: Վախեցած և ուժասպառ աղջիկները գյուղ մտնելով եղելության մասին հայտնեցին առաջին իսկ հանդիպողին: Գյուղը զայրույթով բռնկվեց: Մի խումբ երիտասարդներ ձիերը հեծած սլացան դեպքի վայր: Սահմուկեցուցիչ տեսարան. տրորված կանաչի մեջ, նշանդրեքի ծաղկավոր շրջազգեստը պատառոտված, երկար ծամերը զգզված, իր քաղած բանջարեղենի կողքին մեջքի վրա, արնաշաղախ ընկած էր գեղեցկուհի Նազիկը: Նա դիմադրելով միջև վերջին ձիգը գործադրել էր, անձնատուր չէր եղել սանձարձակներին, որի համար դաշույնի հարվածներով սպանել էին: Ծեղմակ, բաց կրծքերին, այտերի վրա դաշույնով խաշ էին գծել ու հեռացել: Իսկ նրա ընկերուհի սևուկ սիրունիկ Աշխենի, միայն կարմիր կոշիկները և պատառոտված արյունոտ ճերմակ շորից կտորներ կային տրորված կանաչի վրա: Ջահենների հետևից սարն էին շտապել մի խումբ համագյուղացիներ: Խելագարի պես նրանց առջևից վազում էր Բալասան Կարապետյանը, որը տեղ հասնելով, իրեն նետեց արնաշաղախ քրոջ դիակի վրա: Ծանր վշտից շորացել էր Բալասանի կոկորդը: Ողբում էին հարազատները, համագյուղացիները: Աշխենի եղբայրները իրենց կորցրել էին՝ քրոջ շորերի կտորտանքը տեսնելով կրտսեր Արան ծնկաչոք ողբում էր Նազիկի աճյունի առջև, ասելով.

— Նազիկ ջան, աղաչում եմ, լեզու առ, ասա ո՞ւր է իմ աղիգ քույրիկը: Ախր նա ինձ մերություն է արել: Գիշերները լուսացրել է օրորոցիս մոտ: Կերակրել, լողացրել...— Արայի ողբը կեղեքում էր համագյուղացիների սրտերը: Երեք ձիավոր, կանաչ խոտերի վրա թողած ձիու սմրակների հետքերով սլացան դեպի լեռները: Աշխենի եղբայրներն էին՝ նրանց հետևեցիկն և հինգ ձիավոր:

Բալասանը քրոջ դիակի առջև ծանր ողբում էր: Նա ծնկա-

չոք երդվեց. «Քեզ տանջամահ անողը պետք է իմ ձեռքով ընկնի...»:

Բալասանի հորը՝ Երվանդին, թուրքերն սպանել էին արտը վարելիս, տակավին երիտասարդ՝ 27 տարեկանում, զոզանալով նրա երկու եզը, ուտելիքով լիքը խուրջինը: Այդի մայրը գուրգուրանքով մեծացրել էր երկու զավակներին: Աղջկան նշանել էին: Աշնանը պետք է հարսանիքը լիներ...

Եղբայրը քրոջ արնաշաղախ դիակը ձեռքերի վրա գլուզ էր տանում: Նրա հետևից գնում էր բազմութունը: Գյուղի մոտ նրանց ընդառաջ եկող համագյուղացիների մեջ էր նազիկի սևավոր մայրը՝ Քնարը: Ով կարող էր հանգիստ նայել զգզված մազերով խելագարի պես աչքերն ու հայացքը առաջ հառած մոր դեմքին: Ո՞ւմ հոգին չէր ճմլվում այդ ահավոր, ողբերգական տեսարանից:

— Վա՛խ, նազելի աղջիկս, էն ո՞ր դահիճն է քեզ սպանել նշանդրեքի ծաղկավոր շորերիդ մեջ, — ուշաթափ իրեն նետեց աղջկա դիակի վրա:

Բալասանի ուժասպառ թևերի վրայից ներսեսը վերցրեց հորեղբոր թոռան անշնչացած մարմինը, համբուրեց նրա սառած ճակատը:

Թափորը մտավ գյուղ: Նազիկի մորը թևանցուկ անելով սրտացավ ողբում էին նաև Զարուհին և իր մայրը:

Գյուղապետը երիտասարդ տղաներին կարգադրեց նազիկի աճյունը տանել եկեղեցի:

— Կներես, հորեղբայր, համարձակությանս համար, — գյուղապետին դիմեց ներսեսի դուստր Զարուհին: — Մենք՝ նազիկի ընկերուհիներս, նրան կտանենք եկեղեցի և ծաղիկներով կզարգարենք:

— Ապրես, աղջիկս, թող այդպես լինի, — ասաց գյուղապետը:

Իջել էր սարահարթի գով երեկոն: Կրկին բորբոքվեցին լեռնացիների սրտերը: Եղբայրները Աշխենի աճյունը թևերի վրա բերեցին գյուղ: Նրա երկար, սև ծամերը եղբոր թևերի վրայից կախվել էին գետնին: Ավագ եղբայր Քովմասը քրոջ ջարդուփշուր եղած մարմինը դրեց գյուղի ծայրամասում կանգնած սևավոր մոր, ալևոր հոր առջև...

Ճիվազները երիտասարդ աղջկա ձեռքերը կապել էին, ուժ գործադրելով՝ պղծել նրան: Ուշքի գալով, արնաշաղախ աղջիկը

ծանր ցավ էր զգացել: Ոտքի կանգնելով՝ մենակության մեջ ցնցվել էր: Տեսնելով նազիկին, սարսափահար ճչացել. ծնկաչոք խելացնոր դեմքը վեր հանելով, բացականչել էր.

— Ո՞ւր ես, ամենակարող արարիչ... Ո՞ր մեղքի համար ճիվազները խորտակեցին մեզ ծաղիկ հասակում... — Ապա ամոթխած հայուհին որոշել էր, որ միայն մահը կարող է իրեն հանգստություն բերել: Նա քայլերն տղղիլ էր մոտակա քարայրը: Թևերը կարված իրեն նետել էր քարայրը ու ջարդուփշուր եղել: Քարափի գլխին ճախրում էին հսկա արծիվները և անսովոր աղմուկով իջնում էին ցած, վեր բարձրանում: Այդ պատկերը կասկած առաջացրեց Աշխենին փնտրողներին: Զիերը թողած շտապեցին քարայրը:

— Տղաներ, — հանկարծակի բղավեց Քովմասը ու ամբողջ ուժով վազեց:

— Նայեցե՛ք այն մեծ քարի վրա սպիտակ մարմին է երևում: Բոլորը վազեցին նրա հետևից:

Այ՛ո՛, ճիշտ էր գուշակել ավագ եղբայրը: Նա քարերը մազըլցելով իրեն նետեց քրոջ անշնչացած դիակի վրա:

Անցել էին ամիսներ...

Եկավ ոսկյա աշունը իր առատ բերքով: Ամենուրեք աշխատանքային հոռուհո էր: Դաշտի գործերը վերջացնելուց հետո Բալասանը, Աշխենի երկու եղբայրները զազարգյուն սարերն ընկած, անդադրում փնտրում էին անմեղ քույրերի դահիճներին...

Եվ ահա մի օր հարևան գյուղի սարերում հոգնած, քաղցած, ցերեկվա շողին իջնում են սարի պաղ աղբյուրից ջուր խմելու: Աղբյուրի շուրջը հացի նստած երեք քուրդ հովիվներ, եկվորնեքին տեսնելով, առանց իմանալու նրանց ով լինելը, հարգալից հացի են հրավիրում:

Հյուրերը ուրախությամբ ընդունում են հրավերը: Կրտսեր հովիվը փայտյա ամանների մեջ այժի թարմ կաթ և կլոր կլոճ է հրամցնում հյուրերին: Հառեղցի քաղցած երիտասարդների համար այդ մեծ պատիվ էր... Նստում են հացի, ջերմ ու մտերմիկ զրուցում:

Հյուրերը ազնվաբար պատասխանելով քուրդ հովիվների այն հարցին, թե ինչ դարդ ու ցավ է իրենց այս սարերը բերել, Բալասանը հոգեկան ծանր ապրումների մեջ պատմում է եղելությունը, որը ծանր է ազգում ազնիվ հովիվների վրա:

— Բալասան ախպեր, դու այս ամենը պատմելուդ, մեզ ցավ

պատճառեցիր: Ես հայ ախպերտանք շատ ունեմ: Այդ անգութ թուրքերը մեզ էլ են շատ տանջում: Ես էլ նրանց վրա ռս ունեմ: Իմ հայրը 80 տարեկանում թուրքի տանը հովիվ էր: Տարվա վերջին իր հասանելիքը պահանջելիս, թուրքը բարկացել էր, թե՛ շատ ես ուզում, այդ հողի վրա առաջացած փոքր խոսակցութեան համար բարով խփել էին գլխին, սպանել: Այդ դարդից էլ նախ մահացավ 112 տարեկան բուրբուղին առողջ, կայտառ պապս, հետո էլ տատս, իսկ այս տարի էլ՝ մայրս: Պապս պատմում էր, որ 25 տարի ձեր գյուղում հովիվ է եղել և շատ էր գովում հառեղցիներին: Ասում էր, թե շատ բարի, աչքը լի ժողովուրդ եք, ձեր գյուղում հովիվներին սիրում և հարգում են, բնզունում ինչպես իրենց ընտանիքի անդամ:

էն, ինչ ես տեսել եմ, համբնկնում է ձեր պատմած օրերի հետ: Այդ պատմությունից իմ մեջ կասկած առաջացավ, — դառնալով իր հովիվ ընկերներին ասաց: — Հիշո՞ւմ եք, այդ օրերին մենք ոչխարները տարանք՝ Հառեղ գյուղի կանաչ սարերը, արածացնելու: Կրտսեր երիտասարդ հովիվն ինչ-որ բան հիշելով գլխի քուղը թեքեց ճակատին.

— Սպա՛հիր, սպա՛սիր, մեծ ախպեր, հիշում եմ, — մատը պարզեց դեպի արևմուտք, — էն մեծ գյուղի կայմակամի երկու տղաները, որ ես քեզ ցույց տվի, ձիերը նստած շներով որսի էին դուրս եկել, մեկ էլ ձիերով շտապ իջան դեպի Ձմեն սարը:

— Այո՛, հիշում եմ: Ես էլ դա էի ասում: Երկուսին էլ լավ եմ ճանաչում, այդ շան ծիծ կերածները ո՛չ աճ ունեն, ո՛չ վախ. վապը կտրած են, մեծի անունը Ջևաթ է, փոքրինը՝ Զհիթ: Նրանք շարիք են և՛ իրենց գյուղի, և՛ շրջակա գյուղերի համար: Քանի՛-բանի՛ թուրք, քուրդ, հայ, հույն, արաբ, բուլղար անմեղ աղջիկներ են այդպես դժբախտացրել, բայց որովհետև հայրը շատ հարուստ է, բուրբու ծածկում է: Ով կփորձի կայմակամի դեմ խոսել, բողբոլ տնով-տեղով կկորչի, կխորտակվի:

Կեսօրն անց էր, մեկ էլ տեսանք էդ շան լակոտները ձեր սարերի կողմից ձիերը արագ քշելով եկան ու գնացին իրենց գյուղը:

— Իմ ազիզ ախպերտանք, վախ թե՛ ձեր քույրերին դժբախտացնողն էդ ավազակները լինեն: Էլ ուրիշ ո՞վ կարող է այդպիսի գազանություն անել: Էդ օրերին մենք սարերում ոչ ոքի չենք տեսել: Թովմասը, Բալասանը, Առնակը, որ լարված ուշադրությամբ լսում էին հովիվներին, համոզվեցին, որ վերջապես

գտան իրե՛ց քույրերին տանջամահ անող գազանների հետքը: Թովմասը ոտքի կանգնեց, նրա հետ նաև մյուսները:

— Մեծ ախպեր, — ավագ հովիվին կրծքին սեղմելով Թովմասն ասաց, — անշափ շնորհակալ եմք: Դու մեզ օգնեցիր շարագործների հետքերը գտնելու:

Թովմասը հովիվներից յուրաքանչյուրի ձեռքին երկուական օսկի դրեց ի նշան երախտապարտության:

— Շնորհակալ ենք ձեր անկեղծ հյուրասիրության, մտերմիկ զրույցի համար, մենք անելիք շատ ունենք, մնաք բարով, — ասաց Թովմասը: — Մենք ձեզ չենք տեսել: Դուք մեզ ոչինչ չեք պատմել այս մասին: Ո՛չ մի տեղ՝ ո՛չ մի խոսք:

— Ախպեր Թովմաս, ես էլ էդ էի ուզում ասել: Այս հանդիպումը և խոսակցությունը կմնա մեր մեջ: Հաջողություն ձեր ազնիվ գործին, ձեզ բարի ճանապարհ:

Մի շաբաթ անց Բալասանը և Առնակը լուսաբացին գյուղապետի տնից դուրս եկան և պյուղից հեռացան: Նրանցից հետո գյուղապետ Գալուստի անից դուրս եկան ներսեսը, տերհայրը, Հակոբը՝ Առնակի հայրը:

Կայմակամ Նազիմը, որ իշխում էր մի ամբողջ շրջանի, առավոտը վաղ իր մեծ տան դռան առջև երկու ամրակալով երիտասարդ տեսավ:

— Կայմակամ աղա, անտեր քրդեր ենք, — խոնարհվելով ասացին: — Տեր եղիր մեզ, մենք քեզ խոնարհ, հավատարիմ կծառայենք: Մի գործ տուր, որ ալլահի ողորմությամբ ապրենք, գոմում էլ կքնենք, կաշխատենք գիշեր ու ցերեկ, կաշխատենք ազնվաբար: — Կայմակամը երկար զննելուց, հարցափորձ անելուց հետո, մորուքը քրեց, հետո ասաց.

— Տեսնում եմ խեղճ, անտեր տղաներ եք, կարող եք սովից մեռնել, մեկ ամիս կփորձեմ, վարձ չեմ տա, աշխատեք փորհացով, կքնեք ախոռում, մսուրքի մեջ, տեսնենք, թե լավ ու ազնիվ աշխատեք, կպահեմ, հաց էլ կտամ, մի քիչ էլ կվճարեմ:

«Քուրդ» երիտասարդները կրկին խոնարհվեցին կայմակամի առջև՝ որպես համաձայնություն նշան: Բալասանը ներկայացավ Ռաշիդ, իսկ Առնակը՝ Ջնդի անունով:

Անցնում էին օրեր, շաբաթներ, ամիսներ: Կայմակամ Նազիմը, նրա վերակացուն, կայմակամի 13 կանայք, կայմակամի շառլատան Ջևաթ և Զհիթ տղաները շատ գոհ էին Ռաշիդի և Ջնդիի ազնիվ աշխատանքից, որոնք անտերության մատնված

մեծ տնտեսության մեջ կարգ ու կանոն, մաքրություն էին մացրել: Գյուղում տարածվեց նրանց ազնվության և աշխատասիրության համբավը:

Եկավ ցրտաշունչ ձմեռը: Ռաշիդը և Ջնգին իրենց հարգալից նիստ ու կացով կայմակամ Նազիմի ընտանիքում լիակատար վստահություն էին վայելում: Երբեմն էլ Ջևաթի և Ջհիթի հետ շներով որսի էին գնում:

Որսի գուրս զալխ ծառաները Ջևաթին և Ջհիթին մի քանի անգամ ասել էին, որ Հառեղա սարերում մարալ շատ կա: Սակայն նրանք միշտ խուսափել էին այդ կողմերը գնալուց: Մի անգամ էլ աղբյուրի մոտ հացի նստած այդ մասին խոսելիս Ջևաթը բերանից թուրեց. «էդ սարերը արյունոտ են»:

Հայ երիտասարդների նկատմամբ անտարբեր չէին հատկապես կայմակամի երիտասարդ կանայք: Քսանամյա վառլոուն հայացքով, ներդաշնակ կազմվածքով արարուհին, որ երկու տարի առաջ կապանքներով բերվել էր կայմակամին կնուսթյան՝ աղքատ ծնողների պարտքերի դիմաց, ատում էր ծերունի կայմակամին, նրա լկտի ամուսնացած, երեքսպան կին ունեցող Ջևաթ և Ջհիթ տղաներին, որոնց դեմ մինչև կոկորդը լքցված էր վրեժխնդրությամբ: Իր արտակարգ զեղեցկությամբ, ճարպկությամբ ամենևին էլ արարուհուն չէր զիջում Նազիմի հույն հարձը, որ ստիպված կնուսթյան էր եկել կայմակամին, որպեսզի իր ծնողներին տեղահան չանեն, տնից-տեղից չզրկեն, վարելահողը և պտղատու այգին ծնողների ձեռքից չվերցնեն, մեծ եղբորը կալանքից ազատեն:

Նրանք երկուսով, ինչպես ստրուկները կիսամերկ վիճակում, հաճելի պարերով ուրախացնում էին ծերունի ամուսնուն, նրա պատվավոր հյուրերին: Նրանք սիրով, անբաժանելի ընկերուհիներ էին. միասին էին կիսում հոգսերը, ցավերը, ուրախությունները, սպասում էին ծերունի կայմակամի մահվան, որպեսզի իրենց մեծ բաժինքը վերցնեն և հեռանան այդ դժոխքից: Սակայն այդ մեծ բաժինքն ստանալու համար անհրաժեշտ էր կայմակամից երեխա ունենալ, այն էլ արու զավակ:

Ռաշիդի և Ջնգի ծառա ընդունվելուց չէր անցել երեք ամիս, կայմակամի այդ երկու երիտասարդ կանայք համոզվեցին, որ երիտասարդ մշակներն իրենց նիստ ու կացով, մաքրասիրությամբ քրդերից տարբերվում են: Երկուսն էլ ուշադիր և հարգալից վերաբերմունք էին ցուցաբերում առույգ, գեղեցիկ, մաք-

րամեր մշակներին: Այդ նկատեցին նաև մշակները: Սակայն ամեն կերպ զգուշանում, խույս էին տալիս: Կանայք կարող էին իրենց գործը փշացնել: Մի օր արարուհին վերակացուին կարգադրեց, որ նա քուրդ ծառաների ազնիվ աշխատանքը և վստահությունը գնահատելով, նրանց անասունների մսուրից տեղափոխի դոմի օդան՝ տալով նոր, մաքուր անկողին: Կարգադրությունը կատարվեց, երբ կայմակամը իր տղաների հետ մեկ շաբաթով մեկնել էր զավառապետ բեյի մոտ: Վերակացուն երեկոյան զնկուցեց, կարգադրությունը կատարված է և թույլտվություն խնդրելով, երեկոյան շուտ տուն գնաց:

Ուշ երեկո էր, ամենուրեք լուսթյուն էր տիրում: Կայմակամի լրկու կանայք, վերարկուների տակից հագնելով իրենց ամենաընտիր մետաքսյա հագուստները, ներս մտան գոմ և մշակներին ստուգելու պատրվակով բարձրացան օդա: Երիտասարդ կանանց այցն այնքան զարմանք չպատճառեց, որքան արարուհու հայերեն նրանց բարի երեկո ասելը...

Հայ երիտասարդները ցույց տվեցին, որ այդ լեզուն իրենց համար անհասկանալի է: Կանայք մշակներին տեսան մաքուր աշխատեղենով, մաքուր անկողնում... Տղամարդիկ շտապեցին հագնվել...

— Ոչ, հագնվելու կարիք չկա: Այդպես ավելի հաճելի էք,— կարգադրեցին հարեմուհիները:

— Ինչո՞ւ իմ հայերեն բարևին հայերեն չպատասխանեցիք,— հարցրեց արարուհին թուրքերին:

— Մենք հայ չենք, էն ալլահը վկա, հայերեն չգիտենք:

— Ուրեմն հույն եք, կամ բուլղարացի, բայց ոչ բուրդ: Քրիստոնյայի համար ալլահը վկա լինել չի կարող:

— Մեզ հետ խոսեք անկեղծ,— ասաց հույնը:— Մենք էլ ենք այս տան մեջ խորթ, որովհետև ազգությամբ թուրք չենք և ատում են մեզ, մենք ձեզ մոտ ենք եկել որպես հարազատներ, որպես սրտակիցներ...

— Սիրելի երիտասարդներ, չէի՞ք կամենա այսօր մեզ հետ հաճելի ժամանակ անցկացնել,— ասաց արարուհին,— որպեսզի մեր հարազատությունն անխախտ լինի,— հանեց վերնազգեստը: Երիտասարդները նայեցին նրան, հիացան: Նուրբ հագուստի տակից երևում էին քնքուշ մարմինը, գեղեցիկ կրծքերը: Սկսեց հանվել նաև ընկերուհին: Նայելով այդ հրեշտակներին՝ մեկը մյուսից հաճելի, մեկը մյուսից զրավիչ ու միմյանց ոչնչով չզի-

չող գեղեցկութիւններ, մշակներն ամաշխարհին: Գեմքերը շուտ տվեցին:

— Խանութ, աղաչում ենք, հեռացեք, մենք տղքատ մշակ ենք, եկել ենք օրվա հաց աշխատելու, — ասաց Ռաշիդը: — Կայմակամը իմանա մեզ կգլխատի, շատ ենք աղաչում մի կտրեք մեր մի կտոր ցամաք հացը...

— Այսօր ո՛չ կայմակամ կա, ո՛չ վերակացու, մենք մեր ոտքով եկել ենք ձեզ մոտ ինչպես հարազատ, ոչ ոք մեզ չի տեսել, և շեն էլ տեսնի գնալիս, — ասաց հույնը, — Իսկ ձեր հացը այսուհետև ցամաք չի լինի...

— Միբեկինե՛րս, հավատացեք մեր անկեղծութիւնը: Ոչ մի կաակածի տեղիք չի տրվել, չի էլ տրվելու, — սիրալիր ժպտաց արարուհին, քնքուշ ձեռքը դնելով Ջնդիի ուսին, նստեց նրա կողքին:

— Հա՛ւարձակորեն սիրիր ինձ, ես որոշել եմ քոնը լինել, չե՞ս ուղում:

Ընկերուհին էլ նստեց Ռաշիդի կողքին և գլուխը գրեց նրա ուսին, ցուցադրելով իր կիսարաց ցորենագույն կուրծքը, աչք ձեռքով շոյեց նրա երեսը:

— Ինչ հրաշալի ես, ափսոս ամաշխուտ ես, հաճույքով անձնատուր կլինեմ քեզ...

Զրույցով կանայք երիտասարդ տղաներին հավատ ներշնչեցին, իրենց անկեղծ զայրույթն արտահայտեցին կայմակամի, նրա անսանձ տղաների և կանանց նկատմամբ, ասացին, որ իրենք պատահական չեն եկել այստեղ, ամեն ինչ մտածված է և ծրագրված... Թալասանը և Առնակը մի պահ թեթևացան, որ հրեշներին տան մեջ ունեցան վստահելի կողմնակիցներ:

Երկու իրար համապատասխան զույգեր միմյանց հասկացել էին:

— Ջնդի, սիրելիս, ճրագը մարի, մեզ խանգարում է:

Այս սրտամոտ խոսքերը երիտասարդներին համարձակութիւն ներշնչեց: Ջնդին մարեց ծխացող ձեթի ճրագը և շտապ վերադարձավ: Մշակները համոզված էին, որ կայմակամի կանայք անկեղծորեն են եկել իրենց մոտ: Զույգերը ջերմ գրկախառնվեցին:

Գիշերն անքուն անցկացրած հարեմուհիներն արևոտականին դուրս եկան, շտապեցին իրենց ննջարանները և քաղցր քնեցին: Առավոտյան երբ վերակացուն մտավ ախոռը, մշակները

եռուն աշխատում էին: Գովեստի խոսքեր ասելով նրանց հասցեին, հարցրեց.

— Ինչպե՞ս անցկացրիք առաջին գիշերը նոր, մաքուր անկողնում:

— Շնորհակալութիւն, աղա, ալլահը ձեզ երկար կյանք տա: Ձեր հոգատարութիւնը մենք կպատասխանենք ազնիվ աշխատանքով:

Անցնում էին օրեր, շաբաթներ, ամիսներ:

Երիտասարդ կանայք հարմար առիթներն օգտագործելով, հանդիպումները ավելի հաճախակի էին դարձնում: Կանանցից ասացած տեղեկութիւններով Թալասանը և Առնակը ծրագրեր էին կազմում՝ մարդասպանների հետ հաշվեհարդար տեսնելու:

Գարուն էր: Կայմակամն իր տղաների հետ գլուղաքաղաքից անորոշ ժամանակով մեկնելուց առաջ կարգադրեց մշակներին ուղարկել գաշտային աշխատանքների: Միրաշահելով ծերունի վերակացուին, կայմակամի բացակայութիւն ժամանակ, երիտասարդ հարեմուհիներն իրենց արտոնյալ էին զգում, կարգադրութիւններ անում:

Ճաշից հետո հարեմուհիները ձիերով դուրս եկան զբոսանքի, և ձիերի գլուխները թեքեցին դեպի կանաչ ձորը: Ծառի տակ, աղբյուրի մոտ, գաշտային աշխատանքն ավարտած իրենց սպասող պաշտելի երիտասարդների մոտ: Միրահարված կանանց արտերը թպրտում էին: Նրանք շտապում էին ընկալել հաճելի տղամարդկանց գիրկը: Ծանապարհին զրուցում էին սիրած տղամարդկանց մասին, երկուսն էլ գիտեին, որ արդեն հզիացել են և հուզմունքով սպասում էին երջանիկ մայրութիւն:

Այդ օրը կանաչ ձորում, աղբյուրի մոտ նրանց տասներեքերորդ հանդիպումն էր: Անհամբրութիւնամբ, զեռ ձիերի վրայից նրանք իրենց նետեցին ընդառաջ եկող սիրեկանների գիրկը: Երակի պես այրվում էր երիտասարդ կանանց քնքուշ մարմինը:

— Ջնդի ջան, մատաղ լինեմ քեզ, 5 օր է չեմ տեսել, կարոտել եմ: Քո զորութիւնամբ շուտով ինձ ալլահը պարգևելու է մի արու դավակ: Ես ամբողջ կյանքում բախտավոր եմ լինելու, դու ես իմ կյանքն ու երջանկութիւնը, — ասաց արարուհին: — Կուզեմ միշտ էլ քեզ հետ լինել, չե՞ որ դու ես իմ անդրանիկ զավակի հայրը: Երբ Ջնդին գրկած տանում էր արարուհուն, նա փաթաթվեց նրա վզով և ամուր կծեց շրթունքը: Ջնդին ցավ զգաց և ցավացող շրթունքները սեղմեց արարուհու կրծքին:

— Ջնդի, հոգիս, մի նեղացիր ցավի համար, շատ եմ սիրում,— ապա գլուխը շոյելով դիմեց երիտասարդներին.

— Ձիերի վրայից իջեցրեք խալիները, փոքր կանաչին: Խուրջիներին մեջ լավ-լավ ուտելիքներ կան: Այսօր ավելի հաճելի և ուրախ ժամանակ կանցկացնենք:

Կանայք թեթևացրին իրենց հագուստները: Պառկեցին խալիների վրա, բարձերը դնելով գլուխների տակ: Ապա թեքերը բարձրացնելով մոտ կանչեցին իրենց քաջերին և գրկախառնվեցին:

— Ա՛խ, կանայք, կանայք, որքան հզոր եք դուք,— մի պահ անցավ Բալասանի մտքով,— եթե կամենաք, ինչե՛ր ասես չեք կատարի...

Բալասանը և Առնակը գիտեին, որ կանաչ ձորում դա իրենց վերջին հանդիպումն է: Բայց նրանք նաև մտահոգված էին սուլթանական դաժան կարգերի զոհ՝ երկու բարեհոգի կանանց անկեղծ սիրով: Համոզված էին, որ իրենց բացակայությունը մեծ ցավ է պատճառելու նրանց, որոնք շատ անգամ ուրախացրել, մոռացուցանել էին տվել իրենց հոգսերը:

Օգոստոսյան շոգ օրերն էին:

Մի ամբողջ շաբաթ տիրոջ տունը իրարանցման մեջ էր: Բոլորը զբաղվում էին կայմակամի երկու տղաների՝ Ջեաթի և Ջհիթի մշակների հետ որսորդության գնալու նախապատրաստություններ: Նախորդ երեկոյան արաբուհուն հաջողվել էր Ջնդիին հանդիպել, իր կարոտն առնել: Արաբուհուն անկեղծ սերը գրավել էր Առնակին: Նա պարզապես խղճում էր այդ բարեհոգի կնոջը: Այդ երեկո Առնակն անկեղծորեն հայտնեց արաբուհուն իր անունը և հայ լինելու մասին իր մեծագույն գաղտնիքը: Արաբուհին ուրախությունից իրեն շատ թեթև զգաց, գրկեց նրան, ջերմ համբուրեց ասելով, որ այդ կմնա իր կրծքի տակ որպես անձնական գաղտնիք:

Բաժանվելիս վերջին խոսքն ասաց.

— Առնակ ջան, սիրելի՛ս, քեզ լավ նայիր, միշտ հիշիր ինձ. շուտ վերադարձիր, ես չեմ դիմանա, ես երջանիկ եմ, որ իմ անդրանիկ զավակի հայրը հայ է: Իմ մայրն էլ հայ էր: Մահմեդականություն չընդունելու համար անգութ հայրս ծեծելով մեռցրեց, և ես ու փոքր եղբայրս որբացանք...

Առավոտյան հանդիսավոր ճանապարհեցին որսի գնացողներ:

թին: Առնակը ձին նստելիս հայացք նետեց պատշգամբում ճերմակ զգեստով հայարտ կանգնած արաբուհուն...

Արաբուհուն սիրտը ճմլվեց: Նրա կարմիր այտերի վրայով արջունքի կաթիլներ հոսեցին:

Անցան ամիսներ...

Կայմակամը խիստ անհանգիստ էր, թեև տղաները շատ վստահելի մշակների հետ էին գնացել հեռավոր վայրերը որսի, բայց ոչ մի տեղեկություն չկար նրանցից:

Բոլոր որոնումներն անցնում էին ապարդյուն: Կայմակամը մտածմունքի մեջ իրեն կորցրել էր, զիշերներն անբուն էր անցկացնում, կամաց-կամաց փակվում էր ախորժակը:

«Չլախ մարեց» մրմնջաց նա և շուտով ընկավ անկողին. այնտեղից էլ՝ գերեզման:

Շնորհաբախում Շատախում լուր տարածվեց, թե կայմակամ տղաները և մշակները հեռավոր լեռներում գազանների զոհ են դարձել:

Այդ լուրը հասել էր Հառեղ գյուղ և քուրդ հովիվներին: Առնակի և Բալասանի կորստյան լուրը շատ ծանր ազդեց նաև րեյի հոյ կանանց վրա: Հարեմուհիները ողբի մեջ իրենց կորցրել էին, եե՛լագարի պես շրջում էին հանդիպման անմոռաց վայրերը ու լացով հանգստանում... Վշտահար կանայք ծանր ապրումները բացատրում էին հղիության ցավերով: Աշնան տարբեր ամիսներին երկուսն էլ ծննդարեցին: Արաբուհին զույգ զավակներ՝ տղա և աղջիկ, իսկ հույնը՝ մի շեկլիկ տղա: Արաբուհին հպարտությամբ իր տղային անվանեց Առնակ:

Որսի գնալուց շորս ամիս հետո նամակ ստացվեց Փեսանգաշտի Հառեղ գյուղում, որ Բալասան և Առնակ Կարապետյանները ողջ և առողջ հասել են Ամերիկա...

1918 թվականին Բաբասանը և Առնակը վերադարձան Հայաստան: Էջմիածնում Բալասանը գտավ եղևոնի զոհ դարձած կնոջից մնացած միակ երեխային՝ Երվանդին:

Մեր գյուղի ճակատագիրը

Մեծ Հայրենականի հաղթանակի 5-րդ տարեկիցն էր: Արձակուրդին Երևանի առաջին տպարանի վաստակաշատ բանվոր, Մեծ Հայրենականի մասնակից, զվարդիայի լեյտենանտ Երվանդ Տ. Պապյան Ա.

Կարապետյանի հետ (թշվառ մանկութեանս ընկերը), որի կուրծքը զարդարված էր Կարմիր զրոշի երկու և յոթ այլ շքանշանով ու մեդալով, մեկնեցինք Աշտարակի շրջանի Փաթրինջ (Ոսկեհատ) գյուղը՝ մեր համագյուղացիներին տեսակցութեան, որոնք մի կերպ փրկվել էին 1915 թ. ցեղասպանութունից:

Վասպուրականի հնավանդ Փեսանդաշտի Հառեղ գյուղի շուրջ 60 բազմաշունչ տնտեսություններից մնացել էր մի քանիսը. այստեղ էին հասել ծերացած Մուխսին, Արշոն, Մարտիրոսը, Անդունենց Սերոբն էր Գյուլուչի հետ: Գյուլուժը բնակություն էին հաստատել նաև մի քանի փեսանդաշտցիներ և ալաշկերտցիներ: Ծնորհիվ խորհրդային կարգերի, նոր տուն էին դրել վերածնվել, բազմացել:

Համագյուղացիները մեզ ընդունեցին հարազատի պես:

Հաջորդ օրը կոլանտեսության բերքառատ այգիները զրոսանքի: Զրուցեցինք մեր հարուստ Հառեղ գյուղի, Փեսանդաշտի, թուրքական լծի տակ տառապյալ կյանքի, հայկական ջարդերի և այլ հարցերի մասին: Գլխիկոր լսում էինք արևմտահայության ողբերգական պատմությունը: Մարտիրոսը պատմում էր ճերմակ գլուխը խոնարհած, պատմում էր ի՛նչ գիտեր, ի՛նչ տեսել էր, ի՛նչի՛ն մասնակցել էր: Պատմում էր հուզիչ, խոր ապրումներով ճիշտ է, ինքը ծերացել էր, բայց հուշերը թարմ էին, անմոռաց:

— Որդիս, մեզ ասում են, մոռացեք այդ արյունոտ անցյալը: Ինչպե՞ս կարելի է մոռանալ, մեր սերունդներն անզամ այն շեն մոռանա, — վերջում ասաց նա:

Տուն վերադառնալիս անցանք լավ մշակված խաղողի այգիներով:

Կանաչ այգու մոտ, ընկուզենու տակ նախաճաշի նստած մի խումբ երիտասարդներ հարգալից ընդունելով մեր ողջույնը՝ հրավիրեցին հացի: Ցուրաքանչյուրն իր հետ բերածը դրել էր ճերմակ սփռոցին և ստեղծվել էր ընդհանուր ուրախության սեղան: Ուտելիքներ շատ կային, բայց ինձ գրավեց գյուղի կոմբերիտական կազմակերպության վառվռուն քարտուղարի բերած Վանա համով ժածիկի անուշ հոտը: Լավաշ հացի մեջ մի բրդուն փաթաթեցի: Քաղաքի աղմկոտ լարված միջավայրից, ծանր օդից հետո Արագածի լանջերին, խաղաղ գյուղի այգիների ու հարազատներիս մոտ ինձ թեթև էի զգում և թիկնած լսում էի զինվորական համազգեստով երիտասարդին՝ հայկական թա-

մանյան դիվիզիայի նախկին զինվորին, որը հերոսամարտով հովհասյան լեռներից հասել էր Բեռլին. պատմում էր դիվիզիայի հրամանատար, իմ որրանոցային մանկութեան ընկեր գեներալ Կվեթր Սֆարյանի քաջազորություններից:

Մարտիրոսն ուշադիր լսելով ա՛խ արեց ու լռեց:

— Հայրիկ, ինչո՞ւ այդպես խոր ա՛խ քաշեցիր, — հարցրեց իջավազ որդի Արծրունը:

Անցյալի ապրումների մեջ ներող ժպիտը դեմքին, հայրը պատասխանեց որդուն.

— Է՛յ, որդիս, ուրախացա ներկայով, բայց հոգուս մեջ շարժվեց անցյալի ցավը: Ինչո՞ւ մեր ժամանակ չկար այդպիսի ամուր զենավար կենտրոն, հայ ժողովրդի միասնություն: Որպեսզի մենք էլ կազմակերպված պայքարեինք ֆաշիզմի նախահայր թուրքերի դեմ, պաշտպանեինք մեր հայրենիքը արհաժիրոց: Անհոգ ապրելիք մե՛ր պապենական օջախներում, մե՛ր հազրո՞ւմ, մե՛ր խորոտիկ երկրում:

— Փեռի Մարտիրոս, Մեծ հայրենականի մասին շատ ենք լսել, կարգացել, կինոնկար, ներկայացումներ դիտել: Գիտենք հիտերյան Գերմանիան աշխարհակալի խոսքով պատերազմ սկսեց, ինքն էլ խայտառակ պարտվեց: Ինչ վերաբերում է մեր ազգի 1915 թ. ցեղասպանությանը, ինքնապահպանության համար մեր մղած հերոսական ճակատամարտերին, թուրքական տիրապետության տակ մեր տառապյալ կյանքին, այդ մասին լու՞մ են:

Կարծես թե արգելված է նրա մասին խոսել...

Հիտերյան ֆաշիզմի բարբարոսությունների մասին միշտ պատմվում է, իսկ ֆաշիզմի նախահայրերի՝ թուրքերի կազմակերպած XX դարի մեծագույն ցեղասպանության մասին՝ ոչ: Այն բուրբուլիք լուռության է մատնված: — Ինչո՞ւ, — հետաքրքրությամբ հարցրին երիտասարդները: Գու՞ր մասնակցել եք այդ հերոսամարտերին, ականատես եք եղել բռնությունների ու հալածանքների, բռնազաղթի, համաճարակի ու սովի, ձեր հուշերից պատմեք, հետաքրքրությամբ կլսենք:

— Ինչո՞ւ է, — մտասույզ ասաց Մարտիրոսը, — մի օր էլ ես կպատմեմ ծով դարդերս, որ հոգիս հանգստանա, որ գալիք սերունդները շմոռանան մե՛ր զարհուրելի անցյալի, մե՛ր ազգալին արդարացի պահանջների մասին:

— Պատմեք, պատմեք, քեռի Մարտիրոս, հիմա պատմեք,— այս ու այն կողմից խնդրեցին երիտասարդները:— Շոգ է, ծառի հովին կհանգստանանք և կլսենք ձեզ:

Մարտիրոսը ծառի հովին դրած կուծից մի բաժակ ջուր խմեց: Խմեց, արծաթափայլ բեղերը թաշկինակով սրբելուց հետո սկըսեց.

— Սիրելի՛ երիտասարդներ, իմ Խորհրդային Հայաստանի վաղուտուն զավակներ, զարհուրելի է եղել մեր անցյալը թուրքական ծանր լծի տակ, կատարյալ դժոխային կյանք էր: Իսկական Ֆաշիստները թուրքերն են եղել, զերմանացիները նրանցից սովորեցին՝ ժողովուրդներին զանգվածներով բնաջնջել:

Ապրելով ներկայով, պարտավոր ենք գիտենալ անցյալը, մեր ազգի պատմությունը, որ օտար նվաճողների պատճառով շաղախված է արյունով ու արցունքով: Օսմանյան թուրքիան շուրջ 500 տարի մեզանից խլեց մեր ազատությունը, ազգային ինքնուրույնությունը:

Սուլթանը մեզ պահում էր խավարի ու տգիտության մեջ: Վարկաբեկում, հալածում էր հպատակ ժողովուրդներին: Հայերին արգելված էր զպրոցների, եկեղեցիների, լուսավորության օջախների ստեղծումը: Երկրում իշխում էր մասսայական տեռորը: Մեծ, բանտ, աքսոր, կախաղան, հպատակ ազգությունների զանգվածային արյունահեղ ջարդեր:

Թուրքական պետությունը սահմանել էր բազմատեսակ ծանր հարկեր՝ գլխահարկ, սուլթանի հարկ, գավառական բեյի հարկ, տասնորդական հարկ, նորածին տղա երեխայի, հղի կանանց հարկ, անասնահարկ և այլն:

Բռնի միջոցներով, հարկահավաքի անվան տակ տանում էին հայ շինականի վաստակի 50—60 տոկոսը: Այդ հողի վրա հաճախակի տեղի էին ունենում լուրջ ընդհարումներ, ծեծ, սպանություններ, ձերբակալումներ, բանտ, աքսոր: Թուրքերը տիրողի իրավունքով երիտասարդ հայ կանանց, աղջիկներին, բռնություններ տանում էին, որը տեղիք էր տալիս մեծ ընդհարումներին:

Հիշում եմ,— շարունակեց քեռի Մարտիրոսը,— Շատախի գավառապետ Իբրահիմ բեյը, որ իր հորից էլ ավելի դաժան էր, և աչքի էր ընկնում հատկապես հայ կանանց փախցնելու վարպետությամբ, գավառում վաստակել էր արյունարբու «սևագոռավ» մականունը: Վանի կուսակալի մոտ գործով գնալիս նա

մեր գյուղում հյուրընկալվեց խալիֆի Ներսեսի տանը: Նա բեյին և նրա թիկնապահներին ընդունեց հարգալից՝ տարով արժանավայել ճաշկերույթ, որին մասնակցում էին նաև գյուղապետը և մի քանի նշանավոր գյուղացիներ: Հանգստանալուց հետո բեյին ուղեկցեցին մինչև գյուղից դուրս գալը: Բեյը Ներսեսի տանը, սպասարկող կանանց մեջ նկատել էր Ղազարի գեղեցկուհի Լուսինին և նրա հասցեին գովեստի խոսք ասել հորը: Բեյին ճանապարհելուց հետո Ղազարը և Ներսեսը խորհեցին, որ այդ գովեստները լավ նշան չեն և երկյուղ զգացին: Իբրահիմ բեյը գլխով, որ հայ կանայք տնտեսվար են, բացառիկ մաքրասեր, հոգատար ամուսինների, երեխաների նկատմամբ, շնորհալի և առաջինի: Բեյն ուներ 18 կին, նրանցից ծնված 37 երեխա: Կանանցից երեքը հայուհի էին: Առաջին կնոջը՝ Մանուշակին, որի մեջում էր տան ներքին գործերի կառավարումը, տասնվեց տարեկանում բռնություններ կնուխան էր առել մի աղքատ հայ ընտանիքից հարկերի և պարտքի դիմաց: Մանուշակ գեղեցկությունը, խելամուռությունը շատ էր դուր եկել Իբրահիմին և նրա ծնողներին: Այդ իսկ պատճառով նրան շատ ճնշեցին, որ հավատափոխվի, հրաժարվի քրիստոնեությունից և ընդունի մահմեդական դավանանք, սակայն Մանուշակը կտրականապես հրաժարվեց, որովհետև նրան փախցնելիս դժբախտ մոր վերջին ճիշդ եղել էր:

— Մանուշակ, աղջիկս, հավատդ ու ազգությունդ չփոխես: Այդ խելամիտ հայուհին երբեք իր դիրքը չէր օգտագործում բեյի ընտանիքի անդամների հանդեպ: Այդ պատճառով էլ բոլոր կանայք հարգանքով էին ընդունում նրա բարեհոգի մեծությունը: Մակայն Մանուշակի սիրտը կոտրված էր, ոչ թե նրա համար, որ տանը կային ավելի երիտասարդ կանայք, ո՛չ, նա չէր նախանձում բեյի կանանց:

Բեյը բոլորից շատ սիրում, հարգում, լսում էր իր գործարար, խելամիտ Մանուշակին: Մանուշակի սիրտը կոտրված էր, որ իր կրթություն ստացած, զարգացած, գործարար անդրանիկ ազան, թուրքական օրենսդրության համաձայն, ժառանգության իրավունքից զրկված էր, որովհետև մայրը հայուհի էր: Հենց զրա համար նրա անդրանիկ զավակը տունը թողեց և հեռացավ ապրում էր հեռու Կ. Պոլսում: Ժառանգական իրավունքը արվել էր թուրք կնոջից ծնված առաջնեկ արու զավակին, մի

անձարձակ, անկիրթ, հոր նման հայերի հանդեպ թշնամի աղաչին:

Մանուշակը հավատարիմ մնալով իր տառապլալ աղաչին, վրեժխնդիր էր ամուսնուն: Որքան շատ էր բեյը սիրում, հարգում Մանուշակին, առավել նա ատում էր նրան: Մանուշակը սերտ կապի մեջ էր հայերի հետ և կարիքի դեպքում կարևոր տեղեկություններ էր հաղորդում նրանց: Իբրահիմ բեյը Վանից վերադառնալիս հյուրընկալվել էր Հայոց ձորի Ոստան քաղաքի էլայմակամ Շուքրի բեյի տանը: Հյուրասիրությունից հետո Էուրս էին եկել Վանա լճի ափին զբոսնելու: Զրույցի պահին Իբրահիմ բեյն իր հիացմունքն էր հայտնել ներսեսի տանը տեսած Ղազարի աղջկա մասին: Հայտնելով նաև իր գաղտնիքը. — Այդ գեղեցկուհուն փախցնելու եմ աղաչիս համար: Այդպիսի արտակարգ գեղեցկուհիներին աստված ստեղծել է մեզ՝ թուրքերիս համար, հայն արժանի չէ այդպիսի գեղեցկուհիներին վայելելու: Նա պիտի իմ հարսը լինի, իմ տան ծաղիկը:

Շուքրի բեյը լավ գիտեր հանդիսներին, բեյին խորհուրդ տվեց հրաժարվել այդ մտքից, ասելով.

— Գրանից արյան հոտ է գալիս, ձեռք քաշիր...

Բեյը տուն վերադառնալիս թիկնապահներով շրջապատված անցավ Հառեղ գյուղի միջով, կանգ չառավ գյուղում: Այդ լավ նշան չէր և զարմանք պատճառեց գյուղացիներին: Սակայն աղբյուրի մոտ թեթևակի կանգ էր առել: Կանանց մեջ փնտրել, հարցրել էր Լուսիկին: Նրա շարամիտ, զննող հայացքից կանայք և աղջիկները վախեցել էին:

Լուրը անմիջապես տարածվեց գյուղամեջ...

Ղազարը խիստ անհանգիստ դիմեց գյուղապետին:

— Եթե բեյը նպատակադրվել է Լուսիկին փախցնել, ապա բեյի կինը՝ Մանուշակը, այդ մասին մեզ կզգուշացնի: Բայց և այնպես մտածեցին, որ Իբրահիմ բեյի հետ գործ ունենալն այնքան էլ հեշտ չէ: Որոշեցին Ֆիդայիների դեկավար Մեսրոպին կանչել և նրան հանձնարարել Լուսիկի պահպանումը: Վաղ առավոտյան գյուղապետը մարդ ուղարկեց Ֆիդայիների մոտ:

Երկու օր անց գյուղում հայտնվեցին երեք թուրք ձիավորներ: Նրանք Իբրահիմ բեյի թիկնապահներն էին և գնում էին դեպի Ղազարի տունը:

Տան առջև կանգնեցին ու կանչեցին տան գլխավորին.

— Սալամ, Ղազար աղա: Իբրահիմ բեյի հրամանով մի

քանի օր ձեր գյուղում ենք մնալու, ձեր տանը հյուր չե՞ք ընդունի: Ղազարը կասկածեց, որ այդ այցը կապված է իր աղջկա հետ, սակայն հանդիստ պատասխանեց.

— Հյուրն աստծունն է: Իմ դիտի վրա տեղ ունեք: Մանաշակը Իբրահիմ բեյի թիկնապահները:

Ղազարը կնոջը պատվիրեց աղջկան անմիջապես ուղարկել հարևանի տուն: Ապա «հյուրերին» հրավիրեց ներս:

Լուսիկի տանից դուրս գալը տեսել էին թիկնապահները, մեկըն էլ խորամանկորեն բարևել էր նրան, հարցնելով՝ «անունդ ինչ է, ո՞ւմ աղջիկն ես, խանում»:

Թիկնապահները երեք օր մնացին գյուղում, ստուգումներ կատարեցին, իբրև թե տեղեկություն էին ստացել, որ գյուղում մեծ քանակությամբ զենք կա: Սակայն իրականում կատարում էին բեյի հանձնարարությունները հետաքաշում Լուսիկին փախցնելու համար: Նրանց մեկնելու հաջորդ օրը եկավ Զանոյնց Մեսրոպը իր Ֆիդայիներով: Գյուղի ավազները երկար խորհուցին, վերջում Մեսրոպն ասաց. «Ես իմ գլխով պատասխանատու եմ Լուսիկի համար: Գյուղում հրաձգություն տեղի չի ունենա: Մենք կթաքնվենք ճանապարհին կաթավիկ բլրի հետևում, այնտեղ կդիմավորենք ավազակներին: Ինչպես պետքն է, մի լավ դաս կտանք, որ Փեսանդաշտի հայ կանանց այլևս ձեռք չմեկնեն»:

Անցնում էին օրերը: Մանուշակից տեղեկություններ չկային: Բեյը նախապատրաստվել էր խիստ գաղտնի:

Մի կիրակի օր, Վանից եկող ճանապարհով գյուղ մտան մի խումբ հեծյալ վաճառականներ և ուղևորվեցին դեպի Խաչաղբյուր:

Սալաքարերի վրա փոսեցին կանացի զարդեր, թիլազուկներ, գույնզգույն կտորներ, որով գրավեցին կանանց ուշադրությունը: Լուսիկն ընկերուհիներով ջրի գնալիս հետաքրքրվել էր վաճառվող ապրանքներով: «Վաճառականները» Լուսիկին տեսնելով անմիջապես սկսեցին իրենց գործը:

Ճերմակ մորուքով, սպիտակ քոլոզով հաղթանդամ «ծերունին» հարգալից ժպիտով ձիու վրայից Լուսիկից մաքուր հայերենով ջուր խնդրեց:

Մինչ Լուսիկը ջուր էր տալիս, «ծերունին» ձիու վրայից կռանալով ձեռքը գցեց աղջկա մեջքին: Ներքևի ավազակը արագ օգնեց և վայրկենապես աղջկան բարձրացրին ձիու վրա:

Ճիշ, աղմուկ. կանայք անմիջապես նետվեցին Լուսիկին օգնելու, բայց արդեն ուշ էր: Փորձված ավազակը ձիով սլանում էր՝ տանելով աղջկան: Նրան հետևում էր իր խումբը:

Ներքևում կանգնած ավազակը շտապում էր հեծնել իր ձին, սակայն Հեղինեն կտրեց նրա ճանապարհը: Ավազակը փորձեց զաշույնով հարվածել կնոջը, բայց հենց այդ պահին գլխին քարով հասցված ուժգին հարվածից գլորվեց գետնին: Վրա հասնող Գավթի կինը՝ Հասմիկը, շոքելով ծանր շնչող ավազակի կրծքին, բուժ մատներով ամուր սեղմեց կոկորդը և նրան ուղարկեց այն աշխարհը:

— Սատկիր, ավազակ, բավական է մեզ տանջեք...

Լուսիկին փախցնելու լուրը կայծակի արագությամբ տարածվեց գյուղում: Բոլորը ծանր ցավ զգացին, վազում էին գեպի նաչաղբյուր: Մայրը շղիմացավ այդ հարվածին, ուշաթափ ընկավ տան շեմին:

Ավազակներին հետևից երեք կրակոց լսվեց՝ որպես Մեսրոպին աղբանշան: Հայ երիտասարդների տրված ազդանշանի համապատասխան ավազակներին դիմավորեցին կազմ ու պատրաստ: Գավթի մի զնդակով գետնին գլորեց քրոջը տանող ձիուն: Արագությամբ սլացող նժույգներին դժվարությամբ զբսպելով, հեծյալները հետ վերադարձան՝ «ծերունուն» օգնելու: Տեսան «ծերունու» վայր ընկնելը. գլուխը կպել էր քարին ու արյուն է հոսում՝ ընկնելիս ձին սատկել էր, իսկ «ծերուկի» ոտքը մնացել էր ձիու տակ: Փորձեցին օգնել: Ընկած աղջիկն էլ ջանում էր գլխին հագցրած տուրակը հանել: Ավազակներից մեկը շտապեց նրան ձիու վրա բարձրացնել, որ փախցնի, սակայն ուշ էր, հայ կտրիճները շրջապատել էին ավազակներին:

— Չեղբերդ վեր, խրոխտ ձայնով բղավեց Զանոյնից Մեսրոպը:— Մեսրոպին ճանաչելով ավազակները շփոթահար ձեռքները վեր բարձրացրին:

Մերունին թևով սրբեց դեմքի արյունը, ընկած վիճակում հանեց մաուզերը և ուղղեց Մեսրոպի վրա, բայց Մանուկի արձակած զնդակը ծակեց ծերունու աջ թևը և մաուզերը ձեռքից վայր ընկավ: Իսկ Գավթին արագորեն վազեց գեպի բույրը, հանեց գլխին հագցրած տուրակը: Տեսնելով քրոջը ողջ և առողջ ուրախացավ, բարձրացրեց վեր, զրկած բերեց Մեսրոպի մոտ: Լուսիկը իրեն շիրջրեց: Նա ծնկաչոք խոնարհվեց Մեսրոպին, շնորհակալություն հայտնեց:

Մեսրոպը շոյեց աղջկա գլուխը, զգաց, որ աղջկա մազերը քաց են՝ նայեց ափի մեջ՝ արյուն կար, գրպանից հանելով թաշկմալը ամուր կապեց նրա գլուխը:

— Գավթի,— քրոջը շտապ տուն հասցրու... Իսկ սրանց հացի՞նք մենք կմարբենք առանց բեզ:

Աղբյուրի մոտ հավաքված գյուղացիների թափորը ընդառաջ գնաց քրոջը բերող Գավթին, ջերմ ողջունեցին քաջին:

Գավթի քրոջը ողջ և առողջ հանձնեց հորը:

— Շնորհակալություն, որդիս: Բուրբիս կողմից մեր երախտագիտությունը հաղորդիր Զանոյնից քաջին:

Հայր և աղջիկ գրկախառնված արտասվում էին:

Հասակակիցները զուրգուրանքով շրջապատեցին Լուսիկին:

— Հայրիկ, ես մայրիկիս եմ ուզում,— կանչեց Լուսիկը: Վրեժխնդրությամբ լցված Մեսրոպի մտրակների հարվածների տակ, թրջված հավի պես կուշ եկած բեյի «քաջերը» խոստովանեցին, որ աղջկան փախցնում էին Իբրահիմ բեյի պահանջով, նրա աղայի համար:

— Բեյը որքա՞ն էր վարձատրելու, ձեզ, հայ աղջկան դեժբախտացնելու համար,— հարցրեց Մեսրոպը:

Նրանք գլուխները կախ, լռեցին:

— Աստված վկա, բոլորիդ էլ շանսատակ կանեմ, ի՞նչ եք անմեղ ձեռնոտ, լալկվե՞լ եք ինչ է,— մտրակով հարվածեց մեկին, մյուսին...

— Մեսրոպ աղա, ոտքդ պաշեմ,— ասաց մեկը,— մենք մեղք չունենք, այս կեղծ ծերունի ավազակապետն է մեղավոր,— ցույց տվեց Սմիտին:— Մեղ ուժով են բերել, խոստացել են տասական ոչխար, իսկ նրան՝ Սմիտին 100 ոսկի, քսան էլ ոչխար: Չե՞ր գլուղն ուղարկելուց առաջ բեյը մեզ զգուշացրեց:

— Եթե հառեղցի Ղազարի աղջկան շփախցնեք, ապա բուրբիդ մահ է սպասում, որպես ավազակ թշել կտամ Սիրիայի անապատները՝ տաժանակիր աշխատանքի և այնտեղ էլ կմնաք մինչև մահ:

Մեսրոպը զննեց ծնկաչոք աղերսող ավազակներին, ապա շեշտակի մոտեցավ հպարտ դիրքով նստած հիսունն անց ավազակապետ Սմիտին, որն արյունոտ դեմքը շուտ տված շեր ուզում նայել իր հին հակառակորդին:

— Անմեղ ծերունու դիմակ ես հագել, սրիկա: Աղվեսություն էլ ես անում, կուշ ես եկել, վերջապես ընկա՞ր: Քա՛նի-քա՛նի

անմեղ հայ ես կողոպտել ու սպանել, ընտանիք ես որբացրել, Շատախում քաջի անուն վաստակել,— նա պոկեց երեսի կեղծ սպիտակ մորուքը:

— Ես ձեզ հետ ահա թե ինչպես կխոսեմ, սրիկանե՛ր,— սպա հանելով դաշույնը Մեսրոպը մոտեցավ ավազակներին: Մերկ դաշույնը տեսնելով մահվան սարսափ պատեց ավազակներին. նրանք սկսեցին ծնկաչոք սողալ:

— Աղա, աղաշո՛ւմ ենք, կյանքներս խնայիր: Մեզ ստիպել են,— նրանք սկսեցին հայհույել բեյին, Սմիտին:

— Աղբրսելու, մեղանչելու պահին, ձեր ահարկու հայացքով որքան ողորմելի եք, ավելի նենգ ու արյունարբու, մի՞թե կարելի է ձեզ ներել,— բղավեց Մեսրոպը, նա կանչեց Մանուկին, Արսենին և ինձ:

Գառնալով մահվան սարսափից կուչ եկած ավազակներին, Մեսրոպն ասաց.

— Հանուն ձեր անմեղ երեխաների և կանանց, կյանքներդ բաշխում եմ, սակայն մի պայմանով՝ ծնկաչոք երդվեք, որ այսուհետև ոչ մի հայի վրա ձեռք չեք բարձրացնի:

Ավազակները ծնկաչոք երդվեցին, որ այսուհետև կլինեն հայի բարեկամ...

— Եղբայրներ,— դառնալով մեզ ասաց Մեսրոպը,— որպես այս երդման նշան հանեք դաշույնները և բուրբի ձախ ականջները արմատից կտրեք:

Մենք անմիջապես կատարեցինք նրա հրամանը: Մի քանի րոպե հետո թուրքերը թեև երբ կապած արնաշաղախ կանաչի վրա տանջվում էին ցավերի մեջ: Մեսրոպը հետո դիմելով ավազակապետին, ասաց.

— Այս ամենի պատճառը դու ես: Ես և Ասքանազը քեզ վաղուց էինք փնտրում: Այն պահից, երբ Շատախում առևտրի եկած նրա Ասլան պապի գլուխը քնած ժամանակ կտրեցիր ու տարար նրա 300 ոսկին: Բեյին բաժին տվիր և փախար, չէ՞: Ասքանազն ու ես նրա դազադի առջև, եկեղեցում երդվեցինք քեզնից առնել արջան վրեժը: Ահա այսօր եկավ հատուցման ժամը:— Նա դաշույնը խրեց ավազակապետի կուրծքը: Ապա զայրացած կրկնեց երկրորդը, երրորդը:— Սատկի՛ր, շուն, դու շատ ցավեք ես պատճառել իմ ժողովրդին:

Մեսրոպի հրամանով մենք արձակեցինք ավազակների ձեռքերը: Եվ նա նրանց ասաց.

— Դե՛, գնացեք, որտեղ ձեր կասեք, ընտանաք նաև մերն ասել: Իսկ այս շան դիակը տարեք բեյին նվեր...

— Այդպես արնաթաթախ Սմիտի դիակը կապեցին ձիու վրա, իրենք էլ իրենց ձիերով խայտառակ պարտված ճանապարհ ընկան:

Ուշ երեկո էր: Սև ու մութ ամպերն իջել էին շրջակա լեռների վրա: Բեյը իր մեծ ընտանիքով ոտքի վրա էր. ճոխ սեղան պատրաստել և սպասում էին ավազակապետ Սմիտին, հայուհուհու:

Թիկնապահները ամոթից գլուղաքաղաք մտան գիշերով, որպեսզի իրենց շտեմանն այդպես խայտառակված վիճակում:

Երբ բեյը լսեց Լուսիկին փախցնող իր թիկնապահների վերադարձի մասին, ուրախ շտապեց պատշգամբ: Բայց ձիու վրա տեսնելով սպանված ավազակապետին և ապա ականջները կտրած իր թիկնապահներին, նա ամոթահար գլուխն առավ ափերի մեջ և իրեն զցցեց ննջարան.

«Ես դեռ ցույց կտամ փեսանդաշտցիներին: Տակնուլրա կանեմ, կընջեմ, մոխրի կվերածեմ Հառեղ գյուղը»,— մոռնաց նա:

* * *

— Քեզի՛ Մարտիրոս,— ծանր շնչելով հարց ավեց երիտասարդ աղջիկը,— մի՞թե թուրքիայում բազմակնույթյունն օրենքով թույլատրվում էր:

— Այո՛, Օսմանյան կայսրության և մահմեդական կրոնի կողմից օրինականացված էր: Իրենք՝ սուլթանները, ունեցել են մինչև մի քանի հարյուր կին: Սուլթան Համիդը, որ հայտնի էր գաժանույթյամբ և որպես հայկական ջարդերի կազմակերպիչ, ուներ 300 կին, որոնց սպասարկում էին 1200 ծառաներ: Սուլթանից մինչև շարքային թուրքը բոլորն էլ ձգտում էին բազմակնույթյան: Կինը նրանց համար քմահաճույթի առարկա էր... Կանանոցը՝ հպարտության ու մեծության նշան:

Դա արվում էր նաև իրենց ազգը բազմացնելու համար, որպեսզի հպատակ ժողովուրդների նկատմամբ մեծամասնություն կազմեն:

Խնջույքներում մեծամեծների հետ նիստ ու կացին շատ և գեղեցիկ կանայք ունեցողների համար հպարտություն էր հա-

մարվում: Բայց այդքան շատ կանայք, այն էլ գեղեցիկ որ-
տեղի՞ց գտնեին, Ուստի պակասը բոնությամբ լրացնում էին
իրենց հպատակ հույն, արաբ, հայ, վրացի, բուլղար, սլավո-
նական և այլ ժողովուրդների կանանցով, աղջիկներով: Եթե հա-
վանած, ընտրված աղջիկը, երիտասարդ կինը հրաժարվե-
թուրքին կնուխյան գնալու, շատ թանկ էին հատուցում նրա
ծնողները, հարազատները, նույնիսկ իրենք՝ կանայք: Նրանց
սպասվում էր մահ, հալածանք, արքոր:

— Սիրե՛լի երիտասարդներ, վերածնված իմ Հայաստանի
ծիլեր, ահա՛ այդպես է եղել մեր կյանքը բուրբական լծի տակ
միշտ էլ՝ մեծ վշտերով, փոքր ուրախություններով:

— Ապա ի՞նչ եղավ ձեր գյուղի ժողովուրդը, — հարցրեց մե-
կը:

— Կոտորածից առաջ, ողջ Արևմտյան Հայաստանում 16-ից
52 տարեկան 400.000 տղամարդկանց, զորահավաքի անվան
տակ, թուրքապետությունը հավաքեց տարավ՝ գինակա-
ռուլյցներում աշխատելու: Այնտեղ էլ խումբ-խումբ տանջամահ
արին, գնդակահարեցին: Մի մասն էլ ընկավ ազատագրական
մարտերում, ոմանք էլ ընկան գաղթի ճանապարհին, մնացածն
էլ էջմիածնում անօթեան մնաց, սովի, համաճարակի բաժին
դարձավ: Օրինակ՝ մեր Ներսեսի մեծ ընտանիքը: Գերդաստա-
նով, շուրջ 60 շունչ էին: Ունեին մի ընդհանուր, մեծ տնտեսու-
թյուն: 400-ից ավելի ուխտար, 15—20 գլուխ կթան կով և գոմնշ:
Քսան լծկան անասուն, մի քանի զութան, ձիեր և այլն: Նրանց
ընտանիքի կանայք երբեմն չէին հասցնում կիթը. հարն-
վաններն օգնում էին և իրենց կթած կաթի կեսը կամ բոլորը
բաշխում էին նրանց...

Բոլոր ունեւոր տնտեսությունները հողամշակման, անասնա-
պահության գործերը կատարում էին ընտանիքի անդամներով:
Նման տնտեսությունները մեր գյուղում, Փեսանդաշտում քիչ
չէին. նրանք միշտ էլ օգնում էին կարիքավորներին հատկապես
հարկահավաքի ժամանակ: Ժառանգներից ժառանգներին անց-
նող այդ մեծ և հարուստ տնտեսություններն ստեղծված էին
աշխատասիրություններ և այդ բոլորը 1915-ի փախուստի ահեղ
օրերին քարուքանդ եղավ ու տարիների ընթացքում ժառան-
գած վաստակը դասդասված մնաց թուրքերին:

Դասդասված անկողիներն ու խալիներ, հարյուրավոր
գլուխ անասուններ, տոննաներով հացահատիկ, կարասներով,

կճուճներով յուղ, պանիր, կտավատի ձեթ, տուն ու տեղ՝ բո-
լորը շան ու գելի բաժին դարձավ:

Մեծ եղեռնից մազապուրծ վանի, Հայոց ձորի, Գավաշի,
Փեսանդաշտի, Շատախի, Տարոնի, Այաշկերտի, Սասունի, Այլա-
հազի և բազմահազար անօթեան թշվառական գաղթականներու
չարգուփշուր եղած, հյուծված, մի կերպ տեղավորվեցինք էջ-
միածնի Ներսես կաթողիկոսի հիմնադրած անտառում:

Էլ ուժ չկար դիմանալու: Կյանքից հուսահատված, անտեր-
անտիրական բացօթյա անձնատուր էինք եղել մահվան: Անտա-
ռում սաստկանում էին ահավոր սովը, համաճարակը, տիֆը,
խուճերան, մալարիան... Օրինակ, Ներսեսի նահապետական մեծ
գեթաատանից մնացել էր ինքը և մի փոքր տղա երեխա: Ու
այդպես ընտանիքներով կործանվեցին շատերը...

Գաղթի ճանապարհին գաղանալին բարբարոսություններ մեզ
հետապնդող Ալի էհսան փաշայի հայաբնաջնջման բանակի դեմ
հայ կամավորների պաշտպանողական հերոսամարտերում, Ներ-
սեսի՝ ստացած վերքերից՝ անտառում առողջությունը վատա-
ցավ: Մի առավոտ արթնացանք տեսանք, քնած երեխային կըրծ-
քին սեղմած, մահացել է: Նրա հանգած աչքերի տկուճքում խոր
թախիժ էր երևում:

Մենք ցավով տարանք Փեսանդաշտի հերոսական պաշտպա-
նության ղեկավարներից մեկի՝ Ներսեսի մահը: Կյանքից հու-
սահատված, կմախքացած գաղթականներու գլուխ խոնարհե-
ցինք քաջ հայրենասերի աճյունի առջև: Կեսօրին աճյունը հողին
հանձնեցինք էջմիածնի ս. Գայանե եկեղեցու բակում: Երեկո-
յան Ներսեսի տղան շկար: Երկար որոնեցինք, բայց չգտանք:
Հաջորդ առավոտյան գերեզմաններ փորողները նրան գտել էին՝
գլուխը դրած հոր գերեզմանին, քնած: Պատանուն էջմիածնում
հանձնեցինք որբանոց:

Ողջ կյանքում չեմ մոռացել այդ ծանր պահը. ավագ եղ-
բայրս՝ Արշակը, երեխայի ձեռքը բռնած տանում էր որբանոց,
ազան վիզը ծուած մանկական խոսուն հայացքով նայեց մեզ և
հոնգուր-հոնգուր լաց եղավ:

Վշտահար պատանու խորաթափանց հայացքի մեջ արտա-
ջուրված էր մեր՝ թշվառ ազգի ողջ ողբերգությունը: Նա ապրել
էր ուզում: Գթացող ձեռք էր աղերսում... Խոր մտորումների
մեջ երեխայի հետ քալող եղբայրս ազդվելով մի պահ կանգ
առավ, սրտացավ գրկից երեխայի գլուխը և շոյելով սասց.

— Որդիս, մի լաց, թե չէ ես էլ կարտասովեմ: Մեզ այս բախտն է վիճակվել: Գուցե որբանոցում դու կապրես, սակայն չմոռանաս այս օրերը:

Տարիներ անց իմացանք, որ նրան մի մեծ խումբ ընկերների հետ Ստեփանավանի որբանոցից պետությունը տեղափոխել է Լենինականի տեքստիլ կոմբինատում աշխատանքի: Խորհրդային Հայաստանի կառավարությունը այդ խոշոր կոմբինատը կառուցեց մեծ թվով որբերի աշխատանքի տեղավորելու համար: Կոմբինատի աշխատողների 99 տոկոսը մանկատներից եկած երիտասարդներ էին:

1931 թ. որպես առաջավոր բանվորի նրան առաջ էին քաշել կոմբինատական ղեկավար աշխատանքի: Նա ծառայել էր բանակում, հետագայում բարձրագույն կրթություն ստանալով, աշխատել Երևանի Պոռչյանի անվան միջնակարգ դպրոցում որորպես պատմության ուսուցիչ: Մասնակցել է Մեծ հայրենականին:

Պատերազմից հետո Երևանում անցել է կուսակցական աշխատանքի: Ունի ընտանիք, երեխաներ:

Զուր չէր, որ այդ տարիներին Հայաստանն անվանում էին «որրի և ողրի երկիր»: Հինգ միլիոն հայությունից Հայաստանում հազիվ թե 700 հազար հայ մնացած լինեք, որի կեսը թշվառ գաղթական ու որբ երեխաներ էին: Դժվար էր հավատալ, թե աղբամուլի յաթաղաններից արյունաքամ եղած հայ ժողովուրդը կկարողանա ապրել: Մակայն խորհրդային կարգերը Հայաստանին բերեցին խաղաղություն, վերածնունդ, պետականություն: Վերջ տրվեց Անդրկովկասում ազգամիջյան պատերազմներին:

Ես օրհնում եմ խորհրդային Հայաստանին, աշխարհով մեկ հողմացրիվ ողջ հայության հանգրվանին, որը մեր բոլորի ճշմարիտ հայրենիքն է, հայոց բնօրրանի փրկված մասը:

Այստեղ նա լռեց:

— Պատմի՛ր, քեռի Մարտիրոս, պատմի՛ր արևմտահայերի կյանքից, — այս ու այն կողմից խնդրեցին երիտասարդները: — Մեզ շատ է հետաքրքրում, պատմի՛ր:

Հնավուն ընկուզենու հովին գրված կփից թանը անուշ անելով, Մարտիրոսը ձերմակ բեղիքը սրբեց, խոր շնչելով շարունակեց.

— Միրելի երիտասարդներ, այսօր այսքանով վերջացնենք, դուք էլ անցեք ձեր աշխատանքին: Զեր հուզող հարցերին կպա-

տասխանեմ մի այլ անգամ, — պատասխանեց քեռի Մարտիրոսը:

— Քեռի, այնուամենայնիվ, ինձ մի հարց շատ է հուզում՝ կապված ձեր անձնականի հետ, — հանկարծ ասաց կոմբինատ-միություն կազմակերպության քարտուղարը:

Անցել եք կյանքի դժվարին ուղի, մասնակցել հայ ազատագրական մարտերին, քաղաքացիական կռիվներին, սոցիալիստական հասարակարգի մասին ունեք առողջ դատողություն: Գյուղում ճանաչված, հարգված մարդ եք: Ասացե՛ք, խնդրեմ, հավատացյա՞լ եք, թե ոչ:

— Գիտե՞ք ինչ, սիրելի՛ աղջիկս և դուք սիրելի՛ երիտասարդներ, այս հարցը հասարակ հարց չէ: Կյանքում մարդ մի բանի պետք է հավատա... Հավատացյալ լինելը համոզմունքի հարց է: Այդ մասին քիչ վեճեր չեն եղել և դեռ կլինեն: Կրոնը եղել է ու կա տիրող կարգերի ձեռքին որպես գործիք, նրանց մեղսակիցը: Կրոնը աղբամիջյան պատերազմների ժամանակ օգտագործվում է որպես թշնամանքի հրահրման ակտիվ գործոն: 1915-ին Թուրքիայում մահմեդական կրոնը մեծ դեր խաղաց հայկական ջարդերին, ծառայեց երիտթուրքերին՝ իր քաբոզը դարձնելով հայաչինջ քաղաքականության հորդոր:

Հայերս՝ որպես հավատացյալներ, ազնվորեն նվիրված էինք քրիստոնեական հավատին, որը մեզ պարտավորեցնում էր մեր բնակության վայրում եկեղեցի կառուցել, աստծուն աղոթել, խոհեմ ծառայել: Ապերախտ թուրքերը գազանային բարբարոսությամբ ահեղ դատաստան տեսան մեր ժողովրդի հետ. բնաջնջեցին արևմտահայության շուրջ 70 տոկոսը: Վայրագ հրոսակները նույնիսկ եկեղեցիների մեջ պղծեցին, սպանեցին հազարավոր գեոհասա աղբիկների, երիտասարդ կանանց, մանուկների: Այդ զարհուրելի պահերին ո՞վ լսեց նրանց աղերսանքի ու ողբի ձայները, ո՞վ օգնության ձեռք մեկնեց նրանց: Անմեղ ու քրեքուշ էակները կյանքից հեռացան մատաղ հասակում, բնաջնջվեցին, որովհետև հայ էին, քրիստոնյա էին: Իսկ պատերազմից հետո, ելնելով իրենց շահերից, հաղթող քրիստոնյա պետություններն էլ հովանավորեցին Թուրքիային՝ նրա հետ կլոր սեզանի շուրջ նստելով: Աշխարհն իրար մեջ բաժանեցին:

Քիչ առաջ ես ասացի, թե մարդս մի հավատ պիտի ունենա. իմ հավատն ու համոզմունքը համամարդկային առանց ազգերի և դավանանքների խորություն հասարակարգն է, խաղաղ ու

ստեղծարար ժողովուրդների համերաշխությունը, եղբայրությունը: Այս ամենի հետ ես հարգում եմ իմ նախնյաց դավանանքը՝ մեր տառապյալ ազգին մատուցած իր բազմատեսակ ծառայությունների համար: Այն իր շուրջը համախմբելով, ստեղծել է միասնություն՝ հանուն ազգի և հավատի պահպանման՝ կռվելով բազմաթիվ օտար զավթիչների դեմ, գոյատևել: Սկսած Ավարայրի ճակատամարտից մինչև Սարգարապատի ճակատամարտը: Անկեղծ ասած, երբ որևէ առիթով էջմիածին եմ գնում, պարտքս եմ համարում այցելել 1915-ի գաղթականների ողբերգության վայրերը որպես հարգանք նախնյաց հավատքի: Այս մայր տաճարում մոմեր եմ վառում հարգանք մատուցում իմ անմոռաց, տառապյալ հայ ժողովրդի անմեղ զոհերի հիշատակին:

Միրելիներս, նաչելով ձեր պայծառ դեմքերին ուրախանում եմ, ձեզ երանի տալիս, ձեր մեջ տեսնում եմ մեր ժողովրդի պայծառ ապագան: Ես կցանկանայի, որ դուք միշտ բարի նայեք Խորհրդային Հայաստանին, որը շտկեց տառապանքներից կուսցած հայ ժողովրդի մեջը: Միասնությամբ, ազնվորեն ծառայեք ձեր աշխատասեր ժողովրդին, հայրենիքին:

Այդ խոսքերն ասելիս նրա աչքերը երիտասարդական փայլով լցվեցին: Երիտասարդները շնորհակալություն հայտնեցին ծերունուն, անցան իրենց աշխատանքներին: Մենք էլ շարունակեցինք մեր շրջագայությունը, մեր գրույցը:

Նստել էինք Արագածից իջնող Ամբերդ գետակի կանաչ ափին, ծառի հովին: Իմ բարի քեռին՝ Մարտիրոսը, խոսում էր Փեսանդաշտի ինքնապաշտպանության հերոսամարտի մասին: Նա՛ երբեմնի երիտասարդ կապավորը, որպես գլխավոր հրամանատարների մարտական օգնական, լավ հիշում էր հրամանատարներին, մարտիկներին, գյուղապետներին, նրանց հետ զրուցել էր, խրամատում կռվել, հետախուզության գնացել: Այնպես տպավորիչ էր պատմում, ասես թե մարտի դաշտը մեր աչքի առջև էր: Հիշում էր զոհված քաջերին, լուռ էր և արծաթափայլ գլուխը խոնարհում: Իսկ մեր խոսակցությունը շարունակվում էր...

Պատվարժան հայրենասեր Մարտիրոս Նշանյանը մահացավ 95 տարեկանում, 1984-ին հողին հանձնվեց Աշտարակի շրջանի Ոսկեհատ գյուղում, թողնելով հրաշալի սերունդ:

Մեր Փեսանդաշտի Կայնամիրան գյուղը անցուղարձի ճանապարհից հեռու, հանգիստ ու խաղաղ գյուղ էր: Արևակող սեփառողային սարալանջերի ստորոտում, ուր նայում էիր, ծագկաշատ կանաչ լանջին, մեղմ քամուց ալեկոծվող արևազույն ցորենի արտերին, շորորացող հասկերին, թվում էր, թե ծով է ալեկոծվում: Հիանում էիր ծանր աշխատանքով ձեռք բերված երկրային այդ առատությունը, թովիչ գեղեցկությունը:

Մանկությունից սիրահարված էի իմ հայրենի Փեսանդաշտին, նրա ծաղկածիծաղ, զմրուխտ սարերին: Եվ դա իմ կյանքի անմոռանալի հուշն է:

Կայնամիրանի խաղաղ կյանքը խախտվեց գյուղում թուրքեր և քրդեր վերաբնակեցնելու օրվանից:

Տարօրինակ շարոզի էին այդ մարդիկ և խիստ ոխակալ: Ազգամուլ, ֆանատիկ, կրոնամուլ: Նույնիսկ բարիգրացիական ծառայությունները չէին գնահատում: Եթե հարյուր անգամ լավություն անեիր, մեկ անգամ չհաջողվե՞ր՝ ամեն ինչին վերջ: Սովոր չէին հողի վրա աշխատելու, անասուն պահելու, բարիքներ ստեղծելու: Սովորաբար սիրում էին ձի նստել, թափառել, ուրիշ ունեցվածքը թալանել, դրանով էլ ապրել:

Իրենց անհաջողությունների համար մեղադրում էին հպատակ քրիստոնյա ժողովուրդներին, հատկապես հայերին, կազմակերպում էին այլազգիների զանգվածային ջարդեր: 1856-ին կազմակերպված մեծ մասշտաբի ջարդերի ժամանակ էր, որ Շատախի Սաադի բեյը ավազակային, թալանչիական հեծյալ ջոկատներով ջարդեր կատարելով շարժվեց դեպի Փեսանդաշտ:

Բեյը լսել էր Փեսանդաշտի և նրա աշխատասեր ժողովրդի մասին, սակայն այդ երկրում չէր եղել: Շարունակելով իր արյունոտ արշավանքները, նա Կարաբողազի լեռնանցքում հանդիպեց ամուր դիրքավորված փեսանդաշտցիներին: Բռնկվող անապատի թեժ մարտից նրա զորամասը մեծ կորուստներով նահանջեց: Զայրացած բեյին խորհուրդ տվեցին Փեսանդաշտի քաղերի հետ մարտի չբռնկել: Խորամանկությամբ, խաբեբայությամբ մտնել այդ հարուստ երկիրը և թալանել...

Սաադի բեյը հրավիրեց փեսանդաշտցիների ներկայացուցիչներին: «Անկեղծ» հավատացրեց, որ ինքը ամենևին մտադիր չէ Փեսանդաշտի բնակչությանը նեղություն պատճառել, այլ մի-

այն ճանապարհով անցնելու է Ոստան քաղաքը: Փեսանդաշտցի-
ները որոշեցին մեկ անգամ ևս հավատալ բեյի զնվարթյանը և
Հառեղ գյուղում նրան ճաշկերույթ տվեցին:

Բեյը հիացած էր փեսանդաշտցիների հյուրասիրությունից,
զուվեց, որ նրանք կազմակերպված են, ունևոր, ապրելակերպով
առաջադեմ, քան իրենք՝ թուրքերը:

Մաքրասիրությունը, կանանց կիրթ ու հարգալից վերաբեր-
մունքը, մաքուր, ճաշակով հագնվելը, տեսակ-տեսակ ուտելիքե-
ղենով սեղանը, ուտելուց առաջ և հետո լվացվելու սովորու-
թյունը. այդ ամենը շարհոգի բեյի նախանձը բորբոքեցին: Նա
որոշեց մի քանի օր մնալ Փեսանդաշտում: Մանոթանալով գյու-
ղերին՝ թալանի մեծ պահանջներ ներկայացրեց. Շատախ վե-
րադառնալով, Փեսանդաշտից տարավ թանկարժեք իրեր, հա-
ցահատիկ, անասուններ: Նաև որոշեց փեսանդաշտցիների հա-
մերաշխությունն ու միասնությունը խախտել՝ այնտեղ թուրքեր
և քրդեր բնակեցնելու միջոցով: Մտածում էր աստիճանաբար
հայերին դուրս մղել Փեսանդաշտից, բնակեցնել թուրքերով, ի
վերջո տիրել այդ հրաշալի գաշտավայրին: Կայնամիրանի գյու-
ղի աշխարհագրական դիրքը բեյին շատ էր դուր գալիս: Ուստի
որոշեց թուրքերի բնակեցումը սկսել այդ գյուղից:

Բեյը շուրս գյուղի ռեսերին կարգադրեց Կայնամիրանում
տասը տուն կառուցել թուրքեր բնակեցնելու համար. հիմնա-
վորում էր, թե՛ «առանց բարերար, առաջադեմ թուրք ժողովրդի,
դուք խաղաղ ապրել չեք կարող»: Թուրքերի բնակեցումից դժ-
գոհ լինելով փեսանդաշտցիները ձգձգում էին շենքերի կառու-
ցումը:

Այդ մասին իմանալով բեյը իր մոտ կանչեց գյուղապետե-
րին, բանտարկեց մեկ ամիս, ծեծի և տանջանքների ենթարկեց:
Յուրաբանչյուրին հարյուրական ոսկով տուգանելով նա պահան-
ջեց կարճ ժամկետում տները կառուցել:

Թուրքերի համար տները կառուցում էին գյուղից քիչ հեռու,
թուրքական տների նման, մեկսենյականոց՝ առանց պատու-
հանների, երդիկով: Բնակեցված քոչվոր թուրքերը սկզբնական
շրջանում ապրում էին հայերի ունեցվածքը թալանելով:

Հետագայում հանդիպելով փեսանդաշտցիների դիմադրու-
թյանը, ստիպված հրաժարվում են թալանի սովորույթից, հա-
յերից սովորում հող մշակել, տնտեսություն ստեղծել:

Սակայն կենցաղի մեջ ոչ մի փոփոխություն չէին մտցնում:
Նախկինի պես քնում էին հողե հատակին՝ ողջ ընտանիքով,
կողք կողքի: Չունեին կանոնավոր անկողին, սեղան, աթոռ,
զգալ, ուտում էին միասին՝ մի ամանից, մատներով: Մեծամա-
սամբ անասունները պահում էին քնելու սենյակում: Հազուաու-
թեքը փոխում էին, երբ մարմնի վրա քրքրվում էր: Միայն մեկ-
մեկ հանում էին ոչ թե լվանալու, այլ թոնիրում ոչիլները թափ
ալու համար:

1878 թվականի ռուս-թուրքական պատերազմին մասնակ-
ցած կայնամիրանցի Իսմայիլի հինգ տղաներից տուն էին դար-
ձել երեքը. նրանք գյուղում իրենց պահում էին շատ արտոնյալ,
հպարտանալով, որ պատերազմից վերադարձել են «հաղթանա-
կով», պարզներով: «Ալլահի և սուլթանի կամքով մեծ թուր-
քիան հաղթեց...», — ասում էին նրանք: Միշտ հիշեցնում էին,
որ որպես հաղթող զինվորներ իրենց մեծ արտոնություններ է
տրված: Ավելի սանձարձակ էր կրտսեր Մեշադին, որին որպես
պարզև տվել էին մեկ արաբական նժույգ:

Ավագ եղբայր Յուսուֆը, թեև ամուսնացած էր և ուներ շուրս
երեխա, իր հետ բերել էր երկրորդ կինը: Տուն վերադառնալուց
է ամիս հետո էլ սկսեց քնել իր զոհված եղբոր կնոջ հետ, որն
ունեի երկու երեխա: Հետևելով ավագ եղբոր օրինակին, մյուսն
էլ զավթեց անհայտ կորած եղբոր կնոջը:

Նրանք հաճախ էին հարձակվում հայերի վրա, հազար ու մի
հերյուրանք տարածելով նրանց հասցեին: Բանակում այգուհե
էին դաստիարակել մուլաները, հրամանատարները:

Հայերը դավաճանել են ալլահին, սուլթանին, պատերազմի
ժամանակ թիկունքից օգնել են թշնամի ռուսներին, անօրեն
նստել են ալլահի և սուլթանի՝ թուրքերին պարզեած հույերի
վրա... Հայերին պիտի ոչնչացնենք... — հոխորտում էին նը-
րանք: — Մենք, որպես պատերազմի հաղթողներ, դավաճան
հայերի հետ կարող ենք վարվել այնպես, ինչպես ցանկանանք:
Ոչ ոք չի կարող մեզ արդելք հանդիսանալ:

Երեկոյան, գյուղը մտնող ոչխարի հոտից, եղբայրները կա-
րող էին թալանել-տանել ուզած ոչխարները: Նախրից ցանկա-
ցած կովը տանել, կթել, հետո բաց թողնել, մտնել ջրաղացնե-
րը, կալերը, ջվալներով ալյուր, ցորեն տանել...

Օրը ցերեկով, երեկոները, գիշերները մտնում էին հայկա-
կան թաղամասը, բնակիչներին վախեցնելու նպատակով հրա-

ձգութիւն կատարում. նշան բռնելով՝ կրակում էին հավերի, շերի, կատունների վրա, վախեցնում երեխաներին:

Հաճախ քմահաճուլքի համար նստում էին աղբյուրի ճանապարհին: Զրի գնացող աղջիկներին, կանանց վիրավորական խոսքեր ասում, ածականներ շարտում նրանց հասցեին: Չէին լսում, չէին ենթարկվում գլուղապետին, ծնողներին: Մի քանի անգամ էլ երեք եղբայրով ընդհարվեցին հայ երիտասարդները հետ, գլուղից դուրս կոխվ սարքեցին, իրար վրա խանշալ քաշեցին: Ընդ տ է, երեքով էլ ծեծկռտված, կաղալով ու արյունոտուն դարձան, սակայն չէին խրատվել, շարունակում էին սանձարձակութիւնը: Մինչդեռ նրանց ծերունի հայրը՝ Իսմայիլը, հայերի հետ բարիդրացիական հարաբերութիւնների մեջ էր:

Քանի՛-քանի՛ անգամ էր նա տղաներին խիստ զգուշացրել ասելով.

— Ձեզ խելոք պահեք, մեզ հայերի հետ մի թշնամացրեք: Թողեք այդ բարի ժողովրդի հետ խաղաղ ապրենք, մի օր դանակը ոսկորին կհասցնեք, երեքիդ էլ կսպանեն: Գլուղացիները ձեր դեմ կայմակամին տասնյակ բողոքներ են գրել...

Մեղադին, որ ավելի զաւրելի էր իր ազգամուլ լիտի արարքներով, սիրահետում էր գլուղի գեղեցկուհի տասնյոթամյա Մարիամին: Համոզվելով, որ հիասքանչ հայուհին երեք իրեն չի սիրի ու նրա խստապահանջ, կրթված ծնողները, նրա կտրիճ եղբայրները, ոչ մի դեպքում նրան իրեն կնութիւն չեն տա, այնուհանդերձ գաղտագողի հետևում էր աղջկան: Նա երազում էր Մարիամին փախցնել և քաղաքներում երջանիկ կյանք վարել: Ի վերջո՝ ընդունեց դաժան որոշում. «Մարիամը կամ պիտի իմը լինի, կամ պետք է իմ ձեռքով մեռնի, ուրիշ ոչ ոք չպետք է տիրանա այդ թռչնակին»:

Մինչդեռ Մարիամն անտեղյակ, սովորականի պես օրն անց էր կացնում տանը, մոր և հարսների հետ, նրանց օգնում տան և դրսի գործերում: Եղբայրների հետ դաշտ գնում, նրանց հետ էլ վերադառնում տուն: Մեկ-մեկ էլ հասակակից աղջիկների հետ կիրակի, տոն օրերին գնում էր գլուղից դուրս բանջար հավաքելու, ուրախ խմբով, ծաղկեփնջերով զարդարված խմբի հետ էլ տուն գալիս: Նա ավելի հաճախ էր հանդիպում մտերիմ ընկերուհուն՝ Սանամին, լինում նրանց տանը: Նա իր հմայիչ կեցվածքով, հեղ ու բարի բնավորութեամբ, գրավել էր ընկե-

բուհու լայնաթիկունը, թխադեմ եղբոր՝ Կարապետի ուշադրութիւնը:

Անդրանիկ սերը երկունս էլ հասկացել էին. երկունս էլ ընդունել էին մեծ գոհունակութեամբ: Մարիամն իր հրաշալի երիտասարդի սիրով ամենուրեք իրեն զգում էր թեթև ու երջանիկ:

Սանամը դա զգալով ավելի էր ուրախացել: Չափից ավելի ուշադիր էր դեպի եղբոր սիրած աղջիկը: Մարիամը իր ջերմ սիրո մասին միայն Սանամին էր խոստովանել և գրկախառնվել էին: Սանամի նախաձեռնութեամբ երեքով մի քանի անգամ թաքուն զբոսանքի էին գնացել Կաթավաձոր, Կարապետը ծաղկեփոնջ էր կապել ու նվիրել Մարիամին: Կարապետը երեկո-նեքն իրենց տանից հաճույքով էր Մարիամին ուղեկցում տուն:

Ամեն անգամ Մարիամը զժվարութեամբ էր բաժանվում սիրած երիտասարդից. բաժանման պահին մի պահ լուռ էին. աչքներն էին խոսում: Տուն մտնելուց հետո Մարիամը բարձր տրամադրութեամբ գրկախառնվում, համբուրում էր ճրագի լույսի տակ ինչ-որ գործով զբաղված, կամ ջուրսու տակ նրստած, ոտները թռնիրը կախած, իրեն սպասող մորը:

Ուրախացած մայրը բարի գուշակումներով հարցնում էր.

— Աղջի՛կս, այս ուշ երեկոներին ո՞վ է քեզ ճանապարհում:

— Մամա՛ ջան, Սանամիս քաջ եղբայր Կարապետը:— Ապա շտապում էր անկողին, սիրո երազների մեջ դեպի քաղցր քունը:

Վերջին հանդիպմանը՝ մութին, Մարիամն ց տան պատի տակ, սիրո զրույցներով տարված Կարապետը գրկեց Մարիամի քնքուշ մարմինը, ամուր սեղմեց կրծքին: Մարիամն էլ զույգ թևերով կախվելով Կարապետի վզից բարձրացավ թաթերի վրա ու այրվող շրթունքներն ստացան առաջին համբույրը: Ամոթխած աղջիկը, ազատվելով «առյուծի» թաթերից, սիրո հակումներով արբած իրեն նետեց հոր տուն:

Երիտասարդների մեջ արթնացող սերը նկատել էր Կարապետի ավագ եղբայր Միսակը և անկեղծորեն ուրախացել: Դաշտային աշխատանքից տուն վերադառնալիս, ճանապարհին նա հանդիպելով Մարիամի ավագ եղբորը՝ Միքայելին, այդ մասին թեթևակի հայտնեց մանկութեան ընկերոջը:

— Աստված տա մի բարձի տիրանան,— ուրախ մաղթեց Միքայելը:

Գարնանային մի պայծառ, արևոտ օր Մարիամն ընկերուհի

Ստանամի հետ, ծնողների թուլավումթյամբ, մի խումբ հասակակից աղջիկներով, գնաց սարալանջը գրոսնելու:

Տարվելով բնության հրաշալիքներով, խաղերով, գույնզգույն ծաղիկներով, երգերով այդ օրը մի փոքր ուշացումով էին տուն վերադառնում: Երբ աղջիկների խումբը մտնենում էր գյուղին, օրն արդեն մթնում էր, մի քանի տներում ճրագներ էին վառվում: Մարիամը և Սանամը ուրախ զրույցի բռնվելով աննկատելիորեն ընկերուհիներից փոքր-ինչ հեռացել էին: Աղջիկները հաշվի առնելով, որ մտտեցել են գյուղին, ուշադրություն չդարձրին հետ մնացող ընկերուհիների վրա: Գյուղ մտնելով միմյանցից ջերմ բաժանվելով, ամեն մեկն ուղղություն վերցրեց զեպի իրենց տուն: Սակայն Մարիամն ու Սանամը դեռ տուն չէին վերադարձել: Մարիամի ծնողները կարծում էին, թե, ինչպես հաճախ էր լինում, դաշտից վերադառնալիս աղջիկը անցել է Սանամենց տուն, հետո ուշ ժամերին Սանամի եղբայրները նրան կճանապարհեն: Այդպես էին մտածում նաև Սանամի ծնողները և սպասում էին, որ Մարիամի եղբայրները Սանամին ուր որ է տուն կբերեն:

Գիշեր էր, երբ Մարիամենց տան դուռը թակեցին: Եղբայրները շտապեցին քոչը դիմավորելու: Բայց դուռը թակողներն անհանգիստ հարցրին.

— Սանամը ձեր տանն է:

Մարիամը եղբայրներին դարմանք պատեց: Կարծես թե նրանց գլխին սառը ջուր լցրին:

— Ուրեմն Մարիամը ձեր տանը չէ: Մարիամը և Սանամը չկան, ապա այսքան ուշ ո՞ւմ տանը կլինեն...

Վախ ու կասկածով ծանրացած լուսնուներ խախտեց Սանամի կրտսեր եղբայր Վաչագանը, դիմելով մեծ եղբորը՝ Սիսակին.

— Մեր գամփուրը մի քանի անգամ տան դուռը թափերով ճանկոտեց, հաչաց ու էլ ձայն չհանեց: Վախեցա՞մ ձեզ ասեմ, մտածեցի, թե վրաս կծիծաղեք... և ինձ վախկոտ կասեք... Տանից էլ որ դուրս էինք գալիս, մեր գամփուրն փնտրեցի, չգտա:

Մարիամի մեծ եղբայր Միքայելն անմիջապես տղաներին ուղարկեց դաշտ գնացած աղջիկների տները հարցումի: Բոլորն ասացին, որ գյուղի մոտ էին, երբ Մարիամը և Սանամը հետ մնացին. հետո թե ինչ եղավ, ոչինչ չգիտեն:

Միքայելը հավաքված եղբայրներին, ընկերներին բաժանեց

երկու խմբի (հրազեն ունեին վեցը, սառը զենք՝ բոլորը): Մի խումբն իր ղեկավարութայամբ գնաց զեպի աղջիկների եկած Հանապարհով, մյուսը՝ հազարապետի գլխավորութայամբ, շարժվեց զեպի Կաթավաձոր:

Ամենուրեք անմիջապես տարածվել էր Մարիամի ու Սանամի անհետանալու լուրը. խանգարվել էր գյուղի գիշերային անգործը:

Տներում վառվեցին ճրագները, շատերը դուրս եկան գուղամեջ: Զարմանքը պատել էր ամենքին: Ի՞նչ կարող է պատահել աղջիկներին գյուղի մերձակայքում:

Անհանգստություն, աղմուկի, շների հաշոցի ձայնը հասել էր թուրքական թաղը:

Միքայելի խումբը, գյուղից դուրս գալով, լուսնյան մեջ լսեց շան հաշոց: Սիսակը անհանգիստ ասաց.

— Միքայել, եղբայրներ, սա մեր շան հաշոցի ձայնն է: Սանամի սիրած, խնամած շան ձայնն է: Ասելն ու ամբողջ ուժով վազելը մեկ եղավ:

Նրան հետևեցին մյուսները:

Վազեցին ամբողջ ուժով, ցատկելով փոսերի, առունների վրայով:

Հանկարծ մթան մեջ տեսան իրենց ընդառաջ վազող ճերմակ շանը: Շունը զգալով, որ իրեն տեսել են, անմիջապես հետ վերադարձավ՝ հետևից տանելով տղաներին:

Տեղ հասնելով, դարմանքը պատեց բոլորին. ահասարսուտ տեսարան էր. արյունը խփեց գլխներին:

Սիսակը ճանաչեց քոչը.

— Սա թուրքի սև ձեռքի գործ է, — ասելով նետվեց քոչը վրա:

Սանամը անզիտակից պառկած էր մեջքի վրա, ոտները, ձեռքերը կապած: Սիսակը եղբոր հետ արագ արձակեց Սանամի կապանքները:

— Զարկերակը խփում էր: Գլխին ծանր հարված էր ստացել, արյուն էր կորցրել, ուշագնաց է, — լաց լինելով ասաց Սիսակը: Եղբայրները փորձեցին քոչն արհեստական շնչառություն տալ: Չհաջողվեց:

— Հարկավոր է շտապ հասցնել գյուղ, հեքիմ խաչանուշ տատի մոտ:

Միքայելն իր եղբայրներով, ընկերներով հուզախուով ոտնա-

տակ էին տալիս յուրաքանչյուր թուփն ու փոսը, ողբալով բղավում՝ «Մարիամ, Մարիամ ջան, սիրե՛լի քույրիկ, որտե՞ղ ես, ձայն հանիր»:

Մարիամը չկա՛ր ու չկա՛ր...

Սիսական ու կրտսեր եղբայրը թևերի վրա իրենց քրոջը տաբան հեքիմ հաշանուշ տատի տունը:

Խաշանուշը 90-նն անց, բայց աշխույժ, ոչ գրագիտ, սակայն խելամիտ, կյանք տեսած կին էր. ապրում էր իր տղաների, 27 թոռների ու ծոռների հետ: Երկար տարիների հեքիմության հարուստ փորձի հիման վրա, աղջիկների, հարսների, աղջիկ թոռների օգնությամբ բուժում էր ում ինչով կարող էր: Նա հաճախ ասում էր.

— Մարդը, երբ օգնության կարիք ունի, պիտի օգնել: Մարդը մարդուն պետք է բարեկամ լինի...

Նրա մոտ սալերով հիվանդներ էին բերում Շատախից, Հայոց ձորից և այլ բնակավայրերից: Նա կարելույն չափ բուժում, օգնում էր ամենքին: Նրա համար հայ, թուրք, քուրդ, արաբ, հույն՝ միևնույնն էր: Իր հոգատար վերաբերմունքով շահել էր բոլորի հարգանքը: Դեղամիջոցներն անձամբ պատրաստում էր ինքը դաշտային բույսերից, ծաղիկներից:

Վերջին տարիներին, գլուղի հասարակության օգնությամբ, տղաները, թոռները, Խաշանուշի համար կառուցել էին շորս-սենյականոց, լուսավոր, հարմարավետ բնակարան, որտեղ նա հնարավորություն ուներ հիվանդներին պառկեցնել, բուժել:

Գլուղ հասնելով, եղբայրները Սանամին Խաշանուշի տան բաց դռնից զգուշությամբ ներս տարան: Հեքիմ տատիկին զարմանք պատճառեց այդ անակնկալը, սակայն նա իրեն շփոթեց, անմիջապես բարձրացրեց սեղանին դրած լամպի լույսը: Սանամին պառկեցրեց փափուկ թախտին:

— Խաշանուշ տատ, աղաչում եմ, — ասաց Սիսակը, — արա ինչ հունար ունես, ուշքի բեր, թող խոսի՛ ի՞նչ է եղել, ո՞վ է արել, ո՞ր է Մարիամը:

Հեքիմն անմիջապես ստուգեց զարկերակը. դանդաղ աշխատում էր: Կաթի շիճուկով անմիջապես մաքրեց վերքերը: Բույսերից պատրաստած փոշի ցանեց, խնամքով կապեց, Սանամին ուշքի բերելու առաջին փորձը ապարդյուն անցավ:

— Սիսակ, որդի՛ս, քույրդ ծանր հարված է ստացել, արյուն շատ է կորցրել, լավ կլինի շարժարներ: Նրան հանդիստ

է պետք, — ասաց տատը, — ապա շարունակեց: — Ըխտ եք արել, բերել եք ինձ մոտ, եթե ձեր տուն տանեիք, ծնողներիդ ապրումների, լաց աղմուկի մեջ քրոջդ վիճակը ավելի կծանրանար:

Թախտի առջև պառկած, գլուխը թաթերին դրած, տխուր հայացքով նայում էր Սանամի շունը:

— Մի պատմիր, թե ի՞նչ է եղել, ինչպես գտաք քրո՞ջդ և որտե՞ղ...

— Ի շնորհիվ սրան, — ցույց տալով քրոջ հավատարիմ դամփո շանը, ասաց Սիսակը: — Սա լլիներ, մենք երևի երկար կփնտրեինք:

Հիվանդը աստիճանաբար սկսեց ավելի ազատ շնչել: Անհաս-գիստ շունը թաթերը դրեց թախտի վրա, սկսեց ցածր ձայնով կլանչել, լիզել Սանամի քնքուշ ձեռքերը, ապա դեմքը:

Սանամը դանդաղ բացեց աչքերը և ուժգին մի ճիշ արձակեց.

— Ո՞ր եք տանում անասովածներ, վա՛խ Մարիամ... կըրկին փակեց աչքերը: Թևերը թուլացած, թախտից կախվել էին: Եղբայրները վախեցան, թե քույրը հոգին տվեց:

Հեքիմ տատիկը բռնեց զարկերակը:

— Մի վախեցեք, վիճակը աստիճանաբար լավանում է:

— Տատ ջան, շնորհակալ եմ, որ այդքան էլ ասաց քույրս: Նա երևի ուշ ուշքի գա: Զավենը թող մնա քեզ մոտ, ես զնացի՛ Մկրտիչին խաբար տանեմ:

Սիսակը համբուրելով քրոջ ճակատը, հրացանը վերցրեց և շտապ դուրս եկավ: Եվ դեռ շեմին, նա Կաթավածորի կողմից լսեց հրաձգության ձայն՝ մեկ, երկու, երեք... Այդ կողմերն էր մեկնել Մարիամի միջնակ եղբայրը՝ Հազարապետն, իր ընկերներով:

Շտապ վազեց դեպի ձորի կողմը:

Նույն հրաձգության կողմն էր շտապել նաև Մկրտիչն իր խմբով:

Իսմայիլի երեք տղաները վաղուց ի վեր պայմանավորված, հետևում էին Մարիամին, որպեսզի հարմար առիթի դեպքում զենեցկուհուն փախցնեն իրենց փոքր եղբոր՝ Մեղադիի համար:

Նրանք համոզված էին, որ Մարիամին փախցնելուց հետո հայերից ոչ մեկը չի համարձակվի իրենց նեղացնել...

Ձինւլած հետևում էին Մարիամին ամեն օր՝ դաշտը աշխատանքի գնալիս, դաշտի աշխատավորին հաց տանելիս, ընկերուհու հետ բանջար, ծաղիկ քաղելիս: Ում հետ է գնում, երբ է գալիս և այլն:

Նրանք որոշել էին փախցնելու հարմար առիթի դեպքում անխնա սպանել բոլոր դիմադրողներին, նույնիսկ եղբայրներին: Եվ ահա առիթը եկել էր: Հետապնդող եղբայրները ուրախացել էին, երբ Մարիամը և Սանամը ընկերուհիներին հետ էին մնացել:

Որոշեցին Մարիամին փախցնելու հարմար առիթը օգտագործել: Թաքստոցից հանկարծակի դուրս գալով հարձակվեցին աղջիկներին վրա: Ամուր գրկելով՝ բերանները շոր խցկեցին, ձեռքները կապեցին: Հանկարծակի հարձակումից աղջիկները ցնցվել էին ու մեծ վախ զգացել: Կապված Սանամին անուշադուրով ամտնելով, զբաղվեցին Մարիամով:

Մարիամը զգալով թե ինչ է կատարվում, ուժերի լարումով կապանքների մեջ բերանը փակած, դիմադրում էր երեք ավագակ եղբայրներին: Բայց նրանք աղջկա դիմադրությունը դժանորեն ճնշեցին, ուժգին հարվածելով ուժասպառ արեցին նրան՝ հասցնելով ուշազնացություն:

Սանամն օգտվելով առիթից, մի կերպ ոտքերն ազատելով կապերից, ձեռքերը հետևին կապած, բերանը փակված, ջանում էր փախչել դեպի գյուղը... Բայց ավագակները նկատեցին և վազելով նրան էլ բռնեցին: Անողոք ծեծեցին, քարով հարվածեցին գլխին, արնաշաղախ վիճակում գլուխը գետնին, կարծելով թե մեռած է, թողնելով գայլերին բաժին ու հեռացան:

Երբ հայ կտրիճները գյուղի մի ծայրից դուրս էին եկել՝ աղջիկներին փնտրելու, նույն պահին, գյուղի մյուս ծայրից Մարիամին գաղտագողի հասցրել էին թուրքական թաղը:

Ծերունի Իսմայիլի ընտանիքը՝ հինգ հարսները, թոռները, հողի հատակին խսիրների վրա հին ու մաշված անկողինների մեջ, կողք կողքի քնած էին: Անսպասելիորեն բացվեց տան դուռը: Ներս մտան տղաները՝ հատակին դնելով ինչ-որ փաթեթոց:

— Սա ի՞նչ է, — մթուժյան մեջ զարմացած հարցրեց հայրը: Պատասխան չստանալով, նա հարցրեց երկրորդ, երրորդ անգամ, դարձյալ՝ անպատասխան:

Ծերունու կինը անհանգստանալով, վառեց ձեթով ճրագը:

Ճրագի լույսի տակ երևաց հատակին գցած կապկպած պարկը: Զարմանքը պատեց ծերունիներին:

Անհանգիստ խոսակցությունից արթնացան հարսները:

— Այս ի՞նչ եք արել, ավագակներ: Այս ո՞ւմ աղջիկն եք բերել, ինչո՞ւ եք բերել: Հայոց թաղի այդ մեծ աղմուկի, իրարանցման պատճառը երեկ սա՞ է, — դողդոջուն ձայնով խոսեց ծերունին:

— Հայրիկ, մի ջղայնացիր, իմ իղձը կատարված է, իսկ հայերի աղմուկը ինձ համար ոչինչ է, — շատ հանգիստ տոնով սասց կրտսեր որդի Մեշադին: — Ինձ վրա միշտ խոսում ես, թե ինչու չեմ ամուսնանում, ասում ես եղբայրներդ մի քանի կին ունեն, իսկ դու՞ ոչ մեկը: Ահա ես բերել եմ իմ հավանած աղջրկան, որին սիրում եմ խելագարի պես, կամ սա՛, կամ ո՛չ մեկը:

Գլխից հանելով սպիտակ տոպրակը, ցույց տվեց աղջկան: Նվազ լույսի տակ տեսնելով աղջկա դեմքը, զարմանքը պատեց ծեղունիներին, հարսներին:

— Սա մեր գյուղի գեղեցկուհի Մարիամն է, Առաքել աղայի մեծ տան միակ աղջիկը, — ճշարտով ասաց միջնակ հարսը՝ Ֆաթման:

— Սա պատվարժան ընտանիքի աղջիկ է: Տան միակ ծաղիկը: Այս հարգարժան աղջկան սիրում և հարգում է ողջ գյուղը: Ինչպե՞ս կարելի է այս խորոտիկ աղջկա հետ այդպես գաղանավարի վարվել, սրա եղբայրները, հորեղբոր տղաները մի բանակի շափ են, որ իմանան, ա՛խ աստված իմ, — նյարդային վիճակում շարունակեց Ֆաթման:

Խոսքը դեռ չավարտած, մի ուժգին հարված իջավ նրա քրոջ ու մեջքին: Երկրորդ, երրորդ հարվածը:

— Ինչո՞ւ ես խփում խեղճ աղջկան, տո, վայրենի, անօրեն: Զավթեցիր եղբորդ գյուղալ կնոջը, բոլորի մեջ խայտառակ արիր, հիմա էլ ծեծո՞ւմ ես: Ֆաթման շատ ճիշտ է ասում, ամբողջ գիշեր հայկական թաղամասը չի քնել, ոտքի վրա են՝ հաստատ այս աղջկա պատճառով է: Սրա եղբայրները, որ իմանան, երեքիդ էլ փոխերի մեջ կխեղդեն: Մեր տունն ու տեղը կավերեն:

— Իրեն ի՞նչ գործն է, թե ով ինչ կանի: Ապա թող հայերը փորձեն ձայն հանել, ամբողջ գյուղը կկոտորենք, տակն ու վրա կանենք:

Ծնողների և ավագակ որդիների միջև անհարշտ վեճ էր սլլու-

վել: Հայրն ու մայրը պահանջում էին աղջկան անմիջապես տանել, հանձնել իր ծնողներին և ներողութուն խնդրել, իսկ տղաները համառորեն մերժում էին...

— Մարիամը մեծ տան խնամքով պահած մեծացրած աղջիկ է, նա երբեք քեզ կին չի լինի, Մեշաղին,— աղերսանքով ասաց մայրը:

Յաթման օգտավելով առիթից, որ տղամարդիկ վեճի մեջ են, շատ պ բերեց դանակը, սկեսրուքը տվեց և խնդրեց Մարիամի կապանքները կտրել, նրան ուշքի բերել: Նա սկսեց արձակել, բայց մեկ էլ տղան՝ Մեշաղին վրա հասավ և հայհոյանքներով հարձակվեց ծեր մոր վրա և ստքով հարվածեց նրան:

— Ջեզ ո՞վ ասաց, որ կապանքներն արձակեք, դավաճաններ, հեռացե՛ք, այստեղից, թե չէ բոլորիդ էլ կապանեմ:

— Որդիս, արձակեք, ուշքի բերեք, կարող է մահանա, ո՞վ է պատասխան տալու, մի՞թե կարելի է այդպես ամուր կապել նայիր, թմբլիկ թաթիկները կապտել են:

Հոր և որդիների միջև վեճը սաստկանում էր...

— Իսկ կանայք բոլոր միջոցներով ուզում էին Մարիամին ուշքի բերել:

Մեշաղին մերժեց Մարիամին հետ տանելու իր հոր պահանջը:

— Ես Մարիամին սիրում եմ, առանց նրա կյանք չունեմ, իսկ նրա ծնողների համաձայնությունը ինձ համար նշանակություն չունի:

— Դու մեր գյուղում պատիվ չունես, անառակ, ո՛չ հայր, ո՛չ էլ թուրքը քեզ աղջիկ չի տա, իսկ այս արարքով դու քեզ լրիվ խայտառակեցիր, թշնամություն գեցցիր մեր միջև: Սպանություն պատճառ ես դառնում:

Մարիամին թեթևակի ուշքի բերեցին:

Նա իր խոշոր ու գեղեցիկ աչքերը բացեց և վախեցած ճչաց:

— Այս ի՞նչ պատահեց, աստված իմ, ես որտե՞ղ եմ,— ապշահար նայեց շուրջը, անծանոթ դեմքերին:— Ասացե՛ք, խնդրում եմ, ես որտե՞ղ եմ: Որտե՞ղ են ծնողներս, եղբայրներս: Աղաչում եմ ձեզ, ազատեք ինձ այս կապանքներից, իմ ծաղիկ կյանքը մի խորտակեք: Ա՛խ, մամա ջան, այս ի՞նչ օրի է քո աղջիկը, ո՞ւր է Սանամը... Նրան սպանեցի՞ն...

Բոլորը, ուժասպառ աղերսող աղջկան շրջապատած, լուռ նայում էին նրան:

— Ի՞նչ անխիղճ, անաստիճան եք, դուք ծնո՞ղ չեք, ազդե՞լիներ, քույրեր չունե՞ք, ձեր խիղճը մեռե՞լ է,— ծանր շնչելով, հուսահատված աչքերը փակեց ու գլուխը թեքեց մի կողքի վրա: Աչքերից գլորվելով թափվում էին արցունքի կաթիլները:

Մերունին լավ էր ճանաչում Առաքելին, նրանք եղբայրներով գյուղում բարեհոգի, պատվարժան մեծ ընտանիք են: Սակայն իր զազան տղաներին չէր կարողանում համոզել: Նա մի վերջին հույսով նրանց կանչեց տան մի անկյունը, ուր մսուրն էր և անասուններն էին կապված, գուցե թե համոզի: Նրանց մոտեցավ նա ծերունու կինը և սկսեց իր հերթին աղերսել տղաներին. նրա վրա ծանր էին աղդել Մարիամի խոսքերը:

— Անմեղ աղջկան ազատեք, արյունահեղություն մի արեք, աղաչում եմ,— ասում էր նա:

Յաթման խղճալով Մարիամին, նստել էր նրա մոտ և գլուխը շոյելով կամացուկ հայերեն խոսում էր հետը: Նա հայերեն սովորել էր իր շատ սիրած Թամարա տատիկից, որին Բիթլիսի գյուղերից՝ հայի ընտանիքից, որպես գեղեցկուհի, փախցրել էին Շատախ: Նա երբեք ամիս համառորեն դիմադրել և անձնատուր չէր եղել իր թուրք ամուսնուն: Բայց տեսնելով, որ իր պատճառով հալածում ու հանդիստ շեն տալիս ծերացած ծնողներին, եղբայրներին, անզամ աքսորով ու մահվամբ են սպառնում, ստիպված անձնատուր եղավ, որ փրկի ծնողներին ու եղբայրներին:

— Մարիամ ջան, դու ձեր գյուղի թուրքական թաղում ես,— արտացավ շարունակեց Յաթման,— Իսմայիլի տանը: Նրա տղան՝ Մեշաղին իր եղբայրների հետ քեզ փախցրել, բերել է իրեն կնություն:

— Ո՛չ, ո՛չ, դա անկարելի է, անկարելի է, եղբայրներս արյուն կթափեն:

— Քեզ շատ մի տանջիր, մենք ամեն կերպ քեզ կօգնենք... Անսպասելիորեն լուրից մի ուժգին ապտակի ձայն, ապա աղմուկ: Մերունի Իսմայիլը զայրացած ապտակելով կրտսեր որդուն, պահանջեց Մարիամին անմիջապես հանձնել ծնողներին՝ օեթե ո՛չ, իմ տանից մեկընդմիշտ հեռացի՛ր, դու ոճրագործ ես...»

Հոր ցասումն ու զայրույթը Մեշաղուն համոզեցին, որ իր արարքը ծնողների համար անընդունելի է և անպատվարեր: Գրա համար էլ իրեն տանից վռնում են:

— Կգնա՛մ, գյոզարիս հետ կգնա՛մ, այս տունն այլևս ոտք չեմ գնի,— այդ ասելով Մեշադին խիստ հուզված մոտեցավ Մարիամին, նայեց նրա տանջված, բայց ըմբոստ դեմքին, ապա՝ ծնողներին...

— Անգուժ մարդիկ, ինձ տուն տարեք, ծաղիկ կյանքս մի խորտակեք,— Մարիամը դեռ ազերսում էր։ Բայց դաժան Մեշադին դայրացած էր և արագությամբ տոպրակը հագցրեց գեղունու գլխին։ Ապա եղբայրների օգնությամբ, ձգեց կապանքը, տանից դուրս հանեց։

— Օգնեցե՛ք, աղաչում եմ։ Ո՞ւր եք ինձ տանում... Ո՞ւր եմ քաջ եղբայրները,— ողջ ուժով մեկ բղավում էր Մարիամը։ Մերունի Իսմայիլի կինը ծնկաչոք աղոթում էր ալլահին։

Դրսում Մեշադին գրկախառնվում, մեկընդմիջտ հրաժեշտ էր տալիս եղբայրներին։ Այո՛, ծնողները գիտեին նրա համառությունը. առանց հետ նայելու նա հեռանում էր հայրական օջախից։

Գիշերային լուսթյան մեջ մի հավատարիմ ձի իր մեջքին դեպի խուլ ձորերն էր տանում դժբախտ, միմյանց անհամապատասխան զույգին։ Մե՛կը ոճրագործ, անգուժ ավազակ, մյուսը՝ մեծ տան աղալնչակ։

Բայց Մեշադին իր խոհերի մեջ մոլորված իրեն երջանիկ էր զգում, որ, թեկուզ կապանքի մեջ, իր գրկում է Մարիամը։ Միևնույն ժամանակ ու մոլորյալ իրեն դժբախտ էր զգում, որովհետև Մարիամն իրեն չէր սիրում։ Այդ պահին նրա միակ հավատարիմը սանձնահարված ձին էր։

Իսմայիլի տղաները եղբորը ճանապարհ դնելուց հետո տուն մտնելով ասացին.

— Գե, հիմա բոլորդ կարող եք հանգստանալ։

— Ո՛չ, որդիներս,— ծանր հառաչեց ալեհեր հայրը։— Ձեր այդ արարքով իմ տանը, այս մատաղ երեխաների գլխին սև հանգիստ փերեցիք։ Մեկ այլևս հանգիստ չկա։ Այդ բոլորի պատճառը դուք եք, անհույս զավակներ։ Դուք ծանր հանցանք եք գործել։ Սպասեցեք առավոտին, տեսնե՞ք ինչ պատասխան ենք տալու, երկու աղջիկներն էլ մեծ թախումի զավակներ են։ Արյան հոտ եմ զգում։ Նրանց եղբայրները ձեզ պատառ-պատառ կանեն, մեր տուն ու տեղն էլ տակն ու վրա կլինի։

Մեր մայրը ահից կուշ եկած մի անկյունում աղոթում էր ալլահին՝ փրկություն, օգնություն ազերսում։ Հարսները սուզի ու

վախի մեջ, սարսափած երեխաներին հավաքել էին իրենց շուրջը, անքուն սպասում էին... Տղաները լսելով ալևոր հոր ծանր խոսքն իրենց արարքի հետևանքների մասին, տեսնելով կուշ եկած, մի բուռ դարձած մորը, մայրերի շուրջ երկյուղած երեխաներին, ակամայից սարսափ զգացին ու ասես միանգամից սթափվեցին։

— Համեդ, Մեշադուն խղճալով նրան օգնեցինք, բայց երեզում է, մենք թշնամություն բերեցինք մեր տունը, մեր ընտանիքը,— ասաց Յուսուֆը։

— Իսկ ես ասում էի, չէ՞, ձեռք քաշենք այդ աղջկանից, դուք մեծ-մեծ խոսում էիք,— ասաց մյուս եղբայրը։— Տեսնես ի՞նչ եղավ Սանամը, փախչում էր, վազեցիր, հասար, մահակով հարվածեցիր գլխին...

Վախն ու սարսափը պատել էր Իսմայիլի ողջ ընտանիքին։

— Ոչ մի հայ մեզ մինչև հիմա ոչ մի անգամ չի նեղացրել, ոչինչ չի արել, բացի լավությունից։ Եղել ենք բարի դրացիներ,— գողգոջուն ձայնով որդիների հետ խոսում էր կուշ եկած մայրը։— Հիմա ինչ պատասխան եք տալու այդ երկու անմեղ աղջիկների արյան դիմաց...

Այստեղ Յուսուֆ և Մահմեդ եղբայրները հասկացան, որ Մարիամի և Սանամի եղբայրներն իրենց չեն ների։

Մեշադին թուրքական թաղամասից դուրս գալով, շտապում էր դեպի խուլ ձորը։ Ուզում էր Մարիամի հետ խոսել, խնդրել, համոզել, որ համաձայնվի, զնան հեռավոր քաղաքներն ու միասին երջանիկ ապրեն։ Իսկ աղջկան թվում էր, թե ուր որ է ձին կանգ կառնի իրենց տան առջև, և ծնողներն իրեն գրկաբաց կընդունեն. ինքը նորից իրեն լավ կզգա մոր քնքուշ գրկում։ Կվայելի հոր և եղբայրների գուրգուրանքը։ Ամենակարևորը, նորից կտեսնի իր արծիվ Կարապետին։

Հենց այդ նույն պահին էր երևի, որ Մարիամի միջնակ եղբայր Հազարապետը, որ ուսում առած ու կիրթ անձնավորություն էր գյուղում, անհանգստացած ասաց իր զեկավարած խմբին.

— Տղաներ, գայլերի այդ ոռնոցը նշան է, որ այստեղ ինչ-որ բան է տեղի ունեցել։ Ուրեմն շտապենք ձորը։

Երշալույսն իր փեշերը փոխելով կանաչ սարերին, չիք էր գարծրել գիշերային խավարը։ Տեսանելի հորիզոնն ընդարձակվել էր։ Ձորի դիմաց երևում էին ոռնացող գայլերը, իսկ քար-

աղբյուրի մոտ մի քանի գալլ ինչ-որ կենդանի էին հոշոտումս Կարապետը կրակեց հոշոտողների վրա: Երկու գնդակ արձակելով գալլերից մեկին գլորեց, մյուսները փախան:

Կրակոցների արձագանքը տարածվեց խուլ ձորում և հասավ նոր արթնացող գյուղը:

Քարի լույսի հետ կտրվեցին գալլերի շարագուշակ ոռնոցները:

Երիտասարդները հասնելով քարաղբյուրի կանաչ հովիտը տեսան ընկած ձիուն, որի փորը, փափուկ մասերն արդեն հոշոտել էին: Հետքերը ցույց էին տալիս, որ ձիու և գալլերի միջև տեղի է ունեցել համառու տակապարտ: Հոշոտված ձիու մարմինը դեռևս տաք էր, նրա կոկորդին նկատելի էին գալլի ատամների արյունոտ հետքերը:

— Տղաներ, — փոքր զննումից հետո ասաց Հաղարապետը, — ըստ երևույթին ուժեղ է եղել, երկար է դիմադրել ոհմակին, սակայն ինչպես երևում է գալլերից մեկին հաջողվել է շրջանցել առջևից, բռնել ձիու կոկորդից և ուժեղ սեղմել ու շնչահեղձ է արել, ծնկի բերել:

— Ընդունենք, որ հենց այդպես է եղել, — ընկերներին դիմեց Մխիթարը: — Բայց այս մուֆ գիշերին թամբած ձին մենակ այստեղ ի՞նչ է անում. հավանաբար ինչ-որ մեկը սրանով այստեղ պետք է եկած լինի, անհրաժեշտ է նրան գտնել....

Մխիթարի հարցադրումը հետաքրքրեց բոլորին:

Մի քանի րոպե հետո բոլորի ուշադրությունը գրավեց Զաքարի անսովոր ճիշդ.

— Մխիթար, տղաներ, եկե՛ք, եկե՛ք, տեսեք, ինչ ահավոր պատկեր է...

Բոլորը շտապեցին Զաքարի կողմը:

Ձիուց մոտ 70 քալլ հեռու, քարակույտի վրա դեմքով պտկած էր մի անշարժացած տղամարդ:

Զգուշությամբ շուռ տվեցին: Անշունչ էր, բայց մարմինը դեռևս տաք էր: Կրծքի մեջ խրված է արծաթակոթ կեռ դաշույնը:

— Այս ո՞վ է, ի՞նչ է կատարվել այստեղ, — հետաքրքրվեցին երիտասարդները: Քննախույզ նայելով ճանաչեցին նրան:

— Սա մեր գյուղի թուրք Իսմայիլի ավազակ տղան է, — զարմացած ասաց Կարապետը, ձին էլ իրենն է:

— Ծիշտ է, անառակ Մեշադին է, — հաստատեց Զաքարը:

— Գեմքին խոր ակոս կա, նա՛ է, նա՛:

— Բայց ո՞վ պետք է սպանած լինի այս ավազակին:

— Լավ է, շանսատակ եղավ, գյուղացիների հոգին հանգրտացավ, — ավելացրեց Մխիթարը, — սակայն այս ի՞նչ քարակույտ է, որի վրա ընկած է ավազակը, ես այստեղ շատ եմ նշել, բայց քարակույտը չի եղել:

— Դե, գյուղի շահելներով այստեղ հաճախ ենք լինում, — ասաց նշանը: — Հատկապես շանգյուլումի օրերին: Թաքնվում ենք աղբյուրի մոտ, քարի հետևը և լսում, թե որ աղջկան, ինչ բախտ է վիճակվում: Սակայն այս քարակույտը չենք տեսել: Հազարապետը անտրամադիր նայեց քարակույտին, շուրջը, մտքով վատ բան անցավ ու ասաց.

— Տղաներ, այս շան ծիծ կերածը, կա-չկա, շատ շար բան է կատարել, հետո էլ իր կյանքին է վերջ տվել: Նայեցեք, քարակույտի միջից շորի կտորներ են երևում: Խնդրո՞ւմ եմ, քարե՛րք, շտապ քարե՛րք հեռացրեք...

Տղաները անհանգստացած գործի անցան: Իսկ Հաղարապետը շվարած, ձեռքերը ծալած կրծքին, անհամբեր նայում էր ու ապաստում: Կարապետի սիրտն էլ էր վախ մտել:

Տղաները զգուշությամբ քարերը հեռացնելով տեսան կանաչի շոր, ապա կանացի ոտքեր, կապկպած կնոջ մարմին:

Տղաները մի անսովոր սարսափ զգացին վատ բան մտածելով: Իսկ Կարապետը պարզապես տագնապի մեջ էր: Սիրտը շարժ էր գուշակում. և ահա տեսավ կնոջ բացված, ճերմակ կուրծք արնաշաղախ վիճակում: Նա իրեն կորցրեց: Չարագործը գեղեցկուհու դեմքը խնամքով ծածկել էր ծաղկավոր թաշկի-նակով, ապա սալքարով: Սալքարը վերցնելով նա բարձրացրեց թաշկինակը և ողջ մարմնով ցնցվելով ողբալի ճչաց.

— Վա՛խ, Մարիամն է, — ու նետվեց դեռևս լրիվ շատած աճյունի վրա:

Անսպասելի ծանր հարվածից, Կարապետը իրեն մի պահ լրիվ կորցրեց: Սիրով տարված երեք օր առաջ, քաղցր ապրումների մեջ նա սպասում էր իր թռչնակին: Եվ ահա, անզուֆ ոհմագործի արյունոտ թաթերը կտրել էին նրա կյանքի թելը...

Հարվածը սոսկալի էր, տեսարանը ևս. նա թևերը լայն բացած գրկել էր քարակույտը, որի մեջ հանգչում էր իր անդրանիկ սերը: Ուզում էր ողջ քարակույտը սեղմել սրտին: Մարիամի մեռած սիրտ այս հարվածից նա ուշաթափվեց:

Է. Ասլանյան Ա.

Իսկ Հաղարապետը մի վայրկյան քարացած նայեց քարա-
կույտի մեջ տրորված իրենց տան ծաղկին, գլուխն առավ երկու
ափի մեջ և ահավոր ճիչ արձակեց: Նա էլ ընկավ քարակույտի
վրա:

— Վա՛խ, քույրիկ ջան: Ի՞նչ խաբար տանեմ քեզ սպասող
սեւ-վոր մորդ... աչևոր հորդ...— Նրա հետ քրոջ վրա ողբացին
Հովսեփ, Մանվել և մյուս եղբայրները: Լուսնյակի պես փայլող
աղջկա քնքուշ կուրծքը անգուլթը խոցել էր կեռ դաշույնի երեք
հարվածով, երեքն էլ մահացու: Արշալույսին աղջկա վարդա-
գույն արյունը փայլում էր նորածիլ կանաչի երեսին: Դեռ 17
տարեկան անշնչացած էր Կայնամիրանի մեծ տան միակ դուստ-
րը:

Կարապետն ուղղակի ձեռքից գնացել էր: Նրան ծանր վի-
ճակում տեղափոխեցին աղբյուրի մոտ, բացեցին օձիքը, պաղ
ջրով շփեցին դեմքը, կուրծքը...

ՏշաՆերի հետ դեպի ձորն եկող Միքայելը յուր խմբով տես-
նելով բամբակած երիտասարդներին, վերևից կանչեց.

— Հե՛, հե՛, տղաներ, ինչ է, Մարիամին գտե՛լ եք:

Ողջ ուժերը լարած, վազքով իջան ցած: Առաջինը կանաչ հո-
ւլիա հասավ ինքը՝ Միքայելը:

— Սա ի՞նչ է,— հարցրեց ընդառաջ եկող հարևան Ադամի
երիտասարդ տղային:

— Մարիամն է, մեծ եղբայր: Մեր գյուղի թռնչակը,— վըշ-
ւացած պատասխանեց երիտասարդը:

Միքայելն այդ լսելով ցնցվեց. էլ ուրիշ ոչինչ չհարցրեց:
Նրա աչքին էլ ոչինչ չէր երևում:

— Արշալույսին քարաղբյուրի կանաչ հովտում մարդիկ տես-
տան զարհուրելի, անպատմելի տեսարանը: Մեկի եկած ութ
եղբայրները գլուխները խոնարհել էին քարակույտի մեջ հան-
գած դեռահաս քրոջ աճյունի առջև և ողբում էին:

Կարապետը հենված աղբյուրի մեծ քարին կոտրված, փշր-
ված նայում էր.

— Վա՛խ, Մարիամ ջան, հրեշտակ աղջիկ, մի՞թե սա էր մեր
սիրո ճակատագիրը: Ինչպե՞ս ճիվաղի անգուլթ ձեռքը բարձրա-
ցավ քեզ վրա, ապա որտե՞ղ էի ես... էլ ինչպես ապրեմ ես...

Հայկազ, խնդրում եմ, ինձ էլ Մարիամի հետ հողին հանձ-
նեք, որպեսզի նա երջանիկ լինի...

— Քեզ քոջի պես պահիր, տղամարդ ես,— պատասխանեց
նրա քրոջը:

Կարապետը գլուխը խոնարհեց ավագ եղբոր կրծքին:

— Եղբայր՛ներ, — ասաց Սիսակը,— բուրիս համար էլ
լուս ծանր է Մարիամի ողբերգական կորուստը, սակայն այս-
տեղ ողբալով ի՞նչ կարող ենք անել. շարագործն իր սև գործն
արել է... Աճյունը գյուղ տանենք: Ողջ գիշեր գյուղը անհան-
գիստ սպասել է մեզ: Մենք մեզ շարդարացրինք: Հիմա էլ առա-
վտարան բարի լույսին սուգով ենք մտնելու գյուղ: Մի քանի
երիտասարդի հանձնարարություն տալով Սիսակն ավելացրեց..

ենգրում եմ, աղբյուրի կանաչ հովտից դարձան առաջին
ծաղկակները քաղեք, փնջեր կապեցեք: Մարիամին ծաղիկներով
զարդարենք: Մի հատ էլ ծաղկեպսակ գործեք: Կաղմակերպ-
ված գյուղ մտնենք:

Վերնաշապիկները հանեցին, հագցրեցին հրացանների վրա
և պատգարակ պատրաստեցին:

Երիտասարդները բարձրացրեցին եղբայրներին, հորդորեցին,
որ իրենց զսպեն:

— Ա՛խ, Սիսակ ջան, ասում ես՝ քեզ զսպիր, ախր, ինչպե՞ս
զսպեմ,— ա՛խ ասաց Միքայելը:— Նայիր, տես ի՞նչ է կատար-
վել այս խուլ ձորում, նայիր մեր տան աղավնյակին, նրա քրն-
քուշ պայծառ դեմքին, մարալ քույրս ասես քնած լինի: Եւ որ
հիմա Իսմայիլի տունուտեղը տակն ու վրա անեմ, մեղա-
վո՞ր եմ:

— Այս խուլ ձորում ողբալով ի՞նչ կարող ենք անել, նրեի
ամենակարող արարիչն այդպես է կամեցել,— սրտացավ պա-
տասխանեց Սիսակը:

— Սո՛ւտ է, սո՛ւտ, ձեռքերը վեր պարզեց ու ողբա-
լով ասաց Միքայելը:

— Այդ բուրդ գծրախտությունները տեր աստվածը միայն
հայ ժողովրդի համա՛ր է ստեղծել:

Մարիամի աճյունը քարակույտից տեղափոխեցին պատգա-
րակի վրա:

— Քրոջս կապանքները արձակեք,— ասաց Միքայելը:

— Ո՛չ, խիստ զայրացավ Սիսակը,— այսպես կապանքնե-
քով, շորերը պատառոտված տանենք, թող ողջ գյուղը տեսնի,
որ զազանաբար են վարվել դեռահաս աղջկա հետ, թող համոզ-
վեն, որ սա մեկ հոգու գործ չէ, այլ կաղմակերպված սպանու-
թյուն է: Իսկ Իսմայիլի տղաների հետ հետո...

Սիսակին ոչ ոք չառարկեց: Մաղկեփնջերը դրեցին Մարիամի աճյունին: Սիսակը վերցնելով պսակը, մոտեցավ Միքայելին:

— Եղբա՛յր իմ, հիշո՞ւմ ես մեկ-երկու շաբաթ առաջ երեկո էր, վարատեղից տուն վերադառնալիս խոսեցիք Մարիամի և Կարապետի նոր բացվող սիրո մասին: Այս պսակը ես դնում եմ հարսնացուի գլխին: Նրա պայծառ հիշատակը հավերժ վառ կմնա մեր սրտերում: Նա մեր լեռնային գյուղի մայիսյան թիթեռն էր, բուրբիս ուրախությունը:

Երիտասարդները հարգանքով, դանդաղ բարձրացրին լեռների գեղեցկուհու դին ամփոփող պատգարակը: Քար լուսթյամբ աճյունի հետևից գնում էին փնտրողները: Վերջում թևանցուկ տանում էին սգավոր Կարապետին:

Չորից դուրս գալով մի պահ հետ նայեցին. գալերի ոհմակն իջնում էր ձորը՝ ձիուն և նրա վայրենի տիրոջը հոշոտելու:

Առավոտ էր: Մարիամի աճյունը բերող երիտասարդները դանդաղ մտան թուրքական թաղը: Լուրն անմիջապես տարածվել էր թաղամասում:

Իսմայիլի կրտսեր հարսը դուրս էր եկել գյուղամեջ՝ տեղեկություններ հավաքելու: Նկատելով տղամարդկանց՝ աճյունը ուսերին, քաշվեց տուն: Քիչ հետո Իսմայիլի երկու տղաները հրացաններն առած դիմեցին փախուստի: Սիսակը տեսնելով գաղտագողի փախուստը, դայրացած բղավեց.

— Հայկազ, Զաքար, Պողոս, Մանվել հետապնդեք մարդասպաններին. որտեղ կհասնեք, այնտեղ էլ շանսատակ արեք:

Հայկազը ընկերներից անջատվելով, հրացանը ուղղեց փախչողների կողմը և երեք կրակոց արձակեց՝ ի նշան մարտահրավերի: Իսկ մարդասպանները սարսափահար շնչակտուր վազում էին:

Համագյուղացի թուրք դրացիները տեսնելով երիտասարդներին՝ աճյունը ուսներին, կանգ առան: Իսմայիլի տան առջև շրջապատեցին նրանց:

— Սա ի՞նչ ահավոր ոճիր է: Նորից Իսմայիլի ավագակ տղանե՞րը... — վրդովված ասաց թուրքական թաղամասի 65-ամյա ուս Ալլի Հուսեին օղլին: — Սպանել եք ութ եղբոր միակ քրոջը: Հիմա ի՞նչ պատասխան պիտի տանք պատվարժան Առաքել աղային, նրա տղաներին:

Իսմայիլի տան դուռը շրացվեց...

Մաշիամի աճյունը ուսներին տղաները շարժվեցին դեպի Հայկական թաղը: Նրանց հետևեցին մի խումբ թուրք ծերունի աղամարդիկ:

Առաջը առավոտյան աղմուկը լսելով, շտապել էր դուրս, նրա հետևից էլ կինը, վեց հարսները, թոռները: Տեսնելով գյուղապետին, բազմությանը, անհանգստացավ...

— Գիշերը տղաները դաշտում գտել են Սանամին, — ծանր ընկնով ասաց գյուղապետը, — ծեծված, շատ արյուն կորցրած, ուշադեպ վիճակում բերել են հեքիմ Խաչանուշի տունը: Խաչանուշը որչ Գիշեր խնամել է աղջկան: Սակայն աղջիկը գեռես ուշքի չի եկել:

— Գյուղապետ ախպեր, հոգիս, ապա ո՞ր է, ինչ եղավ իմ տան ծաղիկը. — խեղճացած և կուշ եկած գյուղապետին հարցրեց Առաքելը:

Հենց այդ պահին հավաքված գյուղացիների ուշադրությունը գրավեց թուրքական թաղամասից եկող թափորը, ուսներին զրած բերում էին ծաղիկներով ծածկված աճյունը: Առաքելն այդ տեսարանից ցնցվեց. ծնկները թուլացան:

— Այս ի՞նչ է, — ճշաց նա: — Ո՞վ է սա, ո՞ւմ են բերում իմ տունը: Սա ի՞նչ տեսիլք է... — Նա խելացնոր նետվեց դեպի աճյունը:

Մի քանի երիտասարդ մտան դժբախտ ծերունու թևերը, որ լքնկնի:

— Վա՛խ, Մարիամ, դատրիկս: Էդ ո՞ւմ սև ձեռքը բարձրացավ քո ծաղիկ կյանքի վրա... Ո՞վ խլեց իմ հրեշտակին, իմ միջթարությունը...

Ենչակորույս Վարդուհին դեմքն առած ափերի մեջ, հարսներով շրջապատված կուշ էր եկել իր տան շեմքին ու ողբում էր: Տեսնելով դեպի իրեն եկող թափորը, մի ահարկու ճիշ արձակեց. «Վա՛խ իմ հրեշտակ աղջիկս» ասելով՝ թուլացած մարմնով նետվեց աճյունի վրա:

— Ա՛խ աստված, մեր ո՞ր մեղքի համար...

Մանր ու սահարկու էր այս տեսարանը:

Աղջկա մահը առավել ծանր էր սգավոր մոր համար. նա շղիմացավ, ուշաթափվեց:

Արևը զենիթում էր, երբ գյուղ մտան Իսմայիլի ավագակ աղաներին հետապնդողները: Նրանք գյուղապետին զեկուցեցին.

— Մարդասպաններին տեսանք սարի գագաթին: Պաղաղբյուրի մոտ նստած հաց էին ուտում: Հացի վրա մարդուց վրեժ լուծելը տմարդություն է: Սպասեցինք՝ հացը կերան, վերջացրին, կուսացան աղբյուրից ջուր խմեցին: Մնկի եկած նամազ արեցին, վեր կացան խուրջիները դրեցին ուսներին, զենքերն ստուգեցին ու շարունակեցին ճամփան,— պատմեց Հայկազը:— Քիչ անց, ես Յուսուֆի թուղին նշան բռնեցի ու կրակեցի: Քուղը վայր ընկավ: Նրանք հանկարծակիի եկած, շտապեցին քարի հետևը դիրքավորվելու: Մեր համազարկ կրակոցով երկուսն էլ գետնին գլորվեցին այդպես էլ չհասցնելով դիրքավորվելու: Ահա՛ նրանց թուղները և զենքերը,— նետեց ոտքերի տակ:

— Թողնեիք՝ գնային կորչեին: Արյան դիմաց արյունով վրեժ լուծելը դաժանություն է,— հանգիստ տոնով ասաց խաղաղասեր գյուղապետը:

— Ո՛չ, ճիշտ են վարվել: Թող դա դաս լինի մյուսների համար, որպեսզի հարգեն իրենց հայ բարեկամներին,— առարկեց թուրքական թաղի ռեսը:

Հաջորդ առավոտյան Իսմայիլի տան դռները բաց էին: Գիշերն ընտանիքով գյուղից հեռացել էին...

Երկու օր Մարիամի աճյունը դրված էր գյուղի եկեղեցում: Երկու օր մարդաշատ եկեղեցում վառվում էին մոմերը: Մխում էր խունկը: Հարազատները, համագյուղացիները հարգանք էին մատուցում անմեղ զոհին:

Ընդառաջելով Կարապետի խնդրանքին Մարիամին թաղեցին սպանված վայրում:

Թաղման օրը գյուղում աշխատանքները կանգ էին առել: Սգո սլատարագից հետո մեծ շուքով աճյունը դուրս բերեցին եկեղեցուց և հոծ բազմությունով շարժվեցին դեպի Կաթավաձոր: Քրոջ աճյունը իրենց ուսերին տանում էին ութ եղբայրները: Առջևից տանում էին դաշտային գույնզգույն ծաղիկներից Կարապետի պատրաստած մեծ ծաղկեպսակը: Հետևից գնում էին ֆարաջաներով երեք տերհայրերը: Բուրվառներով՝ սևազգեստ օտարկավագները, սգավոր ծնողները:

Մարդաշատ ձորում Մարիամի աճյունը օրհնեց ավագ երեց տեր Պողոսը: Ապա սգո երաժշտությամբ հողածնին հանձնեցին հողին:

Մարիամի գերեզմանի վրա բարձրացավ փայլող ծաղիկների

մեծ բուռը, նրա ուժասպառ ծնողներին, Կարապետին սայլերի վրա բերեցին տուն:

Ծոռատասարդները գերեզմանին հրածեղտ տվեցին ու զիշերին, երբ երկնակամարի վրա փայլատակում էին երկնային աստղերը:

Մանր անցան հողի, հանգստի, յոթի օրերը: Իսկ քառասունքին մասնակցեց նաև Սանամը: Ամեն օր Կարապետը Սանամի հետ այցելում էր Մարիամի գերեզմանին, իսկ ուշ երեկոյան նրան սայլով տուն էին բերում: Նա հալոնալ էր եղել, ոտքի վրա չորացել էր, սնվում էր սակավ: Գիշերները վատ էր քնում, երազի մեջ խոսում էր:

Կարապետին հանգստացնելու ծնողների, եղբայրների ջանքերն ապարդյուն անցան: Չէր հաջողվում նրան կտրել Մարիամի գերեզմանից: Շատ անգամ մայրը արցունքը կուլ տալով, աղբբսում էր որդուն.

— Կարո՞ ջան, լսի՞ր մորդ, մեղք ես, սնվի՛ր, Կաթավաձոր քիչ գնա, տես ինչ օրի ես ընկել...

— Մայր իմ, հարազատս, ների՛ր տառապյալ որդուդ, ինձ այս բախտն է վիճակվել, սա է իմ ճակատագիրը,— ասում էր նա:

Կարապետը Մարիամի մասին երգեր էր հորինում, անվանելով «հավերժահարս», «անթառամ ծաղիկ», «դաշտի թիթեռ», «հեշտակ»...

Ցավն ալելի ծանրանում էր, երբ գերեզմանի վրա հանդիպում էր Մարիամի ծնողներին, եղբայրներին: Սիրածի մայրն ամեն անգամ տեսնելիս, զրկում էր, սեղմում չորացած կրծքին: Զերթ համբուրելով ասում.

— Ա՛խ, որդիս, անբախտ տղաս... մատաղ լինե՛մ քեզ... Մարիամի սիրուն քեզ լավ պահիր: Ամեն անգամ քեզ տեսնելիս, հողուս մեջ Մարիամիս եմ տեսնում:

* * *

Բերքառատ ոսկե աշուն էր: Կիրակի օրը Զաքարը և Սասամը Կարապետի հետ նորից այցելեցին Մարիամի գերեզմանին: Կարապետն իրեն վատ զգաց: Սանամի լացի և ճիշի ձայնը լսելով, անասուններին ջրի և հանգստի բերած նախրապանները օգնության հասան, բայց...

Ոչնչով չէին կարողացել օգնել: Երեկոյան սայլի վրա գյուղ բերեցին սիրո զոհի անշնչացած աճյունը: Մարիամի մահվա՛ն:

շորորդ ամսին սգո մեծ շուքով Կարապետին հողին հանձնեցին Մարիամի կողքին: Գյուղի երիտասարդների ուժերով գերեզմանի վրա հուշարձան կառուցեցին, վրան փորագրելով.

«Սերն ուժեղ է, քան սուրբ»:

Կաթավաձորի աղբյուրը վերանվանվեց «Մարիամի հուշաղբյուր»:

Այդ օրվանից Կաթավաձորը մշակեցին, դարձավ ծաղկազարդ մի գեղեցիկ կանաչ հովիտ:

Ինքնապաշտպանության մարտեր Ռշտունյաց աշխարհում 1914—1915 թթ.

Գավաշը, Շատախը Վանի նահանգի գավառներից են:

Առաջինը ձգվում է Հայոց ձորից Վանա լճի առնմտյան ասիերով, Փեսանդաշտով մինչև Բիթլիսի նահանգը, Հարուստ բուսական-կենդանական աշխարհով, սևահողային դաշտերով, կանաչ ու ծավալուն սարահարթային արոտավայրերով:

Գավաշը Ռշտունյաց քաջ իշխանների երկիրն է: Վասպուրականի ամենահայաշատ գավառը:

Արծաթափայլ լճերի, պաղ աղբյուրների, դեպի Վանա լիճը իջնող բջջան առուների, աղմկոտ գետերի երկիր է...

Ռշտունյաց լեռնաշխարհի այդ մասերից է ամենակարճ ու մոտիկ ճանապարհը դեպի աշխարհի հրաշալիքներից մեկը՝ Աղթամարը: Այդ ասիերից է սկսվել «Աղթամար» լեզենդի պատմությունը: Որ հայ կտրիճն ամեն գիշեր Թամարի ջահի լույսի կանչով գաղտագողի դեպի կղզին է լողացել, գեղեցկուհիների գեղեցկուհի, իր սիրելի կույսի մոտ ու դարձել դաժան վանականների զոհը:

Գավաշի բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն է, անասնապահությունը, տնայնագործական արհեստները, կաթնամշակությունը:

Իսկ Շատախը ավանդականորեն այն հայ քաղաքի երկիրն է, ում անվանում էին «շատախցի-շատ խելացի»: Վանի ամենահեռավոր գավառն էր, Քրդստանին սահմանակից: XVIII դարից սկսած թուրքական պետությունը հայերին, զանգվածային ջարդերով, տեղահան արեցին բերքառատ հողերից ու այգիներից, պապենական բնակավայրերից բռնեցին լեռները և նրանց շին

բնակավայրերում բնակեցրին թուրքերին, իշխողի և բազմալեռնյան իրավունքներով:

Գավաշը միհարկանի տներով գավառական գյուղաքաղաք էր՝ հայկական և թուրքական փոքր թաղով: Հայերը որպես հին ու հիմնական բնակիչներ, զբաղեցրած տարածքով և բնակչության մեջ շուրջ երկու անգամ գերազանցում էին թուրքերին: Ունեին լավ գարոց, հողերը օջախ, յուր փոքրաթիվ մտավորականությունը: Երկու թաղերի աշխատավորության մեջ գոյություն ուներ զբաղեցրած փոխհարաբերություն:

Գավառապետ բելը և ոստիկանությունը գտնվում էին թուրքական թաղում:

Ժողովրդին խավարամտության մեջ պահելու համար արգելվում և ոստիկանության խիստ հսկողության տակ էր հասարակական կազմակերպությունների, կուլտ-լուսավորչական օջախների հիմնումը, մամուլի տարածումը: Գավաշի գավառի հայությունն ապրում էր Օսմանյան կայսրության հարկային դաժան քաղաքականության պայմաններում:

Թուրք և քուրդ ավազակ խմբերի թալանչիական հարձակումները Շատախում և Գավաշում սովորական էին և հաճախակի տեղիք էին տալիս լուրջ ընդհարումների:

1913-ի գարնանը Հաջի Գեկչը իր ավազակային խմբով հարձակվեց Շատախի գյուղերի վրա, կողոպտեց ու տարավ թանկարժեք իրեր, մեծ թվով անասուններ, 23 հասուն աղջիկներ և պատճառ դարձավ մարդկային զոհերի: Հայերի բողբոջ, գավառապետ Իբրահիմ բելը համարեց զրպարտություն: Հաջի Գեկչը զրանից զոտեպնդված իր հարձակումը շարունակեց Գավաշի մյուս գյուղերի վրա, սակայն այս անգամ հանդիպելով ուշտունցիների լուրջ դիմադրությանը, կորուստներ տվեց և նահանջեց:

Գավաշի գավառում 1914-ին հայկական ջարդերը սկսվեցին Զեվդեթ բելին Վանի կուսակալ նշանակելուց հետո: Նա, ինչպես գրել է Մորգենթաուն, հայկական ջարդերը կազմակերպելու և ղեկավարելու նպատակով էր նշանակվել այդ պաշտոնին: Հիվեր փաշայի բեռին էր, նա իր մոտ կանչելով վաղեմի բարեկամ, Գավաշի գավառապետ Խալի բելին, Կ. Պոլսից ստացած հայկական ջարդերի հրահանգների համաձայն, հրամայել էր.

— Ալլահի կամբով ոչ մի հայ չպետք է կենդանի մնա Գա-

վաշի գավառում: Այս հեղերը ալլահը մեզ է պարգևել, մեզ էլ պետք է մնան: Սա մեր հզոր պետութիւն կարգադրութիւնն է և այն պետք է լիովին իրականացվի: Հայերին պետք է տեղահանել, բնաջնջել, քշել Գավաշից: Նրանց բնակավայրերում բնակեցնել թուրքերին:

1914-ի նոյեմբերին Գավաշի գավառի հայաջինջ թուրքական քաղաքականութիւնը ոչտունցիները պատրաստ չէին, փոքրութիւ՛ք ու՛ծերով սկսեցին դիմադրել գյուղական կոիվներով: Սակայն, ցավոք, դրանք էլ սկսվեցին տարբեր ժամանակներում, ոչ միասնական ճակատով, միմյանցից անջատ-անջատ, առանց ղեկավար կենտրոնի: Ուստի ունեցան ողբերգական վախճան:

Մշակված ծրագրով թուրք ոստիկանական մի հեծյալ ջոկատ առաջինը հարձակման անցավ Արմա գյուղի վրա: Վաղ առավոտյան մտնելով գյուղ, ոստիկանապետը հրամայեց, որ բոլոր տղամարդիկ հավաքվեն գյուղամիջի հրապարակը: Երբ արդեն հավաքվել էին, ոստիկանապետը ձիու վրա նստած հրպարտ դիրքով ասաց.

— Ալլահի կամքով պատերազմ է: Կուսակալի հրամանով բոլոր աշխատունակ տղամարդիկ՝ մինչև 55 տարեկանը, պարտադիր կարգով պետք է ներգրավվեն ռազմական կառույցների վրա վճարովի աշխատանքի: Տեղում նրանց կտրվի բնակարան ու ձրի սնունդ:

Վաղ առավոտյան 2 օրվա ուտելիքով բոլորը պետք է ներկայանաք: Խուսափողները կգնդակահարվեն տեղում...:

Անսպասելի պահանջը լուրջ երկյուղ գցեց գյուղացիներին սիրտը: Իրարանցում եղավ. «Այս ի՞նչ պատիժ էր»,— շնջացին շատերը:

— Հիմա ցրվեք և պատրաստվեցեք վաղը առավոտյան մեկնելու, — մտրակը օդում թափահարելով կարգադրեց ոստիկանապետը, ոստիկաններին հանձնարարեց շրջապատել գյուղը, իսկ ինքը մեկնեց գյուղապետի տուն՝ հանգստի:

Ոստիկանապետի մեկնելուց հետո գյուղացիները մնացին տեղում՝ խիստ վրդովված, տազնապալից դրութիւն մեջ: Սակայն ի՞նչ անել: Ո՞ւր գնալ, ո՞ւմ բողոքել, գյուղը ոստիկաններով շրջապատված է:

Կարված ու ծանր մտորումների մեջ՝ գյուղի վրա իջավ գիշերը: Կեսգիշերն անց գյուղապետը, մեծամեծները հավաքվեցին եկեղեցում գաղտնի ժողովի:

— Մեր տղամարդկանց տանում են սպանելու, — ասաց գյուղապետը:

Կարճ խոսելուց հետո որոշեցին կազմակերպված պաշտպանվել: Լուսաբացին գյուղը զինված ոտքի ելավ:

Գյուղապետը նախօրոք շրջապատել էր տվել իր տունը, որտեղ ոստիկանապետը քնած էր իր թիկնապահներով: Առաջինը հարձակման անցան գյուղը շրջապատող պահակախմբի վրա: Արևածագին մարտը թեժացավ: Ոստիկանների դիմադրութիւնը կտրվեց: Ոստիկանապետը հրաձգութիւն ձայնից արթնանալով սթափվեց: Իմանալով իրադրութիւն մասին իր թիկնապահներին ցուցում տվեց և նրանք կապկպելով տնից դուրս բերեցին գյուղապետի հարսներին, կնոջը, ծերունի մորը: Ապստամբները տեսնելով առջևից քայլող մեծ մորը, կաշկանդվեցին, շկրակեցին երեխաների և կանանց հետ քայլող ոստիկանների վրա:

— Եղբայրներ, հայեր, ալլահը վկա, հավատացեք, դադարեցրեք կրակը, — բղավեց ոստիկանապետը: — Մենք եկել ենք բարեկամաբար, բարի գործով, իսկ դուք, անհավատներ, Քրիստոսաբար եք վերաբերվում...

Այստեղ կանչեցեք գյուղապետին, եղբայրաբար զրուցենք...

Ավագների խորհուրդը, գյուղապետի կամքին հակառակ, որոշեց դադարեցնել կրակը և բանակցել խաղաղ ճանապարհով:

— Ալլահը վկա, հավատացեք ինձ, եղբայրներ, մենք թշնամիներ չենք: Առանց վտանգի բոլորը կհասնեն աշխատանքի վայրը, ապահով պայմաններում, մինչև զարուն կաշխատեն և վատտակած մեծ զումարով տուն կվերադառնան, — սկսեց խորամանկել ոստիկանապետը: Մեր հավատը տարբեր է, բայց մենք աշխատում և ապրում ենք միասին: Հարևան ենք, եղբայր ենք... Ով չի ցանկանում կարող է շքնալ: Գյուղապետն իր տղաների հետ կմեկնի, գյուղացիներին կտեղավորի և իր տղաների հետ էլ կգա, ձեզ կպատմի նրանց մասին, վասի, թե ինչ պայմաններում են աշխատում և ինչպես են վարձատրվում:

Վերացվեց գյուղը պաշարող պահակութիւնը: Մի պահ տիրեց խաղաղութիւն: Սակայն երեկոյան, Գավաշից եկած հարյուրապետը հեծյալ զինվորների մեծ խմբով մտավ գյուղ և անմիջապես պաշարեց այն:

Արմա գյուղի ավագների խորհուրդն զգաց իր սխալը, սակայն ուշ էր: Գիշերը ձեռքակալեցին գյուղապետին ու ավագների խորհրդի ողջ կազմին:

Առավոտյան շրջապատված գյուղը իրեն համարեց խարված և պարտված:

Ջենքի ուժով նշված տարիքի բոլոր տղամարդիկ բերվեցին հրապարակ: Իրավազուրկ, վշտահար գյուղի համայնքը դուրս էր եկել իր ձեռքակալված հարազատներին ճամփա դնելու ժողովրդի միջից դուրս գալով 98-ամյա, տակավին կայտառ, գյուղապետի մայրը՝ Արշալույսը, բռունցքները սեղմած ձեռքերը պարզելով զինվորներով շրջապատված տղամարդկանց՝ հուժկու ձայնով գոչեց.

— Խեղճներդ կորցրե՞լ եք, ինչ է, մի՞թե կարելի է դարավոր թշնամուն հավատալ, խարվել, զենքը ցած զնել... Ո՞ւր եք գնում: Մեղ թողնում եք անպաշտպան, կովեցեք ոչտունցիների պես: Եթե մեռնել է պետք, մեռնենք մեկտեղ: Գլուխներդ առած մեկնում եք կորչելու: Եվ գիտեք, թե ում եք թողնում ձեր տանիքները: Նախնյաց տունն ու տեղը, — նա զայրացած մոտեցավ իր որդուն, բայց զինվորները սվիններով զիմավորեցին ակնոր մորը...

Մեծ մոր հարազատ կանչը ցնցեց բոլորին: Սակայն ուշ էր...

Գծգոհ իրենց ճակատագրից, խոր վշտի մեջ վերջին հրաժեշտը տալով իրենց ընտանիքներին, զինվորների հսկողությամբ Արմա գյուղից տարան ավելի քան 250 տղամարդ:

Գլուխը կախ, ձեռքերը հետևը կապած առջևից քայլում էր գյուղապետը: Նրա հետևից հիմարացած ավագների խորհրդի կազմը...

Տղամարդկանց տանելուց հետո կեսօրին գյուղում մնացածներին էլ հավաքեցին հրապարակում: Ահաբեկելով, մտրակն օդում թափահարելով ոստիկանապետը հայտարարեց. — «Ես անասուններիդ ցույց կտամ, թե ինչ է նշանակում շենթարկվել մեծ Թուրքիային: Իմացե՛ք, կեսօրին գյուղը դատարկում ենք, մեկնելու եք Գրետ գյուղը: Այստեղ զորանոց է լինելու Իսկ երիտասարդ աղջիկներն ու կանայք մնում են մեր իրավունքին:

Մոլորված ժողովուրդը քարացել կանգնել էր իր տեղում: Ի՞նչ կարող էր անել անպաշտպան ժողովուրդը:

— Դե, ցրվեք, ոչխարներ: Եթե ոչ, կհրամայեմ ոստիկաններին բոլորիդ կգնդակահարեն տեղում:

Գազանորեն ծեծելով, ահաբեկումներով, զենքի ուժով մարդկանց դուրս բերեցին իրենց տներից՝ շթույլատրելով իրենց հետ որևէ բան վերցնել: Դիմադրողներին գնդակահարեցին հենց տան

մեջ, շեմին, շինայեցին նույնիսկ երեխաներով մայրերին: Ելե-
վաթյան:

Ելապես, ոստիկանների հսկողությամբ գյուղի ողջ բնակչությունը բերեցին դեպի Գրետ գյուղը: Առանց հանգստի, ուժառույթա քայլում էին մարդիկ՝ մերթ ընդ մերթ անգութ հեծյալների մտրակների հարվածները մեղքների վրա զգալով: Ճանապարհի զովարություններին, ցրտին շղիմանալով, հոգնած, դադրած փոքրիկները մայրերի գրկում, փեշերից բռնած լալիս, աղերսում էին. «... Մայրի՛կ ջան, քաղցած եմ, ոտքերս մրսում են, շեմ կարող քայլել, ո՞ւր է հայրիկս, մեր անուշիկ տունը»: Նրանց օգնության ձեռք մեկնողներին ոստիկանները հարվածում էին, տեղում գնդակահարում՝ վարվում էին ինչպես կամենան:

Գատարկված գյուղում մնացած ոստիկանները մտնում են եկեղեցի՝ կեղտոտում, սրբապատկերները պատառոտում, այրում:

Եկեղեցում թաքնված երիտասարդ տերտեր Անուշավանը, շկարողանալով տանել այդ անառակությունները, ձեռքի ծանր խաչով հարվածում է առաջին հանդիպած ոստիկանին, սպանում: Ոստիկանները զազազած հարձակվում են հոգնորականի վրա, մահվան աստիճան ծեծում, զլորում ցած, ապա ստիպում արնաշաղախ ոտքի կանգնել: Հանում են Ֆարաջան, կտրում մորուքը, քիթը, սկանջները, ապա սվինահարում, սպանում են ու կողոպտում եկեղեցու ողջ ունեցվածքը, անդամ աթոռները: Մոտակա դեզից խոտ են բերում, լցնում, կրակ տալիս, այրում: Գյուղից տանում են 55 երիտասարդ վին և աղջիկ, 70 երեխա, տներից թանկագին իրեր, ցորեն, ալյուր, խալիներ, անկողիններ, հազարավոր զլուխ անասուններ:

Իսկ գյուղից նախօրոք տեղահանված տղամարդկանց ճակատագիրը այդպես էլ մինչև մեծ գաղթը հայտնի չեղավ՝ ո՞ւր տարան, որտե՞ղ սպանեցին:

Ահա այդպես էին տեղերում իրականացվում Կ. Պոլսից իրենցված՝ հայ ցեղասպանության մասին գաղտնի հրահանգները:

Մեկ շաբաթ անց հեծյալ մի ջոկատ մտավ Սուբալի շրջանի Աղատ գյուղը:

Հավաքելով գյուղում մնացած տղամարդկանց պաշտոնա-

պէս հայտարարեցին, որ բեյը կարգադրել է. «Վաղը առավոտ-
յան զորահավաքից մնացած տղամարդիկ գնալու են Ոստան՝
թուրքական բանակի համար զորանոցներ կառուցելու: Կլինեն
ապրելու բոլոր հարմարութիւնները, ձրի սնունդ և ժամանակին
կվճարվի գրամը: Խուսափողները խիստ կպատժվեն, մինչև իսկ
գնդակահարութեամբ»:

Մյուս օրը առավոտյան տղամարդիկ, շահվատալով հան-
դերձ, ստիպված ներկայացան ոստիկանապետին: Սակայն շա-
ւէրը ուտելիքի հետ իրենց խորջիններում թաքցրել էին մաու-
զերներ, նազաններ, նոնակներ:

Կեսօրին 150 հոգի ոստիկանների հսկողութեամբ շարժվե-
ցին դեպի Ոստան քաղաքը: Ծանապարհին, նեղլիկ ձորում, իբր
հանգստի և հացի դադար տվեցին: Գեռ բոլորը չէին հասցրել
նստել, երբ ոստիկանապետը հրամայեց.

— Համազարկ գլխավորների վրա, կրակե՛լ և սպանե՛լ մին-
չև վերջին մարդը:

Ուսուցիչ Աբգարը, որին գլուղացիներն ընտրել էին իրենց
ղեկավար, բացականչեց. — Եղբայրնե՛ր, առանց շփոթվելու
շտապ դիրքավորվեք: Ո՛վ ինչով կարող է, կովեք անարգ թշնա-
մու դեմ:

Հայերի վրա կրակելու կանգնած ոստիկանները առաջին պա-
տասխան հրաձգութիւնից զետեմն գլորվեցին: Իսկ նոնակա-
ծիքները սարսափ առաջացրին... Մարտը թեժացավ: Մարդա-
սպանների համար դա անսպասելի էր: Վախենալով մահից,
թողնելով զգալի թվով դիակներ, նրանք փախուստի դիմեցին:

Արևամուտից առաջ, ձորի մեջ 33 ընկերների դիերը համա-
գլուղացիները հանձնեցին հողին: Հետո սպանված ոստիկան-
ների զենքերով զինված գիշերով մտան հայրենի գլուղը՝ իրենց
հետ տանելով վիրավոր համազուղացիներին:

Հեռվից գլուղը ծխում էր:

— Այս ի՞նչ ահա՛վոր տեսարան է, — բացականչեց ուսու-
ցիչը:

— Եղբայրնե՛ր, ուժներդ հավաքեք, մեր գլուղը վտանգի
մեջ է: Գլուղի ոստիկանները գազանային բարբարոսութեամբ
հարձակվել էին անօգնական բնակչության վրա: Խեղդամահ
էին արել, կողոպտել ողջ ունեցվածքը և 1500 գլուխ անասուն-
ներով հեռացել: Գիմադրողներին սպանել էին տան մեջ, շմի

վրա, բակում, փողոցում՝ շուրջ 100 հոգու: Տարել էին 60 երի-
տասարդ կանանց, աղջիկներ, երեխաներ:

Ուսուցչուհի Պերճանուշը պատահաբար, արյունոտ շորե-
րով խելագարված թափառում էր գլուղում: Նա դիմադրել էր
ոստիկանին իր միակ տղային հափշտակելիս: Ոստիկանը զայ-
րացած, երեխային սվինահարել էր, նետել մի կողմ: Ուսուցչու-
հին ճշարով նետվել էր արնաշաղախ մանկան վրա: Երեխայի
վերջին ճիւղ կրկնելով՝ կորցրել գիտակցութիւնը: Նրա ամուս-
նուն բանակում ծեծելով սպանել էին՝ թուրք զինվորին ապտա-
կելու համար, որն իր մորն ու հավատն էր հայհուլել: Այն ժա-
մանակ Հայկի առաջնեկը մոր արգանդում 9-ը ամսական էր:
Սանր ծննդաբերութիւնից հետո, երեք տարի անբուն տանջվել,
գուրգուրել էր ամուսնու անվամբ միակ զավակին: Եվ անգութի,
վայրենու հարվածով այլևս չկար իր միակը: Այո՛, ճշմարիտ
են ասում. «Թուրքիայում մեռել է մարդկային խիղճը...»

* * *

Հոկտեմբերի 1-ին, Խայկի բեյի կարգադրութեամբ, մի խումբ
ոստիկաններ մտնում են Գավաշի խոշոր գլուղերից մեկը՝ Բե-
լու գլուղը և դիտավորյալ ընդհարման առիթներ ստեղծում:

Երիտասարդ ոստիկանը քմահաճույքի համար հրացանով
նշան է բռնում անցնող աղջկան: Հայ աղջիկը մահվան վտան-
գից փախչում, մտնում է մոտակա տունը և թաքնվում: Ոստի-
կանները հարձակվում են տան վրա պահանջում թաքնված
«հանցագործին»: Տան մեջ միայն կանայք և երեխաներ էին:
Նրանք դիմացի դեղից խոտ են բերում, պատուհանից, դռնից
լցնում ներս, կրակ տալիս և վառում տունը:

Կանանցից մեկը մի մանկանը կրծքին սեղմած, մյուսին
ձեռքից բռնած, վառվող հագուստով հրդեհից փախչում էր,
ոստիկանը կրակում է, շեմի վրա սպանում: Կրակի բոցը լափում
է սպանված մորը և նրա անմեղ ձագուկներին: Նույն ճակատա-
գրին են արժանանում նաև հրդեհից մյուս փախչողները: Հրդեհի
ալիքը տարածվում էր հարևան տները: Տղամարդիկ, կանայք,
անձնագոհ կռվում էին հրդեհի դեմ: Իսկ անգութ ոստիկանները
կրակում էին օգնության հասնողների վրա:

Գլուղը ահ ու սարսափի մեջ մոլորված էր:

Գյուղացիների համբերության բաժակը լցված էր: Կսվեց տեր Հայրապետի խրոխտ ձայնը:

— Եղբայրնե՛ր, ի գնն: Ի՛մ հետեի՛ց...

Բռնկվեց գյուղամիջյան թեժ մարտը:

Անմիջապես նրանց միացավ ողջ գյուղը:

Վրեժխնդրությանը լցված գյուղացիները կոպում էին ոստիկանների դեմ՝ ով ինչով կարող էր: Շուտով գյուղացիներին օգնության հասան սարից իջնող ֆիդայիները: Շրջապատման մեջ վերցնելով սպանեցին ոստիկաններին:

Բելու գյուղը տեր Հայրապետի ղեկավարությանը Գավաշում առաջինը ոտքի ելավ զինված ինքնապաշտպանության:

Գիշերամուտին արդեն հրդեհը լափել էր գյուղի մեկ քառորդը: Ամենուրեք լավում էին այրվող, անօթևան մնացած մանուկների, մայրերի զարհուրելի ճիչը, լացը, անասունների բառաչը, շների հաչոցը, կատունների մլավոցը...

Տեր Հայրապետի ղեկավարությանը, լամպերի ու ճրագների լույսի տակ, հրդեհված ավերակների միջից մարդիկ փնտրում էին տուժած համագյուղացիներին, իսկ մահացածներին անմիջապես տեղափոխում եկեղեցի: Սուգի մեջ թաղված գյուղն սպասում էր լուսաբացին, որպեսզի հոգա իր սգո հոգսերը: Վաղ առավոտյան հարևան գյուղերից մեծ բազմություն եկավ հայրենակիցներին օգնության, մի մասը ֆիդայիների հետ էր եկել՝ երեկոյան...

Տեր Հայրապետը կրթված անձնավորություն էր, մոտ 45 տարեկան: Ավարտել էր Վանի դպրոցը: Նրա հայրը գյուղական ուսուցիչ էր, թուրքերը կողոպտել ու սպանել էին, երբ ինքը 11 տարեկան էր: Նա լավ գիտեր Գավաշի գավառապետ Խալիլ բեյին և Ոստանի կայմակամ Շուքրիին: Շատ էր ճաշակել նրանց սև մտրակի հարվածները: Նա սպասում էր գյուղի վրա զինված նոր հարձակմանը: Այդ իսկ պատճառով հրավիրեց գյուղի և հարևան գյուղերից եկած բոլոր տղամարդկանց (կային նաև կանայք) խորհրդակցելու իրենց անելիքների մասին...

— Մենք պետք է զինված պաշտպանվենք, — ասաց տերհայրը, որի կրծքին փայլում էր խաչը, իսկ կողքից կախված էր մատուցերը: — Այլապես թուրքերը բոլորիս կսպանեն: Նույնը սպասվում է հարևան հայկական գյուղերին:

Նա շնորհակալություն հայտնելով ֆիդայիներին և հարևան

գյուղացիներին օգնության, միասնական ուժերով կոպելու համար, շարունակեց.

— Մեզ սպասում են ծանր օրեր, մեր ուժը, ասել է Խրիմյան Հայրիկը՝ «մեր միասնության մեջ է: Միասնություն ի զորություն»:

— Տերհայր, — խոսեց 70-ամյա գյուղապետ Զանիբեկը, — մենք քո զինվորներն ենք, ղեկավարի՛ր ինչպես պետք է...

Տերհայրը մարդկանց խմբերի բաժանեց, ղեկավարներ էշանակեց, հանձնարարություններ տվեց... Գյուղ մտնող ճանապարհների վրա ժամապահներ դրեց:

Այդ օրը թուրքերի կողմից սպասվող հարձակումը չեղավ: Երեկոյան, ծանր սուգի մեջ, պատարագ տրվեց և եկեղեցու բակում զոհվածներին հողին հանձնեցին: Հետո հարևան գյուղացիներն իրենց հետ տարան անօթևան մնացած ծերերին, կանանց, երեխաներին:

Խալիլ բեյն անհամբեր սպասում էր Բելու գյուղից վերադարձող ոստիկաններին և նրանց մեծ թալանին: Մի օր հետո, ուշ երեկոյան, նա իր 17-ամյա արաբուհու հետ հրճվելուց հետո իմացավ Բելու գյուղ ուղարկված ոստիկանների մասին: Բեյը խիստ վրդովվեց ու զայրացած ասաց՝ ես նրանց խեղճամահ կանեմ, գյուղը՝ մոխրի կվերածեմ...

Մի քանի օր անց նա ջոկատի գլուխն անցավ և շարժվեց դեպի Բելու գյուղ: Այս անգամ դահիճներին գյուղացիները դիմավորեցին պատրաստ վիճակում: Բռնկվեց թեժ մարտ: Հայերը կոպում էին անձնվիրաբար պատրաստված դիրքերից: Մեծաթիվ կորուստներից հետո բեյը ստիպված ուշ երեկոյան հեռացավ գյուղից:

Բելու գյուղի ինքնապաշտպանության հաղթանակի լուրը տարածվեց ողջ Գավաշում, ոգևորեց բոլորին...

Այդ մասին իմացան Վանում, Բիթլիսում, Մուշում, Շատախում... Բելու գյուղը ցույց տվեց, որ երբեք չպետք է հավատալ, խոնարհվել դարերով կեղեքող թշնամուն:

Հոկտեմբերի 3-ին Հուսեյին բեյի որդի Ռահային՝ իր ավագակալին հեծչալ ջոկատով մտավ Թիմար գյուղը: Վանի կուսակալի անունից ստուգում էին զորակոչից թաքնվածներին, հավաքում սառը զենքերը: Բայց, փաստորեն, դա մի սոսկալի թալան էր: Սպանեցին 88 հոգու: Գերեվարեցին 30 նորահարս ու հասունացած աղջիկների, քշեցին 500 գլուխ անասուն: Բարձ. Ասլանյան Ա.

ձած սալերը ծանրությունից ճկվել էին: Իսկ հոկտեմբերի 5-ին հարձակվեցին ջրաղացների վրա, սպանեցին այնտեղ եղած բոլոր հայերին ու տարան 12 սալ ցորեն և ալյուր: Նույն հոկտեմբերի երկրորդ կեսին Գավաշից եկած ոստիկանների մի մեծ ջոկատ մտավ Քամբա (Քամբա) գյուղը, առանց որևէ պատճառի, սկսեցին աղմկել, հայհոյել, մեղադրել հայերին, կրակեցին օդի մեջ, անասունների, շների վրա: Սարսափ առաջացրեցին խաղաղ գյուղում: Գրանից հետո հայտարարեցին, որ Խայլի Բեյի հրամանով պիտի ստուգեն, թե զորահավաքից խուսափող, թաքնված տղամարդ կա: Իրականում նրանք ուղարկված էին գյուղը կողոպտելու, հայերին կոտորելու:

Իմանալով, որ եկեղեցում կիրակնօրյա ժամերգություն է, մի խումբ ոստիկաններ մտան այնտեղ՝ աղմուկ-աղաղակով, կրակոցներով: Հետո սպանեցին ժամերգությունը վարող տերտերին: Ահաբեկելով ժողովրդին, ստիպեցին դուրս գալ եկեղեցուց. ընդդիմացողին սպանեցին տեղում:

Մանր վիրավորված երիտասարդ սարկավազ Նազարը ուժերն հավաքելով ոտքի կանգնեց և կոչ արեց.— Զարկեցե՛ք թուրքին, նրանք մեզ շատ են զարկել ու արծաթյա բուրվառով ուժգին հարվածեց մի ոստիկանի գլխին, գլորեց գետնին: Հետո վրան ընկնելով, բութ մատներով սեղմեց կոկորդը ու խեղդեց: Ինքն էլ՝ արնաքամ մահացավ:

Մարդասպանները շարունակելով բարբարոսությունը, բռնություններ առանձնացնում են երիտասարդ աղջիկներին, կանանց: Եկեղեցու դուռը փակում, գազանաբար հարձակվում նրանց վրա, պատառոտում հագուստները, թևերը կապում, բռնաբարում: Հայ կանայք՝ մեկը մյուսին օգնելով, ճիգ ու ջանք գործադրելով՝ անձնվիրաբար դիմադրում էին ոստիկանների սանձարձակություններին, ով ինչով և ինչպես կարող էր. ապտակում էին, թքում երեսներին: Թուրք ճիվաղները զայրացած հայ կանանց անձնվեր դիմադրությունից, դաշունահարում, սպանում էին նրանց, դաշույնի ծայրով կանանց կրծքի, գեմքի վրա խաչեր դժում, աչքերը հանում: Սրբավայրի հատակը ծածկված էր արնաշաղախ քնքուշ էակների մարմիններով, նրանց ալ կարմիր սրբազան արյունով:

Հայկանուշի մարմնից արյուն էր հոսում, նա ճարպկորեն հարձակվեց իրեն մերկացնող, տանջող ոստիկանի վրա, գոտ-

կեց հանեց նրա դաշույնը և ուժգին խրեց ճիվաղի կուրծքը: Բայց ինքն էլ հերոսաբար ընկավ թիկունքից կրակող մի այլ ոստիկանի գնդակից: Նրա քաջությունը ոգևորեց շատ կանանց ու աղջիկներին:

Ավազակները թալանեցին եկեղեցու ողջ ունեցվածքը, հանելով նաև մեռնող տերտերի ատամներով սեղմված խաչը, ամուր բռնած բուրվառը:

Գարբին Սահակը արհեստանոցում իմանալով գյուղում տիրող վիճակի մասին, իր թաքնված եղբայրների, 72-ամյա հոր և որդիների հետ զինված շտապեց այնտեղ: Անմիջապես դիրքավորվելով հրազենից կրակ բացեցին ոստիկանների խմբի վրա: Նորից բռնկվեց թեժ մարտը:

Տանիքից Սահակը դիմելով համագյուղացիներին, կոչ էր անում.

— Եղբայրներ՛ր, ոչտունցիներ, մեզ կողոպտում, անարգում, սպանում են, էլ ուժ չկա հանդուրժելու: Ի գե՛ն... հանուն մեր ազգի, դավանանքի, ընտանիքի պաշտպանություն:

Նրա կոչով ոտքի ելավ ողջ գյուղը: Հերոսաբար դիմեցին ինքնապաշտպանության:

Ոստիկանները վախենալով զայրացած գյուղացիների հուժկու գրոհներից, դիպուկ հրաձգությունից, զոհեր տալով, փախուստի դիմեցին: Ապստամբները հասան եկեղեցի այն պահին, երբ ոստիկաններն իրենց սև գործը վերջացրել, կողոպուտը շալակներին եկեղեցուց դուրս էին գալիս:

— Զեռքներդ վեր, մարդասպաններ,— շարժվե՛ք,— ահարկու ձայնով թուրքերեն բղավեց դարբին Սահակը:— Ավազակները հանկարծակիի գալով ցնցվեցին, կանգ առան:

— Զինաթափ անել: Եկեղեցու գույքը վերցնել,— զայրացած հրամայեց Սահակը:

Ոստիկանները ծնկաչոք ներում էին աղերսում: Ալլահին աղոթում: Գյուղի թափորը շտապում էր արնաշաղախ եկեղեցին: Մի ահավոր, զարհուրելի տեսարան: Երբ Սահակին հաղորդեցին եկեղեցու արյունահեղության մասին, նա զայրացած բղավեց.

— Ծիվաղներ՛ր,— ու դարբնի ահարկու ապտակը շառաչեց օնբաշու երեսին, գլորեց գետնին: Պարզվեց, որ նրանք Շատախից եկած այն թուրք Ֆանատիկ մարդասպաններն են, որոնք բան-

տերից ազատվել են հայ ցեղասպանութիւնը մասնակցելու համար:

— Այստեղ կանչեք 10 երիտասարդ աղջիկներին:

Անմիջապէս ներկայացան կայաառ հայուհիները:

— Նրանց տվեք ավազակներից վերցրած զենքերը, թող շատատակ անեն բարբարոսներին: Նրանք մեր սրբավայրում պըղծեցին մե՛ր դավանանքը, մե՛ր պատիվը: Եկեղեցու արլան մեջ խեղդեցին, սպանեցին մեր մայրերին, երեխաներին, քույրերին: Խորխոր ձայնով հրամայեց քաջ դարբինը:

— Ծիվաղնե՛ր շարվեցեք այնտեղ, — եկեղեցու պատը ցույց տալով հրամայեց Սահակը:

Ոստիկանները սարսափահար շարվեցին եկեղեցու պատի տակ:

Հայ աղջիկները լցված հրացանները գյուղի հասարակութեան ներկայութեամբ դատարկեցին ոստիկանների վրա:

Եկեղեցու զոհերի մեջ էին Սահակի մայրը, կրտսեր քույրը և 12 երեխաների մայր՝ իր կինը...

Սահակը դիմելով գյուղացիներին, վշտացած ասաց.

— Նզովված թուրքը մեր խաղաղ գյուղին արհավիրք բերեց, սպանեց մեր հարազատներից 32-ին, այդ թվում կանանց, երեխաների: Այժմ անցեք ձեր տները՝ հանգստի: Վաղը մենք անելիք շատ ունենք: Ով զինված է, արթուն կացե՛ք, անարգ թուրքը խորամանկ է ու նենգ: Հիշեցնում եմ, ուշտունցիները շեն վհատվում...

Իշտունցաց քաջերի ապստամբ գյուղը ծանր հոգսերի և սուգի մեջ մտավ խիստ ձուձան խավար գիշերը:

Սահակը գիշերը մեծամեծներին հավաքեց իրենց տան օդան, խորհում էին, ծրագրում իրենց անելիքները: Հաջորդ օրը պարզեկա և ցուրտ էր: Արևի շողերից փայլում էր Սիփանի ձյունապատ գագաթը: Սզավոր գյուղացիները շարժվեցին դեպի եկեղեցի: Հարևան գյուղից եկած տերտերը՝ հագնելով զոհված տերտերի արշուճոտ ֆարաշան, արշուճոտ խաչով ու բուրվառով վարեց սգո պատարագը: Օրհնեց անմեղ զոհերի շիրիմները: Խաղաղութիւն կամեցավ գյուղացիներին, աշխարհին...

Սգո ծիսակատարութիւնից հետո, լացի ու սգի մեջ, զոհերին թաղեցին եկեղեցու բակում պատրաստված եղբայրական գերեզմանում: Երկար ու ձիգ եղբայրական գերեզմանի վրայից քուլա-քուլա բարձրանում էր խունկի կանաչ-կապույտ ծուխը:

Վառվում էին հարյուրավոր մոմեր: Թաղման արարողութիւնն այստեղ էլ վերածվեց ինքնապաշտպանութեան ելած գյուղացիների դայրուլթի, բողոքի ցույցի՝ ընդդէմ թուրքական բռնակալ կարգերի: Ելույթներ ունեցան Սահակը, գյուղապետը և ուրիշները: Ավագների խորհրդակցութիւնը որոշել էր, որ գյուղը պետք է միասնական ուժերով իր պայքարը շարունակի՝ հանուն իր ազգի և հավատի պահպանման:

Ավագների խորհուրդը Սահակին ընտրեց ընդհանուր ղեկավար:

Գավաշի հայութեան արյունահեղ ջարդերի ղեկավար Խայի բնյը դայրացած իր անհաջողութիւններից, գազանային շարութեամբ հրամայել էր դեկտեմբերի 26-ի լույս 27-ի գիշերը Գավաշը պաշարել: Առավոտյան այդ պաշարումը զարմանք պատճառեց հայերին: Մի քանի հրանոթներ կրակեցին հայկական տների վրա: Հետո էլ ճարձատեցին հարյուրավոր հրացաններ: Եղան ավերումներ, զգալի թվով մարդկային զոհեր: Գավաշի դպրոցի վարիչ Արամայիս Մուրադյանը արագ համախմբեց հայերի փոքրաթիվ ուժերը, կազմակերպեց հայերի մարտական ինքնապաշտպանութիւնը:

Արամայիսը, տեղի Հովսեփը, դարբին Ոստանիկը անձնուրաց օրինակ էին ծառայում ու ոգևորում Գավաշի հայերին: Տղամարդ, թե կին, ծեր թե երեխա, բոլորը ոտքի ելած կռվում էին. ուշտունցիները կռվում էին գերազանցող զինված ուժերի դեմ...

Մարտը հետզհետե սաստկանում էր:

Հայերը ամրացած դիրքերից կրակում էին. փամփուռներն ու նռնակները խիստ սակավ էին, բայց հրաշալի էին գործում նշանառուները: Հայերի համար դա նվիրական գոյամարտ էր: Մահու կենաց կռիվ: Հարձակողական մարտ վարող, մեծաթիվ թուրքական բանակը համոզված էր իր հաղթանակին: Սակայն շարունակում էր զոհեր տալ: Զայրացավ գոռոզ բնյը: Նրա համար անսպասելի էր հայերի լավ կազմակերպված ինքնապաշտպանութիւնը: Ուստի դիմեց խորամանկութեան: Կարգադրեց դադարեցնել հրաձգութիւնը: Երեք հրամանատարի ուղարկեց հայերի մոտ, իր անունից հավաստիացնելու, որ հրաձգութիւնը դադարեցնում են և կշարունակեն նախկինի պես հաշտ ու խաղաղ ապրել ինչպես եղբայրներ... Բայց հայերը լավ էին

ճանաչում նենգամիտ խայլի բեյին: Մերժելով, սուրհանդակ-
ներին հետ ուղարկեցին, պատասխանելով՝ «չենք հավատում
բեյի շողորթութ լեզվին: Առաջինը ինքներդ եք կրակել: Մենք
միայն պաշտպանվում ենք»:

Դաժան բեյը խիստ զայրացավ, որ չհաջողվեց հայերին խաբել,
հրամայեց հայկական դիրքերի վրա բացել ուժեղ հրանոթային
կրակ, հետո նոր լրացուցիչ ուժերով անցնել հարձակման:

Ամենուրեք զնդակների տարափ էր: Չնայած մարդկային
զոհերին, փոքրաթիվ հայերը չէին վհատվում, կռվում էին կաղ-
մակերպված, անձնազոհ: Կատաղի մարտը շարունակվեց մինչև
ուշ երեկո:

Չմեռվա լեռնային երեկոն իր հետ բերեց ուժեղ, ձյունախառն
բամի, տեսանելիությունը մի քանի մետրից չէր անցնում: Հրա-
ձգության դադարեցումը հայերին անհրաժեշտ էր, որպեսզի
իրենց ուժերը համախմբեին: Իրոք, հայերի վիճակը ավելի ծանոթ
էր՝ կապված մի շարք դժվարությունների հետ. չնայած իրենց
մեծ հայրենասիրության ու կաղմակերպվածության, թվով շատ
քիչ էին, լուսնին անհրաժեշտ զինամթերք, չկային օգնող ուժեր:
Երեկոյան մարտը դադարեցվեց:

Պաշտպանության խորհրդի ցուցումներով վերադասավորե-
լով իրենց ուժերը, հայերը պատրաստվում էին առավոտյան
սպասվող մարտին:

Խորհուրդը որոշեց մարդ ուղարկել հայ ֆիդայիների մոտ՝
խնդրել, ինչ գնով էլ լինի, գիշերը թիկունքից հարձակվել թուր-
քերի դիրքերի վրա և ոչնչացնել, շարքից դուրս բերել հրանոթ-
ները, հրամանատարական և զինվորական կազմը, ձեռք բերել
նոր զենք և փամփուշտ:

Ցուրտը սաստկանում էր: Սուրհանդակը դժվարությամբ տեղ
հասավ մթին: Ֆիդայիների հարմարավետ թաքստարանը
պատրաստվել էր մի քանի տարի առաջ, քարայրում: Այդ առ-
բի ամռանը վերանորոգել, ընդարձակել էին: Չմեռը տաք լինե-
լու համար պատերը և հատակը հաստ շերտով սվաղել էին՝
կավի հողին խառնելով դարման: Ննջարանը բարակ պատով
անջատել էին խաղի և հանդստի սենյակից: Հատակը ծածկված
էր խտիրներով, նառերի վրա փռված էին թաղիքներ, բրդոտ
մորթիներ: Այն իր կարգ ու կանոնով նման էր զորանոցի:

Ֆիդայիները լսելով կատաղի հրաձգությունների ձայները,
խիստ անհանդուստացած սպասում էին հրահանգների: Հանդիստ

ընդին պաշտպանության խորհրդի կարգադրությունը և սյառ-
բաստակամություն հայտնեցին՝ այն անհապաղ կատարելու:

1914 թվականի դեկտեմբերի 28-ի գիշերն էր: Գավառի ֆի-
դայիների հրամանատար, փորձված զինվորական կիրակոսյանը
սուրհանդակ Մերուժանին ճանապարհելուց հետո, առանց հե-
տախուզության անցավ գործի:

Մութ գիշեր էր: Սուլում էր ձյունախառն քամին: Տեսանե-
լիությունը 2 մետրից չէր անցնում:

Թիկունքից մոտենալով թուրքական դիրքերին, նրանք զար-
մացան. դիրքերը գրեթե դատարկ էին: Զինվորները շփմա-
նալով սառնամանիքին և բքին, հրամանատարների հետևից լքել
էին դիրքերը: Դիրքերում մնացած մի քանի ասկյարներ շինել-
ների մեջ փաթաթված, քնած կամ սառած դողում էին: Ֆիդա-
յիները, զգուշությամբ թիկունքից առանց դժվարությունների,
ասկյարներին դաշունահարեցին և ուղարկեցին ալլահի գիրկը:
Հավաքելով զենքերը և փամփուշտները, նշված տեղում սպա-
սեցին հրամանատարին և մյուս ընկերներին:

Կիրակոսյանն իր խմբով, զգուշությամբ մոտենալով հրա-
նոթներին, նկատեց, որ յուրաքանչյուր հրանոթի հետև, շինելի
մեջ փաթաթված մի քանի զինվոր, կեսքուն, կեսարթուն, կուշ
եկած, դողում են: Առանց աղմուկի, դաշույնի հարվածով նրանց
էլ ոչնչացրին:

Հրանոթի փակաղակները հանելով, արկերի հետ մոտակա
բարձունքից զլորեցին ձորը: Նորից շտապեցին նշանակված
վայրը: Հրամանատարը ողջունեց գիշերային խավարի, դժվա-
րին պայմաններում մարտական խնդրի հաջող կատարելու առ-
թիվ և ասաց.

— Այժմ ձեզ կարգի բերեք: Պատրաստվեցե՛ք: Մեզ սպասում
է դժվարին ճանապարհ: Շտապե՛ք զեպի գյուղ, քանի դեռ մոտ
է, խավար: Այնտեղ մեզ սպասում են մեր եղբայրները: Չե՛ղ
պինդ պահեք ճանապարհին:

Վաթսունից ավելի հրացան, 12 արկղ փամփուշտ վերցնե-
լով, արհամարհելով ցրտաշունչ և ուժեղ քամին, սարից իջան
զեպի Գավառ:

Սուրհանդակ Մերուժանը վերադառնալով պաշտպանության
խորհրդին զեկուցել էր, որ ֆիդայիները պատրաստակամ բն-
դուհեցին մարտական խնդիրը և ասացին, որ լրիվ կկատարեն
այն:

Ապա նա ասաց, որ լեռներում բուք է ու ցուրտ, սակայն Ֆիդայիները որոշել են մինչև արևոտական մտնել Գավաշ և միանալ մեզ: Այս ամենը լսելով, Արամայիսի աչքերն ուրախությամբ փայլեցին: Նա տեղից վեր կացավ, Մերուժանին ամուր սեղմեց կրծքին ու համբուրեց: Ապա բոլորին դիմեց այսպես.

— Եղբայրներ, մենք պետք է պատրաստվենք, քաջ Ֆիդայիներին դիմավորելու հենց գիշերը: Դրա համար անհրաժեշտ է այնպես անել, որ նրանք գլուղ մտնելիս ոչ մի շուն չհասչի, թե չէ աղմուկից թուրքերը կարթնանան: Զաքարին, Աշոտին, Հոնոյին ուղարկեց թաղամասերը, որպեսզի տղաների միջոցով շնատերերին հայտնեն, որ բոլոր շները ներս տանեն տները:

Այնուհետև տասը երիտասարդ Մերուժանի հետ գնացին, որ գլուղից դուրս դիմավորեն Ֆիդայիներին, նրանք հոգնած կլինեն, հավանաբար՝ ծանր բեռներով:

Թեև բուքը սաստկանում էր, սառնամանիքը, ծանր բեռը լուրջ դժվարություններ էին ստեղծել, սակայն քաջ Ֆիդայիները որոշել էին ինչ գնով էլ լինի՝ գիշերով մտնել Գավաշ: Նրանք, երբ արդեն մոտեցել էին գլուղին, խավարի մեջ նկատեցին դեպի իրենց շարժվող մարդկային ուրվականներ:

— Դեպի մեզ մարդիկ են գալիս, պատկել և զենքերը պատրաստել, — հրամայեց հրամանատարը: Իսկ երբ ուրվականներն ավելի նկատելի դարձան Կիրակոսյանը թուրքերեն հրամայական տոնով բղավեց.

— Ուրե՛ք եք, ձեռքներդ վեր, կկրակե՛նք:

— Մե՛նք ենք, իմ քաջ ախպեր, — հայերեն պատասխանեց Մերուժանը: — Եկել ենք ձեզ դիմավորելու: Ծն եմ՝ Մերուժանը...

— ապա Մերուժանն ու բնիկները ուրախացած վազեցին Ֆիդայիներին ընդառաջ, գրկախառնվեցին:

— Մերուժան ջան, — ասաց Կիրակոսյանը, — դրա ժամանակը չէ, շտապե՛ք, օգնե՛ք տղաներին, բեռները ծանր են:

Ֆիդայիները, Մերուժանի առաջնորդությամբ, հաջող, մթին մտան Գավաշ: Տեր Հովսեփի, Արամայիսի և մյուսների ուրախությամբ շափ շփար: Քաջ Ֆիդայիները սպասածից ավելի ավար էին բերել:

— Եղբայրներ, ժամանակը կարճ է, — ասաց տերհայրը, — շուտով արևոտականը կլավի, արշալույսին թուրքերն իրենց հարձակումը կսկսեն: Տղաները մրսած են, տարեք զոմը, նրանք գերմարդկային ջանքեր են գործադրել... Մի քիչ սուգսանան,

հանգստանան: Լավ կերակրեք քաջերին, նրանք մեր վաղվա մարտի հույան են:

Կիրակոսյանը տեղեկություն տվեց թուրքերի դիրքերի մասին:

Իրենց տաք տներում գիշերային հանգիստն անցկացնելով, առվտյան երկու թուրք հրամանատար բարձրացան վեր՝ դիրքերը ստուգելու և շտապ վերադարձան իրենց տները իրր թե ոչինչ չեն տեսել, ոչնչից տեղյակ չեն: Արևոտականին խալի բելը փափուկ անկողնում, իր հարեմի 17-ամյա հարճի հետ հրճվելուց արբեցած, խոր քուն էր մտել:

Օրը կեսօր էր, երբ խալի բելը, թողնելով ճոխ սեղանը, բարձր տրամադրությամբ տանից դուրս եկավ՝ կանչելով իր տան գլխավոր վերակացուին:

— Հը՛, գլավուրները վախեցա՞ն, անձնատու՞ր եղան, — ժպտը դեմքին հարցրեց բելը:

Վերակացուն տեղյակ լինելով գիշերվա դիրքերը լքելուն, իրեն զգուշ պահեց, որպեսզի բելի տրամադրությունը չփշացնի, ձեռքերը կրծքին, խոնարհվելով պատասխանեց.

— Ո՛չ, բելը ապրած կենա: Գլավուրների դիրքերից ոչ մի տեղեկություն չկա: Իսկ մերոնք հարձակման համար սպասում են ձեր հրամանին:

— Կանչե՛ք հրամանատարին, անմիջապես: Հրանոթային կրակ բացե՛ք հայերի վրա, կրակ տվեք, ոչնչացրե՛ք նրանց: Այս հողի վրա կա՛մ մենք պետք է ապրենք, կա՛մ ոչ ոք...

Քիչ անց հրամանատարը վախեցած ու շփոթված ներկայացավ բելին, որը թախտին հենված նարգիլի էր ծխում: Ինչպե՞ս զեկուցի արյունաբբու բելին...

Կխատ-պոատ, անկապ խոսքերով, որոշ հաղորդում արեց: Զայրացած բելը վեր կացավ, ուժգին ապտակեց հրամանատարին և դուրս վռնդեց: Երեկոյան խալի բելի մոտ խորհրդակցություն էր: Նա շատ էր վրդովված: Չէր հանգստանում հայերից ստացած այդ հարվածից, խիստ բղավում, հայհույում էր բոլորին, նույնիսկ հազարապետին էր անպատվում: Սակայն դիրքերը լքելու հիմնական մեղավորի մասին ոչ մի խոսք չասաց, որովհետև նա իր քրոջ որդին էր՝ նորավարտ հրամանատար Մահմեդը:

Խալլի բեյը ձեռքերը հետևին անցուդարձ էր անում: Նա չէր ուզում հաշտվել այդ խայտառակ պարտության հետ:

Զվարկաբեկվելու համար որոշել էր իրողությունը ծածկել և չհայտնել Վանի կուսակալին: Այդ իսկ պատճառով ոչ մեկին չպատժեց: Միայն մեղադրական խոսքեր և հայհոյանքներ շարժեց հայերի հասցեին, մեղադրելով, որ այս լարված վիճակը իրենք հայերն են ստեղծել:

— Մենք իրավացի ենք,— ասաց նա:— Հայերը եկել տիրացել են ալլահի կողմից մեզ տրված հողին: Պետք է նրանց ջնջել մեր հողից:— Վերջում վրեժխնդրության կոչ անելով ավելացրեց.

— Գավաշի գավառում ո՛չ մի հայ չպետք է կենդանի մնա: Յուրաքանչյուր մահմեդական պիտի 2—3 քրիստոնյա սպանի, որպեսզի մեռնելիս դրախտ գնա: Ա՛յս է մեծն ալլահի և թուրքական պետության կամքը:

Ես մեկնելու եմ Վան: Մի քանի օրից կվերադառնամ: Մեռ պետության պահանջով, շուտով սկսվելու է մեծ հարձակում հայերի վրա: Պատրաստ եղեք, մեզ հետ է մեծ Գերմանիան. Այն ժամանակ ես հայերին ցույց կտամ, թե ո՞վ է Խալլի բեյը: Կկոտորե՞մ, կոչնչացնե՞մ այն ամենը, ինչ որ հայկական է:

Բեյի գործակալները խորհրդակցությունից հետո խոնարհվեցին՝ նրան ծառայելու պատրաստակամություն հայտնեցին ու հեռացան, նրա համար թողնելով թանկագին նվերներ:

Բեյն իր թիկնախմբով մեկնեց և որոշ ժամանակ տիրեց «խաղաղ» լուսթյուն: Փաստորեն թուրքական կողմը պատրաստվում էր նոր, բարբարոս հարձակումների: Ռշտունյաց աշխարհի տերերին՝ հայերին դուրս քշելու նպատակով:

Գավաշի գավառում հայերի նոր տարին անցավ անշուք:

Հայ աշխատավորությունը հոգեպես անհանգիստ, տազնապալից վիճակում էր: Զրացվեցին նոր տարվա հայկական ճոխ սեղանները: Զլվեցին զուռնաների և դհոլների ուրախ ձայնը: Զթնդացին հայկական պարերն ու երգերը, ասես մոռացվել էին տոնական ուրախ սովորությունները...

Սակայն հունվարի 6-ին եկեղեցու դանգերը հնչեցին՝ հայ շինակալներին կանչելով կրոնական սուրբ տոնի ծխակատարությանը: Գավաշի հայ աշխատավորությունը որոշել էր հունվարի

րի 6-ի ծնունդի և հարության սուրբ օրը նշել հանդիսավոր պատարագով:

Ընտանիքներով, խումբ-խումբ շտապում էին եկեղեցի: Մտտենալով մուտքի մոտ դրված խաչքարին, համբուրում, երեսները խաչակնքում, գլուխները խոնարհելով՝ միմյանց ողջունում էին «Քրիստոս հարյավ ի մեռելոց...»:

Եկեղեցին լեփ-լեցուն էր:

Գավաշի հայության կողմից հարգված Աթանանց տեր Հովսեփը իր խմբով գերազանց վարեց հանդիսավոր պատարագը: Հոգեկան հանգստի պահին, ոչ ոք չէր մտածում, որ վերադարձած Խալլի բեյը եկեղեցուց դուրս եկող խաղաղ ժողովրդին կգիմավորի հրաձգային համազարկերով, հենց եկեղեցու մուտքի մաս, եկեղեցու բակում: Հարյուրապետ Իսամի Հասան օղլու հրամանով, զինվորների համազարկից եկեղեցու բակում ընկան տասնյակներ: Հանկարծակիություն, խուճապ, փախուստ, զոհեր, վիրավորներ: Եկեղեցու բակում, ճերմակ ձյան հաստ շերտերը ներկվեցին արյունով: Մանր վիրավորները սառը ձյան վրա դեղում էին: Բարբախտաբար եկեղեցի եկած տղամարդիկ մեծամասամբ զինված էին նոնակներով, մուուզերներով շտապ դիրքավորվելով, սրատասխան կրակ բացեցին: Առաջինը նրանք գետնին գլորեցին հարատ կանգնած, համազարկի հրահանգներով հարյուրապետին: Փոխհրաձգություն լսելով, եկեղեցու բակ հասան գյուղացիները՝ Արամայիսի ղեկավարությամբ: Փաստորեն երկու կողմն էլ համարում ստացավ: Բռնկված թե՛ մարտը շարունակվեց մինչև ուշ երեկո:

Հնգօրյա գյուղամիջյան մարտերից հետո Խալլի բեյի հրամանով, Գավաշում մի տեսակ քողարկված լուսթյուն տիրեց: Թուրքերն ատամները սրած պատրաստվում էին նոր ջարդերի: Վանի նահանգի կուսակալ Զեվդեթ բեյը խիստ հրահանգ էր ավել: «Մինչև մայիս Գավաշում, Հայոց ձորում, Փեսանդաշտում ոչ մի հայ չպիտի լինի»: Եվ ահա ընդմիջումից հետո ավելի վստահելի մի զորամաս, հարյուրապետ Մահմեդի ղեկավարությամբ, ուղարկվեց Բելու գյուղի վրա: Հանձնարարված էր մինչև վերջին մարդը ոչնչացնել, գյուղը հողին հավասարեցնել, տեր Հայրապետին կենդանի տանել: Իսկ Բելու գյուղը, տեր Հայրապետի ղեկավարությամբ, դիրքավորված սպասում էր այդ հարձակմանը:

Եվ ահա սկսվեց կատաղի կռիվը:

Կեօրն անչ էր: Նեղվելով հայերի ուժեղ ինքնապաշտպանութունից, հարյուրապետը իր ուժերը որոշեց կենտրոնացնել արևմտյան թևում և ճեղքելով գիծը, մտնել գյուղ: Տերհայրն իմանալով այդ մասին, մի խումբ կտրիճներով հասավ այնտեղ, երբ մարտն օրհասական էր: Տղամարդկանց հետ կողք կողքի քաջաբար կռվում էին պատանիներ, աղջիկներ, կանայք, ծերունիներ: Եվ շնայած թշնամու գերակշռող ուժերի ճնշմանը, բելուցիները չէին վհատվում, կռվում էին անձնազոհ:

Տերհայրը մի դիրքից մյուսն անցնելով, քաջալիրում էր. «Կռվե՛ք, ջա՛ն տղե՛րք: Կռվե՛նք մեկտեղ, մեռնե՛նք մեկտեղ, մա՛հը մերն է, մե՛նք մահիներ»...

Թուրքերը ամոթ զգալով, որ կազմակերպված զինվորական ջոկատներով չեն կարողանում ճեղքել փոքրաթիվ հայերի պաշտպանութունը և մտնել գյուղ, հաշվի չառնելով զո՛ւրքը, կատաղի կերպով մղվում էին առաջ: Սակայն ապարդյուն. հայերի դիրքերն անառիկ էին:

Երբ իշավ մութը, երկու կողմից էլ հրաձգութունը մեղմացավ և աստիճանաբար դադարեց: Հանգիստն առավել պետք էր հայերին, իրենց ուժերը վերադասավորելու համար: Ուստի տեր Հայրապետը անմիջապես իր մոտ կանչեց տասնապետներ Մինասին, Մկրտիչին, Աղատին, Փանոսին և Սանասարին:

Գոհունակութուն, շնորհակալութուն հայտնելով գերազանց ինքնապաշտպանության համար, ասաց.

— Սահմանե՛ք դիտակետեր, որ թշնամու բոլոր շարժումներին հետևենք: Նրանք վիրավորված են մեր հաջող ինքնապաշտպանութունից, կդիմեն խորամանկութունների, կաշխատեն գաղտագողի անցնել մեր թիկունքը խուճապ առաջացնելու համար:

Ամփոփեցին տասնօրյա անհավասար ծանր մարտերի արդյունքները: Հարևան գյուղերից մի քանիսը թշնամու գերազանցող ուժերի ճնշման տակ թողել էին իրենց գյուղերը, դուրս եկել: Որոշ գյուղեր չէին կարողացել պաշտպանվել, ուժերը քիչ են եղել. թուրքերը պաշարել են, բարբարոսաբար ամբողջովին բնաջնջել: Մանրամասնորեն քննարկեցին անհրաժեշտության դեպքում, գյուղը կազմակերպված թողնելու մասին: Միաձայն հաստատվեց տերհոր կողմից մշակված ծրագիրը: Եվ տասնապետները շտապեցին իրենց դիրքերը:

Գիշեր էր, երբ Աղատի դիրքերից գերիներ բերեցին տեր

Հայրապետի մոտ. պարզվեց, որ թուրքերն ուզում էին ուսումնասիրել հայերի դիրքային դասավորումը: Գերիներից մեկը՝ քուրդ Մխտոն, պատմեց, որ թուրքերը խիստ թշնամաբար են տրամադրված հայերի նկատմամբ. խնդիր է դրված ոչնչացնել գյուղի բոլոր բնակիչներին: Առավոտյան համարման են սպասում, որպեսզի գյուղը լիովին պաշարեն: Նա ասաց նաև, որ մարտը դադարեցվել է երեկոյան ցրտի պատճառով: Բոլոր հայ գերիներին զնդակահարել են: Իրենք տեղափոխված են գյուղի ծայրամասում գրաված տներում: Իսկ օճեբաշին մեզ ուղարկել է հետախուզության:

Տեր Հայրապետը Մխտոնին գիտեր որպես հանրահայտ ավազակի, նրա յոթ եղբայրների հիմնական գրադոճուքը ավազակաբարո թալանն էր, կողոպուտը:

Վերջում նա խոստովանեց, որ կռվին մասնկցում են իր յոթ եղբայրները ավազակախմբով: Խայլի բեյը խոստացել է այս գյուղը նվիրել քրդերին: Գյուղապետ է նշանակվել իր մեծ եղբայրը:

Հետախուզության տվյալները հիմնականում հաստատեցին գերիների պատմածը:

Պաշտպանության խորհուրդը որոշեց՝ օգտագործել հարմար առիթը և գիշերը գյուղից հեռանալ: Տեր Հայրապետի կողքին համեստ ու հեղ նստած էր իր միակ դուստրը՝ գյուղի գեղեցկուհի Անուշը: Նա մարտի հերոսներից մեկն էր: Տեր Հայրապետը գիմելով ներկաներին, ասաց.

— Այսօր լրանում է մեկ տարին, որ Անուշիս նշանել եմ քաջ Սանասարի հետ, որի հայրը երեկ քաջաբար զոհվեց մարտում: Այսօր, բոլորիդ ներկայությամբ նրան եմ հանձնում իր սիրած հարսնացուին. թող մի բարձի ծերանան:

Աղջկա ուրախությանը չափ չկար. իր կտրիճին տիրանալով անբուն գիշերների երազանքը կատարվեց: Տերհայրը զուգի ձեռքերը միացրեց իր կոշտացած ափի մեջ: Մտուզերի հետ կրծքից կախված ոսկյա խաչը դրեց նորապսակների գլխին:

— Սանասար, որդի՛ս, այս հանդիսավոր պահին քեզ տալիս ենք մարտական խնդիր. կնոջդ և Աղատի ջոկատի հետ կազմակերպեք գյուղից դուրս գալը: Ուրիշ ելք չունենք. մենք դիրքերում կմնանք մինչև բնակիչները գյուղից հեռանան:

Սանասարը ծունկ չոքեց, համբուրեց տերհոր ձեռքը որպես շնորհակալության և խոնարհ ծառայելու նշան:

Ներկաները մեկ-մեկ մոտեցան զուգերին շնորհավորեցին, մաղթեցին երջանկություն...

Կազմակերպված, առանց ազմուկի, գյուղը գիշերը դատարկվեց: Մարդիկ խոր կակիծով հրաժեշտ տվին հայրենի օջախին:

Քայլում էր քաջարի գյուղը: Քայլում էր գիշերային խավարի, մթության մեջ, վերավորներին տանում էին շալակած, սահնակների վրա: Քայլում էին տառապած ու սգավոր մայրերը՝ քնաթաթախ մանկիկներին կրծքներին կամ մեղքներին կապած:

Երբ գյուղը լրիվ դատարկ էր, տեր Հայրապետը մտավ իր պապենական տունը. ծնկի եկավ, համրուրեց շեմը, որտեղ տարիներ ի վեր ոտք էին դրել, ներսուղուրս էին արել իր նախնիները:

Վեր բարձրանալով դեմքը խաշակնքեց: Նայեց անտեր, անպաշտպան մնացած իր ժամերգության եկեղեցուն, խորը ա՛խ քաշելով՝ ձեռքերը վեր բարձրացրեց, աղոթեց աստծուն, կրկին խաշակնքեց դեմքը...

Քաջերի գյուղի առաջնորդը տխրազեմ գլուխն առնելով փեռի մեջ, թողեց հայրենի գյուղը: Նրան հետևեցին իր քաջերը:

Անհավասար ուժերի, տևական ծանր մարտերից հետո դատարկվել էին Գավաշը, Մոխրաբերդը, Ընձակ, Վառնեց, Գանձակ և մյուս գյուղերը:

Տնավեր գաղթի ցաքուցրիվ շարասյունները շարժվեցին դեպի Բիթլիս, Կաղզվան, Հայոց ձոր, Փեսանդաշտ:

Բռնազաղթի մարդկային զանգվածները ծով վշտերի մեջ թողնելով հայրենի շեն օջախը, տարիների վաստակը, հազարավոր գլուխ անասուններ դեպի զրկանքների գաղթաշխարհ էին գնում:

Հայկական ջարդեր կազմակերպելուց առաջ թուրքական պետությունը կալանքից ազատել էր թուրք և բուրդ բաշիբոզուկներին, ավազակապետներին, ֆանատիկ մարդասպաններին, գողերին և զինելով նրանց անասնամանափակ արտոնություններով ուղարկել էր մասնակցելու հայկական ջարդերին, հայերին բնօրրանից դուրս անելու:

Այդպիսի գործող բանդայի մի մեծ ջոկատ գլխավորում էր Սեյդր Ալի օղլի բեյի որդի Հաջի Դարիշին, որն 1915 թվականի հունվարին Վանի նահանգապետ Զեվդեթի ցուցումով հարձակման անցավ Հայոց ձորի քսան հայկական գյուղերի վրա: Ավազակները թալանեցին, ավերեցին գյուղերը, տանելով խոշոր և

մանր եղջերավոր անասուններ, մեծ քանակությամբ հացահատիկ, կանոցի զարդեր, մինչև 5 տարեկան երեխաներ, 110 կրնու Մպանեցին ավելի քան 560 հայ:

Հայոց ձորի Աթանա գյուղի վրա փետրվար ամսին հարձակվեց նման մի խումբ. գյուղը տակնուվրա արեցին, տարան թանկարժեք իրեր, հացահատիկ, պահած յուղ, պանիր, հարյուրավոր գլուխ անասուններ, 27 աղջիկ, սպանեցին 105 մարդ: Գյուղը թողնելով ողբի ու կրակի մեջ, հեռացան: Ո՞ւմ կարող էին գիմել, բողբոջել աթանացիները, երբ այդ թալանշիական հարձակման կազմակերպիչը Ոստանի կայմակամ Շուքրի բեյն էր:

Փետրվարի վերջին նույն Շուքրի բեյը կազմակերպեց 7 հարձակում Հայոց ձորի մյուս գյուղերի վրա, որի առաջին զոհաց դարձավ Վանա լճի ափին գտնվող Մովագյուղը: Այն կողպատեղիս սպանեցին 73 հայ և գերության տարան 29 գեղեցկուհի աղջիկներ, 23 մանուկներ:

Ոստան քաղաքի Շուքրի բեյը հեծյալ ջոկատով մարտի ըսկըզբներին հարձակում կազմակերպեց Հայոց ձորի ամենամեծ և հարուստ Պլթենց գյուղի վրա:

Կայմակամը իր ավազակախմբով շատ ինքնավստահ էր. սակայն, դեռ գյուղ չմտած, անսպասելիորեն այգիներից նրանց դիմավորեց հրաձգությունների գնդակների ուժգին տարափը:

Տիգրանի ղեկավարությամբ պլթենցիները ավազակների վրա աւվրեպ կրակու: Հոն հատուկ պատրաստված դիրքերից, ծառերի վրայից: Խուճապի մատնվելով, թուրքերը դիմեցին փախուստի, իրենց հետ տանելով լուրջ վերք ստացած Շուքրի բեյին:

1915-ի մարտի 1-ին, մի՛ կողմից Շուքրի բեյը, մյու՛ս կողմից՝ օնբաշի Ալին, որոնց միացյալ նաև պողվանդից Հուսեին խանը իր 500 հեծյալ զինվորներով, կրկին հարձակվեցին Հայոց ձորի, նորագյուղ, Կղզի, Հնդստան, Մովագյուղ, Աստվածաշեն, Անգեղ, Խարական, Կեմ, Իշխանաձոր, Պլթենց գյուղերի վրա: Ընդ որում, Հուսեին խանին հատուկ հանձնարարություն էր արված՝ Պլթենցը պաշարել և Տիգրանին կենդանի տանել Վանի կուսակալ Զեվդեթին նվեր (հայ քաջորդու գլխի համար մեծ պարգև էր սահմանված):

Ապրիլի վերջերին Տիգրանը, ֆիդայիների խմբով, պաշտպանելով իր ժողովրդին՝ արյունահեղ ջարդերից, մի մասին ուղարկեց Փեսանդաշտ, մյուսներին տարավ Վարազա սարը:

Տիգրանը, 1918-ին հերոսի մահով ընկավ էջմիածնի վրա հարձակված թուրք և բուրդ ավազակների ջախջախման մարտը ղեկավարելիս:

Տիգրանի աճյունը երեք օր դրվեց էջմիածնի ս. Աւագածածին եկեղեցում. էջմիածինցիները Տիգրանի դին հողին հանձնեցին հարգանքով ու պատվով:

Կայնամիրանի ողբերգությունը

1914-ի աշնանը ողջ թուրքիայում տարածված էր պատերազմի լուրը: Ժողովրդի առաջագիմ խավը դժգոհ էր թուրքական պետության իմպերիալիստական պատերազմի մեջ մտնելու ձգտումներից: Համոզված լինելով, որ պատերազմը շատ ծանր կնստի աշխատավոր ժողովրդի վրա:

Երիտթուրքերի կուսակցության պետական գործիչները՝ հետապնդում, հալածում էին ոչ մեծաթիվ ողջախոհ մարդկանց՝ հակապատերազմական հայացքների համար՝ նրանց համարելով որպես թուրք ժողովրդի և պետության վտանգավոր հակառակորդներ:

Երիտթուրքերի կուսակցությունը և նրա կազմած պետությունը շատ էին ոգևորված Գերմանիայի պատերազմական պրոպագանդայով, որոնք թուրքիային խոստանում էին մեծ հաղթանակ:

Մեծ թուրքիայի ստեղծումով պանթուրքիզմն իրականացվում էր բոլոր մահմեդական ցեղերի միացումն թուրքական իշխանության ներքո:

Պատերազմի մեծ հաղթանակի երազանքներով ոգևորված դիսպուտուտի մեջ երիտթուրքերի կուսակցության պարագլուխները շտապելով համարում էին թուրքիայի համար այդ հաղթանակը ապահոված:

Դեռևս պատերազմից էլ առաջ արևմտահայերի ծրագրային ջարդերի հաջողություններից ոգևորված, պետությունն օգտագործելով կրոնական և ազգային տարբերությունները, խիստ սրում էր առանց այդ էլ լարված հայ-թուրքական, քրդական հարաբերությունները. թուրքերին և քրդերին ոտքի էին հանում հայերի դեմ: Թուրքերն իրենք իրենց հերթին արհամարհում էին հայերին, նրանց մարդկային արժանիքները: Կարող էին

հայի հետ վարվել ըստ իրենց քմահաճույքների: Եվ այս վերաբերմունքը քաջալերվում էր իշխանության կողմից...

Այդպիսի բազմաթիվ, ամենօրյա դեպքերից մեկը տեղի էր ունեցել 1914-ի աշնանը մեր Փեսանդաշտի Կայնամիրան գյուղում:

Երեկո էր, երբ Կայնամիրանի ջրաղացներից տուն վերադարձած շորս հառեղցիներ, որոնք ջրաղացպանի հետ դեպքի վայրը գնալով ահանատես էին եղել այդ սարսափելի տեսարանին, պատմեցին իրենց համազլուղացիներին.

— Մենք ինքներս ահանատես էինք,— առաջինը սկսեց մանկությունից որբ մեծացած Սնդանենց Սերոբը:— Այդպիսի անմարդկային գաղանթություն սեփական աչքերով կյանքումս չեմ տեսել: Սիրտ էր պետք, որ դիմանար...

— Երեկ Կայնամիրանցի երկու եղբայր, կանանց և երեխաների հետ սայլի վրա նստած, խոտքաղից ուշ երեկոյան տուն էին վերադառնում: Գյուղից բավականին հեռու, անսպասելիորեն երեք թուրք ձիավոր դինված կտրում են սայլի առջևը: Մաուզերները քաշած տղամարդկանց ստիպում են սայլից ցած իջնել: Տղամարդիկ զգալով, որ վտանգ է սպասվում, տղաներին հասկացնում են, որ մինչ իրենք կզբաղեցնեն թուրքերին, նրանք ծլկեն գյուղ և իմաց տան դեպքի մասին: Ապա իրենք, նստած տեղից բարձրանալով խնդրում են, որ ուսնչպար մարդ են, ընտանիքով խոտհնձից են վերադառնում, թույլ տան՝ ալլահի ողորմածությամբ տուն գնալու:— Դուք էլ խնդրեմ, քնանք մեզ հյուր:

Բայց թուրքերը պահանջում են անմիջապես սայլից իջնել և 50 քայլ հեռու կանգնել: Իբր թե ուզում են ստուգել, թե սայլում թաքցրած զենք կա: Հայ տղամարդիկ դեռ 30 քայլ չհեռացած, թիկունքից կրակում և երկու եղբայրներին գլորում են ճանապարհի վրա: Վախից, սարսափած կանայք սկսում են լացուկոծը, օգնություն կանչում... Ավազակները զենքի ուժով նրանց լռեցնում են և ապա պահանջում սայլից ցած իջնել ու մերկանալ: Ամոթխած կանայք մահ ու սարսափով սայլից իջնում են: Տասնչորս տարեկան պատանի Արտաշեսն առաջանալով, պահապան է կանգնում մորը, հորեղբոր կնոջը և տասնվեցամյա քրոջը:

— Չհամարձակվե՛ք,— թուրքերեն գոչեց պատանին:

— Դե, սատկի՛ր, գյավուրի ճուտ,— ասելով դաշունահարում են պատանուն ու գլորում կանանց ոտքերի առջև...

Պատանի, սակայն խիստ համարձակ ծղիշեն, որը հարմար առիթին սայլից իրեն նետել էր ճանապարհից դուրս, կանաչների մեջ թաքնվել, հեռվից սարսափահար դիտում էր այդ ամենը: Հորեզբոր տղային սպանելուց հետո վախեցած վազում է գյուղ:

Վազում էր անաբեկված, անձնադոհ, քրտնաշաղախ, շնչակտուր, ընկելով փոսերի ու առունների մեջ:

Մութն ընկել էր, գիշեր էր, երբ վշտահար պատանին ուժասպառ մտավ գյուղը: Նա իրեն շկորցնելով, մի անգամ ևս ուժերը հավաքելով, շտապեց գյուղապետ Տերտերյանի տունը:

— Օգնեցե՛ք,— երկու ձեռքերով ամուր հարվածելով փակ դռանը վայր ընկավ:

Դեռևս արթուն գյուղապետը լսելով օգնության, աղերսանքի և դռան հարվածի ձայնը, շտապեց դեպի դուռը: Գրկած, ուժասպառ պատանուն ներս բերեց:

— Օգնեցե՛ք, աղաչում եմ, շո՛ւտ, օգնեցե՛ք, թուրքերը սպանեցին հորս, մորս, բուրին,— դողդոջուն ձայնով ու լացով պատմեց եղելությունը: Պատանուն շրջապատեց գյուղապետի ընտանիքը:

Գյուղապետի շորս տղաները շտապեցին ախոռ և ձիերը երիվարելով թռան դեպի դեպքի վայրը:

Քիչ անց գյուղապետը մեկնեց մի խումբ զինված կտրիճներով...

Երբ նրանք հասան դեպքի վայրը, քարացած կանգ առան դաղանարար սպանված համագյուղացիների դիակների առջև: Երկու կանանց և դեռահաս աղջկա թևերը կապած ճիվաղները բռնաբարել, հետո էլ դաշունահարել, կրծքները կտրել էին, այլանդակել զեմքները: Իսկ նրանց կողքին դրված էին ամուսինների և պատանի՝ Արտաշեսի աճյունը:

Տեսնելով այդ ահավոր, անմարդկային ոճրագործությունը, մարդիկ շվարած, գլուխները խոնարհած, քար կտրած ողորմ էին:

Գիշերային խոր խավարի մեջ հեռվից միայն լսվում էր գայլերի խուլ ուռնոցը: Գյուղի շների պատասխան հաշոցները:

Երիտասարդները հուզված ծնկի իջան համագյուղացիների անմեղ շիրիմների առջև և երգվեցին վրեժ առնել ճիվաղ մար-

գապաններից: Գյուղապետը ոչ միայն հավանություն տվեց, այլև ողջունեց երիտասարդների հայրենասիրական երգումը:

Չինված կտրիճները բաժանվեցին երեք խմբի: Շատախի կողմն ուղևորվեցին հինգ լավ ձիավորներ քաջ ֆիզյալի Սուրենի ղեկավարությամբ, երեքը՝ դեպի Շիդանի ճանապարհը՝ Պատվականի առաջնորդությամբ, երեքն էլ դեպի Չմեն սարի կողմը՝ Մարգարի ղեկավարությամբ: Իսկ գյուղապետը համադուրացիների հետ շրջապատել էր անմեղ զոհերին: Նա խիստ զայրացած գռչեց. «Սա ի՞նչ կարգ է, սա՛ ի՞նչ անօրեն պետություն է, ի՞նչ է լինելու մեր անպաշտպան, անօգնական ժողովրդի վիճակը... Ե՛րբ է մեր հայ շինականը ապրելու խաղաղ»:

Այնուհետև կարգադրեց ծածկել զոհվածների մարմինները և ասաց. — Այստեղ էլ հանդիսավոր կերպով հողին կհանձնենք: Գաբանը գերեզմանի վրա հուշարձան կդնենք, որպեսզի մեր սերունդներն այս ճանապարհով դաշտ աշխատանքի գնալիս, տուն վերադառնալիս գլուխները խոնարհեն անմեղ զոհերի առջև:

Կեղծիչներին ամբողջ գյուղն արթնացել էր: Անընդհատ նորանոր մարդիկ էին գալիս դեպքի վայրը:

— Առավոտը գյուղը խոր լուռության ու նյարդային վիճակի մեջ էր. — շարունակեց պնդակազմ Սնդանեց Սերոբը:

Գյուղի նախիրը դաշտ դուրս չեկավ: Չլավեց անասունների ամենօրյա բառաչը: Չերևացին երգիկներից բարձրացող թոնիրների ծուխը, որոնք գյուղական առավոտի գեղեցկությունն էին:

Կախարդական ծանր լուռության մեջ կարծես թե գյուղն անբնակ լիներ: Միայն հեռվից մեկ-մեկ լսվում էին արջուրների կանչը և շների հաշոցը:

Գյուղացիները՝ թողած իրենց տնային, դաշտային հազար ու մի գործ, խիստ զայրացած ավազակների արարքների դեմ, մեծ թե փոքր, գլուխները կախ, ախրություն մարտնչում էին գեպի դաշտ՝ դեպքի վայրը՝ սգալու, վերջին հրաժեշտն ու հարգանքը մատուցելու բարբարոսաբար սպանված հարազատ համագյուղացիներին:

Վերադարձան Չմեն սարի կողմ գնացողները: Տխոր ու գլուխները կախ զեղուցեցին գյուղապետին, որ իրենք մանրախուլջ փնտրել են, սակայն ցավոք սրտի, ոչ մի հետք չի երևացել:

Քիչ անց վերադարձան նաև Շիդանի և Արտոս լեռան կողմ

մեկնողները, որոնք նույնպես ափսոսանքով զեկուցեցին, որ շարագործների հետքերը չեն գտել:

Բուրբիս հույսը մնացել էր դեպի Շատախ մեկնած Սուրենի խումբը:

Եվ ահա Արտոսի գագաթից բարձրացող արևի առաջին շողերի հետ մարդկանց ուշադրությունը գրավեց Շատախի կողմից, դեռ հեռվից երևացող հեծյալների խումբը:

— Մերո՞նք են,— բացականչելով ոմանք շտապեցին ընդառաջ գնալ:

Ֆիդայի Սուրենի խմբին հաջողվեց գտնել ավազակներին. ավելի ճիշտ, նրանք՝ իրենք էին իրենց մատնել: Գիշերային խավարի մեջ, ձորում հպարտությամբ բարձր խոսելի, երգել էին և ձայնի արձագանքը տարածվել էր ձորում: Հետապնդելով ավազակներին, 100 մետր հեռավորության վրա քաջ ֆիդային բացականչել է.

— Ավբե՞ր եք, կանգ առե՞ք, ձեռքներդ վեր: Եթե ո՛չ, կրակում ենք:

Ավազակները հանկարծակիի գալով շփոթվել են: Վախ զգալով, հետ են նայել, խավարի մեջ կրակել, զգալով որ իրենց հետապնդում են արագացրել են ձիերի ընթացքը, դիմել փախուստի:

Մերոնք ձիերին սանձահարելով հետապնդել են, մոտիկ տարածությունից մի քանի համազարկով երկուսին գլորել ցած, իսկ երրորդը փախել է: Տղաները որոշել են ճարպիկ սատանայի ձիուն խփել, որ չկարողանա փախչել. գոնե մեկին կենդանի տանեն գլուղ, հանձնեն գյուղացիների դատաստանին: Այդպես էլ անում են: Ձիուն խփում են, իսկ մարդասպանը մոտակա քարայրում թաքնվում է: Լուսաբացին հաջողվում է ներան կենդանի բռնել:

Սպանված մարդասպաններին կապելով ձիու վրա, իսկ կենդանի բռնվածին՝ մյուս ձիու վրա, վերադառնում են:

Համազուղացիները ըստ արժանվույն դիմավորեցին քաջերին: Գյուղապետը ընդառաջ զնալով հինգ կտրիճներին մեկ-մեկ գրկեց, ճակատները համբուրեց, քաջալերեց նրանց:

Կենդանի բերված մարդասպանի կապանքներն արձակեցին: Նա ձիուց վայր ընկնելով, թաթերի վրա սողաց դեպի իրեն եկող զայրացած գյուղացիները ու սկսեց աղերսել՝ թողություն խնդրել: Ձեռքերը վեր ալահից օգնություն էր խնդրում. «Աղաչո՛ւմ

եմ, ներող եղեք, Հուսեին աղայի միսուճար տղան եմ, ինձ բաշխեցեք ձերունի հորս, բարի մարդիկ...»:

Անձամբ ճիվաղի կեղծ աղերսանքը զայրացրեց գյուղացիներին: Յուրաքանչյուրը պատրաստ էր իր ուղչ ուժով մատներով անդմեջ նրա կոկորդը: Չարագործները Գավաշի ջարդերին մասնակցած, բանտից ազատված ֆանատիկ մարդասպաններից էին և տուն չէին վերադառնում խուրջիները լի թալանով:

Գյուղապետը բորբոքված ժողովրդի տրամադրությունը հաշվե առնելով, հարցաքննեց մարդասպանին, ապա կարչադրեց. «Տարք հեռու, Փեսանդաշտի հողից դուրս, սրան էլ շանսատակ արեք: Երեքին էլ կորցրեք այնպես, որպեսզի ոչ մի հետք չերեզնայ»:

— Մրա վերջն ի՞նչ է լինելու,— ստեղծված իրավիճակը խղեց քաջ երիտասարդ Նշանենց Արշուն:

— Մենք հանցավո՞ր ենք, որ ծնվել ապրում ենք մեր հոգում և հայ քրիստոնյա ենք: Մեր հայրենի երկիրը զավթել են, մեզ գրկանքների մեջ են պահում, հիմա էլ ուզում են բնաջնջել: Մինչև ե՞րբ պետք է լռենք:

Գյուղապետ Գալուստ Պետրոսյանը, սրտացավ նայեց հաժվաբար համազուղացիներին, ապա զարձայլ երիտասարդ Գավթին.

— Դավիթ, որդիս,— ասաց նա, — շտապի՛ր ընկերներիդ հետ Շիրան և Կաղազիզ, գյուղացիներին իմաց տուր: Վաղը զնալու ենք Կայնամիրան՝ մեր եղբայրական ցավակցությունը հայտնելու, թաղմանը մասնակցելու:

Առավոտյան Գալուստի գլխավորությամբ, մոտ երեսուն հոգի, մեկնեցին Կայնամիրան՝ զոհվածների հարազատների համար տանելով նաև իրենց եղբայրական օգնությունը: Մարդիկ եկան նաև մյուս գյուղերից՝ գյուղապետների գլխավորությամբ, որոնք նույնպես ըստ ազգային սովորության իրենց ունեցածից բաժին բերեցին զոհվածների հարազատների համար:

Կեսօր էր: Գյուղական եկեղեցին լեփվեցուն էր: Ավագ երեքսի գլխավորությամբ ավարտվեց անմեղ զոհերի սգո պատարագը: Դաղկազարդված աճյունները ուսներին դրած թաղման թափոքը շարժվում էր դեպի արյունոտ դաշտը: Նույն տեղում հոգնե հանձնելու երկու երիտասարդ հայ քնտանիքին:

Թափոքի առջևից գնում էին պատարագային համազգեստով անհայրերը, ձեռքներին արևի շողերի տակ փայլատակող

սուրբ խաչեր, իսկ կողքերից՝ խնկարույր բուրվառները ձեռքներին սարկավազները:

Նրանցից հետո՝ գյուղապետների և մեծամեծների շարքը, ապա՝ ամբողջ հասարակությունը: Քայլում էին դանդաղ, ծանր, լռութեամբ: Միայն լսվում էր տերհայրերի աղոթքի և կենաց ողբի ձայնը: Տեղ հասնելուն պես սկսեցին թաղման սգո ծիսակատարությունը: Գերեզմաններում, ծնողների աճյունների մեջտեղում, դրեցին քաջ պատանի Արտաշեսի և Նազելի աղջկա աճյունները:

Սոսկալի ծանր էր ծնողների և քրոջ աճյունների վրա ողբացող պատանի Եղիշի վիճակը, որը տակավին պատանի հասակից որբացավ: Նրա լացը, ողբալի ճիւղերը շարժում էին վշտից բարացածների սրտերը: Ոչ մեկի մտքով չէր անցնում, որ ոչտունեցի պատանի Եղիշին 31 տարի հետո, որպես կապիտան Հայկական զինվորի հաղթական շարքում կմտնի Բեռլին:

Տերհայրերը, սարկավազները աղոթք կարդացին, հայր մերն աղոթեցին, օրհնեցին գերեզմանները, անեծքի խոսքեր ասացին շարագործների հասցեին, եղբայրություն, խաղաղություն եամեցան աշխարհին: Բուրվառներից և գերեզմաններին ծխացող խունկերից բարձրացող կանաչակապտավուն ծուխը բուլաբուլա բարձրանալով, ասես մերվում էր խաղաղ երկրում, բուրավետ հոտով հոգեկան մխիթարություն պատճառում ամենքին: Բոլոր ներկաները դաշտից քաղած ծաղկեփնջեր դրեցին գերեզմանների վրա, իսկ պատանիներն ու աղջիկները՝ սարի գույնզգույն ծաղիկներից մեծ պսակներով զարդարեցին զոհվածներն: Չէրեզմանները: Կանաչ դաշտում բարձրացել էր ծաղկեփնջի բուրգեր:

Չարագործների ձեռքով սպանվածների թաղման արարողությունը վերածվեց կազմակերպված բողոքի ցույցի՝ ուղղված տիրող կարգերի դեմ:

Հոգևոր ծիսակատարությունից հետո խոսեցին գյուղապետները, խոր ցավակցություն հայտնեցին զոհվածների հարազատներին: Զայրույթի խոսքեր ասացին սուլթանական բռնակալության, պատերազմի, ազգային խտրականության դեմ:

Հուղարկավորությունից հետո ազգային առաքինությամբ մեծ ճաշկերույթ տվեց գյուղապետը: Ծաղկերույթից հետո մեծամեծները հավաքվեցին օղայում: Տեղի ունեցավ խիստ գաղտնի կարևոր խորհրդակցություն, որտեղ քննարկվեցին թուրքա-

կան պետության կազմակերպած հայկական կոտորածներին՝ Գավաշի, Հայոց ձորի, Շատախի դեպքերը, ներգաղթի և ինքնազաշտանության պատրաստվելու հարցերը: Վերջում ելույթ ունեցավ Վանից նոր վերադարձած հանդիցի Ասքանազը (Ասքան): Մանրթացնելով Վանի իրադրություններին, նա ասաց.

— Վայրագ թուրքերը օգտվելով, որ խոշոր պետությունները պատերազմի մեջ են, կազմակերպել են կանխամտածված հայկական ջարդեր: Մեր միակ փրկությունն այն է, որ մեր քաջ նախնիների օրինակով, միաձույլ ոտքի ելնենք ինքնապաշտպանության: Մեր հարազատ անանցանելի բարձրագույն լեռները նույնպես կանգնած են մեզ ուշապան: Թուրքերը մեր փոքրիկ երկիրը կարող են մտնել միայն երկու կողմից: Հայոց ձորից՝ Բարազողդիկի լեռնային ճանապարհով և Կարաբողջակի լեռնանցքով: Մենք փորձ ունենք և կարող ենք երկու կողմերում էլ ամուր դիրքավորել ինչպես 1895, 1896, 1898 թվականի կոտորածների ժամանակ պետք է ամուր ինքնապաշտպանությամբ ձախողել մեզ վրա հարձակումը և թուրքական զորամասերին ստիպել մեծաթիվ կորուստներով նահանջել: Այդ հույսով էլ այսօր մեզ մոտ ապաստան են գտել Գավաշից, Հայոց ձորից, Շատախից, Թիմարից ավելի քան 20.000 հայ փախչողականներ, որոնք հիմնականում կանայք, երեխաներ և ծերեր են: Չնայած մի քանի անգամ շատ են, քան տեղի բնակիչները, սակայն մեր բարերար գյուղապետները բոլորին տեղավորել են մեր ընտանիքներում, միասին սիրով ապրում ենք, մի բրդուն հացը հավասար կիսում ինչպես եղբայրներ:

Պա ցույց է տալիս մեր միասնությունը: Եղբայրներ, մեր միակ փրկությունը ներգաղթած եղբայրների և քույրերի հետ միասնական ուժերով պայքարի ելնելն է: Պաշտպանելու մեր հողը անարգ թշնամուց, որի համար մեզ անհրաժեշտ է զինվել, զինվել, դարձյալ զինվել: Զենքը մեզ պայքարելու ուժ է տալիս պաշտպանելու մեր սուրբ հողը, մեր հավատը, մեր լեզուն: Չնայած մեզ սպասում են շատ դժվարություններ, սակայն միասնական ուժերով մենք կհաղթենք բոլոր դժվարությունները: Դրսից օգնության ոչ մի հույս չկա: Ես հավատում եմ իմ ժողովրդի միասնությանը, նրա ուժին:

Մենք՝ Շատախի, Փեսանդաշտի և Հայոց ձորի զավակներս, փորձված զինվորական Խարականդի Լևոնի ղեկավարությամբ

անարգ թշնամու դեմ կկռվենք քաջի պես մինչև վերջին շունչը, բայց թուրքին անձնատուր չենք լինի:

Տեր Պողոսը ոտքի ելնելով ասաց.

— Ես, պաշտպանում եմ Ասքանազի առաջարկությունները՝ Մենք այն կրնգունենք որպես մեր գործունեության ծրագիրն: Առաջարկում եմ հիմա ընտրել մեր պաշտպանությանը ղեկավարման գործարար մարմին և նրան տալ անսահմանափակ իրավունքներ Ասքանազի ղեկավարությամբ: Նա մեր խելամիտ հարգված, բանիմաց, հայագոյապահպանմանը նվիրված երիտասարդ է: Ավարտել է Վանի դպրոցը, հարյուրապետի պաշտոնով ծառայել է թուրքական բանակում, հիմա էլ մեզ հետ է:

Փեսանդաշտի պաշտպանության գործարար մարմնում ընտրվեցին շորս գյուղապետներ՝ տեր Պողոսը, Ներսեսը՝ Ասքանազի ղեկավարությամբ: Գյուղապետներին հանձնարարվեց շսապ կազմել ունեորների ցուցակը և նրանցից հավաքած գումարներով զենք ու փամփուշտ ձեռք բերել: Պատասխանատու անձ ճանաչվեցին Ներսեսն ու դարբին Խաչիկը: Որոշվեց զենք վերցնող տղամարդկանց ցուցակագրել և բանակում ծառայողների օգնությամբ կազմակերպել նրանց զինուսուցումը:

Լուծվեցին այլ հարցերը: Ավագ երեցի առաջարկությամբ սպա բոլորը ոտքի ելան, Ավետարանի և խաչի առջև երգվեցին, որ հավատարիմ կմնան միասնությանը: Ասքանազին ընտրված պաշտոնում օրհնելիս տեր Պողոսն ասաց.

— Որդիս, աստծո օրհնանքը վրադ, կամենում եմ քեզ արիություն և կամք: Սուրբ Վարդան Մամիկոնյանը քեզ հովանի: Առաջնորդի՛ր ժողովրդին՝ կա՛մ մահ, կա՛մ ազատություն:

Ասքանազը ծնկի իջավ, համբուրեց Ավետարանը, խաչը և ասաց.

— Երգվում եմ, ինձ տված այս մեկ կյանքը հորս օրինակով նվիրել իմ տառապյալ ժողովրդի ազատագրմանը:

Բոլորը ոտնկայս ողջունեցին և շնորհավորեցին Ասքանազին:

Պաշտպանության մարմինը կոչ ընդունեց ուղղված իր ժողովրդին, որում ասված էր.

«... Թանկագին հայրեր ու մայրեր, բույրեր և եղբայրներ, թուրքերը որոշել են մեզ բնաջնջել մեր պապենական օջախի մեջ:

Օրհասական այս սհեղ պահին մեր ժողովրդի կամքով դիմում ենք ինքնապաշտպանության, ոչ միայն մեր հայրենի երկրքը, պապենական սուրբ օջախը, մեր կանանց ու երեխաներին պաշտպանելու անարգ թշնամուց, այլև պայքարում ենք թուրքական ստրկությունից ազատվելու համար, արգարության համար, կեցցե՛ ազատությունը»:

Բոլոր գյուղերի եկեղեցիների կիրակնօրյա պատարագներում հանդիսավոր կարգով ընթերցեցին պաշտպանության խորհրդի կոչը և ընդունեցին միաբան, բուռն ծափահարություններով:

ՓԵՍԱՆԴԱՇՏԸ ՊԱՇԱՐՎԱԾ ԷՐ

Երբ էլ ճար շունեմ, օրի եմ գիմում,
Մեմ մեր ճայրեմի ճողմ եմ պաշտպանում.
Ընդդեմ մեզ ճնշող աճարգ բռնաբան
Պաշտպանում եմ մեր կիմ ու երկխան:
Ի. Ֆ. ՇԻՒԼԵՐ

Հայոց մեծագույն ողբերգության տարիների պաշտպանողական հերոսամարտերից էր նաև պաշարված Փեսանդաշտի քաղաքի գոտեմարտը, որի մասին, սակայն, յոթ ու կես տասնամյակ ոչ մի տեղ չի հիշատակվել: Հայկական այդ փոքր օջախը, ամփոփված լինելով տոհմական սովորություններով, կտրված արտաքին աշխարհից, իր հավաքականության շնորհիվ շուրջ մեկ ամիս, անհավասար ուժերի ծանր պայմաններում, ցուցաբերեց թուրքական բռնակալությունից ազատագրվելու բուռն ցանկություններ: Եվ այդ դուրսագնամարտը բնական էր, օրինաչափ ինչպես ամեն մի ինքնապաշտպանություն, որի շնորհիվ Շատախից, Գավաշից, Թիմարից, Հայոց ձորից, Փեսանդաշտից շուրջ 30.000 հայեր փրկվեցին բնաջնջումից:

Ռշտունյաց զեղատեսիլ լեռնաշխարհում այդ տարի սովորականից վաղ էր սկսվել զարուհ: Մարերի զագաթներից իջնում էին ձնհալի՝ կարկաչող առուները: Գարնան արևն իր ջրմուխով արթնացրել և նոր շունչ էր տվել դաշտավայրերին, հարուստ բուսական, կենդանական աշխարհին: Ամենուր սպիտակին էր տալիս ձնծաղիկը, կապույտ մանուշակը իր բուրմունքով, գլուխը հանում էր թփերի տակից: Փարն աճում ջերմացել, ծածկվել էր կանաչով, կակաչով:

Արթնացող հողը դաշտ էր կանչում իր բարերար աշխատավորին, վաղնչական ժամանակներից այդտեղ ապրող հայ շինականին. գութանի, արորի մաճը բռնողին, եղների լծին Երստող «հորովիլ ջա՛ն» երգողին, ակոսի մեջ սուրբ հատիկը գցող բարերարին, արտվորին հաց տանող գեղջկուհիներին: Հովվի սրնգի նվագի տակ ուխարները սարի լանջերին անուշ արոտ էին անում: Մկավիլ էր գործարար գլուղի զարանային եռուզեռու: Սակայն այն վրդովվեց պատերազմի բռնով: Մկավեց առա-

ջին համաշխարհայինը, աշխատավորին ոտքի հանեց աշխատավորի դեմ: Արյունահեղություն, ավեր ու մահեր:

Թուրքական պետության գլուխ կանգնած երիտթուրքերի կուսակցությունն օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ստեղծված նպաստավոր պայմաններից կայզերական Գերմանիայի ակտիվ հովանավորությամբ, Օսմանյան կայսրության ողջ տարածքի վրա, նախօրոք 16—52 տարեկան 400.000 հայ աղամարդկանց լրիվ զորահավաքի անվան տակ տարան խումբ-խումբ սպանեցին, ոչնչացրեցին, հետո կազմակերպեց XX դարի առաջին, խոշորագույն եղեռնը՝ հայերի զանգվածային կոտորածները: Մի ահավոր ցեղասպանություն, որ հանկարծակիի բերելով ալեկոծեց, ցնցեց հայ ժողովրդին: Մրազրված կարգով, գազանային շարություններով թուրքական զորամասերը, ոստիկանական ջոկատները հարձակման անցան Կ. Պոլսի, Կիլիկիայի, Ադանայի, Հալեպի, Տիգրանակերտի, Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Տրապիզոնի նահանգներից մինչև Պարսկաստանի սահմանը:

Փեսանդաշտցիներն էլ տեղյակ էին այդ ամենին, աշխարհի անցուղարձին, նրա բնտրված պաշտպանության խորհուրդը եռանդուն գործում էր օգնության եկած խարկանցի Լևոնի ղեկավարությամբ:

Բարադողիկի հերոսամարտը

Շատախի և Փեսանդաշտի ջարդերը սկսվել էին վանից 8—10 օր շուտ: Փեսանդաշտցիները Գավաշի դեպքերից դաս առնելով, օգտագործելով իրենց բարձրագիր լեռների նպաստավոր դիրքը, ձեռնամուխ եղան համաժողովրդական ակտիվ ինքնապաշտպանության և դիրքավորված սպասում էին թուրքերի և քրդերի հարձակմանը: Նրանք որոշել էին մահու և կենաց ճատամարտ տալ:

Գարնանային առավոտ էր: Արևի ճառագայթներն իջել էին Բարադողիկի զագաթին, ջերմացրել խրամատներում գիշերը կեսբուն-կեսարթուն անցկացրած հայ կամավորներին: Նրանք վաղ նախաճաշեցին՝ կերան հատուկ պատրաստված համեղ ուտելիքներ, վերջին անգամ ստուգեցին ու կարգի բերեցին զենքերը: Հանգստյան պահերը անց էին կախում զրույցներով, հուշեր, պատմելով: Շիբանցի Նավասարդը, 46-ն անց, պնդա-

կազմ մի հայ, որ 11 երեխայի հայր էր, մարտական ընկերներին պատմեց մի թռչունի մայրական պարտքի անձնազոհ կատարման դեպքի մասին:

— Նախանցյալ տարի էր,— շեկիկ բեղերը ոլորելով սկսեց նա,— գարնանային անձրևներից սարերում խոտը լավ էր աճել: Մի օր, գերանդին ուսիս, հացի դաստախունը վրայից կախած, բարձրացա մոտիկ սարը ու սկսեցի խոտ հնձել: Հնձածս առատ խոտի բուրմունքը տրամադրությունս բարձրացրեց, ես ինձ թեթև էի զգում: Մերթ-մերթ այս ու այն կողմից, խոտերի միջից, փախչում էին նապաստակներ, թռչում էին լորեր: Մեկ էլ տեսա մի վայրի մեծ թռչուն՝ թևերը փած, թուխս է նստած: Հրնձելով մոտեցա նրան: Նա գլուխը բարձրացրեց, լարված հայացքն ուղղեց ինձ՝ պատրաստ գոյամարտի:

Մի թեթև վախի պես բան զգացի և զգուշացա: Ինձ ուղղակի դուր եկավ այդ թռչունի համարձակությունը: Որոշեցի հարզել մայր թռչունին, չնեղացնել, որպեսզի նա հանգիստ իր մայրական մեծ պարտքը կատարի: Նրա շրջակա խոտը չհնձեցի: Առաջ անցա, նրան թողնելով իր ընտրած տեղում հանգիստ, խոտերի մեջ քողարկված:

Հաջորդ օրը, առավոտյան հնձի գալով հետաքրքրվեցի մայրական պարտքը կատարող թռչունով: Նա իր տեղում էր՝ խոտերի մեջ քողարկված: Բնականորեն նա իմ մեջ դեպի իրեն հարգանք առաջացրեց: Այդ տպավորությամբ էլ անցա իմ գործին:

Իրիկնաժամ էր, հնձածս խոտը խորձեր կապեցի, հավաքեցի, մի բանի դեզ դրեցի: Ուշ էր: Առանց թռչունին նայելու եկա տուն:

Անցել էին օրեր: Ես ու փոքր եղբայրս՝ Արտաշեսը, սալլերով գնացինք հնձած խոտը բժրելու: Ճանապարհին եղբորս պատմեցի թռչունի մասին: Նրա մեջ էլ հետաքրքրություն առաջացավ և սայլերն ուղղեցինք նրա կողմը: Եվ ի՞նչ, զարմանք պատեց մեզ:

Թռչունի բնին դեռ չհասած, 10—15 քայլ հեռավորությամբ մի մեծ օձ քրքրված մարմնով սատկած էր: Իսկ իր բնին ավելի մոտիկ անշնչացած, խոշոր թևերը լայն փռած ընկած էր հերոսաբար զոհված մայր թռչունը: Մոտից ավ զգացինք: Մոտեցանք շատ խնամքով պատրաստված բնին. դատարկ էր: Տեսանք մի բանի փոքր բմբուլներ...

Արիասիրտ թռչունն իր կյանքի գնով փրկել էր փոքրիկ ձագուկներին:

Որոշեցինք անձնազոհ մայր թռչունին թաղել հողի մեջ, իր բնի մոտ: Մի մեծ քար կանգնեցրինք վրան: Ամբողջ օրը մեր խոսակցությունը բնության մեծ օրենքի՝ սիրո, սերունդների պահպանման, գոյատևման պայքարի մասին էր...

Երեկոյան, երբ խոտ բարձած սայլերով տուն էինք վերադառնում, եղբայրս ուրախ-ուրախ կանչեց, եղբայր, մի նայիր թռչնաքարի կողմը: Ես շուտ եկա, ուրախությունս անսահման էր. չորս փոքրիկ ձագուկ, որ նոր էին սովորել ինքնուրույն թռչել և ապրել, թառել էին մեր դրած քարին: Թևերը թափահարելով ծլվլում էին, ասես, իրենց մոր նկատմամբ մեր վերաբերմունքի համար մեզ շնորհակալություն էին հայտնում: Ուրախ տրամադրությամբ վերադարձանք տուն: Գրանից հետո ամեն անգամ, երբ անցնում եմ այդ կողմով, միշտ էլ հանդիպում եմ թռչունի հուշաքարին, հիշում մայր թռչունի անձնազոհությունը:

Նավասարդը նայելով իր մարտական ընկերներին, որոնց թռչունի անձնազոհությունը դուր էր եկել, մի պահ լռելուց հետո շարունակեց.

— Իմ հարազատ եղբայրներ, այդպիսին է կյանքի օրենքը: Կյանքը պայքար է, մեր բոլորի՝ ինչպես կենդանիների, այնպես էլ մեզ համար: Մենք էլ այս օրհասական պահին կամավոր եկել ենք այստեղ մեր պապենական սուրբ օջախ մեր բույնը, մեր տունը, մեր ընտանիքին, մեր ձագուկներին անձնուրաց պաշտպանելու համար, որպեսզի անարգ թշնամին չավերի, սրի չքաշի, չսպանի մեր սերունդներին... Ուրեմն կովենք քաջի սրբառով, մեկը՝ բոլորի համար, բոլորս՝ մեկի, ինչպես միշտ կովել են մեր արիասիրտ նախնիները:

Հայ կամավորները, որ ուշադրությամբ լսում էին Նավասարդին և հուզվել էին, միացան նրա մարտական կոչին՝ կրո՞վենք, կովենք մինչև վերջ:

Ասքանազը գավառացի Կիրակոսյանի հետ Շահրուրա բնական բերդում հանգստացող մարտիկների մոտից եկավ հրամանատարական կետը, ուր սպասում էին ջոկատների հրամանատարները, մատակարարման գործը ղեկավարող տեր Հովսեփը և բուժգործի ղեկավար՝ նրա ուսուցչուհի աղջիկը՝ Գայանեն: Այստեղ ուշադիր լսեցին և քննարկեցին հետախույզների գնակությունները, մշակեցին սպասվելիք մարտի ծրագիրը:

— Եղբայրներ,— ամփոփելով խորհրդակցութիւնը,— աւաց Ասքանազը, հավանական է վաղը կլինի մեր առաջին և ծանր մարտը: Մենք ինքներս պետք է պաշտպանենք մեր փոքրիկ երկիրը, օգնութեան ոչ մի հույս չունենք, նահանջելու տեղ էլ չկա, հետևում մեր հայրենի սուրբ օջախն է, մեր ծնողներն են, մեր կանայք, մեր բույրերը, մեր երեխաները: Պատկերացնում եք, թե ինչ կլինի, եթե անարգ թուրքը մտնի մեր օջախը: Ուստի մեր մարտական խնդիրն է՝ կովել արիաբար, միայն ու միայն հաղթանակի հույսով: Ոչ միայն պետք է կասեցնենք թշնամու հարձակումը, այլև նրան ստիպենք մեծաթիվ կորուստներով նահանջել:— Բաճկոնի գրպանից հանելով արծաթափայլ ժամացույցը, շարունակեց.— Մեկնե՛ք ձեր ջոկատները, լավ պատրաստվեք առաջին ճակատամարտին: Իսկ լավ նախապատրաստված մարտի ելնելը հաղթանակի գրավականն է: Կգործեք ըստ ձեր մարտական խնդիրների, կարիքի դեպքում, խաչաձև կրակով միմյանց կօգնեք: Դե՛, եղբայրներ, հուսով եմ, որ ամեն ինչ հաջող կընթանա:

Բոլորը մեկնեցին իրենց տեղերը:

Վաղ արշալույսին դիտակետից շտապ Լեոնին և Ասքանազին կանչեցին: Տեսան, որ հակառակորդը մեծաթիվ զորքերով, լայն ճակատով անցնում է հարձակման. սողալով շարժվում էին սարն ի վեր: Գերիշխող դիտակետից պարզ երևում էր ողջ ռազմադաշտը: Երբ հակառակորդի զորամասերը հասան հրաձգութեան տարածքին, Ասքանազը ոտքի կանգնեց, բառնցքները սեղմված ձեռքը վեր բարձրացրեց և բարձրաձայն հրամայեց.

— Ի՛մ քաջ եղբայրներ, ահա և եկավ խիզախելու ժամը, ձե՛զ տեսնեմ, հայոց խիզախներ, հանուն մեր ազատագրման անընդմեջ կրա՛կ հարձակվող զորքերի վրա. մա՛հ բռնակալ թուրքերին:

Բռնկվեց հրաձգային որոտը, նռնակների պայթյունները: Առաջին իսկ համազարկից մարտը թեժացավ: Այդպես լարված շարունակվեց ամբողջ օրը, մինչև ուշ երեկո: Հայ կամավորներին ոգեշնչում էր հայրենիքի և ժողովրդի հանդեպ իրենց պարտքի զգացումը: Ավելի ծանր մարտեր էր մղում Մանուկի ջոկատը: Թշնամին այդ ուղղութեամբ մեծ ուժ էր կենտրոնացրել: Չնայած զոհերին, ամեն կերպ ձգտում էր առաջ շարժվել: Մանուկը ձախ թևից վիրավորված էր և ցավ էր դգում, սե-

կայն ոչ ոք այդ մասին չգիտեր: Նա մարտը ղեկավարում էր անձնվեր, իր օրինակով ոգևորում մարտիկներին:

— Կրակե՛ք, տղերք. կրակե՛ք, քաջե՛ր ջան, մահը մեզ համար անմահութիւնն է:

Թուրքական հրամանատարութեանը զարմացրեց հայերի կազմակերպված ամուր պաշտպանութիւնը: Ռազմադաշտի վրա գերիշխող, անառիկ դիրքերից իջնող գնդակների տարափը փակում էր թուրքերի առաջխաղացման ուղիները: Նրանց տակառիկական փոփոխութիւններն արդյունք չէին տալիս: Ուստի որոշեցին գրոհները դադարեցնել: Երեկոյան հրաձգութիւնը աստիճանաբար մեղմացավ: Մութն ընկնելիս ռազմի դաշտում թողնելով զոհվածներին, ծանր վիրավորներին, թուրքերը հետ քաշվեցին:

Բարադողիկի գագաթին գարնանային մեղմ քամի էր: Չվոզ ամպերի տակից մերթ ընդ մերթ փայլատակում էր կիսալուսինը: Հայ կամավորներին հանգիստ տրվեց՝ առաջին մարտի հաջողութեանց հետո առաջին հանգիստը: Ասքանազը այցելեց խրամատները: Մարտիկներին ուրախ ողջունեց, գովեստի խոսքերով քաջալերեց: Չորրորդ ջոկատում հանգստացող մարտիկների համար Դավիթը երգում էր Փեսանդաշտի սարերին նվիրված իր հորինած հայրենասիրական երգը:

Հե՛յ ջա՛ն սարեր հայրենի:

Ջարկե՛նք մեզ ցավ պատճառողին,

Կովե՛նք անվախ, մեռնե՛նք անվախ

Ջավակներս, Հայոց աշխարհի...

Ուրախ տրամադրութիւնների մեջ զենքեր մաքրող մարտիկներին ջերմ ողջունեցին հրամանատարները:

Հանկարծ քարակոփ ձորից ձայներ լսվեցին: Անմիջապես հետախուզվեց ուղարկվեցին: Պարզվեց, որ թշնամու մի չոկատ ձգտում է բարձրանալ սարնիվեր՝ թիկունքից: Ասքանազը դրան չէր սպասում: Նա Ջանոյնց Մեսրոպի ղեկավարութեամբ մի խումբ ուղարկեց քարայրի գագաթը և կարգադրեց քարեր վրորել: «Քարաբաղնիք» սարքի վեր մագլցող թշնամու գլխին: — Աշխատեցեք խոշոր քարեր վրորել: Նրանք էլ ճանապարհին իրենց հետ քարեր կտանեն:

Մի քանի րոպե անց քարերի ահավոր տարափ էր իջնում ցած, վեր սողացող թուրք զինվորների գլխին: Թշնամին խու-

ճապի մատնված, սկսեց փախչել, թողնելով դիակներ, զենքեր, զինասարք:

Խափանվեց թիկունքն անցնելու թուրքերի առաջին փորձը ևս:

Թուրքերի նահանջից հետո քարայրից վերադարձող մարտիկներն իրենց հետ բերեցին բավականին քանակությամբ գերմանական նոր հրացաններ և փամփուշտներ:

Ասքանազը ողջունեց մարտիկներին և Ջանոյեցի Մեսրոպին, յուրաքանչյուրին նվիրեց մեկական հրացան: Իսկ մնացածը բաժանեց ջոկատներին: Հաջորդ երեք օրերին մարտերը լուրջ ընդլսթ չկրեցին: Չորրորդ օրը վաղ արշալույսին, երբ լույսը դեռ չէր բացվել, դիտակետից հայտնեցին, որ թշնամին շարժվում է առաջ:

Ասքանազը և Մեսրոպը շտապեցին դիտակետը:

Պարզ եոևում էր հակառկորդի լայն ճակատով հարձակումը: Մեկ-մեկ երևում էին նաև հրամանատարները, որ քաջալերում էին զինվորներին առաջ շարժվել, հարձակվել: Սակայն մահվան սարսափը կաշկանդել էր հրոսակներին, որոնք սիրում էին անզեն ու անպաշտպան մարդկանց սպանել: Թուրքական բանակի հրամանատարությունը սխալվել էր արհամարհելով փոքրաթիվ փեսանդաշտցիներին: Հայերի ուժը միայն գեցիշխող դիրքերի մեջ չէր, այլև՝ կուռ միասնություն, նախնիների օրինակով կռվելու, արիություն: Նրանք գիտեին, թե հանուն ինչի են կռվում, հանուն ինչի են մեռնելու...

Կեսօրին մարտը վերստին թեժացավ. թշնամին հարձակման տակտիկան փոփոխելով ամեն կերպ ձգտում էր առաջ անցնել: Հիմնական ուժերն ուղղվել էին դեպի աջ և ձախ թևերը: Իսկ հայերը կռահելով նրանց մտադրությունը, գերիշխող դիրքերից դիպուկ կրակոցներով պարզապես հնձում էին ինքնավստահ առաջ շարժվող զինվորներին: Նորից անհաջողությունից ստիպված թշնամին աստիճանաբար մեղմացրեց հարձակումները: Ուշ երեկոյան դադարեցին մարտական գործողությունները և թուրքերը նահանջեցին ելման կետը՝ գիշերային հանգստի:

Փեսանդաշտցիները խելամտորեն, կազմակերպված, ակտիվ պաշտպանողական մարտերով կանխում էին ահեղ թշնամու հարձակումը: Հրաձգությունների որոտից, Ռշտունյաց աշխարհի գմբուխտ սարերում բուն դրած բազմատեսակ թռչունները, կենդանիները թողնում ու հեռանում էին իրենց բներից: Է՛լ չէր լսվում թռչունների երգն ու դալլալը: Ռբբացան կանաչ, ուրախ

աբերը: Հաջողությունը հայերի կողմն էր, բայց հաղթանակը ձեռք էր բերվում կորուսաներով: Ուժերը հյուժվում էին: Մարտի արդյունքները քննարկելուց, ուժերը վերադասավորելուց հետո որոշեցին կնխելով ընդհանուր ծանր կացությունից, Մանուկին շտապ ուղարկել գյուղերը. օժանդակ ուժեր բերելու համար, այն էլ՝ շատ շտապ:

Մանուկը գիտակցելով խնդրի մեծ նշանակությունը, հաղթահարելով ճանապարհի դժվարությունները, շտապում էր արշալույսին հասնել Հառեղ: Առաջին արյուրականլին հեծյալ ասպետը մտավ գյուղ:

Մանուկը Ասքանազի մանկությունն ընկերն էր նաև հորեղբոր որդին: Երկուսն էլ մանուկ հասակում թուրքի ձեռքով հորից որբացել էին: Հիմա Մանուկը երեսունը չլրացրած տղամարդ էր՝ ամրակազմ, գործունյա, խիստ համարձակ, լայնաթիկունք, միջին հասակից քիչ բարձր, թխալյա, սև բեղերով, շիտակ բնավորությամբ: Չնայած նրա կրթական ցածր մակարդակին, բանիմաց էր, կիրթ, զինվորական գործի քաջ գիտակ և մեծ հայրենասեր:

Ներսեսը մանկությունից հոգ էր տարել, սիրել, գուրգուտանելով մեծացրել, եղբոր որդիներին: Նա միշտ մեծ զոհունակությամբ, հպարտությամբ խոսում էր իր մեծ տոհմի այդ երկու առեանավայել նրիտասարդների մասին:

Արտաքուստ գյուղը հանգիստ էր: Սակայն, ինչպե՞ս հանգիստ կարող էր լինել, երբ թշնամին պաշարել էր Փեսանդաշտը և Բարազողդիկի մարտադաշտից լսվում էր հրաձգության ձայնը: Երբ նրա վրա ծանրացած էր պաշտպանության 20 հազար փախած զաղթական հայրենակիցների հոգսերը:

Մանուկը հենց գյուղ մտավ, ճանապարհի եղրի տան բակի շուճը սկսեց հաչել: Նրան ձայնակցեցին հարևան բակերի շները և ձայնը տարածվեց գյուղում: Խախտվեց անբուն գյուղի լուսությունը: Բնակիչներից ոմանք, շտապ դուրս եկան և տեսան ու ճանաչեցին Բարազողդիկից եկող հեծյալին:

Ներսեսը շեմին բռնելով քրտնած ձիու սանձը, գրկեց Մանուկին և ներս տարավ: Այնտեղ անբուն, սեղանի շուրջ նստած խորհում էին Գալուստը, տերհայր Պողոսը, Նշանենց Արշոն, Մուխսին, Ղազարը և ուրիշներ: Բոլորը հոտնկայս պատասխանեցին Մանուկի ողջույնին: Պաշտպանության մարմնի անգամները ուշադիր լսեցին Մանուկին: Մի քանի հարցերից հետո

ճապի մատնված, սկսեց փախչել, թողնելով դիակներ, զենքեր, զինասարք:

Խափանվեց թիկունքն անցնելու թուրքերի առաջին փորձը ևս:

Թուրքերի նահանջից հետո քարայրից վերադարձող մարտիկներն իրենց հետ բերեցին բավականին քանակությամբ զերմանական նոր հրացաններ և փամփուշտներ:

Ասքանազը ողջունեց մարտիկներին և Ջանուհեց Մեսրոպին, յուրաքանչյուրին նվիրեց մեկական հրացան: Իսկ մնացածը բաժանեց ջոկատներին: Հաջորդ երեք օրերին մարտերը լուրջ ռնույթ չկրեցին: Չորրորդ օրը վաղ արշալույսին, երբ լույսը դեռ չէր բացվել, դիտակետից հայտնեցին, որ թշնամին շարժվում է առաջ:

Ասքանազը և Մեսրոպը շտապեցին դիտակետը:

Պարզ ետևում էր հակառկորդի լայն ճակատով հարձակումը: Մեկ-մեկ երևում էին նաև հրամանատարները, որ քաջալերում էին զինվորներին առաջ շարժվել, հարձակվել: Սակայն մահվան սարսափը կաշկանդել էր հրոսակներին, որոնք սիրում էին անդհն ու անպաշտպան մարդկանց սպանել: Թուրքական բանակի հրամանատարությունը սխալվել էր արհամարհելով փոքրաթիվ փեսանդաշտցիներին: Հայերի ուժը միայն զեցիչ-խող դիրքերի մեջ չէր, այլև՝ կուռ միասնությամբ, նախնիների օրինակով կռվելու, արիության: Նրանք գիտեին, թե հանուն ինչի են կռվում, հանուն ինչի են մեռնելու...

Կեսօրին մարտը վերստին թեժացավ. թշնամին հարձակման տակտիկան փոփոխելով ամեն կերպ ձգտում էր առաջ անցնել: Հիմնական ուժերն ուղղվել էին դեպի աջ և ձախ թևերը: Իսկ հայերը կռահելով նրանց մտադրությունը, գերիշխող դիրքերից դիպուկ կրակոցներով պարզապես հնձում էին ինքնավստահ առաջ շարժվող զինվորներին: Նորից անհաջողությունից ստիպված թշնամին աստիճանաբար մեղմացրեց հարձակումները: Ուշ երեկոյան դադարեցին մարտական գործողությունները և թուրքերը նահանջեցին ելման կետը՝ գիշերային հանգստի:

Փեսանդաշտցիները խելամտորեն, կազմակերպված, ակտիվ պաշտպանողական մարտերով կանխում էին ահեղ թշնամու հարձակումը: Հրաձգությունների որոտից, Ռշտունյաց աշխարհի զմրուխտ սարերում բուն դրած բազմատեսակ թռչունները, կենդանիները թողնում ու հեռանում էին իրենց բներից: Է՛լ չէր լսվում թռչունների երգն ու դալլալը: Որբացան կանաչ, ուրախ

աարերը: Հաջողությունը հայերի կողմն էր, բայց հաղթանակը ձեռք էր բերվում կորուստներով: Ուժերը հյուժվում էին: Մարտի արդյունքները քննարկելուց, ուժերը վերադասավորելուց հետո որոշեցին ելնելով ընդհանուր ծանր կացությունից, Մանուկին շտապ ուղարկել գյուղերը. օժանդակ ուժեր բերելու համար, այն էլ՝ շատ շտապ:

Մանուկը գիտակցելով խնդրի մեծ նշանակությունը, հաղթահարելով ճանապարհի դժվարությունները, շտապում էր արշալույսին հասնել Հառեղ: Առաջին արևոտական շունչի հեծյալ ասպետը մտավ գյուղ:

Մանուկը Ասքանազի մանկության ընկերն էր նաև հորեղբոր որդին: Երկուսն էլ մանուկ հասակում թուրքի ձեռքով հորից որբացել էին: Հիմա Մանուկը երեսունը չլրացրած տղամարդ էր՝ ամրակազմ, գործունյա, խիստ համարձակ, լայնաթիկունք, միջին հասակից քիչ բարձր, թխալյա, սև բեղերով, շիտակ բնավորությամբ: Չնայած նրա կրթական ցածր մակարդակին, բանիմաց էր, կիրթ, զինվորական գործի քաջ գիտակ և մեծ հայրենասեր:

Ներսեսը մանկությունից հոգ էր տարել, սիրել, գուրգուտանքով մեծացրել, եղբոր որդիներին: Նա միշտ մեծ գոհունակությամբ, հպարտությամբ խոսում էր իր մեծ տոհմի այդ երկու առժանազայն ներտասարդների մասին:

Արտաքուստ գյուղը հանգիստ էր: Սակայն, ինչպե՞ս հանգիստ կարող էր լինել, երբ թշնամին պաշարել էր Փեսանդաշտը և Բարադողիկի մարտադաշտից լսվում էր հրաձգության ձայնը: Երբ նրա վրա ծանրացած էր պաշտպանության 20 հազար փախած գաղթական հայրենակիցների հոգսերը:

Մանուկը հենց գյուղ մտավ, ճանապարհի եզրի տան բակի շունը սկսեց հաչել: Նրան ձայնակցեցին հարևան բակերի շները և ձայնը տարածվեց գյուղում: Խախտվեց անբուն գյուղի լուսությունը: Բնակիչներից ոմանք, շտապ դուրս եկան և տեսան ու ձանաչեցին Բարադողիկից եկող հեծյալին:

Ներսեսը շեմին բռնելով քրտնած ձիու սանձը, գրկեց Մանուկին և ներս տարավ: Այնտեղ անբուն, սեղանի շուրջ նստած խորհում էին Գալուստը, տերհայր Պողոսը, Նշանենց Արշոն, Մուխսին, Ղազարը և ուրիշներ: Թուրքը հոտնկայս պատասխանեցին Մանուկի ողջույնին: Պաշտպանության մարմնի անգամները ուղադիր լսեցին Մանուկին: Մի քանի հարցերից հետո

առ ամեն ինչ պարզ էր. անհրաժեշտ է շտապ օգնող ուժեր ուղարկել Բարադոզիկ:

Մանուկը խորհրդակցությունից հետո մտավ իրենց տուն, ծնկի եկավ անկողնում պառկած 112-ամյա տկար մեծ մոր՝ Գյուլիզարի մահճի առջև: Հարցրեց առողջությունը, բառենեք հաղորդեց Ասքանազից: Հիվանդի վրա փայլեցին կարոտի, ուրախության արտասուքի կաթիլներ: Մանուկն իր թաշկինակով մաքրեց մեծ մոր արցունքները: Նա շատ էր սիրում իրեն խնամող, մեծացնող տատիկին և ի հարգանք նրա, առջնեկ աղջկան անվանել էր Գյուլիզար...

Առավոտյան ողջ գյուղը հանդիսավոր կերպով ուղղամա-
կատ ճամփեց շուրջ 60 տղամարդ, 20 կին, Արսենի ղեկավարու-
թյամբ: Քարից սարքված ամբիոն ելավ գյուղապետ Գալուստը:
Նրա կրծքին խաչաձև փաթաթված էին փամփուշտակալներ՝
ձեռքին հրացան:

Ապա խոսեց տեր Պողոսը, որի կրծքից կախված էին արծա-
թափայլ խոշոր խաչը և մաուզերը: Հետո՝ Ղազարը, Արշոն,
Մուխսին, և նրա կրտսեր եղբայր Արսենը: Գյուղապետն իր ճա-
ռում ասաց.

— Սիրե՛լի եղբայրներ և քույրեր, սուլթանական լծի տակ
մենք շատ տանջանքներ ենք կրել: Այսօր էլ պաշարել են մեզ,
որպեսզի խեղդամահ անեն, ոչնչացնեն մեզ, մեր հայրենիքը:
Հասել է հատուցման ժամը: Հայրենիքն իր զավակներին մար-
տի է կանչում: Այսօր ուղմի դաշտ ենք ուղարկում ձեզ, վաղը
մենք ենք մեկնելու: Մեկնողներին մաղթենք արիություն և հաղ-
թանակ: Մենք համոզված ենք, որ մեր ուժը մեր միասնության
մեջ է:

Տերհայրը խաչը վեր բարձրացնելով փոչեց.

— Կովե՛նք մեր նախնիների օրինակով: Թող մեզ հովանի
լինի սուրբ Վարդան զորավարը: Միասնություն՝ ի զորություն:
Թող կեցցե՛ն Փեսանդաշտի հայոց քաջերը:

Արսենի մեծ մայրը, որն հարյուրն անց էր, կայտառ, ոգևոր-
ված մոտեցավ թոռին, գրկեց համբուրեց, դեմքը ուղղված շա-
րասյունին ասաց.

— Բոլոր մայրերի անունից ողջունում եմ, օրհնում և կո՛չ
եմ անում՝ զեպի մարտի դաշտ: Գնացե՛ք և խտացրե՛ք հայ
դուրացազունների շարքերը: Կովե՛ք քաջի պես մինչև վերջին շուն-
չը: Կենդանի չհանձնվեք զազանացած թշնամուն:

Քարի՛ երթ, հաղթանակով վերադարձ...

Արսենը ծնկի եկավ մեծ մոր առաջ. համբուրեց նրա ձեռքը:
Ցրբվեց՝ այդպես էլ կաններ:

Ցնծություն, ուռա՛ բացականչություններ...

— Լավեց Արսենի խրոխտ ձայնը՝ առա՛ջ, եղբայրներ: Նա ան-
ցավ շարքի առջև:

Համազդուացիները մինչև գյուղից դուրս ճանապարհեցին
կամավորներին, ոմանք էլ տանիքներից, մինչև հեռու հորիզոնը
ազիտակ թաշկինակները օդում թափահարելով, բարի ճա՛յա-
պարհ էին մաղթում նրանց:

Կեսօրին մի փոքր խումբ, գյուղապետի ղեկավարությամբ,
շարժվեց դեպի Կայնամիրան գյուղը, որտեղից լրացո ցիլ կովսող
ուժեր վերցնելով, մեկնելու էին Կարաբողազի պաշտպանու-
թյան դերքերը ամբացնելու:

Իսկ Ներսեսը և Մանուկը ձիերը նստած մեկնեցին Շիդան
գյուղը:

Արտոսի ստորոտի հայկական հին գյուղի վրա բացվել էր
զարնանային առավոտը, սակայն մարդկային շարժում չկար,
կարծես թե կյանքը կանգ էր առել: Չէր լսվում գոմերից դուրս
եկող անասունների բառաչը, չէին երևում արոթով ու գուլթանով,
լծկաններով դաշտ մեկնող շինականները: Բակերում, փողոց-
ներում չէին վազվզում շարաճճի երեխաները: Ամենուրեք սգա-
վոր լռություն էր: Միայն մի քանի տներից, թռիչքներից, օջախ-
ներից աթարի ծուխն էր քուլա-քուլա բարձրանում:

Շիդանում առաջինը տնից դուրս եկավ տանուտեր Մամի-
կոնը՝ իր տանը գտնվող մեծամեծների հետ: Գյուղապետն իր
ընդարձակ բակի դռան առջև բռնեց Ներսեսի ձիու սանձը:

— Ողջունո՛ւմ եմ, հայր իմ, — մեծարելով օգնեց, որ ձիուց
ցած իջնի:

Ամպի պես գոլորշին բարձրանում էր ձիերի վրայից:

Ներսեսը սեղմելով բոլորի ձեռքը, ողջունեց և շտապեց իրն՝
ծանոթ մեծ տունը: Նրան հետևեցին մյուսները:

— Սիրե՛լի եղբայրներ: Մենք շատ ժամանակ չունենք:
Խնդրում եմ նստել և լսել, թե ինչ շտապ գործով ենք եկել ձեզ
մոտ, — նա խոսեց կարճ, ծանոթացրեց ուղղամալատի ծանր
և լարված դրությանը, պատմեց Հառեղ գյուղում ձեռնարկած
միջոցառումների մասին և ձայնը տվեց Բարադոզիկից եկած
հրամանատարի օգնական Մանուկին:

Մանուկը նույնպես համառոտակի նկարզրեց Բարազողիկի ճակատամարտը, ասաց, որ թուրքերը մեծաթիվ զորքերով լայն ճակատով հարձակման են անցել, հաշվի չառնելով զոհերը, ձգտում են ճեղքել մեր պաշտպանութունը կամ թևանցել, ոչընչացնել մեզ և մտնել Փեսանդաշտ: Խոսեց նաև իրենց հաջող դիրքավորման, հայ քաջերի արիության մասին:

Խոսեցին նաև գյուղապետը, Գավաշից եկածների ներկայացուցիչը՝ դարբին Ոստանիկը, որոնք իրենց պատրաստակամութունը հայտնեցին՝ որչ ուժերը ներդնել Փեսանդաշտի պաշտպանությանը:

Ներկա էր նաև դյուղապետին հյուր եկած վաղեմի բարեկամ, շատախեցի «քաջ» Սամվել Գրիգորյանը: Նա «քաջ» անունը վաստակել էր թուրքական բանակում՝ որպես կադրային հրամանատար աչքի ընկնող ծառայությունների համար: Չնայած նրա հայ լինելուն, նրան սիրում էին շարքային զինվորից մինչև բարձրաստիճան հրամանատարները: Իր առնական և զեղեցիկ կեցվածքով, կիրթ վարվելակերպով նահանգապետի, բեյերի, բարձրաստիճան անձանց, նրանց կանանց կազմակերպած խընչույքներին հրավիրված պատվարժան հյուրն էր լինում: Թուրք ազնվական կանայք հրապուրված էին նրա զինվորական կեցվածքով:

1914-ի սեպտեմբերին Սամվելը բարձրաստիճան հրամանատար թուրք ընկերների միջոցով իմացել էր, որ խիստ գաղտնի կարգադրություն կա Տիգրանակերտում ծառայող 16 հայ հրամանատարներին կալանավորելու մասին: Եվ նա գիշերը կազմակերպել էր իր և 16 հրամանատարների փախուստը: Անցել էին ամիսներ և ահա նա Բիթլիսից հյուր էր եկել իր ազգական գյուղապետին: Բոլորին ուշադիր լսելուց հետո նա ևս հայտնեց, որ ինքը պատրաստ է մասնակցելու Փեսանդաշտի պաշտպանությանը:

Կարճապես խորհրդակցությունից հետո գյուղում լսվեց եկիդեցու կողմից կանչի ձայնը: Բոլորը շտապեցին եկեղեցի՝ համայնքի ժողովի: Մեծամեծները պատարագի բեմի վրա էին:

Տեր Հովհաննեսը խաչը բարձրացրեց, օրհնեց, խաչակնքեց ամենքին, խաղաղություն մաղթեց աշխարհին և ասաց.

— Մենք ուխտել ենք պաշտպանվել բնաջնջումից: Այժմ հայրենիքն իր զավակներին մարտի դաշտ է կանչում: Ավագնե-

քի խորհուրդը որոշել է մեր ողջ ուժերը և ունեցվածքը ներդնել գոյապահպանմանը: Ողջունում ենք և միանում այդ որոշմանը, — հետո նա խոսքը տվեց Բարազողիկից եկած Մանուկին, որը բուռն ծափերի տակ սկսեց.

— Թանկագին հայրենակիցներ, մեծամեծների խորհուրդը ճիշտ է որոշել: Գա մեզ համար օրենք է: Բարազողիկում հայ քաջերը կովեցին անձնագոհ, խափանելով թշնամու առաջխաղացման փորձերը, մեծաթիվ կորուստներ պատճառելով նրան: Առավոտյան Հառեղից, Արսենի զեկավարությամբ, զինված մի ջոկատ շտապեց Բարազողիկ: Իսկ հիմա էլ ձեզ ենք զիմում. հանուն հայրենիքի, մեր քաջ նախնիների օրինակով՝ ի վե՛ն, մա՛հ անարգ թշնամուն: Հայրենիքը իր զավակներին մարտի է կանչում: Նրա կանչով պիտի կովենք, եթե հարկ լինի, նրա կանչով՝ մեռնենք:

Բացականչություններ տեղացին՝ մենք պատրաստ ենք:

— Մենք կարո՞ղ ենք և պե՛տք է անձնագոհ պաշտպանենք Փեսանդաշտը, — շարունակեց նա: Հանուն հայրենիքի, մեր սուրբ հավատի դիմում եմ ձեզ՝ ով կարող և ունա՛կ է զենք վերցնելու, ներկայանա գյուղի հրապարակը՝ Բարազողիկ մեկնելու համար:

Առավոտյան գյուղի հրապարակը լեցուն էր բազմությունը: Ռազմաճակատ մեկնողները շարք էին կանգնած: Գյուղը պատվով և հարգանքով ճանապարհ դրեց իր մարտիկներին: Զոհատի առջևից գնում էին շատախեցի Սամվելը և հառեղի Մանուկը:

Միմյուր բարձր ձայնով երգեց (նա իրենց գյուղի սիրված երգիչն էր)

Ամենայն տեղը մահը մեկ է,
Մարդ մի անգամ պիտ մեռնե,
Բայց երանի, որ լուր ազգի,
Ազատության կոհճվի:

Ընկերները ձայնակցեցին նրան:

Կամավորները քայլում էին բարձր տրամադրությամբ, քայլում էին երգելով, կանաչ արտերի մոտով: Ծանապարհին Սամվելը մանուկի հետ զրուցելիս որոշակի գաղափար էր կազմել Բարազողիկի տեղանքի, դիրքավորման մասին: Թեթև հանգրստի և զինվելու համար նրանք կանգ առան Կաղազի գյուղում: Այնտեղ գյուղապետի հսկողության տակ էր զինանոցը:

Կաղազից գյուղից համալրում ստանալով, որոնց մեջ էր նաև գյուղի պատվարժան յոթանասունամյա հովիվ Սուքիասը, շրկատը շտապում էր Բարադուղիկի մարտադաշտը:

Սուքիասը իր կյանքի 55 տարին ոչխար էր պահել, մազլցել էր, վազվզել, անց է կացրել լեռներում. իր հինգ մատի պես գիտեր որտեղ ինչ կա: Նա Սամվելին ծանոթացնելով տեղանքին, ամենակարճ ճանապարհով, առաջնորդեց մարտադաշտին իշխող բարձունքներից մեկի ուղիղ գագաթը: Սամվելն ու Մանուկը բարձունքից դիտելով մարտադաշտը, որոշեցին ձախ թևից հարձակվել հակառակորդի վրա, նրանց անակնկալի բերելով ջախջախել: Այդպես էլ արեցին, որը և որոշեց մարտի ելքը: Զախակողմյան ուժգին գրոհը թշնամուն ստիպեց անցնել պաշտպանություն:

Ասքանազը թեժ մարտադաշտի դիտակետից հիացած էր ձախակողմյան մարտական գործողությունից:

— Տե՛ր աստված,— ասաց նա,— այս ինչ հրաշք է, ովքե՞ր են այդ քաջերը:

Նա մտքերի մեջ էր, երբ ներկայացավ գլուխն ու բեղբրը սպիտակած հովիվ Սուքիասը և հաղորդեց, որ իրեն Մանուկն է ուղորկել ձախ թևի մարտական գործողությունների մասին տեղյակ պահելու, այն մշակել և ղեկավարում է փորձված զինվորական շտաբիսեցի Սամվելը:

Ասքանազի մի քանի հարցերից հետո ամեն ինչ պարզ էր և ուրախալի:

Երևբզողմյան ճնշման տակ երեկոյան թշնամին նահանջեց դեպի անտառը: Ասքանազը հաջող մարտական գործողություններից հետո հայ կամավորներին ողջունեց և հանգստի հրահանգ տվեց: Հանգստից հետո կարգադրեց պատրաստվել մարտադաշտով բարձրանալ սարնիվեր՝ միանալ եղբայրներին, ճանապարհին վերցնելով թշնամու զենքերը, փամփուշտները, նռնակները՝ նույնիսկ սպանվածներից, ծանր վիրավորներից: Մարտադաշտով անցնելիս կամավորներն ամենուրեք լսում էին թշնամու վիրավոր զինվորների տնքոցները, մահամերձների ճիչերը, օգնություն աղերսալի ձայները: Տասնապետ Գաբրիելը մոտեցավ մեկին, որը հայերեն Գաբրիելից օգնություն էր խնդրում:

— Հայերեն որտեղի՞ց գիտես,— հարցրեց Գաբրիելը թուրք զինվորին:

— Մեր գյուղում հայեր շատ կային, մանկությունս անց եմ կացրել հայ տղաների հետ, նրանցից եմ սովորել հայերեն:

Գաբրիելը պատռեց նրա շապիկը, ամուր կապեց ոտքի վերքը, տեղափոխեց քարի մոտ, օգնեց նստել:

— Հաց շունե՞ս, ախպեր, փշուրմ հաց տուր, երկու օր է բերանս ոչինչ չեմ գրել,— խնդրեց թուրքը:

Գաբրիելը լավաշի մեջ պանիր դրեց և տվեց վիրավորին, ապա հարցրեց.

— Ապա ի՞նչ եղան ձեր գյուղի հայերը:

— Կայմակամը անխիղճ էր, ուրացող, մեր գյուղի բոլոր հայերին կոտորեց: Ունեցվածքները թալանեց, տարավ: Իմ հորն էլ սպանեց՝ հարևան հայ Համազասպի ընտանիքին մեր մարագում թաքցնելու համար: Ինձ էլ զինվոր տարան: Այսօր էլ այս օրն եմ ընկել: Երևի այստեղ էլ անտեր-անտիրական արնաքամ լինեմ, և մեռնեմ, գալլերի բաժին դառնամ: Ապա իր երախտագիտությունը հայտնելով, թուրք զինվորը շարունակեց.

— Բարի մարդ, շնորհակալ եմ, թուրքն այս շէր անի... և անե՞ծքի խոսքեր շարտեց ակահի ու սուլթանի հասցեին:

Գաբրիելը թուրք վիրավորից դեռ չէր հեռացել, երբ հետևից կրակոց լսվեց. թևին ցավ զգաց, արագություն մարտկեց և հետևյալից: Մոտիկ քարի հետև պառկած վիրավոր թուրքը հրացանն ուղղել էր Գաբրիելի վրա, ուզում էր երկրորդ զնդակն արձակել, բայց վրա հասնող հայ մարտիկը հրացանի կոթի հարվածով նրան ընդմիշտ լռեցրեց:

Մեծ ուղմավար հավաքելով, Շիդանի և Կաղազիզի կամավորները ելան սարնիվեր: Ծանապարհին հանդիպեցին Ասքանազի քաջերին, որոնք նույնպես հետապնդել էին նահանջող թշնամուն մինչև անտառը և ուղմավարով հետ էին վերադառնում: Հաղթողները ողջունեցին միմյանց:

Ասքանազը փնտրում էր Սամվելին:

Հովիվ Սուքիասը շտաբիսեցի զորավարին թեև անցուկ ներկայացավ եվրոպական հագուստով երիտասարդ հրամանատարին: Նրանք շատ չերմ գրկախառնվեցին, իսկ երկու կողմից՝ մարտիկները ծափահարեցին իրենց պատվարժան հրամանատարներին: Բոլորը հաղթական բարձր տրամադրություն մեջ էին...

Ասքանազը իր շնորհակալական և գովեստի խոսքերն ասաց Սամվելին, շիդանցիներին, կաղազիզիներին:

Երբ պատրաստվում էին վեր բարձրանալ, Ասքանազը նոր ճկատեց իր վաղեմի ընկերոջը՝ Գարրիելին: Մտտեցավ, բարևեց. «Ինչ է, վիրավորված ես, անզուրյ ինչ ես եղել...»: Գարրիելը պատմեց եղելությունը: Ասքանազը դիմելով Սամվելին ասաց. Իմ կարծիքով, հանուն նրա հոր մարդկային արարքի, որի համար նա զոհվել է, պետք է նրա տղային օգնենք:

Սամվելը հավանություն տվեց:

Ասքանազը Գարրիելին հանձնարարեց երկու մարտիկի վերցնել և վիրավոր թուրք զինվորին տանել մեր բուժկայանը:

Մանր բեռնված, դանդաղ քայլերով շոկատները բարձրանում էին քարքարոտ լեռը՝ ջերմ զրուցելով: Զրուցում էին նաև Ասքանազն ու Սամվելը: Վերջինս իմացավ, որ Բարազդդիկի հրամանատարը Վանի դպրոցն ավարտելուց հետո կարճ ժամանակով հարյուրապետի պաշտոնով ծառայել է թուրքական բանակում, սակայն որպես հայ և անվստահելի զորացրվել էրր տեղ հասան, արդեն գիշեր էր: Լեռնային զով քամին թեթևակի հպվելով հոգնած զինվորների ղեմքին թարմություն էր պարգևում նրանց: Լուսնյակն սկսեց իր արծաթափայլ շողերով լուսավորել Բարազդդիկի դիրքերը:

Ասքանազը կարգադրեց ամրացնել դիտակետը, կազմակերպել տղաների սնունդն ու հանգիստը: Հետո նա Լեռնի, Սամվելի, Մանուկի հետ շարժվեց քարայրը՝ վիրավորներին տեսնելու: Այնտեղ էր նաև թուրք վիրավորը: Նրանք զրուցեցին վիրավորների, բուժողների, ուսուցչուհի Գայանեի և մյուս կանանց հետ: Մտտեցան երեք զոհվածների աճյուններին, որոնք խնամքով ծածկված էին:

Հրամանատարները գլխարկները հանելով անխոս ու տխուր խոնարհվեցին Բարազդդիկի առաջին զոհերի շիրիմների առջև: Հետո այցելեցին աթարով վառվող օջախների վրա պղինձների մոտ կանգնած խոհարարներին և հարգալից ողջունեցին, հետաքրքրվեցին, թե ինչ ճաշ են պատրաստում վաղվա համար:

Այնտեղից էլ գոհ հեռանալով, հավաքվեցին զետնափոր տնակում. ճրագի լուսի տակ նրանք երկար խորհեցին նոր խնդիրների մասին: Փորձված հրամանատարը Ասքանազին և ընկերներին արժեքավոր խորհուրդներ տվեց: Որոշեցին ծանր վիրավորներին տեղափոխել Կաղազի և այնտեղ հրավիրելով Փեսանդաշտի փորձված հեքիմներին՝ կազմակերպել բուժման գործը:

Լեռնը, Ասքանազը, Սամվելը, Մեսրոպը, Մանուկը քննարկում էին մարտերին նախապատրաստվելու հարցերը, երբ հանկարծ ներս մտավ ղեմքից անձրևի պես քրտինքը հոսող երիտասարդ Մարտիրոսը:

— Մարտիրոս, եղբայրս, խեղճ լինի, այսպես հեղհեղ այս ժամին ինչո՞ւ և որտեղի՞ց ես եկել:

Ջերմորեն ողջունելով Մարտիրոսն ասաց.

— Եկել եմ գյուղից: Ստույգ տվյալներ կան, որ Շատախի ջարդերից հետո Իբրահիմ բեյը մեծ ուժերով մոտ օրերս հարձակվելու է մեզ վրա: Պաշտպանության խորհուրդը որոշել է 1896—1898-ի օրինակով խիզախորեն պաշտպանվել: Մեզ պետք է ճակատամարտը ղեկավարող հրամանատար:

Խարականցի Լեռնի հետ քննարկեցին նաև երկրորդ ռազմաճակատի հարցը: Սամվելն առաջարկեց, որ ինքը և Մեսրոպը մեկնեն Կարաբողազ: Լեռնը հավանություն տվեց և ասաց.

— Ձեզ հետ վերցրեք 10 փորձված մարտիկ: Կիջնեք Կաղազի գյուղը: Այնտեղ ձիեր կան: Որքան հնարավոր է, պետք է շուտ տեղ հասնել:

Ասքանազը վաղ արշալույսին նրանց ուղեկցեց: Ծանապահին Սամվելն ու Մեսրոպը շատ հարցեր կարգավորեցին, ապա գրկախանվելով, բաժանվեցին:

— Մենք դեռ կհանդիպենք,— ժպիտը ղեմքին ասաց Սամվելը:

Ասքանազը հարգանքով նայում էր սարից իջնող իր քաջ ընկերներին, որոնց հետ երեկ ծանր մարտ վարեցին: և անջատումը ցավալի էր դառնում: Բայց անհրաժեշտությունը թեթևացնում էր բաժանման կարոտը:

Երբ Սամվելը ընկերներով Կաղազի գյուղը մտավ գյուղը ոտքի վրա էր. պատրաստվում էին սայլերով ուտելիք, 85 կամավոր տղամարդ ու երիտասարդ կին ուղարկել ռազմի դաշտ: Ուղղակի ոտքի վրա գյուղապետի հետ խոսեցին անելիքների մասին: Երբ Մեսրոպը ձին նստեց, նրան մտտեցավ համեստ հազնված, միջինից բարձր հասակով, ղեկըր ուսից կախած, շիկահեր Անթառամն ու ամուր բռնելով ձիու սանձն ասաց.

— Եղբայր, դո՞ւք եք կարգադրել կանանց Բարազդդիկ շուղարկել:

— Այ՛ն՛, առայժմ կարիք չկա, — սիրալիր պատասխանեց Մեսրոպը:

— Թուրքը, որ մտնի Փեսանդաշտ մեզ և մեր երեխաներին խնայելու՞ է: Ինչու՞ մենք չպիտի նրա դեմ կռվենք:

— Պատերազմի դաշտ գնալն, առաջին հերթին տղամարդու պարտականությունն է, — պատասխանեց Մեսրոպը:

— Թույլ տվեք ձեզ կարճ պատասխանել, մեզ դուք չեք կանչել, մեզ հայրենիքն է կանչել: Ես պետք է իմ ամուսնու կողքին լինեմ:

— Ո՞վ է ձեր ամուսինը, — հարցրեց Սամվելը, հիանալով հայուհու համարձակությանը:

— Շիրանցի Սիմոնը: Հարգալից պատասխանեց կապուտալյա գեղեցկուհին:

— Ձեր ամուսինը իրոք քաջ է, նա երեկ մարտադաշտում ինձ հիացրեց իր քաջությանը: Հրաշալի նշանառու է: Առաջին գնդակով գետնին գլորեց թուրք հրամանատարին, որի համար ես համբուրեցի նրա ճակատը: Երեկվա մարտում նա սպանեց 6 զինվոր, մարտադաշտից որպես ավար բերեց 3 հրացան, մեկ արկղ փամփուշտ: Վերադարձի՛ր տուն, հպարտացի՛ր քո քաջով, քույրս:

— Ո՞չ, իմ տեղը ռազմաճակատն է: Հայրենիքն այսօր դա է պահանջում:

Սամվելը հիացած նրա պատասխանով, դարձավ Մեսրոպին:

— Ես հպարտանում եմ մեր հայրենանվեր հայ կանանցով, թող գնան ռազմաճակատ, նրանք էլ անելիք ունեն: — Ապա ավելացրեց.

— Կներեք, մեր քույրեր, մենք շտապում ենք, ձեզ և ողջ փեսանդաշտցիներին ի սրտե հաղթանակ ենք ցանկանում:

— Տե՛րհայր, ո՞վ էր մեզ ողջունող այդ սքանչելի տղամարդը, — ոգևորված հարցրեց Անթառամը:

— Դա շտապցի քաջ Սամվելն էր, երեկվա հաղթանակը կազմակերպողներից մեկը: Մեկնում է Կարաբողաղ:

Անթառամը հպարտությամբ նայեց քամու պես սլազող հեծյալներին, որոնց առջևից գնում էր պատվարժան քաջը: Գլխաշորը հանեց և սկսեց թափահարել, ու ողջ ուժով գոչեց.

— Հայոց քաջեր, սուրբ Վարդան Մամիկոնյանը ձեզ հովանի...

— Ի՞նչ հրաշալի են մեր հայ դուքագուհուները, փառք ու պատիվ նրանց ծնող մայրերին... — Դիմելով Շիրանցի եկած իր մարտական ընկերուհիներին ժպտալով ասաց, — պատրաստվեցե՛ք, տերհոր հետ մեկնելու ենք Բարազողով:

Կարաբողաղի ինքնապաշտպանությունը

Կիրակի օրվա առավոտ էր: Հառեղ գյուղի ժամկոչը կոշնակը ձեռքին՝ թրկ-թրկ, շրջում էր գյուղամիջում, ամենքին հրավիրում պատարագի:

Եկեղեցի հաճախողները, խոնարհվելով մուտքի մոտ, խաչակնքում էին դեմքերը, ներս մտնում:

Տեր Պողոսն այդ օրը սովորականից վաղ էր եկել: Նա ժամերգությունն սկսեց ուրախ տրամադրությամբ: Խոսեց Բարազողովի ճակատամարտի առաջին հաղթանակի մասին և հաղթանակին էլ նվիրեց պատարագը:

Այդ օրը եկեղեցում սովորականից շատ մոմեր վառեցին: Բուրվառի խնկի ծուխը սովորականից ավելին էր: Տերհայրը հայրենասիրությամբ տոգորված վարեց ժամերգությունը: Վերջում կոչ արեց, որ հաղթանակը մեզ պարտավորեցնում է կուռ պահել շարքերը...

Պատարագից դուրս եկողները նկատեցին դեպի գյուղ սլացող մի խումբ ձիավորների:

— Տե՛ր աստված, սա ի՞նչ է, — զարմանքով շնջացին:

Գյուղի եզրին հեծյալները կանգ առան դիմավորողների առջև: Առաջինը ներսեսը հարգալից ողջունելով Սամվելին, ասաց.

— Ի՛մ քաջ, ի սրտե շնորհավորում եմ և ողջունում երեկվա ծանր մարտում ձեր փայլուն հաղթանակը: Շուքրի բեյին այդպիսի դաս տալը շատ անհրաժեշտ է: Թող մեկ անգամ էլ ձանաչի փեսանդաշտցիներին:

Ներսեսը, տեր Պողոսը, Ղազարը Սամվելի հետ զրուցում էին Իբրահիմ բեյի և պաշտպանության խորհրդի միջոցառումների մասին: Նրանց հաղորդածը հանգիստ լսելուց հետո Սամվելն ասաց.

— Այդ դեպքում պետք է շտապենք:

— Միայն սնվելուց հետո: Ուտելիքը պատրաստ է, — ասաց ներսեսը և հրավիրեց տուն: Ներս մտնելիս Սամվելը խոնարհ-

վեց Ասքանազի մոր առջև և համբուրեց նրա աչքը:— Սիրելի՛ մայրիկ, Ասքանազը հանձնարարել է, որ իր որդիական ջերմ բարևները հաղորդեմ ձեզ:— Հպարտ եղեք ազգի ազատագրմանը նվիրված ձեր հերոս դավակով...

Մայրը գլխաշորի ծայրով սրբեց թրջվող աչքերը, ասելով. Ենորհակալ եմ, որդիս, աստու բարին վրադ լինի, դենքդ էլ անհավթ: Ապա Սամվելը զրուցեց նրանց տանը պառասպարված Գամաշից փախած 4 ընտանիքի հետ:

Հյուրասիրվելուց հետո գյուղացիներով շրջապատված կամավորները ճանապարհ ընկան: Երբ բոլորը ձիերի վրա էին, լսվեց Սամվելի հրամանը.

— Եղբայրներ, հառա՛ջ, ուշանում ենք: Կամավորների հետևից գյուղից դուրս եկավ յոթ սալ, որ ռազմաճակատ էր տանում կճուճներով դավուրմա, պանիր, մոթալներով ժածիկ, տիկերով յուղ, լավաշ հաց, ջվալներով ձավար, ուշա, վառելիք, հագուստ և այլն: Ռազմիկներին օգնելու, սպասարկելու համար մեկնեցին նաև մի խումբ կանաչք ու աղջիկներ:

Երբ Սամվելն իր խմբով Կարաբողազ հասավ, գյուղապետ Գալուստի գլխավորությամբ մարդիկ դիմավորեցին նրանց ու անմիջպես անցան տեղանքի ուսումնասիրմանը: Երեկոյան նիստ հրավիրվեց: Ընտրեցին Կարաբողազի պաշտպանության խորհուրդ Սամվելի ղեկավարությամբ: Տեղակալներ ընտրվեցին Զանոյենց Մեսրոպը՝ զինգծով, Ներսեսը՝ մատակարարման:

Վերջում Սամվելը գոհունակությամբ ասաց, որ ինքը հպարտ է Փեսանդաշտի իր քաջ եղբայրներով, որ ամենքը լավ գիտակցում են ինչի են եկել այստեղ: Այժմ հրատապ խնդիր է խրամատներ պատրաստելը և ամուր պաշտպանության գոտի ստեղծելը:

Քննարկեցին նաև մատակարարման և այլ հարցեր: Մեսրոպին վստահեցին կենտրոնական դիրքի հրամանատարությունը:

Սամվելը թուրքական գյուղերին ծանոթ, թուրքերին և քրդերին վարժ իմացող երեք հոգու ուղարկեց հետախուզության:

Խրամատներ փորելուն մասնակցեցին բոլորը, նույնիսկ գյուղապետ Գալուստը, տեր Պողոսը, Սամվելը, ռազմաճակատ եկած կանաչք: Երեկոյան կամավորներ եկան Կանամիրանից՝ գյուղապետ Տերտերյանի գլխավորությամբ: Կանամիրանցիների ջոկատի հրամանատար նշանակվեց համագյուղացի, նախ-

կին զինվորական, բառասունին մոտ, համարձակ, ամրակազմ Հայկազ Ազատյանը: Հայկազը կանամիրանցիների անունից երգվեց, որ պատվով կկատարեն հրամանատարության առաջադրած մարտական խնդիրները:

— Հիշեք, եղբայրներ, կովում ենք անվախ, կովում ենք քաջի պես, — ամփոփեց Սամվելը, ռազմաճակատի հրամանատարությունը աչքի բեր լիովին վստահել է մեզ, պետք է պատվով կատարենք հայրենիքի պահանջը:

Հաջորդ օրը հառեղջիները Հրանտի ղեկավարությամբ դիմավորեցին Շիդան և Կաղազիդ գյուղերից եկած կամավորների նոր խմբին: Գյուղացիները կամավորներին ուղեկցեցին մինչև խաչքար աղբյուրի կանաչ հովիտը, հանգստի և հացի:

Հրանտը Ասքանազի մոտիկ ընկերն էր, միասին սովորում էին Վանում: Նա Ասքանազից մեկ տարի առաջ էր ավարտել դպրոցը ու նշանակվել նույն դպրոցում դասատու: Իմանալով հայրենի երկրին սպասվող վտանգի մասին, Վանում գտնվող մի խումբ փեսանգաշացիների հետ, նա մեկնեց հայրենի գյուղը և կազմակերպեց կամավորների ջոկատ:

Հառեղ գյուղը մտնելիս Հրանտի տրամադրությունը բարձրացավ՝ Զարուհու սերը մոռացության տվեց հոգնածությունը: Նա Ասքանազի հետ դպրոցական արձակուրդները անց էր կացրել հայրենի ծաղկածիժաղ լեռնաշխարհում: Սարերի աղբյուրներից ջուր խմել, քարափների գագաթներին որսորդություն արել: Ներսեսի տանը միասին հաճախ էին եղել, այնտեղ էլ տեսել և սիրել էր Զարուհուն: Խալիֆի տան ծաղիկ աղջկան:

Երիտասարդ կանաչք, աղջիկները շտապ կժերով ջուր բերեցին, սրբիչները ձեռքներին խոնարհարար ջուր լցրեցին, որպեսզի մարտիկները զովանան, մաքրվեն երկար ճանապարհի փոշուց: Զարուհին հեռվից նկատել էր առջևից եկող եվրոպական հագուստով իր Հրանտին և ուրախությունից իրեն կորցրել՝ մեկ տարի էր, ինչ չէր տեսել: Պատրաստ էր նրա գիրկն ընկնելու: Սակայն կանացի ամոթխածությունը թույլ չտվեց:

Երբ բոլորը զբաղված էին, Հրանտը հարմար առիթն օգտագործեց և մոտեցավ ու բռնեց իր հարսնացուի ձեռքը: Աղջիկը սիրո կարոտից կարմրած, ջերմ բարևեց: Զարուհին տեսնելով իրենց նայողներ շկան, այրվող դեմքը դրեց Հրանտի աչքում ու ալկանջին սիրո ջերմ խոսքեր շնջաց:

Համասփյուռը բազմության մեջ ուշադիր հետևում էր աղջը-

կան. փարատվեց անցյալ տարվա ամռան ամիսներից իր մեջ առաջացած կասկածը. «չէ, սրանք սիրում են իրար»: Մայրը գլխաշորի ծայրով սրբեց այտերի վրա գլորվող ուրախութեան արցունքի կաթիլները: Վերցնելով գունավոր սրբիչը նա մոտեցավ գուլգին:

— Հրանտ, որդիս, շուր լցնեմ՝ լվացվիր:

Համասփյուռի մայրական խոսքից Հրանտը կարմրեց...

— Մայրի՛կ ջան, ես շուր կլցնեմ, Հրանտը կլվացվի, — ասաց Զարուհին:

Զարուհին Հրանտին ծառայելն իր համար երջանկություն էր համարում, Հրանտը առավել ևս:

— Զարուհի, շատ շնորհակալ եմ, դու ինձ մեծ բավականություն պատճառեցիր, այս երջանիկ պահը երբեք չեմ մոռանա: Զարուհին հեղուրեն իջեցրեց հայացքը:

— Զարուհի, սիրելի՛ս, շուտով առական բանակը կգա, մինք կազատագրվենք թուրքական ստրկությունից, խաղաղություն կլինի հայոց աշխարհում, և մեր սերը կվայելենք:

Աղջիկների լցրած ջրով բոլոր կամավորները լվացվեցին: Հետո կանայք ջերմ ժպիտներով նրանց հրավիրեցին լի ու առատ սեղանների շուրջը, իսկ աղջիկները փոքր կժերով թան մատուցեցին: Ուտելուց հետո բոլորը հավաքվեցին հաշարչուրի մոտ: Գլուղապետին փոխարինող Ղազարը ողջունեց ուղմի դաշտ մեկնողներին՝ ցանկանալով բարի երթ, հաղթանակով վերադարձ:

Պատասխան խոսքում Հրանտը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության, բարի մաղթանքների համար և ասաց.

— Թանկագին հայրենակիցներ, հավատացած եղբք, որ մենք անարգ թշնամու դեմ կկռվենք մինչև մեր վերջին շունչը: Թույլ չենք տա բարբարոսներին մտնել Փեսանդաշտ: Մեր գործըն արդար է: Մենք կուժում ենք մեր գոյությունը, մեր ազատությունը պաշտպանելու համար:

Եղբայրներ, շարժվենք, ուղանում ենք, անցնելով շարքի առջև, — հրամայեց Հրանտը, — հառա՛ջ դեպի մարտի դաշտ:

Զիլ փչեց գուռնան, գարկեց դճուրը. Շաղվեցին ծաղիլներ:

Զարուհին հիացած էր իր Հրանտով: Շտապելով շարքի առաջ, ձեռքը թափահարեց. «Բարի՛ երթ, շուտով իմ ընկերուհիներով կլինենք ձեզ մոտ, ուղմի դաշտում»:

* * *

Կամավորները հասան երեկոյան: Հրանտը Սամվելի մասին լսել էր, սակայն չէր տեսել: Ներկայանալով համեստորեն զեկուցեց.

— Պարո՛ն հրամանատար, ձեր տրամադրության տակ ենք շիղանցի, գավառացի, թիմարցի, հառեղցի հայ կամավորներս: Երգվում ենք կուժել, քաջի պես, քաջի սրտով:

— Ապրեք, սիրե՛լի երիտասարդ, սիրե՛լի քաջեր, — փորձված հրամանատարը հայացքով զննեց կամավորներին, ջերմ ողջունեց բոլորին և շարունակեց: — Ուրախ եմ ձեզանով, սիրե՛լի քաջեր, հայրենին թող ձեզ զորություն տա և դուք կհաղթեք: Ձեր խումբը կլինի մեր երրորդ ջոկատը: Ձեր խնդիրն է՝ ինչ գնով էլ լինի, կանխել հակառակորդի հարձակումը ձախից: Թույլ չտալ առաջ շարժվել և թեանցել մեզ ձախից: Եղև՛ք խիզախ, պահպանե՛ք ձեր թանկագին կյանքը:

Հիմա ջոկատը բաժանեց ջոկերի և նշանակեց հրամանատարներ, — հրամայեց նա, — անմիջապես մեկնեք ձեզ համար պատրաստված խրամատները, պատրաստվեք մարտի: Ով զենք չունի՝ կտանք, փամփուշտներ ևս:

— Հրանտ, եղբայրս, մենք զնալու ենք աջ թևը, — ասաց Սամվելը: — Ձեզ մոտ կգանք հետո:

Առաջին ջոկատի հրամանատար նշանակվեց փորձված զինվորական, 60-ամյա, սակայն տակավին կայտառ սարեցի Բարկենը և կարգադրվեց, որ նա զբաղեցնի ձախ թևը, իսկ երկրորդ և երրորդ ջոկատների հրամանատարությունը ստանձնեցին 50-ամյա Աշոտը և 65-ամյա Արփիարը:

Գիրքավորման երկրորդ օրվա առավոտն էր: Սամվելը դիտարկեց հեռադիտակով նայում էր ցարուցքիվ առաջ շարժվող հակառակորդի զինվորներին, որոնք խմբովին երգում էին՝ «Թուրք, զավթիր» երգը: Դեռ շատ հեռվից անկազմակերպ կրակում էին, գաղափար չունենալով հայերի դիրքավորվածությունից:

— Մարտիրոս, շի՛մեց կասկածորին Սամվելը, — գնա Մեսրոպի մոտ, հայտնիր թող սկսի ուժգին հրաձգություն առաջ շարժվողների վրա: Հրանտը ձախ կողմից թող օգնի Մեսրոպին:

Երբ ներսեսի հետ մեենակ էին, դառնալով նրան Սամվելն ասաց.

— Ենթեւ աղա, մարտը շատ ծանր օրհասական կլինի, հակառակորդի ուժերը շատ են: Սակայն ես համոզված եմ, որ մեր քաջերը առաջին քննութիւնը գերազանց կհանձնեն: Միայն պիտի աշխատենք, որ մեր զոհերը քիչ լինեն, մանավանդ մենք դիրքավորված ենք՝ ռազմադաշտի գերիշխող կետում՝ խրամատավորված:

Ենթեւը համաձայնելով Սամվելի հետ ասաց.

— Հարգելի Սամվել, փեսանդաշտեցիներս հավիտյան պարտք կմնանք ձեզ, Գուր հայրենասիրական մեծ գործ եք կատարում, փայլուն օրինակ եք ծառայում, ոգեշնչում հաղթանակի: Համոզված եմ, որ ձեր հրամանատարութեամբ պատվով դուրս կգանք այս ահաւոր մարտից:

— Ենթեւ աղա՛, ես ձեզ շատ եմ հարգում, գիտեմ, որ հայրենիքին, ժողովրդին նվիրված մարդ եք, սակայն խնդրում եմ իմ մասին այլևս գովեստի խոսք չստեք: Ես պարտավոր եմ ծառայել իմ հայրենիքին, որպես նրա զավակը: Մինչև այժմ ծառայել եմ բռնակալ թուրքերին և դրա դիմաց ստացել եմ միայն ու միայն հալածանք... և գիտակցելով դիմեցի փախուստի: Այսօր այստեղ իմ հայրենակիցների հետ մեր սրբազան պարտքն ենք կատարում:

Հրացանները որոտացին. մարտն սկսված է: Սամվելը դիտակետից հեռագիտակով գննում էր չուրքանչուր գործողութիւն: Ահա՛ հակառակորդի առաջատար ջոկատները մոտեցան Մեսրոպի պաշտպանած դիրքերին: Առաջին հրաձգային համազարկը և գնդակների տարափ թափվեց անկազմակերպ հարձակվող թշնամու վրա: Հայ կամավորների այդպիսի հակահարվածը թշնամու համար անսպասելի էր, և նա զգալով սխալը աստիճանաբար հետ քաշվեց ելման կետը:

Երկրորդ ռազմաճակատի առաջին մարտը փեսանդաշտցիները սկսեցին կազմակերպված և ավարտեցին հաղթանակով: Դա շատ ոգևորեց հայերին, առանձնապես Մեսրոպին և նրա քաջերին: Գոհ էր նաև Սամվելը: Թշնամուն տված առաջին դասը հրաշալի էր: Գիշերը եղել էր Հրանտի մոտ և այնտեղից զոհ վերադարձել, սակայն այդ քաջասիրտ երիտասարդը անփորձ էր, ուստի կապավոր Մարտիրոսի հետ շտապեցին այնտեղ: Մարտիրոսը մոտ 25 տարեկան էր, նորածիլ շեկիլի բեղերով, վապուտակ աչքերով: Նրան հաճախ Մարկո էին ասում: Կապավորի իր դերը լավ էր կատարում: Հրամանները շտապ տեղ

էր հասցնում կարճ, հասկանալի, հաղորդում հրամանատարի խոսքերը: Վայելում էր բոլորի սերն ու հարգանքը: Մի ջոկատի հաջողութիւններն անմիջապես հաղորդում էր մյուսին, քաջաբերում: Իսկ երբ մեկնում էր, բացականչում էր՝ եղբայրնե՛ր, պի՛նզ կացեք, մենք ուխտել ենք կովել քա՛ջ, քա՛ջ:...

Ձախ թև մեկնելիս, Սամվելը ճանապարհին այցելեց առաջին ջոկատը:

- Բա՛րև քաջերին, — կանչեց նա:
- Բա՛րև քաջին, — պատասխանեցին մարտիկները:
- Պաշտպանութեան խորհրդի անունից շնորհավորում եմ ձեր առաջին հաղթանակը, գալիք մարտերում ցանկանում նույնպես հաղթանակ: Միայն հաջողութիւնից գլխապատույտի մեջ լընկնեք, միշտ եղեք զգուշ: Գիշեր-ցերեկ դիրքերում եղեք արթուն, զենքերը մաքուր, պատրաստ պահեք, մի մոռացեք մեր թշնամին նենգ և խորամանկ է: Նա ուզում է հայերիս մեր հայրենիքի մեջ բնաջնջել, բայց շուտով ռուսական զորքը կմտնի վրա և մենք կազատագրվենք թուրքական լծից...

Գառնալով Մեսրոպին ասաց.

— Մարտը սկսեցիք լավ կազմակերպված, այդպես էլ շարունակեք: Ձախթեկան խրամատներում նույնպես հրամանատարին դիմավորեցին ուրախ և նա մարտիկներին ասաց.

— Գո՛հ եմ եղբայրներ, շատ եմ գո՛հ: Շնորհավորում եմ առաջին հաղթանակը: Ամենայն հավանականութեամբ, թշնամին կձգտի շրջանցել մեր թիկունքը: Զգուշ եղեք: Զեզ սպասում են ծանր մարտեր: Արյան գնով պետք է պահենք մեր դիրքերը: Նահանջելու տեղ շունենք: Պիտի կովենք մինչև ռուսական մեծ բանակը կհասնի մեզ օգնութեան:

— Երգվում ենք, կգործադրենք մեր վերջին ուժերը, ինչպես ոչուունցի, ոչուունցիների անունը բարձր կպահենք:

Հաջորդ 4 օրերը անցան խաղաղ... Սամվելն անհանգիստ սպասում էր հետախույզներին... Եվ ահա երեքն էլ հեծն են հայացան ու զեկուցեցին: Եղել էին թշնամու թիկունքում, հանգիպել թուրք հետախույզների: Գոտեմարտում երկուսին սպանել էին, երրորդը արնաքամ մնացել էր տեղում: Սեղրակը դաշույնի հարվածով վիրավորված էր՝ արյուն էր կորցրել: Գավառեցի Եսաուցուհի Գայանեն անմիջապես զբաղվեց նրա բուժմամբ: Մյուսները զեկուցեցին, որ պարտութեան համար բնյը շատ է զայրացած: Նա հրամայել է վաղը թարմ ուժերով գրոհել մեր

գիրքերի վրա, ջախջախել մեզ: Հետո մտնել Փեսանդաշտ և կրակի տալ գյուղերը, բնաջնջել մինչև վերջին մարդը: Մարտը ղեկավարելու է Բեռլինի զինվորական դպրոցը նոր ավարտած հարյուրապետ Սախաթը: Հետո ավելացրին, որ Շատախի հայկական շատ գյուղեր ավերված, անմարգարնակ ծխում են, բերլը նոր գորամասեր է ուղարկել Քաղ գյուղի վրա:

Ապրիլի 8-ի առավոտյան հակառակորդը կրկին անցավ հարձակման: Թուրք հրամանատարը գրոհից առաջ ծնկաչոք աղոթեց ալլահին, նրան հետևեցին զինվորները... Գրոհի հրաման տալով, մատուցեց օդում կրակեց՝ զինվորներին քաջալերելով: Մեսրոպը նրան հետևում էր և նշան բռնեց: Առաջին կրակոցից հրամանատարը գետնին զորովեց: Բայց հարձակումը շարունակվեց և գրոհը սաստակացավ: Հայերը գործում էին սառնասիրտ, կազմակերպված:

Լեռնն ու Սամվելը դիտակետից ղեկավարում էին մարտադաշտի գործողությունները շորս կապավորների միջոցով:

Ութ ժամ տևած ծանր մարտից հետո կենտրոնում հաջողվեց կանգնեցնել թշնամու գրոհը: Իջել էր մեղմ ու զով լեռնային երեկոն: Արեգակը իր վերջին ճառագայթները սփռել էր արևմուտքում կուտակված ամպերի վրա՝ նրան տալով արյան գույն: Հենց այդ ժամանակ էլ թուլացավ հարձակումը: Երեկոյան, մեծաթիվ կորուստներ տալուց հետո թուրքերը նորից աստիճանաբար հետ քաշվեցին:

Հրամանատարությունը գոհ էր երկրորդ հաղթանակից:

Կեսգիշերին հրավիրվեց պաշտպանության խորհրդի նիստ. քննարկեցին օրվա հրատապ հարցերը: Պետք էր առաջիկա մարտերին նախապատրաստվել, զենքի, զինամթերքի, կովոդ ուժերի պակասը լրացնել, սննդամթերքը խնայողաբար օգտագործել և ալլան նիստը վարձ տևեց: Լեռնը հաջողություն մաղթելով հրամանադմին տվեց մարտական հերթական հանձնարարությունները: Հետո հավաքելով հետախույզներին, նրանց հանձնարարություններ տվեց. հրամայեց իմանալ, թե ինչ է անում թշնամին, և ինչ է մտադրվում անել: Նրանց հետ այս անգամ ուղարկեց նաև Մարտիրոսին: Իսկ ինքն իր թիկնապահներով մեկնեց Շատախ:

Հրամանատարական դիտակետում մնացին Սամվելը, Գալուստը և Ներսեսը: Կեսգիշերն անց սկսեց մեղմ ու սառը քամի փչել: Երկնքում փայլատակում էին աստղերը: Կարարողազի

գիրքերը խաղաղ էին, կամավորները հանգստանում էին: Ներսեսը զգալով Սամվելի հոգնածությունն ասաց.

— Մի փոքր հանգստացիր. ուժերդ խնայիր, առջևում դեռ ծանր օրեր կան:

Լուսաբացից առաջ, շնչակտուր հրամանատարական կետ մտավ հետախույզ Մհերը:

— Ի՞նչ է պատահել, Մհեր,— հարցրեց Ներսեսը:

— Մարտիրոսն ասաց հրամանատարին հաղորդեմ, որ առավոտյան թշնամին մեծ ուժերով հարձակվելու է մեզ վրա: «Եեղճ մարդ, մեկ շարաթից ավել է կարգին չի հանգստանում, երեք ժամ էլ չկա, որ աչքերը փակել է»,— մտածեց, բայց ստիպված արթնացրեց հրամանատարին:

— Սամվել, Մհերը վերադարձել է, կարևոր տեղեկություններ կան:

Հրամանատարը վեր կացավ հանգիստ լսեց Մհերին և ասաց.

— Գալուստ աղա, շտապեցե՛ք Հայկազի մոտ, նրանք կարող է սողան նաև այդ կողմից:

— Ներսես աղա, դուք կլինե՞ք հրամանատարական դիտակետում:

— Մհեր, մենք գնում ենք Հրանտի մոտ:

Տեղ հասնելուն պես կանչել տվեց կրտսեր հրամակա՛մին:

— Իմ քաջ եղբայրնե՛ր, պատրաստ եղե՛ք, առավոտյան ձեզ սպասում է շատ ծանր, վճռական մարտ:

Գիշերային մութն օգտագործելով թշնամու մեծաթիվ զինվորներ ձորով գալիս են դեպի ձեր դիրքերը: Այս մասին ինձ քիչ առաջ տեղեկություն հասցրին մեր հետախույզները: Ձեր խնդիրն է, ինչ գնով էլ լինի, թշնամու հարձակումը կանխել: Մենք նահանջի տեղ չունենք: Մեր հետևում Փեսանդաշտն է...

Եղբք շատ ղզույշ: Ցուրաքանչյուրիդ կյանքը մեզ համար շատ և շատ թանկ է: Ոչ մի դեպքում թույլ չտաք թշնամուն մոտենա սվինամարտի սահմանին: Սվինամարտը մեզ ձեռնառու է, մենք թվով շատ քիչ ենք: Հարցեր չունե՛ք:

— Ո՛չ,— պատասխանեցին ջոկերի հրամանատարները:— Մարտական խնդիրը փկատարենք, ձեր պահանջը մե՛ր ժողովրդի, մե՛ր ծնողների պահանջն է,— պատասխանեց Հրանտը:

— Գոհ եմ բոլորիցդ էլ,— ասաց Սամվելը,— այդ դեպքում անցե՛ք տեղերը, պատրաստվեցե՛ք մարտին:

Սամվելը խորասուզված տակտիկական մտքերով, շտապում

էր հրամանատարական կետ, անսպասելիորէն իրեն մոտեցաւ Մարտիրոսը և անմիջապէս զեկուցեց ինչ տեսել էր, ինչ լսել էր:

— Գիշերը վերադառնալիս,— ասաց հետախուզը,— ճանապարհէն խաշիկի հետ տեսանք մի սալլ, երկու զինվոր սալլապանի հետ արկղերով փամփուշտ էին տեղափոխում: Մոտեցանք, գրուցեցինք, որպէս հարեան գյուղի քուրդ հովիվներ: Քաջալեքեցինք նրանց հայերի դեմ կռվելու... Ու հարմար առիթը օգտագործելով, երկուսին զաշունհարեցինք, ապա՝ փախչող սալլապանին, Հիմա սալլը փամփուշտներով Բարկենի ջուկատի զբաղեցրած բլրակի հետևում է:

— Անչափ գոհ եմ այդ քաջագործութեան համար:— Մարտիրոսին զրկեց ու սեղմեց կրծքին:— Փամփուշտների մի մասը բաժանիր Հրանտի ջոկատին: Այսօր այստեղ ծանր մարտեր են սպասվում: Մնացածը ուղարկիր Ներսեսի տրամադրութեան տակ: Թող պահի մինչև իմ կարգադրութեանը:

— Սպասի՛ր, Մարտիրոս, ինչպե՞ս անցաք, որ մերոնք ձեզ շնորհեցին:

— Մեր արթուն պահակները սալլի ձայնին հետևելով, շորս հոգով, մեր առջևը կտրեցին, ճանաչեցին... Մի քանի խոսքով պատմեցի փամփուշտով սալլի մասին...

— Ուրե՛մն մեր տղաներն արթուն են:

Առավոտյան, անձրևի մանր կաթիլների տակ, սկսվեց թըշնամու հարձակումը: Նորից կենտրոնից: Մի քանի փոխհրածոթյուններից հետո թեժացավ մարտը: Մերոսի ղեկավարած ջոկատը արիարար պաշտպանվեց:

Կեսօր էր, արևը զենիթին էր հասել:

Աջ և ձախթեյան հարձակումները գործին սուր բնույթ ավելեցին: Հրաձգութեան տարափը բռնել էր ողջ ռազմազաշտը: Հայ կամավորները կռվում էին անօրինակ քաջութեամբ, ինքնամոռաց:

Սամվելն առանձնապէս ուշադրութեան կենտրոնում էր պահում Հրանտի ջոկատը: Չախ թևում Հրանտը խրամատից խրամատ անցնելով խրախուսում, անձամբ քաջութեան օրինակ էր ծառայում իր մարտիկներին. «Ջա՛ն տղերք, կռվենք մեկտե՛ղ, մեռնենք մեկտե՛ղ: Մահը մե՛րն է, մենք մահի՛նք»:

Կեցցե՛ք քաջի անամահութունը»,— կրկնում էր նա:

Հայ դուրացազունների դիրքերն անառիկ էին: Գիրքերն ամուր պաշտպանված էին: Մեծամասամբ կրակում էին առանց վրիպումների...

Արևը շարժվում էր դեպի մայրամուտ: Թուրքական բանակի անընդմեջ գրոհներն ապարդշուն էին անցնում: Նրանք ստիպված էին դարձյալ հրաժարվել անարդունք գրոհներից:

Սամվելն ուզում էր մեկնել Հրանտի մոտ, երբ նրան ներկայացավ կայնամիրանցի պատանի Անդրանիկը: Սրբելով դեմքից հոսող քրտինքը, հեկատուր զեկուցեց հրամանատարին, որ այ թևում թշնամին ուժգին գրոհներ է ձեռնարկել:

Սամվելը Մերոսից վերցնելով մի խումբ քաջեր, շտապեց աջ թևը: Տեղ հասնելուն պես մարտի ղեկավարութունը վերցրեց իր ձեռքը: Կարճատև մարտից հետո խափանեց այթևյան գրոհը: Ապա Սամվելն օգտագործեց հարմար իրադրութեան. թևանցեց թշնամու փոքր խմբին, օղակի մեջ վերցրեց: Պաշարված թշնամին ստիպված անձնատուր եղավ, երբ 70-ից մնացել էին միայն 23 հոգի, մեծամասամբ քրդեր:

Զհաշտվելով խայտառակ պարտութեան հետ, հարյուրապետը հրաջանի փողն ուղղեց իր ճակատին՝ բոբիկ ոտքի բուժմանով սեղմելով գերմանական նորագույն հրացանի ձգանք, զընդակը ուղիղ մեխեց գլխի մեջ: Պտույտ գործելով գլորվեց գետնին...

Սամվելը գյուղապետ Տերտերյանին, նրա քաջերին շնորհավորելով հաղթանակը, անմիջապէս մեկնեց քարայր:

Կանանց նախաձեռնութեամբ մոտիկ մեծ և փոքր քարայրների հատակը մաքրել-հարթել, խսիրներ էին փռել և դրանք օգտագործում էին վիրավորներին բուժելու համար: Սամվելը ճանապարհին հանդիպելով Ներսեսին, տեր Պողոսին, նախ անցավ փոքր քարայրը, որտեղ խսիրների վրա դրված էին զոհված հայրենակիցների աճյունները: Գլխարկները հանեցին: Տեր հայրը խաչակնքեց, օրհնեց զոհվածներին, ցավակցութեան խոսքեր ասացին և որոշեցին լեռան գագաթին եղբայրական գերեզման կառուցել: Վիրավորներին այցելելիս Սամվելը ժպիտը դեմքին ջերմորեն ողջունում էր և հորդորում՝ պինդ կացե՛ք, եղբայրներ՛ս:

Հետաքրքրվում էր յուրաքանչյուրի առողջութեան ու բուժման վիճակով: Խորին շնորհակալութուն հայտնում վիրավորներին խնամող, գթացող հայ կանանց, որոնք խավար քարայրում, ձեթով ճրագի լույսի տակ, անբուն, անտրտունջ հոգատարութեամբ բուժում, խնամում էին վիրավորներին:

Ապաքինում ցանկանալով վիրավորներին, Ներսեսի և տեր-

հոր հետ Սամվելը մեկնեց ջոկատները. այցելում էին հանգրստացող կամավորների խրամատները, զրուցում մարտիկներին, տասնապետներին, ջոկատների հրամանատարների հետ:

Տեղում կարգավորեցին մի շարք հարցեր, տակտիկական խնդիրներ: Խավար գիշեր էր: Հյուսիսից փչող սառը քամին իր հետ տանում էր լեռների կուտակված սև ու մուժ ամպերը: Սամվելը պաշտպանության խորհրդի անդամների հետ բազում հոգսերով մեկնեց հրամանատարական կետ:

Նա տրամադրություն փոքր-ինչ ճնշված էր. հոգևոր շատ էին: Կազմակերպում լսելով իր զրուցակիցներին, հառաչեց: Գլխույթի խոսքեր ուղղեց թուրքական պետության, նրա զործիշների հասցեին, որ նենդարար օգտագործում են պատերազմի ժամանակվա նպաստավոր պայմանները, կայսերական Գնդամանիայի հովանավորությամբ, ի կատար են ածում հայերի բնաջնջման հին ծրագիրը:

— Ատում եմ պատերազմն ու նրա հրահրողներին, — իր մտքերի հետ ասաց նա:

— Պատվարժան Սամվել, — խոսեց տեր Պողոսը, — լիովին համակրում եմ ձեր մարդասիրական հայացքները: Օրինակ, ես քրիստոնյա մի հովիվ եմ, նվիրված իմ հավատքին: Սակայն երբեք չէի մտածի բնաջնջել նրանց, ում հավատքը մահմեդական կրոնն է...

Մտքերը կարող էին հեռու տանել, իրենք էլ հոգնած էին:

— Այդ մասին մեր զրուցյունքը կշարունակենք մի այլ ժամանակ, այժմ մեզ հանդիսա է պետք, — ասաց Սամվելը:

Հրամանատարները այցելեցին զերիներին: Անքուն, մահվան ապրումների մեջ կապված զերիները՝ կուշ եկած, ողորմելի տեսք ունեին: Նրանց սարսափն ավելի սաստկացավ, երբ տեսան դեպի իրենց եկող հրամանատարներին:

— Հը՛, մարդասպաններ, — ղայրացած ասաց Սամվելը, — մահվան սարսափից դողում եք՝ ինչպես թրջված մուկ: Իսկ երեկ հերոս էիք... Բարբարոսաբար զրոհում էիք: Ուրացել եք մեր բարիգրացիական վերաբերմունքը: Հիմա էլ որոշել եք բնաջնջել մեզ: Ինչո՞ւ եք ընտանիքներ, տուն ու տեղ թողել անաւեր, սուլթան փաշաների, բեյերի կամքով եկել՝ արշունահեղ կռվի մեջ մեռնելու: Ո՞վ է ձեր որբացած ընտանիքներին, երեսաներին պահելու: Այժմ ծաղկուն գարուն է, հողը աշխատավորին դաշտ է կանչում: Իսկ դո՞ւք, ողորմելիներ, եկել եք հողի աշխատա-

վորին, երեկվա ձեր բարի դրացուն սպանելու: Աշխատավորն է աշխատավորին բարեկամ: Թագավորները, սուլթանները, իշխանները, փաշաները, բեյերը երբեք աշխատավորին բարեկամ չենլին: Ո՞ւր է ձեր արկածախնդիրների պետության սեղալորություն, հավասարություն սահմանադրությունը:

Սամվելը մի պահ վրդովված լռեց: Նայեց ապրելու կարող լի հայացքներն իրեն ուղղած զերիներին. նրանք զարմացած էին հայ հրամանատարի այդքան վարժ թուրքերենից, մարդասիրական խոսքերից: Սամվելը դառնալով մարտական ընկերներին, ասաց.

— Ի՞նչ կասեք: Ինչպե՞ս վարվենք այս «հերոսների» հետ: Գնդակահարե՞նք. դա կլինի բարբարոսություն: Պահել, կերակրել չենք կարող: Ուրեմն ազատ արձակենք: — Նայելով իր ընկերների լուռ հայացքին, շարունակեց.

— Ողորմելիներ, իմ մարտական ընկերները խղճում են մեզ, ձեր երեխաներին, ընտանիքներին:

Գերիները պատրաստ էին իրենց նետելու հայ հրամանատարի, նրա մարտական ընկերների ոտքերը, միայն թե ազատեն իրենց:

— Ազատ ենք արձակում, — շարունակեց Սամվելը, ոչ թե ձեր ալլահի կամքով, այլ մեր՝ հայերիս բարյացակամ վերաբերմունքը ցույց տալով դեպի աշխատավոր ժողովուրդը: Միայն մի պայմանով: Որ այսուհետև հայի վրա ձեռք չբարձրացնենք:

Գերիներից տարիքավորը ծնկի եկավ հայ հրամանատարի առջև. մյուսները խոնարհաբար հետևեցին նրա օրինակին:

— Ո՞վ, բարբարա մարդիկ, — զերիները խոնարհվեցին մինչև գետին: Ապա դեմքները և թևերը վեր պարզելով կրկնում էին ծեղրունու խոսքերը: — Թող ամենակարող տեր արարիչը վկա լինի: Մեր հանգուցյալ պապերի, ծնողների գերեզմանով երդվում ենք. մեր կյանքով պարտական ենք ձեզ, ձեր բարեհոգի ազգին: Այսուհետև հայերին կլինենք միայն բարեկամ: Միտով կօգնենք յուրաքանչյուր հայի: Գուր հազար անգամ իրավացի եք, ձեր իմաստուն խոսքերով. «Աշխատավորը աշխատավորին պե՛տք է բարեկամ լինի, անկախ նրա դավանանքից և ազգություններից»: Բոլոր զերիները հետևելով ծերունուն երդվեցին:

— Վե՛ր կացեք, մեզ պետք չէ ստրուկի պես խոնարհվելու: Ձեր կյանքը բաշխում ենք: Այս ծանր օրերին թող ձեր ընտանիք-

ներում ուրախութիւն լինի, եթե աղնիվ մարդ էք, հասկացեք: Հայերս որքան բարեհոգի ենք եղել դեպի թուրքը, դուք ավելի նենգ եք եղել դեպի մեզ:

— Եթե թույլ տաս,— Սամվելի ականջին շնչաց Հայկազ Ազատյանը,— բոլորին կգնդակահարեմ: Միթե՞ թուրքի երկբունասնի երզումին կարելի է հավատալ: Նրանք մեր մեջքից յոթ շերտ կաշի են հանել:

— Հայկազ, սիրելի՛ս,— հասկանալով նրա վրդովված խոսքերի իմաստը, ասաց Սամվելը,— անձնատուր եղող գերիներին չեն սպանում: Այդ մեր կողմից կլինի բարբարոսութիւն: Այդպես են վարվել նաև մեր քաջ նախնիները: Թող գնան՝ բոլորին պատմեն, որպես կենդանի վկաներ, թե հայերն արյունահեղ պահին անգամ որքան բարի են: Իսկ նրանց սպանելով՝ մենք ոչինչ չենք շահի... մեր թշնամին սրանք չեն: Մեր թշնամին սրանց կազմակերպող, հրահրող պետական վարչակազմն է: Զեռքը դնելով Հայկազի ուսին ասաց.

— Հրաման տուր՝ գերիներին ազատ արձակել:

Հայկազը հնազանդորեն կատարեց հրամանատարի կամբը: Գերիներն ուրխութիւնից շփոթված էին: Մնկի գալով, ասացին՝ աստճու բարի կամքը զորութիւն տա հայ քաջերիդ:

— Դե՛, շուտ հեռացեք: Աչքներիս շերտք, սողուններ,— զայրացավ Հայկազը: Գերիները խումբ-խումբ, ուրախ քայլեցին, սակայն ոչ դեպի զորամաս:

— Եղբայրնե՛ր, մենք ճիշտ վարվեցինք,— ասաց Սամվելը: Այժմ մեկնեցեք ձեր տեղերը: Անելիքներ շատ ունենք:— Ինքն էլ գնաց հարամանատարական կետ:

— Ողջո՛ւյն շատախեցի քաջին, ինչպես երևում է, մենակ եք, ներս մտնելով ասաց Ներսեսը:

— Հազար բարին եկաք, Ներսես աղա: Այո, մենակ եմ: Գերիների մոտ էինք: Նրանց ազատ արձակեցինք:

— Ժիշտ եք վարվել: Տեր Պողոսն ինձ բոլորը պատմեց:

— Ներսես աղա, հարմար ժամանակ եկաք: Գուք փորձված մարդ եք: Մեր ծանր վիճակի մասին ուզում եմ ձեզ հետ առանձին զրուցել,— ու նստեցին սալաքարին:— Նոր ենք մտել մարտի մեջ, բայց գնեք, զինամթերք չունենք: Շարքից դուրս եկողներին փոխարինողներ չկան: Իսկ թշնամին դաժանորեն շարունակում է հարձակումները: Հավանաբար նման վիճակում է նաև Ասքանազը: Իսկ մենք մեր մարտերով բեյի զինված ուժերի

որոշ մասին զբաղեցնելով, նաև օգնած կլինենք Շատախի հայերին: Ի՛նչ կասեք...

— Անցած օրվա մեր զրույցից հետո տեր Պողոսի հետ շատ ենք խոսել,— սկսեց Ներսեսը:— Իրոք այս վիճակում մենք կխորտակվենք: Անհրաժեշտ է շտապ մարդ ուղարկել մեր գլուղերը: Գլուղապետներին հանձնարարել, որ հավաքեն մեր ժողովրդի խնայած զբաղական միջոցներից, թանկարժեք իրերից պաշտպանութիւն նպատակների համար: Ես Քրդստանում լավ բարեկամներ ունեմ: Այդ միջոցներով գնեք, զինամթերք կգնենք: Իսկ ինչ վերաբերում է օժանդակ ուժերին, ծերունիներին, կանանց, պատանիներին, աղջիկներին, ով կարող է գնեք վերցնել, բոլորին պետք է շտապ կարգով սովորեցնել զենք օգտագործել, ուսուցանել և ուղարկել մարտադաշտ: Միայն թե այս հարցերը պետք է քննենք պաշտպանութիւն խորհրդի նիստում: Ես կարծում եմ, որ այս օրհասական պահին ժողովրդին պետք է ռաքի հանենք, այլ ելք չկա:

— Ներսե՛ս աղա, լիովին համամիտ եմ: Միայն՝ մի պայմանով, որ Քրդստան դուք մեկնեք:

— Ինչպես կկամենաք: Ես զինվորագրված եմ իմ ժողովրդի ազատագրմանը:

Այնուհետև Սամվելը հաղորդեց.

— Քիչ առաջ Զարուհի աղջիկդ մի խումբ երիտասարդ աղջիկներով եկել է ռազմաճակատ: Հետ ուղարկելու բոլոր փորձերը ապարդյուն անցան: Ի՛նչ կասեք.

— Նա ձեզ զինվորն է, նրա հետ վարվեք այնպես, ինչպես վարվում եք բոլորի հետ...

Շտապ տեղի ունեցած ռազմաճակատի հրամանատարութիւն կարճատև նիստը որոշեց

1. Զենք, զինամթերք հայթայթելու համար անմիջապես տեր Պողոսին, Ներսեսին ուղարկել զյուղերը՝ կազմակերպելու դրամ և թանկարժեք իրերի հավաքումը:

2. Պաշտպանութիւն օգտին ստեղծված միջոցներով Ներսեսին և դարբին Խաչատուրին շտապ ուղարկել Քրդստան՝ գնեք և զինամթերք գնելու:

Լուսաբացին մոտ Մարտիրոսը մտավ Հառեղ գյուղը դեռ քնի մեջ էր: Աքաղաղների կանչի հետ սկսվեց շների հաշոցը: Դանշան էր, որ գյուղը մարդ է մտել: Զիավորը բախեց Դազարի տան դուռը:

— Բարի՛ լույս, քեռի Ղազար:
— Ա՛յ դուն հազար բարով եկար, աստծու բարին վրադ լինի, իմ աչքի լույս: Այնտեղ գործերը ո՞նց են:
— Ռազմաճակատում մեր գործերը վատ չեն: Մերոնք կրավում են, անձնվիրաբար հետ մղում թշնամու գրոհները: Առավտյան քեռի ներսեսը, տեր Պողոսը գալու են գյուղ: Նրանցից մանրամասները կիմանաք: Գյուղերը մարդ ուղարկեք մինչև նրանց գալը, բոլոր գյուղապետները լինեն ձեր տանը: Շտապ գործեր կան:

Դռան շեմին նրանց զրույցը կարճ տևեց:
— Դե՛, մնաք բարով,— սեղմելով գլուղապետի ձեռքը ասաց Մարտիրոսը:

— Խնդրո՞ւմ եմ մեր տնեցիներին բարևեք,— զինված սուրհանդակը սլացավ դեպի Բարադոդիկ:

Երբ ռազմաճակատի պատվիրակները մտան Ղազարի տունը, իրենց սպասող 18 գյուղապետները, մեծամեծները ոտքի ելան ողջունելու, գրկախառնվելու: Փոքր զրույցից հետո բոլորը նստեցին:

Ներսեսը, խոսելով ռազմաճակատի դրուժյան, հրամանատարության որոշման և իրենց գալու նպատակի մասին, եղբայրականացավ:

— Այժմ մեզ համար մահու և կենաց ծանր օրեր են: Ահեղ թշնամու դեմ կռվելու համար շտապ պետք է զենք և զինամթերք ձեռք բերել: Մի բուպե պատկերացնենք ինչ կլինի մեր ժողովրդի վիճակը, եթե թուրքը մտնի Փեսանդաշտ... Ով որքան կարող է, թող փող, թանկարժեք իրեր նվիրի՝ զենք գնելու համար: Այդ նպատակին ես, տեր Պողոսը և Արշոն 300-ական տաճկական ոսկի ենք նվիրում: Լիքը քսակը դրեց սեղանին, ասաց. «Այսօր զենքը ավելի կարևոր է քան հացը»:

Առաջինը հայրենասիրական խոսք ասաց Շիրզանի գյուղապետ Մամիկոնը:

— Մեր գյուղը պատրաստ է ալդ կոչին,— ասաց նա և ավելացրեց,— հորս խնայած 250 տաճկական ոսկին ես տալիս եմ Փեսանդաշտի պաշտպանությանը:

Խորհրդակցության բոլոր մասնակիցները ըստ իրենց հնարավորությունների՝ 40—200-ական ոսկի նվիրեցին:

Նույն օրը գյուղերում տեղի ունեցան համայնքի ժողովներ: Երախտագիտության խոսքեր ասվեցին հայ քաղերի հասցեին:

Ամենուրեք հավանություն տվեցին և միահամուռ միացան պաշտպանության խորհրդի կոչին: Քննարկվեցին նաև սննդամթերքների, մատակարարման, սննդամթերքի խիստ նորմավորման, հատկապես աղի պակասի հարցերը: Որոշվեց այն օգտագործել միայն ռազմաճակատներում և երեխաների համար: Մեծահասակները պետք է բավարարվեն աղ դրած բանջարեղենով և պանրով: Արգելվեց մայր անասունների մորթը և այլն:

Հաջորդ օրը պարզեցված գումարները բերվեցին Հռոմի: Ներսեսը առաջարկեց հավաքված գումարով բավարարվել: Իսկ կանացի գործերն առայժմ վերադարձնել տերերին:

Շտապի փոքրիկ Փեսանդաշտը պաշարված էր. կտրված արտաքին աշխարհից, վան կենտրոնից. ինքն էր հոգում իր հոգսերը: Քրդատան մեկնողներին՝ ներսեսին և Խաչատուրին գյուղից դուրս սարնիվեր բարձրացող ճանապարհին սպասում էին երկու բնախր ձի: Ձիերի մեջքին՝ խորքիններ:

Բաժանվելիս գյուղապետն ասաց.

— Զգուշ եղեք, սարերում ավազակներ կան: Ձեր հայրեհանվեր գործի հետ ժողովրդի հույսերն են կապված: Բարի՛ երթ, բարի վերադարձ:

— Աստված ձեզ հետ,— ասաց տեր Պողոսը:— վերադառնալիս ձեզ հետ վստահելի վալադ քրդեր վերցրեք, մենք այստեղ նրանց լավ կվարձատրենք:

Դիշերային խավարում մե՛րթ ձիու վրա, մե՛րթ ոտքով հաղթահարում էին լեռնային լանապարհները, լցված մատուցաները ձեռքներին, ականջները սրած շտապում էին ազատագրման պայքարի զինվորները՝ երկու ձիավոր, մեկ սարնիվեր, մեկ ձորնիվար:

* * *

Հաջորդ մի քանի օրերում կարաբողազում մարտերը տեղի ունեցան ընդմիջումներով, առանց լուրջ գրոհների:

Անձրևային գիշեր էր. հաշվի շտանելով եղանակը, հայ կանայք, Զարուհու գլխավորությամբ, թրջված շորերով լարված աշխատում էին, որպեսզի արշալույսին, ինչպես միշտ, մարտից առաջ կերակրեն իրենց մարտական եղբայրներին:

Կեսգիշերն անց էր, նրանց մոտ եկավ գյուղապետ Գա-

լուստը: Տեսավ, որ մաղող անձրևի տակ են աշխատում, նեղացավ:

— Ինչ որ տվել էինք ձեզ՝ անձրևից պատասպարվելու, ինչո՞ւ եք վառելիքները ծածկել, թրջված դողում եք, բա որ հիվանդանաք, ի՞նչ պատասխան տանք հորդ:

— Մեզ ոչինչ չի լինի, — ժպտալով ասաց Ջարուհին, — սովոր ենք, ջահել ենք, միայն թե կովող քաջերի սնունդը ժամանակին և լավ լինի, իսկ եթե ավարները թրջվեն, ինչո՞վ ճաշ եփենք:

Գյուղապետը հիացած էր Ջարուհու, նրա խմբի աշխատանքով: Նա բարյացակամ ժպտալով ուզեց Ջարուհու սիրտը շահել և ասաց.

— Աղջի՛կս, առաջին հերթին կկերակրեք հեռվում գտնվող Հրանտի քաջերին: Մոտեցիր կրակին, հագուստներդ շորացրու, աղջիկների հետ ինքդ էլ կզնաս: — Ասաց ու մտածեց. «Թող իրար տեսնեն, ուրախանան, ախր սերը խրամատներում են անցկացնում: պատերազմ է, հեռու նրանցից, ի՞նչ գիտես, վաղը կամ մյուս օրն ի՞նչ է լինելու»:

Արշալույսին մի քնքուշ ձայն Սամվելին արթնացրեց:

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց գլխավորը:

— Կներեք, — խոնարհ ու հեզ ասաց աղջիկը, — ոչինչ էլ չի պատահել, Ջարուհին ձեզ նախաճաշ է ուղարկել:

— Անունդ ի՞նչ է, — հարցրեց Սամվելը, խնդրում եմ, անունդ ինձ բաշխիր, օրհորդ:

— Վարդուհի, — ամոթխած պատասխանեց աղջիկը:

— Գեղեցիկ անուն է, օրհորդ Վարդուհի, խնդրում եմ գուցե՞ մեզ հետ անուշ անեք, — հրամանատարը ժպտաց և տեսնելով ներս մտնող Մեսրոպին, ավելացրեց.

— Ահա՛ եկավ Մեսրոպը, միասին կընթրենք:

— Ինձ կներեք, պարոն Սամվել, աշխատանքը շատ է, ընկերուհիներս սպասում են:

— Էհ, — մտախոհ դարձավ Սամվելը, — իմ փոքր քրոջ անունն էլ է Վարդուհի, հարսանիքին շարունակեց մասնակցել, արդեն հինգ ղոշ տղա ունի, մեկին էլ իմ անունով են կնքել, մինչև հիմա շեմ տեսել, նույնիսկ չգիտեմ այս ողբալի օրերին թուրք բարբարոսները ինչ են բերել նրանց գլխին, — և տխուր գլուխը կախեց:

Աղջկա սիրտը ճմլվեց, վերցրեց սրբիչը, փոքր կուծը:

— Չէի՞ք կամենա լվացվել, — հարցրեց Վարդուհին:

— Դե՛, եթե...

— Հաճույքով, — աղջիկը օճառը տվեց, կփից ջուր լցրեց, քաջերը լվացվեցին: Լեռան դադաթին թեթև շարժումներ արեցին, թարմացան: Երբ ներս մտան, հիացան: Վարդուհին երեք հոգու համար համեստ սեղան էր պատրաստել:

— Տեսնո՞ւմ ես, Մեսրոպ, ինչ շնորհքով աղջիկ է մեր Վարդուհին, — հիմա ախորժակով հաց կուտենք:

Ընթրիքը նոր էին վերջացրել, հեռավոր ներս մտավ շիրանցի Պերճը:

— Հայր Գալուստն է ուղարկել, — հետախուզները շտապում են սարնիվեր, — ասաց նա:

Սամվելը հապշտապ վեր կացավ և իրեն սպասողների հետ իջավ հետախուզներին ընդառաջ:

Հետախուզները խիստ հուզված էին, անհանգիստ:

— Ի՞նչ է պատահել, իմ քաջեր, ինչո՞ւ այսքան ուշացաք, անհամբեր սպասում էինք ձեզ, — ասաց Սամվելը:

— Ավագ հետախույզ նազար Հովսեփյանը ծանր շնչեց, տխուր նայեց ընկերներին և սկսեց պատմել:

— Գիշերը մտանք Շատախի հայկական մի գյուղ, որտեղ նաև թուրքեր են ապրում: Ծների հաշոցից խուսափելու համար տեղավորվեցինք դարմանով լի մի մարագում: Առաջնության որոշեցինք մտնել գյուղամեջ: Մարագից դուրս գալիս, դեռ շեմի վրա, ոչ վարժ հայերենով մի տղամարդու ձայն լսեցինք:

— Ախպերտանք, գյուղ շմտնեք, հայերին կոտորում են:

— Ո՞վ ես դու:

— Ես գյուղի հայկական թաղի բուրդ հովիվ Ջանոն եմ, — մոտեցավ և հարգալից բարեկեց մեզ:

Մի քիչ զրուցեցինք, հետո նա մեզ հրավիրեց հացի:

— Կներեք, — ասաց նա, — այս գյուղի հայի տան վերջին հացն է, էլ ո՞վ ձեզ հաց կտա:

Մինչ մենք հաց էինք ուտում, նա պատմեց.

— Քսան տարի այս գյուղի հայկական թաղի հովիվն եմ: Սա էլ իմ բարեհոգի Մաթևոս աղայի նորակառույց մարագն է, որ մնացել է ինձ: Անցյալ տարի զարնանը իր հասունացած երեք տղաներով՝ սայլը լծեցին, գնացին Վան: Ծանապարհին թուրք ավազակները հարձակվեցին նրանց վրա, չորսին էլ սպանեցին, կողոպտեցին: Խեղճ կինն ունեցած-չունեցածը ծախեց, տնաբանդ եղավ, յոթ երեխաներով գնաց հերանց տուն: Այս գյու-

դում թուրքեր չեն եղել: 25—30 տարի առաջ բեյը թափառաշրջիկ թուրքերից 35—40 ընտանիք բերեց բնակեցրեց. հայերին ստիպեց այդ անբանների համար տներ կառուցել: Լավ վարելահողերը, արոտավայրերը հայերից վերցրեց տվեց նրանց: Նրանցից հարկեր չէին գանձում. փոխարենը ավելացրեց հայերից գանձվող հարկերը: Ինչ գլուխ ցավացնեմ. գլուղում թուրքերը քնակվելու օրից պղտորվեց հայերի խաղաղ կյանքը: Երիտասարդ հայ կանայք, աղջիկները այլևս գլուղում ազատ անցուդարձ անել չէին կարող: Թուրքերը փախցնում էին նրանց: Գողանում էին հայերի անասունները, կալերի ցորենը, ջաղացից՝ ալյուրը: Հանդերում հայերի ցորենի, խոտի ղեզերը կրակ էին տալիս...

Այդ հողի վրա հաճախակի կռիվներ էին լինում, սպանություններ: Յավոթ, բեյը միշտ էլ հայերին էր մեղադրում և խիստ պատժում: Վերջերս Վանի նահանգային ոստիկանապետ Վաֆի բեյի ղեկավարությամբ Շատախի Համիդի բեյը նենգամտորեն կազմակերպեց Շատախի գավառի հայկական ջարդերը: Նախօրոք բոլոր հայ տղամարդկանց զորահավաքի անվան տակ հավաքեցին տարան. ո՞ւր տարան, ինչ արեցին, հայտնի չէ: Հիմի էլ անպաշտպան կանանց, երեխաներին, ծերունիներին են կոտորում: Թաղ գլուղը (Շատախի գավառի կենտրոնը) պաշարված է: Հայերը դեռևս քաջաբար պաշտպանվում են: Արդեն ավերակների են վերածվել հայկական Սողվանց, Շախուբերդ, Սվտկին, Հայկունց, Կամուրջ, Խելխատուն... շուրջ 30 գլուղ: Ոստիկանները Խելխատան բնակիչներին լցրել են եկեղեցի և տանջում են: Երեկ թեհա բեյը եկել էր այս գլուղը և երեկոյան՝ թիկնապահներով մեկնել. երևի հայերի դատավճիռը որոշված է...

Քուրդ ծերունուց բարեկամաբար բաժանվելով շտապեցինք ձկեղեցի. — իր խոսքը շարունակեց հետախույզ նազարը: — Գլուղն իրարանցման մեջ տեսանք: Եկեղեցու բակը լեցուն էր տանջված, կուռ եկած կանանցով, լացող երեխաներով, ծերունիներով: Երիտասարդ կանանց, աղջիկներին, մանկիկներին լացի ու կոծի մեջ բռնություն արանձնացրին, վրաները պահակ նշանակեցին, որպեսզի հետո իրար մեջ բաժանեն կամ վաճառքի տանեն: Մյուսներին հրամայեցին ողջ ունեցվածքը թողնել տեղերում և շարժվել անհայտ ուղղությամբ: Թուրք և թուրք համազուղացիներն իրենց հերթին արդեն հայերի տները թալանել էին, տների տանիքներից նայում և հրձվում էին,

ինչպես են տանջամահ անում հայերին: Երեկվա բարեհոգի դասցիներին:

— Այո, այո, — շարունակեց հետախույզը, — ուղում էինք ձեզ իմաց տալ, բայց արգեն ուշ էր. մոտ մեկ օրվա ճանապարհ էինք անցել: Հետո տեսանք, որ հայերին ծեծելով, հրելով, լացի ու ճիշի մեջ քշեցին սարալանջը, շվար, նյարդային վիճակում, շրթունքներս կրծելով գլուղից մի հարմարավետ տեղում ծվարել նայում էինք: Շարասյունի վերջում պատահողոված շոբերով, միշտ հայացքը հետ պահած գրկին կրծքի երեխան, ողբալով քայլում էր մի ջահել հայ կին: Հետո իմացանք, որ նրա ուշքն ու միտքը կանված էր իր 3 և 5 տարեկան մանկիկներով, որոնց թուրքերը մոտից խել, տարել էին... Այդպես քայլելիս բորիկ ոտքը առավ քարին և նա՛ երեխան կրծքին, ուժգին վայր ընկավ: Մանկիկի գլխից արյուն էր հոսում, մայրը գլխաշորը հանեց, սրբեց հոսող արյունը, կապեց, ապա կուրծքը բացեց, որ փոքրիկին կաթ տա, լացը կտրի...

Բոլորը ոտքի վրա կանգնած, լարված լսում էին հետախույզին: Գլխավոր հրամանատարի համար առավել ծանր էր լսել հայրենակից շատախցիների մասին ողբերգական լուրերը: Նա ուժերը հավաքելով, հետախույզին ասաց՝ շարունակի՛ր:

— Կարմիր ֆեսը գլխին, ուրոած սուր բեղերով, հաստ վզով, յուզբաշին գազազած մոտեցավ դժբախտ կնոջը, մառուերի 5 գնդակ դատարկեց կրծքով կերակրվող մանկիկի վրա, գնդակը մոր թիկունքից դուրս եկավ:

Մայրը վերջին ուժերը հավաքելով մանկիկին սեղմեց կրծքին, ծնկի եկավ ու տապալվեց գետնին: Ենկիկ մանկիկը գլուխը մոր ճերմակ թևին արնաշաղախ, մեջքի վրա պռակած էր: Բաց մնացած սև աչքերը և թմբիկ թաթիկները վեր հատած կարծես բողբոջում էր ամենակարող աստծուն:

Օնբաշու կողքին կանգնած, բարձրահասակ, դեմքի ոսկորները դուրս ցցված՝ անգութ թուրք զինվորը մոտեցավ փայտացած մանկիկին, ոտքի ուժեղ հարվածով 3—4 քալ մորից հեռու նետեց: Եվ հրձվանքով յուզբաշու հետ հեռացան:

Ես է՛լ չհամբերեցի, նշան բռնեցի, որ երկուսին էլ սատկացնեմ, մեքոնք շթողեցին, մենք դեռ հետախույզությունը պիտի շարունակեինք:

Բոլորը հուզմունքից քարացած, գլուխները կախ, լուռ լսում

էին իրենց դժբախտացած, անօգնական ժողովրդի ողբերգութեան մասին...

— Շուրջ 200 հայ բլուրը հասան,— շարունակեց հետախույզը,— նրանց բաճ ու քունդ տվեցին, զենքի և ծեծի ուժով ստիպեցին իրենց ձեռքով փորել իրենց գերեզմանը: Կես մետր խորութեամբ դեռ չէին փորել, յուզքաշու հրամանով ասկյարները սկսեցին կրակել: Հայերը մահվան ճիւղերի մեջ մուրավել, լզիտեին ինչ անել, միայն 4 հոգի թավալուր իջան լանջիվար և փախան: Իսկ վիրավորներին ասկյարները սվինահարեցին, բահերով գլորեցին փոսերը, թեթևակի հող լցրին: Դրսում մնացին ոմանց ոտքերը, թևերը, գլուխը, մարմնի կեսը, նրանց վրա թափեցին հայերի տներից, եկեղեցուց բերած սրբապատկերները, կրակի բերանը տվին, այրեցին...

Այստեղ նազարը լռեց, մի պահ նայեց վշտաբեկ հայրենակիցներին, ու փոքր-ինչ անց շարունակեց.

— Յուզքաշու հրամանով համազարկի պահին մահից փախչողներին հետապնդելու ուղարկեցին, բայց ուշացել էին: Փախչողներն արդեն տեսազաշտից հեռացել էին: Որոշեցինք ինչ գնով էլ լինի հասնել ու շանսատակ անել հետապնդող ասկյարներին, իսկ մեր հայրենակիցներին փնտրել ու բերել մեզ հետ: Ասկյարներին գտանք առանց դժվարութեան: Հրաձգութեամբ իրենք իրենց մատնեցին: Մենք էլ հետևից, դեռ հեռվից մեկական գնդակով գետնին գլորեցինք: Այդ զննքերն ու փամփուշտները, որ բերել ենք, նրանցն է: Մեր հայրենակիցներին շատ փնտրեցինք, ձայն տվեցինք, ոչ ոքի չգտանք...

Ըստ երևույթին փախչողները թաքնվել էին, վախից ձայն չէին հանում, նրանց մտքով չէր անցնում, թե այժմ սարքում իրենց օգնող, հասնող կլինի: Իսկ գուցե անցել էին նարեկավանքի կողմը: Մթին վերադարձանք մեծ փոսի մոտ, հողով ծածկեցինք մեր հայրենակիցների բաց մնացած դիակները, ընկած բահերի պոչից խաչ շինեցինք, կանգնեցրինք գերեզմանի վրա: Իսկ անթաղ ընկած դժբախտ կնոջ և իր մանկիկի դիակները բարձրացրինք բլրի գագաթը և այնտեղ հողին հանձնեցինք: Այստեղ էլ քունդների պոչից խաչ շինեցինք և դրեցինք: Տեղերը նշան ենք արել և երզվել. եթե ողջ մնանք, հուշարձան պիտի դնենք:

Ուշ, շատ ուշ վերադարձանք մեր մարագը,— նազարը խոր

շունչ քաշեց, ապա շարունակեց,— գիշերը մարագում անցկացրինք անքուն, ցնցող ցավերի մեջ: Առավոտյան մեկնեցինք հայկական թաղը, որ ավերված էր, բոցերի մեջ դեռ ծխում էր...

— Աստված մեր տունը քանդողի տունը քանդի,— ծանր հառաչեց Հայկազը:

— Մտանք նաև թուրքական թաղամասը: Բիթլիսից ուղարկված նոր հազարապետը միավորել էր ցարուցրիվ ավազակային խմբերը, զորքի հետ՝ շուրջ 600 հոգի, 200-ից ավելին՝ հեծյալներ: Երեկ հարձակման անցան Շատախի մյուս հայկական գյուղերի և պաշարված թաղ գյուղի վրա:

Իրիկուն էր, մութն ընկնում էր. գյուղից հեռացանք, հեռվից մի հայացք նետեցինք դեպի հետ: Ամայի, անշնչացած էր հայկական թաղը: Ավերակները դեռ ծխում էին, սևացած պատերով կանգնած էր էկեղեցին...

Նազարը խոսքն ավարտեց ու գլուխը կախեց.

Ո՞տնը լուռֆյուն իջավ:

...

Անցնում էին ծանր օրերը... Բարազողիկի ռազմաճակատի վրա իջել էր խավար գիշերը, խնկացնող քամին քշում-տանում էր Վանա լճից եկող սև, մութ ամպերը: Հեռավոր խուլ լեռների գագաթներին ճայթում էր կալծակը: Մարտից հետո հայ դյուցազունները զենքերը մաքրել, իրենց կարգի էին բերել, սնվել ու հանգստանում էին:

Ռազմաճակատի հրամանատարը, հրամկազմը ամփոփում էին մարտի արդյունքները, երբ ուրախ ժպտալով հրամանատարական կետ մտավ աշխույժ Մարգարիտը:

— Աչքներդ լույս, քեռի ներսեսը Քրդստանից վերադարձել է: Ջորիները ծանր բարձված: Հետն էլ երկու վալադ քուրդ,— ասաց նա:

— Այսքա՞ն շուտ,— Ասքանազն շտապեց դուրս:

Բոլորը հետևեցին նրան:

Ընդառաջ գնալով՝ ուրախ գրկախառնվեցին ներսեսի հետ:

— Հայր իմ, անսահման շնորհակալ ենք, լավ ժամանակ եկաք: Վերջին փանփուշտներն ենք կրակում:

Ողջունեցին, շնորհակալական խոսքեր ասացին նաև հրամանավար:

Կ. Ասլանյան Ա.

— Ի շնորհիւ սրանց,— ցույց տալով վալադներին,— ճանապարհին շատ դժվարութիւններ ենք հաղթահարել: Գիշերցերեկ՝ մեկ արած. լեռից լեռ, ձորերով շորիններին օգնելով, շտապել ենք մեկ ժամ շուտ հասնել:

— Իսկ ի՞նչ եք բերել,— հարցրեց Կիրակոսյանը:

— Նոր անգլիական զենքեր, փամփուշտներ, նոսակներ, Նակ գլղորայք: Նույնքան էլ դարբին Խեշոյի հետ ուղարկել եմ Կարաբողազի քաջերին: Արծաթափայլ մատուցերն էլ հրամանատարին նվեր,— իր ուսից հանելով, կախեց Ասքանազի ուսին:

Ասքանազը նվերի համար խոնարհաբար շնորհակալութիւն հայտնեց իր խնամակալ հորեղբորը:

— Թող այդ զենքը քեզ արիութիւն տա, որդի՛ս: Նման մեկն էլ ուղարկել եմ Սամվելին,— ասաց Ներսեսը:

Բերված զենքն ու զինամթերքը բաժանեցին շոկատներին: Դրանք արիութիւն նոր լիցք տվեցին հայ կամավորներին:

Ասքանազն ու Ներսեսը առանձին զրուցում էին, երբ հեծյալ հետախուզը ձիուց վայր թռչելով աճապարեց Ասքանազին զեկուցել:

— Պարոն հրամանատար, Ոստանի կողմից թուրքական մեծաթիւ զորամասը շարժվում է մեր կողմը:

Ասքանազն շտապեց հրամանատարական դիտակետը: Իսկ Ներսեսը շնորհակալութիւն հայտնեց բուրդ վալադներին և 50-ական տաճկական ոսկի տալով, հարգանքով ճանապարհեց:

Երկօրյա դադարից հետո թշնամու զորամասը մագլցում էր սարնիվեր: Մտածում էին լուսածեգին հանկարծակիի բերել փոքրաթիւ հայերին և ջախջախել իրենց դիրքերի մէջ:

Ասքանազը ժիր կապավոր աղջիկներին կարգադրեց.

— Շտապե՛ք ձեր շոկատները: Հրամանատարներին հաղորդե՛ք, որ պատրաստ լինեն հարձակվող հակառակորդի վրա փոթորկալից հրաձգային կրակ բացելու: Աղզանշանը կլինի մատուցերիս կրակոցը օդում:

Երբ թուրքերը հասան հրացանի հրաձգութիւն մոտիկ սահմանին, հրամանատարական դիրքերից տրվեց աղզանշանը:

Մարտն սկսվեց:

Թուրքերը նորից քնտրել էին հարձակողական տակտիկան և առանձին սուր գրոհներով այդ հարձակողական մարտերը տեղեցին երկու շարաթ: Թուրքերը կրկին պարտվեցին: Մեծաթիւ կորուստներ տալով նահանջեցին:

Ասքանազն այցելեց Մանուկի, ապա Կիրակոսյանի շոկատները: Շնորհավորեց հաղթանակը: Պարզվեց, որ նոր բաժանված զինքերը, առատ փամփուշտները նրանց հաղթանակի արիութիւն էին ներշնչել, որի համար էլ ամենուրեք կամավորները շնորհակալական խոսքեր էին ուղղում Ներսեսին:

— Խնդրում եմ, իմ մասին ոչ մի խոսք,— ասաց Ներսեսը,— շնորհակալ եղեք ամուր թիկունքից, որ ոչինչ չի խնայում քաջերիդ համար: Նման մեծ գործեր չի կարելի վերագրել անհատին:

Թիկունքում նույնպես գործում են հանուն մեր հաղթանակի: Գուր ձեր դիրքերում ավելի նվիրական գործեր եք կատարում: Պետք է ձեզ, ձեր քաջերիդ փայլուն հաղթանակը գովերգել, որ ձեռք և բերում արյան գնով:

Կանաչ սարի գազաթի դիրքերը բարձրանալիս Ասքանազին, Ներսեսին դիմավորեցին Դավիթը, տեր Հովհաննեսը: Դավիթը գրկեց Ներսեսին և ասաց. «Քաջերը գոհ են ձեզանից, լավ զենք եք բերել»:

— Կեցցե՛ք ձեր քաջերով,— վրա բերեց Ներսեսը և իսկույն ավելացրեց,— մեզ առաջնորդեք թշնամուն թեւանցելու մարտի վայրը:

Երբ տեղ հասան, Ասքանազը Դավիթին ասաց.

— Իմ քաջ եղբայր, գոհ եմ, շնորհակալ եմ քեզանից էլ, քո քաջերից էլ, անթերի կատարեցիք խնդիրը, ապրեք:

Թե՛ժ մարտի ծանր պահին Դավիթը մի խումբ քաջերով անեկատելի անցել էր գրոհող թշնամու ձախ թևը և հանկարծակի ուժեղ կրակ բացել. թշնամին խուճապի է մատնվել, նույն պահին էլ գավառեցի ուսուցիչ Հովակիմյանի խումբն էր նոսահներ թափել թշնամու վրա:

Մարտի դաշտը դիտելուց հետո, շոկատի հետ, Դավիթ խընդբանջով հրամանատարները նստեցին ճաշի, Զինվորներին, նրբանց օգնող կանանց հաղթանակի առթիւ շնորհավորելուց հետո Ասքանազը դիմեց տեր Հովհաննեսին, ասելով.

— Տերհայր, մարտիկների անունից շատ շնորհակալ եմ, որ այս դժվարին պայմաններում, մեր հողատար հայ կանանց հետ կազմակերպել եք հիվանդների հրաշալի խնամքը, մեր քաջ մարտիկների սնունդը: Մարտերի ամենաթե՛ժ պահին՝ խրամա-

տից խրամատ եք անցել: Սուրբ խաչով քաջալերել եք մարտիկ-
ներին, նրանց կողքին քաջի պես կուվել, օրինակ եք ծառայել
ամենրին: Կանանց հետ վիրավորներին շալակած տեղափոխել
եք, բուժօգնություն եք կազմակերպել ձեր աղջկա՝ Գայանեի
հետ:

— Այս բոլորի համար, — պատասխանեց տերհայրը, —
առաջին հերթին պարտական ենք ձեզ, գյուղապետներին, մեր
ներսեսին, որ ահեղ վտանգի առաջին օրերին մեզ, 1898-ի օրի-
նակով, ոտքի հանեցիք, կազմակերպեցիք Փեսանդաշտի պաշտ-
պանությունը և շատախցի քաջի հետ խելամտորեն ղեկավա-
րում եք մեր պայքարը վայրագ թշնամու դեմ: Այլապես, թուր-
քերը կմտնեին Փեսանդաշտ բոլորիս կկոտորեին, տակնուվրա
կանեին, կբնաջնջեին, ինչպես Գավաշի, Հայոց ձորի, Շատախի
հայերին:

Կներեք ինձ, մեկ անգամ էլ եմ ձեզ խնդրել, — տեր-
հայր, այլևս իմ մասին գովեստի խոսք չլսեմ: Այս ամենը
ես շեմ արել, այլ իմ հայրենիքի պահանջն է դա: Ես իմ տառապ-
յալ ժողովրդի ծնունդն եմ, նրանից եմ սերվել, նրան եմ պար-
տական: Հայրենիքի հանդեպ պարտքի կատարումը հատուցում
չի պահանջում:

Հրամակազմը և մարտիկները հարգանքով ու պատվով ճանա-
պարհ գրեցին ռազմաճակատի ղեկավարությունը:

Ծանր մարտերից հետո երեկոն խաղաղ էր, նույնիսկ հմա-
լիչ: Ասքանազը մենակ, խորասուզված մտքերի մեջ քայլում
էր ծաղկաշատ կանաչ սարում: Բայց ահա զլուխը բարձրացրեց,
հայացքն ուղղեց երկնակամարին, փայլատակող աստղերին,
մեծ ու փոքր արջերին, հարդագողի ճանապարհին, անվերջ
ձգվող գմբուխտ լեռներին, կանաչ հովիտներին: Նրա սիրտը
լցվեց խաղաղության կարոտով:

«Քանի՛-քանի՛ դարեր են եկել ու անցել այս զմրուխտ սա-
րերի վրայով: Եվ ահա իրենք կանգուն են մնացել, — մտածեց
նա: Քանի՛-քանի՛ մարդկային կյանքեր են եկել, արարել,
ստեղծագործել ու զնացել այս հիասքանչ աշխարհից: Քանի՛-
քանի՛ մայրեր են եկել որդիներ ծնել, գուրգուրելով մեծացրել
ու պահպանել իրենց ցեղը, նրանք կուվել են դաժան միտպետ-
ների դեմ, մասնակցել արյունահեղ պատերազմների, խաղաղ
պահերին ծաղկեցրել հողը՝ իրենց բնօրրանը ու այդպես իրեն-
ցեղի, աղգի գոյությունը պահպանելով զնացել են: Հիմա հերթը

մերն է...»: Մտածում էր նա ու ծանր էր շնչում. սիրտը ցավում
էր ամեն մի զոհի, ամեն մի վիրավորի համար, որ իր զոհված
խիզախներին փոխարինողներ չկան: Անհանգստանում էր՝ ին-
չո՞ւ թշնամին երկու շաբաթվա փոթորկալից մարտերից հետո
անսպասելիորեն նահանջեց՝ ռազմի դաշտում անտեր թողնելով
մեծաթիվ զոհեր, ծանր վիրավորներ... Մտքերի մեջ սուզված
սպասում էր իր քաջ հետախույզների նոր տեղեկություններին:
Ու մերթ-մերթ սթափվում էր մարտի դաշտում անօգնական
թողնված հակառակորդի վիրավոր զինվորների ծանր տնքոց-
ներից, մահամերձների ճիչերից...

Այդ ապրումների մեջ նա խոր հառաչեց.

— Ա՛խ աստված, այս աղետաբեր պատերազմը ե՞րբ կդա-
դարի, ե՞րբ ժողովրդին խաղաղություն կլինի, երբ արդարու՞թյուն
կիջնի Հայոց աշխարհին:

Հանկարծ նա ոտքի ձայն լսեց. շտապ հետ նայեց. Մանուկն
էր, փնտրում էր իրեն՝ հորեղբոր որդուն, հարազատ հրամանա-
տարին:

— Ասքանազ, էս ուր ես հասել, ինչո՞ւ ես այդքան խորա-
ցել թշնամու ռազմի դաշտի մեջ: Շատ ես սիրում գիշերային
լուռ մենակությունը:

— Է՛, եղբայր, շնորհակալ եմ, թե չէ մտամուրթ տ՛վ գիտե
ուր հասնեի: — Նրան թևանցուկ արեց: — Մանուկ, կարծում ես,
որ մարտիկների տրամադրությունը, մարտունակությունը բար-
ձրը պահելու համար կատակում եմ, ուրախացնում, սիրտս էլ
է ուրա՛խ...

— Ո՛չ, իհարկե, սիրելի՛ եղբայր, — մեղմ ասաց Մանուկը, —
ես հասկանում եմ, — զնա՛նք, հրամկազմը հավաքված քեզ է
սպասում:

Հրամանատարական կետը, ուր հավաքվել էին ռազմաճա-
կատի խորհրդին, կիսագետնափոր մի տնակ էր՝ հատակին խը-
սիրներ, մորթիներ: Գլխավոր հրամանատարը ներս մտնելով,
առույգ բարևեց բոլորին և ներողություն խնդրեց ուշացման հա-
մար:

Մի քանի խոսքով ամփոփելով մեկ շաբաթվա մարտերի ար-
գյունքները, զլխավորն ասաց.

— Ինչպես միշտ, այժմ էլ առաջինը լսեմք տասնապետնե-
րին: Խնդրում եմ խոսել նաև բաց թողած սխալների մասին:

Տասնապետներից խոսեցին Տրդատը, Նշանը, Հայրապետը, Տիգրանը, ուսուցիչ Հովակիմյանը. նրանք իրոք բացթողումներն էլ նշեցին, որոնք ուշադրության էին արժանի. Հետո արեցին առաջարկություններ:

— Քույրիկ Գայանե, հարգալից դիմեց Ասքանազը,— Գուք ասելիք ունե՞ք:

— Այո՛, մի քանի խոսք մեր երիտասարդ կանանց և աղջիկների մասին. անտեսելով մահվան վտանգը, սիրով տարւած տեղափոխում ենք եղբայրներին, մեծ բավականություն ենք զգում նրանց ծառայելիս, հպարտ ենք զգում մեզ քաջերի շարքում: Առանձնապես շնորհակալ ենք բերված դեղորայքից, բայց դեզի կարիք էլի շատ ենք զգում...

— Կարաբողազի քաջերից եղբայրական ողջույն,— ասաց անսպասելիորեն ներս մտնող հետախույզ Մարտիրոս Նշանյանը, ու գրկախառնվեց առաջին իսկ հանդիպողին, ապա՝ հրամանատարին ու մյուսներին:

— Ինչպես երևում է եղբայրներին տեղը տաք է,— ժպտալով կատակեց Մարտիրոսը:

— Ճշմարիտ ես, եղբա՛յր, թշնամու գնդակների տարափի տակ շատ է տաք,— հարգալից պատասխանեց հռոեղջի Դավիթը:

— Ոչ պակաս ծանր վիճակում ենք մենք,— ասաց Մարտիրոսը,— Ալի էհսան փաշայի զորքերը, չնայած մեծաթիվ կորուստներին, շարունակում են կատաղի գրոհել Շատախի և մեզ վրա,— նա Ասքանազին հանձնեց Սամվելի ուղարկած նամակը:

Ասքանազն իսկույն վերցրեց նամակը և առանձնացավ. նա կլանված կարդում էր, հրաշալի շարադրված մտքերը: Ավարտելով նամակը, Ասքանազն ասաց.

— Ցավում եմ, սիրելի Մարտիրոս, մեղանից ոչ պակաս ծանր մարտեր եք մղել: Չեր խիզախ հրամանատարը հրաշալի է ղեկավարում մարտերը: Ես ուրախանում եմ Հրանտի խիզախությունների համար: Խնդրում եմ նրան միշտ աջակցեք, օգնեք, նա քաջ է, հայրենասեր, բայց անփորձ է: Միշտ հիշեցեք, որ թշնամին կարող է խարդախել, խաբել:

Հրամանատարը հիշեց նաև Սամվելից ստացած նամակի մասին:

— Սամվելը,— ասաց նա,— զովում է Քրդստանից բերված զենքը, մարտական ողջույններ է հղում: Առաջ է քաշում ուժե-

րի համախմբման, միջոցների խնայողարար օգտագործման, համալրումների նախապատրաստման, գյուղերում կատարվելիք աշխատանքների հետ կապված հարցեր: Ուշադրավ մտքեր են: Պետք է մտածել:

Քիչ հետո բաճկոնի գրպանից հանելով ժամացույցը, Ասքանազն ասաց.

— Եղբայրնե՛ր, դիշերն անցնում է. անցե՛ք ձեր տեղերը, հանգստացե՛ք, պատրաստվեցե՛ք արշալույսին:

Երբ բոլորը գնացին, Ասքանազն ու Մարտիրոսը մնալով առանձին ղեռ երկար զրույցեցին Կարաբողազի ճակատամարտի, Փեսանդաշտի ճակատագրի մասին:

Նրանք այցելեցին «խոհանոց»: Գեռ հեռվից օջախներում երևում էր աթարի վառվողն կրակը. պղինձներում խլթխլթում էր ճաշը: Աղջիկների մի մասը հերթապահում էր, մյուսները քնած էին:

Կանանց շերմ բարեկեցին, նրանց աշխատանքով հետաքրքրվելով Մարտիրոսը ողջույններ հաղորդեց Կարաբողազի մարտիկների, հատկապես խոհարար կանանց կողմից: Կարճատև զրույցից հետո Ասքանազը և Մարտիրոսը գոհունակություն ու շնորհակալություն հայտնեցին հայրենիքին մատուցած անձնըվեր ծառայության համար ու մեկնեցին: Երբ քիչ հեռացել էին Ասքանազը Մարտիրոսին ասաց.

— Ի՛նչ հրաշալի հայրենանվեր գործերի են ընդունակ մեր գեղանի ու համարձակ հայ կանայք: Նրանք մեր հպարտությունն են: Ամեն մեկը մի գեղեցիկ հարսնացու է: Մի տան ճրագ:

— Նրանց պետք է տեսնել թե՛ մարտերի պահին, ինչպիսի՞ ոգևորությամբ, անօրինակ արիությանբ են կռվում, ինչպիսի՞ հնարամտություններ են գործադրում, ինչպես են մեկը մյուսին օգնում, ոգևորում: Հայրենասիրական կոչեր, երգեր «Կեցցե՛ հայրենիքը», «Կեցցե՛ անմահությունը»:

— Թող քնեն զարնան շնչով, անուշ քնեն հանգստանան,— ասաց Ասքանազը,— նրանք են մեր ուժը, մեր հույսը: Շատ են շարչարվում: Այս վերջին ծանր մարտերում շատ հոգնեցին:

Խոր լուռության մեջ մի պահ կանգ առան, ապա քայլեցին դեպի մոտակա դիրքերը: Այնտեղից լսվում էր ժամապահ պլիթենցի Հարթենի քնքուշ ձայնը: Նա երգում էր հայոց արյունով զբրված «Աղանալի ողբը» երգը:

Կոտորածն անգութ, հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Ադանան,
Կրակ ու սուրեր և անխիղճ թալան,
Չորացավ, թռչնեցավ ծառ, ծաղիկ, շուշան:

Երեք օր—գիշեր կրակը ներսեն,
Թշնամու սուրը, գնդակը դուրսեն,
Ջնջեցին հայը երկրի երեսեն,
Արյուն կվազե մեր ջինջ գետերեն:

Բուպնը շանցավ ու հայոց խեղճեր
Ընկան սուրին տակ խուժանին աճեղ,
Ժամեր ու դպրոց բոցի մեջ կորան,
Բյուրավոր հայեր անխնամ մեռան:

Այ մի տար լույսդ, պայծառ արեգակ,
Լուսին, շուրջդ կապե դուն սուրին մանյակ.
Անցավ մեր երկրեն վայրենի խորշակ
Թուրինյան տունը ըրավ ավերակ:

Պարսպ է, «ավազ», հարուստ Ադանան,
Մոխր է դարձել ամբողջ Կիլիկիան,
Միայն ապրեցավ Հաճընը սիրուն.
Ինչո՞ւ չի շարժվի, ապառաժ Զեյթուն:

— Ա՛խ, Մարտիրոս, այս երգը լսելիս սիրտս ճմլվում է:
Այդ ազգամուլ երիտթուրքիայի կուսակցության 1809-ի գազան-
ների և բարբարոսների ծրագրված առաջին հարձակումն էր
Ադանայի և նրա շրջակա հայաբնակ գյուղերի վրա և սրի քա-
շեցին 18.000 անգեն, անմեղ հայերի, որից 8672-ը՝ Ադանայից:

Այդպես գրուցելով, քայլեցին դեպի կանաչ սարի գագաթը:
Մոտեցան մեծ քարի տակի լուսնի շողերի տակ արծաթի փայլ
առնող աղբյուրին, ցած դրին մաուզերները, բացեցին օձիքները,
պաղ ջրով լվացվեցին, թարմացան: Հետո լեռան գագաթից
նայեցին իրենց շուրջը, դեպի բացվող երկիւնքը: Արշալույսը
սփռվում էր Վասպուրական աշխարհի վրա, արդեն չբվել էին
երկիւնքը զարդարող աստվածային ճրագները:

Ասքանազը մի պահ նայեց ներքև. հայոց Արզար թագավո-
րի լճափնյա մայրաքաղաք, Արծրունյաց գահանիստի Ոստան
քաղաքը թաղված է կանաչի մեջ:

— Եղբա՛յրս, նայիր: Դեպի ձախ, Արտուս լեռան ճերմակ գա-
գաթն է: Առջևից հայելու պես փայլում է Վասպուրականի մար-

գաբիտը՝ Վանա կապուտակ լիճը: Նրա մեջ հպարտ կանգնած
է հայոց հրաշալիքը՝ արևմտահայության հոգևոր կենտրոնը՝
Ազրամարը, իսկ հեռու հորիզոնում՝ Կոտուց և կիմ կղզիները, հե-
տո Միֆանը իր 4434 մ բարձրությամբ Հայկական լեռնաշխարհ-
համ միայն Մասիսին է գիշում: Խրիմյան Հայրիկի կ սցարանն
է՝ Վարազա սարը, Հայոց ձորը իր կանաչ դաշտով, որտեղ ըստ
ավանդության Հայկն իր վերջին ճակատամարտում ջախջախեց
հակա Բելի բանակը, հիմք դրեց Հայկազունյաց առաջին տոհ-
մին: Այս ամենը երևում է Բարադոզիկի սարի գագաթից, տես-
նում ես մի հայացքով:

Ասքանազը հուզվել էր և տխուր հառաչեց.

— Ա՛խ, իմ քաղցր Վասպուրական, երկիր հայրենի, որքան
սիրուն ես քո զմրուխտ սարերով, կանաչ բերքատու դաշտերով,
արծաթափայլ լճերով, պաղ աղբյուրներով, լեռներից հոսող
աղմկոտ գետերով, քո պատմական անցյալով, հին ու շին քա-
ղաքներով, գյուղերով, քո բոլոր-բոլոր հրաշալիքներով: Կյանքս
քեզ մատաղ կանեմ, միայն թե հավերժ կանգուն մնաս քո բա-
րեբար, հայ ժողովրդի հետ... Եթե կաս, տե՛ր արարիչ, ինչո՞ւ
ես հանդուրժում այս անարդարությանը: Ո՞ր մեղքի համար է
անարգ թուրքը իմ ժողովրդին րնաջնջում իր բնօրրանի մեջ:

— Այո՞՛ ճիշտ ես, եղբայր,— արձագանքեց մանկության
ընկեր Մարտիրոսը:— Եվ դա այն դեպքում, երբ մենք այդքան
պարտք ենք հատուցում ամենակարող աստծուն, առաջին հեր-
թին եկեղեցի ենք կառուցում, աղոթում, սակայն այսօր մեռ
կործանման, րնաջնջման ահեղ պահին նա ինչո՞ւ է լռել: Անարգ
թուրքերը մեր կանանց պղծում են սուրբ եկեղեցում, անառա-
կում, ծաղրում մեր հավատը, հղի կանանց, մատղաշ մանուկ-
ներին սվինահարում են, մեր գյուղերն ու քաղաքները ավերում,
մեր սրբավայրերը, որտեղ հարյուրավոր տարիներով մոմ ենք
վառել, ծնկաչոք աղոթել ենք աստծուն, այսօր վեր են ածել
անառակության վայրերի, ախոռների, քանդել, ավերել են... Չէ՛,
ես էլ չեմ հավատում նրա արդարությանը... նրա զորությունը:

— Սիրելի՛ եղբայր,— սփափվելով ասաց Ասքանազը,—
հարևանության և հավատի իրավունքով մեր փրկության հույսը
ոուս մեծ ժողովուրդն է, նրա փառապանծ բանակը. ահա մեր
տառապայալ ժողովրդի ազատագրման միակ ճիշտ ուղին,— նա
ձեռքը դրեց Մարտիրոսի ուսին:

Մանկության, պատանեկության ընկերները, մտորումները

Թոթափելով մեկնեցին դիրքերը: Հանքակտուր սարնիվեր բարձրացող խիզախ հետախույզ թխադեմ Ռուբենին տեսնելով, կանգ առան, 16-ամյա լայնաթիկունք, խոշոր մարմնով պատանին հպարտ կանգնեց գլխավոր հրամանատարի առջև, ալյա թևքով սրբելով անձրևի պես դեմքից թափվող քրտինքը, համարձակորեն զեկուցեց.

— Պարոն հրամանատար, ես գալիս եմ Ոստան քաղաքից: Քաղաքը խառը գրուծյան մեջ է, ինչպես ասում են՝ շունը տիրոջը չի ճանաչում:

— Ի՞նչ է պատահել, Ռուբեն, հանգիստ խոսիր, — հեացող պատանու խոսքն ընդհատեց գլխավոր հրամանատարը:

— Ռուսական բանակի առաջխաղացումը դեպի Վան, — շունչ առնելով շարունակեց հետախույզը, — թուրքերի մեջ մեծ իրարանցում է առաջացրել: Լուր է ստացվել, որ քաջ Անդրանիկը, զենեքալ նազարբեկովի զորքերի օգնությամբ, Սոֆիանի ու Գիլմանի ռազմաճակատում կանգնեցրել է հալիլ փաշայի 30-հազարանոց բանակին և լավ ջարդ տվել: Փաշան մեծաթիվ կորուստներով նահանջել է: Վանի կուսակալ Զեվդեթ փաշայի հրամանով լրացուցիչ զորահավաք են կատարում նահանջող փաշայի բանակը համալրելու համար: Բնակչության մեջ գաղթելու շրջաններ կան:

Կուսակալից շտապ կարգադրություն է եկել: Այսօր մեզ վրա հարձակվող զորամասերն ուղարկելու են պաշարված Վանի վրա՝ ձնշումն ուժեղացնելու:

Շուրքի բեյը մեզ վրա մեծ ոխ ունի: Գավառից զորամասերի է սպասում, որպեսզի վճռական գրոհով մտնի Փեսանդաշտ:

Ասքանազին շատ ուրախացրեց ռուսական բանակի առաջխաղացման, Անդրանիկի փայլուն հաղթանակի լուրը: Նա ամուր գրկեց պատանուն ու համբուրեց, ասելով.

— Այրե՛ս, եղբայրս, շատ ապրե՛ս: Շնորհակալ եմ քո բերած ուրախալի լուրի համար: Կամրոջ ժամանակ սրան էի սպասում: Մեր հաղթանակն ապահովված է: Հայն ազատագրված է...

Ասքանազը լավ գիտեր արյունարբու հալիլ փաշային: Նա զինվորական կրթություն է ստացել Գերմանիայում, եղել է Բիթլիսի նահանգապետը, երիտթուրքերի կուսակցության պարագլուխներից մեկն է, սուլթան Համիդին գահընկեց անողներից:

Կեցցե՛ս Անդրանիկ, մե՛ր ազգային հերոս, մե՛ր պատիվ:

— Ռուբեն ջան, քիչ հետո նորից հարցրեց հրամանատարը, — ուրեմն, ասածներդ ճիշտ են:

— Էն ասվածը վկա, ինչ կասեմ, ճիշտ կասե՞մ, — երզվեց պատանին, խաշակնքեց դեմքը:

— Իսկ ո՞ւր են քեռի Ղևոնդը, հովիվ Սուքիասը...

— Քեռի Ղևոնդը շատ համարձակ է, Կարծես ծնված օրից հետախույզ է եղել. ամեն տեղ մտնում, խոսում է, ոչ ոք չի կասկածում նրան: Մե՛կ զինվորականի շորեր հագած՝ զինվորականի մեջ, մե՛կ կարմիր ֆեսը գլխին՝ վաճառականների մեջ, մե՛կ էլ շորան դարձած՝ ժողովրդի մեջ: Երբ վրա հասավ մութը, մեզ հավաքեց անտառը: Նրա հետ էին նաև իր ծանոթները՝ մեկը գավառացի էր, Շուրքի բեյի նախկին վերակացուն, մյուսն էլ՝ պլթենց գյուղացի: Հայեր էին: Ամփոփեցինք մեր տեսածները. լսածները: Քեռի Ղևոնդը ասաց, թե մեզանից ով ինչ է անելու: Ինձ հանձնարարեց մինչև առավոտ հասնել ձեր մոտ ու զեկուցել: Երկու անգամ կրկնել տվեց, թե ինչ եմ զեկուցելու:

Իրենք բաժանվեցին երկու խմբի: Ինքը և գավառացին մեկնեցին Ոստանի նավահանգիստը, որ մտնեն Աղթամար, իսկ Սուքիաս պապը պլթենցու հետ գնաց Վարազա սարը:

— Վերադառնալիս ի՞նչ ճանապարհով ես եկել, քեզ ոչ ոք չի՞ հանդիպել:

— Ո՛չ, ինձ ոչ ոք չի տեսել: Քեռի Ղևոնդի ասած՝ ճանապարհով եկա: Միայն անտառում, խոր մթի մեջ, խշխշոց լսեցի. դաշտյան պատրաստ ուշիուշով հետազոտեցի, տեսա, որ մի քանի անտեր անասուն մեջք մեջքի տված նստել են:

— Խոկիդ ուտիմ, մեր լաճ, դե ասա վախեցել ես էլի, թեթև ժպտալով կատակեց Մարտիրոսը:

— Զէ՛, չէ՛, հորս արևը, շեմ վախեցել, — համարձակ պատասխանեց Ռուբենը, թևքով սրբելով դեմքից հոսող քրտինքը:

— Նա քաջ տղա է, Մարտիրոս, վախկոտ լիներ, հետախույզ չէր լինի, — Ասքանազը շուրջ Ռուբենի գլուխը: — Լեռնցի է, չէ՞... Մարտիրոս, ժամանակ չկորցնենք, — շտապի՛ր, տերհոր հետ մեկնեք գյուղերը, Ռուբենի բերած լուրերը հաղորդեք բոլորին, նաև Սամվելին:

Իսկ ինչ վերաբերում է Շուրքի բեյին, նոր ուժերով թող գամենք նրան լավ դաս կտանք: Նա իր պաճուճակը կտեսնի, Փեսանդաշտը չի տեսնի:

Բարադողիկից Հառեղ եկող գյուղական ճանապարհին ամպի

պես բարձրացող փոշին արևի շողերին խառնվելով, փայլում էր։ Այնտեղից երևում էին դեպի գյուղ սլացող երկու ձիավորներ։ Նրանք շտապում էին շուտ գյուղ հասնել։ Գյուղամիջի հրապարակում նրանց անմիջապես շրջապատեցին գյուղացիները։ Կայծակի արագութեամբ գյուղերում տարածվեց ոռուական բանակի հաղթական առաջխաղացման, Անդրանիկի քաջագործությունների լուրը, որը փոխեց գյուղացիների տխուր տրամադրությունը. նրանք ուրախութեամբ բացականչում էին՝ «մենք ազատագրված ենք սուլթանի ստրկությունից։ Կեցցե՛ ազատ Հայաստանը...»։

* * *

Շտապի Համիդի բեյը, խիստ զայրացած փեսանդաշտցիների հաջող ինքնապաշտպանությունից, նախապատրաստվում էր վրեժ լուծել կարարողագրիներից։ Ապրիլի 30-ի վաղ առավոտյան նրա բանակն անցավ հարձակման։ Իսկույնեթ մարտը լուրջ բնույթ կրեց, և այդպես շարունակվեց 5 օր։ Երկու կողմերից էլ զոհերի քանակը ավելանում էր։ Ճիշտ է, կամավորները դիրքային առավելություններ ունեին, բայց շարքից դուրս եկողին էլ փոխարինող չկար։ Իսկ թշնամին ամբողջ ռազմաճակատով անընդհատ ուժեղացնում էր ճնշումը։ Սամվելը կարգադրեց կանանց ուղարկել դիրքերը՝ իրենց եղբայրների հետ մեկտեղ կրակելու թշնամու վրա. արյան գնով էլ թշնամու հարձակումը պետք է կանխել։ Նա հեռադիտակը աչքից չէր իջեցնում. ուշադրություն դարձած դիտում էր հակառակորդի տակառիկական գործողությունները, որը ճիշտ օգտագործելով տեղանքը, մայիսի 4-ին, իր ուժերը կենտրոնացրեց ձախ թևում՝ Հրանտի ջոկատի մարտական գործողություններն ավելի լուրջ բնույթ ստացան։ Սամվելը հրամայեց կապավորին.

— Շտապ հասի՛ր Մեսրոպի մոտ, ասա՛, որ ջոկատներից վերջնի տասական քաջեր, շտապ գնա Հրանտին օգնություն. իր ջոկատի ղեկավարությունը թող հանձնի տասնապետ Առնակին։

Երբ Մեսրոպը օժանդակ ուժերով տեղ հասավ, Հրանտը արդեն չկար։ Նա քաջի մահով ընկել էր։ Պարզ երևում էր, թուրքերը սվինամարտի էին ձգտում, բայց հայ նոնակաձիգները խափանել էին նրանց մտահոգացումը։ Հրանտը ողջունել էր քեռի Բաբկենին, նրա մարտիկներին՝ փայլուն հաղթանակի համար ու մեկնել Աշոտի մարտիկների մոտ։ Մնացել էր մի քանի քաջ միջնա խրամատը, երբ թշնամու նշանառուն կրակեց նրա վրա։

Մկրտիչն այդ նկատելով, շտապ մոտեցավ Հրանտին, առնելով մեքեն, փորձող հասավ բլրակի հետևը։ Հրանտին զգուշութեամբ պառկեցրեց, բացեց օձիքը, կուրծքը. նա ծանր շնչում էր։ Թշնամու գնդակը ձախից ծակել էր կուրծքը, ուժեղ արյունահոսում էր։ Մկրտիչը պատռելով իր շապիկը, կապեց վերքը, շփեց դեմքը։ Հրանտը դանդաղ բացեց աձխի պես սև աչքերը. հայացքի մեջ ապրելու կարոտ կար. դանդաղ շարժվեցին շրթունքները.

— Ո՛ւր է իմ Զարուհին։

— Զարուհին քաջերի կողքին, քաջի պես կրակում է թշնամու վրա, — պատասխանեց Մկրտիչը։

— Զարկե՛ք, զարկե՛ք, նրանք մեզ շատ են զարկել, — ծանր շնչելով ասաց Հրանտն իր վերջին խոսքերը։

Մկրտիչին ուղղված՝ Զարուհուն տեսնելու կարոտով, Հրանտի սև աչքերը հավիտյանս փակվեցին։

— Հրանտ, Հրանտ, հոգիս...

Մկրտիչը խոր վշտի մեջ գրկեց սիրելի հրամանատարին, մարտական ընկերոջը, ջերմ համբուրեց նրա գեռես տաք ճակատը, շոյեց աձխի պես սև մազերը։ Երկու կաթիլ արցունք ընկան քաջ հրամանատարի սառչող դեմքին։

Մեսրոպը իր քաջերով միացավ Աշոտի ջոկատին և փոթորկալից մարտի ղեկավարումն իր ձեռքը վերցրեց։ Իրենից առաջ այստեղ էր եկել նաև տեր Պողոսը մի խումբ կանանց հետ։

— Զարուհի, ինչպե՛ս է Հրանտը, հարգալից հարցրեց Մեսրոպը։

— Ինչպես միշտ քաջ հրամանատարը իր մարտական դիրքում է։

Սամվելը հրամանատարական դիրքից վարպետորեն ղեկավարում էր ծանր մարտը՝ հանգիստ շտալով կապավոր պատանիներին, աղջիկներին, որոնք գնդակների տարափի տակ, շքեղապետությամբ, քրտնախաշ վազում էին խրամատներից խրամատ, ջոկատների հրամանատարներին, տասնապետներին հասցնում հրամանատարի հրահանգները, ցուցումները. ստեպ-ստեպ վերադասավորում էին ուժերը, որն անակնկալի էր բերում թշնամուն։

Զգալով հայկական դիրքերի անառիկությունը, թուրքերը մայրամուտին թուլացրին գրոհների թափը, իսկ մուսն ընկնելիս հետ քաշվեցին։

Գլխավոր հրամանատարը գոհ էր հայ կամավորների սխրագործություններից: Նրան առանձնապես հիացրել էր ձախ թևում հաջող գործող Հրանտի ջոկատը: Եվ ահա սպասում էր տեղերի հաղորդումներին: Առաջինը ներկայացավ երեսը դեռ անհիշ շտեպած, կրակոտ Արտակը: Այնուհետև՝ գյուղապանները և մյուսները: Բոլորի ձեռքը սեղմելով, գլխավոր հրամանատարը շնորհավորում էր փայլուն հաղթանակը: Մարտական խնդիրը գերազանց էր կատարված: Իսկ սովորաբար, երբ ճակատամարտը շահում ես, ոգևորվածությունից հոգնածություն չես զգում... Բայց դեռ չէին եկել բոլորը. անհանգիստ սպասում էին Հրանտին, Զանոյենց Մեսրոպին, տեր Պողոսին: Եվ այդ պահին խիստ հուզված, տխրահեմ ներկայացավ Մարտիրոսը:

— Ի՞նչ է պատահել, խիստ հուզված ես, Մարտիրո՞ս, անգամ չողջունեցիր մեզ,— հարցրեց գլխավոր հրամանատարը:

Մարտիրոսը խոր հառաչեց, հուզված հայացք գցեց Սամվելին, ապա ընկերներին, գլուխը տխրությունից խոնարհեց. խելզված կոկորդով ծանրորեն ասաց.

— Այսօրվա մարտի գլխավոր հերոսը չկա... Մարտի վերջին պահին նա ընկավ հերոսի մահով:

Սամվելը, Հրանտի մահը լսելով, ցնցվեց: Սրտի ծանր ցավ զգաց ու ճշաց.

— Ինչպե՞ս թե... մի՞թե չկա իմ խիզախ հրամանատարը:

— Այո՛,— տխրությունից պատասխանեց Մարտիրոսը:

— Ո՞րտեղ է քաջի աճյունը:

— Բլրի հետևում:

— Ո՞վ կա նրա մոտ:

— Զարուհին, Մեսրոպը, Մկրտիչը:

— Զարուհի՞ն էլ է այնտեղ,— հուզված շշնջաց Սամվելը:

— Այո՛, և շատ ծանր է տանում Հրանտի մահը:

— Խեղճ աղջիկ, ինչպիսի սրտով էր սիրում այդ հրաշալի երիտասարդին,— խոր հառաչեց:— Ա՛խ, Հրանտ, Հրանտ, այս ի՞նչ արեցիր, իմ քաջ ասպետ...

— Իսկ ո՞րտեղ էիք դուք՝ Մեսրոպը, Մկրտիչը: Չէ՞ որ ես ձեզ զգուշացրի, որ նայեք Հրանտին: Նա տաքարյուն է, իր անձի նկատմամբ զգուշ չէ:

— Ի՞նչ կարող էինք անել: Նա մարտը վարում էր շատ խելացի ու կազմակերպված: Հիանալի տեսադաշտ ուներ, արագ կողմնորոշվում էր բոլոր հարցերում, ժամանակին օգնություն

հասնում բոլորին: Հիացած, չէինք համարձակվում դիտողություններ անել: Գիտեք, որ նա սիրում էր գործել ինքնուրույն, և երբեմն մոռանում էր իր մասին: Եվ ահա անգուշ թալը կարեց նրա երիտասարդ կյանքի թելը:

— Եղբայրներ՛ր,— դիմեց ներկաներին Սամվելը,— բոլորդ ձեռք տեղերում զբաղվեք ձեր ջոկատների մարտիկների հարցերով: Ես, հայր Գալուստը և Մարտիրոսը կմեկնենք քաջի աճյունի մոտ:

Մարտն ավարտելուց հետո Զարուհին և Մարտիրոսը, խրամատում խոստում էին հայ մարտիկների անօրինակ սխրագործությունների ու փայլուն հաղթանակի մասին: Զարուհին, ուրախ արամադրությունից, հարցրել էր իրենց մոտեցող ջոկի հրամանատարին:

— Քեռի Բարկեն, իսկ ո՞րտեղ է Հրանտը: Պետք է շնորհավորել նրա փայլուն հաղթանակը:

Բարկենը, փոքր լոկուց հետո, հուզված և տխուր պատասխանեց

— Բլրակի հետևում է, թեթև վիրավորված է:

Զարուհին սթափվեց, ուրախ տրամադրությունը փոխվեց.

— Ինչպե՞ս թե վիրավորված է,— ճշաց ու վաղեց իր քաջ ասպետի մոտ: Նրան հետևեց Մարտիրոսը:

Երբ տեղ հասան, Մեսրոպը, տեր Պողոսը, Մկրտիչը ձեռքները ծալած կրծքներին, գլուխները խոնարհած, քար լուծված կանգնած էին, իսկ գթության բույրը ծնկի եկած՝ արտասվելով, սրբում էր Հրանտի կրծքի արյունը:

— Հրանտ, սիրելի՛ս, ճշարտ աղջիկն իրեն նետեց դեպի իր ասպետը: Ռազմիկ օրիորդի վիշտը ցնցեց մարտական ընկերներին:

— Տե՛ր աստված, այս խեղճ աղջկան ո՞վ իմաց տվեց,— ասաց տեր Պողոսը և բարձրացնելով, գրկեց Զարուհուն:

— Հանգիստ, հանգիստ, պահի՛ր քեզ, օրդի՛ս: Վիրավորին հանգիստ թող:

Զարուհին հարգալից լսեց հոր մարտական ընկերոջը, ոտքի ելավ, գլուխը դրեց նրա կրծքին, փղձկաց... Սակայն, երբ կրկին նայեց Հրանտի ճերմակ բիստով փաթաթված կրծքին, ջուրջը նստած ողբացող ընկերուհուն, ճշաց ու տերհոր գրկից

իրեն նետեց Հրանտի վրա: Շույնց Հրանտի դեմքը, սարսուռ անցավ մարմնով, կրծքին դրված նրա ձեռքերը դրեց իր կարտատած շրթունքներին, ստուգեց արդյոք, իր ծաղիկ սերը շնչում է: Ցնցվելով ճշաց:

— Ի՞նչ եք քարացել կանգնել, օգնեցեք, աղաչում եմ, իմ երջանկովթյան ասպետը սառչում է, լսո՞ւմ եք, նա չի շնչում... Գրկելով անշնչացած մարմինը, խելագարված ողբում էր, լացով համբուրում, արյունոտվում էր նրա սառչող արյունով: Ծանր էր այդ ողբի տեսարանը: Աղջիկը, որ քիչ առաջ մարտում հերոսաբար կռվում էր, այժմ կանացի նուրբ զգացմունքներով ողբում էր, ասես հալվում: Տերհայրը թաշկինակով սրբեց իր աչքերը, մոտեցավ, վեր բարձրացրեց հերոսուհուն, դեմքը սեղմեց կրծքին ու իր լացը զսպելով ասաց.

— Վե՛ր կաց, որդիս, մեր բարերար ազգը ծով վշտերի ու ողբի մեջ է: Բոլորիս համար ծանր է հերոս հրամանատարի, բռնոր հայ քաջերի կորուստները, սակայն ժամը չէ լացի ու ողբի. դու քաջ զինվոր ես: Զինվորը մարտի դաշտում չի լալիս, այլ կռվում է քաջաբար: Հրանտի սերն ու քաջությունը թող ուժ տա քեզ: Մենք պիտի առենք նրա վրեժը միայն կռվելով անարգ թշնամու դեմ:

Տերհայրն իր խոսքը չէր վերջացրել, երբ լավեցին ոտնաձայներ: Մկրտիչը շտապեց դեպի ոտնաձայները և ճանաչելով գլխավորին, ընդառաջ գնաց:

— Որտե՞ղ է Հրանտի աճյունը, — խիստ հուզված հարցրեց Սամվելը: — Մկրտիչը լուռ առաջնորդեց նրան: Գլխավոր հրամանատարն ու նրա ուղեկիցները քայլում էին հուզված, անտրամադիր:

— Մի՞թե կարելի էր այդպիսի քաջին կորցնել, — վրդովված բղավեց Մկրտիչի վրա: — Ապա ո՞րտեղ էիք դուք՝ Մարտիրոսը, քեռի Բաբկենը:

— Աստված իմ, — շույնով կրծքին պահած Զարուհու գլուխը, — շնչաց տեր Պողոսը: — Ի՞նչ պատասխան տանք գլխավորին...

Գլխավոր հրամանատարը և գյուղապետը, տեսնելով Հրանտի աճյունը, մի պահ ցնցվեցին, հուզված մոտեցան աճյունին, վշտահար հանեցին գլխարկները, ծնկի եկան, խոնարհվեցին: Մի պահ հարգանքի հանդիսավոր լուսթյուն տիրեց, հետո համբուրեցին քաջի ձեկատը: Զարուհին խիստ հուզվեց, նորից տեր-

հոր գրկից պոկվելով, իրեն նետեց Հրանտի աճյունի վրա, դառնագին ողբաց:

— Վե՛ր կաց, սիրելի՛ս, վե՛ր կաց, տես ո՞վ է եկել քեզ մոտ, քո սիրած, քո գոված հրամանատարն իր կազմով: Եկել են ողջուներու քո փայլուն հաղթանակը: Համբուրելով նրա դեմքը, շարունակեց. — ա՛խ, Հրանտ, իմ պաշտելի ասպետ, մեռնեմ քո պայծառ դեմքին, ի՞նչ բարի աչքով էիր նայում աշխարհին, կյանքին: Եվ այսօր հեռանում ես ծաղիկուն հասակում: Խորտակվեցին երջանկովթյան մեր երազանքները: — Դեմքը վեր հռեց ու շարունակեց: — Ամենակարող տեր, ո՞ր հանցանքիս համար անգութ թուրքը, դեռևս կանաչ հասակում, այդպես դաժան պատժեց ինձ, զրկեց վայելելու քաջի սերը...

Սամվելը խիստ հուզված էր ծանր կորուստի համար, սակայն ո՛չ պակաս ցավ էր զգում Զարուհու տանջալից ապրումներից: Նայում էր աղջկան, սիրտը ճմլվում էր: Զէ՞ որ իր բարեկամ Ներսեսի աղջիկն էր, Փեսանդաշտի պաշտպանության գլխավոր հրամանատարի քույրը, զոհված հերոսի հարսնացուն, իր լավ զինվորը... Նա քնքշությամբ բարձրացրեց աղջկան և խոր ցավակցություն հայտնեց, ապա նրա դեմքը սեղմեց կրծքին, շույնց գլուխն ու ասաց.

— Միրելի՛ Զարուհի, ի սրտե բոլորս կիսում ենք վիշտդ: Կորուստը ծանր է բոլորիս համար: Սակայն ի՞նչ կարող ենք անել, պատերազմ է: Առանց զոհերի ազատություն չի լինում: Պատերազմն առանց կորուստների չի լինում: Դու պետք է հպարտ լինես, որ քո քաջ ասպետը հերոսաբար ընկավ իր տառապալ ժողովրդի ազատագրման համար: Հերոսներն անմահ են: Հրանտի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա մեր, ժողովրդի սրբտում: Իսկ դու քաջ ռազմիկ ես, ռազմիկը մարտի դաշտում լաց չի լինում: Զսպիր քեզ, ժամը չէ ողբի, մենք դեռ մարտի մեջ ենք: Դառնալով Մեսրոպին, հրամայեց.

— Հրանտի աճյունը տեղափոխել քարայր: Մարտիրոսը, Զարուհու և գթության քույրերի հետ կմեկնի հրամանատարական կետ, աղջիկներն այնտեղ թող հանգստանան: Մյուսները մեկնեն իրենց մարտիկների մոտ. կազմակերպեն նրանց հանգիստը, պատրաստվեն վաղվա մարտին:

— Ո՛չ, ո՛չ, պարոն Սամվել, — աղերսելով խնդրեց Զարուհին, — ես կլինեմ Հրանտի հետ, նրա մոտ:

— Գու կլինես այնտեղ, որտեղ կարգադրված է,— ասաց և գլուղապետի, տերհոր հետ գնաց շրջելու շոկատները:

Գիշերային շրջագայութեան ընթացքում նրանք հրամանատարների, մարտիկների հետ քննարկեցին ու լուծեցին շատ հարցեր: Հրամանատարական կետը վերադառնալիս Սամվելն ուղեկիցներին ասաց.

— 1895—1896-ին կազմակերպված հայկական մեծ ջարդերի ժամանակ Շատախի բնյն ուղեցել էր մտնել Փեսանդաշա, թալանել, բնաջնջել այն: Իսկ փեսանդաշտցիները այս լեռններում կազմակերպված մեծ ջարդ էին տվել թուրքերին: Ստիպել էին նահանջել, հրաժարվել Փեսանդաշտ մտնելու ծրագրից: Ինքնապաշտպանութեան այդ մարտում փեսանդաշտցիները չէին տվել և ոչ մի զոհ: Մինչդեռ մինք արդեն տվել ենք 37 զոհ, որոնց շարքում 5 կին, 3 պատանի:

— Սամվել, սիրելիս,— քայլերը դանդաղեցնելով ասաց Գալուստը,— մեր այս մարտերն ամենևին չի կարելի համեմատել 1895-1896 թթ. հետ: Ես, Արփիարը, Վարազդատը, Բարկենը և ուրիշներ մասնակցել ենք այդ մարտերին: Հիշում եմ՝ երիտասարդ, թափով տղաներ էինք: Նախ, այն ժամանակ մեզ վրա հարձակվողներն օրինական զորամասեր չէին, ինչպես այժմ: Բնյերի դիտավորութեամբ գործող ավազակային, թալանչիական բաշխողներն էին, որոնք զինված էին թուրքական ուղորմելի հրացաններով: Մենք նախօրոք նախապատրաստվել էինք, զենվել Բաղդադից բերված անդլիական լավ զենքերով, շուրջ 250—300 հոգի էին, մեծամասամբ զենք օգտագործող, փորձված տղամարդիկ:

Թշնամու հարձակման առաջին օրը գնդակների կարկուտ թափեցինք: Մոտ երկու շաբաթ տևող այդ մարտը հրքեք այսպիսի բնույթ չկրեց: Իսկ հիմա ովքե՞ր են քո կովող ուժերը: Մի բանի երիտասարդ, մնացածը ծերունիներ, պատանիներ, կանայք: Թուրքական կառավարությունն այս անգամ դիմեց նենգամտության, Մինչև մեզ վրա հարձակվելը նենգամտորեն մեզ զինաթափ արեց՝ զորահավաքի անվան տակ, 16—52 տարեկան մեր տղամարդկանց հավաքեց տարավ: Թե որտե՞ղ սպանեցին, մինչև հիմա հայտնի չէ... Հիշում եմ,— շարունակեց գլուղապետը,— այն ժամանակ Վանի, Պուսի հայկական թերթերը մեր կովի մասին գովեստի խոսքեր շատ գրեցին, բայց ոչ մի տեղ

չէր նշված փեսանդաշտցիների անունները. մեզ համարել էին շատախցիներ:

* * *

Պատանի հետախույզ նշանը ձին թողնելով ձերուժ, մազըլցելով սարնիվեր, վաղ առավոտյան ներկայացավ հրամանատարին:

— Բարի լույսի հետ բարի լուր եմ բերել,— ասաց,— քիչ առաջ թուրքական զորքերը քաշվեցին Թուրքիայի խորքերը: Գտնում են, որ անկարող են ուսական բանակի դեմ կովիլը Իսկ գլուղերի բնակիչները խուճապի մատնված, երե՛կ են գաղթել: Գլուղերը դատարկված են: Քեռի նազարեթը, Կրիթի հետ, թուրքական զինվորների հագուստով ձիեր նստած մեկնեցին գլուղերը ստուգելու, կվերադառնան կեսօրին:

Սամվելը գրկեց պատանի հետախույզին և ամուր սեղից կրծքին որպես շնորհակալութեան նշան՝ բարի լուրի համար.

Ներկաները միմյանց շնորհավորեցին:

— Եղբայրնե՛ր,— ասաց Սամվելը,— լցրեք զենքերը, այլ լեռան գաղաթից՝ ի պատիվ մեր հաղթանակի և փառապանծ ուսական բանակի, համազարկ տանք, թող բոլորը ուրախանան: Հայ կամավորները կուհեղով, որ դա հաղթանակի համազարկ է, խրամատից դուրս գալով՝ միմյանց ողջունելով, համազարկը շարունակեցին: Ապա հրամանատարը դիմելով ներկաներին ասաց.

— Ռուս զինվորը ոտքը դրել է Արևմտյան Հայաստանի հողի վրա: Մենք ազատագրված ենք դարավոր կեղեքումից: Այսօր թող փշին գունդաները, խփեն զճոլները, հաղթանակի, խնդրության տուն է:

Զարուհին թուլացած ընկել էր ընկերուհիների գիրկը: Հաղթանակի լուրը ընդունեց ուրախ ժպիտով: Այդ տեսարանը ցավ պատճառեց ամենքին:

— Մարտիրոս,— ասաց Սամվելը,— անմիջապես թամբեր երկու ձի և Զարուհու հետ մեկնեք գլուղ: Հաղթանակի լուրը հասցրեք ամենքին, գլուղից էլ կմեկնեք Աքաբնազի մոտ: Դե՛, շտապիր, ժամանակ մի կորցնիր,— դառնալով Մեսրոպին, հրամայեց.

— Խրամատներից բոլորը դուրս գան: Իրենց կարգի բերեն: Հավաքվեն կարմիր կակաչների սարահարթը: Զոկատներով

շարվեն: Բոլոր սալերը պատրաստ լինեն՝ ծանր վիրավորներին և հողին չհանձնված զոհերին տեղափոխելու: Հրանտի համար պատրաստեցե՛ք հատուկ սալ:

Մարտի ավարտման լուրը մեծ ուրախութիւն, խնդութիւն առաջացրեց հայ կամավորների մեջ: Գլխարկների վեր նետում, ուռաների տարափ, հրաձգութիւններ, գրկախառնութիւն...

Կակաչները սարահարթում ուղղմաճակատի ղեկավարութիւնը մարտիկները դիմավորեցին ջերմ ուռաներով, հրաձգային 5 համազարկով:

Սամվելը դիմելով իր դուրսագոյններին, ասաց.

— Հարզե՛լի փեսանդաշտցիներ, իմ մարտական ընկերներ: Փաշտպանութեան խորհրդի և իմ կողմից շնորհավորում և ողջունում եմ ձեր փայլուն հաղթանակը, ռուսական փառապանծ բանակի մուտքը Վան քաղաք,— փոթորկալից ծափահարութիւններ, ուռաներ:— Խնդրում եմ, մեկ բոպե լուսնամբ, խոնարհաբար, հարգենք քաջի մահով զոհված մեր եղբայրները հիշատակը:

Օգու՛մ ճարճատեց հրաձգային 10 համազարկ:

— Մեր փոքրաթիվ ուժերով,— շարունակեց հրամանատարը,— հերոսաբար պաշտպանվեցինք: Մեր հաղթանակի ուժը մեր թիկունքի և ուղղմաճակատի կուռ միասնութիւնն էր: Մեր հայրենասիրութիւնը: Մենք մեկնում ենք մեզ հաղթանակի ուժ ներշնչող հայրենի լեռներից, որտեղ 1896 և 1898 թվականներին էլ քաջ փեսանդաշտցիները ջախջախիչ հարված են տվել Շատախի բեյի մեծ բանակին և ժողովրդին փրկել կազմակերպված ջարդերից:

Ցանկանում եմ ձեզ խաղաղ կյանք, բարի աշխատանք... Հավե՛ր՝ րժ փառք ազատագրման մարտերում հերոսաբար ընկած մեր քաջերին:

Այնուհետև խոսեցին բուժքույր Փառանձեմը, երկու մարտիկներ, վերջում՝ Կայնամիրանի գյուղապետ Տերտերյանը:

Հանդիսավոր արարողութիւնից հետո մարտիկները հրաժեշտի հայացք նետեցին մարտական խրամատներին, կանաչ սարերին ուր 34 օրվա փոթորկալից մարտերում մի կլու՛նք ապրեցին, թողնելով իրենց արյունը, ծանր օրերի բազմաթիվ, անմոռաց հուշերը:

Ազատագրվելու, ռուսական բանակի Վան մտնելու լուրը

կայծակի արագութեամբ տարածվեց գյուղում: Սկսվեց մեծ ուրախութիւն, ցնծութիւն:

Հառեղ գյուղում հավաքված փեսանդաշտցիները խանդավառված, հաշքար աղբյուրի մոտ խալիներ էին փակել, ծաղկեփնջերով սպասում էին դիմավորելու հաղթանակով վերադարձող իրենց քաջերին, հարազատներին: Այնտեղ էին նաև քաջ Հրանտի ծնողները, երեք քույրերը: Հրանտի շորս մեծ եղբայրները մասնակցում էին Բարադողիկի մարտերին: Հաղթանակի բերկրանք ապրող ժողովուրդն անհանգիստ էր: Յուրաքանչյուրը ձգտում էր առաջինը տեսնել իր հարազատին, քաջին, ողջունել հաղթանակը: Բազմութեան ուշադրութիւնը գրավեց զորասյունի առջևից եկող սպո հանդիսավոր սալը: Չնայած Զարուհին ուժասպառ, տկար վիճակում տանը պառկած էր, սակայն մայրք ստիպված եղավ ընդառաջել աղջկա աղերսանքին՝ մեկնելու իր մարտական ընկերներին դիմավորելու հանդիսավոր արարողութեանը: Մայր և աղջիկ երբ հաշքար աղբյուրը հասան, արդեն հավաքված էր հոծ բազմութիւնը: Մոտակա տների տանիքներին էին բարձրացել, և ուրախ-ուրախ թռչկոտում էին երևիսները:

Տևրութեամբ գլուխը խոնարհած, խաչը աջին, սալի սոջևից քայլում էր պատվարժան տեր Պողոսը: Սալի աջ և ձախ կողմներից, կարմիր կակաչի մեծ փնջերը գրկներին, խոնարհաբար քայլում էին զինված երկու աղջիկ...

Հրանտին բերող սալը կանգ առավ հաշքար աղբյուրի առջև: Խելակորույս Զարուհին իրեն նետեց դեպի սալը: Նա շորացած կոկորդով ողորում էր, թուլացած քնքուշ ձեռքերով շոյում առաջին սիրո անշնչացած էակին, համբուրում ճակատը, խաչածն դոված ձյան պես ճերմակ ձեռքերը:

— Ա՛խ, Հրանտ ջան, իմ անմոռաց անդրանիկ սեր... Այս ի՞նչ արեցիր, վե՛ր կաց, իմ հրաշալի ասպետ, վե՛ր կաց, տես, ողջ Փեսանդաշտը եկել է իր քաջերին դիմավորելու:

Զորասյունը կանգ առավ փոխված խալիների վրա: Գլուղապետները ջերմ շնորհավորեցին, Սամվելին, Գալուստին, հայ քաջ կամավորներին, Հարազատները, երեխաները ծաղկեփնջերով շտապեցին և գրկախառնվելով ու ջերմ համբուրներով էին դիմավորում ծնողներին, բարեկամներին, համագյուղացիներին:

Հրանտի ծնողներն անհանգստացած էին, որ իրենց որդին չի երևում:

Մայրը հանդիպելով իր վաղեմի բարեկամին հարցրեց.

— Համասփյուռ խաթուն, այս ուրախ օրին ինչ է պատահել, թեևրդ խաչած վշտի մեջ ես:

Համասփյուռը իր տխուր հայացքը գցեց Հայկանուշի վրա, և այդ հայացքից Հրանտի մայրը սարսափեց:

— Աստված կսիրես, ասա, ինչու՞ աշդպես վշտալի հայացք նետեցիր վրաս, մտքովս վատ բան անցավ...

— Վա՛խ, Հայկանուշ, մեռնեմ քո ջելրան տղին, սեն եկել պատել է մեզ, իմ վիշտը քո վիշտն է, մի նայիր, պատվով, հարգանքով շրջապատված սայլի մեջ մեծ տան քաջ ասպետն է հավիտենական քնով քնած...

Հայկանուշը խելացնոր ճեղքեց սայլը շրջապատողներին. և սայլի մեջ տեսնելով ծաղիկների մեջ թաղված որդու աճյունը, մի ահալոր ճիչ արձակեց, ընկավ նրա վրա, ուշաթափվեց:

Հաղթանակի փառքը բերել էր նաև իր հետ ողբերգութուն... Ենթեր կսկիծով ողբում էին նաև գոհված մյուս քաջների հարազատները:

Գյուղապետ Գալուստը Ազատին հանձնարարեց ուշագնաց մորը և Զարուհուն տանել խալիֆ Ներսեսի տունը:

Մամվելը, գյուղապետները, հարգալից մոտեցան քաջի մահով անմահացած իրենց սիրված մարտական ընկերոջ հորը՝ Սեդրակին, ցավակցութուն հայտնեցին, գրկախառնվեցին, մոտեցան մյուս գոհվածների հարազատներին, ձեռքները սեղմելով, սրտագին ցավակցեցին: Ապա գյուղապետը կարգադրեց քաջերի աճյունները տանել եկեղեցի և հավաքվել գյուղի հրապարակում, — իսկ սգո պատարագը կկատարվի վաղը:

Հրապարակի ցածրագիր ամբիոնը բարձրացան Մամվելը, գթության բույր Աշխենը, տեր Պողոսը, գյուղապետները: Գյուղապետ Գալուստը դիմելով ժողովրդին, նախ խնդրեց մեկ բուպե լուսթյամբ հարգել մեր ազատության համար քաջի մահով գոհվածների հիշատակը, հետո ասաց.

— Սիրելիներս, այս ամբիոնը մեր նախնիները պատուստել են շուրջ 300 տարի առաջ թուրք հարկահամալսքնորի պահանջով, որտեղից նրանք մեզ ահարեկիչ խոսքեր են ասել, հայհոյել, որպեսզի նշանակված հարկից էլ ավելի պոկեն մեզանից: Այսօր նույն ամբիոնից ողջունում և շնորհավորում ենք, սուլթանական բռնակալ լծից մեր ազատագրումը: Մեզ կեղեքող դարավոր թշնամին ծրագրել էր բնաջնջել հայերիս: Մեր հարե-

վան Գավաշի, Շատախի գավառներում, Հայոց ձորում շատերին են կոտորել, հայկական շատ ու շատ գյուղեր, քաղաքներ ավերակների են վերածված, մինչև այսօր էլ դեռ ծխում են: Մենք հետևեցինք մեր փառապանծ նախնիների օրինակին, շվհատվեցինք: Մեր փոքրաթիվ ուժերով միահամուռ ոտքի ելանք, հանուն մեր գոյապահպանման: Ի շնորհիվ հուսալի ու ամուր թիկունքի, որ դուք ոչինչ լինայեցիք ռազմաճակատի հաղթանակի համար, մենք անձնագոհ պաշտպանվեցինք, մինչև ազատարար ռուսական քաջարի բանակը հասավ մեզ օգնության:

Կեցցե՛ ազատագրված Հայաստանը:

Կեցցե՛ մեր ազատագրված Փեսանդաշտը:

Փառք ու պատիվ ռուս մեծ ժողովրդին, մեր ազատարարին, նրա քաջարի բանակին: Ուռա՛, բարեկամներ, ուռա՛... — ուժգին բացականչեց գյուղապետը: Ուռան՛ր թի, բոցաշունչ ողջույ՛ն. և երի տարափը տարածվեց ողջ հրապարակով: Ողջույնի ձայնը տրվեց նամվելին:

— Քաջ փեսանդաշտցիներ, ի սրտե ողջունում և շնորհավորում եմ հաղթանակի առթիվ: Յանկանում եմ խաղաղ աշխատանք, երջանիկ կյանք ձեր հայրենի օջախներում: Թող խաղաղ ու երջանիկ ապրեն մեր կյանքի ծաղիկ երեխաները, որպեսզի ուրախ լինեն մայրերը...

Արդեն մի քանի օր է, ռուսական ազատարար բանակը գտնվում է Վան քաղաքում: Շուտով իր օրհնած ոտքը կդնի Հայոց ձորում, Փեսանդաշտում, Գավաշում, Շատախում, կազատագրվի Արևմտյան Հայաստանը և կմիացվի Արևելյան Հայաստանին: Լեռներում, ձյան, կարկուտի, անձրևների տակ, ցրտաշունչ խրամատների մեջ հաղթահարելով ամեն կարգի դժվարություններ, զրկանքներ, ծանր, օրհասական մարտեր վարեցինք: Շատ արյուն թափեցինք՝ կռվելով մեծ թվով մեզ մի քանի անգամ գերազանցող թշնամու զինված ուժերի դեմ: Թշնամին դաժան էր և անողոք: Հաշվի շառնելով կորուստները, անընդհատ թարմ ուժեր էր ներդնում մարտի մեջ, անընդմեջ սուր գրոհներ էր կազմակերպում մեր դիրքերի վրա: Երկու սազմաճակատներում թշնամին տվեց ավելի քան 300 զոհ, որոնց դիակները անտեր-անտիրական մնացել են ռազմի դաշտում, բաց երկնքի տակ՝ դառնալով գիշատիչ կենդանիների բաժին: Մաստիկ ծանր, օրհասական մարտեր տեղի ունեցան մեր ձախ թվում, որտեղ թշնամին ձգտում էր օգտագործել նպաստավոր

տեղանքը, թեև անցել մեզ: Մարտի այդ ժանր հատվածը ղեկավարում էր շիրմանցի երիտասարդ Հրանտը, որի աճյունը իր մարտական ընկերների աճյունների հետ բերել ենք՝ փառքով հողին հանձնելու: Հրանտը մեծ հայրենասեր էր, հաղթանակի հույս էր ներշնչում իր մարտիկներին, անձնական քաջագործություններով օրինակ ծառայում բոլորիս: Ցավալի շատ ցավալի է, երբ մեր հերոսը զոհվեց հաղթանակից մի քանի ժամ առաջ: Հրանտը մեր քաջերի քաջն էր, մեր պարծանքը: Հրանտի և նրա մարտական ընկերների կորուստը բոլորիս համար ծանր է: Բայց հիշեք, որ հայ կամավորները հերոսի մահով ընկան այն հողի համար, որտեղ ծնվել են... Փա՛ռք, հավերժ փա՛ռք Փեսանդաշտի պաշտպանության համար հերոսի մահով ընկած մեր մարտական ընկերներին:

Կեցցե՛ ազատագրված Փեսանդաշտը:

Կեցցե՛ հայ և ռուս ժողովուրդների հավերժ բարեկամությունը:

Ողջույնի խոսքեր ասացին կանանց տասնապետ Հռիփսիմեն, գյուղապետ Մամիկոնը և ուրիշներ:

Ազատագրված Փեսանդաշտի վրա իջնում էր առաջին խաղաղ ու ջինջ գիշերը...

Առավոտյան առաջին արևոտական շին, երբ գլուղը դեռ քնած էր, գյուղապետները Մամվելին՝ մի խումբ կտրիճների հետ, ճանապարհ շրջին դեպի Ոստան քաղաքը: Բաժանվելիս Գալուստը և Մամվելը գրկախառնվեցին. բաժանվեցին ճակատամարտի ծանր օրերի մարտական ընկերները:

— Մամվել, սիրելի՛ս,— ասաց Գալուստը,— դու փեսանդաշտցիներին անգնահատելի ծառայություն մատուցեցիր: Այս հրաշալի արարական նժույզը ընդունիր որպես փեսանդաշտցիների նվերը:

Մամվելը նայեց ձիուն, ինքն էլ հիացավ, սեղմելով իր մարտական ընկերույ ձեռքը, շնորհակալություն հայտնեց: Արմենուհին ժպիտով ներկայացավ իր նժույզի հետ: Նա ձիուն մեկ տարեկանից շորս տարի աչքի լույսի պես գուրգուրել, խնամել էր, ձիարշավներում հաղթանակներ նվաճել: Նժույզը նրա հպարտությունն էր, անբաժան ընկերը:

Համեստ ու հեղ կանգնած կրակոտ նժույզը կարծես զգում էր, որ բաժանվելու է իր տիրոջից, որին շորս տարի խոնարհարար լսել է ու հավատարիմ ծառայել: Արմենուհին քնքրությամբ

շոյեց ձիու ճակատը, ձին գլուխը խոնարհեց աղջկա առջև նա վերջին անգամ ձիու գլուխը ամուր սեղմեց իր կրծքին, համբուրեց սիրով ու խոնարհ ժպիտով Մամվելին ասաց.

— Այս նժույզի վրա Մասունցի Գավթի նման ձեր սուրը միշտ թող փայլատակի, միշտ հաղթանակի փառքով ձեզ առնեք:

Մամվելը, որ հիացած էր նաև համարձակ աղջկանով, սիրով ընդունեց ձիու սանձը և ասաց.

— Ձեզ պես դուստրեր ունեցող ժողովուրդը չպետք է կորչի... Խորին շնորհակալություն, պատվարժան օրիորդ՝ ձեր բարի ցանկությունների համար: Գուր ինձ շատ բան պարտավորեցրիք:

Պարտը համարեց մեկնելուց առաջ հրաժեշտի համար մտնել Ներսեսի տունը, Հրանտի մառուլերը հանձնել Զարուհուն: Այնուհետև, պատվով, հարգանքով հեծյալ ջոկատը մեկնեց դեպի Ոստան: Բարադոզիկ լեռան զազաթին, որտեղ դեռ մարտադաշտի հոտն էր փչում, Մամվելը հանդիպեց Ներսեսին և տեր Հովհաննեսին: Նա նժույզից ցած թռավ և ընդառաջ գնաց: Մարտական ընկերները գրկախառնվեցին:

Ներսեսը և տերհայրը Մամվելին, նրա կամավորներին շնորհավորեցին հաղթանակի և ռուսական բանակի վան մտնելու առթիվ:

Մարտական ընկերների զրույցը կարճ տևեց: Մամվելը և նրա մարտիկները շտապում էին Ոստանի ազատագրման մարտերին: Մնաս բարով անելով, Մամվելը ամուր սեղմեց Ներսեսի ձեռքը և ասաց.

— Իմ և ճակատամարտի բոլոր մասնակիցների անունից ընդունեցեք մեր խորին շնորհակալությունը անգնահատելի հայրենանվեր ծառայության համար. դուք մեզ լիովին ապահովեցիք զենքով, զինամթերքով, ուժ, արիություն ներշնչեցիք վերջին վճռական մարտում: — Ձեռքը դնելով ուսից կախված արծաթափայլ մառուզերի վրա, ավելացրեց,— նաև շնորհակալ եմ այս նվերի համար:

— Մամվել, սիրելիս,— ձեռքը դրեց նրա ուսին, ես և վարպետ Խաչիկը արել ենք այն, ինչ պահանջում էր հայրենիքը...

Ներսեսը հաղորդեց, որ Խաչիկ փաշայի 30-հազարանոց բանակը ռուսական բանակի և Անդրանիկի հարվածների տակ նահանջում է և ճանապարհին հրդեհում, ավերակների վերածուձ

հայկական քաղաքներն ու գյուղերը: Գավաշի, Հայոց ձորի կամավորներից կազմված ջոկատով Խարականցի կենը նրանց դեմ ծափ մարտեր է մղում: Հայոց ձորով առաջ է շարժվում զինվոր Ռստան, որտեղ գտնվում է նահանջող բանակի զորամասերից մեկը: Իսկ այսօր լուսաբացին կենի ցուցումով Ասքանապը յուր խմբով հարձակման անցավ Ռստանի վրա: Այս ամենն իմանալով, Սամվելը որոշեց քաղաք իջնել հարավային կողմից՝ խիտ անտառների, այգիների միջով՝ ձիերը թողնելով այգիների մեջ: Գետը քաղաքը բաժանում էր երկու մասի: Ձախ կողմում, բնակելի տների հիմնական մասն էր, գլխավոր փողոցը, իսկ աջ ափը հիմնականում պողատու այգիներն էին, որոնք հիմնադրել էին հայերը: Այդտեղ էին փաշաների, բեյերի, ազնվականների պալատները, ամառանոցները:

Գետի վրա կառուցված միակ կամուրջը կայմակամի երկհարկանի տան դիմաց էր: Կամրջից մինչև կայմակամի տունը ընկած ոչ մեծ տարածությունը քաղաքի հրապարակն էր, որտեղ ի կատար էին ածվում դաժան տիրոջ սահմանած սարսափելի պատիժները՝ կախաղան, մահվան աստիճանի հրապարակային ծեծեր:

Սամվելը իր քաջերով քաղաք մտավ գիշերը:

Հետախույզների տվյալների համաձայն, նա Արտաշեսին հանձնարարեց զետի աջ ափով իջնել քաղաք, գտնել Ասքանագին... զեկուցել իրենց գալու մասին և մարտական ցուցումներ ստանալ: Իսկ ինքը, որոշեց ընկերներով քաղաքի արևմտյան ծայրամասից փոքր առաջ գնալ և դիրքավորվել: Բայց շների հաշոցից թաղամասի բնակիչները տներից դուրս եկան: Պարզելով, որ քաղաք մտած զինված մարդիկ հայեր են, բնակիչներից ոմանք զենքի դիմեցին:

Սամվելը մարտիկներին կարգադրեց չկրակել բնակչության վրա: Նա վարժ թուրքերենով բնակչությանը բացատրեց, որ իրենք աշխատավոր ժողովրդին ոչ մի նեղություն չեն պատճառելու. կարող են գիշերային հանգիստը շարունակել, իսկ առավոտյան, եթե ցանկանան, կարող են մնալ տներում, իսկ եթե ոչ՝ կարող են մեկնել, տանելով ինչ ցանկանան, ինչքան կարող են: «Ձեր ունեցվածքի կարիքը մենք չունենք,— ասաց նա,— մեզ պետք է միայն խաղաղ ու համերաշխ ապրել, աշխատել»:

Արտաշեսը զետն անցնելիս շրջապատվեց Ասքանագի հետախույզներով:— Ուլբեր եք, ձեռքներդ վեր, կրակում ենք:

— Հայր հայի վրա չի կրակի,— ճանաչելով Գարբիելի խորխոս ձայնը,— պատասխանեց Արտաշեսը:

— Ուլբեր եք:

— Փեսանդաշտցիներ:

Բարեկամները գրկախառնվեցին: Արտաշեսն Ասքանագին գտավ զետափնյա երկհարկանի տան տանիքում Մանուկի հետ:

— Արտաշես, էս կեսգիշերին երկնքից իջար, խո՞մ հրեշտակ չես,— ուրախ-ուրախ ասաց և գրկախառնվեցին:

— Դե՛, ասա, եղբայրս, էս որտեղից, ի՞նչ նորություններ:

— Այ՛, գիշերային հրեշտակ եմ. շատախեցի Սամվելն է ուղարկել...

— Շատախեցի Սամվելը, իսկ որտեղ է այդ քաջը:

— Գետի ձախ ափին: 50 հոգով եկել ենք ձեզ օգնության:

— Ուրեմն Կարբողագի ուղղությամբ ամեն ինչ վերջացած է, շիմա էլ եկել եք մեզ օգնելու:

— Եղբայրս, առսական բանակի հաղթարշավները մեզ արիություն ու հաղթանակի նոր լիցք տվեցին: Այժմ մենք մեկնակ չենք, մեր հաղթանակն ապահովված է...

Խուսակցությունը ընդհատեց շնչակտուր տուն մտնող դավաշեցի հետախույզ Գարբիել Մարգարյանը (նա 1935—1954-ին Կրկանու. աշխատեց ժողդատավոր):

— Պարոն Ասքանագ, թույլ տվեք զեկուցել:

— Ա՛յ տղա, մի շաբաթ է չկա՛ք, ո՞ւր եք կորել Գանիելի հետ:

— Քաղաք մտնելիս, առաջին իսկ օրը պատահական հանդիպեցինք մի կիրթ կնոջ, որի ձեռքին ծանր ճամպուրակ կար: Կարծելով, որ մենակ, անօգնական կին է, որոշեցինք օգնել: Նա ուրախությամբ ընդունեց մեր օգնությունը: Զրույցի ընթացքում ասացինք, որ գյուղից եկած աղքատ հրիտասարդներ ենք, քաղաքում աշխատանք ենք փնտրում: Հետո խոսեցինք անկեղծ, բարեկամական: Տուն հասնելով մեզ ներս հրավիրեց, կանչեց իր հարեան՝ թրքոհի ընկերուհուն: Երկուսի ամուսիններին Կ. Պուլից բանությանը ուղարկել էին տարրական դպրոցի ուսուցիչ: Սակայն Շուբրի բեյը դպրոցը փակել էր: Նրանց ամուսինները զորակալվել էին բանակ և զոհվել առսական ձակատամարտում: Խիստ դժգոհեցին պատերազմից, պետության դաժան քաղաքականությունից, ցավով էին խոսում հայկական

ջարդերի մասին: Նրանք մեզ հյուրասիրեցին: Վարվում էին շատ սիրալիր, համարձակ... նույնիսկ առաջարկեցին՝ գիշերել իրենց մոտ: Այդպես վեց օր մնացինք նրանց տանը: Ցերկնեքը նրանց հետ օրըում էինք քաղաքում: Նրանք ամենուրեք հեղինակություն էին վայելում: Այդ հանգամանքից օգտվելով, ծանոթացանք քաղաքի Շուբրի բնի գործերին: Վերջապես նրանց օգնությամբ կարողացանք իմանալ այն գաղտնի տների, մարագների տեղերը, որտեղ պահված են բավականին թվով հայ կանայք, երեսխաներ: Շուբրի բնիը ձեր զբաղեցրած տեղից ոչ այնքան հեռու ունի երեք հարեմատուն, ուր պահվում են 17—25 տարեկան հուլյն, արար, հայ կանայք: Բացի այդ, տանն ունի 5 կին և տասներեք երեխա: Ինքը բնիը վաղ առավոտյան քաղաքից հեռանում է: Զորամասին կարգադրել է քաղաքից հեռանալիս խոտ և Նավթ լցնել, կրակ տալ, ալրել այն տներն ու մարագները, որտեղ պահված են հայ գերիները:

Այդ բարեհոգի կանայք առանց որևէ կասկածի շատ օգնեցին մեր հետախուզության խնդիրների կատարմանը: Այդպիսի կարճ ժամանակամիջոցում նման ազնիվ վերաբերմունքից հետո կնոջը խաբել հեռանալ այնքան էլ դուրին չէր... Վերջապես այսօր ասացինք, որ գիշերով գնում ենք մոտակա թուրքի դուռը՝ մեր բարեկամներին տեսնելու, վաղը կվերադառնանք, համաձայնեցին: Մեկնելիս Գանիելը անզգուշորեն ինձ հետ հայերեն խոսեց, իսկ իմ ծանոթը՝ Ֆաթման, լսեց ու անմիջապես կոտրված հայերենով ինձ ասաց.

— Ուրեմն դուք փախստական հայեր ե՞ք, մաշալլա՛: Էլ մի՛ մեկնիր, հետ դարձիր, ես քեզ սիրում եմ. վաղը միասին կմեկնենք Պոլիս, կյանքդ լրիվ ապահովագրված կլինի: Պոլսում հայ բարեկամներ շատ ունենմ: Ամուսնուս մայրը հայ էր: Ես հայերին հարգում եմ...

Ես շտապեցի փողոց, պատասխանելով.

— Հավատում եմ քեզ, ազնիվ կին, կգա՛մ:

— Ապա էլ ինչո՞ւ եկաք, տաք տեղ էիք գտել, ձեզ համար ապրելիք էլի,— կատակեց Մանուկը:

— Նախանձո՞ւմ ես,— նույնպես կատակեց Արտաշեսը:

— Տղաներ, կատակելու հարկ չկա, մեր հետախուզները ճիշտ են գործել,— ասաց Ասքանազը,— ապա շարունակեց,— վիճակը լուրջ է, նույնիսկ ողբերգական: Նախ պետք է անել առնձինք ինչ՝ փրկելու հայ կանանց ու երեխաների կյանքը: Շտապ

կանչի՛ր Արսենին, Գավիթին, նշանառու Գավաշի ուսուցիչ Հովակիմյանին, հետախուզ Գանիելին:

Երբ բոլորը ներկայացան, Ասքանազը հրամայեց.

— Արտաշեսը, Գավիթը, տասական հոգով, պետք է շտապեն Սամվելի հետ կապ պահպանեն, հետո շրջապատեն բոլոր այն տները, մարագները, որտեղ գտնվում են գերի հայերը: Մինչև լուսաբաց պիտի բոլորն ազատագրված լինեն: Իսկ Մանուկը, Արսենը, Հովակիմյանը, Գարեգինը 12 հոգով, առանց ազմուկի, քաղաքի միջով թող անցնեն դեպի լիճն ու ճանապարհի վրա հարմար դիրք գրավեն: Շուբրի ճամփան պետք է փակել և ստիպել անձնատուր լինելու: Զխաբվեք՝ բանակցությունների մոտեցնել, նրանք նենգ են և խորամանկ, բնիկ կփախցնեն, ձեզ էլ կոչնչացնեն: Զենքերը ցած չդնելու դեպքում, անմիջապես սկսեք ուժգին համազարկ:

Եթե չարքեր չկան, շտապե՛ք: Գործեք հանգիստ, ստոնասիրտ, առանց զոհեր տալու, կրկին հիշեցնում եմ, խաղաղ բնակչությանը նեղություն չպատճառեք. կուսաբացին մենք հարձակման կանցնենք, որ քաղաքն ազատագրենք:

Հուսով եմ, գերազանց կկատարեք ձեր մարտական խնդիրները:

Գավիթն ու Արտաշեսն իրենց խմբերով անմիջապես անցան մարտական խնդրի կատարմանը:

Գավիթը գետի ափով անցնելիս ջրի մեջ երեսխաների դիակներ նկատեց և բացականչեց.

— Տղաներ, իմ հետևի՛ց,— վայրկենապես մտավ գետը: Մարտիկները հետևեցին նրան: Արագահոս ջուրը բերում էր քարերին զարկված, մահացած երեսխաների դիակներ: Մաքառելով ջրի դեմ, նրանք զուրս բերեցին ձեռքները հետևներին կապված, անշնչացած հինգը տղա՝ երեքը դաշունահարված էին: Վշտահար նայեցին անմեղ մանուկների աճյուններին ու լացը խեղդեց կոկորդներում:

— Ախր, ինչո՞վ են հանցավոր այս երեսխաները: Ո՞ւր են սրանց սգավոր մայրերը,— զայրացած խոսեց ինք երեսխաչի հայր, կաղազիզցի Մուշեղը:

— Եղբայրնե՛ր, ժամանակը թանկ է, շտապե՛նք երեսխաներին ազատելու. Գավիթն իր խոսքը չէր վերջացրել, երբ քիչ վերև լսվեց թուրքերեն խրոխտ ձայն:

— Զեռքներդ վեր, կրակում եմ:

երեխայի պես համբուրում էր Իսկ Անթառամն ուրախությունից մարմնի վրայի վերքերի ցավը չէր զգում: Գաբրիելը հանեց վերնաղզեատը և երկար շապիկը հագցրեց քրոջը: Շոշուով քրոջ այրված դեմքը, երկար մազերը, հարցրեց երեխաների, ամուսնու, հարազատների մասին: Ցավալի էր պատասխանը. Անթառամը լացով հաղորդեց, որ ութ երեխաներին բռնությունք տարել են: Երկու շաբաթ է սոված-ծարավ բանտարկված են: Ստիպում են հավատափոխ լինել, թուրքանալ, իրենց անձնատուր լինել, կնություն գնալ... Հայոց ձորից 2 հարյուրից ավելի երեխաների սալլերով տարան՝ հավատափոխելու, թուրքացնելու, կապված տարան երիտասարդ աղջիկների, կանանց:— Ա՛խ, որ մեկն ասեմ, սրտումս դառն տանջանքների մի սև կծիկ կա, որ քանդեմ...

Մեզ ծեծում, անմարդկային տանջանքների էին ենթարկում: Հացից, ջրից զրկած պահում, ասում էին. «Միևնույն է, ձեր ձայնը լսող, ձեզ օգնող չկա, հայերը բոլորը ոչնչացված են, աշխարհի երեսին այլևս հայ չկա, ով մահմեդականություն չընդունի, չթուրքանա, անպայման այրելու ենք, որպեսզի հայն անհավատ ոգին էլ այրվի...»:

Այդ պահին Սամվելին ներկայացավ սուրհանդակը: Նա զեկուցեց, որ հրդեհված երկու մարազից ազատել են 100-ից ավելի տարբեր հասակի երեխաներ և ուղարկել Շուքրի բեյի դատարկ հարմատները: Իսկ նրանց խնամելու, մարմնական վերքերը բուժելու համար Ասքանազը ուղարկել է իր մոտ եղած հայ կանանց, ուսուցչուհի Գայանեի ղեկավարությամբ:

— Գաբրիել, — հրամայեց Սամվելը, — քո քաջերով դու կանանց օգնիր, իսկ մենք շարժվում ենք առաջ: Քաջ Գավթի աճյունը կտեղափոխեք և շտապ այդ մասին կզեկուցեք Ասքանազին:

Վաղ առավոտյան, քաղաքում մնացած թուրք բնակիչները, հայհոյանքներ, ատելություն խոսքեր շարտելով իրենց պետության հասցեին, թողնում էին իրենց տուն-տեղը, հեռանում քաղաքից:

Սամվելն ու իր մարտիկները հանդիպեցին Մանուկի քաջերին: Մանուկը ներկայանալով Սամվելին, զեկուցեց.

— Պարոն Սամվել, Ասքանազը հրամայել է մարտական խնդիրը կատարելուց հետո միանալ ձեր խմբին:

— Ուրախ եմ քեզ, քո մարտական ընկերներին կրկին տես-

նելու համար, սակայն այդ ի՞նչ խնդիր եք կատարել, որ այդքան ուրախ տրամադրությամբ եք:

— Ասքանազը հրամայել էր ինչ գնով էլ լինի, կտրել դեպի Գավաջ փախչող Շուքրի կայմակամի ճանապարհը և այդ այրվածարբու գազանին շանսատակ անել... Առավոտյան վաղ, քաղաքից բավականին հեռու, հարմարավետ վայրում սպանեցինք: Գիտեիք, որ կայմակամը և հազարապետ Հուսեինը ողջ գիշեր եղել էին քեֆի մեջ: Առավոտյան վաղ, իրենց շքախմբով քաղաքից մեկնելու էին: Նրանք գալիս էին դեպի մեզ, երբ մտեցան, ճակատից և թիկունքից ուժգին հրաձգային կրակ սկսեցինք: Կայմակամը ձիու վրայից կախ ընկավ, իսկ վիրավոր ձին կայմակամի մարմինը քարշ տալով վազեց-վազեց և ընկավ կողքի վրա՝ իր տակը թողնելով բեյին: Սպանվեց նաև հազարապետը: Կենդանի մնացած զինվորներն անմիջապես նետվեցին օդնելու: Օգավելով առիթից, մեր գործը առաջ տարանք և բոլորին էլ շանսատակ արինք ու վերադարձանք:

— Կեցցե՛ք, դրանով իսկ դուք առաք հազարավոր անմեղ մանուկների, կանանց, ծերերի արյան վրեժը, — ասաց Սամվելը ուրախությամբ սեղմելով Մանուկի, Արսենի և մյուսների ձեռքը:

Մանուկը և Արսենը իմանալով Գավթի մահվան մասին, շատ վշտացան:

— Արսեն, — ասաց Մանուկը, — մեկնիր անձամբ. Գավթի աճյունը պետք է հարգանքով տեղափոխենք գյուղ և թաղենք պատվով, հարգանքով:

1915 թ. Արևմտյան Հայաստանի ազատագրումը

Կայզերական Գերմանիայի դաշնակից Թուրքիան Ռուսաստանի վրա հարձակվելու համար Անդրկովկասի ռազմաճակատ էր բերել 300 հազար զինվոր՝ Հասան Իզզեթ փաշայի հրամանատարությամբ՝ ռուսական 170-հազարանոց բանակի դեմ:

Պատերազմն սկսվելու առաջին իսկ օրից թուրքական բանակը շրջմանալով ռուսական զորքի և զենքի ջախջախիչ հարվածներին, նահանջեց: Մայիսի 7-ին ռուսական փառապանծ բանակը մտավ Վան:

Ռուսական ազատարար բանակը, հայ կամավորական ջոկատների և ժողովրդի օգնություններ, ազատագրեց Արևմտյան Հայաստանի նահանգները մինչև՝ Տարոն, Տիգրանակերտ, Սարիզամիշ, Էրզրում:

Ամենուրեք հայերն իրենց ազատարարին դիմավորում էին խնդություն ու ցնծություն մեջ, աղ ու հացով, մայիսյան վարդերով, հյուրասիրում հարազատի պես: Դա դարերով սուլթանական լծի տակ տառապող հայ ժողովրդի իղձերի իրականացումն էր: Դա բախտորոշ պատմական իրադարձությունն էր:

Վանի ռազմաճակատում գործող ռուսական բանակի (գեներալներ՝ Նիկոլայևիչի և Նազարբեկովի) քաջարի զորքերի և Անդրոնիկի կամավորական ջոկատի կողմից ջախջախված խալիփաշայի 30-հազարանոց բանակը էլ ուժ չունեի դիմագրելու ռուսական զորքի և զենքի հարվածներին և խուճապահար նահանջում էր, ճանապարհին թալանելով, ավերելով հայկական գյուղերն ու քաղաքները:

Երբ ռուսական բանակը հաղթարշավով մտավ Վան քաղաքը, նահանջող թուրքական վայրագների զորամասերը Վանի և նրա շրջակա գյուղերում թողել էին 55.000 սպանված անդեն, անմեղ հայերի դիակներ:

Խարականցի Լեոնն իր կամավորական ջոկատով անձնվեր պաշտպանեց Հայոց ձորի բնակավայրերը՝ նահանջող թուրքերից և ժամանակին հասավ Ոստան, օգնեց Ասքանազին՝ թուրքական զինվորներին վերջնականապես ջախջախելու համար: Թուրք հրոսակները սպիտակ դրոշ բարձրացրին, անձնատուր եղան:

Մայիսի 9-ին Ռշտունյաց Ոստանը և Հայոց ձորը ազատագրվեցին:

Եթե շինեի ռուսական բանակի առաջխաղացումն Արևմտյան Հայաստանում, ապա Վանի և Վասպուրականի մյուս ինքնապաշտպանական հերոսամարտերն էլ նույնպես կմատնվեին պարտության, որոնց շնորհիվ շուրջ 300 հազար հայեր փրկվեցին թուրք բարբարոսների կոտորածներից: Ազատագրված մշտականաչ այդ դաշտավայրն իր Ոստան քաղաքով, 25-ից ավելի հայկական (Աղանա, Անկշտան, Անգեղ, Աստվածաշեն, Կղզի, Առեղ, Խոսպ, Տոնի, Իշխանազոմ, Մուլքի, Թևրզ, Խարականց, Նորագյուղ, Հայկաշեն, Ուրթի, Հնդստան, Նավասարդ, ս. Վարդան, Բերմ, Պլթենց և այլն) գյուղերով զարկում է Վա-

նա լճի հարավարևելյան մասում և երեք կողմից շրջապատված է ցածրադիր կանաչ սարերով: Հայկական լեռնաշխարհի ամենազեղատեսիլ անկյուններից է:

Ոստանն այգիների մեջ թաղված մրգաշատ քաղաք է, այն հիմնել էին հայերը: Նրա տեսակ-տեսակ համով-հոտով մրգերը այգիները լցնում են իրենց բուրմունքով: Իսկ Ոստանի նավահանգիստը մանուկներին սիրած վայրն էր: Կանաչ լճափին խաղալիս մեր ուշագրությունը գրավում էին ջրի երեսին խվըրտացող տառեխ ձկները:

Երբեմն ջրի ալիքները նրանց նետում էին լճափ, մենք էլ դեռ թարտացող ձկներին հավաքում, լցնում էինք տոպրակները, տուն տանում: Բնության կողմից պարզեցած հայոց այդ գեղատեսիլ վայրը բարբարոս թուրքերին շատ էր դուր եկել և XVІІІ դարի սկզբներից աստիճանաբար հայերին դուրս էին քշել լեռներում բնակվելու և վերաբնակեցրել թուրք թուրքերին: Այդ պատճառով խիստ ընկել էր Ոստանի տնտեսական, առևտրական դերը: Վերացվել էին արհեստները, այգեգործությունը, անասնապահությունը, մեղվաբուծությունը, բնակչությունը պակասեց 5—6 անգամ:

Պատմական Ոստանը եղել է Ռշտունյաց իշխանների մայրաքաղաքը, որի զորքերը Տիգրան երկրորդի թագավորության ժամանակ հռոմեացիներին ջախջախելով, հասել էին մինչև Պաղեստին:

Ոստանը եղել է հայոց Աբգար թագավորի մայրաքաղաքը: Նա 207 թվին Հայոց ձորում, Վանա լիճ թափվող Անգեղա (Խուշաբ) հորհաճոս գետի վրա, որը գալիս է Խոշաբա լեռներից, ընդունել է քրիստոնեություն, սակայն չի կարողացել այն տարածել: Ոստանը եղել է նաև Արծրունյաց մեծ տան զահանխստուր: Հայոց ձորի աղբյուրներից է սկիզբ առնում Շամիրամի մեծ ջրանցքը: Ոստանի նավահանգստից է կարճ ճանապարհը դեպի Աղթամար կղզին:

Արծրունյաց Գագիկ թագավորը 915—921 թթ. Ոստան նավահանգստից է շինարարական մեծ աշխատանքներ ծավալել Աղթամար կղզում: Այնտեղ կառուցել է ս. Խաչ եկեղեցին՝ X դարի հայ արվեստի մեծագույն հրաշալիքը: Ոստանից քիչ հեռու, լճափնյա Նարեկ գյուղում, Նարեկացու գերեզմանն է: Ոստանի մոտ Չարահան գյուղի ս. Նշան եկեղեցում: Ավարայրի մեծ երգչի՝ Եղիշի գերեզմանը:

Ոստանից Աղթամար է մեկնել մեծ վիպասան Բաֆֆին և գրել իր «Զայն տուր, ով ծովակ» պոեմը: 1915 թ. հունիսի 13-ին այնտեղ է մեկնել հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, ստեղծագործել է իր «Աղթամար» պոեմը: Այնտեղ եղել են պատմաբան Լեոն և այլ նշանավոր անձինք: Իսկ այսօր անամոքաբար թուրքերը ս. Խաչ Եկեղեցին վերագրելով իրենց, անվանում են «քրիստոնյա թուրքերի տաճար»:

* * *

Ազատագրված Ոստանում Լեոնը նշանակվեց զավառապետ. սկսվեց հայերի վերաբնակեցումը: Մեր ընտանիքը նույնպես տեղափոխվեց Ոստան: 8—9 տարեկան տղաներ էինք. վաղ առավոտյան, պառկած կեռասի ծառի տակ, դանգատվում էինք շատ կեռաս ուտելուց հետո՝ փորացավից: Տեսա, որ Ասքանազը, Լեոնը և Սամվելը մտան մեր առևն: Փորացավս մոռացա, վաղեցի տուն: Ասքանազի մոտ ես շատ երես առած էի, որովհետև նա ինձ շափից ավելի էր սիրում:

Ավագ քույրս՝ Զարուհին, հյուրերին զիմավորեց և հրավիրեց հյուրասենյակ: Հյուրերը հարգալից ողջունեցին մայրիկիս: Զրույցը ոտքի վրա կարճ տևեց:

— Տիկին Համասփյուռ, — ասաց Լեոնը, — գործով ենք եկել: Ներսեսը մեկնել է գյուղ, սակայն Ասքանազն այստեղ է: Վանում հանգստից հետո՝ վաղը, ռուսական ազատարար զորամասերից մեկը Հայոց ձոր՝ Ոստան է գալու. պատրաստվում ենք պատվարժան հայկական հյուրասիրությունը զիմավորել մեր ազատարարներին:

— Ի սրտե ողջունում եմ այդ տոնախմբությունը, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել, խնդրեմ, — հարգալից պատասխանեց մայրս:

— Մենք որոշել ենք, որ ռուս զինվորին, մեր ազգային տաբաղով, աղ ու հացով, զիմավորի ձեր դուստր Զարուհին:

— Ո՛չ, ո՛չ, նա սգի մեջ է:

— Համասփյուռ խանում, — ասաց շատախցի Սամվելը, — մենք այդ զիտենք, բայց հարցը վերաբերում է մեր ժողովրդի պատվին...

— Խնդրեմ, խոսեք իր հետ. նա ձեր զինվորն է:

Աղջիկը պատուհանի առջև կանգնած նայում էր արևի շողերից փայլատակող Վանա լճին... Գարնանային գեղաշուք այգիներին:

— Զարուհի՛, քաջ զինվորս, եկեք այստեղ, — կանչեց Սամվելը:

— Դու լսեցի՞ր մեր խոսակցությունը, — հարցրեց Լեոնը:

— Այո՛, լսեցի, պատվարժան գավառապետ:

— Այդ դեպքում մենք սպասում ենք քո պատասխանին:

— Այն ծառայությունները, որոնք վերաբերում են իմ հայրենիքին ու ժողովրդին, ես միշտ պատրաստ եմ՝ թեկուզ կյանքիս գնով, քաջ ասպետ Հրանտիս օրինակով:

Հիացած աղջկա պատասխանով, Լեոնը մոտեցավ նրան, գլուխն առնելով երկու ափերի մեջ, ճակատը ջերմորեն համբուրեց:

— Շնորհակալ եմ, քաջ զինվորս:

Գավառի ղեկավարությունը գոհունակությամբ գուրս եկավ Ներսեսի տանից: Զարուհին իրեն նետեց մոր գիրկը:

— Մայրի՛կ ջան, ներիր ինձ, դա իմ տառապյալ ժողովրդի համար է. ես իմ վարձուներով պսակում եմ այն գործը, որի համար զոհվեց իմ Հրանտը:

— Ապրես, աղջիկս, — շոյելով գլուխն ասաց մայրս:

Հաջորդ օրը Ոստանը տոնական տրամադրությամբ մեջ էր. մայիսի 12-ին ռուսական բանակը մտավ Հայոց ձոր: Եկել էին գյուղերը վերադարձած մահապուրծ, հարազատներին կորցրած բազմաթիվ հայ շինականներ, կանաչ հովտում վառվեցին տասնյակ օջախներ՝ կանթերով պղինձները վրան. կանաչը թե տղամարդիկ անցան իրենց գործին: Հայոց ձորիցները եռուվեռի մեջ սրտատրոփ սպասում էին իրենց ազատարարին:

Գարնանային արևը շարժվում էր դեպի գեների: Եվ ահա ժողովուրդը ուրախ շարժվեց զորամասին ընդառաջ: Առջևից գնում էր շքեղ ազգային տարազի մեջ փայլող Զարուհին: Արևի շողերի տակ փայլող սկուտեղի մեջ տանում էր կյոր հացը՝ ոսկյա ազամանը վրան: Զարուհուն հետևում էին Վասպուրականի տարազով, ծաղկփնջերով մի խումբ հեզաճեմ աղջիկներ: Հասարակության առջևից զինվորական համազգեստով, գեղեցիկ կեցվածքով, քայլում էր գավառապետ Լեոն Շախոյանը: Նրան հետևում էին Ասքանազը, Սամվելը և ուրիշներ:

Զարուհին ողջ գիշեր կրկնել էր Ասքանազի սովորեցրած

ուսերեն ողջույնի խոսքերը: Հիմա համոզված էր, որ անսխալ կխոսի: Ինքնավստահ քայլվածքը էլ ավելի էր ընդգծում նրա կանացի ողջ գեղեցկությունը:

Ռուսական զորամասի հրամանատար պարթևահասակ Վասիլը տեսնելով հանդիսավոր ընդառաջ եկող հասարակությունը, հրամեկազմին հրամայեց ձեռքից ցած իջնել, հարգալից դիմավորել ժողովրդին:

Զարուհին, նրա ընկերուհիները ընդառաջ գալով, ճկուն ու հեղ խոնարհվեցին ազատարարների առջև, մեծարելով ուս գինվորներին:

— Բարի գալուստ, հայոց հինավուրց հողը մեր ազատաբարներին, Մեծ Ռուսիայի քաջ զավակներին,— խոնարհվելով զորավար Վասիլի առջև, համեստ ու հեղ ասաց Զարուհին, առաջ պարզելով աղն ու հացը, բացականչեց.

— Շնորհակալություն, ո՞վ Ռուսիա...

Աղջիկները հրամեկազմին ջերմ ողջունելով նվիրեցին ծաղկեփնջեր:

— Ձերդ մեծափայլություն,— դիմելով զորապետին, շարունակեց Զարուհին,— այսօր մեծ Ռուսիան մեր պատվարժան հյուրն է, համեցեք,— ցույց տվեց առաջ շարժվող հոծ բազմությունը և կանաչ դաշտում վառվող տաանյակ օջախները.

Զորապետը, հրամանատարները հիացած էին համարձակ, իր շքեղությունը փայլող Զարուհու խոսքի հարգալից, թեև ոչ վարժ, բայց հմայիչ տոնով:

Անմիջապես զորապետ Վասիլին ներկայացավ Լեոնն իր կազմով: Զերմորեն ողջունեցին հրամեկազմին:

— Այն՛, Ձերդ մեծափայլություն,— դիմելով զորապետին, ասաց Լեոնը:— Խալիլ փաշայի ջախջախված, խուճապի մատնեղված 30-հազարանոց բանակին հետապնդող ձեր զորամասերից մեկը երեկ՝ մեզնից հյուսիս, առաջ շարժվեց: Նրանք մարտական զործողության մեջ էին, իսկ այսօր, դուք ձեր քաջերով հայ ժողովրդի պատվարժան հյուրն եք: Մեզ ազատագրող դիմվորների հետ նրանց պատվին այսօր տոնախմբություն է: Այդպիսի օրեր կյանքում շատ քիչ են լինում:

— Ի՞նչ բարի ժողովուրդ եք դուք,— սեղմելով Լեոնի ձեռքը, ասաց Վասիլը, ապա մի քանի քայլ առաջ գալով, բարձրացրեց երկու ձեռքը, ուրախ դիմեց ժողովրդին.

— Ողջույն իմ հայ բարեկամներին,— ոչ այնքան վարժ հայերենով սակայն հարազատ հնչեցին այդ բառերը:

Բռնկվեց բուռն ծափահարություններ, ուռաներ՝ ուս մեծ ժողովրդի, նրա փառապանծ բանակի հասցեին:

Վասիլը և Լեոնը առջևից քայլեցին՝ դիմավորելու ընդառաջ եկող ժողովրդին: Զորավարներին հետևեց հրամեկազմը:

Ուրախությամբ, ցնծությամբ իրենց դիմավորող հայերի տանջված դեմքերից, մաշված հագուստներից ճմլվում էր բարեհոգի Վասիլի մարդկային ոգին: Ժողովրդի բացառիկ ջերմ ընդունելությունից զգացված, զորապետը ընդառաջելով Լեոնի խնդրանքին, հրաման արձակեց.

— Զորամասին հանդիստ տալ: Կազմակերպել ուրախ հանդիպում մեր հայ բարեկամների հետ:

Հիսունին մոտ, շիկահեր, դիմվորական ձիգ կեցվածքով, լայնաթիկունք զորապետը իր բարյացակամ վերաբերմունքով հիացմունք էր պատճառում հայերին: Նրա փոքր շեկ մորուքը, համալափ բեղերը ավելի էին գեղեցկացնում պայծառ դեմքը: Նշաններով զարդարված էր լայն կուրծքը: Զորապետին հատուկ առնական ու գեղեցիկ էր նրա քայլվածքը:

Ժողովրդի միջից ողջունելու համար առաջ եկավ Փեսանդաշտը՝ ճակատամարտի քաջարի հետախույզ կաղաղիցցի ալեոո հովիվ Սուբիասը: Գլխարկը հանելով, նա արծաթափայլ զուկսը հարգալից խոնարհեց զորապետի առջև:

— Ի՞ փառս, ի զորություն Մեծ Ռուսիայի մեզ ազատագրողներին,— ասաց նա:

Վասիլի երիտասարդ թարգմանիչն անմիջապես նրան հաղորդեց սրտազին ողջույնի խոսքերը: Ասքանազը մի քանի խոսքով պատմեց հետախույզ-հովիվի քաջագործությունների մասին: Վասիլը հիանալով քաջ ձերուկով, ջերմ զրկախառնվեց Սուբիասի հետ, ապա քաջ հովիվի կրծքին կախեց արծաթափայլ «Խաչ» շքանշանը և ասաց.

— Կավ հետախույզը զորամասի աչքն է:— Այնուհետև Վասիլը թեևանցեց Լեոնին, Ասքանազին և շրջեցին ժողովրդի մեջ, գրուցեցին նրանց հետ: Երիտասարդ թարգմանիչը հիացած էր իր հայրենակիցներով: Մեծ հաճությամբ ու եռանդով էր թարգմանում նրանց սրտաբուխ երախտագիտական խոսքերը:

Արմենը (թարգմանչի անունն այդպես էր) ինքն էլ մեծ բավականությամբ էր զրուցում իր հայրենակիցների հետ, հե-

տաքքըրվում նրանց կյանքով: Նրա կրծքի տակ հանկարծակիորեն սիրո ջերմություն էր ծնվել՝ հրապուրված էր Զարուհիով, նրա կանացի շքեղությամբ, համեստ ու հեղ տեսքով: Վասիլին դիմավորելիս Զարուհու անգիր արած խոսքերից Արմենը տալսվորություն էր ստացել, որ նա ուսերեն խոսել գիտե, սակայն երբ այնպես պատահեց, որ նրանք առանձին, կողք կողքի կանգնեցին, և ինքը փորձեց Զարուհու հետ ուսերեն խոսել, զգաց, ար օրիորդը կարմրեց: Մի տեսակ անհարմար զգալով, ինքն էլ նրանք, անմիջապես ուղղելով իր սխալը, հայերեն խոսեց.

— Օրիորդ, խնդրում եմ, ինձ ներեք:

Զարուհին՝ գոհ երիտասարդի կիրթ վերաբերմունքից, նախեց ու թեթևակի ժպտաց: Արմենը օրիորդի ժպիտից ոգևորվելով, շարունակեց.

— Պատվարժան օրիորդ, խնդրում եմ, եթե կարելի է ձեր անունը բաշխեք ինձ, որտեղացի եք, ո՞ւմ աղջիկը:

Զարուհին վայելչակազմ գինվորի նկատմամբ հարգալից եղավ և փոքր-ինչ լռելուց հետո պատասխանեց.

— Անունս Զարուհի, է, Ասքանաղի հորեղբոր աղջիկն եմ:

— Ի՞նչ հրաշալի եք ձեր եղբոր հետ միասին: Իմ անունը Արմեն է, Թրիխիից եմ, Ներսիսյան ճեմարանը նոր եմ ավարտել ու կամավոր գինվորագրվել եմ տառապալ ժողովրդիս ազատագրման գործին: մեր գործասում հայեր շատ կան:

Ներսիսյան ճեմարանի անունը լսելով, Զարուհին թեթևակի ասաց.

— Իմ եղբայրը շատ է փափագում այդ հրաշալի ճեմարանում սովորել:

— Անիծված պատերազմն ավարտվելուց հետո միասին եկե՛ք, մեր տան պատվարժան հյուրը կլինե՛ք:— Գրպանից հանեց ու մեկնեց մի թուղթ՝ վրան մաշտոցյան տառերով տպագրված իրենց տան հասցեն:

— Շնորհակալություն,— ժպտալով վերցրեց աղջիկը:

Լևոնը զորապետին և հրամկազմին համառոտ պատմում էր Հայոց ձորի, Ոստանի, Վանա լճում գտնվող Աղթամար կղզու մասին, ծանոթացնում թուրքական դաժան բռնակալության տիրապետության տակ իրենց դառը կյանքին: Պատմական անցյալը հետաքրքրություն առաջացրեց, Հրամանատարությանը մեծ

ցավ պատճառեց արևմտահայության ճնշված կյանքը, հայկական ջարդերի կազմակերպումը:

Այնուհետև հաճույքով դիտեցին ժողովրդի և գինվորների ինքնագործ համերգը: Ուշագրավ էին անհատական, խմբակային ժողովրդական երգերը, փոթորկալից պարերը:

Ռուս բարեկամներին հատկապես հիացրեց ազգային տարազով հեզաճկուն աղջիկների մե՛րթ նազելի, մե՛րթ հպարտ ու խրոխտ պարը: Մթնոլորտն ավելի ջերմացավ, երբ նվագակցեցին ժողովրդին անծանոթ հարմունք, կիթառը, լավիցին ուսական, կովկասյան երաժշտությունը, կատարվեցին պարերգերու կանաչ դաշտում խալիների վրա փովեցին սպիտակ սփռոցները: Շամփուրներով խորովածը, երինջի մսից եփած խաչլաման, թավաներով ձվածեղը, թթու դրած կայնգիարը, տեսակ-տեսակ վանաչեղենը, տնական կարմիր, սպիտակ գինիները սպասում էին հյուրերին, ժողովրդին: Սեղանները պատրաստող կանայք բոլորին հարգալից ճաշի հրավիրեցին: Համեղ ուտելիքների բուրմունքը բռնել էր ողջ դաշտը:

Զորապետը և Լևոնը իրենց խմբով տեղ գրավեցին կենտրոնում:

— Այսքան հրաշալի, համեղ ուտելիքներ՝ ճաշակով դասավորված, ե՛րբ հասցրեք,— հարցրեց զորապետը Լևոնին:

— Երբ հյուրերը ժողովրդի սրտում տեղ են ունենում, ամեն ինչ ճարվում է, սուփրան առատ է լինում,— ասաց Լևոնը:— Մենք հանձինս ձեզ, երախտապարտ ենք ուս ժողովրդին: մեր լավագույն բարեկամին:

Կողք կողքի, ծալապատիկ նստած, ռուս գինվորն ու հայ շինականը անուշ էին անում բնության բարիքներից պատրաստված ուտեստները: Բայց ցավալի էր, որ հայերը չէին կարողանում իրենց շնորհակալության ջերմ խոսքը ուսերին ասել ուս գինվորներին: Նրանք լավ գիտեին իրենց սպանող թշնամու լեզուն, բայց չգիտեին իրենց ազատարարի, բարեկամի լեզուն: չէ որ թուրք տերերի կողմից արգելված էր այդ լեզուն: Գեղեցկուհիները, շրջելով սպասարկում էին ուտելիքներով, խմիչքներով, իսկ Զարուհին և իր երկու քնկերուհիները սպասարկում էին զորապետին, հրամկազմին:

Կարմիր գինով լի բաժակը ձեռքին ոտքի կանգնեց գավառապետ Լևոնը, նրա կողքին՝ թարգմանիչ Արմենը:

— Ռուսական փառապանծ բանակի մեծապատիվ հրամանատարներ:

Քաջարի ռուս զինվորներ:

Իմ թանկագին հայրենակիցներ:

Այսօր մեզ մոտ մեծ տոն է, խնդութուն:

Խնդրում եմ, անուշ արեք հայոց հացն ու զինին:

Բոլորի ուշադրությունն իր վրա հրավիրելով, ջերմ ժպիտով շարունակեց.

— Դարեր ի վեր մեր նախնիները ձգտել են ազատագրվելու սուլթանական Թուրքիայի բռնակալությունից: Մեծ Ռուսիային միանալու համար: Այսօր ռուսական զորքի և զենքի ուժով իրականացել է մեր դարավոր իղձը: 500 տարի սուլթանական կրեկի տակ խոշտանգված, ընչազուրկ կյանք ենք վարել, անընդմեջ հայածվել, տնքացել ենք ծանր հարկերի տակ... Թուրքական պետության գործիչները, հոգևորականությունն իրենց ժողովրդին քարոզում էին. «Հայերը ուրի՛շ լեզու, ուրի՛շ աստված ունեն, ուրի՛շ ժողովուրդ են, խորթ են Թուրքիային, բնաջնջեցե՛ք, ոչնչացրե՛ք, վռնդեցե՛ք հայերին, տիրեցե՛ք նրանց ունեցվածքին, երկրին...»:

Այդ տառապալալ կյանքից Հայաստանի Արևելյան մասը Ռուսաստանը ազատագրեց 90 տարի առաջ, արևմտյան մասն էլ ազատագրում է այսօր: Մենք երախտապարտ ենք մեր մեծ բարեկամ ռուս ժողովրդին: Բարի՛ գալուստ, ազատարար զինվորին, որի ուժի սարսափից թուրք հրոսակների բանակը 3 օր առաջ բռնեց փախուստի ճամփան:

Փա՛ռք, հավերժ փա՛ռք ռուս զորքին ու զենքին:

Խնդրում եմ, հոսանկայա խմենք մեր մեծ հարևան ռուս և հայ ժողովուրդների հավերժ բարեկամության կենացը: Փոթորկալից կեցցե՛նե՛րի, ուռանե՛րի տակ, բարեկամները զրկախառնվում էին նոր միայն բաժակները դատարկում:

Առո՛նը և զորապետ Վասիլը գրկախառնվեցին:

— Հարգելի հայ բարեկամներ, — լի բաժակը ձեռքին ոտքի կանգնելով, պատասխան խոսք ասաց Վասիլը, — նախ իմ և զորամասի կողմից ընդունեք մեր խորին շնորհակալությունը ջերմ դիմավորելու, հյուրասիրության համար: Ապա սրտանց շնորհավորում ենք սուլթանական բռնակալ կարգերից ձեր ազատագրումը: — Կրկին փոթորկալից ուռանեք, շնորհակալության խոսքեր, ռուս մեծ ժողովրդի հասցեին: — Հայերդ աշխա-

տանք, հյուրասեր քրիստոնյա ժողովուրդ եք: Սակայն դառն է ձեր կյանքը սուլթանական Թուրքիայի տիրապետության տակ: Աշխարհաճանաչ մշակույթ ունեցող ժողովուրդ եք, իսկ մեր օրերում ժողովրդի մեծությունը որոշում են ոչ թե նրա բանակով, այլ նրա հոգևոր մեծությամբ: Ռուսական բանակում քիչ չեն եղել նշանավոր հայ զորավարներ՝ օրինակ՝ Լոռիս-Մելիքովը, Մաղաթովը, որի բանակն առաջինն է արշավել Փարիզի վրա, Տեր-Ղուկասովը և շատ ուրիշներ: Այսօր էլ մեր զորամասը զրկալորում է նազարեկովը: Մեր շարքերում քիչ չեն Երևանից, Քրիլիսից, Գոնի Ռուստովից, Սոսկովայից՝ հայ հրամանատարներ և զինվորներ: Թեկուզ հենց Արմենը, ձեռքը դրեց իր թարգմանչի ուսին, — որին սիրում եմ ինչպես իմ հարազատ որդուն, Ամենուրեք ազատագրվող հայկական գյուղերում, քաղաքներում մեզ դիմավորում են մեծ խանդավառությամբ՝ ինչպես հարազատներ: Կրկին անգամ շնորհավորում եմ ձեզ, մեր հայ բարեկամներ՝ սուլթանական ստրկությունից ազատագրվելու առթիվ: Խմենք ռուս և հայ ժողովրդի հավերժ բարեկամության կենացը: խաղաղության կենացը:

— Բոլորը ոտքի կանգնեցին, բռնկվեց փոթորկալից ուռանե՛ր, ողջուննե՛ր:

Ուժգին խփեցին գճոնները, զիլ փչեցին դուռնաները, նվագում էին հարմոնները, երգեր, պարեր, ուրախություն: Բարի ցանկություններով խմեցին բարեկամության, Վասիլի, նրա տեղակալների, հրամկազմի, ռուսական քաջարի զինվորների, Փեսանդաշտի ճակատամարտի քաջերի, հայ կանանց, Լեոնի, Ասքանաղի, Մամվելի և այլոց կենացները:

Հայոց ձորի կանաչ դաշտավայրին իջել էր մայիսյան մեղմ երեկոն, երբ ավարտվեց ճաշկերույթը: Մթնում էր, զորապետը հրամայեց վրանները խփել, զորամասին տալ գիշերային հանգիստ:

Զորապետը ուրախությամբ ընդունեց Ասքանաղի հրավերը՝ իրենց տանը գիշերելու: Դեպի Վանա լիճը նայող բաց պատուհաններով երկրորդ հարկի ննջարաններում քնել էին պատվարժան հյուրերը: Զորապետի և Արմենի փափուկ անկողինները պատրաստել էր Զարուհին:

Աբրորականյին ոտքի վրա էին, Ասքանաղի մայրը՝ Համասփյուռը, Զարուհին իր ընկերուհիներով, Մանուկը, Արսենը զբաղված էին պատվարժան հյուրերի համար հաճելի նախա-

ճաշ պատրաստելով: Ասքանազի խնդրանքով, զորապետը թույլ էր տվել նախաճաշին հրավիրել նաև հրամկազմին: Վարուժանը և Դանիելը մեկնեցին Վանա լիճ, երեկոյան նետած ուռկանը հանելու, հյուրերի համար Վանա տառեխ բերելու:

Մանուլը վառեկներ, լորեր էր մորթում: Համասփյուռը ստուգեց խմորը, վառեց թոնիրը՝ լավաշ թխելու:

Զարուհին իր ընկերուհիներով գործի անցան, հյուրերի ճանապարհի համար դաթա էին թխում:

Հայոց ձորի վրա կրկին բացվել էր մայիսյան խաղաղ առավոտը: Արշալույսի առաջին շողերի հետ փշում էր ֆանֆառը՝ գինձորների վերկացի առավոտյան շեփորը: Արթնացող գինձորները, մինչև գոտկատեղը մերկ, ուրախ կատակներով շտապում էին գետը, Վանա լիճը՝ լվացվելու: Արտոսի լեռներից հոսող գետի ջուրը այնքան պարզ ու դուրալի էր, որ գինձորները մեծ հաճույքով ու բավականությամբ էին լվացվում. նույնիսկ գետի հատակին երևում էին՝ քարերի շուրջը խլվացող ձկները:

Առավոտյան ներսեսի տուն եկան դավառապետ Լեոնը, շատախցի Սամվելը, պլթենցի Տիգրանը, գավաշեցի Կիրակոսյանը: Նրանք զորապետին տեսան ծիրանի ծառի տակ լվացվելիս: Զարուհին սրբիչը ուտով զցած, մի ձեռքում օճառը, մյուսում՝ փարչով ջուրը, սպասարկում էր նրան: Լվացվելուց հետո Լեոնը իր ընկերներով ներկայացավ պետին:

— Բարի՛ լույս, քաջառողջություն մեծապատիվ բարեկամին, — ասացին:

— Բարի՛ լույս հայ քաջերին, — պատասխանեց Վասիլը:

— Ինչպե՞ս անցավ ձեր գիշերային հանգիստը, — հարցրեց Լեոնը:

— Հրաշալի, շնորհակալ եմ, — պատասխանելով արձակեց շապիկի ծալված թևերը:

— Պարոն Լեոն, — շատերի հետաքրքրությունը բավարարելով իր մասին սկսեց պատմել Վասիլը: — Դոնի Ռոստովում եմ ծնվել և այնտեղ էլ ապրում եմ, մեզ մոտ հայեր շատ կան: Մեր ընտանիքի բժիշկը հարևանս է՝ Վարդան Նալբանդյանը, ութ հրաշալի երեխաներ ունի. հաճախակի լինում են մեր տանը: Մենք էլ նրանց ենք հաճախում: Հրաշալի դաստիարակված երիտասարդներ են:

Այ, Զարուհու հասակակից մի աղջիկ էլ ես ունեմ:

Զարուհին ծառից կախված վերնազգեստը վերցրեց ու զսկեց գնդապետի ուսերին և ուղեց սրբիչն էլ վերցնել ու հետանալ:

— Մի փոքր սպասի՛ր, աղջիկս, լսի՛ր ինչ եմ պատմելու:

— Աղջկաս անշափ շատ եմ կարոտել, ավելի, քան շորս տղաներիս: Դե՛, միակ աղջիկս է, անունը՝ Վալենտինա, մեներ Վալյա ենք ասում... Դե՛, աղջիկը տան զեղեցկությունն է, քաղաքավարության, կարգ ու կանոնի հետևողը, իրեն միշտ սիրել տվող, տան ծաղիկն է... Նա էլ այսպես բոյով, երկար մազերով հեղ ու ճկուն, զեղեցիկ, համաշափ կազմվածքով աղջիկ է: Միայն մի տարբերությամբ, — ժպտաց, — Վալենչկայիս մազերը շեկ են, աչքերը՝ երկնազույն, դեմքը՝ ճերմակ: Զարուհին, ընդհակառակը, մազերը սև են, մաշկը՝ ցորենազույն, սարերի մաքուր օդից՝ այտերը կարմրավուն, ածխի պես սև, վառվառն աչքեր ունի:

Զարուհին նկատելով, որ բոլորի հայացքն ուղղվում է իրեն, ամոթխածությամբ գլուխը կախեց:

— Այսօր իմ Վալենչկայի ծննդյան օրն է, պարոնայք, — շարունակեց Վասիլը: — Նրա մայրը տասնութ տարի առաջ, այսօրվա պես մայիսյան պայծառ արշալույսին իմ ընտանիքին պարզեց մեր մայիսյան ծաղկին: Ահա թե ինչու, մայիսյան այս առավոտ ծիրանի ծառի տակ մեծ բավականություն ստացա Զարուհու լցրած ջրով լվացվելիս: Անշափ ուրախ եմ, որ այսօր այս պեղատեսիլ փոքրիկ Ոստանում, իմ հայ բարեկամների և մարտակալ ընկերների հետ, հազարավոր կիլոմետրեր հեռվում նշելու եմ իմ շատ սիրելի դստեր 18-ամյակը:

Զարուհին հիացած զորապետի հայրական բարի զգացմունքներից, վազեց այգի և շնչակտուր դարձավ ընտիր վարդերի մի փունջ գրկած:

— Մեծապատիվ զորավար, մայիսյան այս 18 վարդերի պես պայծառ լինի ձեր աղջկա կյանքի ուղին, — հանձնեց զորապետին: Զորապետը հուզմունքից չկարողացավ շնորհակալություն հայտնել օրիորդին, զրպանից հանեց թաշկինակը, սրբեց թըրջված աչքերը: Ապա ջերմ գրկեց և համբուրեց Զարուհուն:

Ասքանազը հիացած բրոջ վերաբերմունքից, ևս մոտեցավ զորապետին, զրպանից հանելով փոքրիկ տուփը, բացեց:

— Պատվարժան Իվան Իվանիչ, այս ոսկյա խաչը իր շըրթալով՝ ներսեսի ընտանիքի նվերը ձեր այդքան շատ սիրելի դստեր 18-ամյակի առթիվ (Ասքանազը անցյալ տարի Վանում

գնել էր Զարուհու համար, որի 18-ը լրանալու էր մայիսի 30-ին), Որոշեց, որ Զարուհու համար նորը կգնի:

Վասիլեր ազդված գրկի մեջ առավ Ասքանազին:

— Շնորհակալ եմ, որդիս:

— Եթե կաս ասովա՞ծ,— ձեռքը վեր պարզելով աղերսեց Վասիլեր,— այս անիծված պատերազմին շուտ վերջ տուր— ժողովրդին խաղաղություն, համերաշխություն է պետք: Իմ ձեռքով այս սուրբ խաչը կախեմ գատրիկիս վզից ու մի քաղցր համբուրեմ...

Զորավարի խոսքերը հուզեցին ներկաներին:

Ասքանազը գավառապետին ասաց, որ սեղանը պատրաստ է:

— Մեծապատիվ զորավար, պարոնայք հրամանատարներ, խնդրում եմ, համեցեք, անուշ արեք, ճաշակեցեք մեր ազգային ուտեստները:

— Պատվաբաժան ներսեսն այսօր բացակայում է,— սեղանի շուրջը բազմելով ասաց Վասիլեր,— թույլ տվեք զրաղեցնել նրա տեղը: Ներսեսի տունը, իմ տունն է: Անուշ արեք այս շեն օջախի համով-հոտով ուտելիքները: Այսօր Վալյայիս և Զարուհու ծննդյան տոնն է:

Երբ բոլորը տեղավորվեցին սեղանի շուրջը, կեռեր բարձրացրեց լիթը բաժակն ու ասաց.

— Պարոնայք, ես առաջարկում եմ խմել մեր մեծապատիվ Իվան Իվանիչի ուրախության՝ նրա թանկագին գտեր՝ Վալյայի, ծննդյան կենացը, թող նրա երիտասարդ կյանքի ճանապարհը կանաչ լինի, ապագան պայծառ:

Հերթով շնորհավորական խոսք ասացին և բարի մաղթանքներ արեցին 18-ամյա Վալյային՝ ցանկանալով երջանկություն: Զարուհին, բաժակը խփելով զորապետի բաժակին, համբուրեց նրան ասելով՝ սա էլ Վալեշկայի կողմից: Ուրախ բացականչություններ լսվեցին:

Երբ նախաճաշն ավարտվեց ու հյուրերը ցրվում էին, Վասիլեր հետաքրքրությամբ հարցրեց Սամվելին.

— Ասացեք, խնդրեմ, ինչու՞ երբեմն Զարուհին անտրամագիր է լինում:

Սամվելը թեթևակի պատմեց Փետանդաշաի պաշտպանության թեժ մարտում անօրինակ քաջադործությունների, հերոսի մահով քնկած Զարուհու փեսացուի՝ Հրանտի մասին: Հրանտի և

Զարուհու հետ կապված պատմությունը թարգմանելիս: Արմենը, որ Զարուհու նկատմամբ անտարբեր չէր, սրտի խոր ցավ դգացր նրա աչքին Զարուհին ավելի բարձրացավ:

— Հոգեկան այսպիսի ծանր ապրումների մեջ մեր նկատմամբ այդքան հոգատարություն, ուղղակի հերոսություն է, Զարուհին հրաշալի աղջիկ է,— շնչաց զորապետը:

Մեկնելուց առաջ Վասիլեր մոտեցավ Ասքանազի մոտը և Համասփյունին, շնորհակալություն հայտնեց, խոնարհարար համբուրեց նրա ձեռքը, ասելով.

— Ինչեր ասես շեն արել այս քնքուշ, հրաշալի ձեռքերը, որին մենք՝ տղամարդիկս, շատ ենք պարտական: Ձեր քրիստոնյա շեն օջախին ի սրտե ցանկանում եմ խաղաղություն, երջանիկ կյանք...

Հրամկազմի բոլոր անդամները՝ այլ ձեռքերը կրծքներին, խոնարհվեցին տիկնանց առջև, հայտնելով իրենց շնորհակալությունը և գոհունակությունը:

— Ասքանա՞զ, որդիս, ուր է քույրիկդ:

Ես կցանկանայի մեկնելուց առաջ համբուրել նրա պայծառ ճակատը:

— Նա խնդրեց ուղեկցել ձեզ մինչև գյուղը, որպեսզի այցելի Հրանտի գերեզմանին: Ես մերժեցի: Խիստ զժգո՞հ փակվել է իր սենյակում:

— Խնդրում եմ, իմ անունից կանչե՛ք նրան, մեկնելուց առաջ կուզեմ տեսնել, խոսել նրա կոտրված սրտի հետ:

Ընկերուհիները շտապեցին զորապետի ցանկությունը կատարելու: Զարուհին թաց աչքերով, իրեն կարգի բերեց, անարամադիր ներկայացավ և խոնարհվեց Վասիլի առջև: Զորապետը նայելով աղջկան, հուզվեց, ամուր սեղմեց իր կրծքին, շույց նրա խնամքով սանրված գլուխը, փաղաքշեց, ինչպես հարազատ ծնողը:

— Ի՞նչ արած, աղջիկս, անիծված պատերազմ է, պայծառ ապագա սպասվող հաղարավոր անմեղ մանուկների, երիտասարդների կյանքն է խլում և ինչու՞, ո՞ւմ համար...

Ցավում եմ, աղջիկս, սրտանց ցավում եմ Հրանտիդ համար: Ինչ եղել է, եղել է, այլևս հետ չես վերադարձնի, մի մոռացիր, որ ծնողներիդ ուրախությունը և մխիթարանքն ես: Մենք հիացած ենք բեղանով:

Զորավարի ծնողական խոսքերից ու գուրգուրանքներից հուզված, աղջիկը գլուխը վեր բարձրացրեց, խոնարհ ու հեղ հայացքով նայեց զորապետի բարյացակամ հայացքին, շկարողանալով իրեն զսպել, համբուրեց նրա այտը որպես երախտագիտության և շնորհակալության նշան, հեկեկալով զնաց, փակվեց իր սենյակում:

— Ասքանա՛գ, որդիս, — դառնալով նրան, ասաց վասիլեր: — Այս հրաշալի քնքուշ էակի հետ խիստ մի վարվեք, օգնե՛ք թող այցելի իր ասպետի գերեզմանին, լացով մխիթարվի, հանգրտանա, շէ՞ որ նրա առաջին սիրտ ծաղիկը հերոսի մահով ընկել է ռազմի դաշտում իր կողքին:

— Զե՛րդ պայծառափայլություն, — հարգալից պատասխանեց Ասքանազը, — ընդունեցեք իմ խորին շնորհակալությունը քրոջս նկատմամբ ցուցաբերած ձեր բարեհոգի վերաբերմունքի համար: Դուք հրաշալի մարդ եք և ծնող: Հրանտի վաղաժամ կորուստը ոչ պակաս ծանր է ինձ համար: Նա իմ մանկության ընկերն էր, հարազատ, ինչպես եղբայր: Նրա գերեզմանին մենք կայցելենք շատ հաճախակի և միասին, սակայն այսօր ժամը չէ ողբի...

Սկավ բաժանվելու ժամը:

Զորապետը գրկախառնվեց կեռնի, Ասքանազի հետ:

Բաժանման ժամանակ Արմենը հարմար պահ գտնելով Ասքանազին ասել էր.

— Պատերազմը վերջանա, համեցեք մեզ մոտ, Ներսիսյան ճեմարանում սովորելու: Ես ուզում եմ քեզ խոստովանել. քո հրաշալի քրոջը սիրեցի և միշտ պիտի սիրեմ: Եթե համաձայն ես, նա կլինի իմ պաշտելի հարսնացուն:

Ասքանազը, որ նկատել էր արդեն նրա վերաբերմունքի արտակարգ ջերմությունը քրոջ նկատմամբ, ժպտալով հավանություն տվեց:

Կենտրոնական մայրուղու երկու կողմերում մարդիկ ծաղկեփնջերով, դհուլ-գուռնայով ճանապարհում էին հաղթարշավի մեկնող ռուսական զորամասին: Ծաղիկներ էին նետում նրանց ոտքերի տակ, երախտագիտության և շնորհակալության խոսքեր ասում, ուռա՛ կանչում, բա՛րի երթ, փայլուն հաղթանակ մաղթում իրենց ազատարարներին:

Պատվարժան զորապետի կողքին, նրա զրուցակիցն էր՝

աբական անհանգիստ նժույգի վրա նստած հայրենի Շատախի մեկնող քաշ Սամվելը: Նա իր հետ տանում էր հոգու մեջ մարմնավորված Ասքանազին, մարտական ընկերների եղբայրական կարոտի լի հուշերով: Նրա ձեռքին էր Զարուհու արցունքներով թրջված վարդերի մեծ փունջը, որը տվել էր Հրանտի գերեզմանին գնելու համար:

ՀԱՐԿԱԳՐՎԱԾ ՀՐԱԺԵՇՏ ԵՐԿՐԻՆ

Հողմացրիվ սև գաղթը

... Ոչնչացվեց երանց աշխարհը, բայց ոչ կյանքը:

ՎՊՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Ապրիլյան զարհուրելի ջարդերից հետո ազատագրված Արևմտյան Հայաստանում խաղաղություն էր: Ավերված երկիրը վերականգնվում էր: Բայց չկար տան տղամարդը: Տնավեր կանանց, ծերունիների, որբացած երեխաների միակ ուրախությունն ավերված երկրում ծփացող արտերն էին, այգիների առատ բերքը:

Հինգ դար ապրելով թուրքական ծանր լծի տակ ազատագրված հայ շինականն առաջին անգամ էր, որ իր աշխատանքի բերքը հավաքելու էր առանց սուլթանի, հարկահավաքների, թալանի:

Սակայն, ցավոք սրտի, վշտահար ժողովրդի երջանկությունը, ուրախությունը շատ կարճ տևեց՝ ընդամենը 81 օր:

Ազատագրված Արևմտյան Հայաստանից ռուսական բանակը, թագավորի հրամանով, 1915-ի հուլիսի 17-ին շտապ հետ կանչվեց: Թուրքիայում թողնվեց հսկայական քանակությամբ պահեստավորված զենք, զինամթերք, հատկապես մեծ քանակությամբ հրանոթ, որով և զինվեց թուրքական բանակը: Ռուսաստանի նկատմամբ վրեժխնդրությամբ լցված օսմանյան թուրքիան, օգտվելով ստեղծված նպաստավոր պայմաններից, գաղանախին բարբարոսությամբ ձեռնարկեց հայացեղսպանության երկրորդ շրջանը: Իսկ երրորդ շրջանն սկսեցին քեժալականները, օգտվելով հանգամանքից, որ Ռուսաստանը հեղափոխության խմորումների մեջ էր արշավեցին Արևելյան Հայաստան, գրավեցին էրզրումը, Ղարսը, Շիրակի և Արարատյան գաղտավայրերը, շուրջ 200 հազար քառակուսի կիլոմետր՝ հա-

յերին զրկելով հին հնավուն պապենական տնից՝ բշելով օտարություն ու զրկանքների գաղթաշխարհը: Աստղերի պես սփռվեցին աշխարհով մեկ: Եվ այսպես հայերս դարձանք ռուս-թուրքական հարաբերությունների զոհեր:

Այս է հայոց դատի պահանջը Թուրքիայից և Ռուսիայից...

Ազատագրված Փեսանդաշտի խաղաղ աշխատանքի հուլիսյան պայծառ ու զով երեկո էր, երկնակամարում շէր երևում ամպի ոչ մի կտոր: Հողի աշխատավորները, որ հիմնականում կանայք, ծերեր և երեխաներ էին, դաշտից տուն էին վերադառնում: Արտոս լեռան ճերմակ գազաթը փայլում էր արևի վերջին ճառագայթներից: Փեսանդաշտիների մտքով անգամ չէր անցնում, որ իրենց փոքրիկ երկրամասի այդ զարդը՝ փայլատակող լեռան գազաթը, որի հետ ապրել են հազար տարիներ վերջին անգամ են տեսնելու: Անսպասելիորեն լուր ստացվեց, որ Ալի էհսան փաշան հիսուն հազարանոց բանակով հարձակման է անցել Բիթլիսի և Վանի նահանգի վրա, գաղանախին վրեժխնդրությամբ սկսել հայերի արյունահեղ ջարդերը՝ հայտարարելով. «Ալլաի կամքով աշխարհի երեսին ոչ մի կենդանի հայ չպետք է մնա»: Սկսվել էր Արևմտյան Հայաստանի հայության ողբալի բռնագաղթը: Բիթլիս քաղաքը լրիվ շրջապատված էր. փրկվելու ոչ մի հույս չկար, Վան քաղաքը ճարահատյալ դիմել է փախուստի դեպի Ռուսահայաստան: Նրան հետևել են շրջակա գյուղերը: Այդ ահավոր լուրից սթափված, ողջ Փեսանդաշտը գիշերն անցկացրեց անհանգիստ, տազնապալից դրուսյան մեջ. պատրաստվում էին գաղթի: Մարդիկ, որ երեկ կուռ միասնությամբ հերոսաբար կռվում էին իրենց ազատության համար, այսօր ստիպված էին հրաժեշտ տալու հայրենի երկրին՝ թշնամուն թողնելով հայոց սերունդների ջանքերով ստեղծած պապենական օջախները, գյուղերը, քաղաքները:

Արշալույսին տուն ու տեղ թողած, օջախի դռները ամուռ փակեցին, գոմերի, ախոռների դռները բաց թողեցին, անասուններին ազատ արձակեցին, որպեսզի մի կերպ ապրեն: Սգավոր կինը ծնկաչոք հրաժեշտի խոսք էր ասում տան շեմքին, որի մեջ նվիրվածությամբ ծառայել էր յուր ընտանիքին: Ամուսնուն կորցրած երեխաներով հրաժեշտ էր տալիս տոհմական օջախին, նախնայաց երկրին:

Շոյելով՝ հրաժեշտի խոսք է ասում անտեր թողած կաթնու-

տու կովին, լծկան եզներին, ոչխարներին, գոմեշներին, ձիերին, հավատարիմ շներին: Վշտահար տերհայրն էլ, ամուր փակելով եկեղեցու դուռը, խաչակնքում է դեմքը, ծնկաչոք աղոթում աստ-ծուն, ապա առաջնորդում իր թշվառ ժողովրդին՝ դեպի տառապանքների, զրկանքների գաղթաշխարհը: Ողբի ծանր առավոտ էր: Սայլերով, ոմանք էլ անասուններին բարձած ջվալների մեջ՝ զույգ-զույգ մանկահասակ երեխաներ, ճանապարհի համար թեթև անկողին, անքուն գիշերվա թխած բաղարջ, հաց, մեծամասամբ՝ 5—10 երեխաներով, առանց տղամարդու, ճամփա ընկան դեպի օտարություն: Այդ մեծագույն աղետը սոսկ գաղթ էր, այլ հրից ու սրից, մահից փախչելու մի սարսափելի տեսարան՝ Պարսկաստանի սահմանից մինչև Միջերկրական ծովը, Մարմարի ծովը մարդիկ փախչում էին, գնում էին, չգիտենալով, թե վաղը ինչ է սպասվում իրենց: Փախչում էր սգավոր մայրը՝ կրծքին, մեջքին կապած փոքրիկին, փեշերից կախ ընկած լացող երեխաներին: Փախչում էին, մեկ-մեկ էլ կանգ առնում, վիզը ծռած, թաց աչքերով հետ նայում՝ դատարկված հարազատ գյուղին: Յուրաքանչյուր դաղարից հետո ավելի դժվարությամբ փոխելով ծանրացած ոտքը, ճաշակելով բռնազաղթի առաջին դառնությունները, մի քանի խառը խմբեր՝ լավայի նման, մտան վան:

ՎԱՆ

Ամառային կիզիչ արևը զենիթին էր հասել: Շոգն իր հերթին էր նեղում, երբ Փեսանդաշտի, Գավաշի և Մեծ Շատախի անավեր գաղթականները 2—3 օր, գիշեր ու ցերեկ, առանց հանգստի (հիմնականում կանայք, երեխաներ, ծերեր), բունը թողած թռչունի պես փախչող թշվառների քարավանը վանում կանգ առավ: 70-ամյա Հարությունը՝ ամբակազմ մի լեռնցի, գլխին և երկար շեկլիկ բեղերում ոչ մի ճերմակ մազ չուներ: Մեծացրել էր 15 երեխա և ուներ թոռների ու ծոռների մի բանակ, իր տան մեծ սայլի մեջ լցրած տանում էր, որբացած, հոգնած 18 երեխա, որոնց մեջ էի ես և երկու փոքր եղբայրներս: Վըշտացած մեր ծնողների վիճակից, թռչունի ձագերի պես ծվարած, մեջք մեջքի տված, մանկական ժպիտը մոռացած, դառնազին հիշում էինք մեր անուշիկ տները, մանկական խաղերը, մայրիկի եփած համով-հոտով ճաշերը, որոնք հիմա երազ էին թվում:

Նրբ անցվորները հարցնում էին՝ քեռի Հարթեն, այդ ի՞նչ երեխաներ են, նա տիրություն պատասխանում էր. «Մեր զբ-բախտացած ազգի գալիք սերունդն են, պիտի տանեմ ս. էջմիածին, հանձնեմ վեհափառ կաթողիկոսին»: Սայլը քաշող երկու կարմիր եզները միևնույն կովի ծնունդն էին և միմյանցից ոչնչով չէին տարբերվում. միայն մեկը մի տարով փոքր էր մյուսից: Մեկ պես սոված ու ծարավ, խոնարհ ու հեղ քաշում էին այն սայլը, որի մեջ էինք դժբախտ հայ մանուկներս:

Քեռի Հարությունը եզներին կանգնեցրեց, ապա մոտենալով երեխաներիս, ասաց.

— Նայեցե՛ք, ահա մեր Վանը՝ սուզի մեջ, լավ նայեք, որպեսզի երեք այն շմոռանաք:

Մի պահ մոռացություն տալով մանկական վշտերը, ուրախ ոտքի ելանք՝ նայելու տատիկների պատմած հեքիաթային, սիրելի քաղաքին: Տեսնելով անմարդարնակ, ծխացող քաղաքը, տրամադրություններս ընկավ. մանկական սրտներս ճմլվեց, ափսոսանքով ցավ զգացինք:

Սայլի մոտ կանգնած, խիստ հոգնած մայրս, տխրազեմ նայեց անրնակ քաղաքին, խոր «ա՛խ» արեց ու ասաց.

— Հարթեն եղբայր, էս ի՞նչ զուլում է, մեր խորոտիկ Վանը ավիրվերի: Մեր լուսավոր օջախը խավարի: Լուռի՛ ինչպես զերեզմանոց: Մենակ տերակորուստ շներ ու կատուներ կթափառին: Մարդ է՛լ էս ծառ ու ծաղիկով զարդարված, մրգաշատ այգիների մեջ թաղված խորոտիկ տներով քաղաքը կթողնի՞, կքոչի՞ օտարություն: Էս ի՞նչ սև օր բերեց մեր գլխին անիրավ թուրքը: Ա՛խ, տեր աստված, կաղոթեմ քեզ, մեր տունը քանդողի տունն էլ դո՛ւ ավիրես:

Հարությունը քարացած, անտրամազիր նայում էր պաշտելի քաղաքին: Քանի՛-քանի՛ անգամ, նույն սայլով, համազուգացիների հետ Փեսանդաշտի համով պանիրը, ջվալներով ցորենը, տկերով ժածիկը, կտավատի ձեթը և այլ մթերքներ բերել է այստեղ վաճառել, հետո էլ տան, երեխաների համար գնումներ արել, բեռնված վերադարձել գյուղ, տնեցիներին ուրախացրել էսկ այսօր Վանը տխուր է, ուրախ Վանը մեռել է:

— Է՛, Համասփյուռ քույրիկ, մեր Վանը դրախտավայր էր: Աշխարհը կգար այս շեն քաղաքը առևտրի, մի տեսնեիր Հընդկաստանից, Պարսկաստանից, Արաբստանից, Պոլսից, Եվրոպա-

լից մեծ քարավաններ դալիս իջնում էին Վան՝ առևտրի: Ի՞նչ, ի՞նչ տեսակի հմուտ վարպետներ՝ ոսկերիչ, ժամագործ, մետաղագործ և այլ արհեստավոր կային: Այսօր շեն արհեստանոցները, շուկան անտեր-անտիրական ավերակ են: Սիրտ է պետք, որ դիմանա:

Ա՛խ, մեր Վանը, խալդերից, ուրարտացիներից եկած հայ ժողովրդի ձևավորման օրրանը: Հայոց թագավորների, մեծամեծ իշխանների գահանիստը: Արևմտյան Հայաստանի հայության, Վասպուրականի գիտության, մշակույթի, հավատքի լուսավոր օջախը, որի վրա 500 տարի, ծանր մուրճի պես ընկած Օսմանյան բռնակալ կայսրության սև բռունցքը՝ ճգնում է մեր ազատությունը, պետականությունը: Փակում է մեր ազգի զարգացման, առաջընթացի բոլոր ճանապարհները:

Երեկ պաշարված հերոսի պես կովում էին սուլթանական լծից ազատվելու համար, իսկ այսօ՞ր...

Այդ զրույցի ընթացքում մայրս, գաղթի ճանապարհի համար թոնրում թխած բաղարջը կարտելով բաժանեց երեխաներիս: Այնպիսի ուրախությունք, ազահությունք կերանք, որ կարծես կյանքում դրանից համով ոչինչ չէինք կերել: Զարուհի քույրս գնացել էր ջուր բերելու. եկավ մեծ կուժը ուսին: Բերաններս բաց, շորացած կոկորդներով անհամբեր սպասում էինք ջրին: Շուգից ծարավն ավելի շատ էր նեղում, քան՝ քաղցածությունը:

Զարուհին եկավ ջրով մեծ կուժը ուսին՝ ուրախություն պատճառելով մանուկներին: Իսկ բարի քեռին եզների վզից լուծք արձակեց, տարավ ջրելու և մի փոքր արածեցնելու:

Մայրս և քույրս մեզ՝ երեխաներին, սալից իջեցրին կանաչի մեջ, փոքր խաղացիներ: Ողբերգական վիճակի մեջ, երբ սկսեցինք ուրախ-ուրախ թռչկոտել, տեսա մեզ նայող մայրս լուռ ու մունջ, գլուխը կախ լալիս է և գլխաշորի ծայրով սրբում աչքերից հոսող արցունքները:

Ա՛խ, մայր, մայր, իմ անուշի՛կ մայր... ճիշտ է ասված. «Ով մորը մոռանա, դույզ աչքերով կուրանա»:

Հանգստի կարիք զգում էինք՝ մեծ թե փոքր, նույնիսկ մեզ հեղ ծառայող բարի անասունները: Բայց հանկարծ լավից գաղթի շարասյունը ղեկավարող գյուղապետ Գալուստի բարկացկոտ ձայնը.

— Համասփյուռ քույրիկ, ի՞նչ եք նստել, ի՞նչ հանգստի ժամ է: Զե՞ք լսում հրաձգությունների ձայնը: Այի էհասան փաշայի,

զորքերը հարձակվում են գաղթի շարասյան վրա: Ո՞ր է Հարթենը, կանչեք, սալը լծեք և շտապ շարժվեք: Բերկրո ձորում կմիանաք Վանի, Գափաշի գաղթականությունը, այնտեղ գիշերը կհանգստանաք:

Գաղթի քարավանում եղած այն տղամարդիկ, որոնք կարող էին զենք վերցնել, խարականցի Լեոնի և փեսանդաշտցի Ասքանազի զինված խմբում անձնվիրաբար պաշտպանում էին քարավանը՝ թուրքական զինված ուժերի հարձակումներից: Ասքանազի հետ կովում էր նաև ներսես հայրս՝ իր եղբայրներով:

Ջբավարարվելով հայերի թողած հայրենի երկրով, շեն քաղաքներով ու գյուղերով, կահ ու կարասիներով, լի գեղեցիկ տներով, ծփացող արտերով, այգեգործի մշակած պտղատու այգիներով, հարյուր-հազարավոր գլուխ անասուններով, թուրքերը դեռ հարձակվում էին մահից փախչող թշվառական գաղթականների վրա, ուղում քնաջնջել, կողտատել: Եվ նրանց աստվածը ո՞նց է տեղ տալիս իր երկնքի տակ:

Հափշտապ հեռացանք ավերակված ծխացող Վան քաղաքից: Սգավոր սրտերով հրածեշտ տվինք Վանին: Նրա ողբերգական տեսքը հայաջնջման իրական պատկերն էր, որ ավելի էր հուսալքել ղեպի օտարություն՝ փշուրմը հաց մուրալու, պուտմը ջուր ողորմելու փախչող թշվառական հայերին:

Քայլում էինք ղեպի Բերկրո ձորը, Վանա արծաթափայլ լճի վերջին ափերով: Նրա մեղմ ալիքները զարկվելով ծաղկաշատ կանաչ ափերին, ասես արտասովաթոր հրածեշտ էին տալիս գաղթականներին: Գլուխներս մեկ-մեկ բարձրացնելով հրածեշտի տխուր հայացքով էինք նայում անուշիկ ծովակին, հեռվից ասես սուգ կապած սեզ Սիփանա սարին:

Հեռացանք ու քայլում էինք խառը խմբերով ահաբեկված փախչում, էլ չէին լավում գաղթի դժբախտ շարասյունը հետապնդող արյունարբու Այի էհասան փաշայի զորամասերի սարսափելի հրաձգությունների, հրանոթների որոտի ձայները: Խեղախ հայ կամավորները, իրենց կյանքի գնով, կանխել էին թուրքերի հարձակումները, որ մենք ապրենք:

Քայլում էինք խմբված, սուս ու փուս, մորմուքված սրտերով հարմարվելով մեր դառը ճակատագրին:

Բերկրո ձորը ոչ մեծ, ինքնատիպ, արտաքուստ սարսափազդու և մոռյլ ձոր էր, հրկկողմանի Սաղկանք և Քենդուրենք բարձրադիր լեռներով: Զորը բաժանում էր խիստ աղմկոտ Բանդիմաճ անվամբ, լեռնային գետը, որի արեելյան կողմը անտառոտ էր: Այդ շարաբաստիկ ձորով է անցնում միակ ճանապարհը: Զորի մոտակա գյուղերի թուրք, քուրդ, հատկապես շերքեզ բնակիչները օգտագործելով ձորի բնական նպաստավոր դիրքը ավազակային հարձակումներ էին կատարում ճանապարհորդ հայերի, վաճառականների վրա, սպանում, կողոպտում էին: Այդ իսկ պատճառով, սովորաբար, շարաբաստիկ ձորով ճամփորդում էին մի քանի հոգով: Երբեմն էլ բռնկվում էին լուրջ բնդհարումներ: Սակայն դժվար էր պաշտպանվել թաքնված հմուտ հրաձիգ ավազակներից:

Բերկրո ձորի ողբերգական դեպքերի մասին՝ բերնեբերան անցնող, շատ ու շատ արյունոտ պատմություններ կան, այն համարում էին հայերի գերեզմանոց: Թուրքական պետությունը լավ գիտեր այդ ավազակային հարձակումների մասին: Սակայն անուշադրություն էր մատնում, որովհետև հարձակումները հիմնականում կատարվում էին հայերի վրա:

Վասպուրական աշխարհին իջել էր մեղմ երեկու: Երկնակամարին շկար ամպի ոչ մի կտոր: Անհոգ արևը փառահեղ շարժվում էր դեպի արևմուտք: Իսկ մենք՝ թշվառ փախստականներս, լճափնյա ճանապարհով, ճակատագրից շջմած, ուժասպառ, հոսող լավայի պես ձգտում էինք դեպի շարաբաստիկ Բերկրո ձորը՝ հանգստի հույսով: Մովակից եկող հրաժեշտի մեղմ բամին գովություն էր բերում: Կյանք տեսած տարիքավոր մարդիկ երկյուղում էին այդ արյունոտ ձորում հանգստանալու, գիշերելու մտքից:

Ուժասպառ քայլում էր հայոց մեծ գաղթի քարավանը:

Քայլում էինք հոգեմաշ սրտով, խոր լուռությամբ: Փայլում էինք ծանր մտորումների մեջ, երբ անսպասելիորեն լճափնյա լեռներից որոտացին անգութ թուրքերի հրանոթային համազարկերը: Ուղիղ գաղթի շարասյունների վրա պայթեցին տասնյակ արկեր: Գա ցավի ու մահվան սարսափելի տեսարան էր ահավոր խուճապ, իրարանցում: Սպանվեցին, վիրավորվեցին

հարյուրավոր երեխաներ, կանայք, ծերունիներ: Բեռներ տանող անասունները խուճապի մատնված փախչում էին, վազում էին ուժերի իրիվ լարումով:

Մահվան շափ ծանր էր միմյանց կորցրած մայրերի, երեխաների ճիշերը, վիրավորների աղբյուսանքի ձայները: Բախտի բերումով, մենք շարասյան առջևից անվտանգ անցած խմբի մեջ էինք: Ցնցված, քարացած կանգ առանք: Ով կարող էր, շտապեց դժբախտ դեպքի վայրը օդնության, մեկնեց նաև Զարուհի քույրս:

Մրտապինդ գյուղապետ Գալուստը իրեն շկորցրեց. առաջ կողմնորոշվեց և ամրակազմ ծերունիների հետ՝ գործի անցան. երկար փոսեր փորեցին և զոհվածներին հողին հանձնեցին: Հետո, սուզի մեջ, ցաք ու ցրիվ խմբերով, ճանապարհը շարունակեցինք:

Գաղթի հինգերորդ օրը՝ ուշ երեկոյին, ծանր հարվածից ջարդ ու փշուր եղած վիրավորներին սայլերի, անասունների վրա ու շալակած ուժապառ վիճակում հասանք մոռյլ Բերկրո ձորը Հոգնածությունը, անքնությունը, սովը, ծարավը նեղում էին մեզ: Էլ ուժ չկար քայլելու: Անտանելի էր վիրավորների, երեխաների տրտունջները: Ետապում էինք բնտանիքով, անտառի հովտում մի կերպ տեղավորվել՝ հանգստի, քնելու: Կանաչի վրա պտուկի ու քնելը մեկ եղավ: Պառկած էինք կողք կողքի, մեջք մեջքի, մայր ու որդի, բացօթյա, առանց ծածկոցի, անասունների կողքին: Մեծ էր տանջված կանանց հոգսերը: Վիրավորներին, երեխաներին կերակրել, ջուր հայթայթել: Գիշերային կախարդ լուռությունը ծանրացել էր կանաչ ձորի վրա: Կապույտ երկնակամարից աստվածային ճրագներն ասես բարի քուն էին մաղթում մաշված ժողովրդին: Ջինջ ու խաղաղ լուռության մեջ միայն լսվում էր լեռնային գետի անդադար հմայիչ ձայնը:

Վանի, Հայոց ձորի, Գավաշի գաղթի քարավաններն այդ երկյուղալի ձորում հանգստի վայրէջք չէին կատարել, օրը ցերեկով առանց փորձանքի անցել էին:

Բայց մենք շատ էինք հոգնած ու տանջված՝ դադար առանք: Եվ ահա երբ լույսը փոխարինում էր գիշերային խավարին, խուլ ձորում բռնկվեց մի ահավոր աղմուկ, իրարանցում, հրաձիգություններ, ահաբեկող, ահարկու ձայներ: Երեկվա ահավոր

դեպքերից հետո կրկին՝ լաց ու կոծ, օգնութեան աղերս, աղա-
զակ ու ճիշ...

Քուրք, քուրդ, չեքքեզ ավազակների հեծյալ խմբերը գաղա-
նային բարբարոսութեամբ հարձակվել էին անպաշտպան ժողո-
վըրդի վրա՝ սպանելու, երիտասարդ աղջիկներին փախցնելու,
թալանելու համար: Մարդկային խղճները կորցրած ավազակնե-
րը առանց որևէ դիմադրութեան տանում էին ինչ որ ցանկանա-
լին. աղերսանքի, օգնութեան ճիշերը լռեցնում էին արյունոտ
դաշույնով, հրացանի կրակոցով: Հարյուրավոր երիտասարդ
կանանց, դեռահաս աղջիկների, երեխաների կապանքներով
սալլերի մեջ, ձիերի վրա տանում էին, որոնց օգնութեան ճիշե-
րին, աղերսանքին, լացին ողբալի ձայներով արձագանքում էին
միայն մեռյալ ձորն ու ապառաժ լեռը:

— Մայրի՛կ ջան, տատի՛կ ջան, աղաչում եմ, օգնեցե՛ք,
անգութ թուրքերը տանում են ինձ, — լավում էր դեռահաս աղ-
ջիկների, մանկիկների ձայները: Սակայն ո՞վ կար, ո՞վ կարող
էր օգնել անօգնական-մնացած կանանց, երեխաներին:

Ավազակները խելակորույս մայրերի աղերսանքը, օգնութեան
ճիշերը լռեցնում էին կեռ դաշույնի արյունոտ հարվածներով:

Գաղթականությունն ահի ու մահվան մեջ գալարվում էր:
Իսկ հեծյալ ավազակները, ձորը ոռնատակ անելով, կողոպտում,
սպանում էին: Տագնապալից պահին մայրս կորցրել էր ինձ, 3
և 5 տարեկան Ռաֆայել և Տիգրան եղբայրներս: Արթնանալով,
տեսել էր ո՛չ մենք, ո՛չ էլ բարձած կարմիր կովը չկա: Երկու
ափով հարվածելով գլխին, ճշում էր. «Ա՛խ, աստված, ինչո՞ւ
ես ննջեցի, վե՛ր կաց, վե՛ր կաց, աղջիկս, չկան...»:

— Ո՞վ չկա, մայրիկ: Կիսաբուն, կեսարթուն զարմացած
հարցրեց Զարուհին՝ ձեռքը տանելով վզից կախված Հրանտի
մաուզերին:

— Եղբայրներիդ տարան, բարձած Շուշան կովին տարան:
Ե՛րև տարա, գնանք փնտրելու, թե չէ ես կիսելագարվեմ, — ձեռ-
քերով խփելով ծնկներին, գլխին, ողբում էր տառապանքներից
հուզված մայրս:

Մեր տան հսկայական ունեցվածքից մնացել էր մի էջ և այդ
կարմիր կովը, որի վրա՝ ջվալի մի կողմում ես էի, մյուսում,
եղբայրներս (Մայրս մեր տան 8 կովերից դրան էր ընտրել, որ
ճանապարհին մեզ համար կթի: Բայց սոված, տանջված անա-
սունից ի՞նչ կաթ):

Մանուկի կիներ՝ Սոնան, որ Գյուլիզարին գրկած քնած էր,
արթնանալով, մորս հանգստացրեց.

— Համասփյուռ խանում, քեզ մի տանջիր, նայեց այգու
մեջ, սոված անասուն է, երեկ մի տեղ արածում է:

Իրավ, կովը ժխորային աղմուկից հեռու, մի ծառի տակ արա-
ծում էր: Մեր պահապան Զանգի շունն էլ պառկած էր նրա կող-
քին: Ես արթնացել էի հրաձգության ձայնից, ահարկու աղմու-
կից, շների հաշոցից վախեցած լուռ էի: Լսեցի մորս անուշիկ
ձայնը: Զանգին հաշեց ու վաղեց նրա կողմը և պոչը խաղաց-
նելով առաջնորդեց մեզ մոտ: Մայրիկիս ուրախ գեմքի վրա
երևացին արցունքի կաթիլներ: Գրկել ու համբուրում էր մեզ:

— Համասփյուռ խանում, երեխաներին սիրելու ժամանակը
չէ, շո՛ւտ արա, փախչենք այս արյունոտ ձորից: Չե՞ս տեսնում
ինչ ահավոր փախեփախ է: Ձորից դուրս գալու միակ ճանա-
պարհը Բանդի մահու գետի վրայի բաց, հասարակ կամուրջն էր,
որ ասում էին «Կոլոտ» կամուրջ: «Կոլոտ» անվանումն ստա-
ցել էր, որովհետև երկարությունը փոքր էր, քան՝ խորությունը:
Կամրջի առջև հավաքված էր գաղթականների հոծ բաղմութուն:
Խուճապի մատնված մարդիկ ձգտում էին «կոլոտ» կամրջով
շուտ անցնել: Շտապելուց ոմանք՝ ուժասպառներ, անքուն երե-
խաներ, ծերեր, նաև բարձած անասուններ, հաճախ «կոլոտ»
կամրջի աջ ու ձախ կողմերից գլորվում էին ցած քարերի վրա
չարդ ու փշուր լինում: Վայրագ թուրքն էր նրանց մղել այդ
ողբերգական մահին...

Այդ ցնցող տեսարանին ավելանում էին ջրից, ձորից լսվող
մահամերձների նվաղ ձայները, անասունների բառաչը: Բայց
մարդիկ տեսնելով ցավն ու մահը, շտապում էին կամուրջն
անցնել: Այս կյանքի ու մահվան եզրում, ողբի ու նղովթի պա-
հին, թշվառ գաղթականության մեջ ալիքավորվեց փրկության
հույսի մի ձայն. «Քաջ Անդրանիկ յուր խմբով շտապում է մեզ
փրկության»:

Գիշերային սարսափից հետո այդ բարի լուրը հազարավոր
թշվառական գաղթականներին կյանքի հույս ներշնչեց. ասես
մարդիկ թեթևացան, աշխուժացան: Լուրը կայծակի արագու-
թեամբ տարածվեց ձորում: Ով ինչքան ուժ ուներ, հայերեն, թե
թուրքերեն, ուրախությունից ցնցված ողջ ուժով բացականչում
էր՝ «Քաջ Անդրանիկը գալիս է»:

Քաջ Անդրանիկի մասին լուրը սարսափեցրեց մարդասպան հրոսակներին: Իրենց կողոպուտներով, արյունոտ դաշույններով, տաք զենքերով՝ գլուխներն առած չքվեցին, փախան:

Ավազակների ոհմակի փախուստից հետո ձորում լուռություն, «խաղաղություն» տիրեց. թշվառական գաղթականությունը շունչ քաշեց. աստիճանաբար կարգավորվեց «կոլոտ» կամրջով անցումը:

Բոլորի սրտում խոր վիշտ կար, ցավ, սակայն այդ ամենի մեջ էլ լինում էին ուրախության պահեր: Հարազատները գտնելով միմյանց, գրկախառնվեցին: Մանուկներին գտնող մայրերը ուրախանում էին, ժպիտ խառնում լացին: Սակայն այդպես էլ անամոք մնաց շատերի վիշտը, երբ համոզվեցին, որ իրենց երեխաները չկան:

Գյուղապետ Գալուստը մեզ գտավ, տիրություն մեր կենց ու ասաց.

— Համասփյուռ քույրիկ, ուրախ եմ ձեզ և Մանուկի ընտանիքին ողջ տեսնելու համար:

— Գալուստ աղա, մենք էլ, նմանապես ուրախ ենք՝ ձեզ ողջ և առողջ տեսնելու համար, — ապա հարցրեց. մեր թախումից մարդ չե՞ս տեսել, ինչ խաբար կա: Երեկվա ու էս գիշերվա հարձակումներից վնասը խո՞ւմ շատ չէ:

— Շա՛տ է, Համասփյուռ խանում:

— Արնախում թուրքը էս ի՞նչ զուլում բերեց մեր անմեղ ազգի գլխին, — գանգատվեց մայրս, — ի՞նչ կուզի մեզմե: Բա խիղճ, աստված, օրենք չունեն՞...

— Համասփյուռ խանում, տեսնում եմ մեծ տան բարի խանումի սրտից արյուն է կաթում, — ասաց գյուղապետ Գալուստը, — թուրքը համարձակ կգործի, քանի որ նրան գերմանացին կօգնի: Իսկ մեր բարեկամ ոռուր ծանր կովի մեջ է: Ձեր մեծ թախումի անդամներից տեղեկություն չունեմ: Երեկ ցերեկը սպանվել և վիրավորվել են շուրջ 250 մարդ, այսօրվա ողբերգությունը անկարելի է նկարագրել: Դա մեծ գազանություն է, որ միայն թուրքը կանի: Մի քանի հոգով անտառը շրջեցինք, թաքնված կանանց, երեխաներին հավաքեցինք, բերեցինք: Իսկ որտեղ որ եղել են ավազակները, արյուն էր հոսում. բզկտված, սպանված կանայք, երիտասարդ աղջիկներ, երեխաներ, կողոպուտ: Տարել էին հարյուրավոր երիտասարդ կանանց, երեխա-

ների, բեռները բարձած անասուններ, որոնց վրա եղել է մանկիկներ, գաղթի ճանապարհի փշուրմը պաշար, անկողին:

Միբո էր պետք, որ դիմանար, — ասաց մայրս՝ խիղճ չկա: Աչքիդ առաջ գազանաբար բնաջնջում են ժողովրդիդ, խլում տանում են մեր ազգի սերունդ աճեցնող երիտասարդներին, երեխաներին՝ իրենց անիծյալ ազգը բազմացնելու համար և անզոր ես, ոչինչ անել չես կարող: Հեյ գիդի ուս եղբայր մեզ ազատագրելով թուրքի ջարդերից, մեծ ուրախություն բերեցիր, հետո էլ հանձնեցիր այդ արյունախումի ձեռքը ու դնացիր...

Գյուղապետը մորս չէր ասել, որ երեկ զոհվել էր նաև Ասքանազի մայրը, նրան խնամող փոքր հորեղբայրս, մեր տանն ապրող երկու քեռիներս, իսկ առավոտյան, մեծ ընկուզենու տակ հողին է հանձնել հորեղբայրներիս շորս կանանց, որոնք խիստ դիմադրել էին իրենց երեխաներին, ունեցվածքը տանելիս: Մորս հանգստացնելու համար գյուղապետն ասաց.

— Համասփյուռ խանում, սիրտդ պինդ պահիր, այսուհետև քաջ Անդրանիկը մեզ հետ է, այլևս նման դեպքեր չեն լինի:

— Աղեկ կասես, Գալուստ աղա, հույսը լավ բանի: Բայց էս ինչ ո՞ր մեր գլխին եկավ, իսորից հետո անզգամ թուրքից լավ բան մի սպասիր: Թուրքը ապերախտ, տմարդ ազգ ի: Չգիտեմ, թե ոռուր մեզ տեր կանգնի, տիրություն անի, թե չէ, էս որ թուրքն ի սկսել մեր բարի ազգին կջնջի, մեր հողին, ջրին կտիրի:

Մորս փեշը բռնած, բերանս բաց լսում էի այս ողբերգական, հավիտյան շողագեղ խոսք ու զրույցը՝ մեր ազգի ճակատագրի մասին ու սարսափ էի զգում: Գյուղապետը մեզ տարավ միացրեց իր ընտանիքին: Ապա անցավ գաղթող ժողովրդին օգնելու իր բարի ծառայություններին:

ԴԵՊԻ ԵԳՎԻՐ, ԷՋՄԻԱՍԻՆ

Կեսօրն անց էր: Կարկտահար եղած ծով վշտերի մեջ մի կերպ պոկվեցինք Բերկրո գարհուրելի ձորից: Սարսափած ու ահաբեկված փախչում էինք կիլիչ արևի տակ: Քաղցած ու ծաբավ, պատառոտված շորերով, գզգզված մազերով, փոշոտ դեմքով, բորիկ, քարքարոտ-փոշոտ, արյունոտ ճանապարհներով, քայլում էինք ուժասպառ, վշտահար: Ավելի անտանելի էին դառնում երեխաների ձիչն ու լացը:

— Մայրի՛կ ջան, սոված եմ, փշուրմը հաց տուր, մայրի՛կ ջան, ծարավ եմ, պուտըմ շուր տուր, մայրի՛կ ջան, ո՞ւր է հայրի՛կը, ես այլևս քայլելու ուժ չունեմ: Ես մեր խորոտիկ տունն եմ ուզում...

Քշմառութեան մեջ գալարվող, հուսակտուր մայրերը ոչնչով չէին կարող բավարարել երեխաների պահանջները: Մեկին շալակելով, մյուսին գրկելով, պատասխանում էին.

— Հոգիս, մի փոքր էլ համբերիր, շուտով, շուտով կհասնենք Դարբաստան գաշտը և ամեն ինչ լավ կլինի:

Ոմանք ուժասպառ, հյուժված, մեռնում էին քաղցից, ծարավից, արևահարությունից և գաղթի ճամփին թեթևակի հողին էին հանձնում:

Աղաբայի գաշտը, Օրգով գյուղը, որտեղ թուրքը դեռ իր սև ոտքը չէր դրել անցանք խաղաղ և հանգիստ: Օգրովի բնակչությունը մեզ ընդունեց հարազատի պես. օգնում, կերակրում էին՝ ով ինչով կարող էր: Առանձնապես ուշադիր էին երեխաների նկատմամբ: Երեկոյան Զարուհին ջրից վերադառնալիս պատմեց, որ Հարություն քեռին Բերկրո ձորից դուրս է եկել վերջում: Նա իր հետ բերել է շուրջ 50 ծնողներին կորցրած երեխա և իջել է գյուղի տերտերի տունը: Որոշ երեխաներ գտան իրենց մայրերին:

Տառապանքի ծանր օրերից հետո առաջին խաղաղ գիշերն անցկացրինք Օրգովում: Իգդիր մտանք մեծ հույսով, որ այնտեղ կգտնենք մեր երազած հանգիստը: Ցավոք սրտի, մեզ ընդունեցին դժգոհ՝ խորթ և օտար: Գալուստը մի մասին տեղավորեց զբոսայգում, մյուսները քնեցին գերեզմանոցում. քաղաքի ծայրամասում:

Գաղթի շարասյունի վերջից եկող քեռի Հարությունը իր սայլով Իգդիր մտավ երեկոյան, շուրջ 30 որբ մնացած երկսեռ մանուկ երեխաներով և տեղավորվեց մեզնից քիչ հեռու կանաչ վայրում:

Ծղներին արձակեց արածելու, իր կնոջ Մարիամի և Զարուհու օգնությամբ երեխաներին սայլից իջեցրեցին, տեղավորեցին կանաչի վրա: Կերակրեցին Օրգովից վերցրած սննդամթերքի վերջին մնացորդով: Հոգնած երեխաները պառկեցին բացօթյա կանաչի վրա, անմիջապես քնեցին:

Առավոտ վաղ երեխաների խնամքը թողնելով կնոջը և Զարուհուն մեկնեց քաղաքամեջ:

Խոշոր վաճառականները, ունևոր իգդիրեցիները անտարբեր վերաբերվեցին քեռի Հարությունի խնդրանքներին, չօգնեցին որբ քաղցած երեխաներին:

Նա որոշեց դիմել Իգդիրի ալազ երեցին: 76-ամյա արծաթափայլ մորուքով բարեհոգի հոգևորականը լսելով քեռի Հարությունին, ողջունեց նրա հայրենասիրական մեծ ծառայությունը և կանչեց իր կառապանին:

Երբ կառապանը ֆայտոնը կանգնեցրեց, կանաչի վրա խաղացող երեխաները վազեցին դեպի ֆայտոնը:

Մերունի տերհայրը ինչպիսի՞ շերմությամբ հարազատությունը ընդունեց որբուկներին, ծնկի եկած գրկում, գուրգուրում, համբուրում, ուրախանում էր մահապուրծ հայ մանուկներով: Բայց երբ ոտքի ելավ և գրպանից հանելով ճերմակ թաշկինակը սրբեց արտասուքը, որբուկները հուզված շրջապատեցին, փաթաթվեցին ծերունուն:

Նրա զրույցը քեռի Հարությունի, Մարիամի և մորս հետ կարճ տևեց, այնուհետև ասաց.

— Սպասեցեք իմ վերադարձին, — ու նստեց կառքը:

Նա վերադարձավ քիչ ուշացումով: Իր հետ բերելով, սայլի վրա պղինձներով, դեռ տաք, մսով ճաշ և այլ ուտելիքներ, պառկելու համար խսիրներ, ծածկոցներ և մի խումբ բարեհոգի կանանց, երեխաներին սպասարկելու համար:

Տերհայրը իր կազմով մեկնել էր երեխաներին քնեցնելուց հետո: Մեկնելիս քեռի Հարությունին ասել էր.

— Հարթեն եղբայր, առավոտյան մենք շուտ կգանք, երեխաներին լավ կկերակրեք, քեզ կտամ ևս մի սայլ, նրանց շտապ կտանես էջմիածին, քանի անողոր համաճարակը չի հասել, այս անմեղ ծաղիկներին: Սրանք աստծո օրհնությամբ պիտի ապրեն, ծիլեր տան: Նրանք մեր ապագան են, մեր օրհնված, ազնիվ ազգը սրանցով պիտի գոյատևի:

Առավոտյան շնայած կիրակի էր ալազ երեցը ժամերգության շեր գնացել, եկել էր երեխաներին ճանապարհելու:

Ընթրիքի վերջում բարեհոգի կանայք երեխաներին նույնիսկ տաք կաթ տվեցին:

Տերհայրը ճանապարհեց մինչև քաղաքից դուրս: Բաժանվելիս շերմ գրկախառնվեցին:

— Աստծու օրհնանքը վրադ լինի Հարթեն եղբայր: Քեզ և քո բարի գործին հաջողութուն, կաղոթեմ՝ ձեզ համար, ասաց ավագ երեցր:

Ս. խաչը ձեռքին թաց աչքերով երկար նայում էր մանուկներով լեցուն սալլերին, օրհնում էր նրանց, անեծքի խոսքեր ասելով գազան թուրքին՝ մեր բարերար ազգի կործանողներին:

Ցավում էմ, ափսոսում, որ այդ սրբազան մարդու անունը չեմ հիշում, որը պատվարժան ղեկավարեց նաև մեր Ասքանազի թաղման ծիսակատարությունը:

Էջմիածնում Գևորգ V կաթողիկոսը ընդունել էր քեռի Հարությունին, ողջունել, շնորհակալություն հայտնել, օրհնել էր հայրենանվեր այդ մեծ ծառայության համար:

Քեռի Հարթենը բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի օգնությամբ բոլոր երեխաներին տեղավորել էր որբանոցներում:

Այն երեխաները, որոնք չէին հիշում ծնողների ազգանունները, ձևակերպեցին իրենց բարերարի՝ Հարությունյան ազգանունով: Իգդիրը, որտեղ հանգրվանեցինք մենք, պտղատու այգիներով շրջապատված, բնակչությամբ ոչ ծանրաբեռնված, արհեստանոցներով, առևտրական խանութներով, գյուղատնտեսական մթերքներով առատ, մեկ հարկանի տներով նահանգային կանաչ քաղաք էր: Տեսնելով գաղթականների խիստ մեծ պահանջները առևտրականներն ապրանքների գնելը մի քանի անգամ բարձրացրին:

Երկրորդ օրվա կեսօրին անսպասելիորեն հայրս գտավ մեզ: Նա վիրավորված էր զլխից՝ արյունոտ բնտով փաթաթված, ձախ ձեռքն էլ «աղլուխով» կապած՝ կախված էր վզից: Հայրս շատ տխուր և մռայլ դեմք ուներ: Մեզ գտնելով առանձնապես շուրթխացավ: Միայն թեթևակի շոյեց գլուխներս: Ողջունեց մորս և ծանր շնչելով, ասաց.

— Գաղթի ճանապարհը ծանր և ողբալի է եղել: Ինձ կներես՝ կրած տանջանքներիդ համար:

Մայրս տխրազեմ նայեց ամուսնուն: Գլխաշորի ծայրով սրբեց թաց աչքերը: Խոր ա՛խ քաշեց ու ասաց.

— Ի՞նչ արած, աստված այդպես է կամեցել: Դու ողջ լինես, մեր զլխից անպակաս մնաս:— Հայրիկի տխուր դեմքից վատ բան կասկածելով, հարցրեց. Վերքերը ծա՞նր են, շատ են

ցավում: Ինչ տեղեկություններ ունես ազատամարտերին մասնակցող եղբայրներիցդ, նրանց տղաներից՝ Ասքանազից, Մանուկից:

— Վերքերս ոչինչ, Մանուկը շուտով կլինի այստեղ: Որտե՞ղ են եղբայրներիս ընտանիքները:

— Հարցրու Գալուստին:

Քիչ հետո հայրս Գալուստի հետ բերեց հորեղբայրներիս ընտանիքների 52 անդամներից մնացած 7-ին: Ապա Գալուստի հետ վերցնելով Զարուհուն շտապ մեկնեցին: Երեկոյան երկուսով խիստ տխուր վերադարձան՝ առանց Զարուհու:

Հայրիկս և Մանուկը սալլով ծանր վիրավոր Ասքանազին բերել էին Իգդիրի հիվանդանոցը: Հիվանդանոցում չէին ընդունել, ասելով, թե տեղ չկա, գաղթականներին առավել ևս... Հայրս հինգ ոսկի էր տվել տարիքավոր բժշկին Ասքանազին բակում, սալլի մեջ՝ վիրահատելու համար: Վիրահատումից հետո բժիշկն ասել էր, թե հիվանդի վիճակն անհուսալի է: Արյուն շատ է կորցրել, վերքը ծանր է: Բացառիկ երևույթ է, որ երիտասարդը ծանր վիճակում դիմացավ վիրահատման: Աշխատեցեք ի՛նչ գնով էլ լինի, տեղավորել հիվանդանոցում:

Գալուստի գլխավորությամբ գաղթականության թափուրը ուղղվեց քաղաքազլխի տունը՝ խնդրելու Ասքանազին հիվանդանոցում տեղավորելու թույլտվություն, բայց պարսպապատված բակի մեծ դռան առջև կանգ առան:

Հայրս ոստիկանի ափի մեջ մի ոսկի դնելով Գալուստի հետ ներս մտավ: Բակում ընդառաջ եկող ավագ ոստիկանի ափը ևս մեկ ոսկի դնելով խնդրեցին քաղաքազլխին ղեկուցել իրենց գալու նպատակը և հիվանդի ով լինելու, նրա ծանր վիճակի մասին:

Քաղաքապետը դուրս եկավ պատշգամբ:

Բակ մտած գաղթականների թափուրը զլխարկները հանած մինչև ծնկները խոնարհվեցին:

Քաղաքապետը խիստ զայրացած բղավելով հրամայեց.

— Դուրս քը՛ն՛լ այս ողորմելի թշվառականներին: Մեր հոգում տեղ տվեցինք բավական չէ, հիմա էլ հիվանդանոցում են տեղ ուզում, վաղն էլ մեր տները կմտնեն:

Օդում լսվեցին պահակախմբի կրակոցները: Մարակների, մահակների հարվածներ իջան թշվառ գաղթականների զլխին, 18. Ասլանյան Ա.

մէջքին: Գալուստը զայրացած ամուր բաղուկներով օղում բռնեց իրենց հարվածող ոստիկանի մահակը: Երկրորդ ոստիկանը կողքից ուժգին մահակի հարված իջեցրեց նրա գլխին: Այդ պատվարժան մարդու արնաշաղախ գեմքը տեսնելով, զայրացած փեսանդաշտցիներն անցան հարձակման՝ իրենց ուղածի շափ լավ ծծեցին հաստավիղ ոստիկաններին, հեռացան:

Գալուստին տուն բերեցին ծանր վիճակում. ընկավ անկողին:

Փեսանդաշտցիների թափոն ուղղվեց դեպի հիվանդանոց: Հիվանդանոցի տնօրենը լսելով քաղաքապետի տանը կատարված դեպքի մասին, անմիջապես Ասքանազին ընդունեց հիվանդանոց: Որպես շնորհակալութուն հայրս տնօրենի ափք դրեց երեք տաճկական ոսկի և խնդրեց լավ նայել, փրկել քաջի կյանքը և Զարուհուն էլ թողնել, որ եղբորը խնամի:

— Քաջի համար ամեն ինչ կանե՛ք,— այս անգամ կիրթ ու քաղաքավարի պատասխանեց հիվանդնոցի տնօրենը:

Վիրահատող բժիշկը Ասքանազին ուրախությամբ տարավ իր բաժանմունքը:

Հաջորդ օրը, հայրիկիս խնդրանքով, նա եկավ, նայեց Գալուստին: Մեկնելիս հայրիկիս առանձին ասաց.

— Ես ցավում եմ, որ այս մեծ հայրենասերի վիճակն անհուսալի է:

Հինգերորդ օրվա առավոտյան հայրս և Մանուկը տխուր ու գլխիկոր սայլի վրա բերեցին Ասքանազի աճյունը: Զարուհին, զլիսավերելով ծնկի եկած, ողբում էր:

Մայրս, որ ողջ գիշերն անց էր կացրել վիրավոր Գալուստի կողքին, Ասքանազի մահվան մասին իմանալով խելագարի պես նետվեց դեպի սայլը: Ողջ փեսանդաշտցիները շրջապատեցին սայլը և սրտացավ ողբում էին իրենց 22-ամյա ազգային հերոսի մահվան աճյունի առջև:

Հաջորդ օրը Իգգիբի գերեզմանոցում, փշատի ծառի տակ հանդիսավոր կարգով հողին հանձնվեց Ասքանազի աճյունը: Քաջ հրամանատարի թաղմանը մասնակցեցին Իգգիբում գտնվող գաղթականները, մի խումբ բուժաշխատողներ բուժող բժշկի զլիսավորությամբ: Քաղաքային այգուց դեպի գերեզմանոց ձգվող գաղթականների մեծ թափորը իգգիբցիներին զգացնել էր ավել հանգուցյալ երիտասարդի ով լինելը: Գաղթականների հայրենասիրութունն ու միասնութունը: Զայրույթի շատ

խոսքեր ասվեցին դաժան քաղաքագլխի հասցեին... Գերեզմանի վրա սգո խոսք ասացին հրամանատարի մարտական ընկերները, որոնք մեծ զայրույթով խոսեցին հայերի ցեղասպանության մասին: Զերմ խոսքերով մեծարեցին իրենց խիզախ հրամանատարին:

Մանուկն ասաց.

— Վանի արվարձաններից մինչև Բերկրի, Աղարայի հովիտը ծանր մարտեր վարեցինք փախստական գաղթականները շարասյունների վրա՝ գաղանային շարությամբ հարձակվող Ալի էհսան փաշայի մեծաթիվ զորամասերի դեմ, պաշտպանելով մեր թշվառ ժողովրդի անվտանգ գաղթը: Շատ էլ կորուստներ տվեցինք: Վերջին մարտում արյան գնով կասեցրինք նեղ թըշնամու առաջխաղացումը: Գա մեր հերոս հրամանատարի վերջին սխրագործութունն էր, որը կատարեց իր կյանքի գնով: Բոլորս խոր կսկիծով ցավում ենք մեր դուցեղնի վաղաժամ մահվան առթիվ: Նա ընկավ հերոսի մահով, իր ուժերի ծաղկման շրջանում: Նրա անունն ու գործը կմնան մեր պայծառ սերունդների սրտերում:

Իգգիբի տերհայրն իր սարկավազներով գերեզմանը օրհնելու ծիսակատարութունն անցկացրեց ազդեցիկ տավորությամբ: Հայրս գոհունակութուն հայտնելով նրանց, լավ վարձատրեց: Մխացող խնկի հոտը բռնել էր ողջ գերեզմանը: Տերհայրը մեկնելիս հորս ասել էր.— Այսպիսի մեծ շուքով ու հարգանքով հանգուցյալ ես առաջին անգամն եմ հողին հանձնում: Ասքանազի գերեզմանից հեռացանք խոր վշտի մեջ: Գերեզմանից քիչ հեռու, ծառի տակ կուշ եկած, որբացած 19-ամյա Գոհարը, մեղնից հետո խելագարվածի պես իրեն նետել էր սիրած երիտասարդի գերեզմանին: Նա համազրուղացի քաջին սիրահարվել էր Բարազողիկի ռազմաճակատի ծանր մարտում՝ Ասքանազի վերքը կապելիս:

Հաջորդ օրը, Ասքանազի գերեզմանին հող հանդստի գնալիս նրան տեսանք գերեզմանի վրա ընկած՝ ուշադնաց. ողբալով, մենակ անց էր կացրել ողջ գիշերը: Զարուհին այդպես էլ կարծում էր և ճշալով նետվեց դեպի ընկերուհին: Նա գիտեր իր մանկության ընկերուհու սիրո մասին: Ուստանում եղած ծամանակ մի առիթով ասել էր Ասքանազին և եղբորից ստացել սիրալիր պատասխան. «Ես այդ զգացել եմ դեռ Բարազողիկի»

ուսումնականում: Այդ իսկ պատճառով հատուկ հարգանք եմ ցուցաբերում արժանավայել աղջկան: Իրո՞ք, որ հրաշալի հարսնացու է, սակայն դեռ դրա ժամանակը չէ»:

— Մայրիկ ջան, խնդրում եմ, աղաչում եմ, օգնեցեք, սա՛ մեր Գոհարն է, ուշքի բերեք, սա՛ Ասքանազի հարսնացուն էր: Գծբխտացած Գոհարին դժվարությամբ ուշքի բերեցին: Նա մի կերպ իրեն հավաքեց: Նայեց իր շուրջը հավաքված բարի մարդկանց, ճանաչեց ծնողներին, իրեն նետեց Զարուհու գիրկը: Ելելով ընկերուհու գլուխը, Զարուհին ասաց.

— Քույրի՛կս, աստված շնորհակալ, որ երկու ընկերուհիներով բախտավորվեմք, երջանիկ կյանք վայելենք: Մեզ պատճեց ծաղիկ հասակում...

Գոհարը կրկին իրեն վատ զգաց: Նրան տարան ծառի տակ, կանաչ առվակի ափին, երեսին սառը ջուր ցայեցին:

Մազիկների մի հսկա բլուր էր գոյացել Ասքանազի գերեզմանի վրա:

Հայրս իր գումարներով տեղի վարպետների միջոցով մի գեղեցիկ տապանաբար պատրաստել տվեց. վրան փորագրված խաչը և քաջի անունը:

Փեսանդաշտի ազատամարտի հրամանատար Ասքանազ Ասլանի Գրիգորյան 1893—1915 թթ.

Վարպետներին ճանապարհ դնելիս, հիշում եմ, հայրս շնորհակալություն հայտնեց և ասաց.

— Հայոց այս կանաչ քաղաքում, մեր ազգային հերոսի գերեզմանը թող հավերժ փայլի սուրբ Արարատի ճերմակ գազազաթի հովանու տակ: Մենք դեռ այցի կգանք... Իսկ վարպետներն հարգալից պատասխանեցին.

Տերն ընդ ձեզ հետ, մենք հարգեցինք վասպուրականցիներին, որ այս մղձավանջային ծանր օրերին անգամ մեր ազգի արժանապատվությունը բարձր են պահում: Ասքանազին հողի՛ հանձնելուց հետո մեր օրը ծանր էր անցնում՝ մեծամասամբ գերեզմանոցում: Աստիճանաբար վատանում էր Գալուստի առողջական վիճակը:

Մի օր առավոտյան հայրս ծանոթ բժշկին բերեց: Գալուստ-

տին նայեց, երկու քաջերի վերքերը մաքրեց ու կապեց: Բժիշկը հորս հետ զրուցելիս, բարեկամաբար ասել էր. «Միրտս ձեզ համար շատ է ցավում: Պնդակազմ հալիվորի վիճակն աստիճանաբար վատանում է: Ինչպես երևում է, Ասքանազի մահը նույնպես ազդել է նրա վրա: Զգույշ եղեք, գաղթականների մեջ երևացել են համաճարակային հիվանդություններ՝ տիֆ, խոլերա: Լավ կլինի Իգդիրից մեկնեք»:

Հաջորդ օրը կեսօրին հայրս ասաց.

— Պատրաստվեցեք, վաղն առավոտյան մեկնելու ենք էջմիածին:

Որբացած Գոհարին հայրս առնչին իսկ օրից միացրել էր մեր ընտանիքին: Զարուհու հետ նա ամեն առավոտ ծաղիկներով գնում էր Ասքանազի գերեզմանը: Էջմիածին մեկնելը նրա սրտովը չէր: Ուստի արտասովելով ասաց.

— Հայրիկ, ձեր ընտանիքում ես հարազատություն տեսա: Մական ներող եղեք, ես Իգդիրից ոչ մի տեղ չեմ գնա, ու տրևարդեմ գլուխը խոնարհեց, արտասովեց:

— Գու գիտես, որդի՛ս: Թող քո ցանկությունը լինի,— հասկանալով աղջկան ասաց հայրս,— մի՛ լացիր աղջիկս, մեզ էլ սա է բաժին ընկել...

Մեր տոհմի հերոսի կորուստի ցավերը զսպելով առավոտյան հովին գաղթեցինք դեպի Էջմիածին:

Զարուհին և Գոհարն իրար փաթաթված լալիս էին: Նրանց ծանր բաժանումն ազգեց ծնողներին վրա: Հայրս գրկեց Գոհարի գլուխն ու ամուր սեղմեց կրծքին, ճակատը համբուրելով նրան տվեց հինգ ոսկի և ասաց.

— Մենակությունը քեզ համար ծանր կլինի: Քեզ լավ նույ՛ր, ինչ որ անելու ես, մտածված արա: Մենք Ասքանազի գերեզմանին և քեզ այցի կգանք:

Մեզ հետ դեպի Էջմիածին շարժվեցին մնացած փեսանդաշտցիները:

Ոստանում մնացած վերջին գիշերը հայրս ձին հեծած մեկնել էր գյուղ, ուղիղ կալերը: Հանել էր կալում կճուճով հորած ոսկիները, լցրել մեծ արխալուղի մեջ, կապել մեջքին ու ետ եկել: Նա իր այս արարքը ծածուկ էր պահել Ասքանազից և Մանուկից: Այդ ոսկիներն էր, որ հայրս առատորեն ծախսում էր: Մեծ ընտանիքը, հսկայական ունեցվածքը կորցնելուց հե-

տո այդ ոսկիները որպէս փրկութեան հուշ նա համարում էր անիմաստ և իրեն շէր ուրախացնում: Ըանապարհին առանձնացած, խոր հոգսերի մեջ, մտամոլոր քայլում էր ինքն իր հետ խոսելով. «Մեր ժողովրդի վաղվա լավ օրվա համար ի՞նչ ծանր մարտեր մղեցինք բարբարոսների դեմ: Ինչպիսի՞ հրաշալի քաջեր կորցրինք ծանր ու անհավասար կռիվներում: Իսկ այսօր օտարութեան, թշվառութեան ծով վշտերի մեջ կորչում ենք: Ո՛վ է մեզ վրա նայելու... Հե՛յ գիդի, ուս եղբայրներ, ինչո՞ւ հետ գնացինք, մեզ գելի բերանը թողեցիք»: Այս մտորումների մեջ էր, երբ լսեց Գալուստի ղողոջուն ձայնը.

— Ներսես, այս ի՞նչ է, Մարգարայի մեծ կամո՞ւրջն է, Մայր Արաքսն ե՞նք անցնում:

— Այո՛, եղբայրս, Բինգյոլից եկող հայոց Մայր Արաքսն ենք անցնում:

— Խնդրում եմ սայլը կանգնեցրեք, հայոց Մայր Արաքսը տեսնեմ, հետո մեռնեմ, — ասաց հիվանդը:

Մանուկը, որ գնում էր սայլի առջևից, անմիջապէս կանգնեցրեց՝ օգնելով Գալուստին նստել: Մանր հիվանդը նայեց լայն գետով հոսող հանգիստ ջրերին, մեծ կամրջին, ապա՝ նորից Արաք. ին: Աչքերը թրջելով դանդաղ պառկեց ու ասաց.

— Ի՛նչ հրաշալի է մեր Մայր Արաքսը: Հայոց Նահապետը: Արաքսն անցնելով, գետափնյա Մարգարա գլուղում գաղթականութեան թափորը կանգ առաւ՝ հանգստի:

Հայրս մեզ տեղավորեց Արաքսի ափին մի հարմարավետ տան բակում. տանտերն իր ողջ ընտանիքով մեզ ընդունեց սիրալիք, սրտաբաց: Բարեհոգի գլուղացի էր միջակից ցածր տնտեսութեամբ: Ամուսիններ էին, ունեին ինը առույգ ու ժիր երեխա:

Առաջին իսկ հայացքից աչքի վարնեց ընտանիքի մաքրապիտութիւնը:

Ընտանիքի հայրը մոտ հիսուն տարեկան էր, հայկական արծվաքթով, ամուր բազուկներով: Նա ուսական բանակի շարքերում մասնակցել էր Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Բիթլիսի ուղղութեամբ մղած մարտերում ոտքից ծանր վիրավորվել էր և ժամանակից շուտ, դեռ չապաքինված, դուրս գրվել Ալեքսանդրապոլի հոսպիտալից՝ հոսպիտալը ծանրաբեռնված լինելու պատճառով: Ականատես էր եղել ցեղասպանութեան ողբալի տեսարաններին: Խիստ զայրույթով էր խոսում

վայրազ թուրքերի արարքների մասին: Գեռես քայլում էր հեռափայտի օգնութեամբ, նրան բուժում էր գլուղի հեքիմը: Գալուստին անմիջապէս տեղափոխեցին ննջարան: Բակում օջախ վառեցին, մեծ պղինձով ջուր տաքացրին, երեսաներիս լողացրեցին, քնեցրին: Տանտեր Վասակը և նրա բարի կին Վեհանուշն ասացին, որ մի քանի օր մնանք, հանգստանանք հետո կշարունակենք ճանապարհը:

Բարի երեսաների հետ մենք մտերմացանք. բակում ուրախ խաղում էինք:

Գալուստը երկար էր երազել տեսնել Արարատը, Մայր Արաքսը: Մանուկն ընդառաջեց նրա խնդրանքին և միասին դուրս եկան Արաքսի ափը: Նստեցին խոնարհված ուռնու տակ: Գալուստը խորը շունչ քաշելով ասել էր. «Ա՛խ, աստված, իմ, ես որքան երջանիկ եմ, որ մահիցս առաջ տեսա վեհասքանչ սուրբ Արարատը, Մայր Արաքսը»: Գեքիմը խաշակեցելով նայել էր Արարատի շողշողուն հավերժ ձյունապատ գագաթին, Արագածին: Հիշել էր Վանա լիճը, Աղթամարը, Սիփանը, Վարազը, Սասնա զմրուխտ սարերը, Տիգրիսը, Ծփրատը: Բացականշել էր. «Ի՛նչ հիասքանչ երկիր ունենք, սրանք են մեզ շունչ տվողը, մեզ ուժ տվողը: Հայ ժողովրդին հազարամյակներ հավերժացնողը: Սուրբ էջմիածինն էլ տեսնեմ, շեմին չոքեմ ու մեռնեմ»:

Գիշերը Գալուստը վատացավ: Երկրորդ գիշերն ավելի ծանրացավ: Գլուղում բժիշկ չկար: Կանչեցին հեքիմ Արծվիկին: Նա հիվանդի դեմքին նայելով, հասկացավ, որ վիճակը շատ ծանօ է, նույնիսկ մահացու: Իր աղջկա օգնութեամբ Գալուստի եհորս վերքերը մաքրեց: Մաղիկներից պատրաստված փոշի ցանեց վերքերին, կապեց՝ Գալուստը մի թեթև իրեն լավ դղաց: Մեկնելիս հայրս ուղեց պատվարժան հեքիմին վարձատրել: Նա նայեց հայրիկիս և շատ համեստ պատասխանեց.

— Որդի՛ս, մենք պարտավոր ենք հարազատ մնալ մեր նախնիներին: Այս նեղ օրերին օգնել ձեզ՝ ինչով կարող ենք: Իմ տանն էլ երկու ընտանիք կա Շիրզան գլուղից: Ես ուրախ եմ, որ հարչուրն անց տարիքումս էլ կարող եմ ծառայել իմ ժողովրդին, դրանից էլ մեծ բավականություն եմ ստանում: Սարի պես ութ թռռներս ռազմադաշտում են:

Հայրս գլուխը խոնարհեց հայրենասեր կնոջ առջև, համբուրեց նրա աչքն ու ասաց.

— Ենորհակալութունն Ի սրտե ցանկանում եմ քաջառողջութունն, մեծ մայր, Երկար կյանք, ձեզ պեսները մեր գլխից թող անպակաս լինեն: Ի սրտե ցանկանում եմ քաջ թոռներիդ բարի վերադարձ:

— Ենորհակալ եմ, որդի՛ս, աստված թող ձեզ պահպան լինի:

Հայրս հեթիմ տատիկի թեր մտած գուրս եկավ. շեմի վրա նա հայրիկիս ականջին շնչաց.

— Որդի՛ս, սրտանց ցավում եմ, բայց պատվարժան մարդը մի քանի օրից կմահանա:

Երրորդ գիշերը Գալուստի առողջական վիճակը սաստկացավ:

Աքլորականչին նա աչքերը բաց մահացավ: Նրան հողին հանձնեցինք Արաքսի ափին, իր վերջին երազանքի՝ ուռենու ծառի տակ: Գալուստի թաղմանը մասնակցեցին ողջ գաղթականները և գյուղացիները մի մասը՝ գյուղապետի գլխավորությամբ:

Գերեզմանի վրա վշտահար խոսեց հայրս:

— Մեր պատվարժան գյուղապետն իր ինը եղբայրներով, տղաներով նվիրված էր հայրենիքի և ժողովրդի ազատագրմանը: Նա շուրջ 25 տարի սուլթանական թուրքիայի դաժան կարգերի պայմաններում ղեկավարեց դյուղը, այն փրկելով բազմաթիվ, բազմատեսակ փորձանքներից: Նա թիկունք էր կանգնում թուրքերի ձեռքով որբացածներին: Եռանդով մասնակցել էր 1895—96, 1915 թթ. Փեսանդաշտի պաշտպանության ծանր ու անհավասար մարտերին: Նա գլխավորեց իր ժողովրդի գաղթը մինչև Մարգարա գյուղը: Սակայն, ցավալի է, որ ընկավ Իգդիրի հայ ոստիկանի ձեռքով՝ մահակի հարվածից:

Եղբայր իմ, հանգստություն շիրմիդ, անշափ շնորհակալ ենք հայրենանվեր ծառայություններիդ համար: Փա՛ռք ու պատիվ քեզ:

Արցունքը խեղդում էր հորս կոկորդը ու նա շկարողացավ շարունակել իր խոսքը...

Խոսեցին մարտական ընկերները, վերջում՝ Մարգարայի գյուղապետը: Երեկոյան գյուղապետն իր տան ընդարձակ բակում հոգեհաց տվեց՝ ի պատիվ պատվարժան գյուղապետ Գալուստի: Հաջորդ օրը՝ հոգեհանգստից վերադառնալով տուն, գրուցելով Վասակի և Վեհանուշի հետ, մայրս սրտացավ ասաց.

— Այսբան տարվա ամուսիններ ենք, առաջին անգամ տեսա ներսեսիս աչքերին արտասուք:

Մայրս հարս էր եկել Հայոց ձորի Պլթենց գյուղից: Նրա հայր Արզարը իմ Ասլան պապի մտերիմ բարեկամն է եղել, որին թուրքերը կողոպտելու նպատակով սպանել էին՝ Ոստան քաղաքում՝ առևտուր անելիս: Տանը որբացած մնացել էին 6 տղա և երկու աղջիկ: Պապս այդ ընտանիքի խնամքը վերցրել էր իր վրա և Համասփյուռին ընտրել էր Ներսես տղայի համար հարսնացու: Ամուսնություն երկրորդ տարում մայրս ծննդաբերել էր մեկ աղջիկ, որից հետո 10 տարի երեխա չէր ունեցել: Հետո ունեցել էր հորս նման շեկլիկ 3 տղա, որոնք ծնողներիս, յոթ հորեղբայրներիս բազմանգամ ընտանիքների հետ դարձան եղեռնի զոհ:

Ոտքով անցանք տառապանքներով, զոհերով լի բռնագաղթի 280 կմ արյունոտ ճանապարհը: Մարգարայից էջմիածին հասանք մայրամուտից քիչ առաջ: Ծանապարհին հանդիպեցինք էջմիածնում տեղավորված մի խումբ գաղթական մարդկանց: Նրանք պատմեցին, որ էջմիածնում թափառող գաղթականների մասին մտածող չկա: Նրանք էջմիածնում և Երևանում շատ շատ են: Տեղավորվել են՝ ով ինչպես կարող է: Էջմիածնի Գայանե, Շողակաթ, Հովհաննիս վանքերում, վեհարանի բակերն ու շրջապատը բացօթյա հողի վրա պառկած այնքան շատ են լցված, որ ասեղ գցելու տեղ չկա: Աշխատանք դժվար է գտնել, ապրելու պայմանները վատ են. շոգ է, հիվանդությունները շատ: Թծիշկներ չկան: Վերջում մեզ խորհուրդ տվեցին՝ տեղավորվել վանքի անտառում: Այնտեղ ավելի ազատ է և հարմարավետ:

Փեսանդաշտցիներս մի կերպ տեղավորվեցինք անտառում, որ հիմնադրել էր Ներսես Կաթողիկոսը և կոչվում է նրա անվամբ: Գեղեցիկ զրոսավայր էր՝ խաչաձև ծառուղիներով խնամքով մշակված ծաղիկներ, պտղատու և ոչ պտղատու բազմատեսակ ծառերով...

Խիստ դժվարացել էր սննդամթերքի հայթայթումը, մուկցնում էր համաճարակը և մանգաղի պես հնձում գաղթականներին: Հիվանդացան մանկիկ եղբայրներս և շղիմանալով համաճարակին, մահացան: Ովքեր հիվանդներ չունեին, մեծ մասամբ պատրաստվեցին փախչել այդ կոշմարային դժոխքից գեպի Ալազղալ, Լոռի, Սևան: Մեկնեց նաև Մանուկն իր կնոջ և Գյու-

լիզարի հետ: Սրտացավ բաժանվելով մեղանից, մեկնեց Սևանի կողմերը: Հայրս գրկեց Մանուկին, սեղմեց իր կրծքին և համբուրեց՝ ձեռքը դնելով մի քանի տաճկահայն ոսկի, բարիք մաղթեց: Եղբայրներիցս վարակված մեկ շաբաթվա ընթացքում համաճարակի զոհ դարձավ նաև կմախքացած Զարուհին: Չտանկելով այդ ծանր կորուստները, մահացավ նաև հյուժված անուշիկ մայրս: Հիշում եմ էջմիածնում տեղավորված Վանից, Բիթլիսից, Հայոց ձորից, Ծատախից, Գավաշից, Ալաշկերտից, Փեսանդաշտից և այլ նահանգներից փախած արևմտահայ թշվառական գաղթականների հոծ զանգվածը ինչպիսի ողբերգական կեցության մեջ էր ծվարվում այդ փոքրիկ անտառում: Այդ ցավն ու վիշտը ինչպե՞ս պատմեմ:

Ուժասպառ, անօթևան, կյանքի հունից դուրս եկած ծայրահեղ աղքատության մեջ: Ուղղակի մեռելային կյանք էր: Սովը, համաճարակ հիվանդությունները մանգաղի պես հնձում էին, մեծամասամբ երեխաներին:

Ամեն առավոտ սայլեր էին գալիս անտառ, մահացածներին հավաքում, փայտի պես դնում սայլի մեջ մինչև վերև պարանով կապում, որ շնչկենն: Մարմնովս սարսուռ է անցնում:

Մեռելները տանում, անտառի վերջում 200—300 մետր երկարությամբ փորած մեռելափոսերի մեջ դնում, հողով ծածկում: էին: Ու այդպես շարունակ յուրաքանչյուր օր, անանուն կյանքից հեռանում էին բարբարոս թուրքի զոհերը: Տեսել եմ, հարյուրավոր կմախքացած խելակորույս մայրեր շուկերի մեջ փաթաթված, իրենց հիվանդ զավակների կողքին նստած պալքարում էին համաճարակ հիվանդությունների դեմ, սովի մալարիայի, ոջիլի դեմ, որպեսզի փրկեն երեխաների կյանքը...

Տեսել եմ, թե ինչպես հուսահատված մայրերը՝ ծունկի եկած, հայացքները վեր հռած, աղերսում էին.

— Տեր ամենակարող արարիչ, մեր ո՞ր մեղքի համար ես այդպես դաժան պատժում մեզ... Աղերսում էր նաև Համիկը, Ոստան քաղաքում այրվող հայ երեխաներին աղատագրելիս քաջի մահով ընկած հռեղի Գավիթի կինը, իր ողջ ջանքերը գործադրում էր, որ զոհն վերջին, յոթերորդ զավակի կյանքը փրկի, քաջի ժառանգը պահպանվի: Այդ էլ ապարդյուն անցավ: Նա ընդիմանալով աստծուն ասում էր.

— Էլ ինչու ապրեմ, շեմ հավատում ձեր ամենակարող ուժին ու փառքին, ձեր խղճին ու արդարությունը: Չինարի բոյով, ամ-

բակազմ կինը կուշ էր եկել, կմախքացած սպասում էր իր մահին: Իսկ նրանից քիչ այն կողմ, շոր հողի վրա, երեք մանկիկ երեխա, նստած, փայտացած, մահացած մոր կողքին դառնազին ողբում էին:

Ներսես հայրս միջինից բարձր, պինդ մեջքով ու բազուկներով լեռնցի էր: Հիսունն անց էր, սակայն կայտառ, երիտասարդի եռանդով: Իր բախտակիցների պես ֆիզիկապես հյուժվել էր: Նա շատ ծանր էր տանում հայրենի երկրի, նահապետական իր մեծ ընտանիքի կործանումը, նրան հասած վերջին մահաբեր հարվածը մորս մահն էր: Այդ հարվածից հետո ինձ գրկի մեջ առնելով, հաճախ կրկնում էր.

— Որդիս, թշվառության մեջ մորդ մահով մենք որբացանք... Տղամարդն առանց կնոջ անտեր է... Քո մայրը իմ ընտանիքի հիմքն էր, հարստությունը, իմ ուրախությունը, իմ տխրությունը: Նրան աստված էր պարգևել ինձ, իմ ստեղծած այդ ունևոր տնտեսություն, իմ ձեռք բերած պատվի ու հարգանքի համար, իմ լավ զավակների համար, ես նրան շատ եմ պարտական... Մորդ մահից հետո ինձ ապրել պետք չէ: Ես միայն ու միայն քեզ համար եմ ապրում, քո շնչով եմ ապրում... Մի օր էլ խոշոր շինարի ծառի տակ քնելիս նա ասաց.

— Որդիս, մեր նահապետական Գրիգորյանների մեծ ընտանիքից դու պիտի ապրես: Պատերազմից հետո, նոր կյանքը կտեսնես, մարդ կբառնաս և ժողովրդիդ ու հայրենիքիդ կծառայես ազնվաբար, նվիրված: Բայց երբեք չմոռանաս Հայոց եղեռնի խոր վերքերը, հայ ազգի ողբը, տառապանքները և կայցեղես մորդ շիրիմին: Ավաղ չգտա անուշիկ մորս գերեզմանատեղը, որ այցի գնամ: Նրա շիրիմին մո՞մ վառեմ, որ հոգին լուսավորվի բուրավիտ ծաղիկներ դնեմ, որ բուրմունքից նա աօթնանար մայրական սիրով...

Գիշերում էինք բացօթյա, շուկերի մեջ, պարզապես հողի վրա: Քնելուց առաջ շարունակվում էր խրատական զրույցները. «Որդիս,— ասում էր,— միշտ հարգիր մարդկանց ըստ արժանիքների: Դեպի մարդը եղիր բարյացակամ, ապագադ որոշիր ուսումով և աշխատանքով, ինչ անելու ես՝ մտածված արա, աշխատիր լավ ընկերներ ունենալ և նրանց վստահիր: Մի երեկո էլ շապաբինված ծանր վերքերի ցավից հուսահատված, դիմեց համազուլուցի Արշավիրին:— Արշո ջան,— ասաց,— իմ մահից հետո, խնդրում եմ, իմ մինուճար տղային տեր լինեք

մինչև ոտքի կանգնի, մարդ դառնա. թուրքերի ձեռքով կործանված իմ գերդաստանի հիսունութ շնչից գոնե մեկը ապրի:

Մի օր էլ առավոտյան, արթնացա հայրս ինձ գրկած մահացել էր: Վախեցած ցնցվեցի ու լաց եղա: Մորիցս որբացած, հորիցս էլ որբացա... Արշավիրն ու նրա կինը ազատեցին ինձ, հորս փայտացած ձեռքերից:

Էջմիածնում մի կերպ ծվարած հայ գաղթականների ողբալի վիճակի մասին Քրիստիանոս հրատարակվող «Մշակ» թերթը 1915 թվականի սեպտեմբերին տպագրել էր տառապանքների ականատես թղթակից Բ. Իշխանյանի այս հաղորդումը. «... Տեսն՝ էր, — ասացեք խնդրեմ, — օրերով, շաբաթներով Արարատյան դաշտի ամառային կիզիչ ճառագայթների տակ քարերի, սև հողի վրա պառկած հազարավոր ընտանիքներ խաշվելիս ու տանջվելիս... Մարդը ամիսներով պառկած ցնցոտիների մեջ, առանց լվացվելու և փոխնորդի, գիշեր ու ցերեկ մեխված միևնույն քարի կամ հողակտորի վրա, եղունգներով քերելիս լինի իր կաշին և անողոր մաքառի միջատների դեմ: Փշուրմը չոր հացի, պուտրմ ջրի կարոտով... Եթե չեք տեսել, համեցեք էջմիածին...»: Չեք կարող երևակայել, ասում էին նրանք, թե ինչ տեսարաններ մենք տեսանք երկու-երեք շաբաթ առաջ, մարդ կարող էր գտնվել այդ բոլորից, դա մի շտեմնված, չնկարագրված տեսարան էր:

Ողբացող դժբախտ հայ կինը, թեև շունենալու պատճառով, հանում էր գլխի մազերը և գրանով կարում մահացած որդու և հարազատ ամուսնու պատանները...

... Այդ տեսարանը ցնցեց մեզ, և չկարողացանք մոտենալ նրան:

Թիշկ Զ. Օհանջանյանի և Հովհաննես Թումանյանի տվյալներով, էջմիածնում և նրա շրջակա գյուղերում տեղավորված են ավելի քան փոխած 60 հազար հայ գաղթականներ, որոնցից 32 հազարը՝ էջմիածնում: Սովը, համաճարակ հիվանդությունները, մահվան անողոր մանգաղն անխնա հնձում էր նրանց: Օգոստոսի 24-ին՝ 234 մահվան դեպք, օգոստոսի 25-ին՝ 280, 26-ին՝ 300, 27-ին՝ 348, 28-ին՝ 294: Հուլիսի 28-ից օգոստոսի 28-ը, այդ 32 օրվա ընթացքում, համաճարակը տարել էր ոչ պակաս 4597 գաղթականների, որոնց մեծ մասը երեխաներ

էին*: Այդպես մեռնում կորչում էին տասնյակ հաշարավոր հայ գաղթականներ: Ուր փշուրմը հաց, բաժակմը ջուր մի կյանք էր:

Նահապետական մեր մեծ թախումից էջմիածին էին հասել 12-ը, որոնցից մահվան մահազարը ողբերգական օրերին հնձեց տարավ 10-ին, ես և Գյուլիզարը ապրեցինք, նոր օջախ ստեղծեցինք: Գյուլիզարը Իջևանի շրջանի Բերքաբեր (Ջուղաղ) գյուղում բազմազավակ մայր է մեծաթիվ թուներով ու ծոռներով, զավակները Իջևանում հանրածանոթ Մուրադյաններն են, բժիշկ, տնտեսագետ, ինժեներ, մանկավարժ (Մանուկ, Ռաֆայել, Սամվել, Ալմաստ, Սանասար, Մանվել և ուրիշներ):

ՀԱՅ ԵՐԵՍԱՆԵՐԻ ՏՆՈՒՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Միանգամայն ճիշտ էր ասված. «1915—1920 թթ. Հայաստանը գաղթականների և որբերի երկիր էր, որոնք էլ հանդիսանում էին եղեռնից փրկված կենդանի վկաները և Երևանի, էջմիածնի, Ալեքսպոլի, Աշտարակի, Ղամարուփի, Ղարաբլիխայի, Ջալալօղլու, Գիլիջանի, Իջևանի, Բայազետի բնակչության 40—60 տոկոսն էին կազմում»:

Էջմիածնի վանքապատկան շենքերը, այդ թվում նաև ճեմարանը, վեհարանը վերածվեցին որբանոցների ներգաղթի կամ խոտի նախագահ Հովհաննես Թումանյանի ղեկավարությամբ Անտեր, անօթևան, անհեր, անմեր մնացած, կմախքացած հայ մանուկների որբահավաք էր էջմիածնում, Երևանում և ողջ Հայաստանում:

Թշվառության ու տառապանքի այդ ծանր օրերին հայ բարեգործական ընկերությունների կազմակերպած որբանոցները անհայր ու անմայր թափառական հարյուր հազարավոր հայ մանուկների միակ ապաստարանը դարձավ:

Որբանոցը որբերին մահից փրկելու առաջին շտապ օգնությունն էր: Սկզբում ցնցոտիների, կեղտի ու ոջիլի մեջ, շաքրով պառկում էինք կողք կողքի, մեջք մեջքի, չոր հատակին: Կերակրվում էինք ըստ հնարավորությունների. ալյումինի ամաններով, տաք ջուր կամ շորվաչով մի կտոր քարից էլ ամուր բրրնձից հաց, այն էլ օրական մեկ անգամ: Ողջ Հայաստանում, բռնկված ահավոր սովը, միացած համաճարակ հիվանդություն-

* Տես՝ «Մշակ», 1919 թ., էջ 202—203:

ները հնձում էին անմեղ, անօգնական ժողովրդին: Այդ հավերժական անմոռաց արհամիիրքը մեր զլխին բերեցին վայրագ թուրքերը:

Որբանոցում, անասելի վշտերի մեջ, տխրամած մի կերպ գոյատևում էինք խեղճացած, կմախքացած, կծկված, կյանքից հուսահատ: Հաճախ առավոտյան քնից արթնանալով տեսնում էիր երեկվա զրուցակից ընկերդ գիշերը սովից մահացել, փայտացած պառկած է կողքիդ: Մխիթարվում էինք միայն լուռու-մունջ լացով:

Հայ բարեգործական ընկերությունը աստիճանաբար բարե-լավեց մեր վիճակը: Պայքար կազմակերպեցին մանուկներիս հնձող համաճարակ հիվանդությունների, մալարիայի, քոսի, ոչխլի դեմ: Մեղ լողացրին և բիազից միատեսակ հագուստ հագ-րեցին:

Պառկում էինք խոտե ներքնակների վրա: Կերակրվում էինք օրը երկու անգամ: Երևացին շորացած հաց, ճաշի մեջ լոբի, սիսեռ, երբեմն էլ՝ բրինձ:

Մի թեթև աշխուժացանք. վազվզում, խաղում էինք:

Հիշում եմ, թե ինչպես մեզ մոտ էին գալիս էջմիածնի բնա-կիչները, վանքի հոգևորականները: Հետաքրքրվում մեզանով, մեր ծնողներով, ողբում էին հայ ցեղասպանությունից որբա-ցած մանուկներիս ծանր վիճակի համար, օգնում էին՝ ինչով կարողանում էին: Այդ բարեհոգի մարդիկ գուրգուրում էին մեզ, սիրալիք վերաբերմունքով ապրելու հույս ու հավատ էին ներ-շնչում, սրտացավ բաժանվում մեզանից: Հատկապես բա-րեհոգի հայ կանանց եմ հիշում, որ այցի էին գալիս սև զգեստ-ներով: Մեղ շոյող նրանց քնքուշ ձեռքերը, ջերմ զրույցները մեր մեջ արթնացնում էին մայրական կարոտ:

Սեկնելիս գլուխները կախ, թաշկինակները ձեռքներին, մեզանից թաքուն սրբում էի մայրական քնքուշ սրտերից հոսող արցունքները: Սկզբում մեզ թվում էր, թե բարի մարդիկ մեզ խղճում, գուրգուրում են՝ որպես անհայր ու անմայր թափառա-կան երեխաների: Բայց իրականում նրանց սրտացավությունը խոր արմատներ ուներ: Նրանք հոգ էին տանում, որ իրենց փո-խարինող հայ սերունդն ապրի, հարատևի: Որ հայ ազգը գո-յատևի:

Մի օր էլ ետաշիկ վարդապետի ուղեկցությամբ մեր ննջարա-նը մտան պատվարժան անձինք: Սրբազանը ծանոթացրեց:

— Այսօր Ձեզ մոտ են եկել մեծ ազգային գործիչներից հայ մանուկների սիրելի բարեկամներ՝ Ավետիս Ահարոնյանը, Հովհաննես Թումանյանը, Լևոն Շանթը, Հովհաննես Հովհաննիսյա-նը:

Հատակի վրա «անկողինների» մեջ պառկած բոլոր երեխա-ներս նստեցինք: Մորը սպասող թուռնի ձագուկների պես բե-րաններս բաց լսում էինք նրանց ծնողական զրույցները, որոնք շահելով, գուրգուրելով հյուծված մանուկներիս մեջ ապրելու հույս էին ներշնչում:

— Հայ ժողովուրդը կանի ինչ կարող է, որպեսզի դուք գո-յատևեք...

Մինչև օրս չեմ մոռացել այն պահը, երբ Ահարոնյանը շտա-նելով մեր ծանր վիճակը, այդ խոսքերից հետո ոտքի կանգնեց, շուռ եկավ, գրպանից հանեց թաշկինակը, սրբում էր սրտի խոր-քից հոսող ազգային ողբի արտասուքները:

Իրոք, բարի կամքի տեր հայերի օգնությամբ եղեռնից որ-բացած որբերիս մեծ բանակը վերապրեց: Հրաշալի Նոր սե-րունդը պետք է հպարտությամբ հիշի, թե ինչպիսի բարեհոգի, հայասեր են եղել մեր նախնիները և սրբորեն պահպանի այդ մարդասիրական բարի ոգին:

Որոշ ժամանակից հետո որբանոցները հանձնվեցին ամե-րիկյան բարեգործական ընկերության խնամակալությանը: Աս-տիճանաբար բարելավվեց մեր ընդհանուր վիճակը: Ամերիկա-ցիներն սկսեցին որբերի մեջ ընտրություն կատարել. առողջ, խելամիտ երեխաներին սկսեցին խումբ-խումբ առանձնացնել և հազարավոր հայ մանուկների, Հայաստանից տարան Ամերիկա: Դա շարունակվեց մինչև Ալեքսանդր Մյասնիկյանի Հայաստան դալը: Հայաստանի կառավարության առաջին նախարարը կտրականապես արգելեց այդ: Ամերիկացիները որբանոցնե-րում սահմանել էին իրենց կարգ ու կանոնը: Ամեն օր ճա-շելուց առաջ և հետո բոլորս միասին պետք է աղոթեինք աստ-ծուն. «Հայր մեր» ասելով:

Ամերիկացիները մանուկներիս նկատմամբ կիրառում էին քաղաքակիրթ երկրի պատժի ձևերը՝ առանց հաշվի առնելու մեր աղբրսանքները: Մեր սրտերում որքան դառը վիշտ ու վերքեր կային: Հաճախ մենակ, կամ ընկերներով մեկուսանում էինք մի

ծածուկ անկյունում, կուշ գալիս, գիշերները հիշում մեր խաղաղ տունը, մեր ծնողներին, բույրերին, եղբայրներին, սարսափելի շարդերը, բռնագաղթի ճանապարհի տանջալի օրերը ու թաքուն լաց էինք լինում, որ թեթևանանք: Եվ երբեմն պատժվում էինք փոքր հանցանքի համար: Հիշում եմ գործադրվող պատժի մի քանի ձևերը.

ա) Ճաշարանի մուտքի առաջ՝ քաղցած, պատի տակ կանգնեցնում էին ձախ ձեռքներս տալիս ճաշով լի ամանը, աչ ձեռքը՝ դռալը և պարտադրում էին անթարթ հայացքով նայել ճաշարանին: Ճաշարան շարքով մտնող և դուրս եկող երեխաներն էլ պարտադիր կերպով նայում էին պատժվածին: Այդ վիճակում պետք էր սպասել, մինչև բոլոր որբերը ճաշարանից դուրս գալին: Եթե գդալը թրջված լիներ, մի ամբողջ օր պատժվողը զբոհվում էր սննդից: Վերջում էլ ճաշով ամանը ձեռքից վերցնում էին քաղցած թողնում:

բ) Պառկեցնում էին փոքի վրա. մերկ ոտքերի թաթերին փայտով 15—20 հարված հասցնում:

գ) Կանգնեցնում էին պատի տակ. մեկ կամ մի քանի աղյուս երկու ձեռքով վեր բարձրացրած՝ մեկ կամ երկու ժամ անընդհատ:

դ) Ավելի անտանելի ծանր պատիժը ոռզդին էր, Հիշում եմ, մանկությունս անընչելի տպավորություն տեսածս առաջին պատիժը:

Ամառ էր. երեխաներիս ուրախ խաղերի ամիսներն էին. էջմիածնի ճեմարանի շենքի առջևի հրապարակում մեզ հավաքեցին՝ դաստիարակների հսկողությունը: Փոքրերին ծալապատիկ նստեցրին հողի վրա, մի մասին՝ ծնկաչոք, մյուսներն էլ կանգնած էին, ոմանք բարձրացել էին մոտակա ծառերը:

Կենտրոնում դրվեց երկու թախտ՝ կողքերին մեկական դույլ ջուր: Եկան (ձեռքներին ուղեկից մտրակներ) երկու հաղթանազամ տղամարդ հպարտ կանգնեցին թախտերի կողքին՝ երկու օգնականով: Դիմացը դրվեց մեկ բազկաթու: Բերվեցին երկու պատանիներ՝ գոտկատեղերից մերկ, բոբիկ և փոքի վրա պառկեցրին թախտին: Բավականին ժամանակ սպասեցինք, թե ինչ է կատարվելու:

Վերջապես եկավ ամերիկացի «բարի քեռին» շրջապատված լակեյներով: Հպարտ տիրոջ հայացքով նայեց մեզ վրա, ապա բժժիծադով նստեց բազկաթուին: Ուղղեց դեմքի ոսկեփայլ ակ-

նոցը, և ձեռքերը վեր բարձրացրեց, որ պատիժն սկսելու նշան էր:

Լակեյներից մեկը հպարտ մոտեցավ թախտին, «բարի քեռին» երկար բեղերը ոլորելով հրամայեց՝ մեկական ծածկոց գողանալու համար, յուրաքանչյուրին 50-ական հարված:

Դահիճները նայելով ժպտացող «բարի քեռուն» ոգեորված իջեցրին առաջին ուժգին հարվածը, պառկածները ցնցվեցին: Ցնցվեցինք և մենք՝ մանուկներս:

Մի քանի հարվածից հետո մերկ մարմինների վրա ջուր լրջորին: Թրջված մարմինների վրա իջնող մտրակների հարվածներից մաշկին առաջացան կարմիր հետքեր, ապա երևաց արյուն:

Պատանիները ծանր տնքում էին մտրակի հարվածների ցավերից, երբեմն էլ սոսկալի ճիշեր էին արձակում:

Որբերս այդ ահավոր տեսարանից սարսափած, կուշ եկած, քարացած նայում էինք:

Սակայն ամերիկացի «բարի քեռին» շատ զոհ էր և բավական ունթյուն էր ստանում: Մեկը երեսուներորդ հարվածին չզիմանալով, արնաշաղախ վիճակում ուշաթափվեց, շուտով և երկրորդը: Ուշագնացներին սայլերի վրա տեղափոխեցին վեհարանի հիվանդանոցը: Մանուկներս սարսափելի տպավորություն տակ մեկնեցինք որբանոց:

Մի քանի օր մեր խոսակցության թեման այդ զարհուրելի պատժաձևն էր: Մի օր էլ իմացանք, որ ծեծված երիտասարդները հիվանդանոցում մահացել են և նրանց տեղափոխել են վեհարանի մեռելատունը: Մի խումբ երեխաներ, որոշեցինք գնալ վեհարան տեսնելու դժբախտ տղաների աճյունները:

Մեռելատան դուռը հանված էր. նայեցինք ու տեսանք միմյանց վրա փայտի պես դարսված մի քանի տասնյակ կապտադիակներ՝ բերանները բաց, գլուխները երկար մաղերը կախված: Գարշելի հոտ էր փչում: Անցնող-դարձողները նայում էին այդ ահավոր տեսարանին ու ցնցվում: Այդ դիակների մեջ որևէ մեկին փնտրել կամ ճանաչել հնարավոր չէր: Մեռելատանից ամեն օր, սայլին բարձած, տանում էին ներսես կաթողիկոսի հիմնած անտառի վերջում երկար ու ձիգ շիրմափոսերի մեջ դատարկում դիակները ու թեթևակի ծածկում:

Այդպիսի մեռելանոց կար նաև ճեմարանի բակում մահացող որբերիս համար, որտեղից նույնպես ամեն օր սայլերով 17. Առյուծյան Ա.

մի քանի տասնյակ որբերի դիակներ էին տանում: Մեծամասամբ, մինչև 10 տարեկան երեխաներ: Ու այդպես՝ շաբաթներ, ամիսներ շարունակ: Ավելի մեծ երեխաների որբանոցը գտնվում էր էջմիածնի ծայրամասում, նախկին ցարական ոստիկանների զորանոցում: Ռոզգի պատիժը գործադրել էին 14 տարեկան Աղատի վրա. առանց թույլտվության իր բարեկամի տուն գնալու համար: Նա քսաներորդ հարվածից հետո մահացել էր թախտի վրա:

Որբանոցի շուրջ երեք հարյուր որբ տղաները բողոքի ցույց կազմակերպեցին դաժան պատժաձևի դեմ Վարդիկի զխավորությամբ (այդպես էր այդ արտակարգ գեղեցիկ, խիստ համարձակ պատանու անունը): Ցուցարարների խումբը մտավ ճեմարանի բակի որբանոց, միացան շատ ու շատ որբեր: Թափորը շարժվեց դեպի ամերիկացիների գրասենյակը: Այնտեղ թշվառականներս հանդիպեցինք ամերիկյան լակեյների՝ մահակների հարվածներին, մաուզերների օղակին կրակոցներին: Իսկ ամբակազմ Վարդիկին՝ թևերը կապած տարան...

Այդ ցույցից զայրացած, ամերիկացի «բարի թեոհին» փակեց մեծահասակների որբանոցը և նրանց նետեց փողոց, իսկ մեզ էլ պատժեց. մեկ շաբաթվա սննդի 50 տոկոսը պակասեցրեց:

էջմիածնի վեհարանի և աստղադիտարանի խոշոր կառույցները կատարում էր Մանթաշովը, որպես նվեր կաթողիկոսարանին: Վեհարանի շենքը ավարտման վրա էր, երբ բռնկվեց առաջին համաշխարհայինը:

Հովհաննես Թումանյանը 1915-ի օգոստոսին խնդրել էր կաթողիկոս Գևորգ հինգերորդին թույլատրելու վեհարանը ժամանակավորապես օգտագործել գաղթականների հիվանդ տառապող հազարավոր երեխաներին բուժօգնություն ցույց տալու, անօգնական հայ մանուկներին համաճարակից փրկելու նպատակով: Կաթողիկոսից մերժում ստանալով, Թումանյանը հաջորդ օրը վեհարանի փակ դռները բացել է տալիս, աղջկա և բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի հետ, ճերմակ խալաթներ հագած, սայլերով հարյուրավոր հիվանդ երեխաների հավաքում և վեհարանում սկսվում է նրանց բուժման գործը:

Ամառ էր, որբանոցի բակում խաղում էինք: Մի պաշտոնական անձ ժպտալով բարեկց ու անցավ մեր մոտով: Մենք էլ հարգալից բարեկցինք նրան: Դեմքն ինձ ծանոթ թվաց, բայց չկարողացա հիշել՝ մոտեցա դաստիարակչուհուն, հարցրի.

— Ո՞վ է անցնող պարոնը:

Նա շոյելով զուլիս պատասխանեց.

— Որբանոցի կառավարիչ բարեհոգի պարոն Սեդրակն է: Ես ամեն կերպ ջանում էի մտաբերել, թե որտե՞ղ եմ տեսել նրան: Վերջապես հիշեցի՝ Հայոց ձորի Ոստան քաղաքում: Նա Ասքանազի հետ մեր տուն հյուր էր եկել: Հորս հետ սեզան էին նստել, երբ ես մոտեցա նրանց, նա ինձ գրկեց, սիրեց և երկար ժամանակ իր գրկից չէր իջեցնում:

Իջնում էր զով երեկոն: Խաղից հոգնած, բոթիկ ու քաղցած մեկնեցի ճեմարանի բակում քարից կառուցված աղբյուրը՝ լվացվելու: Հիշեցի մեր անուշիկ տունը, ծնողներիս, Ասքանազին, եղբայրներիս, Զարուհի քրոջս: Նստեցի աղբյուրի մոտ, զուլիս զրեցի սալքարի վրա ու տխուր-տրտում լաց եղա: Այդպես էլ քնել էի: Երազում տեսա մեր լի ու առատ տունը, ծնողներիս, նրանց զուրգուրանքները. որպես առաջնեկ արու զավակի, ինձ շատ էին սիրում ու երես տալիս: Տան բոլոր համեղ բրդուձևները ինձ էին տալիս: Տեսա մանկիկ, թոթուկիկ եղբայրներիս, գառների, ուլերի հետ խաղալը, Ասքանազի, Զարուհու հետ մեր գլուղի ծաղկաշատ կանաչ դաշտում զբոսնելը: Քույրս խելագարի պես սիրում էր մեզ: Մայրս դիտողություն անելով, ասում էր, նրան.

— Աղջիկս, բավական է շաբաբես եղբայրներիդ, այդքան շատ սիրելը լավ նշան չէ... Թող ազատ խաղան, վազվզեն:

«Ա՛խ, մամա ջան,— պատասխանում էր բուլբիկս,— Ի՞նչ անեմ, շատ եմ սիրում: Մատաղ լինեմ ես նրանց: Նրանք ե՛մ վառ պահելու մեր մեծ տան օջախը»:

Այդ կարոտալի երազների մեջ էի, երբ մեկն ինձ արթնացրեց. վեր թռա տեղիցս աչքերս տրորելով նայեցի շուրջս, արև էր. զարմացա, թե որտե՞ղ եմ: Եվ սրտացավ ասացի՝ «Ա՛խ, ափսոս, որ այդ ամենը երազ էր»: Ինձ արթնացնողը կողքիս կանգնած պարոն Սեդրակն էր: Նա բարի հայացքով զննեց ինձ, ուղիղ աչքերիս մեջ նայելով հարցրեց.

— Որտեղացի՞ ես, տղաս: Հիշո՞ւմ ես հայրիկիդ անունը: Տխրությամբ, գլուխս խոնարհելով, պատասխանեցի.

— Փեսանդաշտի Հառեղ գյուղից եմ: Հայրիկիս անունը Ներսես էր:

— Նա անմիջապես գրկեց ինձ, հուզված հարցրեց.

— Ասա, խնդրեմ, ո՞ւր եմ ծնողներդ, քաջ զորավար Ասքանազը, քաջ զինվոր Զարուհին:

Տխրությամբ ցածր ձայնով պատասխանեցի.

— Չկան: Ու գլուխս կախ, հեկեկալով լաց եղա:

Նա հուզվելով իմ պատասխանից, սկսեց ինձ հանդստացուցիչ խոսքերով զուրգուրել: Զեռքիցս բռնած տարավ իր գրասենյակը: Անմիջապես ինձ լողացրեցին, նոր հագուստ, կոշիկներ տվեցին, կերակրեցին: Նորից տարան կառավարչի մոտ: Նա ինձ խնդրեց՝ ինչ գիտեմ պատմեմ ծնողներիս, հատկապես Ասքանազի մասին:

Մեկ ամիս անց պարոն Սեդրակին տեղափոխեցին Երևան: Իսկ ուշ աշնանը մեզ՝ որբերիս, տարան Ալեքսանդրապոլ, պոլիգոնի որբանոցը: Այնտեղ պայմանները որոշ շահով բարվոք էին: Քնում էինք անկողիններում: Կային բարեհոգի, հայ դաստիարակներ...

Ամերիկյան բարեգործական ընկերությունների տնօրինության տակ գտնվող Ալեքսանդրապոլի որբանոցներում տեղավորված անապատան երեխաների թիվն անցնում էր տասնյակ հազարներից: Այդ իսկ պատճառով Ալեքսանդրապոլը երբեմն անվանում էին որբերի քաղաք:

Անցան ամիսներ: Ազգամիջյան պատերազմներից Հայաստանի վիճակն ավելի վատթարացավ աստիճանաբար վատացավ նաև որբանոցների մատակարարման, հատկապես սննդի պայմանները: Բաթումից բերվող ամերիկյան մթերքները բռնագրավում էին: Որբուկներիս կերակրում էին սակավ, ըստ հնարավորությունների: Խախտվել էր որբանոցների կարգ ու կանոնը:

Քաղցից կմախքացած, մենք խաղալու տրամադրություն չունեինք: Գիշերները չէինք կարողանում քնել: Ցերեկներն անց էինք կացնում պատերի տակ կամ՝ անկողնում կուշ եկած. երազում էինք ուտելու մասին, որ քաղցից չմեռնենք: Անհամբեր սպասում էինք ճաշի զանդին: Շարքով, կազմակերպված մրտ-

նում էինք ընդարձակ ճաշարանը, ուր անցյալում ճաշում էին ցարական բանակի զինվորները:

Երկար ու ձիգ սեղանների վրա երկկողմանի շարված էին ալյումինե ամաններ՝ մեջը առանց յուղի եփված ճաշ տակը սի քանի հատիկ լոբի կամ սիսեռ, երբեմն էլ բրինձ: Ուղղակի՝ աաջ չուր, կողքին մի փոքր կտոր սև հաց...

Ամեն մեկս շտապում էր իր մշտական տեղը և մեր բաժինն ազահությամբ կլանում էինք: Այդպիսի ծանր պայմաններում անգամ, երբեք ոչ մեկիս մտքով չէր անցնում ձեռք մեկնել ուրիշի բաժնին: Եվ դա ոչ թե խիստ պատիժների սարսափից, ալ որովհետև, որպես բախտակիցներ միմյանց նկատմամբ ուշադիր և սիրալիր էինք, հասկանում էինք, որ փշուրքմ հացն ու ապուրն են մեր մեջ ապրելու հույս պահում...

Քաղցը նեղում էր: Գարնանը թույլատրեցին դուրս գալ մոտակա դաշտերը՝ կանաչիներ ուտելու: Թունավոր կանաչի ուտելու հետևանքով շատ երեխաներ թունավորվեցին, ստաջաջան գլխացավեր, հավասարակշռությունը՝ կորցնելու զեպքեր, ստամոքսի ցավեր, փորհարություն: Այդ պատճառով էլ փոքր երեխաներիս արգելեցին դաշտ դուրս գալ:

Արդեն մի կերպ ապրում էինք՝ պայքարելով մահվան դեմ: Մեծ մասամբ մեծ տղաները թողեցին ու հեռացան որբանոցներից, մտան ինքնուրույն կյանք՝ իրենց գոյությունը պահպանելու:

Իշել էր սարահարթի լեռնային աշունը: Գաժան քաղցին ավելացավ ցուրտը: Որբերի որոշ մասը մահից խուսափելու համար սկսեց փախչել որբանոցից: Քաղաքում, հատկապես երկաթուղային կայարաններում, հսկիչներ նշանակեցին: Փախչողներին բռնում, հետ էին բերում որբանոց ու պատժում. երբեմն հրապարակորեն դաժան ծեծի էին ենթարկում: Որբանոցից փախուսողը դադարեց. շտապավ սովամահ մանուկներ՝ թիվը, մեռնում էին հատկապես թուլակազմ երեխաները: Անուշավան Զանիբեկյանը շուրջ 13 տարեկան էր՝ համարձակ, անվախ պատանի: Կազմակերպեց մեր չորս ընկերների փախուստը զեպի Երևան:

Կես գիշերն անց էր: Քնած էին նաև գիշերային հերթապահ մայրապետները: Ահն ու սարսափը սրաներումս, գաղտագողի դուրս եկանք որբանոցի շենքից, մտանք Արփաշայ գետի ձորը տանող հարթ դաշտավայրը: Խավար գիշեր էր: Սև ու մութ ամ-

պերը կախվել էին երկնքից. փշում էր լեռներից իջնող սառը քամին. ցրտից դողում էինք: Դեռ ձորը չհասած սկսվեց սառնանքը, շտապում էինք, որպեսզի մթին տեսողաշտից հեռանանք, թաքնվենք:

Արշալույսին մտանք ձորը: Առավոտյան արևից թեթևակի տաքացանք, աշխուժացանք: Շորներս հանեցինք շորացրինք, հանգստացանք: Որոշեցինք անվտանգության համար, քաղաքը շրջանցելով, միայն երեկոյան մտնել երկաթուղու կայարան: Այդպես էլ արեցինք: Երեկոյան կայարանի ծայրամասում կրծկրված, քաղցած, ցրտից դողում էինք:

Անուշավանը շրջագայությունից վերադարձավ և ասաց.

— Կայարանում մարդիկ շատ կան, իրարանցման մեջ են: Թուրքերը Ղարս քաղաքը գրավել են: Ղարսից եկած գաղթականների մի մասը այսօր գնացքով մեկնելու է Երևան. հարմար առիթ էր: Մտածում էինք ի՞նչ անել, երբ մեզնից քիչ հեռու կանգնած երեք ապրանքատար վազոններից մեկի դուռը մի կին կիսով շափ բացեց ու հեռացավ: Անուշավանը թռավ դեպի վագոնը, շուրջը նայեց և արագություններ ներս մտավ, ձեռքը թափահարելով մեզ կանչեց: Հերթով՝ մեկ-մեկ, շտապեցինք դեպի վագոն, ներս մտնելով ուրախ-ուրախ կծկվեցինք մի անկյունում: Վագոնը բացող կինը, երկու բանվոր, մի շինելավոր մարդ եկան: Իմանալով մեր ով լինելը, մեզ ոչինչ չասացին:

Շինելավորին նստեցրին վագոն, ջերմ բաժանվեցին: Վագոնը փակվեց: Շինելով մարդը մեզ հետ մտերմիկ, սրտացավ գրուցելով հետաքրքրվեց մեր կյանքով: Երբ գնացքը շարժվեց, բարի բեռին իր գրուցքը վերջացրեց: Ունեցած հացը, կարտոֆիլը տվեց մեզ, փաթաթվեց շինելի մեջ, պառկեց քնելու: Մենք ազահություններ անուշ արեցինք, հագեցրինք մեզ տանջող սոսկալի քաղցը, ուրախ-ուրախ պառկեցինք, մեջք մեջքի տված, քնեցինք:

Ամբողջ ճանապարհը վագոնում՝ մեծ մասամբ անցկացրինք քնած:

Գնացքի կաթսայում, քարածուխի, մազութի փոխարեն փայտ էին վառում. այդ պատճառով էլ գնացքը շատ դանդաղ էր ընթանում: Կայարաններում շատ էր կանգնում: Իսկ շինելավոր քեռին մեզ հետ գրուցելիս հայրական խորհուրդներ էր տալիս՝ կյանքը ճանաչել իր դժվարություններով հանդերձ:

Երևան հասանք հաջորդ օրվա կեսօրին:

Գնացքը կայարանի դեպոյի մոտ կանգ առավ: Վերջին վագոնը, որի մեջ մենք էինք, անջատեցին: Վագոնի դուռը բացվեց, մի խումբ երկաթուղային բանվորներ ջերմ դիմավորեցին ջինելավոր մարդուն և ուղեկցեցին նրան:

Մենք վագոնի կիսաբաց դռնից ուրախությամբ նայում էինք մեր ուղեկցին, զրուցակցին. բարեհոգի, խելամիտ շինելավորին, որ այդ աստիճանի հեղինակավոր անձ էր: Նա ցավով էր խոսում Հայաստանի ողբերգական վիճակի, հատկապես որբերի մասին: Մեզ խիստ հանդիմանեց որբանոցից փախչելու համար. խորհուրդ տվեց անպայման վերադառնալ:

— Թափառաշրջիկ կյանքը,— ասաց նա,— ձեզ ոչ մի ապագա չի խոստանա, կարող է խորտակել ձեր կյանքը: Որբանոցում, լավ, թե վատ ձեր մասին հոգացողներ կան: Շուտով կյանքը կփոխվի, ոուս ժողովուրդը օգնություն ձեռք կմեկնի մեզ և մենք կփրկվենք այս տառապյալ ողբերգական վիճակից:

Առաջին անգամ նրանից լսեցինք կենիտի անունը, Հոկտեմբերյան հեղափոխության մասին:

Նրանք հեռացան տեսողաշտից, մենք իջանք վագոնից:

Ո՞ր ենք գնալու...

Որտեղի՞ց և ինչպե՞ս մի կտոր հաց ձեռք բերենք, որտե՞ղ պատսպարվենք: Այդպես մտածույր շարժվեցինք քաղաք: Առաջին իսկ տպավորությունից զգացինք աղքատությունը, ահավոր սովը:

Քաղաքի ծայրամասում (այժմյան կրկեսի տեղում) տեսանք, թե ինչպես մայր ու երեխա վազում են կատվի հետևից, որպեսզի բռնեն, մորթեն՝ ուտելու համար:

Այդ սարսափելի տեսարանը շատ բան ասաց Երևանի մասին:

Այդ տպավորության տակ շարժվեցինք դեպի շուկա:

Ողորմելի էր, սովի, զրկանքների, համաճարակների մեջ գալարվող, քաղցած թափառաշրջիկներով լեփ-լեցուն շուկան: Ժխորի մեջ անարդյունք թափառեցինք մինչև երեկո: Դաժան քաղցը նեղում էր: Մտածում էինք՝ ո՞ր գնալ, որտե՞ղ օթևանել: Մի խումբ թափառաշրջիկների հետևելով հասանք Երևանի կենտրոնում դանվող Գր. Լուսավորչի եկեղեցին:

Մուժն ընկել էր, նրանց հետ էլ գիշերեցինք եկեղեցու բակում, սալահատակի վրա: Աշնան ցրտին, մեջք մեջքի տված, դողդողալով մի կերպ անցկացրինք թափառաշրջիկ կյանքի առաջին գիշերը:

Կիրակի օր էր, եկեղեցու ժամկոչը, անհոգի հոգևորականը, վաղ առավոտյան եկել էր եկեղեցու զանգերը խփելու, մահակի հարվածներով մեզ դուրս քշեց եկեղեցու բակից: Սակայն նա չէր կարող բուրբիս վանդել: Ցնցոտիների մեջ փաթաթված ոչ քիչ թափառաշրջիկ երեխաներ գիշերը հոգիներն ավանդել, փայտացել էին եկեղեցու պատի տակ:

Փռոզը քվելուց հետո, շարժվեցինք դեպի քաղաքային այգի, որտեղ քիչ չէին մեզ պես քաղցած թափառաշրջիկ երեխաներ և ծանրորի տակ նաև մահացածներ՝ մեծ մասամբ մինչև 10—12 տարեկան:

Գողալով անհամբեր սպասում էինք արևին՝ տաքանալու: Արևը բարձրացել էր. մտանք շուկա: Շարժվեցինք ծխի, ճարպի հոտով բռնված տժվժիկ վաճառողների շարքը: Տասից ավելի օջախների վրա՝ մեծ թավանների մեջ, ճարպով տապակում էին անասունների աղիներ, թոքեր և ուրիշ մնացորդներ: Վաճառում էին մանր-մանր կտրված, մի քանի կտորը 50 կամ 100 գրամ սև, խոնավ հացի կտորով, շատ թանկ գնով: Այնպես որ քշերը կարող էին գնել: Վաճառում էին եփած բազուկ, սիսեռ, եգիպտացորեն, գարի և այլն...

Շերթով նայում էինք նրանց ու քաղցից բերներիցս ջուր էր դնում:

Մեզ պես որքան-որքան քաղցից նվազուն աչքեր էին նայում նրանց, սակայն ի՞նչ կարող էին անել: Յուրաքանչյուր վաճառողի կողքին կանգնած էր երկու երեք դմբուղով օգնական:

Անցել էինք բազուկ, սիսեռ վաճառողների շարքը, երբ տրժվժիկ վաճառողների «թաղից» լսեցինք երեխայի ճիչ, լացի, օգնություն ձայն: Տեղ հասանք և ի՞նչ տեսնենք, 7—8 տարեկան որբ երեխան ձեռքը մեկնել էր վաճառողից մի կտոր տրժվժիկ աղբուհի, իսկ տերը մերժելով բամփել է երեխայի գլխին, թի՛ շուտ հեռացիր:

Թուլակազմ երեխան հարվածին շղիմանալով, վայր ընկնելիս, ձեռքը ընկել է ափսեով դրված տժվժիկի վրա. ափի մեջ ընկած երկու փոքրիկ կտորն անմիջապես տարել է բերանը: Եվ երեխային զետնին գլորելով, տերը զազանաբար ձեռնում էր,

ինկ մի խումբ տժվժիկ վաճառողներ իրենց համախոհներով, հպարտ կանգնած նայում էին: Ոմանց դեմքին նույնիսկ բավականություն ժպիտ կար:

Երեխայի լացի ու ճիչի վրա հավաքվեցին մեծ թվով թափառաշրջիկներ, որոնք քարերով, փայտերով հարձակվեցին տեսիլիճ վաճառողի վրա և զետնին գլորեցին: Վրեժխնդրությամբ հարձակվեցին նաև մյուս վաճառողների վրա՝ քար, հող, առվի ջուր լցրին նրանց վրա, քարուքանդ արեցին, թալանեցին:

Երեխային ծեծողը տնքալով մի կերպ վեր կացավ: Գլխից հոսող արյունը ծածկել էր նրա դեմքը: Իր դաժան արարքի գիմաց լավ դաս ստանալով, դատարկ թավան թևի տակ դրած, գլուխը կախ կաղալով հեռացավ շուկայից:

Այդ օրն էլ ոչ մի լավ բան չստացավ մեզ:

Թափառաշրջիկի դժվարին կյանքին անսովոր մենք ծանր ցավ զգացինք, զղջացինք որբանոցից փախչելու մեր սխալ քայլը, սակայն արդեն ուշ էր...

Մանկություն շտեսած օսմանյան, քեմալական ջարդեր, զրկանքներ ճաշակած երեխաներս, հոգսերի մեջ մտամուրթ քայլում էինք: Ես նկատեցի մեր կողքից անցնող մի ցածրահասակ, տարիքավոր կնոջ: Նա դժվարությամբ տանում էր մի ճամպրուկ և փոքր զամբյուղ: Քաղաքավարի մոտեցա նրան և խնդրեցի.

— Տատի՛ ջան, թույլ տվեք օգնեմ:

Նա ճամպրուկը ձեռքից վայր դրեց, շուռ եկավ, հոգնած դեմքով զննեց ինձ, ապա ընկերներիս, հարցրեց.

— Ո՞վ ես դու, տղաս, այդպես քաղաքավարի, ծնողներ ունե՞ս:

Ընկերներս հետաքրքրությամբ նայում էին մեզ. Անուշափանը հարգալից պատասխանեց.

— Ո՛չ, տատի ջան, ծնողներից որբացած, անբախտ երեխաներ ենք:

— Ապա ո՞վ է ձեզ այդպես մաքուր հագրել: Զի՛ երևում, որ թափառաշրջիկ եք:

— Տատի՛կ ջան, նոր ենք որբանոցից դուրս եկել, քաղցած, աննպատակ թափառում ենք,— մանկական ժպիտը դեմքին պատասխանեց մեր ընկեր Ազատը:

Նա կրկին զննեց մեզ, ապա զամբյուղից հանեց մի քանի

հում կարտոֆիլ, բարի հայացքով նայեց մեզ, տվեց Աղատին, ասաց.

— Վերցրեք, բալիկներս, կեփեք, կուտեք, թող անուշ լինի: Ազատը վերցնելով շնորհակալութուն հայտնեց բարի տառիկին:

Մեր ուրախութունն անչափ էր: Բոլորս խոնարհվեցինք նրա առաջ: Նայելով ինձ ասաց.

— Որդի՛ս, եթե ուժերդ կների, օգնիր՝ ճամպրուկը տանենք տուն: Ես քեզ կվարձատրեմ:

Իր օգնությունը ճամպրուկը դրեցի ուսիս, բավականին ծանր էր: Նա էլ վերցրեց փոքրիկ գամբյուղը և հնազանդորեն հետևեցի բարի տատիկին: Անցանք անուշադրություն մատնված, անբարեկարգ, խիստ կեղտոտ փողոցներով: Երևանյան քամին երեկոյան ամենուրեք ապականում էր քաղաքը, ուղղակի ծածկում էր դեմքներս: Ազատ աչք բացել, քայլել չէինք կարող: Ավելի սարսափելի էր փողոցներում համաճարակից, սովից մահացած, պատերի տակ ընկած, մարդկանց դիակները: Փողոցների անկյուններում նստած էին կիսամերկ, կոխաբացած մուրացկան երեխաներ, ծերունիներ, մանկիկներին զրկած խլակորույս մայրեր...

Տարօրինակ էր, անցուդարձ անողները մեծ մասամբ անտարբեր էին նայում նրանց: Տատիկը, որ գլուխը կախ լուռ քայլում էր, մեկ մեկ էլ ետ դարձավ, նայեց ինձ, Ես լուռ հետևում էի նրան: Երբ տուն հասանք, մութն ընկել էր:

Ճամպրուկը դժվարությամբ բարձրացնելով երկրորդ հարկ, ներս տարա՝ խոհանոց: Ցած դնելով, խոր շնչեցի, թվաց մարմինս ազատվեց տաժանակրությունից: Նա ինձ՝ որպես վարձ, թղթե դրամ առաջարկեց: Ես հրաժարվեցի աղբստելով.

— Տատի ջան, խնդրում եմ, հա՛ց տվեք, հա՛ց, երկու օր է բերանս ոչինչ չեմ դրել:

Նա ցավակցարար նայեց հոգնած, քրտնած, աղբսող հայացքիս ու ներս գնաց: Վերադարձավ մի կտոր սև հաց և եփած կարտոֆիլ ձեռքին: Մեկնելով ինձ, ծանր շնչեց ու մայրական քնքուշ ձայնով ասաց.

— Վերցրու, որդիս: Սա թող լինի պատերազմում թուրքի գնդակով ընկած իմ միևնույն տղայի բաժինը: Տար, անուշ արա, միայն թե շուտ մեկնիր, անողամ հարսս շտեսնի:

Նայեցի այդ կտոր հացին, կարտոֆիլին. ուրախութունից

նույնիսկ աչքերս թրջվեցին, մոռացա ճանապարհի իմ ամբողջ տանջանքը, ծանրության տակ իմ տնքոցները:

Դա իմ կյանքի առաջին վաստակած հացն էր:

Ուրախ-ուրախ դուրս եկա փողոց:

Շնչակտուր շտապում էի, որպեսզի իմ առաջին վաստակած փշուրմը հացով ընկերներիս ուրախացնեմ՝ միասին անուշ անենք: Ուշ երեկո էր, փողոցներում մեկ-մեկ երևացող մարդիկ շտապում էին տները, ամուր փակում դռները, պատուհանները: Փողոտ քամին դեռ շարունակվում էր: Փողոցի կեղտը մի կողմից քշում էր մյուսը, կամ ուրելով՝ վեր բարձրացնում: Փողոցում երևում էին խմբերով, գողությունը զբաղվող թափառաշրջիկներ: Խուլ լսվում էր տնքացող, ուժասպառ ընկած երեխաների, ծերունիների մահամերձ տնքոցները, օգնության աղերսող ձայները: Օգնության կարիք զգում էին ամենքը...

Պայմանավորված վայրը հասա. ընկերներս շկային: Նրանց կորցնելու, մենակության ծանրությունը զգալով, խիստ հուզվեցի, խեղճացա: Մեն-մենակ միտք էի անում. անծանոթ քաղաքում ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ, որ կարողանամ ապրել... Իջավ սև ու մութ ամպրոպային երեկոն: Փոշխառն քամուն փոխարինեց տեղատարափ անձրևը: Մենակության մեջ տխրել էի և դառնագին խոհեքով շարժվեցի դեպի դռները հանած շուկայի, նախկին խանութների երկար ու ձիգ շարքը, որոնք բազմաթիվ անապաստանների օթևանն էին: Շվարած կանգնել էի դռան անկյունում: Օթևանը ներս մտնող, ինձանից տարիքով երկու թափառաշրջիկ նկատելով ինձ, խղճացին, մոտեցան և հետաքրքրվեցին ինձանով: Պատմեցի գլխիս եկածը: Պարզվեց, որ համաերկրացիներ ենք՝ բախտակից, որք վասպուրականցիներ: Նրանք ինձ ներս տարան, ցույց տվեցին անկյունում հողի հատակի վրա փռված խոտի բարակ շերտը, որտեղ գիշերները օթեվանում էին: Նստեցին, ինձ էլ տեղավորեցին իրենց մեջտեղը: Նույն «խանութում» ընկերներով տեղավորված էին եղեռնից փրկված թափառաշրջիկ բիթլիցցի, սասունցի, մշեցի, շատախցի, տարոնցի երեխաներ: Նրանց մեջ կային հիվանդներ. լսվում էին նրանց նվաղած տնքոցները:

Ուրախացած նոր ըկերներովս, օթևանով, շորի մեջ փաթաթած, թևիս տակ ամուր պահած հացը, կարտոֆիլը հանեցի, հյուրասիրեցի բարեհոգի ընկերներիս: Մեկական կարտոֆիլ

ավելցինք մեր կողքին պառկած հիվանդ մոկացի եղբայրներին՝ կաղ Վահանին և Նշանին:

Ավելի ավագ խաչիկ Սարուխանյանը ձեռքը դնելով ուսիս, ասաց.

— Շնորհակալ ենք, եղբայր, տասը օր կլինի, ապրում ենք կանաչով, հաց չէինք կերել: Այսօրվանից երեքս կլինենք եղբայրներ: Իսկ Սեդրակ Մանուկյանը գոհ մնալով իմ հյուրասիրությունից, գրկեց ինձ ասաց.

— Այսօրվանից մեր փոքր եղբայրն ես, էլ մենակ չես մնա:

— Ախր, Սեդրակ ջան, նրանք շատ ազնիվ ընկերներ էին, անպայման նրանց հետ մի բան պատահել է, որ տեղում չէին, — արտացավ ասացի ես:

— Այսօր երեկոյան, — ասաց Սեդրակը, — որբանոցներից փախածներին, թափառաշրջիկ երեխաներին հավաքում էին: Երևի ընկերներիդ էլ են բռնել և տարել որբանոց: Թափառաշրջիկ երեխաներին երբեմն որբանոց են տանում, երբեմն էլ՝ խոլերանոց:

— Կառավարող պարոնները, — մեր զրույցը շարունակեց խաչիկը, — այն կարծիքին են, որ համաճարակ տարածողները մենք ենք:

Իջել էր գիշերային խավարը: Հորդառատ անձր էր, մեջք-մեջքի աված քնեցիկը: Լավում էին հիվանդների տնքոցները, ջուր էին խնդրում:

Խաչիկը մի քանի անգամ վեր կացավ, հիվանդներին ջուր տվեց: Վահանի վրա խոտ լցրեց, ծածկեց, որ չմտնի:

Առավոտյան արթնացանք, բիթիսեցի Հովհաննեսը 13 տարեկան, մերկ պառկած մահացել էր: Սրտացավ հավաքվեցինք շուրջը: Հետո ընկերներով թեկերիս վրա տարանք մոտակա զբոսայգին: Դրեցինք այնտեղ, որտեղից սալլերով տանում են «թոխմախ գլուխ» մոտ փորված երկար ու ձիգ փոսերի մեջ դնում, բարակ հողի շերտով ծածկում: Վերադառնալիս խաչիկն ինձ ասաց.

— Քաղաքին անծանոթ ես, մնա՛ այնտեղ, հիվանդ ընկերներին նայի՛ր: Սեդրակի հետ կգնանք, ինչ որ ձեռքներս ընկնի, կբերենք, երեկոյան միասին կուտենք: Վահանը տաքության մեջ ջուր էր ուզում, 11-ամյա ալաշկերտցի Զարգանդը ծանր տընքալով կանչում էր. Ա՛խ, մայրիկ ջան, ո՛ւր ես, մեռնում եմ:

Իսկ մոկացի Սարգսի և Նշանի վիճակը փոքր-ինչ լավ էր: Նրանց էլ փշուրմը հաց էին աղբրում:

Ջրից վերադառնալիս նկատեցի դույզ դռները հանած կողքի «խանութում» մի քանի երիտասարդ կանայք, տղամարդիկ, զույգ-զույգ, առանձին-առանձին նստած հաց էին ուտում: Հիվանդներին ջուր տալուց հետո մոտեցա նրանց, ասացի, ոչ հարևան ենք, ընկերներս ծանր, մահամերձ հիվանդ են, հաց են ուղում, մի կտոր հաց տվեք...

Տղամարդը զայրացած բղավեց վրաս.

— Հեռացի՛ր, թե չէ ծեծ կուտես ու բրդուճ արած հացը դրոյ կողքին նստած, կուրծքը բաց, ժպտացող երիտասարդ կնոջ բերանը:

Դիմեցի երկրորդ զույգին, հետո՝ երրորդ... Հինգերորդ զույգին: Մի կին բարի նայեց ինձ, ունեցած հացի կեսը և եփած սպիտակ լոբուց մի բուռ դրեց իմ փեշը:

Ուրախությունից մինչև գետին խոնարհվեցի բարի կնոջ առջև:

— Թամա՛ր ջան, ախր ես քեզ համար եմ բերել, քանի օր է ոչինչ չես կերել, — ասաց ընկերը:

— Ոչի՛նչ, Խանամիր, թող տանի, հիվանդ, որը երեխաներ են: Առավոտյան լացով մեկին տարան. սովամահ էր եղել, թող իրենք ապրեն: Մեր աղվի հույսն են...

Կեսօրն անց էր, դարձյալ ջրի գնալիս տեսա կանանց հետ ուրիշ տղամարդիկ էին հացի նստած, իսկ Թամարան չկար: Վերադառնալիս «խանութի» առջև հավաքված մի խումբ երեխաներ, նայում ու ծիծաղում էին. կանացի ամոթխածությունը, արժանապատվությունը կորցրած անառակները՝ խոտի վրա պառկած, մինչև գոտկատեղը մերկ, հրապարակորեն կենակցում էին տղամարդկանց հետ, իսկ անցորդները գլուխները շրջում էին, թքում: Շուկայի ավերված «խանութներից» այդ նպատակների ծառայում էին երեքը, որոնց կողքով երբեք չէին անցնում պատվարժան կանայք: Շտապելով ներս մտա և զարմացա. Թամարան նստած, հիվանդ ընկերներին էր խնամում:

Ուշ երեկոյան խաչիկը և Սեդրակը եկան, մի մեծ գլուխ սպիտակ կաղամբ էին բերել: Ներս դրեցին և հապշտապ դուրս եկան: Հարևան կանայք, կրկին, գոնե բաց վիճակում, տղամարդիկ էին ընդունում: Կենակցության պահին, կրեկանները

դայրացած, նրանց վրա առվի կեղտոտ ջուր էին լցրել, իսկ անառակ տղամարդիկ հարձակվել էին նրանց վրա և ծեծում էին: Երեխաներին օգնություն էին եկել անցորդ տղամարդիկ և չուրջ կռիվ էր բռնկվել:

Հաջորդ օրվա առավոտյան, մայրական կարոտը սրտում, ալաշկերտցի Զարգանդը մահացավ: Ընկերներս նրան էլ տա-
րան...

Թեև եղանակն անձրևային էր, ոչ մեկը տուն չվերադարձավ, գնացել էին իրենց ուտելիք հայթայթելու...

Կեսօրին եկան Քամարան ու հանամիրը: Խանամիրը Քա-
մարալին հանդիպելու առաջին իսկ օրը տարել էր իր տունը՝
ամուսնացել: Նրանք իրենց հետ բերել էին իմ հասակի երկու
տղա՝ մկան նման թրջված: Քամարան դիմելով ինձ, խնդրան-
քով ասաց.

— Անտեր, անօթևան մեր երկրացի լաճեր են, տեղ չունեն,
թող այստեղ օթևանեն, տեսնենք ի՞նչ է լինում: Հո այդպես
անտեր չեք մնա. չէ՞ որ մեր ազգի ապագան եք:

Ես ցույց տվեցի ազատ տեղերը: Նա փոքրերին անմիջապես
տեղավորեց, հանեց թաց շորերը, նրանց մերկ մարմնի վրա
փոխեց իր զլխաշորը, ապա ծածկեց խոտով: Խանամիրի հետ
դուրս տարան, քամեցին թրջված շորերը ներս բերելով փո-
ցին՝ շորանալու: Հետո նրանք, ինձ ևս, մեկական կտոր սև հաց
և մեկական բաժակ էլ սախարինով քաղցր ջուր տվեցին: Քա-
մարան մայրական քնքշությամբ էր նայում նորեկ թրջված երե-
խաներին:

Մեկնելուց առաջ, ասաց.

— Պինդ կացն՛ք, իմ վասպուրականի բալիկներ, մենք էլի
կգանք, ես և Խանամիրն էլ ձեզ պես վանի նահանգի գյուղերից
ենք:

Երեկոյան, անձրևը կտրվել էր: Զրի գնացի: Հարևան անա-
ռակ կանանց «խանութի» մուտքը կիսով չափ ծածկված էր՝
քրքրված, կեղտոտ բիազի կտորով:

Երեկոյան տղաները վերադարձան օթևան: Հիվանդ և նորեկ
տղաներին կերակրեցին՝ ով ինչ բերել էր: Բոլորից ուշ վերա-
դարձան Խաչիկը և Սեդրակը. շորի մեջ փաթաթած հաց էին բե-
րել, բաժանեցին բոլորիս:

Ամերիկյան բարեգործական ընկերությունների որբանոցնե-

րի համար Բաթումից բաց վագոններով ալյուր էին բերել-
անձրևի տակ թրջված, պարկերի մեջ կոշտացած, դեղնած, դառը
ալյուր էր: Բեռնաթափմանը մասնակցելու համար չուրաքանչ-
յուր ընկերոջս քիչ, կոշտացած ալյուր էին տվել: Գտել էին մի
հին, թիթեղյա աման, մեջը խմոր արել, օջախ վառել, սածի
վրա հաց թխել, անուշ արել: Մի քիչ էլ բերել էին մեզ համար:

Բոլորիս վրա ծանր ազդեց, երբ 10-ամյա Վահանը, տաքու-
թյան մեջ, զառանցելով խոսում էր իրենց տան մեջ թուրք հրա-
մանատարին անձնատուր շինելու համար իր ներկայությամբ
դաշունահարված մոր հետ և դառնագին ողբում էր մոր մահը...
Հողմաշ որբերս կուզեինք մխիթարել օսմանցու կործանած
մեծ օջախից մնացած երկու որբին: Սակայն խոսելու սիրտ չու-
նեինք: Երեկոյան կայարանից եկավ Խաչիկը պատմեց ալյուրի
վագոնի մասին: Որ վագոնը շրջապատված էր հարյուրավոր
թափառաշրջիկներով, որոնք պահ էին որոնում, որ մի քիչ ալ-
յուր փախցնեն, ոմանք էլ գետնին թափված ալյուրը հավաքում
էին՝ հում-հում, փոշոտ լցնում բերաններն ուտում: Մեկ էլ լսե-
ցինք հրացանի կրակոց՝ երեք երեխա պարկերից թափված ալ-
յուրի քարացած կտորներից փախցրել էին: Պահակները կրա-
կել էին մեկին՝ սպանել, գետնին գլորել, երկուսին էլ վիրավո-
րել: Կրծքներին ամուր սեղմած ալյուրի կոշտ կտորները ներկ-
վել էին սովից մեռնող պատանիների արյունով: Մի օր հետո,
երբ առավոտյան արթնացանք, Վահանը և սասունցի Կամսարը
մահացել էին: Մեզ ցնցեց մահացած ընկերների տանջված
մարմինները: Կրծող միջատների դեմ պայքարելիս, սուր եղունգ-
ների արյան հետքերը... Աճյունները ձեռքներիս վրա տարանք
այգին, այնտեղ, որտեղից սալերի մեջ բարձած դիակներ էին
տանում Երևանից դուրս փորված երկար ու ձիգ գերեզմանոփո-
սը: Սովից ողբում էինք: Անսպասելի մեր օթևանը մտավ մորու-
քույր Քամարան, սիրալիք բարևեց, նստեց մեր կողքին: Մեզ և
հիվանդների համար ճաշ էր բերել: Նա ցավալի ընդունեց Վա-
հանի, սասունցի տղայի մահը: Հարազատ մոր պես նայեց հր-
վանդներին, ապա ասաց.

— Իմ խելք տղաներ, գնացեք որբանոց, այդպես ապրել չի
կարելի՝ կկոտորվեք: Զե՛ որ չուրաքանչյուրդ մի տան ճրագ եք:
Այդ բարեհոգի կինը ուզում էր ամեն ինչ անել, որպեսզի որ-
բուկներս ապրենք: Նա մեզ նստեցրեց հատակին, կենտրոնում
դրեց ամանով ճաշը, հինգ փայտյա գդալ, կորեկի հացի հինգ
փոքր կտոր:

— Դե, անուշ արեք,— մայրական սրտով ասաց նա, աչքերը արբելով:

Մենք վաղուց մոռացել էինք ինչ է տաք կերակուրը, նրա համը: Մեծ ախորժակով հարձակվեցինք ճաշի վրա:

Նա նայելով կմախքացած մեր ձեռքերին, տեսնելով, թե ինչպես ենք ուտում, երեսը մի պահ շրջեց: Հետո շուտ եկավ, ծունկի իջավ, ձեռքերը վեր պարզեց և աղոթելով ասաց.

Ա՛խ, ամենակարող տեր, մինչև ե՞րբ իմ ժողովուրդը պետք է կոտորվի, ո՞ր մեղքի համար. միթե՞ այդ անիրավ թուրքը կմնա անպատիժ:

Մեզ նայելով, կրկին հիշել էր թուրք զինվորների գլուղ մըտնելը, գյուղի տղամարդկանց զինքի, ծեծի ուժով՝ գորահամարի անվան տակ տանելը, իր ջահել ամուսնուն, երեք հղբայրների սպանելը: Գաղթի արյունոտ ճամփին իր մեկ և հինգ տարեկան երեխաների սովից մեռնելը և սկսեց հոնգուր-հոնգուր լաց լինել:

Սա շուտ եկա, խնդրելով ասացի.

— Թամարա մորաքույր, մենք քեզնից շատ գոհ ենք, ձեզ լսում ենք: Խոսք եմ տալիս հենց մեր հիվանդ ընկերները լավանան, բոլորս միասին կգնանք որբանոց, մեզ համար մի լացիլ:

— Ապրես, որդիս, միշտ այդպես խելոք եղեք, մեծերին լսեք: Ինձ էլ ներեք, սրտումս խոր վերքեր շատ կան, թողեք մի քիչ լաց լինեմ, սիրոս հանգստանա, քանի Խանամիրն այստեղ չէ: Նա հրաշալի տղամարդ է, նրա մոտ սրտիս վերքերը չեմ ուզում բացել:

Ճաշն ուտելուց հետո, տրամադրություններս փոքր-ինչ բարձրացավ ու աշխուժացանք:

Թամարան հետաքրքրվեց մեզնով, մեր ծնողներով...

Նորեկները Վանի նահանգի Գավաշի գավառի Նարեկ գյուղից էին, հորեղբոր տղաներ: Պատվականը 7, Շավարշը 9 տարեկան: Նրանց ծնողներին, ավագ եղբայրներին սպանել, քույրերին փախցրել էին թուրքերը: Իրենց մի խումբ երեխաների հետ, սալլերով տեղափոխել էին Ոստան քաղաքը՝ հավատափոխելու: Թուրքերը նահանջելիս, մարագի մեջ լցրել ուզեցին են այրել, հայ կամավորները ազատագրել էին նրանց և ուղարկել Աղթամար:

Բարի կնոջ մեկնելուց հետո, շորներս հանեցինք և սկսեցինք

ոչիլները ունչացնել, որոնք շատ էին մեզ անհանգստացնում. նույնիսկ տարածված էին խոտերի մեջ, որի վրա քնում էինք: Սուր եղունգներով անվերջ քորում էինք և մաշված մաշկներս ծածկվել էին վերքերով:

Ես մեկնեցի ջրի:

Աղբյուրի մոտ մեկը ամուր բռնեց թևս: Վախից ջրամանը ձեռքիցս ընկավ, կոտրվեց:

— Շո՛ւն, շան որդի,— ասաց բեղերը ոլորած հաղթանդամ մարդը,— ինչո՞ւ ես որբանոցից փախել,— ուժգին ապտակեց: Ցավից կարծես թե աչքերիցս կրակ թռավ, գլուխս պտտվեց, քիչ էր մնում ընկնեի:

Ձեռքիցս բռնած տարավ մի քանդված խանութ, որտեղ ինձ նման հիսուսներից ավելի տղաներ կային:

Իմ այն խոսքը, որ հիվանդ ընկերներիս համար ջուր եմ տանում, շսեցին էլ: Մեղ, հսկողության տակ, տարան Սուս-գուկյանի փողոցում գտնվող մեկ հարկանի, ընդարձակ բակով, սև քարից կառուցված քաղաքային դպրոցի շենքը (այնտեղ այժմ Շևչեկոյի անվան 41-րդ միջնակարգ դպրոցի նոր շենքն է): Լցրին մի սենյակ, շատ նեղվածք էր: Սրեկոյան էլի երեխաներ բերեցին, ուժով սեղմեցին ներս:

Սեղմված, շունչներս կտրվում էր: Փոքրերի ոտքերը հատակին չէր հասնում, սեղմվել մնացել էին օդում:

Ողջ գիշեր ցավերից, տնքոցներից, մահամերձ ճիշերից, կծող ոչիլներից աչքներս չփակեցինք: Անհամբեր սպասում էինք լուսարացին, մեր ճակատագրին: Վերջապես դուռը բացվեց: Ոմանց տարան որբանոց: Հիվանդներին առանձնացրին: Տասնյակ մահացածների դիակներն էլ սալլերով տարան:

Մահացածներին տանող 6 սալլապաններից մեկն ինձ ճանաչել էր. բժշկի առանձնասենյակից դուրս բերելիս, բռնեց ձեռքիցս:

— Հայրիկիդ անունն ինձ բաշխի՛ր, տղաս,— հարցրեց նա:

— Ներսէ՛ս,— ասացի տազնապակով շիմանալով հարցնելու պատճառը:

Վերակացուն թևիցս ամուր բռնեց:

— Թող, Թորոս, այս անապատան տղային որբանոց են ուղարկելու:

— Կներեք, պարոն Զատիկյան,— սրա հորը մենք շատ ենք պարտական: Եղևու՛նի ահեղ օրերին 20—25 քաշերով մեր գլուղն 18. Ասւանյան Ա.

տղատեց կոտորածներինց, կաղմակորպված բերեց մինչև էջ-
միածին: Այնտեղ էլ մահացավ մարտերում ստացած ծանր
վերքերինց, նրա տղային կտանե՛մ մեր տուն, կպահե՛մ որդուս
պես, իմ կորցրած հինգ երեխաների փոխարեն:

— Իբր թե դու ապրելու միջոցներ շատ ունե՛ս, հիմա էլ
ուրիշի երեխային պիտի պահես,— քմծիծաղով ասաց պարոն
Ջատիկյանը:

— Ո՛չ, պարոն, կներեք, ես մեղ համար ուրիշ չէ: Նրա
պատվարժան հայրը ազգապահպանման հայրենանվեր գործե-
րով ճանաչված մեծ մարդ էր: Սակայն, ձեր երկրում ոչ ոք չու-
զեց մեր ազգային հերոսներին, քաջերին ճանաչել, և տրորվե-
լով՝ թշվառության մեջ անշուք մահանում, կորչում են:

Թորոսի կինը՝ Մովինարը ինձ անմիջապես ճանաչեց և գրկա-
բաց ընդունեց: Էջմիածնի անտառում տեղավորված էին ծառի
տակ և միասին էինք ապրում: Այնտեղ համաճարակից մահա-
ցան նրանց 5 երեխաները: Մովինարը ջուր տաքացրեց, լողաց-
րեց, մկրատով խուզեց ոջլոտ, անիծոտ մաղերս, ոջլոտ շորերս
թռնրի մեջ կախեց, թափ տվեց, թեթև կերակրեց պառկեցրեց
քնելու:

Քնից արթնացա հաջորդ օրվա կեսօրին, ինձ անշափ երջա-
նիկ էի զգում, «գժոխքի տնից» ազատվելով (այսպես էինք
անվանում այն դպրոցը, որտեղ հավաքում էին թափառող, անա-
պաստան երեխաներին «կարգավորելու» նրանց կյանքի հար-
ցերը):

Ավելի անմխիթար վիճակում էին առանձնացված հիվանդ
երեխաները. չկար, չէր գտնվում հասարակ ղեղորայք: Այդ տա-
րիներին, Երևանում գործող ամերիկյան բարեգործական ընկե-
րությունների 11 և անգլիական 2 որբանոցներում երեխաների
պայմաններն ավելի բարվոք էին, քան՝ հայ բարեգործական ըն-
կերության 5 որբանոցում:

Նոր խրճիթի մեջ էլ շուրախացա. մի խավար ու մութ գիշեր
Թորոսի տան դուռը թակեցին. ահաբեկիչ ձայներ էին լսվում:
Քաղաքի ոստիկանությունից էին և գոռում էին. «շտապ բացե՛ք
դուռը, եթե ոչ կկոտորենք»:

Թորոսն այդ աղմուկը վաղուց էր լսել, հարևանների դռները
ծնծելիս և արթնացել էր: Ձեթով ճրագը վառեց, դուռը բացեց:
Երեք ոստիկան դիմված ներս մտան տունը տակն ու վրա արե-
ցին: Քաջնված զենք էին փնտրում: Խ՛նչ կարող էին ունե՛ս:

աղքատիկ գաղթականները՝ մեկ հնամաշ անկողինով մի կերպ
ծվարած կիսաքանդ գոմում, ուր լույս էր թափանցում երգիկից:
Տանիքը, պատերը, դուռը սվաղել, վերանորոգել, թոնիր էին
պատրաստել, ջուրսի դրել, էժանագին վարձով բնակվում էին:
Անձրևի ժամանակ այնպես էր կաթում, կարծես թե անձրևը տան
ներսում էր: Քնելիս, անկողինը փռում էինք հողե հատակին,
խսիրի վրա, հացն ուտում էինք հատակին, նույն խսիրի վրա:
Մի կերպ ապրում էինք՝ սպասելով լավ օրվան:

— Անուն ազգանունդ, խիստ տոնով ասաց դաշնակցական
ավագ ոստիկանը:

— Թորոս Ոսկերչյան,— ցածր ձայնով պատասխանեց:

— Ոսկերչյան, պապդ ոսկերի՞չ է եղել, ոսկի կունենաս, շուն,
շան որդի, հանի՛ր ոսկիներդ, եթե ոչ՝ կսպանեմ,— մատուցեց
Թորոսի կրծքին ուղղած, բղավեց ավագ ոստիկանը:

— Պարոն ոստիկանապետ,— դողդոջուն ձայնով պատաս-
խանեց Թորոսը,— սոված գաղթականներ ենք, տեսնո՞ւմ ես
ապրուստի միջոց չունենք, ոսկին որտեղի՞ց: Ուտելու հաց չու-
նենք: Մեր ողջ ունեցվածքը թուրքը զավթեց, մենք էլ գլուխներս
առած մահից մի կերպ փախել ենք:

— Ոսկի չունես, գինվոր կտանենք:

Ճրագի խավար լույսի տակ Թորոսը շվարած, կանգնած էր
Ամուսնու ետևում կծկված Մովինարի մարմնով սարսուռ ան-
ցավ:

Առաջ դալով, ծնկաշոք աղերսեց ավագ ոստիկանին:

— Խղճացե՛ք հղի կնոջս, վաղը, մյուս օրը ծննդաբերելու եմ,
ո՞վ է մեր տերը, կմեռնենք: Թորոսը թուրքի դեմ կովելուց ոտ-
քից հաշմանդամ է: Հիսունն անց, վատառողջ՝ այնտեղ կմեռնի:

Հարբած ոստիկանը աղերսող հղի կնոջ ոսկրացած մեջքին
իջեցրեց մտրակի ուժգին հարված և ապա ոտքով գլորեց գետ-
նին:

— Շուտ, հանե՛ք պահած ոսկիները...

Խավարի մեջ կանգնած Թորոսը զայրացավ, զգաց, որ իր
վերջին օրն է: Դանդաղ ու հանգիստ մոտեցավ ավաշ ոստիկա-
նին: Իր վերջին ուժերը հավաքելով, մի ուժգին հարված հասցը-
րեց նրա քիթ ու մոտեթին, գլորեց գետնին:

— Սրիկա, հղի կնոջ հետ վարվում ես այնպես, ինչպես
բարբարոս թուրքը:

Թորոսը և Մովինարը որոշել էին իրենց մեծ զերդաստանե՞ր

մի ժառանգ թողնել աշխարհին: Բայց թորոսի ձեռքերը կապած ձեռնիլով տարան: Մովինարի վիճակը շատ վատացավ: Տունս քանդվեց, մրմնջաց ու վայր ընկավ:

— Հարեան կանանց կանչիր,— ցավերի մեջ ծանր շնչելով, ասաց նա:

Կեսգիշերն անց էր: Մի քանի դուռ ձեռնեցի: Ոստիկանների, գողերի սարսափից ոչ ոք դուռը չբացեց, կացում, աղբոսում էի՝ Մովինար մորաքույրը մեռնում է, օգնեցե՛ք... Երկու կին միասին մի տանից դուրս եկան: Պատմեցի եղելությունը: Նրանք շտապեցին Մովինարի մոտ: Լուսադեմին տատմեր կանչեցին:

Օրն անցավ ծանր ու ողբալի:

Մութն ընկել էր, Մովինարը հոգին ավանդեց: Կեսգիշերին հարեան կանայք մեկնեցին: Մինչև լուսարաց, ձեթով ճրագի լույսի տակ, ծնկաչոք նստած էի այդ բարի կնոջ դիակի առջև, որը մոր պես խնամում էր ինձ: Առավոտյան, թորոսի ընկեր սայլապանները գլխարկները հանած ներս մտան խոսք ասելու սիրտ չունենին, միայն խոնարհվեցին Մովինարի դիակի առջև ու լուռ տարան՝ ձգելու «ազգային գերեզմանոցի» երկար ու ձիգ մեռելափոսը:

Նստել էի տան դռան առջևի քարին, որտեղ բարի Մովինարը հաճախ նստում էր՝ սպասելով մեծ գերդաստանից մնացած իր միակ թորոսին: Տխուր ու տրտում գլուխս ձեռքերիս մեջ առած՝ միտք էի անում՝ ո՛ւր գնալ:

Եկան երեկվա երկու կանայք և ինձ տարան քաղաքի ծայրամասում, Սարգարի բերդի նախկին զորանոցում կազմակերպված հայ բարեգործական ընկերության 5-րդ որբանոցը (այժմ Օրջոնիկիձեի պողոտա 14, ոսկերչական գործարանի տեղում):

Դիմեցին որբանոցի տնօրեն կնոջը, պատմեցին որբուկիս վիճակի մասին, խնդրեցին՝ ինձ ընդունել: Նա տիրադեմ շույց դուրս և ասաց.

— Մինչև 13—14 տարեկան 200-ից ավել երեխա ունեմ: Վիճակը սոսկալի է: Տեղ չունեմ, կերակրելու ոչինչ չունեմ: Բիթլիսեցի 3 տղա մահացան, երկու օր է, աճյունները դեռ չեն տարել: Տղան թող մնա երբ մահացածներին տանեն, կտեղավորեմ նրանց տեղը:

Համաձայնեցին, ինձ խրատական խոսքեր ասացին ու տըխրադեմ մեկնեցին: Ախոռում տեղավորվածներս քնում էինք

մեջք մեջքի տված, ըմբբված տախտակներից պատրաստված նառի վրա, առանց անկողնի:

* * *

Անդրկովկասը վերաբաժանելու ծավալված ազգամիջյան կռիվների մեջ էր: Երեք հարևաններով շրջապատված, թալանված դրսի աշխարհից կտրված ուժասպառ Հայաստանի Հանրապետությունը գոյատևելու համար 1920 թ. դեկտեմբերի 2-ին Բաթումում թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքեց, որը Հայաստանի կողմից ստորագրեցին Ն. Քաջազունին և Ալ. Խատիսյանը: Այդ պայմանագրով փաստորեն Հայաստանը հանձնեցին Թուրքիային, որի մասին վարչապետ Սիմոն Վրացյանը գրել է՝ «Փաստորեն հայերի ձեռքը մնացել է մի փոքր հողաչերտ, հազիվ 12,000 քառ. կիլոմետր աղբատ ու կիսակործան մի երկիր կծկված ցամաք լեռների մեջ, աշխարհի խոլ անկյունում, ծանրաբեռնված դաղթականներով ու որբերով, շրջապատված ատամ կոճտացնող թշնամիներով, անհաց, անտեղ, անօգնական: Սով ու հիվանդություն, ավար ու ավեր, լաց ու թշվառություն, կոտորածի սարսափ: Իսկ մյուս կողմը էնվերի բանակը հաղթական, համաթուրքական երազներով տոգորված, Հայաստանի մարմնի վրայով ձգվում էր դեպի Ապշերոնով Թուրքեստան»:

Կյանքը արհավիրքից հետո

Ռուսաստանում բռնկված հեղափոխությունը, իր ժողովուրդների բարեկամության, ազգերի ինքնորոշման, խաղաղության նոր գաղափարներով, իր նոր գործելակերպով 1920 թ. հաղթանակեց նաև ցավատանջ Հայաստանում, ազատելով Հայաստանը օսմանյան թուրքիայի հալածանքներից բնաջնջման բարբարոսություններից:

Երկարամյա տառապանքներից, հյուծված, հոգնած փշուրմը մնացած Հայաստանը խանդավառությունը ընդունեց խորհրդային կարգերը: Դա հայ ժողովրդի վերածնման բախ-

1 Տե՛ս Ս. Վրացյան— Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1923 թ., էջ 155:

տորոշիչ նոր իրադրությունն էր, որն ընդունեց սիրով և նվիրվածությամբ:

Քաղցած երկրում կարգ ու կանոն էր հաստատվում: Համատարած մահի, սովի դեմ պայքար էր ծավալվում: Կանխվում էին համաճարակ հիվանդությունները, ժողովրդին անխնա հնձող տիֆը, խոլերան, մալարիան, բոսը: Աղքատիկ Հայաստանի ժողովրդական տնտեսությունը վերականգնվում էր:

Ժողովուրդն սկսեց ազատ շունչ քաշել, խանութները սկսեցին աշխատել: Գյուղացիներն անվտանգ՝ գյուղից գյուղ, քաղաք էին գնում:

Կյանքը երկրում աստիճանաբար լավանում էր, զարգանում: Երևանի կիսակառուցյալ կուլտուրայի տան ընդարձակ բակում, շուգունե տասնյակ մեծ պղինձների մեջ՝ առանց յուղի ու աղի ձավարից շիլա էին եփում, շաքաթներով ձրի ժողովրդին կերակրում՝ հագեցնում քաղցը: Հազարավոր անօթևան թափառաշրջիկներ խանդավառության մեջ էին, որ վերջապես հագեցնում են իրենց տանջող քաղցը: Մեր որբանոց եկան բարի մարդիկ: Հաց բերեցին, շիլա եփեցին: Անսահման էր քաղցի ու ցավերից ազատված երեխաներիս ուրախությունը: Մեր մեջ ապրելու հույս ծնվեց, ամբացավ:

Խորհրդային իշխանությունն անմիջապես որբերիս խնամքը վերցրեց իր ձեռքը: Որբանոցը տեղափոխվեց նոր, հարմարավետ շենք, ստեղծվեցին նոր, բարվոք պայմաններ, ստացանք նորմալ սնունդ, դպրոց, որբերիս ուրախությունն անշափ էր: Վերջապես ազատվեցինք անիծյալ քաղցից, ոչխիներից, անիծներից: Մեզ մոտ բերեցին մի քանի հարյուր թափառաշրջիկ երեխաների կս:

Ախ, որքան, որքան պարտական ենք՝ որբերիս հարազատի պես խնամող անձնակազմին, բարեհոգի կանանց: Հատկապես մեզ տանջող, տարածված մալարիա հիվանդությունից մեզ բուժելու, կրթության, դաստիարակման համար:

Հարյուր հազարավոր որբերից նրանք, ովքեր դիմացան տառապանքների, համաճարակների մղձավանջային տարիներից և կենդանի մնացին, խորհրդային իշխանության օրոք վերածնվեցին, նոր կյանք ստացան: Շատերն են հիշում մանկության ուրախ օրերը: Բայց, երբ ես հիշում եմ մանկությանս հեռավոր օրերը սիրտս ճմլվում է: Աչքերս լցվում են

արցունքով ու միտք եմ անում, թե վաղրագ թուրքերն այս ի՞նչ բերեցին հայերիս գլխին ու մինչև երբ պիտի մնան անպատիխ Կգա օրը...

* * *

1925 թիվն էր. էջմիածնի վանքապատկան շենքերի մի մասը դեռ մանկատուն էր՝ շուրջ 300 սաներով: Աշնանային ցուրտ օր էր: Հետճաշյա հանգստին, շորս համադասարանցիներս, ճեմարանի պատի տակ նստած զրուցում էինք օրվա դասերից: Նկատեցինք, Ձեմարանի բակը մտան միջինից քիչ բարձր երեք տղամարդ: Զրուցելով, դանդաղ քայլում էին: Մեզ մոտեցան, ճանաչեցինք՝ Հայաստանի կառավարության նախագահ Սարգիս Լուկաշինն էր, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը և Ասքանազ Մուսվաթյանը: Ոտքի կանգնեցինք, հարգալից բարևեցինք: Մեզ մոտեցավ Մուսվաթյանը:

— Մաքուր հագնված եք, ապա ինչու եք բոբիկ, — հարցրեց նա:

— Ուտնաման շունեք, — խմբովին պատասխանեցինք մենք:

— Ո՞վ կարող է ձեզնից կանչել մանկատան վարիչին:

Նշանը անմիջապես վաղեց:

Բարի ժպիտը դեմքերին նրանք հարազատ ծնողի պես հետաքրքրվեցին մեր կյանքով: Բարի խորհուրդներ ավեցին, ուսման, աշխատանքի, մեր ապագայի մասին: Եկավ մանկատան վարիչը՝ զարաբաղցի, բարեհոգի, բաղաբացիական կոիվների քաջերից, արծաթափայլ գլխով ու բեղերով Արզումանյանը: Նրանք զրուցելով շարժվեցին դեպի մանկատան շենքը:

Հաջորդ օրը Երևանից շորս սալ բարձած մանկատան համար բերեցին դասագրքեր, կոշիկներ, հագուստեղեն, սպիտակեղեն և այլն: Ինչպե՞ս կարելի է մոռանալ, լմեծարել իր ազգի ապագայի մասին մտածող, ժողովրդի հետ այդքան սերտ կապված պետական գործիչներին, որոնք զոհ գնացին ստալինյան բռնակալությանը:

Հայերի ցեղասպանությունից, աղգամիջյան պատերազմներից ավերակներ ժառանգած, Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման դժվարին տարիներին, կոմունիստական կուսակցությունը, խորհրդային իշխանությունը լուրջ ուշադրություն էին դարձնում որբերիս բազմակողմանի կրթությանը,

զատիարակութիւնը, շատ բան էին անում, որ մենք զառնանք պիտանի քաղաքացիներ:

Որբերիս համար կազմակերպեցին գյուղատնտեսական կոմունաներ՝ էջմիածնում, Լուկաշինում, Քաքայում և այլ շրջաններում: Ձրի հատկացրել էին հողի մշակման գործիքներ, ապրելու կոմունալ տներ: Առանձնապես հոգատար էին երիտասարդ ընտանիք կազմողներին նկատմամբ:

Ստեփանավանում ստեղծվեց խոշոր մանկական քաղաք, ուր տեղավորեցին մի քանի հազար երկսեռ երեխաների: Նրանց տրամադրութիւն տակ էին միջնակարգ դպրոցը, բազմատեսակ արհեստանոցները, կուլտուրայի տունը, անանսպահական մեծ տնտեսութիւնը, ստեղծվեցին կոմերիտական, պիտներական կազմակերպութիւններ:

Ալ. Մյասնիկյանի և Լուկաշինի նախաձեռնութիւնով, Լենինականում կառուցվեց տեքստիլ կոմբինատ, որի աշխատողներին 95 տոկոսը մանկատներից էին: Բավարարվեցին քնորակառուց կոմունալ հարմարութիւն բնակարաններով, ձրի ստացանք անկողիններ: Հարազատ պետութիւն հոգատարութիւն դիմաց, մանկատների երիտասարդ բանվորներս աշխատում էինք՝ ուժերի նվիրումով, արդյունավետ:

1931 թ. կոմբինատում կազմակերպված՝ Հայաստանում առաջին փորձնական արտադրական կոմունայի նախագահն էի: Կոմունայի գոյութիւն երրորդ ամսում Լենինականի «Բանվոր» № 150 թերթն իր 2—3 էջը նվիրեց կոմունային, հետևյալ վերնագրով՝ «ԵՐԿԻՐԸ ԹՈՂ ԸԱՆԱԶԻ ԻՐ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻՆ»:

Այդ օրը մեզ այցելեց ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանը: Սիրով հետաքրքրվեց կոմունայի աշխատանքներով, արտադրողականութիւն բարձրացման, կոմունալ-կենցաղային հարցերով: Ջերմ գրույցի վերջում մեզ և իր ուղեկիցներին ասաց.

— Ո՛չ ոք չէր հավատում, որ թուրք յաթաղաններից մազապուրծ հայ ժողովուրդը կարող է գոյատևել: Այս հսկա կոմբինատը մեր հրաշալի երիտասարդութիւնը ևս մի փայլուն օրինակ է, թե խորհրդային իշխանութիւնը ինչ բերեց կործանման եղբին կանգնած Հայաստանին:

Հաջորդ օրը, կոմունայի 48 անդամներ պլանների դերակատարման 4ամար պարզևատրման մեծ գումարներ ստացան:

1931 թ. Նազար Հովսեփյանը, Սերոբ Մաթևոսյանի հետ կո-

մունայի հիման վրա ստեղծված մանվածքային գործարանում կազմակերպեցին առաջինը Հայաստանում կոմերիտական արտադրական հարվածային կորպուս, իր մի քանի արտադրամասերով, որն իր արտադրական բարձր ցուցանիշներով Հայաստանի կոմերիտմիութեան և կոմբինատի պարծանքն էր:

• • •

Ողբի և նզովքի անհուն տառապանքների տարիներից հետո, ի շնորհիվ խորհրդային կարգերի, Հայաստանը վերածնվեց ու բռնեց իր առաջընթացի ուղին: Հայաստանի պետական կուսակցական առաջին գործիչներ՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, Լուկաշինը (Սարգիս Սրապիոնյան), Աղասի Խանջյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Ասքանազ Մուսվաթյանը և ուրիշներ, իմաստավորեցին հայ ժողովրդի կյանքը, ապահովեցին նրա ուժերի միասնութիւնը:

Նրանք խորհրդային Հայաստան հրավիրեցին ազգային առաջավոր մտավորականների, ներգրավեցին ժողովրդին ստեղծագործական աշխատանքի: Կուսակցական, պետական գործիչներին օգնեցին ականավոր գիտնականները մշակույթի արդյունաբերութիւն, գյուղատնտեսութիւն, մանկավարժութիւն, բժշկութիւն խոշոր մասնագետները (Հովհ. Թումանյան, Ալ. Թամանյան, Թ. Թորոմանյան, Ա. Աստվածատրյան, Հ. Մանանդյան, Մ. Արեղյան, Հ. Աճառյան, Վ. Համբարձումյան, Ալ. Սպենդիարյան, Մ. Սարյան, Հ. Բեկնազարյան, Ալ. Շիրվանզադե, Ալ. Իսահակյան, Վ. Փափաղյան, Լեոն Քալանթար, Արուս Ոսկանյան, Հայկանուշ Գանիելյան, Ար. Գուլակյան, Արեշտաններ, Ստ. Լիսիցյան և շատ ու շատ ուրիշներ):

Ի շնորհիվ, խորհրդային կարգերի, բազմազգ ժողովուրդների եղբայրական ընտանիքում, պատմական կարճ ժամանակաշրջանում Հայաստանը զարգացավ արդյունաբերութիւնով, գիտութիւնով, տասնամյակների ընթացքում բարգավաճեց, հզորացավ, դարձավ զարգացած գիտութիւն ու մշակույթ ունեցող հանրապետութիւն:

Նախկին կավածեփ, մեկ-երկու հարկանի շենքերով, մի քանի տասնյակ հազար բնակչութիւնով Երևանը հիրավի վերածնվեց, դարձավ մեկ միլիոնից ավելի բնակչութիւնով, ժամանակակից քաղաք, հայոց ոստանը, ուրույն ճարտարապետութիւնով, մշա-

կուլթի օջախներով, հուշարձաններով, հրապարակներով, լայնահուն պողոտաներով, որը կարող է մրցել աշխարհի ամենագեղեցիկ քաղաքների հետ:

* * *

1931 թ. աշնան էր, իմ մանկության և աշխատանքային մտերիմ ընկեր Նազար Հովսեփյանի հետ՝ որպես կոմերիտական ղեկավար աշխատողների կենդանական հրավիրված էինք Երեւան, ՀԼԿԵՄ Կենտկոմում խորհրդակցության: Աբովյան փողոցով իջնում էինք ցած: Տեսա՝ Քամարա մորաքույրը ամուսնու՝ Խանամիրի հետ, գալիս են մեզ ընդառաջ: Հանդիպումն անակրեկալ էր, չեքո՞ւ ու կարոտալի: Նրանք սիրով մեզ տուն հրավիրեցին:

— Շատ մեծ սիրով,— պատասխանեցի ես, շտապում ենք խորհրդակցության: Տվեցին իրենց հասցեն:

— Խնդրում ենք, երեկոյան համեցեք, այսօր անդրանիկ տղայիս ծննդյան օրն է:

Բաժանվելիս զգացի, որ Նազարին հետաքրքրեցին ծանոթներս:

Եվ ես սկսեցի պատմել:

Այս բարեհոգի կինը թշվառության, սովի համաճարակի տարիներին մեզ մայրություն է արել...

— Երեկոյան անպայման կգնանք,— ասաց Նազարը,— հետաքրքիր կլինի:

Երեկոյան փոքրիկ նվերով մեկնեցինք: Թխաղեմ, սև, խոշոր աչքերով մի աշխուժ պատանի բացեց դուռը, իսկ և իսկ՝ Խանամիրը:

Կանաչ բակի ծառերի տակ, լիքը սեղանի շուրջը նստածները ոտքի ելան: Քամարան արդեն իմ և որը պատանիների մասին պատմել էր: Նա ժպտալով ինձ ընդառաջ եկավ, խոնավացած աչքերով ամուր սեղմեց կրծքին, հարազատ մոր պես չեքո՞ւ համբուրեց: Բարեկց ընկերոջս, հրավիրելով սեղանի շուրջը, ասաց.

— Նայեցե՛ք, կոմունիստների կուսակցության անդամ այս հրաշալի երիտասարդներին: 1919 թվականին սրանց կմախքացած դեմքին նայողը կյանքից հուսահատվում էր: Իսկ այսօր...

Հարգալից բարեկցինք ներկաներին, նստեցինք առատ սեղանի շուրջը: Այդ ուրախ, տպավորիչ պահին Քամարայի ջեր-

մությունը նորից քանդեց մանկությանս դառն օրերին առընդող հիշողությունների կծիկը:

Յոթնասունամյա վասպուրականցի Խոսրով Դուրյանը կայտառ, արծաթափայլ զլխով ու բեղերով, բարի հայացքով, որ Քամարայի հյուրն էր, ոտքի կանգնելով բաժակը բարձրացրեց ու ասաց.

— Հարգելի՛ բարեկամներ, ժողովուրդների պատմության մեջ իրադարձություններ են լինում, որոնք չեն մոռացվում, ոչ միայն սերունդների կյանքում, այլև պատմության մեջ: Խոսքս 1915—1923 թվականների հայոց մեծազույն աղետի մասին և: Երբ թվում էր, թե Ֆաշիզմի նախահայր օսմանյան թուրքիան բնաջնջեց, կործանեց հայ ժողովրդին: Դժվար է մտովի պատկերացնել վաղեմություն շունեցող այն մեծ արհավիրքը, որ ապրեց բազում դարերի խորքից եկած պատմական հայ ժողովուրդը անլուս ցեղասպանության այդ մեծ վշտի տարիներին: Քանզի կատարված մեծազույն աղետը արյունով ու արտասուքով հեղեղեց բազմադարյան Հայաստանի սուրբ հողը: Թողնելով միայն հավիտենական վշտի դրոշմ և այդ մեծազույն աղետի վիշտը դարերով կապրի սերունդների սրտերում:

Բարբարոս թուրքերը անզեն, անպաշտպան մնացած արևմտահայությանը խումբ-խումբ քշեցին Տիգրիս, Եփրատ, Մուրադ գետը, Վանա լիճը, լցրեցին ջրհորները, խեղդամահ արին, սննչացրեցին: Քշեցին կիրճերը, ձորերը, քարայրների մեջ, Արաբական անապատը. Դեր-Ջորը, գազանաբար տանջահար արին մեռցրին: Անգթորեն հարյուր հազարավոր երիտասարդ հայ կանանց բռնությամբ, կապանքներով բազմակնություն տարան, ստրկացրեցին: Նրանց երեխաներին մանկությունից որբացրին: Տասնյակ հազարավոր հայ մանուկների բռնությամբ, սայլերը լցրած տարան շուկաներում վաճառեցին, հավատափոխեցին. թուրքացրին: Ոչնչացրեցին արևմտահայության 70 տոկոսը: Զավթեցին Հայոց երկրի շուրջ 200.000 ք. կմ տարածությունը:

Հայ ցեղասպանության ճիրաններից հրաշքով փրկված մի փոքր զանդված, թողնելով նախնյաց հայրենի երկիրը, տարիների ընթացքում վաստակով ձեռք բերվածը ալեկոծված փախան գեպի օտարություն զրկանքների գաղթաշխարհը, շփոտնալուծ ուր են գնում: Աստղերի պես սփռվեցին աշխարհով մեկ:

Այդպիսի զարհուրելի ճակատագիր, պատմության մեջ չի եղել աշխարհի ոչ մի երկրում: Զի տեսել աշխարհի ոչ մի ժողովուրդ:

Մենք՝ ժամանակակիցներս, սարսափով ենք վերհիշում այդ զարհուրելի ողբի ու նզովքի, համազգային վշտի տարիները: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը հայ ժողովրդին ազատեց այդ արյունահեղ շարժերից բերելով ազգային և սոցիալական վերածնունդ: Մեկընդմիջ շտկեց դարերի տառապանքներից կորացած հայ շինականի մեջքը: Մեր ազգի հիմքը կազմող որբացած մանուկների հոծ բանակի խնամքը, դաստիարակությունը իր ձեռքը վերցնելով, նրանց կենդանություն տվեց: Այսօր անասման ուրախությամբ ենք նայում նրանց և իրենց ժառանգներին:

Սակայն, որքան էլ որ սպիանան հայ ժողովրդի մեծ եղևուների, վշտի ու ողբի վերքերը, որքան էլ ամրանան ու բարդավաճեն հայոց արմատները, մեր սրտերում կմնա հայի համազգային մեծ վիշտը, հայ ազգը սերնդե-սերունդ սրտացավ կհիշի աղետի սև օրերին մեր տատերի ու պապերի, մայրերի ու հայրերի, քույրերի ու եղբայրների թափած արյունը, որբացած հայ մանուկների ողբն ու արցունքները, մայրերի գրկից բռնուխամբ հափշտակած, հավատափոխ արված, թրբացրած հազարավոր հայ մանկիկների ողբի ճիշերը, որոնք այսօր իրենց ով լինելը չգիտենալով, իրենց թուրք են համարում...

Եկեք հարգանքով օրհնենք մեր վերածնված, Մայր Հայաստանին և հայոց կարմիր գինով լի բաժակներով խմենք հայ և ռուս ժողովուրդների հավերժ բարեկամության կենացը, վերածնված Հայաստանի կենացը՝ հայոց հուսալի նոր սերնդի կենացը, որ պիտի միասնական ուժերով պայքարի հայոց արգար դատի համար, որը կմանի միջազգային ատյան:

Բոլորս հոտնկայս ողջունեցինք բոցաշունչ հայրենասերի առաջարկությունը: Թամարալի անդրանիկ զավակի՝ Արշակի ծննդյան տարելիցի երեկոն անցավ ջերմ ու սրտաբաց զրույցներով, մեր վաղվա օրվա բարի մաղթանքով ու ուրախ մթնոլորտում:

Թամարան ուներ 7 երեխա: Վեցը ժիր տղաներ, իսկ կրտսերը իր նման աշխույժ, սեռայտ գեղեցկուհի՝ Գայանեն էր, որի մանկական բարի ժպիտը իմաստավորում էր մեր ներկան...

1966-ին էր: Երևանի պետական օպերայի շենքում «Անուշի»

ներկայացումը դիտելուց հետո, Շեքենկոյի անվան Ց 42 միջնակարգ դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի կնոջս՝ արտվենցի Մարիամի հետ հանդիպեցի 1919 թվականի զարհուրելի օրերի թափառաշրջիկ ընկերներիցս մեկին՝ Սերոբ Պողոսյանին: Նա դոկտոր-պրոֆեսոր էր և դոկտոր-պրոֆեսորներ Արարատ Ղարիբջանի, Եղիշե Մատինյանի, Վարազդատ Հարությունյանի, Հարություն Մկրտչյանի և մեր բախտակից մանկատան սաներից շատերի հետ՝ դասախոսում էր Երևանի բուհերում:

Սրտացավ պատմեց անցած դառն օրերի մեր ընկեր Խաչիկի մասին:

— Հրեատանու խիզախ փոխգնդապետ էր, — ասաց, — 1942 թ. հերոսի մահով զոհվել էր իր դիրքում Սևաստոպոլի համար մղված օրհասական մարտերից մեկում: Ունի հինգ երեխա: Տղաներից երկուսը սովորում են ինձ մոտ: Հոր պես ընդունակ, կիրթ երիտասարդներ են: Կինը՝ Վարդուհին, նույնպես եղևունից որբացած մանկատան աղջիկներից է, աշխատում է հիվանդանոցում, բաժնի վարիչ է, դիտություն թեկնածու:

Ու այսպես, մեծ եղևունի զոհերի սերունդներս, հասունանալով, կյանք մտանք, երախտապարտ մնալով մեզ կյանք պարզևող մեր ժողովրդին, պետությունը: Շատ-շատերը դարձան ականավոր ակադեմիկոսներ, ոսկուորներ, դոկտոր-պրոֆեսորներ, կուսակցական պետական բարձր աստիճանի գործիչներ, ժողովրդական կոմիսարներ, մինիստրներ և տեղակալներ, դարձան նշանավոր ճարտարապետներ և իրավաբաններ, գրողներ, ԽՍՀՄ ժողովրդական դերասաններ, երաժիշտներ, նկարիչներ, զեներալներ, գեղապետներ, ռազմաճակատի լեզենդար հերոսներ, աշխատանքի հերոսներ, մանկավարժներ, բժիշկուհիներ, արդյունաբերության, գյուղատնտեսության շնորհալի ղեկավարներ, մասնագետներ, բազմաթիվ տարբեր մրցույթների դափնեկիրներ, բազմազավակ մայրեր:

Հիշենք թեկուզ մի քանիսին՝ էզրաս Հասրաթյան, Արարատ Ղարիբջան, Հենրիկ Գաբրիելյան, Սամսոն Գաբրիելյան, Անդրանիկ Շահինյան, Հայկ և Ասլան Մելքոնյաններ, Արտաշես Արրահամյան, Պետիկ Թորոսյան, և շատ ու շատ ուրիշներ:

Սակայն անցնում են կյանքի անվերադարձ տարիները. օսմանյան զարհուրելի շարժերը ճաշակած սերունդներից շատերը ժամանակի հետ հրաժեշտ են տալիս կյանքին, թողնելով մի հրաշալի նոր սերունդ՝ ինչպես Հրաչ Վարդանյանը, էմիլ Գաբ-

րիելյանը, Սիլվա Կապուտիկյանը, Ջոն Թորոսյանը, Կամո և Կարեն Գեմիլիսյանները, Ռուբեն, Կարեն, Ժիրայր Ալթունյանները, Գայանե և Արծալիկ Ասլանյանները, Սերոբյան 7, Գրիգորյան 9, Նշանյան, Գարբիելյան, Շահինյան, Մելքոնյան, Շիրազ, Մովսիսյան, Ստեփանյան, Վարդանյան, Աղաբաբյան, եղբայրները և քույրերը մազապուրծ որբ երեխաների հարատևող բազմաթիվ զավակներ:

Հայոց նոր սերունդը պարտավոր է միշտ հիշել մեր նաճատակների լավ և բարի գործերը, այցելել նրանց անձայրածիր ցաք ու ցրիվ գերեզմաններին: Չմոռանալ, որ 1915 թվականի ապրիլի 24-ը սգո օրը հայ ժողովրդի համար ունի կրեակի իմաստ և խորհրդանշան:

Նախ սիրո և հարգանքի տուրքի հատուցում մեր ազգի նաճատակների հիշատակին, ապա զայրույթ ու բողոք ոճրագործ Թուրքիայի դեմ:

Քանզի ԳեոնՅեօրի ՀԱՄԱՐ ԶԿԱ ԵՎ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ՈՉ ՈՐԵՎԻՅՑ ԱՐԴԱՐԱՅՈՒՄ, ՈՉ Է՛Լ ՈՐԵՎԻՅՑ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ:

Չնայած տասնամյակներ շարունակ խեղդված լուել ենք, այսօր դեմոկրատիայի, հրապարակայնության, արդարամտության ու ճշմարտության ժամանակաշրջանում արթնացել է համամարդկային խղճի շարժումը: Միջազգային հասարակայնության և պետությունների ուշադրությանն է արժանացել հայ ցեղասպանության հարցը: Չի մոռացվել թուրք ժողովրդին ու աշխարհին բարիքներ պարգևած աշխարհաճանաչ հայության Արևմտյան զանգվածի 70 տոկոսի բնաջնջման պատասխանատվության հարցը:

Պայծառ ապագա սպասող հայ ժողովրդի բոցաշունչ նոր սերնդի սրբազան պարտքն է միասնությամբ, համախմբված ազգային դրոշի ներքո մինչև վերջ պայքարել, որպեսզի հայոց հարցը միջազգային ատյանում արդարացի լուծում ստանա: Այդ է հայ ժողովրդի համազգային իդեալը:

Հավատով ու գործով միաբան հայ ժողովուրդը կրեք չի հրաժարվի իր փառապանծ պատմությունից և կպայքարի իր ապագայի, իր վեճ իդեալների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ՓԵՍԱՆԴԱՇՏԻ ՀԱՅ ԿՅԱՆՔԻՑ

Սուլթանի լծի տակ	20
Գավառի բնյի զոհերը	36
Փեսանդաշտցիների վրեժը	54
Մեր գյուղի ճակատագիրը	65
Սարիամի հուշադրույրը	81
Ինքնապաշտպանության մարտեր Ռշտունյաց աշխարհում 1914—1915 թթ	104
Կայնամիրանի ողբերգությունը	128

ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ

ՓԵՍԱՆԴԱՇՏԸ ՊԱՇԱՐՎԱԾ ԷՐ

Բարադոզիկի հերոսամարտը	139
Կարաբողազի ինքնապաշտպանությունը	155
1915 թ. Արևմտյան Հայաստանի ազատագրումը	209

ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ

ՀԱՐԿԱԴՐՎԱԾ ՀՐԱՇԵԹՑ ԵՐԿՐԻՆ

Վան	228
Բերկրո ձորի ողբերգությունը	232
Գեպի Իզդիր, էջմիածին	237
Հայ մանուկների տխուր մանկությունը	253
Որբի երազը	259
Երևան	263
Կյանքը արհավիրքից հետո	277

Արմենիայի Արգար Ներսիսի
ՓԵՍԱՆԴԱՇՏԸ ՊԱՇՏՆԱԿԱՆ ԷՐ

Асланян Абгар Нерсесович
ПЕСАНДАШТ В ОСАДЕ

(На армянском языке)
Ереван «Айастан» 1990

Հրատ. խմբագիր՝ Գ. Ռ. Կելայան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Յ. Վարդանյան
Վերատպող սրբագրիչներ՝ Մ. Ա. Արշակյան, Լ. Ս. Գևորգյան

ИБ 6881

Հանձնված է շարվածքի 17.05.90 թ.: Ստորագրված է տպագրության 10.10.90 թ.:
Չափեր 84X108 1/32: Թուղթ տպագր. № 2: Տպատեսակ՝ «Գրքի սովորական»:
Տպագր. բարձր: 15,12 պլամ. տպագր. մամ., 15,34 պլամ. ներկ. թերթ,
14,27 հրատ. մամ.: Տպարանակ՝ 20 000: Պատվեր 988: Գինը՝ 2 ռ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ա. Իսահակյան 28:
Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

Հայաստանի Հանրապետության հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և
գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Աշա-
վկերցյան 65:

Типография № 1 Госкомитета Армении, по делам издательств,
полиграфии и книжной торговли, Ереван, ул. Алавердяна, 65.